Մ. Հ. Մխիթարյան

XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԱՐԵՎԵԼՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՏՈՒՅՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. А. МХИТАРЯН

ИЗ ИСТОРИИ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XIX в.

(„ПОРДЗ“, „АРДЗАГАНК“)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

002(47.925)(09) 3

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(«ՓՈՐՁ», «ԱՐՁԱԳԱՆՔ»)

1987

58154

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՆԳԱՄԵՆՅԱՅ ԳԻՏԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1976

002 (С43) (09)
Մ 79

Աշխատության մեջ հայ հասարակական-քաղաքական կյանքի ֆոնի վրա ուսումնասիրված է «Փորձ» (1876—1881) և «Արձագանք» (1882—1898) պարբերականների պատմությունը և դրանց դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ։ Վեր է հանված «Փորձի» և «Արձագանքի» վաստակը արևմտահայության վիճակի բընևնարկման և անցյալ դարի վերջին քառորդում հայկական հարցի հետ կապված իրադարձությունները լուսաբանելու գործում։

Առանձին բաժիններ են նվիրված ժամանակի հայ պարբերական մամուլի օրգաններին միջև տեղի ունեցած բանավեճերին, «Փորձի» և «Արձագանքի» հիմնական աշխատակիցների և թղթակիցների գործունեությանը։

Շրջանառության մեջ են դրված վերոհիշյալ պարբերականների համար տպագրության ներկայացված և գրաքննության կողմից մերժված բազմաթիվ նյութեր ու արխիվային նոր փաստաթղթեր։

06101
Մ 703(02)—76 26—75

© Հայկական ՍՍՀ ԳՍ. Հրատարակչություն, 1976

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ լրագրության սկզբնավորման օրվանից անցել է 182 տարի: Այդ ժամանակամիջոցում աշխարհի բազմաթիվ երկրներում հրատարակվել են երեք հազարից ավելի պարբերականներ, որոնք սերունդներին են ներկայացնում հայ հասարակական մտքի և մշակույթի պատմության կարևորագույն էջերը: Սակայն, երբ հայ մշակույթի տարբեր ճյուղերի ուսումնասիրության համար պարբերական մամուլը եղել է հիմնական սկզբնաղբյուրներից մեկը և նպաստել դրանց պատմության ստեղծմանը, բուն մամուլը չունի իր ամբողջական պատմությունը:

Հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված առաջին հոդվածները երևացել են դեռևս անցյալ դարի կեսերին, իսկ մեր լրագրության մի առանձին հատվածի պատմությունն ստեղծելու առաջին փորձը կատարել է Հարոն (Նիկ. Տեր-Հարությունյան): Նրա «Հայոց մամուլը Բուսաստանում և Կովկասի մեջ» ուսումնասիրությունը լույս է տեսել 1878 թ.: Դրան հաջորդում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գ. Գալեմքարյանի «Պատմություն հայ լրագրության» աշխատությունը (1893): Հայ լրագրության հիմնադրման 100-ամյակի առթիվ բանասեր Գարեգին Լևոնյանը հրատարակեց հայ պարբերական մամուլի առաջին ամառագիրն ցուցակը (1895), իսկ տասնամյակներ անց՝ 1934-ին, իր ժամանակի համար լիակատար՝ հայ մամուլի մատենագիտական ցուցակը («Հայոց պարբերական մամուլը»):

Սովետական Հայաստանում գիտությունների ակադեմիայի հիմնադրումից հետո հայ լրագրության պատմության ուսումնասիրման գործը մտավ իր նոր փուլը: Սովետահայ պատմաբաններն ու բանասերները ստեղծել են բոլշևիկյան հայ մամուլի, սովետա-

հայ մամուլի, Հայրենական պատերազմի տարիների հակատային բերթերի, Մոսկվայի հայ մամուլի և տեղական մամուլի պատմությունը (Ա. Բարսեղյան, Հ. Ֆելեխյան, Ա.Բ. Մնացականյան, Ա. Աբշարունի, Վ. Ամիրբեկյան): Սկսվել են նաև սիլուռմահայ մամուլի ներազոտման աշխատանքները (Մ. Բալոյան, Կ. Գալլաֆյան և ուրիշներ):

Հայ գիտնականները զգալի գործ են կատարել և անցյալի մեր մամուլի ուսումնասիրման ուղղությամբ: Արդեն հրապարակի վրա են ակադեմիկոս Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» մենագրության առաջին երկու հատորները, նվիրված ինդկահայ գաղութի և Եվրոպայի հայ լրագրությանը: Արևմտահայ մամուլի և լրագրողների մասին արժեքավոր ուսումնասիրություններ է հրատարակել պրոֆ. Գ. Ստեփանյանը («Արփիար Արփիարյան», «Հակոբ Պարոնյան», «Հայատառ թուրքերեն հայ մամուլը» և այլն): Իրենց աշխատություններում XIX դարի II կեսի հայ մամուլի օրգաններին անդրադարձել են ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, պրոֆ. Վ. Իշտունին և մի շարք պատմաբաններ ու բանասերներ:

Անհամեմատ փիչ է ուսումնասիրված XIX դարի արևելահայ մամուլը: Հարոյի և Գալեմքարյանի գրքերը լինելով մեր մամուլի պատմության ուսումնասիրման առաջին փորձերը, թե՛ նյութի ընդգրկման շրջանակներով, թե՛ ներկման խորությամբ և թե մանավանդ աշխարհայացքային առումով, բնականաբար, չեն կարող բավարարել այսօրվա պահանջները: Որոշակի արժեք են ներկայացնում Լեոյի «Ստեփանոս Նազարյանց» և «Գրիգոր Արծրունի» մենագրությունները, որոնք հարուստ նյութ են պարունակում «Հյուսիսափայլ» և «Մշակ» պարբերականների մասին:

Ձեռնարկելով Աբգար Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված «Փորձ» և «Արձագանք» պարբերականների ուսումնասիրությանը, մենք ջանացել ենք, մեր ուժերը ներածին չափ, ներկայացնել XIX դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլի պատմության ստեղծման գործին:

«Փորձը» (1876—1881) և «Արձագանքը» (1882—1898) դեռևս չեն դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Դրանց մասին խոսել է Լեոն՝ իր «Գրիգոր Արծրունի» մենագրության մեջ: Սակայն այդ պարբերականները նրա ուշադրությունը գրավել են

Աւծրուճու և Հովհաննիսյանի միջև ծավալված բանավիճային պայքարի առումով միայն:

Ինչպես երևում է Ալ. Երիցյանի մի հայտարարությունից, նա ժամանակին նպատակադրվել է գրել Աբ. Հովհաննիսյանի պարբերականների պատմությունը, բայց մեզ անհայտ պատճառներով չի իրականացրել ծրագրածը: «Փորձի» ուսուցասիրությամբ զբաղվել է սովետահայ պատմաբան Աշոտ Մելիքյանը, որն իր ձեռագիր աշխատության մեջ («Նյութեր հայ հասարակական կյանքի և մտքի պատմության») արժեքավոր մտքեր է հայտնել ազգային-պանիսլամական հոսանքների գաղափարախոսության վերաբերյալ: Դժբախտաբար, այդ աշխատանքն անավարտ է: Հեղինակին չի հաջողվել մշակել հավաքած փաստական նյութը, ամբողջացնել ուսումնասիրությունը և հրապարակել այն: Այսպիսով, ժամանակի հայ հասարակական կյանքում նշանակալից դեր կատարած մամուլի այս երկու օրգանները շուրջ մեկ դար մնացել են առանց ուսումնասիրության: Նույն բախտին են արժանացել նաև «Մեղու Հայաստանի», «Նոր-դար», «Կռունկ հայոց աշխարհին» և այլ պարբերականները:

XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլն անցել է բարդ և դժվարին ճանապարհ: Ղրիմի պատերազմին հաջորդած գրաճնական որոշ ազատությունների շնորհիվ, հայ մամուլի զարգացման համար նույնպես ստեղծվում են նպաստավոր պայմաններ, բայց դրանք, բնականաբար, չէին ապահովում հայ բերքերի նյութական հիմքերը: Այդ էր պատճառը, որ 60-ական թվականներին հրատարակության իրավունք ստացած «Ճռռաֆաղ», «Հյուսիսափայլ», «Կռունկ հայոց աշխարհին», «Հյուսիս», «Համբավաբեր Ռուսիո» պարբերականներն իրենց ընթացքն ավարտում են՝ նույնիսկ մեկ տասնամյակի շրջանը չբոլորած: 1866-ին Ալեքսանդր II-ի վրա կատարված մահափորձից հետո իշխես ռուսերեն, այնպես էլ այլ լեզուներով հրատարակվող մամուլն առնվում է հսկողության տակ: Փակվում են ժամանակի ռուսական հեղափոխական-դեմոկրատական ամսագրեր «Современник»-ը և «Русское слово»-ն, հետապնդվում և մի քանի տարի անց փակվում է նույն հոսանքին պատկանող «Искра» երգիծական հանդեսը: Սկսված ռեակցիայի հետևանքով մերժվում են Ստ. Նազարյանի հայցը՝ «Լապտեր Հայաստանի» և Փիլ. Վարդանյանի դի-

մումը՝ «Լումա» ամսագրերի հրատարակության վերաբերյալ: 70-ական թվականներին, սակայն, երկրում սկսված հեղափոխական երկրորդ ճգնաժամի ժամանակաշրջանում Ռուսաստանում լույս են տեսնում դեմոկրատական-ճարոդնիկական մի շարք պարբերականներ, որոնցում չայնորեն բննարկվում էին երկրի տնտեսական զարգացման հետագա ուղիներին և հեռանկարներին վերաբերող հարցերը:

Ալեքսանդր II-ի սպանությունից հետո, 1881-ից սկսվում է Ալեքսանդր III-ի ռեակցիոն բազավորության շրջանը. հետապընդվում են ճարոդնիկական հեղափոխական կազմակերպություններ, փակվում են մի շարք պարբերականներ, որոնցից էին դեմոկրատական «Отечественные записки» ամսագիրը և «Дело» հանդեսը: Մամուլի աշխարհում հիմնականում սկսում են իշխել ռեակցիոն, ինչպես և լիբերալ-բուրժուական և լիբերալ-ճարոդնիկական պարբերականները: Չնայած դրան, հեղափոխական-դեմոկրատ հրապարակախոսներ Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինը և Ն. Վ. Շելգունովը 80-ական թվականներին ինչ-որ չափով կարողանում են նոր սերընդի ուշադրությունը հրավիրել վարսունականների մեծ ժառանգությունը յուրացնելու և այն պահպանելու կարևորության վրա:

Այդ օրերին երկրում, այնուամենայնիվ, ապագրվում են ճարոդնիկական մի քանի անլեգալ բերթեր: Արտասահմանում, նույնպես, բեև անսիստեմ, հրատարակվում են ռուսական ազատ մամուլի որոշ օրգաններ: 80-ական թվականների կեսերին, Գ. Պլեխանովի ջանքերով, դեմոկրատական Ռուսաստանն արդեն հիմնավորապես ծանոթանում է ռուս բնթերցողների համար նախատեսված մարքսիստական գրականությանը: Բանվորական շրջաններում մարքսիստական գաղափարախոսության պրոպագանդման նպատակով 1880—1885 թթ. Պետերբուրգում լույս են տեսնում մի քանի անլեգալ բերթեր: Արդեն 90-ական թվականների կեսերին, բանվորական շարժումների բուռն ծավալման շրջանում, Ռուսաստանում սկզբնավորվում է բանվորական մամուլը: 1898-ին «Рабочая газета»-ն դառնում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության պաշտոնական բերթը: Ռուսաստանի ազատագրական շարժումների երորդ էտապն սկսվում է բանվորական մամուլի ճզոր վերելքով:

Իրավիճակը մի փոքր այլ էր արևելահայ մամուլի աշխարհում: Ընդհանուր առմամբ հայ մամուլը կապված էր պատմական ժամանակաշրջանի բոլոր իրադարձությունների հետ: 60-ական թվականների գյուղացիական ռեֆորմը, ապա դրան հաջորդած դատարանական, զեմստվային, բաղաքային և այլ ռեֆորմները լուսաբանվում էին հայ պարբերական մամուլի էջերում: Հայ լրագրողները ճնշարկում էին արդյունաբերական բուրժուազիայի զարգացման և գյուղի բայբայման պրոբլեմները: Բայց, այդուհանդերձ, հայ մամուլն իր բնույթով որոշակիորեն տարբերվում էր ժամանակի ռուսական պարբերականներից: Անդրկովկասում բուրժուազիայի զարգացումն իր հետ բերում է ռուսականից տարբեր՝ ազգային զարթոնքին բնորոշ շահախնդրություններ: «Հյուսիսափայլից» հետո, 60—70-ական թթ. արևելահայ մամուլը մեծ ոգևորությամբ խոսում էր երկրի տնտեսական զարգացման նոր ընթացքը, հանգամանորեն վերլուծում ազգային լեզվի, մշակույթի և գրականության զարգացման խնդիրները, պրոպագանդում ռուսական և եվրոպական կուլտուրան յուրացնելու անհրաժեշտությունը:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում Կովկասի հայ մամուլն սկսում է լուսաբանել հայկական հարցի հետ կապված իրադարձությունները և բազմակողմանիորեն բննարկում է արևմտահայության տնտեսական ու բաղաքական վիճակը: Այդ պրոբլեմը մնում է օրակարգում և հաջորդ տասնամյակներին, մանավանդ դարավերջի հայկական կոտորածների շրջանում: Ալեքսանդր III-ի և Նիկոլայ II-ի ազգային բաղաքականությունը, որ նեռապնդում էր Կովկասի փոքր ազգությունների ռուսացման նպատակը, առաջացնում է բնդդիմադիր մի շարժում և հայ հրապարակախոսներն սկսում են զբաղվել նաև արևելահայերի մշակութային և կրթական հաստատությունների պահպանման հարցերով:

Ժամանակի մամուլը միաժամանակ նկատելի բայլ է հաղորդել հայ նոր գրականության զարգացմանը: Ազգային-պահպանողական «Արձագանք» և «Նոր-դար», լիբերալ-բուրժուական հոսանքի օրգաններ «Մշակը» և «Մուրճը» իրենց էջերը տրամադրել են Պատկանյանին, Բաֆֆուն, Սունդուկյանին, Աղայանին, Պռոշյանին, Շիրվանզադեին, Մուրացանին, Նար-Դոսին, Հովհաննիսյանին, Թումանյանին, Փափազյանին, որոնք ոչ միայն հայ գրակա-

նությունը առաջ էին մղում դեմոկրատական հատակ ուղեգծով. այլև իրենց հայացքների կնիքն էին դնում հայ պարբերականների ուղղության վրա: Այդ թերթերի և հանդեսների էջերում իրեն հրապարակախոսներ հայ հասարակական կյանքի այրող հարցերն են ճեներակել Շիրվանզադեն, Պարոնյանը, Րաֆֆին, Արփիարյանը, Մերենցը, Աբեղյանը: Նարոդնիկական աշխարհայացքի ազդեցություն էին կրում Ս. Հախումյանի, Ն. Աբելյանի և այլոց՝ հայ գյուղին նվիրված հոդվածները:

Անցյալ դարի վերջին Բաորդի Կովկասի հայ մամուլին բնորոշ է դառնում լիբերալ-բուրժուական և ազգային-պահպանողական հոսանքներին պատկանող թերթերի գործունեությունը: Կղերաազգայական հոսանքի օրգաններ՝ արդեն դադարած «Ձռոհարդը» և «Մասյաց աղավնին» հետևորդներ չունեին, իսկ «Մեղու Հայաստանին»՝ սկսած 1863 թ. հրատարակվում էր նոր խմբագրի կողմից՝ փոփոխված ծրագրով: Մանդինյան Բահանայի հետադիմական «Խարույկ» ամսագիրը շատ տկար էր՝ հայ հրապարակախոսության աշխարհում իր ձայնը լսելի դարձնելու համար: Այս տարիներին հայ իրականությունը չուներ նաև Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հրապարակախոսության ավանդները շարունակող մամուլի իր օրգանը, թեև մի շարք փորձեր էին կատարվել հայ դեմոկրատական մամուլի ստեղծման ուղղությամբ:

1879 թ. շուլավերցի ուսուցիչ Գրիգոր Տեր-Մելիքսեդեկյանը Թիֆլիսում հիմնադրում է նարոդնիկական-լուսավորական առաջին հայ օրգանը՝ «Աշխատանք-Труд» երկլեզվյան շաբաթաթերթը[1]: Այդ թերթի էջերում խմբագիրը փորձում էր լուսաբանել հայ գյուղացիության բշվառության պատկերը և մերկացնել վարչական ու դատական ապարատի ապօրինությունները, կաշառակերության, կողոպուտի, հարկահանության ծանր սիստեմի փաստերը: Գյուղացիական դեմոկրատիայի շահերի պաշտպան Տեր-Մելիքսեդեկյանին, սակայն, չի հաջողվում հասարակական կյանքում առկա դասակարգային հակասությունների լուծման մի բանական հետևության հանգել: Նրա թերթը հայ հասարակական կյանքում փոքր շա-

---

[1] «Աշխատանք-Труд» *թերթի մասին տե՛ս* Կ. Դանիելյան, *Հայ գյուղագրությունը 19-րդ դարում, Երևան, 1973, էջ 115—120,* Վ. Ավետիսյան, *Փաստերը հերքում են, «Լենինյան ուղիով», 1974, № 9:*

փով իսկ տարածում չի գտնում և դադարում է առանց էական հետք թողնելու մամուլի պատմության մեջ[2]:

«Տեր-Մելիքսեդեկյանը որպես հրապարակախոս մնաց միայնակ, աղանդավոր, ոչ մի լուրջ ազդեցություն չթողնելով շրջապատի վրա,— գրում է պատմաբան Վ. Ավետիսյանը:— Իսկ նրա առաջադրած խնդիրները, բուն էության դուրս չէին գալիս լիբերալ-բուրժուական ռեֆորմների սահմաններից»[3]:

1882—84 թթ. Շուշիում հրատարակվել է Սիմեոն Հախումյանի «Գործ» հանդեսը, որի շուրջն էին համախմբված Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողական խմբակի մի շարք անդամներ: Լիբերալ-նարոդնիկական այս օրգանը, որը հիմնականում ննջարկում էր համայնական հողատիրության պրոբլեմը և իդեալականացնելով համայնքը, այն հակադրում նոր զարգացող կապիտալիզմի ավերիչ բնույթին, երկար կյանք չունեցավ և չկարողացավ վճռական դեր կատարել հայ հասարակական կյանքում:

Դարձյալ այդ տարիներին, հայ մտավորական, անցյալում նարոդնիկ Ե. Միրզոյանը և նրա գործակիցներ Բաֆֆին ու Ն. Աբելյանը փորձում են ձեռ բերել 1884-ին դադարած «Մշակի» հրատարակության իրավունքը և այն շարունակել նոր, դեմոկրատական ծրագրով: Հաջողության հասնելու դեպքում բերևս հենց նրանք էլ այդ բերքը դարձնեին դեմոկրատական մամուլի բնորոշ օրինակը հայ իրականության մեջ: Դժբախտաբար նրանց նախաձեռնությունը ձախողվում է[4]: Ինչ վերաբերում է Նալբանդյանի գաղափարախոսության իսկական ժառանգորդներին՝ հայ սոցիալ-դեմո-

---

[2] *Հայ բանասիրությանը հայտնի էր, որ լույս է տեսել «Աշխատանք-Труд» հերթի 8 համար, որոնցից պահպանված էր մեկ համար միայն: Վերջերս ՍՍՀԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը ձեռք է բերել Մելքիսեդեկյանի հերթի լրիվ հավաքածուն, որից պարզվում է, որ 1879—82 թթ. լույս է տեսել այդ հերթի 11 համար:*

[3] *«Լենինյան ուղիով», 1974, № 9, էջ 91:*

[4] *Դաբո Միրզոյանը ուսանողական տարիներին նարոդնիկական շարժումներին մասնակցելու համար հետապնդվել էր կիևի համալսարանից և այդ պատճառով Մոսկվայում վերցված էր ոստիկանական հսկողության տակ: Հաշվի առնելով վերոհիշյալը, կառավարչապետությունը նպատակահարմար չի գտնում նրան թույլատրել ստանձնելու «Մշակի» խմբագրի պաշտոնը (տե՛ս Վրացական կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, գիրք Ա, գործ 602):*

կրատներին, ապա նրանց մամուլը սկզբնավորվում է XX դարի այգաբացին:

Այս չի նշանակում, իհարկե, թե Նալբանդյանի գրական ժառանգությունը գրվանի տակ էր և հայ հասարակությունը աննպաստ էր նրա գաղափարներին: Միխայել Նալբանդյանը մահվանից հետո էլ շարունակում էր պահպանել ազգանվեր գործչի իր հմայքը: Նրա գրական ժառանգությունն օգտագործվում էր ակնածանքով, անտիպ ստեղծագործությունները որոնվում էին և հրատարակվում, բերբերն ամեն պատեհ առիթի ձոներ էին նվիրում նրա հիշատակին: Նալբանդյանը շարունակում էր հուզել մտքերը, մասնակցել հոսանքների պայքարին, թեև հայ հրապարակախոսները պայքարի նրա զինանոցից զենքերը վերցնում էին իրենց ընտրությամբ և նրա ասույթների վահանի տակ բանավիճում՝ դրանց սեփական մեկնաբանություններով:

Կարավերջի հայ մամուլի պատմությունը միաժամանակ գրական գրաճնության դեմ հայ խմբագիրների վարած պայքարի և նրանց հետևողական մաքառումների պատմությունն է:

* * *

Քանի որ այս աշխատությունը առաջին փորձն է՝ հայ ընթերցողին ծանոթացնելու «Փորձ» և «Ուրնագաման» պարբերականներին, մենք ձգտել ենք հնարավորին չափ ամբողջական ներկայացնել դրանց պատմությունը, ընդգրկել այդ օրգանների հետաքրքրությունների լայն շրջանակը: Ա.թ. Հովհաննիսյանի պարբերականների պատմությունը ճնճարկվում է հայ հասարակական կյանքի առաջադրած հրատապ խնդիրների ֆոնի վրա, մամուլի այլ օրգանների հետ դրանց ունեցած կապերի և առնչությունների մեջ: «Փորձի» և «Ուրնագաման» էջերում լայնորեն արտացոլվել և մեկնաբանվել են XIX դարի վերջին քառորդի հայ հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման հարցերը: Ըստ այդ պրոբլեմների էլ՝ աշխատությունը բաժանվել է համապատասխան գլուխների:

Մեր աշխատանքի ընթացքում օգտագործել ենք հայ պարբերական մամուլի մի շարք հավաքածուներ, ռուսական որոշ պարբերականներ, վրացական ՍՍՀ Կենտրոնական Պետական պատմա-

կան արխիվի (ՎԿՊՊԱ.) և Հայկական ՍՍՀ Պետական Կենտրոնական պատմական արխիվի (ՀՊԿՊԱ.) նյութերը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱՔ) արխիվային բաժնի նյութերը, Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) մամուլի բաժնի, գրադարանի և արխիվի նյութերը: Հայտնում ենք մեր շնորհակալությունը վերը հիշված հաստատությունների ղեկավարությանը և համապատասխան բաժինների աշխատակիցներին՝ նրանց հոգատարության և մեր աշխատանքի համար ստեղծած հնարավորությունների համար:

Նախապարտ ենք մնծանուն գիտնական Աշոտ Հովհաննիսյանին, որն իր խորհուրդներով օգնել է մեզ՝ կողմնորոշվելու հայ լրագրության պատմության բարդ աշխարհում:

Ս. Ռ Ս. Ջ Ի Ն Մ Ա. Ս

«Փ Ո Ի Զ»

(1876—1881)

Ա-8857

ԴԱՎԻԹ ԱՒԱԳՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Ա. ԱԶԳԱՅԻՆ–ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԴՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ազգային-պահպանողական հոսանքը հայ իրականության մեջ ծագունդ է առել անցյալ դարի կեսերին և հարատևել մինչև ռուսական առաջին հեղափոխության նախօրյակը։ Այդ հոսանքի ներկայացուցիչները կես դար շարունակ գտնվել են կովկասահայ հասարակական կյանքի գրեթե բոլոր նշանակալից իրադարձությունների հորձանուտում, իրենց նպաստը բերել հայ նոր գրականության զարգացման, մեր ժողովրդի կրթական ու մշակութային կյանքի վերելքի գործին։

Նրանց հիմնադրած պարբերականները, «Կռունկ հայոց աշխարհին» (1860—1863), «Մեղու Հայաստանի» (1863—1886), «Փորձ» (1876—1881), «Արձագանք» (1882—1898), «Նոր-դար» (1884—1906), դարձել են անցյալ դարի երկրորդ կեսի հայկական կյանքի հայելին, իրենց էջերում պահպանել մեր ժողովրդի սրտամության այդ ժամանակահատվածի ստույգ տարեգրությունը։

Լիբերալ ուղղության պատկանող «Մշակ» և «Մուրճ» պարբերականների հետ մեկտեղ ազգային-պահպանողական հոսանքի մամուլի օրգանները՝ ժամանակի դեմոկրատ գրողների և հրապարակախոսների աշխատակցության շնորհիվ ժամանակաշրջանի քաղաքակրթության բարձրակետից նոր բովանդակություն են հաղորդել հայ ժողովրդի մտավոր կյանքին, օժանդակել նրա հասարակական-քաղաքական ակտիվացմանը։ Հանգիս գալով XIX դարի երկրորդ կեսին, Եվրոպայում ազգային

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

շարժումների ծավալման շրջանում, երբ Անդրկովկասում նույնպես գործում էր դեռևս առաջադիմական իր վերընթաց շարժումն ապրող բուրժուազիան, ժամանակի մամուլի հայ օրգանները ոչ միայն խթանել են արևելահայ ազգային կյանքի վերելքին, այլև համակողմանիորեն քննարկել արևմտահայության վիճակը և օրվա պահանջներին ներդաշնակ՝ ջանացել նպատակասլաց ուղղություն հաղորդել հայ մտավորականության գործունեությանը։

Ազգային-պահպանողական հոսանքի պատմությունը առ այսօր չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա։ Այդ հոսանքի գործիչներին հարևանցիորեն անդրադարձել է Լեոն՝ Գրիգոր Արծրունուն նվիրված իր մենագրության մեջ։ Դժբախտաբար հեղինակի հափշտակվածությունը Արծրունու անձով, հիմնականում օգտաշատ նրա աշխատությունը դարձրել է միակողմանի։ Մենագրության մեջ Գր. Արծրունին ներկայացվում է իբրև ժամանակի բոլոր պատմական իրադարձությունների կենտրոնական դեմքը, բոլոր միջոցառումների նախաձեռնողն ու ղեկավարը։ Նրա հայացքները կատարյալ են և դուրս՝ քննադատության սահմաններից։ «Մշակի» վազվզի պայքարը «Մեղու Հայաստանի» թերթի հետ լուսաբանվում է իբրև առաջադիմական շարժման ու խավարամտության բախում։ Աբգար Հովհաննիսյանը Լեոյի դրքում ներկայացվում է իբրև հետադիմականության ներկայացուցիչ. մշակական կուսակցությունը պայքարելով «Արձագանքի» դեմ, գրում է Լեոն, «պատասխանած էր լինում այն բոլոր տարրերին, որոնք ընդհանուր անունով կոչվում էին «պահպանողական» կամ, ավելի հաճախ, «խավարամիտ»[5]։ Հայ հասարակական-քաղաքական կյանքին Արծրունուց ոչ պակաս մասնակցություն ունեցած գործիչը չի արժեքավորվում իբրև այդպիսին։ Հասկանալի տրամաբանությամբ Հովհաննիսյանի պարբերականները նույնպես չեն ստանում իրենց արժանի դնահատականը։

Այսպիսով, Լեոն անուղղակիորեն քաղաքացիական իրավունք է տալիս պահպանողական տերմինի յուրօրինակ մեկնաբանությանը, որը հետագայում մտնում է շրջանառության մեջ, իբրև հետադիմական և անդամ խավարամիտ հասկացություն։ Հետագա տասնամյակներում նույնպես շատերի կողմից զարմանալի կերպով մոռացության է տրվել պահպանողական (կոնսերվատիվ) տերմինի պատմական-հասարակա-

---

[5] Լեո, Գրիգոր Արծրունի, III հատ., էջ 394։

կան բովանդակությունը, որը տարբեր երկրներում ունեցել է իր տարբեր երանգները և նշանակությունը։

Ժամանակին իրենք՝ ազգային-պահպանողականները, բազմիցս ընդվզել են հոսանքի անարդարացի նվաստացման և ամհարկի պարզունակացման դեմ, ցույց տալով, որ ազգային-պահպանողական աշխարհայացքը բխում է ժողովրդի ապրած բազմադարյան կյանքի բուն էությունից և ներկայացնում նրա ազգային զարգացման որոշակի միտումները[6]։

Ազգային-պահպանողական հոսանքը հայ հասարակական-քաղաքական այլ հոսանքների հետ միևնույն ուսումնասիրել և դրա գիտական, պատմական գնահատականն է տվել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը[7]։ Սակայն գիտնականի մեծարժեք ուսումնասիրություններն ընդգրկում են հոսանքի գործունեության 50—60-ական թվականների ժամանակահատվածը միայն։ Աշ. Հովհաննիսյանը հոսանքի գործունեության հետագա տասնամյակներին մերձենում է մասնակիորեն, առանձին գործիչների ուսումնասիրությամբ։ Չնայած դրան, այն ամենը, ինչ արված է նրա կողմից, անգնահատելի ավանդ է մեր պատմագրության մեջ։

Որոշակիորեն տարբերակելով 50—60-ական թվականների հասարակական-քաղաքական հոսանքների առանձնահատկությունները, Աշ. Հովհաննիսյանը ազգային-պահպանողական հոսանքի համար բնորոշ է համարում հետևյալ գծերը. «Եթե կրոնա-ազգայական հոսանքի համար եկեղեցու խաչվառն էր ազգության դրոշը, ազգային-պահպանողականների համար ոչ թե եկեղեցին, այլ նրանով գոտևորված «ազգն» էր պատգույն և ինքնագոհ հեղինակությունը։ Ազգային լեզու և գրականություն, ազգային լուսավորություն և դաստիարակություն, ազգային պատմություն, ազգային ավանդություն ու բարք— ահա այն արժեքները, որոնք,

---

6 Այսպես, Սպանդար Սպանդարյանը ծաղրելով մշակականներին, որոնք իրենց համարում էին լուսավորության առաջ մղողներ, առաջադիմականներ, իսկ պահպանողականների գործն այն էին համարում, որ նրանք արգելք էին լինում «ժողովրդի լուսավորության, առաջադիմության գործին», վրդովված բացականչում է. «Պետք է տգետ լինել, չհասկանալու համար այն, որ պահպանողականը չի կարող ժողովրդի լուսավորության գործին հակառակ լինել» (տե՛ս «Նոր-դար», 1892, № 209)։

7 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, Ե., 1956, էջ 18—77 և նույն հեղինակի՝ «19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները» («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4 և 1966, № 1)։

կկեղեցուն, նրա պավանությանն ու ծեսերին համընթաց, երաշխիք էին նրանց համար ազգի կենդանության»[8]:

Այն իրողությունը, որ ազգային-պահպանողականները մեծ ուշադրություն էին նվիրում ազգային հիմնարկների կենսունակությանն ու տրադիցիաների պահպանմանը, ազգային կուլտուրական արժեքների հավաքմանը, ժողովրդի պատմական կյանքն ու կենցաղը վեպապատկերելուն և բանահյուսական նյութերի գրառումներին, Աշ. Հովհաննիսյանը համարում է միջոց՝ «սփյուռքում ցրված հայերին իրար հետ կապելու և ազգային դիմազրկությունից և էթնիկական ասիմիլյացիայից նրանց ապահովագրելու համար»[9]:

Հայ հասարակական-քաղաքական հոսանքներին նվիրված իր ուսումնասիրության մեջ Աշ. Հովհաննիսյանը կանգ է առնում և ազգային-պահպանողական հոսանքի դնահատականի պատմական բախտի վրա: Նա գրում է, թե ազգային-պահպանողական հոսանքի դեմ իրենց պայքարը դյուրացնելու համար՝ նրան լիբերալ հրապարակախոսները համառորեն ներկայացրել են «կղերա-պահպանողական» պիտակով: «Մշակական լիբերալները,— շարունակում է Աշ. Հովհաննիսյանը,— դիտակցաբար անտեսում էին ազգային-պահպանողականների դերբաղորման ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները և միաժամանակ՝ սովի տակ պահում նրանցից անկախ կղերա-ազգայական հոսանքի ցարիստական-դաղութատիրական հայացքների ռեակցիոն բովանդակությունը: Լիբերալ հրապարակախոսների ու պատմագրողների ցանած այդ մշուշը դժբախտաբար իշխող նախապաշարմունքի ուժ ունի մինչև այսօր նույնիսկ սովետահայ գրականության մեջ»[10]:

Վերը հիշված այդ մտայնությունն իր դրսևորումն է գտել Վահան Իշտունու «Հայ հասարակական հոսանքների պատմության» մենագրության մեջ: Պետք է ասել, որ այս աշխատությունը պատմագիտության մարզում առաջին փորձն է վեր հանելու անցյալ դարի երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների պատմությունը: Արդարության հարկը պահանջում է տալ նաև, որ Իշտունին առաջինն է բարձրացրել հոսանքների ուսումնասիրության անհրաժեշտությունը, այդ համարելով սովետական պատմագիտության հերթական խնդիրներից մեկը: Սակայն Իշտունին իր եզրահանգումները հիմնականում կատարել է տնտեսական

---

[8] Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, էջ 33:

[9] Նույն տեղում, էջ 49:

[10] «Գաղափար-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 65:

հարցին նվիրված նյութերի հիման վրա, այդ պատճառով թեև նրա գնահատականները զարձել են միակողմանի։ Այսպես, պատմական ժամանակաշրջանի իրադարձությունների գնահատման համար իբրև չափանիշ նա ընդունում է միայն հեղափոխական դեմոկրատիզմը և, անցյալի գործիչներին բաժանելով երկու հակատակ բանակների, ըստ այդմ էլ արժեքավորում է նրանց գործունեությունը։ Առաջնորդվելով այդ բանալիով, Ռշտունին «Արձագանքի» տեսաբաններին նետում է ռեակցիոն-միապետական բանակը, քանի որ նրանք հողային ռեֆորմը չեն դատապարտել հեղափոխական դեմոկրատիզմի դիրքերից։ Ավելին, առանց հաշվի առնելու պատմական կոնկրետ փաստերը, հայ հասարակական հոսանքների մտահոգությունները ու նրանց գործունեության շրջանակները, անդիտանալով այն ճշմարտությունը, որ Ա. Հովհաննիսյանն իր հրապարակախոսական գործունեության ընթացքում ընդվզում էր ցարիզմի ագրային քաղաքականության դեմ, Վ. Ռշտունին նրան և նրա գաղափարակիցներին համարում է գործիչներ, որոնք իբր «կանգնում էին ցարիզմի կողքին՝ ընդդեմ ժողովրդի»։

Մեր կարծիքով «միասնական հոսանքի» հակապատմական սխեման կաշկանդել է գիտնականին և նրան հարկադրել XIX դարի վերջին քառորդի հայ իրականության մեջ տեսնել միայն երկու հակադիր հասարակական հոսանք. ընդ որում, մեկ նա մեկի մեջ տեսնում է միայն դրականը, առաջադիմականը, ապա մյուսի մեջ՝ շեշտում է լոկ հետադիմականն ու մերժելին[11]։

Այս սխեման էլ հենց նրան ստիպել է Ստեփոյան Անդրկովկասի ագրային-լուսավորական, լիբերալ-բուրժուական և ագրային-ազատագրական շարժումներին մեծ կամ փոքր չափով իրենց նպաստը բերած մամուլի բոլոր օրգանները անվերապահորեն որակել որպես բուրժուական ռևանշիզմի արտահայտություններ («Մշակ», «Նոր-դար», «Փորձ», «Արձագանք», «Մեղու Հայաստանի»)[12]։

---

[11] Տե՛ս Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 546։

[12] Պետք է ևս նշել, որ Ռշտունու մենագրությունն արդեն հրատարակության պրոցեսում է գտնվել, երբ Հայաստանի կոմունիստական կուսակցության XVII համագումարը 1954-ի փետրվարին դատապարտեց «միասնական հոսանքի» կոնցեպցիայի հեղինակներին և արձանագրեց, որ «խոշոր սխալներ ու աղավաղումներ են թույլ տրվել հատկապես հայ ժողովրդի անցյալի կուլտուրական ժառանգության գնահատման հարցերում» (տե՛ս «Սովետական Հայաստան», 1954, փետրվարի 19-ի առաջնորդողը)։

Քննադատելով «միասնական հոսանքի» շրջանի այս մատենագիտությունը, Ս. Զուրաբյանն իր «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» աշխատության մեջ շեշտում է, որ ժամանակի հայ հասարակական կյանքում առկա էին «ոչ թե երկու ուղղություն, ինչպես կարծում էին առանձին ընկերներ, այլ երեք ուղղություն, այն է՝ ա) ռևոլյուցիոն-դեմոկրատական, բ) լիբերալ-բուրժուական, գ) կղերա-ֆեոդալական: Տվյալ ժամանակաշրջանում,— գրում է Զուրաբյանը,— բացի շահագործողների և շահագործվողների միջև եղած անտագոնիստական հակասություններից, գոյություն ունեին նաև դասակարգային այլ հակասություններ: Այդ առաջացող և աճող բուրժուազիայի և կալվածատիրական-կղերական դասակարգի միջև եղած հակասություններն էին: ...Անտեսել այս կարգի դասակարգային հակասությունները քննարկվող ժամանակաշրջանում, ընդունել հայ հասարակական մտքի միայն երկու ուղղություն, նշանակում է մեղանչել մարքսիզմ-լենինիզմի դեմ: Այդ սխալ հարցադրումով մի շարք պրոբլեմներ մնում են անբացատրելի»[13]:

Այս աշխատության մեջ նա նշում է և մի կարևոր հանգամանք, որը յուրատեսակ բանալի կարող է ծառայել մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի հայ պարբերական մամուլի բնութագրման համար: Նա գրում է. ժամանակագրական տեսակետից հայ ժողովրդի ինչպես տնտեսական և սոցիալական կյանքը, այնպես էլ հասարակական-տնտեսագիտական միտքը որոշ չափով հետ էր մնում Ռուսաստանից: Այդ պատճառով էլ մինչդեռ ռուսական լիբերալիզմը 80-ական թթ. արդեն դադարում էր պրոգրեսիվ հոսանք լինելուց, հայ լիբերալիզմը դեռ շարունակում էր մնալ որպես այդպիսին: Ուստի և՝ շարունակում է Զուրաբյանը, Արծրունու և մյուս գործիչների լիբերալիզմը «19-րդ դ. 80-ական թթ., երբ պրոլետարական ռևոլյուցիան դեռ մոտակա խնդիր չէր, մի շարք հարցերում հանդես էր գալիս հարաբերականորեն ավելի արմատական հայացքներով, մինչդեռ հետագայում, Ռուսաստանում բանվորական շարժման ծավալման ժամանակաշրջանում նա վերածվեց կոնտրռևոլյուցիոն ուժի»[14]:

Ս. Զուրաբյանի հետևությունները բխում են մարքս-լենինյան տեսության բուն ոգուց: Հիրավի, վ. Ի. Լենինը պատմական երևույթների գնահատման համար վկայակոչում է Մարքսի մեթոդը, որը ամեն բա-

---

[13] Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 10:

[14] Նույն տեղում, էջ 365:

նից առաջ հաշվի էր առնում «պատմական պրոցեսի օբյեկտիվ բովանդակությունը տվյալ կոնկրետ մոմենտում, տվյալ կոնկրետ իրադրության մեջ»: Քննադատելով Ա. Պոտրեսովին այն բանի համար, որ նա իմպերիալիստական դարաշրջանը փորձում էր ներկայացնել բուրժուական-պրոգրեսիվ, ազգային-ազատագրական և դեմոկրատական-ազատագրական շարժումների դարաշրջանով, Վ. Ի. Լենինը պատմական դարաշրջանների հստակ պարբերացում է կատարում: Նա ընդգծում է, որ առաջին դարաշրջանում (1789—1871) գլխավոր դասակարգը, որն ընթանում էր վերընթաց գծով՝ բուրժուազիան էր: «Զանազան երկրներում, տարբեր շերտերով ներկայացնելով ունևոր ապրանքարտադրողներին, այդ բուրժուազիան տարբեր աստիճանի պրոգրեսիվ էր, և երբեմն (օր. իտալական բուրժուազիայի մի մասը 1859 թվականին) նույնիսկ ռևոլյուցիոն, բայց դարաշրջանի ընդհանուր գիծը հենց բուրժուազիայի պրոգրեսիվությունն էր, այսինքն ֆեոդալիզմի դեմ մղվող նրա պայքարի չլուծվածությունը, անավարտությունը»[15]:

Մարքսիզմ-լենինիզմի հայ տեսաբանները նույնպես մեզ ուսուցանում են հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրման գործում ղեկավարվել պատմական հայացքով: Այսպես, հայ ականավոր հեղափոխականներ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ալ. Մյասնիկյանը լատ պատշաճին գնահատելով Դրիդոր Արծրունու դերը անցյալ դարի 70—80-ական թթ., ընդգծում էին և «Մշակի» ապրած ակնհայտ վայրէջքը՝ հետագա տասնամյակներում: Սուրեն Սպանդարյանն անդրադառնալով հայ հասարակական հոսանքներին տրված հախուռն գնահատականներին, ափսոսանք է հայտնում, որ համարձանոթ «կղերականություն», «պահպանողական ուղղություն», «նացիոնալ-լիբերալներ» և այլ տերմիններն օգտագործվում են՝ «առանց հաշվի առնելու այն առանձնահատկությունները և այն ուրույն հատկությունները, որ այդ՝ ամենուրեք ընդունված քաղաքական տերմիններին հաղորդում է յուրաքանչյուր ազգության զարգացման պատմական ընթացքը»: Սպանդարյանը հասարակական մտքի պատմությամբ զբաղվողների առաջ խիստ ուսանելի պահանջ է դնում, որ յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր ժողովրդի մեջ այդ տերմինները կիրառվեն «պատշաճ զգուշավորությամբ, ուշադրության առնելով պատմական տեսակետը»[16]:

---

[15] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 176:

[16] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, Երևան, 1949, էջ 36—37:

1930-ական թթ. «Փորձի» ուսումնասիրությամբ սկսել է զբաղվել հայ մարքսիստ պատմաբան Արշավիր Մելիքյանը: Մեզ հասած նրա ձեռագիր աշխատությունը ամփոփում է «Փորձի» առաջին երկու տարիների նյութերի ուսումնասիրությունը՝ հեղինակի շատ հետաքրքրական դիտողություններով և գնահատականներով: Այնքանով, որքանով ձեռագիրն անավարտ է, նպատակահարմար ենք գտնում մեջ բերել մի հատված Աշ. Հովհաննիսյանի՝ այդ ձեռագրի համար գրած առաջաբանից:

«Մեր պատմագրության և գրականության մեջ մինչև հիմա իշխող է հանդիսացել այն տեսակետը, թե կովկասահայ պահպանողական հոսանքը հանդիսացել է 19-րդ դարի հայ հասարակական մտքի առավել ռեակցիոն հոսանքը: Մեր պատմաբանների ու գրականագետների մեծ մասը սահմանափակ չի դնում կովկասահայ կղերա-ֆեոդալական և ազգային-պահպանողական հոսանքների միջև: Լիբերալներից ժառանգած արատավոր այս տեսակետը սխալ հունի մեջ է դրել ռուսահայերի՝ 19-րդ դարի հասարակական զարգացման գիտական ուսումնասիրությունը: Մելիքյանի աշխատության մեջ զետեղված նյութերը, ինչպես և դրանց մասին արած նրա մասնակի դիտողությունները հերքում և մերժում են այդ սխալ հայացքը: Նրա թերավարտ ուսումնասիրությունն իսկ ցույց է տալիս, որ 70-ական թթ. հայ պահպանողականների դաղափարախոսները հանդիսանում էին ոչ թե հայ ֆեոդալական կամ կղերական ռեակցիայի, այլ հայ բուրժուազիայի հրապարակախոսության՝ դեպի արդյունաբերական կապիտալիզմի զաղափարախոսության կատարած էվոլյուցիայի մի տարատեսակությունը»[17]:

Աբգար Հովհաննիսյանի «Արձագանք» շարաթաթերթին անդրադարձել է Հր. Թամրազյանը իր «Շիրվանզադե» մեծարժեք մենագրության մեջ: Թամրազյանը նույնպես վերանայում է Հովհաննիսյանի պարբերականներին տրված դնահատականները և նյութի խորհրդայնությամբ հերքում անցյալներից եկող՝ մամուլի որոշ օրգանների մեխանիկական պիտակավորումը: Նա զուգահեռներ անցկացնելով ազգային-պահպանողական հոսանքի պարբերականների միջև, նշում է այն հետաքրքրական երևույթը, որ միևնույն հոսանքի օրգանները նույնպես զանազանվում են միմյանցից: Այսպես, «Արձագանքն» առանձնացնելով «Մեղու Հայաստանից» և «Նոր-դար» թերթերից, Հր. Թամրազյանն իրավացիորեն հաս-

---

[17] Աշ. Մելիքյան, Նյութեր հայ հասարակական կյանքի և մտքի պատմության, էջ X (ձեռագիր, Պատմության ինստիտուտի դրադարան):

տատում է, որ առաջինը՝ հաճախ «ոչ միայն պաշտպանել է «Մշակի» լիբերալ որոշ սկզբունքները ազգային և քաղաքական կյանքի մեջ, այլ երբեմն ավելի ակտիվ ու վճռական է եղել հասարակական որոշ խնդիրների նկատմամբ»:

Հր. Թամրազյանը վիճարկում է Ռշտունու՝ «Արձագանքին» և «Փորձին» տված դնահատականները: Պատմական ուսումնասիրության հավաստիության համար նա կարևոր է համարում թերթերի առաջնորդողների հետ մեկտեղ խորամուխ լինել նաև այդ թերթերի էջերում տպագրված պրական նրկերի ուղղության հարցերի մեջ: «Այդ դեպքում,— գրում է նա,— գուցե թե այնքան հեշտ չլիներ խաչաձև սև գծեր քաշել մեր հասարակական մտքի մեջ որոշակի դրական դեր խաղացած այդ ամսագրի և թերթի վրա»[18]: Հր. Թամրազյանն իր մենագրության մեջ արժանին է հատուցում Ա. Հովհաննիսյանի պարբերականներին, ընդգծելով դրանց դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ:

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների գործունեությունը հանգամանորեն քննարկել է Ս. Սարինյանը՝ «Հայ նոր դրականության պատմություն» բազմահատորյակի երրորդ և չորրորդ հատորների «Ներածություն» բաժիններում: Այդ հետազոտության մեջ Ս. Սարինյանը վեր է հանել ազգային-պահպանողական հոսանքի երկու թևերի առանձնահատկությունները, նշել «Փորձի» և «Արձագանքի» տեղը հայ հասարակական կյանքում: Հատկանշական է, որ Սարինյանը հաշվի առնելով սոցիալ-անտեսական և պատմա-փիլիսոփայական հարցերում «Փորձի» և «Արձագանքի» ունեցած ոչ միշ դիրքորոշումը, այդ պարբերականների գաղափարախոսների ուղղության առանձնացնում է «Նորդարի» ուղղությունից, առաջիններին կոչելով լիբերալ-պահպանողականներ[19]:

«Չբաժանելով կապիտալիզմի նորդարական ռոմանտիկական քննադատությունը,— գրում է Սարինյանը,— պահպանողականների լիբերալ գաղափարախոսները ավելի արմատական ձևով էին դնում հասարակության բուրժուական զարգացման անհրաժեշտությունը, հավատում բուրժուական քաղաքակրթության բարօրությանը, պահպանողականության

[18] Հր. Թամրազյան, Հիվանդապետ, կյանքը և գործը, Երևան, 1961, էջ 56:

[19] Ուշագրավ փաստ է, որ Ռշտունին նույնպես վերը հիշված իր մենագրության մեջ գտնում է, որ «Փորձը» և «Արձագանքը» պատկանում էին ազգային-պահպանողական հոսանքին, «թեև ոչ այնպես ցայտուն կերպով, ոչ էլ այնպիսի հետևողականությամբ» (էջ 148):

ծայրահեղությունները չափավորելով ինտելիգենտական շրջահայեցությամբ»[20]: Մյուս կողմից, Սարինյանը նույնպես շփման կետեր տեսնելով «Մշակի» և «Արձագանքի» միջև, ինչպես և Թամրազյանը, գտնում է, որ «Մշակի» հրատարակության վերջորդ էտապում «Աբգար Հովհաննիսյանի չափավոր լիբերալիզմը ավելի էր հանդուրժում դեմոկրատական հովերի թափանցումը շաբաթաթերթի էջերը, քան այդ կարող էր թույլ տալ Արծրունու մարտնչող լիբերալիզմը»[21]:

Ինչ էլ որ լինի, սակայն, «Փորձը» և «Արձագանքը» դնահատվում են իբրև ազգային-պահպանողական հոսանքի օրգաններ, որոնց հրատարակչատիրական և գործելակերպի ծանրության կենտրոնը Ս. Սարինյանը համարում է ազգային հարցը: Նա առանձնահատուկ հստակությամբ բացահայտում է ազգային-պահպանողականների ազգային գաղափարաբանության սկունքները՝ կապված կուլտուր-պատմական հայեցողության հետ: Մի հանգամանք էր այդ, որը նախանշում էր հոսանքի գործունեության նպատակամղումը, ազգի հոգևոր կուլտուրայի ոլորտներում ազգի «անհատականության» և նրա գոյության նեցուկները որոնելու՝ նրա գործիչների ջանքերը[22]:

Այսպես, ուրեմն, ովքե՞ր էին ազգային-պահպանողականները և ի՞նչ շահախնդրություններ էին նրանց առաջնորդում XIX դարի վերջին քառորդում: Անցել էր 60-ական թվականների տնտեսական զարգացման փուլը, Անդրկովկասի հայ բուրժուազիան ամրապնդել էր դիրքերը և նշանակալից հաջողություններ հասել արդյունաբերական կենտրոններում: Ազգային-պահպանողական հոսանքը 1850—60-ական թվականներին արտահայտում էր Անդրկովկասի քաղաքային արհեստավորության և առևտրական բուրժուազիայի շահերը, բայց հետևելով պատմական զարգացման ընթացքին, չէր անգիտանում կապիտալիզմի զարգացման հնարավորությունը երկրում: Հոսանքի գործիչներից ոմանք, Գ. Ախվերդյանը և նրա համախոհները, ընդունում էին երկրի տնտեսության զարգացման այդ նոր, բարձր աստիճանի անհրաժեշտությունը, բայց միաժամանակ հակադրվում էին ցարական դաղութարարներին, օտարազգի և ռուս կապիտալիստներին՝ նրանց ուղած արտոնությունների համար: «Նրանց գործունեությունն ուղղված էր Կովկասի արտադրողական ուժերի զար-

---

[20] «Հայ նոր դրականության պատմություն», 1972, հատ. 4, էջ 20:

[21] «Հայ նոր դրականության պատմություն», 1964, հատ. 3, էջ 34:

[22] Տե՛ս «Հայ նոր դրականության պատմություն», հատ. 4, էջ 20—21:

պայմանը տեղական կապիտալիստների ձեռքերով նպաստելու նպատակակետին»,— գրում է Աշ. Հովհաննիսյանը[23]։

Ազգային-պահպանողական հոսանքի սոցիալական հիմքը հաջորդ փուլում, ժամանակի տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, փոխվում է։ Արդեն 80-ական թվականներին ազգային-պահպանողական հոսանքի մի թևը որոշակիորեն արտահայտում էր արդյունաբերական բուրժուազիայի շահերը, խրախուսում արդյունաբերական կապիտալի տեղական ներկայացուցիչների ձեռներեցությունը։ Այդ տարիներին հոսանքը ինչ-որ չափով երկփեղկվում է և այդ իր արտահայտությունն է գտնում «Նոր-դար» և «Արձագանք» թերթերի քաղաքականության մեջ։ Ս. Սարինյանը հետևյալ բացատրությունն է տալիս այս հարցին։ Սոցիալական իրենց հիմքով կապված մնալով արհեստավորության և մանրբուրժուական շերտերի հետ, «Մեղու Հայաստանի», ապա «Նոր-դար» թերթերի տեսաբանները հիվանդագին են ընդունում բուրժուազիայի զարգացման բուռն ընթացքը, որն սպառնում էր ազգի միասնության նրանց իդեալին և խարխլում մանրբուրժուական խավերի դիրքերը։ Սակայն, ամբողջապես մերժել կապիտալիզմի զարգացումը, նրանք չէին կարող։ «Նոր-դարի» տեսաբանները հարկադրված էին ընդունել դրա անխուսափելիությունը, ձգտելով «կապիտալիզմի զարգացումը հարմարեցնել ազգի ամբողջության անխախտ պահելու պատրանքին»։ Այսպիսով, Սարինյանը մատնանշում է ազգային-պահպանողական հոսանքի հիմնական թևի տեսական հավատամքի և գործնական ծրագրերի միջև առաջացած հակասության փաստը։

«Նոր-դարի» շրջանակի գործիչներն ընդվզում էին կապիտալիզմի բերած չարիքների դեմ և քննադատում բուրժուական հասարակության հակասությունները։ Հակադրվելով «Մշակին», որը ազգապահության հիմքը համարում էր տնտեսական գործոնը, նորդարականները ազգի պահպանության համար առաջնակարգ նշանակություն էին տալիս բարոյական գործոնին։ Նյութական հարստությունը և տեխնիկական առաջընթացը նրանք ներթափանցում են միայն ազգային ավանդական կառուցվածքի սահմաններում, գրում է Սարինյանը։ Ուստի և, «այնտեղ, ուր կապիտալիզմի զարգացումը խախտում է ազգային օրգանիզմի ավանդա-

---

[23] Աշ. Հովհաննիսյան, Կ. Ալվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակագրությունը Վրաստանի և Պարսկաստանի համբարությունների մասին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 195)։

կան դիմապատկերը, «Նոր-դարը» հանդես է գալիս որպես կապիտալիզմի քննադատ»[24]:

Ազգային-պահպանողական հոսանքի մերկրորդ թևի գործիչները, որոնց Ս. Սարինյանն անվանում է լիբերալ-պահպանողականներ, համախմբված էին «Փորձ» և «Արձագանք» պարբերաթերթերի շուրջը: Այս օրգանները հրատարակվել են 1876—1898 թթ., դրանք քառորդ դար, և հետևողականորեն արտացոլել այն սոցիալ-քաղաքական, ազգային ու մշակութային տեղաշարժերը, որոնք կատարվել են հայ իրականության մեջ նշված ժամանակամիջոցում: Ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները ջանացել են հասկանալ պատմական ժամանակաշրջանի առաջադրած խնդիրները և դրանց լուծման համար որոնել բանական ուղիներ: Եթե Եվրոպայում ազգային պետությունների ձևավորման համար մղված պայքարի շրջանում նրանք մեծագույն ուշադրությամբ քննարկում էին հայ ժողովրդի ազգային կյանքի ամրապնդման միջոցները և «Փորձի» էջերում լայնորեն արծարծում էին Եվրոպայի փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի թեմատիկան, խորամուխ լինում պատմական, բանասիրական հարցերի մեջ, ապա ռուսաստանում կապիտալիզմի բուռն զարգացման փուլին, ազգային հարցին զուգահեռ «Արձագանքի» գործիչներին հրամցնում է սոցիալ-տնտեսական նորանոր խնդիրներ:

Աբ. Հովհաննիսյանը, ի տարբերություն նորպարականների, ընդունում է կապիտալիստական զարգացման պատմական օրինաչափությունը երկրում և անվերապահորեն այն համարում իբրև տնտեսական զարգացման հաջորդ փուլը: Այս հարցում «Արձագանքի» շրջանակի գործիչները գաղափարական իրենց հիմնական ասպնիզներով մոտենում էին լիբերալ-բուրժուական հոսանքի գաղափարախոսությանը: Բարձրացնելով կապիտալիզմի զարգացման անհրաժեշտությունը, հայ հրապարակախոսները դրա մեջ տեսնում էին ազգային կյանքի հետագա բարգավաճման գրավականը: Նրանք ինչ-որ չափով իդեալականացնում էին Արևմտյան Եվրոպայի տնտեսական և հասարակական համակարգը և ձգտում յուրացնել բուրժուական քաղաքակրթության նվաճումները: Նկատելով հանդերձ կապիտալիզմի բերած ավերածությունները, բանվորության շահագործումը և այդ դասակարգի զրկանքները, «Մշակի» և «Ար-

---

[24] «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 4, էջ 19:

ձաղանքի» հրապարակախոսները հույս էին հայտնում, թե եվրոպական երկրների զարգացած արտադրության օրինակով կատարելագործելով տեղական արդյունաբերությունը, կարելի կլինի բարելավել բանվորության նյութական ու բարոյական վիճակը։ Ինչպես լիբերալ դործիչները, «Արձագանքի» աշխատակիցները նույնպես մերժում էին դասակարդային հակամարտությունների առկայությունը, բուրժուական հասարակարգում նկատվող հակասությունները վերագրում տեղական բուրժուազիայի հետամնացությանը և ձգտում հասարակական կյանքի իդեալական ներդաշնակության՝ կապիտալիզմի զարգացման և ռեֆորմների միջոցով։

Երկու հոսանքների գաղափարախոսները միևնույն բարյացակամության դիրքերից էին գնահատում 60-ական թթ. Ռուսաստանում անցկացված հողային, զեմստվային, դատարանային և զինվորական ռեֆորմները և յուրաքանչյուր պատեհ առիթի ներբողում էին Ալեքսանդր II «ազատարարին»։ Բնականաբար, իրենց դասակարգային սահմանափակության պատճառով չկարողանալով խորամուխ լինել գյուղացիական ռեֆորմի բուրժուական էության մեջ, նրանք գյուղական տնտեսությունների քայքայումը բացատրում էին ռեֆորմների սկզբունքներից կատարվող շեղումներով և իրրև փրկության ելք՝ առաջարկում էին ռեֆորմի ճշգրիտ կիրառումով գյուղացիների կյանքն ապահովագրել այլևայլ անախորժություններից[25]։

Թե՛ մեկ և՛ թե մյուս հոսանքը մեծ ուշադրություն էր նվիրում ժողովրդի լուսավորության և առաջընթացի գործին, մոր թաի հաղորդում պրակտիկության, թատրոնի, դպրոցական ցանցի զարգացմանը[26]։ Սակայն նրանց գաղափարախոսության մեջ առկա էին լուրջ տարաձայնություններ՝ հիմնական տրվելիք դերի, հայ ժողովրդի, իրրև ազգության՝ հեռանկարների և ինքնապահովության հարցերում։ Ինչպես առհասարակ մյուս ազգային-պահպանողականները, Աբ. Հովհաննիսյանը ևս ազգային

---

[25] Տե՛ս Վ. Ալշուռնի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, էջ 173—178։

[26] Թերևս հենց սրանով է բացատրվում, և դա ունի իր տրամաբանությունը, որ Վ. Պարսամյանը հայ հասարակական հոսանքների բաժանում կատարելիս ազգային-պահպանողական հոսանքը համարում է միջանկյալ ուղղություն, իսկ Ս. Զուրաբյանը առհասարակ ընդունում է միայն երեք հոսանք, բացառելով ազգային-պահպանողական հոսանքի գոյությունը (տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն (1801—1917), հատ. 3, էջ 214—229, Երևան, 1967։ Տե՛ս նաև Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 10)։

կյանքի զարգացման հարցում վճռական նշանակություն էր տալիս բարոյական գործոնին, իր պարբերաթերթերի էջերում մեծ տեղ հատկացնում կուլտուր-պատմական հարցերին։

Ազգային շարժումներով հարուստ XIX դարի բախտորոշ ժամանակաշրջանը ակտիվ գործունեության էր կոչում ազգերին, որոնցից յուրաքանչյուրը ջանում էր համաշխարհային ասպարեզ դուրս բերել իր հոգևոր մշակույթի ձեռքբերումները, աշխարհին ներկայացնել «իր «անհատականությունը»՝ թե ի՛նչ է ինքը, ի՛նչ անցյալ ունի և ինչո՛վ է մտնում համամարդկային կուլտուրայի պատմության մեջ»[27]։ Ստ. Պալասանյանը «Փորձի» էջերում վկայակոչելով հույն ժողովրդի օրինակը, նրա ազատագրությունը բացատրում էր՝ իրենց մտավոր ու հոգևոր հարստության արդասիքը հույների կողմից աշխարհին ներկայացնելու մեծ համոզմամբ։ Իր պարբերականներում Աբ. Հովհաննիսյանն այդ նկատառումներով էր դիմում հայ ժողովրդի պատմական անցյալի ուշագրավ էջերի վերհանմանը, խթանում հայ բանասիրության, գրականության և մշակույթի զարգացմանը, եվրոպական լեզուներով թարգմանում հայ գրականության լավագույն էջերը։

Ազգային-պահպանողականներն իրենց գործունեությունը ծառայեցնում էին մեկ նպատակի՝ ազգի միասնության ամրապնդմանը։ Ազգապահպանման նկատառումներով նրանք դարավերջին ըմբոստանում էին ցարական կառավարության ռուսացման քաղաքականության դեմ, այն պահքում, երբ լիբերալ բուրժուական հոսանքի գործիչները ցարիզմի հետ համակերպվողական քաղաքականություն էին վարում։ Այս առումով հատկանշական է, որ հանձին ազգային-պահպանողականների՝ ցարիզմը տեսնում էր առավել վտանգավոր գործիչների, հետապնդում նրանց, մինչդեռ լիբերալներն ինչ-որ չափով ազատ էին կասկածներից։ Երկու հոսանքների գործողությունների այս սահմանազատումը միանգամայն ակնառու է դառնում ազգային-պահպանողական հոսանքի տեսաբան Սպանդար Սպանդարյանի որդու, ականավոր հեղափոխական Սուրեն Սպանդարյանի մի նամակից, որտեղ ասված է. «Ոչ իմ հայրս, ոչ էլ նրա ուղղությունը հասարակական-քաղաքական տեսակետից ոչ միայն չէին վայելում կառավարության աջակցությունը, այլ միշտ հալածվում էին ամենադաժան կերպով... Կառավարությունը հալածում էր «պահպանողականությունը» (կոնսերվատիզմը), և հովանավորում հայ

---

[27] «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, էջ 45։

«լիբերալիզմը», որովհետև այն ժամանակները իր տեսակետից նա տեսնում էր «թշնամուն» պահպանողականության և ոչ թե լիբերալիզմի մեջ: Լիբերալիզմը ժխտում էր հայկական կյանքի «հիմունքները», իսկ կոնսերվատիզմը պաշտպանում էր այն՝ կառավարության ճնշման և ռուսիֆիկացիայի դեմ»[28]:

Ազգային-պահպանողական հոսանքի գործունեությունը սկսում է ծավալվել նախ Թիֆլիսում, այնուհետև իր արտահայտությունն է գտնում և այլ քաղաքներում:

XIX դարի 50-ական թվականների վերջին Պետերբուրգի համալսարանի շրջանավարտ Կարապետ Եզյանը, որին վիճակված էր կես դար շարունակ գլխավորել ազգային-պահպանողական հոսանքը, ծրագրում է հիմնադրել մի պանսիոն: 1859 թ. հոկտեմբերին «Հյուսիսափայլի» էջերում հրապարակվում է Եզյանի հայտարարությունը, որտեղ նա հրատարակորեն ձևակերպում էր իր հավատամքը: Ազգայնությունը «հարկ է պաշտպանել իբրև մի սուրբ բան», գրում էր նա, իսկ այդ կարելի է իրագործել ազգային դպրոցների միջոցով: Պայքարելու համար օտարամուտ ազդեցությունների դեմ, Եզյանը վճռում է օգնել մայրաքաղաքի հայ ուսանողներին, անաղարտ պահելու նրանց սիրո զգացումները դեպի ազգն ու եկեղեցին, պահպանելու հավատարմությունը «ընտանի լեզվին, որ վեմ անկյան կարն համարվիլ ազգայնության և միակ գանձ հասարակաց»[29]:

Նրա պանսիոնը բացվում է 1860 թվականին: Այստեղ սովորում է հայ պատանիների մի խումբ, որը յուրացնում էր մայրենի լեզուն, ուսումնասիրում հայ ժողովրդի պատմությունը, զբաղվում գրական աշխատանքով:

Կ. Եզյանը հետամուտ էր ավելի լուրջ ծրագրի իրականացման: Նրա գործունեությունը համընկնում էր հայ ժողովրդի՝ իբրև ազգություն իրեն դրսևորելու բուռն ժամանակներին, երբ հայ մտավորականները եռանդագին աշխատում էին ազգի կոնսոլիդացման, նրա համակողմանի զարգացման ուղղությամբ: Հրապարակի վրա էր ավանդական այն թեզը, թե ազգի գոյության երաշխիքը՝ քաղաքական գործոնը, լեզուն և կրոնն են: Քանի որ հայ ժողովուրդը կորցրել էր իր պետականությունը, հայ

---

[28] Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, էջ 160:
[29] «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 834:

գործիչներն առաջ էին քաշում ազգի զարգացմանը խոչնդոտող մյուս երկու գործոնների՝ լեզվի և եկեղեցու պահպանման անհրաժեշտությունը:

Կարապետ Եզյանը և նրա սանները հետագա իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում էին առաջին հերթին ազգային լեզվի մշակման և զարգացման ծրագրով, այն դիտելով իբրև ազգի ինքնաճանաչմանը նպաստող ամենաառաջին պայմանը: Նրանք միաժամանակ պետականություն չունեցող հայ ժողովրդի ինքնապահպանման հարցում քաղաքական գործոնի նշանակությունն էին տալիս եկեղեցուն, սրան հանձնարարելով նաև մայրենի լեզվի զարգացման և անվթար պահպանման գործը: Ըստ նրանց՝ եկեղեցու անօրինության տակ գտնվող բեմերը և դպրոցները ամենից լավ կարող էին «ծաղկեցնել և պահպանել ազգայնության անդրանիկ հատկանիշը, մայրենի լեզվի ուսումը»[30]:

Սակայն ժամանակները փոխված էին: Բուրժուազիայի զարգացման գաղափարախոսները բնական գիտությունների յուրացման կրքոտ պրոպագանդին միացնում էին անցյալի ավանդական հիմնարկները բարեփոխելու, ծեսերը վերացնելու, հեղինակությունները քննության տակ ձգելու պահանջները: «Մշակի» խմբագիրը նոր զարգացող բուրժուազիայի շահերի պաշտպանության գործը ուղեկցում էր մարտական ելույթներով՝ եկեղեցական հնացած օրենքների փոփոխության, ծեսերի վերանայման, հետամնաց հոգևորականության քննադատության ոգով: Նոր գաղափարների մունետիկն անխնա էր ազգային-պահպանողականների նկատմամբ և նկատի առնելով նրանց դիրքորոշումը եկեղեցու հարցում, շատ ոգով է նրանց որակել հնամոլի և պահպանողականի պիտակներով: Մայր առած բանավեճում երկու տասնամյակ շարունակ միմյանց դեմ պայքարում են լիբերալ-բուրժուական և ազգային-պահպանողական հոսանքների ներկայացուցիչները: Առանձնապես տևական էր «Մշակի»՝ մի կողմից և «Մեղու Հայաստանյաց» ու «Նոր-դար» թերթերի միջև սկսված կատաղի բանավեճը, որին խառնվում է և Եզյանը:

Եզյանը եկեղեցու մեջ չէր տեսնում սոսկ ավանդական ձևը: «Մենք հայերս ցրիվ գալով աշխարհիս զանազան կողմերը, ընկնելով բազմազան և ոչ սովորական պայմանների մեջ, այնուամենայնիվ, մի անքակտելի հանգույցներով կապված ենք մնացել և մնում ենք կապված միմյանց հետ սրտով, հոգով և դպացմունքով: Այդ անքակտելի հանգույցը

30 «Արձագանք», 1883, № 5:

եկեղեցին է, որը պահպանել է մեր ազգայնությունը և ինքնուրույնությունը յուր գոյության սկզբից մինչև ներկան»[31]:

Ազգային-պահպանողականների տեսակետն այս հարցում հստակորեն ձևակերպում է «Մեղու Հայաստանի» թերթի առաջնորդ Սպանդար Սպանդարյանը: Հերքելով «Մշակի» մեղադրանքները, նա ընդգծում է, որ իրենց ուղղությունը ոչ կղերական է, ոչ կրոնական, այլ «ազգային է բառի ամենից և բուն նշանակությամբ»: «Մեր նպատակը— ազգությունն է,— գրում է նա,— կրոնը, լեզուն, ցեղը... միջոցներ են, որոնց օգնությամբ մենք մեր նպատակին հասնել ենք ձգտում»: Եկեղեցին նրանք պաշտպանում էին, հաշվի առնելով, որ «մի ազգի, այն էլ մի ընկած ազգի ամբողջության ամենազորեղ պահապանը ազգային եկեղեցին է»[32]:

Ժամանակի հասարակական կյանքում չնկատելով քաղաքական կենսունակ որևէ ուժ, որը պաշտպաներ ազգի սոցիալ-մտավորական և բարոյական շահախնդրությունները, ազգային-պահպանողականները մի կույր հավատով ապավինում էին եկեղեցուն: Նրանք գերագնահատում էին եկեղեցու դերը, իդեալական համերաշխություն տեսնելով եկեղեցու և ազգի շահերի միջև: Եվ առհասարակ նրանք իրենց գաղափարախոսությունը կառուցում էին ազգի բոլոր շերտերի կարծեցյալ միասնության և դրա հետագա ամրապնդման խաբուսիկ հույսերի վրա: Այս պարագաներում նրանք բացարձակապես անգիտանում էին դասակարգային հակասությունների առկայությունը ազգության կազմում և, իհարկե, շատ հեռու էին դասակարգային պայքարի հնարավոր մասորումներից:

Շուտով վրա են հասնում քաղաքական նոր իրադարձություններ: Ռուս-թուրքական պատերազմը օրակարգ է մտցնում հայկական հարցը և հրապարակ է իջնում հայերի քաղաքական ազատության պրոբլեմը: Հակառակ մեր պատմական գրականության մեջ ընդունված այն կարծիքի, թե ազգային-պահպանողականները հեռու են եղել արևմտահայ ազատագրական շարժումները խրախուսելուց, նրանք հսկայական ուշադրություն են նվիրում այդ խնդրին: Երբ արևմտահայությունը համոզվում է, որ խոստացված ռեֆորմները չեն իրականանում և ոտքի է կանգնում սեփական ուժերով ձեռք բերելու իր ազատությունը, ազգային-պահպանողականները խրախուսում են հայկական շարժումները: Ինչպես և

---

[31] ԳԱՖ, Գյուտ Ազանյանի ֆոնդ, վավ. 420:

[32] «Մեղու Հայաստանի», 1882, № 74:

Արծրունու շրջանակի գործիչները, նրանք մասնակցում են արևմտահայերի շարժման առիթով Կովկասում ստեղծված կազմակերպությունների աշխատանքներին, ստեղծում են կոմիտեներ, նյութապես նպաստում արևմտահայերի ապստամբական շարժումների նախապատրաստմանը:

Ազգային-պահպանողականներին մշտապես զբաղեցրել են արևմտահայության սոցիալ-տնտեսական ընկած կացությունն ու ժողովրդի իրավազրկությունը՝ սեփական հայրենիքում: Նրան օգնելու մի շարք ծրագրեր են մշակվել, որոնցից առաջինն էր կրթության ու լուսավորության տարածման անհրաժեշտությունը: Նրանք ձեռնադրում էին դպրոցական ցանցի ու մամուլի միջոցով կրթել ժողովրդի միտքն ու զգացմունքները, ինքնաճանաչության հասցնել նրան՝ ապագա վերածնության և ինքնուրույն քաղաքական կյանքով ապրել կարողանալու համար: Ռ. Պատկանյանին ծանոթացնելով իրենց հրատարակելիք «Լումա» պարբերաթերթի անելիքներին, Փիլ. Վարդանյանը նշում էր այն դեկավար ծրագիրը, որով անհրաժեշտ էր գտնում առաջնորդվել իր գործունեության մեջ՝ խմբագրությունը[33]:

Իբրև ծրագիր մինիմում նա գտնում էր, որ պետք է լուսավորել հայության միտքը, ամրացնել նրա հույսերը, կենդանացնել կրոնն ու լեզուն: Առանց այս ամենի՝ ժողովուրդն ի վիճակի չի լինի բարվոքել իր կյանքը: Իսկ երբ նա կսովորի մտածել, զարգացնում էր ծրագիր մաքսիմումը Վարդանյանը, «այնուհետև ազգային ամբողջության, մեր ապագայի կազմության և ձևակերպության խնդիրները կենդանություն կրստանան նրա մեջ և մենք ուժ կունենանք իրագործելու նոցա կամ մեռնելու նոցա համար»[34] (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Ազգային-պահպանողականները ազգի «ապագայի կազմության» խնդիրը պատկերացնում էին լայն պլանով, երկու հատվածների հայության համար ներդաշնակ զարգացման հնարավորություններ ապահովելու ակնկալությամբ: Ընդ որում, ինչպես ասացինք, առանձնակի զգայուն վերաբերմունք էին ցուցաբերում Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Դեպի Արևմտյան Հայաստանն ունեցած ազգային-պահպանողականների մեծ ուշադրությունը, այլև 60-ական թվականների լրագրային բանավեճերը հիմք են տվել ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանին նկատելու, թե «Մասնավորապես վտանգված համարելով ազգի և եկեղեցու դոյու-

[33] «Լումա» ամսագրի հրատարակության իրավունքը մերժվում է կառավարության կողմից:

[34] ԿԱՄ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 1113:

թյունը Ռուսաստանում, նրանք ընդդիմակայում էին ցարիզմին ու նրա քաղաքականությանը, որոնելով ազգային անցյալի ու ներկայի հաստատանը Ռուսաստանից դուրս՝ Թուրքիայում»[35]:

60—70-ական թվականներին արևելահայ մտավորականներն, իսկապես, համոզված էին, թե արևմտահայերի վիճակը Թուրքիայում այնպիսին է, որ նրանք կարող են աստիճանաբար բարվոքել այն և առաջադիմել: Ողջ խնդիրն այն էր, որ արևմտահայ գործիչներն այդ տարիներին ոգևորված լինելով ազգային սահմանադրությամբ և կրթական ու մշակութային կյանքում սկսված որոշ աշխուժությամբ, իրենց մամուլի էջերում չափազանցնում էին այդ կացության պատկերը և այն՝ ցույցադրաբար հակադրում արևելահայության վիճակին: Այսպես, հրապարակախոս Մ. Մամուրյանը «Արևելյան մամուլի» էջերում, դրա հրատարակության հենց առաջին օրերից, 1871 թ., արձանագրում էր, թե իբր արևմըտահայերը մյուս հատվածների հայության համեմատությամբ «առաջադիմության ու վերաշինության կարապետ կարող էին համարվել: Նկատի ունենալով գավառների ըարաշահումները, ազգային սահմանադրությամբ խանդավառված հրապարակախոսը «վարչային անիշխանությունը» չարիքի փոքրագույնն էր համարում, ընդգծելով այն արտոնությունների կարևորությունը, որ ունեին իրենք («ազգային կյանք, հասարակային օգուտներ, կրոնական ինքնօրինություն, սահմանադրական իրավունքներ»)[36]:

Մամուրյանն ընդունում էր, անշուշտ, որ արևելահայերի համեմատությամբ արևմտահայերը տառապում էին «դառնագետ պատուհասներից», բայց այդ երկրորդական համարելով, շարունակում էր պնդել, թե Արևելյան Հայաստանում հայերի ազգային-բարոյական կյանքը ցարական միապետության ազգային քաղաքականության հետևանքով խաթարված է (նրանց «հոգին, կրոնը, էությունն իսկ մի մարդու կամքին կախված են»)[37]:

Արևմտահայ պարբերականների էջերում շարունակ զետեղվում էին հոդվածներ, որոնց հեղինակները արծարծում էին 1836 թ. Պոլոժենիեի վերաքննության և կամ առհասարակ այն վերացնելու հարցը: 1866 թ. կաթողիկոս ընտրելով Գևորգ Կոստանդնուպոլսեցուն, արևմտահայերը

---

35 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, էջ 33:

36 «Արևելյան մամուլ», 1872, № 1, էջ 14:

37 Նույն տեղում:

նրան հանձնարարում են զբաղվել այդ հարցով, բայց կարճ ժամանակից հիմք ընդունելով այն, որ նա երդում էր տվել ռուսական կայսերը՝ նրան հավատարիմ ծառայելու վերաբերյալ, հիասթափվում են կաթողիկոսից: 1870 թ. արևմտահայ թերթերը տպագրում են Գևորգ IV-ի երդման բնագիրը և հայտնում այն միտքը, թե ցարական կառավարությունն իրավունք չուներ երդումով սահմանափակելու Ամենայն հայոց կաթողիկոսի իրավունքները: Գևորգ IV-ի կարծեցյալ անգործունեության քննադատությամբ հանդես են գալիս Մամուրյանը, Սվաճյանը և ուրիշներ[38]:

Այդ օրերին և հետագայում Պոլսի ննիվն մնում էր գայթակղության այն քարը, որի առիթով կրքերը շարունակ բորբոքվում էին: Ցարը, ճըշտելու համար իր հպատակների վարչական հարաբերությունները ու պարտականությունները, կարող էր էջմիածնի համար վարչական կանոններ սահմանել, գտնում էին նրանք և ընդգծում կառավարության կողմից եկեղեցական կանոնադրության ստեղծման անպատեհությունը:

Արևմտահայ կյանքի վերաբերյալ տեղի մատավորականության ունեցած վերոհիշյալ չափազանցված պատկերացումը, որն, ինչպես ասացինք, պայմանավորված էր ազգային սահմանադրությունը վերադնահատելու իրողությամբ, նկատելի ներգործություն ունեցավ արևելահայ մտավորականներից շատերի վրա: Այսպես, «Փորձի» խմբագրությունը, սկսելով հանդեսի հրատարակությունը, հենց առաջին համարներում ակնածանքով է արտահայտվում ազգային սահմանադրության մասին: Ալ. Երիցյանը դրան նվիրում է մի ծավալուն հոդված, որտեղ համեմատորեն քննում է արևմտահայության վիճակը և նրանց ամենացած պատուհությունները, միաժամանակ հայերին միասնության կոչում՝ սահմանադրությունը պաշտպանելու համար «պետական հարվածներից»[39]: Այդ օրերին ազգային-պահպանողական հոսանքի գործիչները ոգևորվում են և Միքհատի սահմանադրությամբ, որը, նրանց կարծիքով, երկիրը պետք է տեղափոխեր պառլամենտական ռելսերի վրա, «պետական գործերի վարչության սանձը հանձներ ժողովրդի ներկայացուցիչներին»:

Մյուս կողմից արևելահայ գործիչները իրենք ևս դժգոհում էին ցարական դրաքննության ստեղծած սահմանափակումներից և անձնական

---

[38] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1872, № 2, 1879, № 2, տե՛ս նաև «Մեղու», 1870, № 17, 21, 1872, № 66, 70 և այլն:

[39] Տե՛ս «Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը» պատմական տեսությունը («Փորձ», 1876/77, № 1—4):

նամակներում զգուշության էին կոչում միմյանց։ 1876 թ. Պատկանյանին հանձնարարելով «Լումայի» համար գրվելիք հոդվածներում դիմել ալլաբանական լեզվի, Փ. Վարդանյանը գրում էր. «Ջմռռանանք մեր կյանքի և մամլո պայմանները. ասենք այն, ինչ որ կարելի է ասել Ռուսաստանում և իսկապես շահ բերել, թեև ոչ տպագրություն կլիներ մեր արածը»[40]։

Ռուս-Թուրքական պատերազմի օրերին վճռական շրջադարձ կատարվեց ազգային-պահպանողականների աշխարհայացքում։ Երկու հատվածի հայ գործիչները միանգամից զգաստացան։ Մի կողմ նետվեց դիվանագիտությունը, որով շղարշվում էր հրապարակախոսական միտքը։ Իրերը հարկ էր արդեն կոչել իրենց իսկական անուններով։ Փոխվում է նաև «Արևելյան մամուլի» տոնը. դավառահայության վիճակի բարելավման անհետաձգելիությունը դառնում է այդ ամսագրի հոգածության առարկան։

Ազգային-պահպանողականները, որոնք ինչ-որ անիրական լուսապսակի մեջ էին տեսնում ազգային սահմանադրությունը և դժկամությամբ վերաբերվում իրենց երկրում հայ եկեղեցուն պարտադրված Պոլոժենիեին, վճռական այս օրերին վերանայում են իրենց հայացքները։ Սլավոնական ժողովուրդների մոտալուտ ազատագրության մեծ իրադարձությունը փոխում է չափանիշները։ Իսկապե՞ս ազատ են արևմտահայերը։ Ազգային-պահպանողականներն սկսում են գիտակցել ազգային սահմանադրության ռեալ հնարավորությունների անձուկ չափերը և հասկանում միաժամանակ, որ Պոլոժենիեին այն չարիքը չէր, որով միայն պետք էր կշռել մի ժողովրդի քաղաքական բախտավորության չափը։ Համեմատած ռուսական բանակի ազատագրական միսիայով, նրանք Արևմտյան Հայաստանի ազատագրման կամ գեթ ինքնավարության ստեղծման հույսերը որոշակիորեն կապում են ռուսական հաղթական զենքի հետ։ «Փորձի» հրապարակախոսությունն ստանում է մի սևեռյալ ուղղվածություն, որը նույնպես խոսում է ազգային-պահպանողական հոսանքի ապրած էվոլյուցիայի մասին։

Պատերազմի ընթացքում և դրանից հետո Կովկասի գործիչները շարունակում էին մեծագույն ուշադրությամբ քննարկել Հայաստանի ինքնավարության հարցը, դրա հնարավորությունը կրկին տեսնելով Արևմրտյան Հայաստանում։ Մեր կարծիքով Հայաստանի ինքնավարության

---

[40] ԳԱԲ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, գործ 1113։

նրանց փայփայած պատրանքները անվում էին Արևմտյան Հայաստանում առկա սեփական տերիտորիայի և բնիկ հայության քանակական կազմի պատմա-իրավական ուժի գիտակցությամբ և ապա միայն ազգային տարմանադրություն ունենալու իրողությամբ, որը ինչ-որ չափով ոտնձգություններից ազատ էր պահում կրոնական, կուլտուր-կրթական հիմնարկները և մայրենի լեզուն: Այս հարցադրումը նոր չէր. հաշվի առնելով այն, որ «Հայաստանի և հայոց ազգի մեծագույն մասը» գտնվում էր Թուրքիայի կազմի մեջ, ազգային-պահպանողականներից անկախ, Միքայել Նալբանդյանն իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ քննարկում էր Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական պրոբլեմները:

Պետք է ենթադրել, որ այս նկատառումներն էին Կ. Սզյանին հիմք տվել Թիֆլիսի բարեկամների մի նեղ շրջանում հայտարարելու, թե «Ազգի կյանքը կախված է Տաճկական Հայաստանի կենդանությունից»: Սա՝ կենտրոնական հայրենիքի նյութական հիմքերի ամրապնդման նրատանքն էր, որն իր հերթին պետք է դուռ բանար ազգի բարոյական հզորության և քաղաքական ինքնորոշման համար:

Անցյալ դարի 80—90-ական թթ. քաղաքական և տնտեսական կյանքը ծանր կերպարանք է առնում Արևմտյան Հայաստանում: Այս շրջանում, մասնավորապես, ազգային-պահպանողականներն իրենց խնամակալության տակ առնելով Արևմտյան Հայաստանը, դիմադարձ չեն լինում ռուսական պետականությունից (նրանց իսկ արտահայտությամբ՝ հայերի «բնական բարերարից»), որը անձի և գույքի ապահովություն էր տվել արևելահայությանը և որի հզորությունից նրանք հույս ունեին օգտվել, լուծելու համար նաև Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը:

Այսպիսով, Թուրքիայի սահմաններում Հայաստանի ինքնավարության ստեղծման մտահոգությունը ոչ մի կերպ չի կարող ենթադրել, թե ազգային-պահպանողականները թուրքական կողմնորոշում ունեին: Ընդհանուր խորապես դիտակցում էին հայ ազգի շահերը, որոնք անբաժանելիորեն կապում էին ռուս մեծ ազգի հովանավորության տակ գտնվելու գաղափարի հետ: Բոլոր պատեհ առիթներին ազգային-պահպանողականները խոսում էին վերջին երկու դարերում հայերի ռուսական կողմնորոշման անկեղծ արտահայտությունների մասին, խորին ափսոսանք հայտնում, որ Եկատերինա II-ի մահով խափանվել է ամբողջ Հայաստանի ազատագրման ծրագիրը՝ մահմեդական լծից: «Արձագանքի» գործիչների

այս համոզմունքները պահպանվում են և 90-ական թվականներին, երբ ցարական կառավարությունը որոշակիորեն փոխում է իր քաղաքականությունը: Հայտնի է, որ այդ շրջանում ցարիզմը՝ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում, հետապնդում էր ազատ մտքի յուրաքանչյուր արտահայտություն, սահմանափակում ազգային փոքրամասնությունների մշակութային ու կրթական հիմնարկների գործունեության հնարավորությունները: Այս օրերին արևմտահայ շարժման հետ կապված հայ գործիչները մեղադրվում են «հայկական սեպարատիզմի» մեջ: Նույն այդ մեղադրանքով կասկածի տակ է վերցվում և «Արձագանք» թերթը:

«Արձագանքի» աշխատակիցները ձեռք մեկնելով ռուսական դեմոկրատական և լիբերալ մամուլի օրգաններին ու գրողներին, մեծ արժանապատվությամբ իրենց հռչակում են ռուսական հայրենիքի ավելի հարազատ քաղաքացիները, քան ցարական ռեակցիոն մամուլի այն գործիչները, որոնք թշնամանք էին հրահրում Կովկասի փոքր ազգությունների միջև: Ազգային-պահպանողականները ցավագին էին ընդունում Ալեքսանդր III-ի և նրա հաջորդի ազգահալած քաղաքականությունը մի ժողովրդի նկատմամբ, որի հավատարմությանը կասկածելու հիմքեր չկային և որը դեռևս որոնում էր ռուսական կայսրության հովանավորությունը՝ թշվառության մատնված արևմտահայության նկատմամբ:

Դարավերջին ցարական ռեակցիան երկրում ուժեղանում է: Հակառակ լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչների, որոնք հաշտվողական դիրք էին բռնել կառավարության նկատմամբ, ազգային-պահպանողականները փորձում են ինչ-որ չափով դիմադրել հարձակումներին, պաշտպանել ազգային կրթական և մշակութային հաստատությունների անխափան գործունեությունը: Այս ամենն ավելի է ուժեղացնում կասկածները և ներքին գործոց մինիստրությունը փակում է «Արձագանք» թերթը: Նրա խմբագիր Ա.բ. Հովհաննիսյանը մեկուսացվում է հասարակական գործունեության ասպարեզից և ընդմիշտ զրկվում լրագրական աշխատանքով զբաղվելու իրավունքից:

1900-ական թվականներին Կովկասում ստեղծված սոցիալ-քաղաքական նոր իրադրության պայմաններում, երբ հանդես են գալիս քաղաքական նոր ուժեր և կուսակցություններ, ազգային-պահպանողականներն աստիճանաբար դուրս են գալիս գործունեության ասպարեզից:

Ազգային-պահպանողական հոսանքը գլխավորում և դրան ուղղություն ու տոն էր տալիս այդ հոսանքի կարկառուն ներկայացուցիչ Կարապետ Եղյանը: Հոսանքի տեսաբաններից և գործիչներից էին Գ. Եվան-

գուլյանը, Ա. Հովհաննիսյանը, Սպ. Սպանդարյանը, Պ. Սիմեոնյանը: Ազգային-պահպանողական հոսանքն էին ներկայացնում նաև Ավ. Բաբայանը, Փ. Վարդանյանը, Ռ. Հասան-Ջալալյանը, Ալ. Երիցյանը, Նիկ. Տեր-Գևոնդյանը, Կ. Բեհբուդյանը, Հ. Ճաղարբեկյանը և մի շարք գրողներ ու մտավորականներ: Արևմտյան Հայաստանում այդ հոսանքի գաղափարներին համակիր էին Հովհ. քահ. Մկրյանը, Մ. Աղաբեկյանը, Հ. Իփեքճյանը և ուրիշներ:

Հնարավորություն չունենալով բնութագրել հոսանքի աչքի ընկնող բոլոր ներկայացուցիչներին և ցույց տալ նրանց տեղը հոսանքի պատմության մեջ, մենք սահմանափակվում ենք «Փորձի» և «Արձագանքի» շրջանակի՝ վերը հիշատակված մտավորականների գործունեության լուսաբանությամբ միայն: Բնականաբար չենք կարող հավակնություն ունենալ նաև ներկայացնելու հոսանքի սպառիչ պատկերը, քանի որ մեր քննության ոլորտից դուրս են մնում երկու այնպիսի օրգաններ, ինչպիսիք են «Մեղու Հայաստանին» և «Նոր-դարը»: Հասկանալի պատճառով դրանց խմբագիրների գործունեությանն անդրադառնում ենք մասնակիորեն:

Հիմնականում ժամանակի պարբերականների էջերում արծարծելով իրենց հուզող խնդիրները, ազգային-պահպանողականները, սակայն, զրաքննական խստությունների պատճառով մի շարք հարցերի շուրջ մտքեր էին փոխանակում անձնական նամակներում: Ահա այդ նամակների ուսումնասիրությունը, մամուլում հրապարակված նյութերի հետ մեկտեղ, հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական ուղղության և նրա գործիչների վարած քաղաքական պայքարի մասին:

Բ. ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Կարապետ Եզյան *(1835—1905)*: Արևելագետ, իսկական գաղտնի խորհրդական Կարապետ Հարությունի Եզյանը ծնվել է Աստրախանում: 1853-ին արծաթի մեդալով ավարտում է Լազարյան ճեմարանը, այնուհետև Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ արևելյան լեզուների մագիստրոսի գիտական աստիճանով: Համալսարանն ավարտելուց հետո Եզյանն աշխատանքի է անցնում նախ Ներքին գործոց, ապա Լուսավորության մինիստրություններում, և ամբողջ 50

տարբ գտնվում է պետական ծառայության մեջ: Նա միաժամանակ զբաղվում է գիտական-բանասիրական աշխատանքներով, զգալի նպաստ մուծելով հայ բանասիրության անդաստանը[41]:

Գարագաշ Եղյանը թեև ամբողջ կյանքն անց է կացրել Պետերբուրգում, սակայն սերտորեն կապված էր հայ իրականության հետ և գործուն մասնակցություն էր ցույց տալիս երկու հատվածների հայության ազգային-մշակութային կյանքին: Չնայած պաշտոնական գործերով իր զբաղվածությանը, նա զարմանալի չափերի գրագրություն ուներ հայաշատ կենտրոնների բազմաթիվ գործիչների հետ[42]:

Եղյանը վախճանվել է 1905 թ., Պետերբուրգում[43]: Իր ժառանգությունը՝ 200.000 ռ. դումարի չափով նա կտակում է էջմիածնին, իսկ գրադարանը՝ էջմիածնի մատենադարանին:

Գործունեության առաջին իսկ քայլերից Եղյանը առաջնորդվում է կանխամտածված կուռ ծրագրով, որին չի դավաճանում հետագայում: 1860-ին նրա հիմնադրած սեմինարիոնը, որ նպատակ ուներ հայ պատանիներին ուսուցանել մայրենի լեզու և նրանց դաստիարակել ազգային ոգով, խրախուսվում է ժամանակակիցների կողմից:

Պակաս կարևոր չէր և Եղյանի նախաձեռնությունը՝ Պետերբուրգի ուսանողական «Ժողով» կազմակերպելու գործում: «Ժողովի» մասնակիցներն իրենց հավաքներին զբաղվում էին հայոց լեզվի և գրականության ուսումնասիրությամբ, կարդում ուսանողների գրական ստեղծագործությունները, ուսումնասիրում ժամանակին մեծ հետաքրքրություն ձեռք բերած բնական գիտությունները: Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ դեռևս 1864 թ. «Ժողովի» նիստերում ուսանողները կարդում էին Արևմտյան Հայաստանից ստացվող նամակները և այլ նյութեր: «Բոլոր

---

41 Եղյանի հիմնական աշխատություններն են՝ «Նոճ աղանդոց»-ի ռուսերեն հրատարակությունը, «Ներքին կյանք հին Հայաստանի», «Ս. էջմիածնի մայր Աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը», «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ռուսերեն աշխատությունները, «Բոնի միություն հայոց Լեհաստանի ընդ աթոռոյն Հռոմայ» ուսումնասիրությունը (գրարար), Ղևոնդի պատմության հրատարակությունը, Խարդելի «Հայոց ժամանակագրությունը» գրքի տպագրության առիթով գրած տեսությունը և բազմաթիվ հոդվածներ՝ ցրված մամուլի էջերում:

42 Կ. Եղյանի հսկայածավալ արխիվը՝ ստացած նամակները և գրած բազմաթիվ նամակների սևագրությունները պահպանվում են ՍՍՀՄ Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի արխիվում: Եղյանի ֆոնդի փաստաթղթերի միկրոպատճենները պահվում են նաև ՀՊԿՊ արխիվում:

43 Թաղված է Մոսկվայում, Եղյանների տոհմական դամբարանում:

տվյալներից երևում է,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— որ Պետերբուրգի հայ ուսանողներին եկեղեցու և ազգության տրադիցիոն հեղինակությունների շրջանում պահպանելու գլխավոր հոգսն ընկնում էր Եղյանի վրա։ Եղյանի միջոցով է հենց, որ Սանասարյանը նյութապես օժանդակում էր «աղգասեր» ուսանողներին»[44]։ Ինչ վերաբերում է ժամանակի հեղափոխական շարժումներին, ապա «Ժողովի» ղեկավարները հայ ուսանողներին աշխատում էին հեռու պահել դրանից։ Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ «Ժողովի» անդամների մեծ մասը հետագայում ևս հավատարիմ մնաց Եղյանի ուղղությանը»։ Լայն էին Եղյանի հետաքրքրությունների շրջանակները։ Իբրև բանասեր նա գրագրություններ էր վարում ժամանակի գիտական աշխարհի նշանավոր հայագետների հետ, իր աշխատություններն ուղարկում էր այդ մասնագետներին, ստանում նրանց կարծիքները և փոխադարձաբար գրախոսում (նամակի ձևով) ժամանակի հայագետների աշխատությունները։ Նրա նամակները՝ ուղղված Ն. Բյուզանդացուն, Գ. Սրվանձտյանին, Կ. Կոստանյանին, Գ. Խալաթյանին, Ղ. Ալիշանին և այլ գիտնականների, շոշափում էին հայագիտության բազմազան պրոբլեմները։ Նա միաժամանակ օժանդակում էր իր կոլեգաներին, նրանց համար ուղարկում անհրաժեշտ գրականություն, լուսանկարներ, գիտական տեղեկություններ։ Օգնում էր եվրոպական գիտնականների գրքերի տարածմանը Ռուսաստանում, բաժանորդագրվում էր գիտական հրատարակությունների և դրանք տարածում Արևմտյան Հայաստանի դպրոցներում ու առաջնորդարաններում։

Իբրև բանասեր՝ Եղյանը կարողանում էր պատմական փաստերը ծառայեցնել ժամանակի պահանջներին և քաղաքական հնչեղություն տալ իր գրական աշխատանքին։

Այսպես, 1894—1896 թվականների հայկական ջարդերի շրջանում համոզվելով այն բանում, որ ցարական կառավարությունը չի օգնում սուլթանի ճիրաններում խեղդվող հայությանը, Եղյանը կառավարական շրջանների վրա վճռում է ներգործել գրական աշխատանքով։ Նա կազմում է փաստաթղթերի մի հարուստ ժողովածու՝ «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» խորագրով, որը հրատարակում է 1898 թվականին։ Ռուսական և եվրոպական արխիվներից քաղված այդ փաստաթղթերին նա կցում է հանդամանալից մի առաջաբան։ Պետրոս Մեծը, գրում է Եղյանը, Արևելքում հետապնդում էր ոչ միայն

---

[44] Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, էջ 196։

քաղաքական և առևտրական-արտադրական նպատակներ, այլև՝ կուլտուր-բարոյական։ Նա առաջինը ըմբռնեց Ռուսաստանի վսեմ կոչումը՝ մահմեդականների սարսափան և բռնակալական լծից ազատագրել քրիստոնյա ժողովուրդներին և առաջինը գնահատեց այն օգուտներն ու առավելությունները, որ տալիս էին այդ քրիստոնյա ժողովուրդներին Ռուսաստանի հետ միացնող բարոյական կապերը[45]։ Նիկոլայ II-ի կառավարությունը, սակայն, հեռու էր պատմական դասերը ըմբռնելու ցանկությունից։ Ընդհակառակը, դարավերջին ցարիզմը օրավուր ուժեղացնում էր հալածանքը հայկական մշակույթի օջախների նկատմամբ և նվաստացնում հայ ևկեղեցու նշանակությունը։ 1901-ին Եզյանը հրատարակում է իր «Ս. Էջմիածնի մայր Աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը» ուսումնասիրությունը, հույս ունենալով, թե ծանոթությունը՝ երկու ժողովուրդների միջև անցյալում ստեղծված բարոյական սերտ կապի և փոխադարձ վստահության փաստերի հետ՝ կը վերացնի թյուրիմացությունների ամպերը և կօգնի հարգանքի ու համակրանքի զգացմունքների առաջացմանը։ «Մենք երջանիկ կհամարենք մեզ,— գրում է Եզյանը,— եթե մեր ուսումնասիրությունը այս առումով ինչ-որ չափով օգտակար լիներ»[46]։

Ձետաքրքրական է, որ այս աշխատությամբ ոգևորված էին և քաղաքական կյանքի փակուղու առջև կանգնած Եզյանի բարեկամները։ Ավ. Բաբայանի կարծիքով, պատմական փաստերն անհերքելիորեն ապացուցում էին Եզյանի աշխատության այն եզրակացությունը, թե՝ փոխադարձ վստահության զգացմունքի ամրապնդումը ռուսաց կառավարության և հայ ժողովրդի միջև պետք է սուրբ պարտականություն համարվի ամենքի, և մանավանդ, իշխանություն ունեցողների համար, որովհետև իրենց հայրենիքի բարօրությունն են ցանկանում[47]։

XX դարի սկզբին Կովկասի փոքր ազգությունների դեմ ծավալված ռեակցիայի շրջանում Ավ. Բաբայանը ցանկանում է օգտագործել Եզյանի վերը հիշված աշխատությունը և ցարական վարչարարներին հիշեցնել պատմական փաստերը։ Երբ Ալ. Երիցյանի մահից հետո գեներալ Պոտտոն նոր հեղինակ էր որոնում «Столетие утверждения русской влас-

---

[45] *Г. А. Эзов,* Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 11.

[46] *Г. А. Эзов,* Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901, стр. 53.

[47] *ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Ա. Բաբայանի անձնական նամակից [1902]։*

ти на Кавказе» բազմահատորյակի համապատասխան հատվածի համար («Ռուսաց կառավարության հարաբերությունները հայոց եկեղեցու պետերի հետ»), Բաբայանն առաջարկում է Եղյանի թեկնածությունը: Վերջինիս գրքի եղրակացությունը, թե «հայերի շահերը համապատասխանում են Ռուսաստանի շահերին և Արևելքում ունեցած նրա խնդիրներին» զոհացնում է Պոտտոյին («Այդպիսի մտքեր, ասաց նա,— ես հույս ունեմ, որ մեր կոմիտեում ուրախությամբ կընդունվեն»): Սակ. Բաբայանը գտնում էր, թե շատ նպատակահարմար կլիներ, եթե ցարիզմի այդ «նոր, վերին աստիճանի տեմար քաղաքականության» շրջանում Եղյանի հայացքները հասներին «այն շրջաններին, որոնց պետք է բժշկել»[48]:

Ամբողջ կես դար, 60-ական թվականների կեսերից մինչև Ալիշանի մահը, Եղյանը նամակագրական կապ է պահպանել Ղևոնդ Ալիշանի հետ: Պետք էր ենթադրել, թե տարբեր դավանանքի տեր երկու գործիչներին միացնում էր հայ բանասիրությունը, Ալիշանի անվերապահ հմայքն ու հեղինակությունը, բայց ինչպես ցույց են տալիս փաստերը, Եղյանը հեռահար նպատակներ էր հետապնդում...

Դեռևս 1866-ին՝ Եղյանին ուղղած իր նամակում Ալիշանը գրում էր, թե և՛ Մխիթարյանները, և՛ ռուսահայ մտավորականներն իրենց ջանքերը պետք է ծառայեցնեն մեկ նպատակի՝ ապահովելու և անաղարտ պահելու կրոնը, ազգայնությունն ու բանասիրությունը: 1869-ին առանալով Ալիշանի ընծան՝ «Հուշիկք հայրենեաց հայոց» դիրքը, Եղյանը մի խանգավառ նամակ է գրում այդ գրքի բողած տպավորության մասին: Նա միաժամանակ ցանկություն է հայտնում, որ Մխիթարյան հայրերը համաշխարհային դասական գրականությանը զուգընթաց զբաղվեն նաև հայ նոր գրականության ուսումնասիրությամբ:

Հենվելով տարիների բարեկամական կապերի վրա, Ալիշանը 1870-ին Եղյանին հաղորդում է Կ. Պոլսի հրդեհի հետևանքով Մխիթարյանների դպրոցի ունեցած կորուստների լուրը և խնդրում արևելահայերի օգնությունը: (Նա հիշեցնում է Եղյանի պատրաստակամության արտահայտությունը՝ նեղության դեպքում օգնության ձեռք մեկնելու մասին): «Ձեր աված համարձակությամբ,— գրում էր նա,— խորհրդաբար կհարցնեմ, թե այս առթիս մեջ կրնա՞նք մենք ալ և ի՞նչ կերպով Ռուսաց մեծ տերության մեջ օգնականություն գտնել մեր կրատյանց»: Կարապետ Եղյանը, որ միշտ մեծ ուշադրությամբ ականջ էր դնում օգնության

---

[48] Նույն տեղում:

Ղ. Ալիշանի նամակը Կ. Եզյանին

հայցող մտավորականներին, այս անգամ զարմանալի հաշվենկատ է դառնում: Նա ժամանակն է համարում բացել խաղաքարտերը: Թեև ազգը գնահատում է միաբանության վաստակը, գրում է նա, բայց չի կարող իր զավակների կրթության գործը վստահել օտարազգիների միաբանությանը: Չի կարող, որովհետև իր ցիրուցան, քաղաքական տարտամ վիճակի մեջ ազգը պետք է ամուր բռնի իր երկու գլխավոր հիմքերից, եկեղեցուց և լեզվից: Սակայն այդ ամենով հանդերձ, ազգի բարօրության ամենակարևոր երաշխիքը նոր սերնդի կրթությունն ու դաստիարակությունն է ազգային ոգով: Մխիթարյանների դպրոցում աշակերտներին պարտադրվում է կաթոլիկ կրոնը, մի բան, որ ազգին խորթացնում է միաբանությունից: «Միով բանիվ, քանի՛ որ միաբանությունդ այժմյան դրությամբը մեր մեջ կրոնական երկպառակության և օտարացման ըսկզբունքը պիտի պահե, ազգի մեծ բազմությունը չի՛ կրնար այդպիսի հանգամանաց մեջ օժանդակել դորան յուր բոլոր հոժարությամբ»[49]:

Վահան Ալիշանը ափսոսանքով հրաժարվում է ռուսահայերի օգնությունից (քանի որ «այսպիսի բարակ և բարդ խնդիր մը կհելլե ընդառաջ»): Մեկ դրոշի տակ համախմբվելու Եզյանի առաջարկին սրամտորեն հարում է. դրոշը պարզ չի երևում. եթե դա Գրիգորի և Ներսեսի դրո՞շն է, ապա իրենք «ոչ միայն դրոշին ներքն» են, և կուզեն մնալ, «այլև դրոշակիր ըլլալ. իսկ եթե տարբեր համոզմամբ և ոգվով Գրիգորներ և Ներսեսներ ալ կան, իհարկե, մենք անխտրաբար չենք կարող և կամող՝ միանալ երկու հակառակ սկզբանց և ոգվոց»: Երկուսի միացման համար երկուստեք հավատարաքայլ պետք է առաջանան, գրում է Ալիշանը: Իսկ եթե դիմացինը նույնպես ազատություն չունի, ինչպես իրենք, ապա խորհուրդ է տալիս միմյանց մերձենալ լուսավորության միջոցով[50]:

Իբրև մշակութային, լուսավորության ասպարեզի գործիչ, Եզյանն անկեղծ նվիրումով էր աշխատում հայկական դպրոցների բարվոքման, դպրոցական ցանցի ընդլայնման ուղղությամբ: Վաղ երիտասարդական տարիներին բարեկամություն հաստատելով Մկրտիչ Սանասարյանի հետ, Եզյանը Սանասարյանի գործունեությանն ուղղում է դեպի ազգասիրական, բարեգործական խնդիրների ոլորտները: Սանասարյանը Եզյանի խորհրդով բազմաթիվ հայ երիտասարդների ուղարկում է եվրոպական

---

[49] Նույն տեղում, Ալիշանի նամակների բաժինը, Եզյանի 18/1—71 թվակիր նամակից օգտագործված:

[50] Վ. Ալիշան, Նամակներ, 1969, էջ 41—43:

համալսարանները (դրանցից էին՝ Աբգար Հովհաննիսյանը, Լևոն Տիգրանյանը, Փիլիպոս Վարդանյանը, Սեդրակ Մանդինյանը և շատ ուրիշներ), Կարինում բացում է ժամանակին մեծ հռչակ ստացած Սանասարյան վարժարանը:

Իբրև Սանասարյան դպրոցի խնամակալ-հոգաբարձու, Եղյանը մեծ ջանքեր և ուշադրություն է նվիրում այդ դպրոցի նյութական բարեկեցությանը և ուսումնական պատշաճ մակարդակի ապահովման գործին: Եղյանի անմիջական խորհրդով է Հովսեփ Իզմիրյանը մի պատկառելի գումար կտակում հայ բանասիրության զարգացման օգտին: Այդ գումարով ստեղծվում է «Սահակ-Մեսրոպյան» մրցանակաբաշխությունը:

Եղյանի ցուցումներով էին բացվել Թիֆլիսի «Հովնանյան», Նոր Նախիջևանի «Գոգոյան», Վանի «Սանդխտյան» դպրոցները: Նա բազմիցս ճանապարհորդել է Կարին և Կ. Պոլիս՝ Սանասարյան դպրոցի գործերով, այցելել է Թիֆլիսի դպրոցները, 1878-ին ուսումնասիրել Քութայիսի հայոց երկսեռ դպրոցների վիճակը:

1902-ին Մկրտիչ Խրիմյանի խնդրանքով Եղյանը նյութական օժանդակություն է կազմակերպում Կիպրոսի կրթական որբանոցի համար (որը միջնակարգ դպրոցի էր վերածվում), օգնում է «Աղգադրական հանդես»-ի խմբագիր Լալայանին դրամական նպաստ տալու հարցի լուծմանը:

Ինչպես ասվում է, Եղյանը մասնակցել է նաև Թիֆլիսի 1882 թ. ուսուցչական ժողովի նախապատրաստական աշխատանքներին և գուցե մտահոգվել, թե կառավարությունն ինչպես կընդունի այդ միջոցառումը: Եվանգուլյանը նրան զեկուցում է, թե նա կարող է հանգիստ լինել, որովհետև ժողովն անցել է խաղաղ և հաջող, նույնիսկ սպասածից շատ լավ («այնպես որ՝ Ձեր կասկածներից և ոչ մինը չիրագործվեցավ բախտավորությամբ»): Պարզվում է, որ ժողովի մասնակիցների մի շրջանակ նկատի ունենալով, Եղյանը կանխապես մի հրահանգ էր ուղարկել նրանց՝ դպրոցական գործը հկեղեցուց չանջատելու ցուցումով:

Դպրոցաշինական, լուսավորական այս ձեռնարկումների հիմքում ընկած էր Եղյանի կրոնասիրական մտահայեցությունը, որից նա չի հրաժարվում իր ողջ գործունեության ընթացքում և, որով համոզված էր, թե պետք է ամրապնդվեր հայ ժողովրդի բարոյական վիճակը՝ քաղաքակիրթ աշխարհում:

Իբրև ցարական աստիճանավոր՝ կարապետ Եղյանը Պետերբուրգում օգտագործում էր իր գրաված դիրքը և լայն կապերը՝ հնարավորության

սահմաններում պաշտպանելու ազգային շահախնդրություններ։ Կովկասի և Կ. Պոլսի նրա բարեկամները բազմապիսի հարցերով դիմում էին Եզյանի օգնությանը և մեծ մասամբ ստանում իրենց հետաքրքրող տեղեկություններ տնտեսական, մշակութային հարցերի լուծումը։ Եզյանի բարեկամները, սակայն, գերագնահատելով նրա ուժերը, հաճախ միջնորդություններ էին հարուցում, կապված քաղաքական գործերի հետ. նման հարցերը, բնականաբար լուծում չէին ստանում։ Սկսած 1878 թվականի դեկտեմբերից նրա Թիֆլիսի համախոհները դիմում են Եզյանի օգնությանը, որպեսզի Կամսարականը ռուսաց ընդհանուր հյուպատոսի պաշտոն ստանա Կարինում։ Այդ հարցի լուծումը կապված էր ավելի լուրջ քաղաքական նկատառումների հետ և միջնորդությանը ոչ մի արդյունքի չի հասցնում։

Կ. Պոլսի բարեկամները նույնպես քաղաքական բնույթի հանձնարարություններով դիմում էին Եզյանին։ Այսպես, 1893-ին, երբ սուլթանը դժվարություններ էր հարուցում Խրիմյանին Երուսաղեմից բաց թողնելու հարցում, Մկրյան քահանան խնդրում է Եզյանից բողոքի մի շարժում առաջացնել ռուսահայերի մեջ, և միաժամանակ խորհուրդ տալ Սինոդին, պաշտոնական դիմում հղելու կայսեր։ «Եվ մեծ գայս կատարեք անձայն և անշշուկ, դուք պիտի լինեք այս ազգին փրկիչը՝ վեհագույն, քան զՄամիկոնյանն Վարդան»[51]։

Իբրև պետական բարձր աստիճանավոր, Կ. Եզյանը մուտք ուներ ոչ միայն համապատասխան նախարարությունների ընդունարանները, այլև կապված էր Կ. Պոլսում ռուսաց դեսպանատան աշխատակիցների հետ։ Բ. Դռան հետ ռուսական կառավարության՝ իրեն հետաքրքրող բանակցությունների արդյունքները Եզյանը ստանում էր անձնական լրատուների միջոցով։ Առաջնորդվելով ձեռք բերած (հաճախ գաղտնի) տեղեկություններով, Եզյանը համապատասխան հրահանգներ էր ուղարկում այս ու այնտեղ։ Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, նա ձեռնհաս չէր միջամտելու հայերի քաղաքական իրավունքների հետ կապված որևէ խնդրի լուծմանը և կամ խուսափում էր խորանալ նման հարցերի մեջ։ Եզյանը բավականաչափ զգույշ էր իր գործողությունների մեջ, իսկ քաղաքական մթնոլորտի շիկացման պահերին՝ փրկչոտ ու անվճռական, ինչպես հատուկ է լիբերալ և պահպանողական գործիչներին։ Այդ շրջանում նա ազգային հրատապ հարցերի մասին թարեկամների հետ խոսում էր նամակներով, որոնք շրջանցում էին փոստային ճանապարհը։

---

51 ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Հ. Մկրյանի 17/2—93 թվակիր նամակից։

«Անձայն ու անշշուկ» նա խմբագրում էր էջմիածնի աթոռի կողմից կառավարությանն ուղարկվելիք գրեթե բոլոր դիմումներն ու աղերսագրերը, որի համար նրան հատկապես պատասխանատվության կանչեին։

Ռիֆլիսի կենտրոնը կամ «շտաբը», ինչպես այն անվանում է Եվանդուլյանը, մեծ կոնսպիրացիայի պայմաններում կաթողիկոսական աթոռի համար 1882—1883-ին նախապատրաստում էր Եզյանի թեկնածությունը։ Ազգային-պահպանողական կենտրոնը, հարկավ, ցանկանում էր ըստեղծված քաղաքական բարդ իրադրության պայմաններում ուժեղացնել Աթոռը, դրա ավանդական պասիվ գործունեությանը նոր մղում ու ընտի հաղորդել։ Նրանց համոզմունքով Եզյանը այնպիսի մի թեկնածու էր, որի կապերը պաշտոնական շրջանակների հետ, հայկական կենտրոններում ամենացած հեղինակությունը, այլև լեզուների իմացությունն ու գիտելիքների մեծ պաշարը կարող էին օգնել տեղից շարժելու հայկական հարցը և ցանկալի հունի մեջ դնելու այն... Մեզ հայտնի չէ, թե ինչու այդ հարցը չի մտնում իր իրավական փուլը և մնում է սոսկ նամակաների ու բանավիճային հոդվածների շրջանակներում։ Մի բան, սակայն, պարզ է, որ անկախ հարցի քաղաքական աստառից, հենց միայն այս փաստը՝ պերճախոս կերպով ներկայացնում է Եզյան-քաղաքական, լուսավորական և հասարակական գործչի ամբողջական նկարագիրը։

Իր գործունեության ընթացքում Կարապետ Եզյանը մշտապես հետևում էր ազգային-պահպանողական մամուլի օրգանների գործունեությանը և միջամտում էր խմբագիրների աշխատանքին։ Եզյանի հայացքների համար բնորոշ է մի փաստ. 1903 թ. երբ «Լումայի» խմբագիր Աղանյանն սկսում է իր հանդեսում տպագրել Տուրգենևի «Հայրեր և զավակներ» վեպը, ռուս վաճառականների գաղափարներից հեռու կանգնած Եզյանը խմբագրին գրում է, թե Տուրգենևի վեպի ընտրությունն անհաջող է կատարված։ Ղեկավարվելով զուտ ազգայնական շահախնդրություններով, նա նպատակահարմար է գտնում թարգմանել նույն հեղինակի «Նախօրյակին» կամ «Ծուխ» վեպերից մեկն ու մեկը[52]։

Ռուս-թուրքական պատերազմին հաջորդած հայկական շարժումների շրջանում նույնպես Եզյանն իրազեկ էր շարժման ընթացքին և իր խորհուրդներով կողմնորոշում էր Կովկասի գործիչներին։

Գևորգ Եվանգուլյան *(1843—1901)*։ Եզյանի անմիջական հանձնակատարը և համախոհը բարեկամը Կովկասում Գևորգ Եվանգուլյանն

---

[52] ԳԱԹ, Գյուտ Աղանյանի ֆոնդ, վավ. 427։

էր։ Նա ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, այնուհետև իբրև «Կովկասյան Բոշակառու» ուսանող՝ սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Համալսարանն ավարտել է 1867-ին իրավունքի թեկնածուի աստիճանով։ 1868-ից սկսել է աշխատել Կովկասի փոխարքայության մեջ իբրև դատաստանական քննիչ, նահանգական դատարանի անդամ, դատախազի օգնական։ Եվանգուլյանը 1875-ից Կովկասի կառավարչապետության դատաստանական բաժնի աշխատակից էր. 1882-ին պաշտոնաթող է լինում և աշխատում իբրև երդվյալ հավատարմատար։ Նշանավոր հռետոր էր և իբրև մասնագետ փաստաբան՝ մեծ համբավ ուներ նաև Կովկասի սահմաններից դուրս։ Կյանքի վերջին տարիներին (1898—1901) Թիֆլիսի քաղաքագլուխն էր։

Դեռևս ուսանողական շրջանում Եվանգուլյանը բարեկամություն է հաստատում Կարապետ Եղյանի հետ և հետագայում դառնում նրա զինակիցն ու գաղափարների պրոպագանդիստը Կովկասում։ Նա հավատարիմ է մնում Եղյանին, ամբողջ կյանքում թղթակցում նրա հետ, մտքեր փոխանակում կյանքի առաջադրած բազում հարցերի շուրջ։

Գևորգ Եվանգուլյանը անձնական և նամակագրական կապերով կապված էր Կովկասի, Վանի, Կարինի, Պետերբուրգի բազմաթիվ գործիչների հետ, ուներ համախոհների մի ընդարձակ շրջան, որոնց համար անվերապահ հեղինակություն էր։ Ամենքը իրենց պարտքն էին համարում հաշիվ մատուցել նրան ընթացիկ գործերի մասին և առաձել նրա խորհուրդներն ու առաջադրանքները։ Եվանգուլյանն իր գործունեության ընթացքում մշտապես զբաղվում էր հայ հասարակությանը հետաքրքրող հարցերով, հսկայական ջանքեր ներդնում՝ օժանդակելու արևմտահայությանը։

Նա հմուտ կոնսպիրատոր էր, որի շնորհիվ պաշտոնական շրջաններում ձեռք էր բերել չեզոք գործչի համբավ. «Դրսից ինձ շատ անտարբեր են կարծում,— գրում է նա,— և ես այդ բանին շատ ուրախ եմ»։ Մի այլ նամակում, սակայն, նշում է. «ինձ մի քանի շրջաններում խիստ նացիոնալիստ են համարում և այդ բանը ինձնից մասնավոր բարեկամական «մասլահաթի» ժամանակ չեն ծածկում»։ Այս տողերը նա գրում է 1892-ի հունիսին, երբ իբրև դատապաշտպան հանդես էր եկել Կուվունյանի գործով։

1895—97 թթ. Եվանգուլյանը մոտիկից զբաղվում է Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի նյութական ապահովության հարցով, Եղյանի հանձնարարությամբ բանակցում համապատասխան գործիչների

հետ։ Որբերին Հայաստանի սահմաններից դուրս չուղարկելու նպատակով, հորդորում է հայ դրամատերերին՝ ազգանվեր գործեր կատարել Արեւմտյան Հայաստանի հողի վրա («Համաձայն են,— զեկուցում է նա,— բայց ավելացնում են, որ իրերի վատ վիճակը կանդնեցնում է նոցա»)։ Հայկական ջարդերի օրերին Եվանգուլյանն իր խորհուրդներով օգնում է կաթողիկոսին, կազմում կառավարությանն ուղարկելիք հեռագրեր և դիմումներ։ Նա միաժամանակ զբաղվում էր և հասարակական- մշակութային այլ հարցերով, կազմակերպում երեկույթներ և այլն։

Գևորգ Եվանգուլյանը 25 տարի շարունակ, անընդմեջ, ընտրվում է քաղաքային վարչության անդամ և գործուն մասնակցություն ցույց տալիս քաղաքի ներքին կյանքի բարվոքմանը։ 1897-ին ընտրություններից առաջ, նախապես ստանալով Սղյանի համաձայնությունը, նա թվարկվում է քաղաքագլխի պաշտոնի համար և ընտրվում։

Իր մասնագիտական, հասարակական և պաշտոնական պարտականությունների հետ Եվանգուլյանը սիրով համատեղում էր և լրագրողի աշխատանքը։ Իբրև ազգային-պահպանողական հոսանքի պարագլուխներից մեկը, նա շարունակ ունեցել է իր ամբիոնը։ Ժուռնալիստական գործունեությունը Եվանգուլյանն սկսում է «Մշակի» էջերում, այդ թերթի հիմնադրման առաջին օրերին, բայց կարճ ժամանակից հավատարմանալով իր և Արծրունու հայացքների անհամատեղելիության մեջ, հեռանում է «Մշակից»։ Այնուհետև նա կապվում է «Մեղու Հայաստանի» թերթի, «Փորձ» հանդեսի և ի վերջո՝ «Արձագանքի» հետ։ 1882 թ. տարեկան 3000 ռ. ռոճիկով հաստատվում է Կրաևսկու «Голос» լրագրի թղթակցի պաշտոնում։ Հետագայում, երկար տարիներ Եվանգուլյանը Հյուսիսային հեռագրական գործակալության թղթակիցն էր Կովկասում[53]։ Վերջին այս պաշտոնը («Голос»-ը դադարում է լույս տեսնել 1884-ի սկզբին), նրան հնարավորություն էր տալիս հայ իրականության ամենահրատապ հարցերը դարձնել միջազգային հասարակայնության քննարկման առարկա։

Հետագա իր գործունեության ընթացքում Եվանգուլյանը շարունակում է կաթողիկոսին օգնել իր խորհուրդներով, երբեմն՝ հրահանգներով։ Այսպես, 1894 թ. կառավարության կողմից նորից առաջ է քաշվում հայկական դպրոցների ուսուցիչների ցենզի հարցը և պահանջվում, որ նրանք այդ իրավունքը ձեռք բերեն պետական գիմնազիաներից։ Բարե-

---

[53] 1895-ից՝ Ռուսական հեռագրական գործակալության։

գործական ընկերությունները վճռում են ուսուցիչներին օգնելու նպատակով նախապատրաստական դասընթացներ կազմակերպել։ Եվանգուլյանը, որ այդ պահանջի մեջ շատ ավելի մեծ վտանգ էր նշմարում, անօգուտ է համարում տեղական առանձին միջոցառումները և հատուկ գրությամբ դիմելով էջմիածնի ղեկավարությանը, պահանջում, որ գործը դրվի լուրջ և հեռանկարային հիմքերի վրա[54]։ Նա մի ամբողջ ծրագիր է թելադրում և խորհուրդ տալիս պայքարել, որպեսզի հայ ուսուցիչները ցենզ ստանան Գևորգյան ճեմարանից և թեմական դպրոցներից։ «Եթե ճեմարանը և մեր թեմական դպրոցները զրկվեն արտոնությունից՝ վարժապետական իրավունք տալու հայոց ծխական դպրոցների վարժապետներին, այդ կնշանակե, մեր ծխական դպրոցների գոյությունը վերջացավ»[55]։

Գ. Եվանգուլյանը հոսանքի առաջատար գործիչն էր և հպարտանում էր իր դիրքով։ Նա որոշակի վերաբերմունք ուներ թե՛ դեպի լիբերալները, և թե դեպի ռեակցիոն բուրժուական գործիչները։ Իր նամակներում գանգատվում էր մեծահարուստ Ալ. Անանովի և Խատիսյանի վարքագծից, որոնք հանուն իրենց անձնական շահերի, պատրաստ էին ոտնահարել ամեն մի սրբություն։ Նա չէր համակրում և Վրաստանի թեմի առաջնորդ Այվազովսկուն, որը մեկուսացված էր ազգային-պահպանողական գործիչների կողմից։ «Անանովի և Խատիսյանի վերա մենք ոչինչ վստահություն չունենք,— գրում է Եվանգուլյանը,— դոքա ներկայացնում են տերունական շահերը, իհարկե, նոցա մեջ տեսնելով և յուրայնըը»[56]։ Նշում է նաև, թե դրանց և առաջնորդ Այվազովսկու հետ իրենք չեն խոսում ազգային գործերի մասին, «փորձից իմանալով, որ մյուս օրը մեր խոսակցությունը իշխան Միրսկին կամ մի այլը գիտե»[57]։ Քսան տարի անց այդ նամակից, Եվանգուլյանը կրկին գանգատվում է Անանովի քաղաքականությունից։ Նա Եղյանին պատմում է հայատյաց կառավարչապետ Գոլիցինի և Անանովի միջև ստեղծված մտերմական կապերի մասին։ Հետաքրքրական է այն դրույթի շարադրանքը, որ Եվանգուլյանը ներկայացնում է Եղյանին։ Մի ընդունելության ժամանակ Գոլի-

---

[54] ԴԱՔ, Գ. Եվանգուլյանի ֆոնդ, 11/3—94-ի թվակիր նամակը։

[55] Նամակն ուղարկված էր Խորեն Խրիմյանին՝ մասնավոր ճանապարհով։ «Աղաչում եմ, կարդալուց հետո ոչնչացնել, որպեսզի «այլոց» ձեռքը չանցնի», խնդրում է նա հեռագրության մեջ։

[56] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի 18/12—77 թվակիր նամակից։

[57] Միրսկին փոխարքայի օգնականն էր։

յինը նրեսպաշտոնեն ասում է Անանովին, թե ինքը հայերին լավ կողմից է ճանաչում (մանավանդ երկրագործ դասին)։ Սակայն, շեշտում է նա, «կան հայերի մեջ անհատներ, որոնք վնասակար են տերությանն»։ Անանովն իսկույն պատասխանում է, թե դրանց թիվն աննշան է, բացի այդ՝ նրանք կրթված լինելով Ռուսաստանում, իրենց ուղղությամբ ոչ մի կապ չունեն միլիոնավոր հայերի հետ. խեղդեցեք նրանց, խորհուրդ է տալիս Գոլիցինին հայ սատրապը, և ոչ մի հայ չի բողոքի։ «Ինչո՞ւ խեղդել,—պատասխանում է կառավարչապետը,— կան ուրիշ միջոցներ...»[58]։ Այս զրույցի հաջորդ օրը Անանովը իրենց դաշինքը պահում է մի քանի ծաղկեփնջով, որ իր սենեկան կալվածքից ուղարկում է տիկին Գոլիցինային։ Եվանգուլյանը հովտաշուշանների այդ փնջի և հայկական երկնակամարում հավաքված քաղաքական ամպերի մեջ շատ խորհրդավոր կապ էր տեսնում։ Նա դառն իրոնիայով ավելացնում է, թե Անանովը մտածում է իշխանին ճաշի հրավիրել... բայց միայն այդքան։ Ատելության և անվստահության զգացումները, որ տածում էին ազգային-պահպանողականներից շատերը ռեակցիոներների նկատմամբ, մնում էին փոստային ծրարների շրջանակում։ Լիբերալների դեմ նրանք լրագրային հոդվածներ էին տպագրում, բախվում կյանքում կամ հաշտվում, բայց Անանովի և նրա համախոհների հետ գերադասում էին չընդհարվել։ Այդ անվտանգ չէր, ուստի նրանք խուսափում էին բացահայտ միջադեպերից։ Ինչպես Եղյանը, Եվանգուլյանը նույնպես շրջահայաց էր իր քայլերում և դառնում էր սաստիկ զգուշավոր, եթե մանավանդ լարվածություն էր առաջանում քաղաքական աշխարհում։

Աբգար Հովհաննիսյան (1849—1904)։ Ծնվել է Թիֆլիսում, անվանի բժշկապետ Հարություն Հովհաննիսյանի ընտանիքում։ Նրա հայրը գործուն մասնակցություն ուներ հայ հասարակական, մշակութային կյանքին, կապված էր Ներսիսյան դպրոցի հետ, հոդվածներով հանդես էր գալիս ժամանակի հայ մամուլում։ Հովհաննիսյանի մայրը՝ Ելիզավետա Իվանովնա Կուրալովան, Գայանյան օրիորդաց դպրոցի հիմնադիրներից էր. հետագայում Հովհաննիսյանը խոստովանում է, որ հայրենասիրական իր դաստիարակությամբ պարտական է մորը։ 11-ամյա Աբգարին հայրը ուղարկում է Պետերբուրգ՝ Կարապետ Եղյանի պանսիոնը։ Այստեղ նա սովորում է 4 տարի (1860—1864), ապա՝ պանսիոնը փակվելուց հետո փոխադրվում գիմնազիա։ 1866-ին բժիշկների խորհրդով վե-

---

[58] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 15/4—97 թվակիր նամակից։

թաղամասում է Թիֆլիս և գիմնազիան ավարտելուց հետո կրկին մեկնում Պետերբուրգ։ Ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, բայց մեկ տարի հետո այն թողնում է և մեկնում արտասահման։ Լայպցիգում Հովհաննիսյանն ուսումնասիրում է տնտեսագիտական և ֆինանսական գիտություններ, 1872-ին փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճանով ավարտում է ուսման ընթացքը[59], մի առ ժամանակ Պետերբուրգում ուսումնասիրում գործնական ֆինանսագիտություն և վերադառնալով Թիֆլիս, անցնում աշխատանքի։ 1874-ին, 25 տարեկան հասակում նշանակվում է տեղի առևտրական բանկի դիրեկտոր, հետագայում, 1879-ին ընտրվում է փոխադարձ վարկի ընկերության բանկի կառավարիչ և այդ պաշտոնը վարում մինչև կյանքի վերջը։ Պաշտոնը նրան հարկավոր էր նյութական փոքրիշատե կայուն վիճակ ապահովելու համար, սակայն, դրա հետ մեկտեղ, իր ողջ կյանքի ընթացքում Հովհաննիսյանը Թիֆլիսում ծավալում է գրական, համբագրական, հրատարակչական, հասարակական բեղուն գործունեություն։ 70-ական թվականների կեսերին իր միջոցներով նա հրատարակում է Բաֆֆու, Աղայանի, Պալասանյանի աշխատությունները, Շիլլերի «Վիլհելմ Տելլը»։

1879—1880 թթ. վարել է Թիֆլիսի հայկական թատրոնի դիրեկտորի պաշտոնը և մեծ եռանդ ներդրել թատրոնի աշխատանքների բարելավման գործում։ Նա գերասաններ է հրավիրում Պոլսից, Ֆրանսերենից և գերմաներենից թարգմանում մի շարք պիեսներ, հարստացնում խաղացանկը։ Ժամանակակիցների վկայությամբ Աբգար Հովհաննիսյանն է երիտասարդ Ադամյանի ուշադրությունը հրավիրում դասական դրամատուրգիայի վրա։ Հետագայում նույնպես, թեև ոչ ի պաշտոնե, Աբ. Հովհաննիսյանը կապված է եղել հայ թատրոնին և «Արձագանքի» էջերում լուսաբանել թատրոնի հետ կապված բազմաթիվ հարցեր։

1880 թ. Ա. Հովհաննիսյանը՝ Գ. Միրզոյանի կողմից 1879-ին հիմնադրված «Հայերեն մանկական գրքեր հրատարակելու ընկերության» հիմքի վրա ստեղծում է «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերությունը», որը դարավերջին հրատարակչական լայն գործունեություն է ծավալում Կովկասում։ Նա այդ ընկերության նախագահն էր մինչև 1889 թվականը։ Սակայն Ա. Հովհաննիսյանը հայ մշակույթի պատ-

---

[59] Տնտեսագիտական բաժինը Գերմանիայի համալսարաններում մտնում էր փիլիսոփայության ֆակուլտետի մեջ։

մության մեջ է մտել իբրև լրագրող և հրատարակախոս։ Նա ամբողջ քառորդ դար նպաստել է հայ գրականության զարդացմանը, պայքարել հայ հասարակական կյանքի առաջընթացի համար, հետևողականորեն լուսաբանել արևմտահայության առօրյան և հայկական հարցի հետ կապված բոլոր իրագարձությունները։

Ա. Հովհաննիսյանը 1876-ի հուլիսին սկսում է «Փորձ» եռամսյա հանդեսի հրատարակությունը, որը հետագայում դարձնում է ամսագիր։ Նյութական դժվարությունների պատճառով 1881-ի հուլիսին Հովհաննիսյանը դադարեցնում է «Փորձը», բայց 1882-ի սկզբից կրկին ձեռնամուխ է լինում լրագրական գործունեության և հրատարակում «Արձագանք» շաբաթաթերթը։ Կ. Եղյանը և Գ. Ալանգուլյանն ամենօրյա ուշադրության կենտրոնում էին պահում այդ հրատարակությունները. Կ. Եղյանը հրբեմնապես թղթակցում էր Հովհաննիսյանի հրատարակություններին, հետևում դրանց բովանդակությանը, բանասիեների ընթացքին[60]։

1886 թ., երբ հայ մտավորականները դեռևս չէին դադարել հուսալ, թե Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ պետք է կատարվեն, Ա. Հովհաննիսյանը վճռում է կրկնել հույն հայրենասեր Ադամանտի Կորայիսի փորձը։ Արևմտյան Եվրոպայի համակրանքը շահելու նպատակով նա հիմնադրում է «Հայկական գրադարան» («Armenische Bibliothek») մատենաշարը և Արիուր Լայստի օգնությամբ գերմաներեն լույս ընծայում հայ գրականության լավագույն նմուշները 11 հատորով։

Ա. Հովհաննիսյանը Եղյանի պանսիոնում ստացել էր ոչ միայն լուրջ դիտելիքներ («նա պանսիոնի առաջին աշակերտն է դառնում», հաստատում է Գյուտ քահանա Ազանյանը), այլև համոզմունքներ ու սկզբունքներ, որոնք նրան տանում են ազգային-պահպանողական հոսանքի հանապարհով։

Հետագա ուսումնառության տարիներին նույնպես, իբրև Սանասարյանի թոշակով սովորող ուսանող, նա մշտական նամակագրական կապ էր

---

[60] «Փորձում» տպագրվել է Կ. Եղյանի թղթակցությունը՝ «Նամակ Պետերբուրգից» վերտառությամբ և «Պրոէբեսիոս, Դ դարու հայ հռետոր» ուսումնասիրությունը։ «Արձագանքում» Հովհաննիսյանը տպագրել է Եղյանի «Բոնի միությունն...» աշխատության առաջաբանը՝ աշխարհաբարով, 1889-ին Նորվեգիայի արևելագետների համաժողովում կարդացած նրա զեկուցումը («Համառոտ հայացք հայոց լեզվի ուսումնասիրության վերաբերյալ») և մի շարք անստորագիր հոդվածներ։ Քանի որ «Պրոէբեսիոսը» տպագրվել է 1879-ին, մենք կարծում ենք, որ այդ հոդվածն է խթան ծառայել Բաֆֆու «Պարույր Հայկազն» վիպակի ստեղծման համար (1883)։

պահպանում Եղյանի հետ և կրկին խորհրդակցում հայության ընթացիկ կյանքին վերաբերող հարցերի շուրջ։ Ահա թե ինչու, Թիֆլիս հասնելուն պես, Ա. Հովհաննիսյանը իր պաշտոնական գործերի հետ մեկտեղ նվիրվում է և հասարակական գործունեության։

Սկսած 1875-ից, նա Արևմտյան Հայաստանի սովյալների օգտին, ավելի ուշ, 1879-ին՝ «Դպրոցասիրաց-Արևելյան» ընկերության համար հանգանակություն կազմակերպող գործիչների հետ էր։ Կազմակերպել է նաև Թավրիզի դպրոցին, Վանի սովյալներին նյութական օգնություն ցույց տալու գործը։ Աբգար Հովհաննիսյանը 1880-ական թթ. արևմտահայ շարժմանն օժանդակող Կովկասի խմբակի գործունյա անդամներից էր։ Դարավերջին բուռն գործունեության է ծավալում՝ օգնություն կազմակերպելու կոտորածներից փրկված արևմտահայության համար։

Ա. Հովհաննիսյանը 1879 թ. ոչ առանց սարծանքի՝ Եղյանին է ուղարկում իր ստացած նամակներից մեկի ծրարը, որը կրում էր «Նորին ազգասիրությանը» խիստ շոյիչ մակդիրը։ Նա գրում է իր ուսուցչին, թե նման նամակներ շատ է ստանում, մի բան, որ բնորոշ է «մեղ համար»։ «Փորձի» խմբագիրը Եղյանին հաղորդակից է դարձնում իր նվիրական ծրագրերին. «պետք է այժմ աշխատել «Նորին հայրենասիրության» տիտղոսին, որ ավելի միտք ունի, արժանի գտնվելու»։ Այս խոստովանությունն ինքնին ցույց է տալիս նրա գործունեության հեռահար նպատակները։ 1878-ը հայ ժողովրդին տեսանելի էր դարձնում ապագա հայրենիքի սահմանների ուրվագիծը և Աբ. Հովհաննիսյանը ոգևորվում է քաղաքական գործունեության հեռանկարով։ «Փորձի» և ապա «Արձագանքի» հրատարակության տարիներին նա թե՛ լրագրական աշխատանքի միջոցով, և թե ծավալած հասարակական գործունեությամբ, պայքարում է դպրոցական գործի, հայոց լեզվի, գրականության և մշակույթի ծաղկման, արևմտահայերի քաղաքական ազատության իրականացման համար։ Սակայն այս հարցերի քննարկումները ոչ մի արդյունք չէին տա, եթե նա, հետևելով Եղյանի գաղափարներին, հետևեր և նրա դժուշավոր վարքագծին։ Ա. Հովհաննիսյանը ժուռնալիստ էր կոչումով և համոզմունքներով, ուստի չէր կարող դիվանագիտություն խաղալ։ Նա շիտակ էր և համարձակ։ Ալեքսանդր III-ի ձևնարկած ռեակցիոն միջոցառումներին նա պատասխանում է ըմբոստ ելույթներով, որոնք անշուշտ ծանրացնում էին նրա կացությունը. հայ հրապարակախոսն առնվում է Մամուլի գործերի գլխավոր վարչության մշտական հսկողության տակ։

Ինչպես ասացինք, բաժանելով հանդերձ Եղյանի և Եվանգուլյանի հայացքները, Ա. Հովհաննիսյանը կուրորեն չէր հետևում նրանց հրահանգներին։ 1880 թ. սկզբներին արդեն Եվանգուլյանն անձնական նամակներում դժգոհում էր նրա վարքագծից. եթե նախկինում Աբգարը լսում էր ինձ, գանգատվում էր նա Եղյանին, ապա այժմ գործում է ինքնուրույն. հասարակական գործերում մենք այլևս համախոհներ չենք։

Իսկապես, ինչպես երևում է Հովհաննիսյանի մի նամակից, նա 1880-ի ամռանը մեկնում է Կ. Պոլիս՝ իր սեփական նախաձեռնությամբ։ Իբրև Թիֆլիսի թատրոնի դիրեկտոր, նա պետք է դերասաններ հրավիրեր Պոլսից (մի բան, որ կատարում է), նպատակամատույց մասնաժողով ընտրեր «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերության» համար, թղթակից ընտրեր «Փորձի» համար և այլն։ Նա միաժամանակ պետք է խորհրդակցեր Ներսես պատրիարքի հետ, թե ինչ նպատակով ծախսեն Ալաշկերտի գաղթականների համար հանգանակված գումարների մնացորդը։ Քանի որ հետագայում «Թիֆլիսի կենտրոնը» այդ գումարները հատկացնում է վաստպուրականի շարժմանը, ապա կարելի է դառնում ենթադրել, որ այդ միջոցառումը մշակվել էր Հովհաննիսյանի և Վարժապետյանի կողմից՝ Կ. Պոլսում։

Գ. Եվանգուլյանը Հովհաննիսյանից դժգոհելու նորանոր առիթներ էր ստանում։ 1892-ին, երբ Հովհաննիսյանը բանակցում էր «Մշակի» խմբագրության հետ, Եվանգուլյանը Եղյանից խնդրում է ասստել Բեհբուդյանին և Աբգարին, որ անտեղի չկպչեն սրան ու նրան (այդ «շատ է վնասում թե «Արձագանքի» և թե մեր ընդհանուր գործին»)։ Մի այլ նամակում կրկին պահանջում է լռեցնել նրան. «Խոնարհաբար խնդրում եմ գրել Աբգարին (ինձ չի լսում), որ նա դադարե «Մշակի» և մշակականների հետ հիմար վիճաբանությունից, որ գրգռում է հասարակությանը և որ շատ և շատ վատ տպավորություն է գործում կաթողիկոսի վերա։ Ինչևս կաթողիկոսը մեզ է համարում կուսակցության ըստեղծող»[61]։

Աբ. Հովհաննիսյանը շարունակում էր պահպանվել սեփական համոզմունքներով և երբ հարկը պահանջում էր, չէր խնայում անգամ իր բարեկամներին[62]։

---

[61] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 9/12—93 թվակիր նամակից։

[62] 1886 թ. քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ նա տպագրում է

Չնայած այս ամենին, Եվանգուլյանն իզուր էր անհանգստանում։ Ա. Հովհաննիսյանը գաղափարական հարցերում հավատարիմ էր իր հոսանքին և իր գործունեության մեջ միշտ ակտիվորեն առաջնորդվում էր ազգային-պահպանողականների հիմնական սկզբունքներով։ Սակայն նա, ինչպես ասացինք, իր գործողությունների մեջ առավել ինքնուրույն էր, անկաշկանդ և վճռական։ Այսպես, 1884 թ. կաթողիկոսական ընտրություններին մասնակցելով իբրև Վրաստանի թեմի պատգամավոր, նա այնպիսի եռանդով էր հրապարակային պրոպագանդ ծավալում Ն. Վարժապետյանի օգտին, որ Ներքին գործոց մինիստրին ներկայացված մի զեկուցագրում ամբաստանվում է իբրև քաղաքականապես անբարեհույս մեկը, որն իբր ի վնաս ցարիզմի շահերի՝ կաթողիկոսի պաշտոնում նպաստել էր արևմտահայ թեկնածուի ընտրությանը։

Կովկասի գրաքննական արխիվի հարյուրավոր փաստաթղթեր խոսում են այն հետևողական և համառ պայքարի մասին, որ ծավալել է Աբգար Հովհաննիսյանը ցարական գրաքննության դեմ։ Նման պայքարից հեռու էին կանգնած և՛ նրա հոսանքի զեկավարները և մանավանդ «Մշակի» գործիչները, որոնց համակերպվողական քաղաքականությունը ակընհայտ էր 80—90-ական թվականներին։ Քաղաքացի-հրապարակախոսի համարձակ վարքագծով Հովհաննիսյանը մշտական կասկածների առիթներ էր տալիս Կովկասի կառավարչապետությանը և Մամուլի գործերի գլխավոր վարչությանը, բնավ չմտածելով դրանց հետ կապված վտանգների մասին։ Դարավերջին նա նույնիսկ բանավիճային մենամարտի է դուրս գալիս ցարական ռեակցիոն լրագրերի դեմ, մի բան, որ կործանում է և՛ «Արձագանքը», և՛ դրա խմբագրին։

Ավետիք Բաբայան (1843—1913)։ Ծնվել է Ախալքալաքում։ Ավարտել է Պետերբուրգի զինվորական բժշկական ինստիտուտը։ Ուսանողական տարիներին մասնակցել է տեղի ուսանողական «ժողովի» հավաքույթներին։ Թիֆլիսում աշխատանքի անցնելուց հետո Բաբայանը նամակագրական կապ է հաստատում Եղյանի հետ և 32 տարի շարունակ նրան տեղյակ պահում Թիֆլիսի և Երևանի հասարակական կյանքում տեղի ունեցող անցուդարձին։ Նա կենդանի կապ էր պահպանում արևմտահայ գործիչներ Գաբ. Նորատունկյանի, Մկ. Փորթուգալյանի, Ներսես պատրիարքի հետ, ընդունում էր Երևանից ժամանող գործիչներին,

---

Եվանգուլյանի դեմ ուղղված Կ. Բեհբուդյանի «Ծառապատիկ խայտառակություն» հոդվածը (տե՛ս «Արձագանք», 1886, № 44)։

մասնակցում կարևոր հարցերի քննարկումներին։ Բաբայանը Ա. Հովհաննիսյանի հետ ակտիվորեն մասնակցում էր սովելոց հանձնաժողովի աշխատանքներին, հայ մշակութային կյանքին. Ներսիսյան դպրոցի հոգաբարձու էր և մեծ ջանքեր էր գործադրում դպրոցի նոր ծրագրի մշակման ուղղությամբ։

1895-ին, երբ «Դեյլի տելեգրաֆի» թղթակից Էմիլ Դիլլոնը ժամանում է Թիֆլիս, Ա. Բաբայանը մեկն էր այն մտավորականներից, որոնք շրջապատում են նրան և իրենց ջերմ վերաբերմունքով փորձում վարձահատույց լինել նրա հայասիրական ելույթների համար։ Այդ շրջանում նա շատ էր մտահոգված արևմտահայության ճակատագրով և իր բազմաթիվ նամակներում խորհրդածում էր այդ հարցի շուրջը։

Բաբայանը միաժամանակ ծանր էր վերապրում Կովկասում հայկական դպրոցները փակվելու իրողությունը, այդ ընդունելով իբրև ազգային մեծ վիշտ։ Երբ 1903-ին ցարական ոստիկանությունը ձեռնամուխ է լինում ակնհայտ ռուսերի բռնագրավմանը, նա մի «հավատարիմ մարդու» ձեռքով, Կ. Եղյանին ուղարկած նամակում նկարագրում է հայ ժողովրդին հասած այս նորօրյա աղետները և էջմիածնում տեղի ունեցած ժողովրդական հուզումները։ «Գանձարան-մանձարան» կնքված են, դրում է նա, ճեմարանն ու միաբանությունը նյութական կարիքի մեջ են, բայց չեն ենթարկվում իշխանությանը։ Նամակագիրը խոսելով մի քանի փաստերի առկայության շուրջը (որոնց ապավինելով միաբանությունը հույս ուներ հասնել դրական արդյունքների), հարցնում է Եղյանի կարծիքը՝ դիմադրությունը շարունակելու նպատակահարմարության մասին։ Այս նամակում, ի դեպ, նա լուրջ նշանակություն է տալիս ժողովրդական զանգվածների վճռականությանը. «Ժողովուրդը,— գրում է նա,— նույնիսկ ամբոխը անսպասելի երևույթից հանկարծակիի եկած բնազդական ցնցումով սկսել է ամեն տեղ շարժել, ընդդիմության ցույցեր անում է և պահանջում է անել հոգևորներից։ Սրանք, կարելի է ասել ժողովրդի քարկոծումից և դնդակահարություններից ահաբեկած պետք է այն դիրքը բռնեին, ինչ որ հիմա բռնած են մեծ դժվարությունների ենթարկելով իրանց։ Իսկ մյուս կողմից՝ ընդհակառակը, չհասկանալով, որ մեր ժողովուրդը երկար և ձիգ պատմություն ունեցող մի ժողովուրդ է, ավանդական ազդեցություններով ինքնուրույն շարժվող, երբ խնդիրը դարեր պահպանած նյութի է դիպչում, դիմի կասկածում են ինտելիգենտների և ելի ջանել հոգևորականների վրա, թե իբր սրանք են դրդողը, երբ իսկապես սրանք այս անգամ երկրորդական կամ կրավորական

դեր են կատարում (ընդգծումները Բաբայանինն են — Մ. Մ.). այսպես առաջացել է մի circulus vitiosus, որից մարդ չի իմանում, թե ինչպես պիտի դուրս գան...»[63]:

Այս նամակը տեսանելի է դարձնում այն հանդուցյալը, որը խճճվել էր դարավերջին՝ ազգային-պահպանողական հոսանքի ծրագրերի և ստեղծված իրավիճակի սահմանագծում: Նամակը վկայում է միաժամանակ՝ դարասկզբի ժողովրդի հուզումների ուժգնությունը: Ժողովուրդը ցարիզմի բռնությանը դիմադրելու իր կամքն է թելադրում հոգևորականությանը և վերջինս հարկադրված լսում է նրան: Սա նորություն էր, նոր շնչառ, նոր երանգ, որը բնութագրում է 1905 թ. նախօրյակի մթնոլորտը Անդրկովկասում: Բայց ազգային-պահպանողականներն ի վիճակի չէին ընկալելու այդ երանգը: Ավ. Բաբայանը ժողովրդի ընդվզումը վերագրում է ազգային ավանդույթները պաշտպանելու նրա պահպանողականությանը... Բաբայանը սխալվում էր, ինչպես իր հոսանքի բոլոր ներկայացուցիչները: Նա կանգնած էր 1905 թ. ռուսական առաջին հեղափոխության հանդիման և պատմության խորհուրդին անտեղյակ ու իր հոսանքին բաժին ընկած միամիտ դրամատիզմով դիտելով անցքերը, սոսկ արձանագրում էր. ստեղծվել է մի անելանելի դրություն, «որից մարդ չի իմանում, թե ինչպես պիտի դուրս գան...» (ընդգծումը մերն է — Մ. Մ.):

Ռուբեն Հասան-Ջալալյան (1840—1902): Ռ. Հասան-Ջալալյանը երևանցի էր: Լազարյան ճեմարանում սովորելու տարիներին շփվել էր «Հյուսիսափայլի» շրջանակի գործիչների հետ, այնուհետև ընդունվել Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ուսումը կիսատ թողնելով, փոխադրվել Պետերբուրգ: Այստեղ նա դառնում է Պետերբուրգի ուսանողական «Ժողովի» ամենագործուն մասնակիցներից մեկը և Եղյանի գաղափարակիցը: Ավարտելով Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետը, նա մեկնում է Հայրենիք և զբաղվում մանկավարժական աշխատանքով: 80-ական թվականներին հայկական շարժումներին ունեցած մասնակցության համար պատասխանատվության է կանչվում և մի քանի գործիչների հետ աքսորվում Օդեսա: Ինչպես պարզվում է այդ շրջանի նրա նամակներից, Ռ. Հասան-Ջալալյանը օգտվելով Օդեսայում գտնվելու առիթից, վճռում է իրեն ազատ ունկնդիր լսել տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոսու-

---

[63] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ավ. Բաբայանի 23/9—1903 թվակիր նամակից:

թյուններն և ավարտել ուսման ընթացքը, որը նա Մոսկվայում կիսատ էր թողել: Սկսած 1885 թ. նա հաճախում է դասերին և 1888-ի օգոստոսին հաջողությամբ հանձնելով քննությունները, ստանում իրավաբանական դիտությունների թեկնածուի աստիճան: 1888 թ. սեպտեմբերին նա վերադառնում է հայրենիք՝ «հասարակական ասպարեզում» աշխատելու վճռով: Ռ. Հասան-Ջալալյանն այնուհետև զբաղվում է իրավաբանական պրակտիկայով:

Հետաքրքրական է, որ Ռուբեն Հասան-Ջալալյանը աքսորավայրում ոչ միայն զբաղվում է իր կրթության հարցով, այլև կրկին հետևում է հայ իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին և արձագանքում դրանց: Այսպես, 1887 թ. թերթերից իմանալով, որ Գ. Սրվանձտյանը նշանակվել է Մուշի սանջակի առաջնորդ, նրան դիմում է մի նամակ-հանձնարարականով, որը ցույց է տալիս, թե որքան էր նա թեորհատված 61-րդ հոդվածի իրականացմամբ և թե ինչպես էր նորանոր միջոցներ որոնում՝ արևմտահայության վիճակը թեթևացնելու համար[64]:

---

[64] Ամրողջությամբ բերում ենք Ռ. Հասան-Ջալալյանի նամակը՝ ուղղված Գ. Սրվանձտյանին:

«Ձերդ սրբազնություն,

Նորևրումս մեր լրագիրներն ավետեցին, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը Ձեզ նշանակում է առաջնորդ Մշու սանջակում: Ճշմարիտն ասած՝ այդ լուրը մեզ շատ ուրախացրեց, քանի որում Ձեր Բեմը, Տրապիզոնի կողմերն ապահով վիճակի մեջ են համեմատաբար և մի քիչ էլ հեռու Հայաստանից... այնինչ Մուշը, Հայաստանի սիրտը, ներկայումս գտնվում է շատ անհաջող պայմանների մեջ, հետևաբար և քաջ հովիվ ունենալու մեծ կարիք է ըզում:

Նույնպես «Նոր-դար» լրագրում կարդացինք, որ Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում կան մի բանի ֆերմաններ, որոնք առանձնաշնորհված են հայերին Մահմետից և մի քանի խալիֆներից ու սուլթաններից և որոնց պարունակությունն է «մեծ մարգարեի» և խալիֆների ու սուլթանների բարձր հրամանը մահմեդականներին՝ պահպանել բարեկամական հարաբերությունները հայերի հետ և հալածանքի չենթարկել նրանց:

Ես կարծում եմ, որ ներկա սխուր հանգամանքների մեջ, երբ խնդիր, սարսուռ հայ քրիստոնեին մոռացել է նաև Աստված, լավ կլիներ, որ մենք ու մենք բարգմաներեն հայերենի, տաճկերենի, պարսկերենի և քրդերենի փոխադրել տար արաբական լեզվով գրված ֆերմանները, դրանցից մի տպագրված գրքույկ կազմեր և աշխատեր ամենուրեք տարածել իսլամ ազգաբնակության մեջ: Այդպիսի մի գործ, ոչ ծանր ինքնըստինքյան, ավելի ազդեցություն և բարի հետևանք կունենա, քան թե Բեռլինի դաշնակցության 61-րդ հոդվածի մնացյալ տասերը, քանի որում առանց սահմանադրական միջոցների կասնձի մահմեդական տարրի ֆանատիկությունը:

Սրբազան Հայր, իմ հասկացողությունով Ձեզանից ավելի հարմար անձնավորություն չկա այդ իմ առաջարկությունն իրագործելու համար, ուստի դիմում եմ Ձեզ, ներողություն

Հավատարիմ մնալով ազգային-պահպանողական հոսանքի դավանանքին, Ի. Հասան-Ջալալյանը կյանքի վերջին շրջանն անց է կացնում էջմիածնում՝ իբրև փաստաբան:

Ուրբեն Հասան-Ջալալյանի գործունեությունը իբրև ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցչի՝ բախվում է դարավերջի կառավարական ռեակցիոն միջոցառումներին և կորցնում իր երբեմնի կիրքն ու նպատակասլացությունը:

Կոստանդին Կամսարական (1840—1922): Ծնվել է Նուխիում: Իր ունեցած դիրքով, հայացքներով և գործելու անսահման եռանդով նա ազգային-պահպանողականներին մեծ հնարավորություններ էր տալիս պաշտոնական ճանապարհներով ամրապնդելու կապերը բուն Հայաստանի հետ: Կամսարականը Ջաքաթալայի օկրուգի պետի օգնականն էր: Երբ կնքվում էր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ցարական հրամանատարությունը նրան ուղարկում է Կարին, աշխատելու գեներալ Շելկովնիկյանի տրամադրության տակ: Պատերազմից հետո Կամսարականը նշանակվում է Կարինի փոխ-հյուպատոս. աշխատում է Կարինում, ապա Վանում: Նա սերտ կապեր է հաստատում Խրիմյան Հայրիկի, Ներսես Պատրիարքի, իսկ Ուսաստանում՝ Եղյանի, Եվանգուլյանի, Արդ. Հովհաննիսյանի և Սվ. Բաբայանի հետ: Մեկ անգամ չէ, որ Թիֆլիսի գործիչները Կամսարականին հասցեագրված Եղյանի նամակները հավատարիմ մարդկանց ձեռքով ուղարկում են Վան: Կամսարականի նամակները պաշտոնական տեղեկագրերի արժեք ունեին, որոնցից Եվանգուլյանը շատ հեշտությամբ լրագրային թղթակցություններ էր կազմում: Կամսարականը թղթակցում էր Կրաևսկու «Голос»-ին: Նա անվերապահորեն ընդունում էր Եղյանի հեղինակությունը և «Голос»-ին ուղարկվելիք թղթակցությունները նախապես ուղարկում էր նրան՝ խնդրելով հարկ նշած դեպքում փոփոխել դրանք կամ «թանձր գույներով» ներկել, եթե անհրաժեշտ է այդ: Երբեմն խնդրում էր այդ թղթակցությունները ուղարկել արտասահմանյան թերթերին:

Կամսարականը սկզբնապես ոգևորված էր հայկական շարժումներով և մեծամեծ հույսեր էր ներշնչում դրանց նկատմամբ ինչպես Վասպուրականի հայերին, այնպես էլ Կովկասի գործիչներին, բայց կարճ ժա-

---

խնդրելով վստահության համար: Կատարելով այդպիսի մի աշխատություն՝ դուք կթևթևացնեք և Ձեր պաշտոնավարության գործը Մշու կողմերում, որտեղ մահմեդական տարրը տգետ և ֆանատիկոս է» («Դիվան հայոց պատմության», գիրք ԺԹ, էջ 383—385):

մանակից փոխում է իր ընթացքը: Հավաստիանալով այն բանում, որ ցարական կառավարությունը չի խրախուսում այդ շարժումները, նա կանխում է կամավորների մուտքը Վասպուրական: Երկրին մոտիկից ծանոթանալու նպատակով Կամսարականը ճանապարհորդում է Մուշում, Բաղեշում, Սղերդում, Դիարբեքիրում և ամենուր ականատես է լինում ժողովրդի թշվառությանը: Իրեև այդ վիճակից նրան դուրս բերելու առաջին քայլ, նա ծրագրում է բարելավել երկրի կրթական գործը: Հորդորում է Սանասարյանին՝ դպրոց հիմնադրել Կարինում: Գայանե Հովհաննիսյանին խորհուրդ է տալիս գնալ Վան՝ օրիորդաց դպրոց բացելու «Հայաստանի սրտում»:

Կամսարականը մի նամակում նկարագրելով իր այցը հայկական դպրոցներից մեկը, պատմում է, թե երեխաներն ինչպես էին սառչում ցուրտ սենյակում «և առհասարակ,— ընդհանրացնում է նա իր խոսքը,— այստեղ հայկական դպրոցները սառչում են բոլոր առումներով»[65]: Նա ամեն ինչ անում է՝ Խրիմյանին օժանդակելու նրա կրթական ձեռնարկումների մեջ. «Այժմ ում հայտնի չէ այն աքսեոման,— գրում էր նա մի նամակում,— թե որքան էլ երկար է դպրոցի ճանապարհը, բայց այդ մշտապես ավելի հուսալի և հաստատուն ճանապարհն է, որն անխուսափելիորեն տանում է դեպի ինքնուրույնություն»[66]:

Կ. Կամսարականը 1879-ին նոանդուն զբաղվում է Վասպուրականում ծագած սովի հարցով և մի աղդեցիկ կոչ է կազմում, որը տպագրվում է Թիֆլիսի թերթերում: Նրա աշխույժ գործունեությունը առաջացնում է Կ. Պոլսի ռուսական դեսպանության և ցարական Արտաքին գործոց մինիստրության դժգոհությունը: Շատ հետաքրքրական է այն փաստը, որ երբ նա փոխադրվում է Վան, տեղի ամերիկյան միսիոներները բողոքում են անգլիական հյուպատոսին, ասելով, թե Կամսարականի գործունեությունը Վանում՝ էական վնաս է հասցնում Անգլիայի շահերին[67]: Սակայն, անկախ այս ամենից և թեկուզ հենց այն պատճառով, որ Կամսարականը գիտակցում էր, թե որքան լուրջ նշանակություն ունի Անատոլիայում մղվող պայքարը անգլիական ազդեցության դեմ, նա խիստ օգտակար էր համարում իր աշխատանքը թե՛ արևմտահայության և թե՛ ռուսական կառավարության համար: Այս համոզմունքով էլ և՛ ինքը, և՛

---

[65] ԳԱՔ, Կ. Սվանգուլյանի ֆոնդ, գործ 301, վավ. 16:

[66] ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Կ. Կամսարյանի 20/11—80 թվակիր նամակից:

[67] Նույն տեղում, Կ. Կամսարականի 14/10—80 թվակիր նամակից:

Թիֆլիսի նրա համախոհները խնդրում են Եղյանին և Սանասարյանին, անել հնարավորը՝ իրեն հաստատել տալու գլխավոր հյուպատոսի պաշտոնում: Մինչդեռ Խրիմյանը Կամսարյանին համարում էր կենդանի կապ՝ Կովկասի և արևմտահայության միջև, և Կամսարականն էլ համոզված էր, թե այդ միսիայով «կառավարությունը պետք է զո՛հ լինի», ռուսական կառավարությունը զոհ չէր նրա պաշտոնավարությունից և չէր մտածում նրան վստահել հյուպատոսի պաշտոնը: Ավելին: Յաբեական բյուրոկրատական ապարատը նրան տեղյակ չէր պահում իր քաղաքականության՝ հայկական հարցում: 1880 թ. Կամսարականը տարակուսանք էր հայտնում, որ իբրև դիվանագիտական միսիայի աշխատակից, ինքը ծանոթ չէ կառավարական շրջանների նկատառումներին: Ոչ մեկը չի մտածում, գրում է նա, մեզ, մեղավորներիս, ծանոթացնել կառավարության հայացքներին՝ քաղաքականության խիստ կենսական, կարևորության հարցերի մասին[68]: Կամսարականին մնում էր կռահումներ անել ստեղծված վիճակի շուրջը: Նա անկասկած հույս էր կապում Հայաստանում անցկացվելիք ռեֆորմների հետ, բայց չէր հավատում, թե այդ հույսերը շուտով կիրականանան: Միևնույն ղրաստ հայացքով նայելով իրերի դրության, նա հայտարարում է. «Ե՞րբ կիրականանան հայկական ռեֆորմները, այդ հայտնի է միայն աստծուն և Անգլիային»: Պատերազմից հետո հայերի նկատմամբ Անգլիայի բարյացակամությունը նրան չի խաբում: Անգլիան միշտ համակրել է թուրքերին և քրդերին. դրանց մեջ տեսնելով հուսալի պատվար՝ Ռուսաստանի դեմ, գրում էր Կամսարականը, ինչ վերաբերում է հայերի նկատմամբ նրանց արած զեղումներին, դրան չպետք է հավատալ. «անգլիացիք չեն կարող անկեղծորեն սիրել հայերին, որոնց միշտ էլ համարել են մոլի ռուսոֆիլներ»,— գրում է նա: Անգլիան ձևացնում է, թե ուզում է ռեֆորմներ ձեռք բերել Հայաստանի համար, բայց միևնույն է, շարունակում է Կամսարականը, հայերի մեծ մասը հավատում է մխիթյան Ռուսաստանին[69]:

Թեև Կամսարականը Հայաստանի փրկության հարցում մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ, բայց հայ դիվանագետի նկատառումները չէին ներդաշնակում ցարիզմի նոր քաղաքականությանը: Ահա թե ինչու, 1884 թ. Կամսարականը հեռացվում է Արևմտյան Հայաստանից:

---

[68] Նույն տեղում, Կամսարականի 20/11—80 թվակիր նամակից:

[69] ԿՍԱՔ, Եվանգուլյանի ֆոնդ, գործ 301, վավ. 16:

1884 թ. նա ուղարկվում է Սիբիրի գեներալ-նահանգապետ Ադամ Կամսարականին ուղարկում են միմիայն արաբներով բնակեցված մի խուլ ավան՝ Համա։ Այստեղ նա գտնվում էր աքսորականի վիճակում և մեկուսացված էր գործունեության ասպարեզից (շուրջ ու այլ անհարմարություններից զծզոհ էր և նրա ընտանիքը. «Համան անհավան է մեզ համար», գրում է նա Եզյանին)։

Հետագայում նա աշխատում է իբրև Բելբեքի փոխ-հյուպատոս։ 1890-ին նշանակվում է ռուսական հյուպատոս Դամասկոսում, որտեղ աշխատում է մինչև 1891 թվականը։ Կամսարականի ճակատագիրը, որքան էլ ողբերգական, օրինաչափ էր ցարիզմի քաղաքականության համար և բխում էր իրերի բուն սրամաբանությունից։ Մեկ անգամ անձնական զրույցում Եզյանը հավանություն տալով Կամսարականի գործունեությանը Արևմտյան Հայաստանում, այն միտքն էր հայտնել, թե «ձուկը ուժեղ է ջրում»։ Նշանակում ստանալով Սիրիա, Կամսարականը Եզյանին ուղած իր նամակում հիշեցնում է այդ արտահայտությունը. «Դուք իրավացի էիք՝ ասելով «рыба сильна в воде», так-так и решили в конце концов выбросить меня на сушу»[70]։

Փիլիպոս Վարդանյան (1842—1917)։ Սնվել է Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում։ Եզյանի հետ բարեկամություն է հաստատում 1861—1866 թթ., երբ ուսանում էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Կարինում բացվելիք Սանասարյան դպրոցում աշխատանքի անցնելու համար նա Սանասարյանի օժանդակությամբ մեկնում է Գերմանիա և կատարելագործվում մանկավարժական գիտությունների մեջ։ 1871-ին վերադառնում է Հայրենիք, ապա մի քանի անգամ դարձյալ մեկնում արտասահման, դասախոսություններ լսում Սորբոնում և այլուր։ 1876-ին «Լումա» ամսագրի ձախողումից հետո մանկավարժական աշխատանքի է անցնում Նոր Նախիջևանում։ 1881-ին Փ. Վարդանյանը հրավիրվում է էջմիածին և Գևորգյան հեմարանում դասավանդում ընդհանուր պատմություն, ռուս գրականություն և գերմաներեն։ 1888-ից ստանձնում է Թիֆլիսի Հովնանյան—Մարիամյան դպրոցի տնօրենի պաշտոնը։ 1895-ի ամռանը մեկնում է Լոնդոն և էմիլ Դիլլոնի միջնորդությամբ հանդիպում պետական մի շարք գործիչների և Գլադստոնի հետ։ Հետևի միտինգում լսում է վերջինիս ճառը։ 1896-ին, երբ փակվում են հայկական դպրոցները, Վարդանյանը մնում է առանց

[70] ՀՊԿՊՄ, Եզյանի ֆոնդ, Կ. Կամսարականի 4/10—80 թվակիր նամակից։

աշխատանքի. մեկնում է Պետերբուրգ, անձամբ ծանոթանում Գոլիցինի հետ, բայց նրա վարած բանակցությունները մնում են անհետևանք։ Ծրագրը այլևս չի բացվում։ Մի քանի տարի անգործ մնալուց հետո ընդունում է Ալ. Մանթաշյանի առաջարկը և նրա որդիների հետ, իբրև վերջիններիս դաստիարակը, 1899-ին մեկնում Գերմանիա։ Շուրջ 10 տարի արտասահմանում մնալուց հետո վերադառնում է Ռուսաստան, բնակություն հաստատում Նոր Նախիջևանում, որտեղ և վախճանվում է 1917-ին։

Փ. Վարդանյանը առանձին հոդվածներով և թարգմանական աշխատություններով շարունակ հանդես էր գալիս Կովկասի պարբերական մամուլի էջերում։ «Փորձի» դադարից հետո նա կապվում է «Արձագանքի» հետ և մշտապես աշխատակցում դրան։ «Արձագանքում» երևում են նրա հոդվածները, ծավիրված գրական այլևայլ հարցերի։ Երբ Ա. Լայտոը 1885-ին գերմանական մի հանդեսում տպագրում է «Ռ. Պատկանյան» հոդվածը, Փ. Վարդանյանը ոչ միայն թարգմանաբար տպագրում է այն, այլև հրապարակում իր հոդվածը («Հոբելյան»), որով կոչ էր անում կազմակերպել Պատկանյանի գրական գործունեության 25-ամյա հոբելյանը[71]։

Ժամանակակիցներին Փ. Վարդանյանը հայտնի էր իբրև հմուտ մանկավարժ և թարգմանիչ։ Հիանալի տիրապետելով գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներին, նա բազմաթիվ թարգմանություններ է կատարում եվրոպական դասական հեղինակներից, ղեկավարվելով այն համոզմունքով, թե հայ նոր գրականության զարգացման հիմնական նախադրյալներից մեկը եվրոպական դասական գրականության թարգմանությունն է[72]։ Այդ մասին նա գրում է. «Նոր ազգերի գրականություններից և ոչ մեկը չէ զարգացել, մինչև որ նրանք իրենց լեզվով չեն յուրացրել եվրոպական հանճարի կենդանարար արգասիքը։ Մեզ հո ևս ավելի հարկավոր է այդպես անել, քանի որ մեր նկեղեցու բեմը լռած է,

---

71 «Արձագանք», 1885, №26։

72 Փ. Վարդանյանի թարգմանությունների ոչ լրիվ ցանկը. Շմիդտից՝ «Ֆրանկլին», «Վաշինգտոն», «Հոմերի «Իլիականը», «Հոմերի «Ոդիսականը», Սմայլսից՝ «Բնավարություն» և «Ինքնօգնություն» աշխատությունները, էդ. դե Ամիչիսի «Սիրտ», «Ապենիններից մինչև Անդերը» և «Ռոստեմ և Զոհրաբ» գրքերը, Շիլլերի «Ավազակները», Տոլստոյի «Ռոբինզոն» և «Կոլումբ» (փոքրերի համար) գրքերը, Հայդեի «Բնաթրիչեն», Գվերացցիի «Նոնացայի բերդը» ստեղծագործությունները, Լ. Ուոլլեսի «Բեն Հուրը», Գյոթեի «Կլավիդո» ողբերգությունը և այլն։

թատրոնը քնած, մամուլն ընկած և խեղճ դպրոցը կարելեր հարվածներով խոցոտված»[73]:

Մանրաթելոնված լինելով դրական և մանկավարժական աշխատանքներով, 80—90-ական թվականներին Փ. Վարդանյանը թեև հետու էր հասարակական ասպարեզից, բայց Թիֆլիսում ապրած տարիներին շարունակ զոնվում էր Արդ. Հովհաննիսյանի, Ավ. Բաբայանի, Գ. Սունդուկյանի շրջապատում:

Փ. Վարդանյանը ազգային-պահպանողական հոսանքի այն գործիչներից էր, որոնց ցարական ռեակցիան չրից նետել էր ցամաք ափ... Եվ նա, Հովհաննյան-Մարիամյան դպրոցի երբեմնի արժանավոր տնօրենը, աստիճանաբար սպասվում էր՝ Մանթաշյանի զավակների դաստիարակի իր նվաստ պաշտոնում:

Պետրոս Սիմեոնյան (1830—1911): «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր: Նրա գործունեության առավել հիշարժան շրջանը համընկնում է 70-ական թթ. ժամանակներին, երբ Սիմեոնյանը հաստատուն պայքարելով «մշակականի» ուղղության դեմ, ձևակերպում է հակադիր «մեղվական» կուսակցություն: 80-ական թթ. սկզբին հակամարտության մեջ է մտնում «Արձագանքի» խմբագրության հետ, բայց իր կրթությամբ և դաղափարական դաստիարակությամբ կապված լինելով Եզյան-Սանասարյան խմբակին (չնայած որոշ մեղանչումներին), չի մեկուսացվում նրանց կողմից: Եվանգուլյանը հավատում էր նրան և «Մշակի» ազդեցությունը թուլացնելու նպատակով օգնում էր Սիմեոնյանին: «Պետրոսը մի մեծ արժանավորություն ունե,— գրում է նա,— այն է, որ ջերմ և ինքնազոհությամբ կապած է ազգի շահերին, որ և հասկանում է բավական ուղիղ»: Թիֆլիսի կենտրոնը նեղում է նրա թույլ տված տակտիկական սխալները: Ավելին, երբ Խրիմյանը 1893-ին ժամանում է իր նստավայրը, Կ. Եզյանի խորհրդով Պ. Սիմեոնյանը հրավիրվում է էջմիածին և ստանձնում կաթողիկոսի քարտուղարի պարտականությունները: Մակարի կաթողիկոսության շրջանում նա երեք և կես տարի խմբագրել էր Աթոռի օրգան «Արարատ» հանդեսը: 90-ական թվականների վերջերը կեսին վերադառնում է Թիֆլիս և սկսում աշխատակցել «Արձագանք» լրագրին:

1883 թ. «Մեղու Հայաստանի» թերթի 25-ամյա հոբելյանի առթիվ Եզյանի խորհրդով Սանասարյանը՝ ցմահ թոշակ է նշանակում Պետրոս

---

[73] ԿՍԱ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 1145:

Սիմեոնյանին (տարեկան 600 ռուբլի դումարի չափով)։ Հայ լրագրության պատմության մեջ բացառիկ դեպք էր այս, երբ հրապարակախոսը վարձատրվում էր իր վաստակի համար։

Սպանդար Սպանդարյան (1849—1922)։ Ծնվել է Շուշի քաղաքում։ 1872-ին ավարտել է Լայպցիգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ստացել իրավաբանական գիտությունների doկտորի աստիճան։ Վերադառնալով Կովկաս, զբաղվել է հրապարակախոսական գործունեությամբ։ Նախ աշխատակցել է «Մշակին», ապա դրա խմբագրի հետ ընդհարվելուց հետո թղթակցել է «Մեղու Հայաստանի» թերթին։ Հետագայում այդ թերթի գլխավոր աշխատակիցն էր և փաստական խմբագիրը։ 1884-ից հրատարակում է «Նոր-դար» քաղաքական և գրական լրագիրը, որը հարատևել է մինչև 1906 թվականը։ 1910 թ. ամնիստիայով վերադարձել է Ռուսաստան, ապրել նախ Ֆրանսիայում, ապա Գերմանիայում, որտեղ և վախճանվել է նյութական ու բարոյական զրկանքների մեջ։

Սպանդարյանն ազգային-պահպանողական հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչներից էր։ Եվ քանի որ նրա համոզմունքով ինքնիշխին ազգի գոյության հիմքն էր՝ նրան սպառնացող հողմերի դեմ, ապա Սպանդարյանի հրապարակախոսության մեջ ինքնիշխին առանձնահատուկ նշանակություն էր ստացել։ Իր հրապարակախոսական գործունեության ընթացքում, որը հիմնականում ծավալվել է «Նոր-դարի» էջերում, նա արտահայտել է իր հոսանքի հավատամքը, որին հավատարիմ է մնացել միշտ։ Այդ կապակցությամբ երկարատև ու անհաշտ բանավեճ է վարել Արծրունու և նրա հաջորդների հետ։

Սպանդարյանն անմիջականորեն կապված չէր Եղյան-Ինճիկյանի խմբակցության հետ։ Նա գիտակցում հրապարակախոսի հատուկենտ դերը և բարոյական մեծ կշիռ ուներ հայ իրականության մեջ և բավականաչափ ինքնուրույն էր։ Ավելի ուշ, հակադրվելով «Արձագանքին», Սպանդարյանը հաշտության ձգտեր չի դանում հոսանքի ղեկավարների հետ։ Խրիմյանի ընտրության օրերին բաբևկամական կապեր են հաստատվում «Արձագանքի» և «Նոր-դարի» միջև և երկու խմբագրությունները միասնական դիրքերից պրոպագանդում են Խրիմյանի թեկնածությունը։

Թեև Սպանդարյանն իր թերթը հրատարակում էր նյութական մեծ զոհաբերությունների գնով, բայց «Նոր-դարը» միակ լրագիրն էր հայ իրականության մեջ, որ կանոնավորապես լույս է տեսնում ամբողջ 22 տարի. այն XIX դարի վերջին տասնամյակի ամենալուրջ քաղաքական լրագիրն

էր, որի հետ հաշվի էին նստում ժամանակի գործիչները։ Հայոց եկեղեցական գույքի բռնագրավման օրերին, 1903 թ. դեկտեմբերին, հրապարակային ճառ արտասանելու համար Սպանդարյանը ձերբակալվում է և Կոլիցինի կարգադրությամբ վտարվում Կովկասից։ Նրա դիմումները կառավարչապետին՝ թերթի համար երկրորդ խմբագիր հաստատելու վերաբերյալ մերժվում են և 1903 թ. դեկտեմբերից «Նոր-դարը» դադարում է։ Սակայն Սպանդարյանի ջանքերով թերթը վերջնականապես չի խափանվում։ Մամուլի գործերի գլխավոր վարչության պետը 1905 թ. Սպանդարյանին թույլատրում է շարունակել «Նոր-դարի» հրատարակությունը և 1905 թ. օգոստոսից այն դարձյալ լույս է տեսնում[74]։ Դադարում է 1906-ին։ Հրատարակության իրավունքը չկորցնելու համար խմբագիրը 1907—1917 թթ. տարեկան լույս է ընծայել «Նոր-դարի» մեկական համար։

Մարկոս Աղաբեկյան (1830—1908)։ Ժամանակին իբրև Մատթեոս Չուխաճյանի անձնական քարտուղարը, նրան ուղեկցել էր Կ. Պոլսից էջմիածին և իրերի բերումով ազատվելով պաշտոնից, մնացել Թիֆլիսում։ Մոտենալով Էնֆիաճյանի խմբին, նա 1860-ից սկսում է խմբագրել «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը, որի հրատարակիչն Էնֆիաճյանն էր։ 1864-ին Աղաբեկյանը մեկնում է Կ. Պոլիս, որտեղ 1866-ին հրատարակում է մեկ տարվա կյանք ունեցած «Միլն Ավարայրի» ամսագիրը։ Այնուհետև նա զբաղվում է գրական-հրատարակախոսական աշխատանքով, գործակցություն ունենում պոլսահայ հասարակական կյանքին, դարավերջին գրում է «Ուսումն հայոց պատմության» ծավալուն աշխատությունը, որի տպագրության գործով ապարդյուն զբաղվում է տարիներ շարունակ։

Մ. Աղաբեկյանի հայացքները 60-ական թվականներին աչքի էին ընկնում խիստ պահպանողականությամբ։ Ազգի և եկեղեցու մասին նրա արտահայտած գաղափարները միակողմանի էին և սնվում էին մեկ ակունքից. «Մեր խոսքի բնաբանը մեկն է,— գրում է Աղաբեկյանը «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում,— Հայաստանյայց սուրբ և առաքելական եկեղեցին»։ Ազգային և բարոյական լուսավորության աղբյուրը նույնպես եկեղեցին էր համարվում։ «Կռունկի» հրատարակախոսները եվրոպական լուսավորությունը համարում էին ճշմարիտ միմիայն այն դեպքում, երբ այն բխում էր քրիստոնեական կրոնից։ Թերթի տեսա-

---

[74] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցիրք Ա., գործ 1912։

բան Գարեգին Մուրադյանը այն միաբն էր հայտնում, թե եվրոպական լուսավորությունն անդոր է մոլորեցնել հայերին. սրանք սիրելով հանդերձ լուսավորությունը, պետք է լինեն այն, ինչ եղել են իրենց նախնիները. միակ փառքը,— գրում է նա՝ եկեղեցու հարազատ որդի կոչվելն է. ուստի՝ նայելով առաջ գնացած ազգերին, հայերը պետք է նույնպես ձգտեն առաջ գնալ, բայց որոնելու համար այն, ինչ կորցրել են... «Ջեռն պետք է մխենք ազգաշինության,— գրում է նա,— բայց նյութերն հնության ավերակներից և մնացորդներից պետք է ժողովենք»[75]:

Մ. Աղաբեկյանը «Միլլն Ավտոյրի» ամսագրում այս հիմնական գաղափարախոսության պրոպագանդմանը զուգընթաց ընդհատակ մոռեհնում է և քաղաքական հարցերի: Նա հախուռն հարձակումներ է սկսում ցարական կառավարության դեմ. ամսագրում տպագրված նրա ծավալուն հոդվածները լի են ազգային բարոյական անկախության հորդորներով:

Պոլոժենիեն նա համարում է Սիոռի իրավունքների և անկախության սահմանափակման խորհրդանիշ. դրա որոշ հոդվածները նրա կարծիքով նպատակ ունեին կործանել հայոց եկեղեցու անկախությունը և ինքնադոյությունը: Աղաբեկյանը ռուսահայերին կոչ է անում պաշտպանվել ոչ միայն պապականության, այլև ռուսական ուղղափառ եկեղեցու նկրտումներից: Նա հայտարարում է ի վերջո, թե «Ռուսիայում ազգային, բարոյական և մտավոր ազատությունը ճնշված է ռուսական միրաբեռող տարերքեն, նույնիսկ ռուսական կառավարության կողմեն», այնինչ Թուրքիայում՝ Աղաբեկյանի համոզմունքով, հայերը բոլոր հնարավորություններն ունեն զարգացնելու իրենց ազգային մշակույթը՝ իրենց իսկ «տարերքով»:

Տարիներ անց՝ Մ. Աղաբեկյանի հայացքները էվոլյուցիա են ապրում: Ռուսական զենքի հաղթանակից հետո, Աղաբեկյանը նույնպես փոխվում է: Այդ բանին, հավանաբար, նպաստում է նրա բարեկամությունը Ներսես Վարժապետյանի հետ, որը մեծ հույսեր էր կապում ռուսական կառավարության հետ: Այսպես, Աղաբեկյանը Ներսեսի հանձնարարությամբ նամակներ էր գրում Կ. Եղյանին, հարցնելով նրա կարծիքը այս կամ այն հարցի մասին. կրկին Ներսեսի հանձնարարությամբ Եղյանից խնդրում է իրենց տեղյակ դարձնել «ռուսաց քաղաքականության», հարկավ՝ հայերին վերաբերող հարցերում: 1880-ին խոսելով այն մասին, թե անգլիացիները վճռականորեն ուզում են ինչ-որ բան անել հայոց համար, «ուր էր, թե ռուսներն էլ նրանցմէ նախանձելին, մի համա-

[75] «Կռունկ հայոց աշխարհին», 1860, № 9, էջ 750:

նման բան էլ իրենք անեին», վերագրում էր Ազաբեկյանը։ Շատ հետաքրքրական է, որ Ազաբեկյանը կատարում էր նաև Եզյանի հանձնարարությունները և որոշ գործիչների ու գաղափարական պրոցեսների վերաբերյալ հավաստի նյութեր էր ուղարկում նրան։ 1879 թ. մարտին, երբ ռուս գեներալ Աբեզինովը ժամանում է Կ. Պոլիս, Տաճկաստանում նրա ճանապարհորդության ժամանակ իրեն ուղեկցող նշանակվում է Մարկոս Ազաբեկյանը։

Պատմական ժամանակաշրջանը արևմտահայ մտավորականությանը կոչում է քաղաքական ակտիվ գործունեության։ Մի շարք այլ գործիչների հետ Ազաբեկյանը նույնպես ներքաշվում է քաղաքական կյանքի ջրապտույտը, հայերի փրկությունը որոնելով նաև ռուսական կառավարության օգնության ոլորտներում։ Նա 90-ական թվականներին այլևս հույսեր չէր կապում թուրքական կառավարության հետ։

Հովհաննես Խաչատուր Սկրյան (1831—1909)։ Ազգային-պահպանողականների գործակից, արևմտահայ բանաստեղծ։ Խրիմյանի պատրիարքության շրջանում՝ պատրիարքական տեղապահ (1869—1873)։

Հ. Սկրյանը երկար տարիներ, 1887-ից 1903-ը, նամակագրական կապ է պահպանել Կ. Եզյանի հետ։ Սկրյանը նրան անվանում է «սիրելագույն բարեկամ», «հայրենասեր», «պրատեր», «ազգասեր», «իբրև նոր ոմն Մագիատրոս» և այլն։ Նրանց ամեն բանից առաջ կապում էր գիտականբանասիրական շահախնդրությունը։ Սկրյանը հիացած էր նրա աշխատություններով և լիովին համաձայն նրա դրույթներին[76]։ Երբ Եզյանը Սկրյանին ուղղած մի նամակում խորհրդածում է գրաբար լեզուն պահպանելու և գրաբարի մասնագետներ պատրաստելու հարցի շուրջ, Սկրյանը ծավալուն մի նամակով հայտնում է իր և Նորատունկյանի անվերապահ հավանությունը։ Սկրյանը խրախուսում է նրա առաջարկած ծրագիրը, ըստ որի Սանասարյանի առաջադեմ շրջանավարտներից ենթադրվում էր ամեն տարի երկուական հոգի ուղարկել Գարագաշյանի մոտ, Կ. Պոլիս, ապա՝ Նորայր Բյուզանդացու մոտ՝ գրաբար լեզվի մեջ կատարելագործվելու համար։ Իր հերթին Եզյանն էլ բարձր էր գնահատում Սկրյանի վաստակը, այս կամ այն հարցով երբևիցե դիմում նրա օգնությանը։

---

[76] Սկրյանը հմտարիտ աղգասիրության արտահայտություն է համարում «Բռնի միության հայոց...» աշխատության ղեկավար սկզբունքը, որ ձևակերպված էր «Արտաքոյ Հայաստանյայց առաքելական եկեղեցվոյ չիք հայություն» դրույթի ձևով (տե՛ս ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Հ. Սկրյանի 31/12—86 թվակիր նամակը)։

Մկրյան քահանան Երիմյան Հայրիկի հաստատման և ապա Երուսաղեմի աթոռից նրան ազատելու հարցով բազմիցս դիմում է Եզյանին: Վերջինս Պետերբուրգի պաշտոնական աղբյուրներից և Կ. Պոլսի դեսպանատան իր համախոհներից անհրաժեշտ տեղեկություններ հավաքելուց հետո, համապատասխան կարգադրություններ է անում Կ. Պոլսի գործակիցներին:

Համբարձում Իփեճյան (1837—1883): Հ. Իփեճյանը Ռուսաստանից էր անցել Կ. Պոլիս և Եզյանի խորհրդով շարունակում էր աշխատել այնտեղ[77]: 1882-ին նա մտածում է թերթ հրատարակել և դրամական օգնություն է խնդրում Եզյանից, ապա, քանի որ Բողոք էր աշխատանքը (նրան խոստացված ռոճիկը չէին կարողանում վճարել), Եզյանի միջնորդությանն է խնդրում՝ «Голос»-ի թղթակիցը դառնալու համար: Այդ թերթին թղթակցելու համար, սակայն, նա, իբրև տաճկահպատակ, պետք է ապահովագրեր իրեն կառավարության հալածանքներից, ուստի և խնդրում է Եզյանից օգնել իրեն՝ արտահատուկ որևէ պաշտոն ստանալու ռուսական դեսպանատանը: Հետաքրքրական է, որ Իփեճյանը հույս ուներ այս կերպ օգտակար լինել և հայերին:

Իբրև Եզյանին շատ հավատարիմ գործիչ, Իփեճյանը վերոհիշյալ նամակում հարկ է համարում իր բարեկամի առջև պարզել և իր քաղաքական համոզմունքները, համոզմունքներ, որոնք ինչպես նկատեցինք, բացահայտում են ազգային-պահպանողական հոսանքի Կ. Պոլսի գործակիցների քաղաքական հայացքների էվոլյուցիան: «Հայտնի է, թե ամեն բան լավ է երևում մեզ հեռվից,— գրում է նա,— և ռուսաց առածն էլ ասում է, թե «где нас нет, там хорошо»: Երբ ես Տաճկաստան եկա՝ այնպես էի համոզված, թե հայերը Տաճկաստանում մեծամեծ արտոնություններ են վայելում, թե ինքնուրույն կերպով զարգանալու համար պահանջված ազատություններ ունեն, թե հայոց շահերը պահանջում են

---

[77] Հ. Իփեճյանը 1868-ին աշխատում էր Խալիբյան դպրոցում: Հայերի կրթական գործն ուսումնասիրելու նպատակով նա մեկնում է Կ. Պոլիս, այնուհետև 1869-ից հաստատվում այնտեղ: Ամբողջ 13 տարի աշխատում է Կ. Պոլսի և Զմյուռնիայի դպրոցներում, վայելելով լավագույն մանկավարժի համբավ: 1871-ին մանկավարժական գիտության մեջ խորանալու նպատակով ճանապարհորդում է Արևմտյան Եվրոպայում, 1875-ին գնում Շվեյցարիա, 1876-ին՝ Լոնդոն: 1882-ին Թուրքիայի ազգային վարժարաններին ընդհանուր տնօրենն էր: Վախճանվում է 1883-ի ամռանը՝ երիտասարդ հասակում: Իփեճյանը մեկն էր այն երջանիկ բացառություններից, որոնց «Ազգային ջոջերի» հեղինակը ներկայացրել է անկեղծ բարյացակամությամբ:

ներս հարաբերություններ ունենալ տաճկի կառավարության հետ և թե Ռուսիո քաղաքականության արդելք է լինում Տաճկաստանի հայոց առաջադիմության, և այլն։ Այս համոզման համաձայն էի վարվում ազգային գործերի մեջ, թեև ո՛չ տաճկի կառավարությունը երբեք պաշտպանած եմ հրապարակավ և ոչ Ռուսիո քաղաքականության դեմ անխոնջ և անվայել հարձակումներ արած։ Հետո ռուս-թուրքական պատերազմի միջոցին Անդղիա գտնվելով և անդղիացոց հետ հարաբերություններ ունենալով, մյուս կողմից գիտենալով, որ Անդղիո քաղաքականությունը մեծ ազդեցություն ունի տաճկի կառավարության ընթացքին վերաբ՝ հուսացի, թե անդղեացիք կարող և տրամադիր կլինին մեր ազգի վիճակին բարվոքմանը աշխատելու, և ըստ այնմ վարվեցա։ Սակայն երեք չորս տարվա փորձերը ցույց տվին, թե եթե անդղիացիք կարող իսկ լինեն մեր անկնկալած ծառայությունն անել մեզ, նոցա գործելու եղանակը շատ դանդաղ է, մինչդեռ մեր ազգի (զլխավորապես գավառացոց) վիճակը չուտափույթ և հապա դարմանի կկարոտի։ Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ հաստատ համոզում գոյացած է իմ մեջ, թե աշխարհաճանաչ «Հայկական խնդիրը» միայն Ռուսիո կառավարությունը կարող պիտի լինի լուծել, ինչպես որ ինք հաջողեցավ հարուցանել զայն, ուստի և խորհող և գործող հայոց պարտքն է այդ լուծումը դյուրացնելու և փութացնելու աշխատել։

Այս է ահա Կոստասիմ Արթեմիչ, այժմ իմ քաղաքական ծրագիրը, որուն համաձայն պիտի ուղղեմ իմ գործունեությունը»[78]։ Իփեքճյանն այնուհետև խնդրում է նամակի բովանդակությունը գաղտնի պահել, որովհետև դրա հրապարակումը կվտանգեր իր անձը. «Ձեր վեհանձնության վրա ունեցած հավատս է, որ վստահություն ներշնչեց ինձ զրել մի այսպիսի անխոհեմ նամակ...»[79]։ Դժբախտաբար Իփեքճյանին ուղղված պատասխան նամակի սեպագրությունը մեզ չհաջողվեց գտնել Եզյանի ֆոնդում, բայց կենթադրում ենք, որ Իփեքճյանի քաղաքական ծրագրին նա հավել թե առարկել։ Ընդհակառակը, արևելահայ գործիչների կարծերը Կ. Պոլսի գործակիցների հետ գնալով ամրանում էին. այդ օրերին Կ. Պոլիս է մեկնում «Արձագանքի» թղթակից Հարոն, որի՝ Իփեք-

---

[78] ՀՊԿՊԱ, եզյանի ֆոնդ, Հ. Իփեքճյանի 17/29 4—82 թվակիր նամակից։

[79] Մեզ չհաջողվեց պարզել, թղթակցե՞լ է Իփեքճյանը «Голос»-ին, թե ոչ, բայց Թորախտով հիվանդ մանկավարժը այդ նամակի գրությունից մեկ տարի անց վախճանվում է Կ. Պոլսում։

ճյանի հետ ունեցած փոխհարաբերություններին հակառակ հոսանքի գործիչները քաղաքական նշանակություն էին տալիս։

Ազգային-պահպանողականները և անձամբ Եղյանը մեծ սպասելիքներ ունեին Ռուսաստանից։ Ինչ վերաբերում է ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ Աբգար Հովհաննիսյանի ընդվզումներին և Եվանգուլյանի բողոքներին, ապա այդ բխում էր ազգային-պահպանողական հոսանքի ծրագրի էությունից, այն է, քաղաքակիրթ ռուս ժողովրդի մեջ ապրել ազգային արժանապատվությամբ և ունենալ մշակութային ու հոգևոր կյանքի զարգացման լիաբուռն հնարավորություններ։

Մենք ծանոթացանք ազգային-պահպանողական հոսանքի առավել աչքի ընկած գործիչների կյանքին ու գործունեությանը։ Այժմ ավելի հանգամանորեն ծանոթանանք նրանց գործունեության այն երկու հիմնական ոլորտներին, որտեղ դրսևորվել են այդ հոսանքի թե՛ թույլ, թե՛ ուժեղ կողմերը։

Դ. ԱԶԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ազգային-պահպանողականների գաղափարախոսության հիմքում ընկած էր ազգության պրոբլեմը։ Այդ հարցի շուրջ արտահայտած նրանց մտքերը տեղ են գտել «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք» և «Նոր-դար» պարբերականների էջերում տպագրված տեսական և քարոզչական հոդվածներում, նրանց բանավիճային ելույթներում և անձնական նամակներում։

Ազգային հարցի բարձրացմանը նպաստում էր պատմական ժամանակաշրջանը։ Հայտնի է, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում 1789-ին սկսված բուրժուական հեղափոխությունների շրջանն ավարտվում է 1871-ին։ Վ. Ի. Լենինը նշում է, որ «հենց այս դարաշրջանն էլ ազգային շարժումների և ազգային պետությունների ստեղծման դարաշրջան է եղել։ Այդ դարաշրջանի ավարտումով Արևմտյան Եվրոպան վերածվեց բուրժուական պետությունների կազմավորված սիստեմի, որոնք որպես ընդհանուր կանոն, ազգային-միատարական պետություններ են»[80]։

Վ. Ի. Լենինը ազգության սկզբունքը պատմականորեն անխուսափելի է համարում բուրժուական հասարակության մեջ, ուստի և ազգային

[80] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 505։

շարժումները՝ պատմականորեն օրինաչափ։ Եվրոպայի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, որ սկիզբ էին առել դարասկզբին և իրենց վճռական փուլի մեջ մտել 1848-ի ֆրանսիական հեղափոխության շրջանում, 60-ական թվականներից արդեն մոտենում էին իրենց ավարտին։ Ավստրիական լծից ազատագրվում և վերջնականապես միավորվում է Իտալիան։ Բալկանյան երկրների ժողովուրդների ազատագրական շարժումները ռուս-թուրքական պատերազմից հետո հիմնականում պսակվում են հաղթանակով։ Ազատություն են նվաճում սլավոնական ժողովուրդները։ Օտար երկրների բռնակալական լծից ազատագրված փոքր ազգությունները լուրջ ուշադրություն են նվիրում իրենց երկրների տնտեսության ու մշակույթի զարգացմանը, հսկայական ջանքեր են գործ դնում ազգի պատմության, բանասիրության, բանահյուսության ուսումնասիրման և այդ գիտությունների արդյունքները միջազգային ասպարեզ հանելու ուղղությամբ։

Մ֊իքայել Նալբանդյանը խոսելով 50-ական թվականների ժամանակների մասին, ընդգծում է այն իրողությունը, որ մարդկությունը խմորված վիճակի մեջ է և ազգությունը ձեռք է բերել ամենօրյա հացի կշիռ, առանց որի չի կարելի ապրել։ Այդ մեծ շարժողության մեջ, գրում է, նա, «այն ազգը, որ չկամներ ինքնուրույնաբար շարժվիլ և գործ կատարել, կուլ կերթա մի ուրիշ ավելի գործունյա և խելացի ազգության»[81]։ Հայերը, սակայն, գրում է Նալբանդյանը, իրենց նյութապաշտության մեջ չեն մտածել ազգաշինության մասին, ուստի ինքը ոչ միայն ժամանակակիցների, այլև եկող սերնդի ուշադրությունը հրավիրում է այդ «աստվածատուր գաղափարի» իրականացման վրա։

«Հյուսիսափայլի» հրապարակախոսությունն այդ գաղափարի պրոպագանդման առաջին հզոր ամբիոնը դարձավ։ Հայ առաջավոր գործիչները Կովկասում նույնպես բարձրացնում են ազգը ինքնաճանաչողության հասցնելու, ժամանակի քաղաքակրթության նվաճումներին նրան հաղորդակից դարձնելու, ֆեոդալական կապանքներից ժողովրդի միտքն ազատագրելու հարցերը։

XIX դարի 50—60-ական թվականների բուրժուական առաջադեմ գործիչների ծավալած լուսավորական շարժումը, որին սիրով արձագանքում էին հայ ազգային-պահպանողականները, 70-ական թվականներին մտնում է իր նոր փուլը։ Ռուս-թուրքական պատերազմը վճռական ազ-

---

[81] Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 460։

դակ է դառնում ազգային-պահպանողականների համար։ Ոգևորված եվրոպայի ճնշված ազգությունների ազատագրական պայքարի օրինակներով, նրանք խորհում են տեփական ազգության հնարավոր ազատագրման հեռանկարների շուրջը, արևմտահայ առաջավոր գործիչների հետ փայփայում այն հույսը, թե սլավոնական ժողովուրդների ազատագրման հետ մեկտեղ իվերջո պիտի լուծվեր և նրանց հետ տառապած արևմտահայության հարցը[82]։

Ազգային-պահպանողականները «Փորձի» էջերում քննում են ազգության խնդիրը, ազգի կենսունակության հիմնական գործոնները համարելով մայրենի լեզուն և եկեղեցին։ Դրա հետ միասին «Փորձի» շրջանակի գործիչները մեծ ուշադրություն էին նվիրում հայ ժողովրդի պատմության և բանասիրության ուսումնասիրմանը, գրականության զարգացման խթանմանը, ազգային դպրոցների բարեկարգման հարցին և այլն։

«Փորձ» հանդեսում զետեղվում են մի քանի թարգմանական հոդվածներ, որոնք պատասխանում էին խմբագրության հարցասիրությանը։ Այսպես, Զիգֆրիդ Բրիի դասախոսության ոգին կազմում էր ազգությանը տված գնահատականը[83]։

«Փորձի» համար, հարկավ, ղեկավար սկզբունքներ էին Զիգֆրիդ Բրիի հոդվածում զարգացված երկու թեզերը։ Գերմանացի պրոֆեսորը, ձևակերպելով ազգության սահմանումը, մեծ նշանակություն էր տալիս մայրենի լեզվին, որի կորուստը նա համարում էր «ազգության ջնջվելու հաստատ նշան»։ Երկրորդ թեզն այն էր, թե ազգության գաղափարը բացատրում է ազգային ճնշումները և բռնություններ։ Ներդաշնակ գործակցություն և խաղաղ մրցակցություն, ահա թե ինչով պետք է աչքի ընկ-

---

[82] Ազգային-պահպանողականները դեռևս 60-ական թվականներից հետևում էին սլավոնական ժողովուրդների պայքարին և մշակութային կյանքի զարգացման ընթացքին։ Այդ հետաքրքրությունը պահպանվում է մինչև դարավերջ։ 1877-ի դեկտեմբերին Գ. Եվանգուլյանը նամակով խնդրում է Եղյանին՝ աշխատակցել «Փորձին», «մանավանդ այն հարցերի վերաբերությամբ, որ Ձեզ զբաղեցրել են և զբաղեցնում են»։ Եվանգուլյանն այնուհետև շարունակում է. «Ես շատ լավ հիշում եմ, քանի անգամ Ձեզ մոտ եղած ժամանակ մենք խոսել ենք, թե ինչքան մեծ նշանակություն կունենա մեր ազգի համար սլավոնացոց մանր ազգայնությունների և պետությունների պատմությունը։ Ահա լավ ժամանակ, երբ կարելի է նոցա պատմության հետ ծանոթացնելով մեր ազգը, միևնույն ժամանակ ցույց տալ, թե նա ինչ արել է և ինչ պետք է անի յուր վերածնության համար» (տե՛ս ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 18/12—77 թվակիր նամակը)։

[83] «Փորձ», 1876/77, № 2, տե՛ս «Ազգության խնդիր» հոդվածը։

նեն զարգացող ազգերը, դրում էր նա։ Այս հոդվածին հաջորդում է ֆրանսերեն լեզվից թարգմանված «Ազգերի զարգացման օրենքները» հոդվածի տպագրությունը, այնուհետև հանդես է գալիս և «Փորձի» աշխատակից, քննադատ և հրապարակախոս Ստեփաննոս Պալասանյանը։

Իր «19-րդ դարու նշանաբանը» ծրագրային հոդվածում Պալասանյանը նույնպես XIX դարը բնութագրում է իբրև ազգային շարժումների ակտիվացման մի ժամանակաշրջան։ Եվրոպական մի շարք ազգեր ըմբոստանալով իշխողների դեմ, հայտարարում են, թե բոլոր ազգությունները իրավահավասար պետք է լինեն և այլևս չի կարելի հաշվի չառնել նրանց սովորությունները, ձգտումներն ու իրավունքները։ Նա գրում է. «Այս գաղափարի հաղթանակը մենք տեսնում ենք Հունաստանի անկախության, Հունգարիայի ինքնավարության և Իտալիայի ու Գերմանիայի միության մեջ։ Այսօր իսկ մեր աչքերի առաջ նույն գաղափարը իրագործելու են ձգտում արևելյան քրիստոնյաները»[84]։ Պալասանյանը ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ յուրաքանչյուր ազգություն ձգտում է պահպանել իր ազգային հատկանիշները, դրանց մեջ տեսնելով իր վերկությունը։ Նա նշում է, թե ազգայնությունը, անկախ ազգության քանակից, զորանում է՝ կապված տվյալ ազգի բարոյական ուժերի վերելքի հետ և պարտադիր չէ բնավ, որ խոշոր ազգերը կուլ տան փոքրերին։ Չեխերն իրենց ազատատարած շարժումներով վերանորոգեցին իրենց կրոնը, Պրագայում հիմնադրեցին համալսարան, որը ողջ Եվրոպայի մտավոր կենտրոնը դարձավ։ Լեհերը տվեցին Կոպերնիկոսին, որը մի ամբողջ հեղափոխություն կատարեց գիտության մեջ։ «Ուրեմն,— զարգացնում է ազգային-պահպանողականների տեսակետը Պալասանյանը, — խնդիրը այստեղ ոչ այնքան բազմության և նյութական զորության մեջ է, որքան կենսական ուժի և բարոյական զորության մեջ, որ հիմն է նյութականին»[85]։

Պատմության հարցերին նայելով իդեալիստական հայեցակետից, նա մի ազգի զորությունը՝ համայն ազգերի հաշվեկշռի մեջ պայմանավորում է նրա բարոյական ուժերի վերելքի աստիճանով։ Ահա թե ինչու՝ մի կողմ թողնելով ազգության համար կենսական նշանակություն ունեցող տնտեսական ազատության պրոբլեմը, Պալասանյանը հայության հարատևման անհրաժեշտ պայմաններն է համարում, քաղաքական ազա-

---

[84] «Փորձ», 1877/78, № 1, էջ 143։

[85] Նույն տեղում։

տությունից զատ, ուսումը, կրթությունը, լեզուն և կրոնը: Ընդ որում, ըստ նրա՝ վերջինը «ամենազոր միջոց է ազգայնության պահպանման համար, մանավանդ այնտեղ, ուր ազգի գոյության համար քաղաքական ապահովություն չկա»:

Ստեփաննոս Պալասանյանը հավատում է նայում հայ ժողովրդի ապագային. այդ ազգը, որ պատմական անցյալում իր լուման է դրել ընդհանուր քաղաքակրթության գանձարանը, XIX դարի կեսերին կատարած քայլերով հաստատ երաշխիք է տալիս մոտալուտ վերածնության վերաբերյալ: Պալասանյանը թվարկում է ազգության նվաճումները՝ բուրժուազիայի զարգացման սկզբնական փուլում: «Կարճ միջոցում կազմվեցավ մի նոր հայկական լեզու, նոր մտքերի և քաղաքակրթության թարգման, դյութական զորությամբ հարուցյուն առավ մի նոր գրականություն, որ թեև դեռ մանուկ, սակայն խոստանում է աճել և զեղչիկ պտուղներ արտադրել: Ամեն տեղ բացվեցան և բացվում են ուսումնարաններ, առանձին խնամք է տարվում իգական սեռի դաստիարակության վրա, որի կրթությունից կախված է մեծ մասամբ ազգի ապագան»[86]: Հայերին մնում է անվարան շարունակել իրենց ճանապարհը քաղաքակրթության շավղով և համոզված լինել, որ «մի ազգ չսիետք է մեռնի, նա չէ կարող մեռնիլ»:

Ազգի գոյատևման և նրա հետագա բարգավաճման գործում Ռ. Պատկանյանը նույնպես վճռական նշանակություն էր տալիս եկեղեցուն և մայրենի լեզվին:

Առանց կրոնի և լեզվի, «այդ երկու ազգային նվիրական ավանդների», — գրում է Պատկանյանը, «ո՛րևէ ազգության տևողությունը երկբայելի է»: Նա ընթերցողների ուշադրությունը հրավիրում է այդ խնդրի վրա, նշելով այն վտանգը, թե այն, ինչ պատմության մեջ չեն կարողացել կործանել թշնամիները՝ ջնջել ազգային լեզուն և մշակույթը, անում է ժամանակակից աներևույթ անտարբերությունը: Քառասուն հիշեցնելով Ղրիմահայության իր ազգային լեզուն կորցրած 40.000 հայ գերդաստանների ճակատագիրը, Պատկանյանը կոչ է անում. «Հայոց լեզու, հայոց կրոն, — ահա մեր նշանաբանը. առանց հայկական լեզվի չկա մեզ ազգություն, առանց հայ եկեղեցվո՝ չկա բարոյականություն»[87]:

«Հայոց ազգը և յուր եկեղեցին» ծրագրային հոդվածում «Փորձի»

---

[86] Նույն տեղում, էջ 174:

[87] «Ճանապարհորդական տպավորություններ» («Փորձ», 1880, № 1, էջ 168):

տեսաբանը ազգի հզորության և կենսունակության նախապայմաններից մեկը համարելով հայ լուսավորչական եկեղեցու նպատակասլաց գործունեությունը, ջանում է պատմական փաստերով հիմնավորել այդ հարցադրումը։ «Հայոց ազգը յուր քաղաքական ինքնուրույն գոյությունը կորսնցնելուց հետո պահպանել է յուր ազգությունը գլխավորապես ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած եկեղեցու շնորհիվ», հետևապես 19-րդ դարում եկեղեցին օրինաչափորեն պետք է լինի այն կենտրոնատեղը, որին տրված արտոնությունները թե՛ Ռուսաստանում, թե՛ Արևմտյան Հայաստանում նրան իրավական ինքնուրույն միության հնարավորություններ են ապահովում[88]։

Խորանալով հարցի էության մեջ, «Փորձի» խմբագրությունը աշխատում է զարգացնել այն միտքը, թե ինչպես ի սկզբանե ազգի շահերը սերտորեն կապված են եղել եկեղեցու շահերի հետ, այնպես էլ նոր ժամանակներում դրանք շարունակում են գտնվել ներդաշնակ փոխհարաբերությունների մեջ։ Ազգային-պահպանողականները այս հարցադրման մեջ վերապահումներ չունեն։ Նրանք մոռանում են Հայաստանի պատմական անցյալի այն դրվագները, երբ հայ կղերը հակադրվում էր անգամ հայրենիքի շահերին, մոռանում են բարթրաստիճան հոգևորականության շահամոլությունն ու ազդադավ գործերը, գյուղական տգետ ու ագահ քահանաներին, որոնք Քաջբերունու վեպում իրենց գեղարվեստական մարմնավորումն են գտել իբրև «քաղցկեղ՝ Հայաստանին»։ «Փորձի» տեսաբանները ոչ միայն պատմական անցյալում իրենալական ներդաշնակություն են տեսնում հայ ժողովրդի և նրա եկեղեցականների գործակցության մեջ, այլև եվրոպական այլ ժողովուրդների պատմությունից վերցրած օրինակներով հայերին հակադրում են այդ ժողովուրդներին, կրկին անգամ հաստատելով իրենց դրույթները։ Այսպես, «Փորձի» հոդվածագիրը բնական է համարում այն վիճակը, որ Իտալիայում ժողովուրդն անջատվում է եկեղեցուց (դա, նշում է հոդվածագիրը, «մեր ազգի վերաբերությամբ ինքնասպանության հավասարազոր մի գործ է»)։ Նա այնուհետև շարունակում է. «Մի՞թե երկար պատերազմների և զրկանքների գնով յուր հայրենյաց անկախությունը ձեռք բերող իտալացին, մի՞թե, հարցնում ենք մենք, յուր անցյալին ու ներկային ծանոթ իտալացին կարո՞ղ է գնալ ձեռք-ձեռքի տված յուր հոգևորականության հետ, մինչդեռ վերջինս անիծում է նորա հայրենյաց անկախությունը, և

---

[88] «Փորձ», 1876/77, № 1, էջ 415։

Գարիբալդուն ու Կավուրին դժոխքի ծնունդներ է անվանում»։ Շահների տարանջատման նմանօրինակ փաստեր հրապարակախոսը դիտում է նաև Գերմանիայում և Ֆրանսիայում։ «Ժամանակակից Ֆրանսիայում,— գրում է «Փորձի» տեսաբանը[89],— հոգևորականությունը խառնեց յուր գործը Բուրբոնյան միապետության և Բոնապարտի կայսրության դրդիչների հետ, հերքելով ֆրանսիական հեղափոխության սկզբունքները, ազատության, հավասարության և եղբայրության վեհ սկզբունքները, այն բարկզբունքները, որոնիմ նորոգեցին քրիստոնյա մարդկությունը և տվին միլիոնավոր անձանց իրանց մարդկային իրավունքները»։ Հիրավի, միևնույն ժամանակակից ֆրանսիացին կարող է հավանություն տալ կաթոլիկ հոգևորականությանը, որի «իշխող մասը միանում էր և միանում է նոցա հետ, որոնք շատ կյանկանային ժամանակակից կյանքի բնական ձգտումը նա դարձնել դեպի սորկության և կույտ ուժի տիրապետության դարը»[90]։ Պալասանյանը սիրճախոս է և արդարամիտ, երբ դատապարտում է իտալական ազգային-ազատագրական շարժումների և ֆրանսիական մեծ հեղափոխության նկատմամբ կաթոլիկ եկեղեցու բռնած պարսավելի դիրքը, բայց զարմանալիորեն դյուրահավատ է և պահպանողական՝ լուսավորչական եկեղեցու կարծեցյալ արժանիքների մասին ունեցած իր համոզմունքներում։ Եվ սակայն «Փորձի» աշխատակիցներն իրենց ձեռքի տակ ունեին Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական ժառանգությունը, որից, անշուշտ, մի շարք ազդակներ էին ստացել, չհասկանալով ազգային հարցի նրա տեսության էական կողմը։ Ազգությունը նա հարկավոր և օգտակար է համարում իբրև առաջին միջոց՝ բռնակալության դեմ պայքարի դրոշ բարձրացնելու համար։ Ազգությունն անհրաժեշտ է համարում, երբ նա հանդես է գալիս իբրև իրավունք և բողոք՝ սորկության դեմ պայքարի ոլորտներում։ Նալբանդյանը ազգային շարժումների գլխավոր իմաստը, սակայն, դնում է անտեսական հարցի լուծման մեջ։ Ազգության, լեզվի, ավանդությունների պահպանման մասին նրա վերացական քարոզները նա համարում է անպատուղ խոսքեր, մեծ դրանք չեն առնչվում ժողովրդին ազրատությունից հանելու, նրա բոլոր անդամներին հողով ապահովելու խնդրի հետ։ Ազգային

---

[89] Հոդվածն անստորագիր է, մեր կարծիքով պատկանում է Ստ. Պալասանյանի գրչին։

[90] «Փորձ», 1876/77, № 1, էջ 419։

շարժումները, այսպիսով, պետք է հասարակ ժողովրդին փրկեն՝ ազգության անունով։

Մ. Նալբանդյանն ընդունում է ազգի գոյատևմանը նպաստող ավանդական պայմանները՝ երկիրը, լեզուն, սովորություններն ու ավանդությունները, մեծ վերապահումներով՝ նկեղեցին։ Պատմականորեն ազգի գավակները պաշտպանելով իրենց նկեղեցու անկախությունն ու ինքնուրույնությունը, կարողացել են պահպանել և ազգի գոյությունը («այս պատճառով մեծ խորհուրդ է ունեցել նկեղեցին անցած գնացած կյանքի մեջ»)։ Սակայն Նալբանդյանը վճռականորեն մերժում է հայ եկեղեցու ազգապահպան դերը XIX դարում։ Բազմաթիվ օրինակներով նա մերկացնում է հայ հոգևորականության բարոյական անկանկությունն ու ապիկարությունը, նրա հակաժողովրդական էությունը։ Ազգը դարեր շարունակ սարսափի ու թշվառության մեջ օտար գավազանի հետ ննջարկվել է իր հոգևորականների հարատահարությանը, գրում է նա։ Հայերը պետք է անխնա լինեն հոգևորականության նկատմամբ, «որովհետև հետախուզության և ռեակցիայի անպարծանք դրոշները նույա պլխի վրա են փողփողում մասնավորապես»։

Ընդունելով Նալբանդյանի դրույթները ազգի վերածնմանն օժանդակելու, նրա լուսավորության գործին զարկ տալու, գավանաբանական վեճերից խուսափելու, ազատագրական շարժումները խթանելու մասին, ազգային-պահպանողականները, սակայն, շրջանցում էին սոցիալական պայքարի անհրաժեշտության գաղափարը, ինչպես և ջանում էին փրկել ժամանակի հոգևորականների պատիվը, ընդգծելով եկեղեցու ազգապահպանման դերը նաև XIX դարում։ Այսպես, Երիցյանը վիճարկում է «Հյուսիսափայլի» դրույթները և դատափետում մահկանացուն նոր կնքած Նալբանդյանին այն բանի համար, որ նա հոգևորականներին քուրմեր և եղվիտներ է անվանում։ Երիցյանը գրում է. «Հայ կղերի վրա նայել այն աչքով, ինչպես սովոր ենք նայել կաթոլիկ կամ նույնիսկ բողոքական խորամանկ և հետամուտ կղերի վրա — մեղք է, ասել է չգիտենալ ազգային պատմությունը, չճանաչել հայ ազգը...։ Այդ բավական չէ. քարոզել մեր ժողովրդին՝ հետանալ այժմ յուր կղերից, ասել է երեխայի չափ հասկացողություն չունենալ քաղաքականության մեջ»[91]։

Թվում է՝ ամեն ինչ ասված է։ Սա հենց այն տարբերիչ գիծն է, որով բնութագրվում է ազգային-պահպանողականների գործունեությունը

[91] «Փորձ», 1880, № 1, էջ 83։

Կովկասում, գայթակղության այն քարը, որի առիթով բախվում էին լիբերալ-բուրժուական և ազգային-պահպանողական հոսանքների ներկայացուցիչները: Պարզ է, որ ազգային-պահպանողականները սոցիալական հուսալի կռվան չունենալով, որին հանձնարարեին ազգի քաղաքական բախտի տնօրինումը, այդ խնդրի լուծումը վերապատահում էին վաղուց իր դարն ապրած հայ եկեղեցուն: Այս հանգամանքը նրանց պարտադրում էր անել ամեն ինչ եկեղեցու քաղաքական և բարոյական դիրքերի ամրապնդման համար: Այսպես, «Արձագանքը» հենց այդ նախանձախնդրությամբ էլ պահանջում է անվթար պահպանել նրա իրավական և դավանաբանական հիմքերը: Առաջնորդվելով քաղաքակրթության՝ ժամանակի մակարդակի չափանիշներով, խմբագրությունն սկզբունքորեն դեմ չէր եկեղեցու վարչական դեկավարության և եկեղեցականների կրթական գործում որոշ բարենորոգումներ մտցնելուն, սակայն հիմնավին տարբերում էր արմատական փոփոխություններ կատարելու պահանջներին[92]:

Հայ եկեղեցու քաղաքական նշանակությունը բարձրացնելու և ազգի բարոյական հիմքերն ամրապնդելու նպատակով «Արձագանքի» ազգային հարցի տեսաբանները մշակում են մի ծրագիր, որի հիմքում ընկած էր Աթոռի ունենալիք մեծ դերը, հոգևոր իշխանության կենտրոնացման անհրաժեշտությունը: Այսպես, հոդվածներից մեկում խմբագրությունը հաշվի առնելով այն տառնությունը, որ նկատվում էր Աթոռի և պատրիարքարանի միջև, կրկին շեշտում է ավելի սերտ միության կարևորությունը, այդ միության մեջ ընդգծելով կաթողիկոսի դեկավար դերը:

«Ազգի միակ հոգևոր գլուխը նորա ընդհանրական հայրապետն է,— դրում է «Արձագանքի» տեսաբանը,— պատրիարքը այդ ընդհանրական գլխի փոխանորդն է միայն, նորա ներկայացուցիչը Բ. Դռան առաջ և նորա շահերի պաշտպանը օսմանյան պետության մայրաքաղաքում: Իբրև կախումն ունեցող փոխանորդ, յուր գործողության մեջ պատրիարքը պատասխանատու պետք է լինի յուր հոգևոր գլխին և այդպիսով ազգի հոգևոր պետքերը և կարիքները միացնել հայրապետական աթոռի հետ»[93]: Այս դեպքում միայն, երբ Աթոռը կդառնար համայն ազգության հոգևոր պարագլուխ, նա կվերածվեր մի բարոյական անվնաս-

---

[92] Տե՛ս «Արձագանք», 1892, № 11:

[93] «Արձագանք», 1883, № 18:

պահ ուժի, «որի առաջ շատ հեշտությամբ կլուծվին շատ ծանրակշիռ խնդիրներ»: Բնականաբար խմբագրությանը նկատի ուներ արևմտահայերի ինքնավարության և քաղաքական ազատության հետ կապված խնդիրները: Ահա թե ինչու նա մեծ նշանակություն էր տալիս հայ եկեղեցուն տրված առանձնաշնորհումները նպատակասլաց օգտագործելուն և աշխատանքում էր ըստ հարկին: Այսպես, «Եկեղեցական իրավունքները և Թուրքիան» հոդվածի հեղինակը խոսում է արևմտահայ հատվածի եկեղեցիների գրեթե բոլոր իրավունքների ամրմանափակման մասին: «Պատրիարք և կաթողիկոս» հոդվածի հեղինակը, մեր կարծիքով Ալ. Երիցյանը, կաթողիկոսի և պատրիարքի ընտրությունը համարում է ընդհանուր ազգային հարց: Նա նշում է պատրիարքի բարոյական կշռի մեծանալը Տաճկաստանի ռուս-թուրքական պատերազմից հետո: «Տաճկաստանի հայոց ազգային պատրիարքն էր,— ասված է այդ հոդվածում,— որ ռուսաց կայսեր հովանավորությամբ միջազգային դաշնագրի մեջ մտցրեց Տաճկահայաստանի խնդիրը»: Թեև 61-րդ հոդվածը չէր շարժվում տեղից, «Արձագանքի» խմբագրությանը հույս էր հայտնում, թե «Հայոց Ազգային ժողովը, Կ. Պոլսո հայոց պատրիարքը պիտի լինեին այս խնդրի առաջ մղողը և ի կատար ածողը»: Եզրակացությունն այն էր, թե «Կ. Պոլսի Հայոց պատրիարքը՝ Բեռլինի դաշնագրից հետո եվրոպական տերությանց համար տաճկական հայերի ներկայացուցիչն է»[94], ինչ-որ իմաստով քաղաքական գործիչ, որը կարող էր անմիջական փոխհարաբերությունների մեջ մտնել խոշոր տերությունների ներկայացուցիչների հետ:

«Արձագանքը» տարբեր առիթներով խոսել է նաև պատրիարքի գործունեության այլևայլ կողմերի մասին. ճշվել է մասնավորապես նրա դերը՝ ժողովրդի դաստիարակության, մայրենի լեզվի զարգացման ու ազգապահպանման խնդրում: «Այս բոպեիս,— գրում է թերթի տեսաբանը,— ուսման սովը հացի սովի պես սպառնում է խստապարանոց և տգետ հայաստանցուն: Դորան պետք է օր առաջ դարման անել, ժողովրդի հոգևկան և մտավոր պապակը զովացնել, ուսումնարանական խնդիրն առաջ մղել»[95]:

Սակայն Ա. Հովհաննիսյանը Կ. Պոլսի պատրիարքարանին էլ ավելի մեծ պահանջներ էր ներկայացնում: Երբ նա թղթակցություն է ստանում

---

[94] «Արձագանք», 1882, № 44—45:

[95] «Արձագանք», 1883, № 2:

այն մասին, թե տաճկական կառավարությունը պատրաստվում է արհեստական միջոցներով Հին Բայազետի և Բագրևանդի գավառներից քշել հայերին և այդ վայրերում բնակեցնել քրդերին, կոչ է անում՝ հաշվի առնելով այդ գավառների քաղաքական, տնտեսական և պատմական նշանակությունը, պայքարել վտանգի դեմ։ «Ո՞ւմ պարտքն է այս,— գրում է նա,— եթե ոչ Կ. Պոլսի պատրիարքարանի և Ազգային վարչության, որոնց ձեռքում է գտնվում տաճկահայերի կառավարչական դեկը և պատասխանատվությունը»[96]։ Այնուհետև, երբ 1894 թ. սկսվում են հայկական ջարդերը, «Արձագանքի» խմբագրությունը հանդամանորեն լուսաբանելով տեղի ունեցող իրադարձությունները, փորձում է ակտիվ գործունեության կոչել պատրիարքարանին։ Ա. Հովհաննիսյանի հրատարակախոսական գործունեության համար շատ բնորոշ է, որ արևմտահայերի պատրիարքական աթոռի նկատմամբ ունեցած ակնածանքը բնավ արգելք չի հանդիսանում նրան՝ ամենախիստ խոսքերով քննադատելու պատրիարքարանին, որը մոռացել էր իր քաղաքական դերը և պատասխանատվությունը ժողովրդի առաջ[97]։

Հովհաննիսյանը միաժամանակ հետևում էր նաև էջմիածնի աթոռի նշանակության բարձրացմանը։ Այդ նպատակով նա առանձնակի վերա-

---

[95] «Արձագանք», 1883, № 2։

[97] Ամբողջությամբ մեջ ենք բերում այդ հարցին նվիրված «Արձագանքի» խմբագրական հոդվածը։

«Ի՞նչ է անում Կ. Պոլսո Հայոց պատրիարքարանը. Տաճկական խորամանկությունը թափանցեց Սասնա անառիկ լեռնագագաթները և այնտեղից հայ կտրիճների, կանանց, օրիորդների և մանկանց արյուն է հոսեցնում. ի՞նչ է անում Կ. Պոլսո պատրիարքարանը։ Քուրդն անգամ մի բոպե մտածելով կանգ առավ և չկամեցավ իր սուրը գործիք շինել բարբարոս փաշաներին. ի՞նչ է անում Կ. Պոլսո պատրիարքարանը։ Լոնդոնցիք և փարիզեցիք, անգլիացիք և ֆրանսիացիք սարսափի ճիչ են արձակում անմեղ արյան հեղումը տեսնելով. ի՞նչ է անում Կ. Պոլսո պատրիարքարանը։ Կ. Պոլսում ծանր բեռները կրող, կուրծքը քրտինքից այրված ու խորովված, ճակատը կարոտս կնճիռներով ակոսված մշակի տուն ու տեղն ավերվում է, կնոջ ու զավակի արյունը թափվում է. ի՞նչ է անում Կ. Պոլսո պատրիարքարանը։

Տաճկական պետության կենտրոնը գտնվում է Կ. Պոլսում, եվրոպացիք մեզ հեռագրում են, որ տաճիկ զորքերը քանդում, ավերում են Մուշը և Սասունը։ Ի՞նչ է անում Կ. Պոլսո պատրիարքարանը։ Վերջապես նրի Տաճկաստանում գտնված հայերը բոլորը ջընջվին, էլ ո՞ւմ համար կմնա Կ. Պոլսո պատրիարքարանը և էլ ի՞նչ կանի այդ պատրիարքարանը։

Մենք խոսք չենք գտնում ասելու, գրիչը ձեռքից վայր է ընկնում. մեզ թվում է, թե խուլերի ու համրերի առաջ ենք աղաղակում» (տե՛ս «Արձագանք», 1894, № 129)։

բևմունք էր ցուցաբերում կաթողիկոսական ընտրությունների հարցի նկատմամբ և հնարավորության սահմաններում «Արձագանքում» մեծ տեղ նվիրում ընտրությունների լուսաբանմանը։

1882 թ. դեկտեմբերին վախճանվում է Գևորգ 4-րդը։ Ընտրությունների նախօրյակին թե՛ պոլսահայ, և՛ թե արևելահայ մամուլը լայնորեն քննարկում է Ազգային ժողովի իրավունքների հարցը։ Վիճարկվում էր ընտրության եղանակը։ Բանն այն էր, որ արևմտահայերը հակառակ Պոլժենիեյով նախատեսված այն պահանջին, որ արևմտահայ թեմերը ընտրություններին պետք է մասնակցեին ներկայացուցչական ձևով, 1866-ի ընտրություններին մասնակցել էին Ազգային սահմանադրությամբ հաստատված նոր եղանակով։ Այդ կարգը լիազորում էր Ազգային ժողովին՝ գավառները ներկայացնող երեսփոխանների միջոցով կատարել վերջնական ընտրություն և Էջմիածնի ընտրություններին ներկայացնել ձայների մեծամասնություն ստացած ընտրելիների եռանուն ցանկը՝ իրենց քվեներով։ Ընդ որում՝ Ազգային ժողովից ընտրված երկու պատգամավորները հատուկ հրահանգ էին ստանում Էջմիածնում տեղի ունենալիք ընտրությունների ժամանակ, դրա վերջին փուլում, Արևմտյան Հայաստանի բոլոր թեմերի 130 ձայները տալ ցուցակի այն թեկնածուին, որին ներքին կարգով մատնանշում էր Ազգային ժողովը։ Այս կերպ էր ընտրվել Գևորգ 4-րդը։ Ազգային ժողովը պատրաստվում էր այս կերպ մասնակցել ընտրություններին նաև 1884 թ.։ Կովկասի մամուլն առարկում է. Կ. Պոլսից ներկայացվող եռանուն ցանկը վերջնական էր, իսկ Էջմիածնում դրան ավելացվելիք միակ, չորրորդ ազգանունը կարող էր ստանալ միմիայն տեղի 30-ի չափ քվեները՝ 130-ի դիմաց։

«Նոր-դարը» գտնում էր, թե 1866 թ. ընտրությունների կարգը հակադեմոկրատական է և հակասում է փակ ընտրության բուն ոգուն։ Փաստորեն Կ. Պոլսի Ազգային ժողովն է ընտրում կաթողիկոսին, քանի որ ձայների բացարձակ մեծամասնություն ունենալով, արևմտահայերն իրենց վճիռը պարտադրում են Էջմիածնին։ «Արձագանքը» նույնպես բողոքում է այս «գերակշռող արտոնության դեմ, որ իրենց են սևիսկանել Ազգային ժողովում աթոռ ունեցող պարոնները՝ կաթողիկոսի ընտրության հարցում»։

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, մամուլի ճնշման տակ Ազգային ժողովը որոշ զիջումներ է կատարում։ Էջմիածին է ուղարկվում եռանուն ցանկը, բայց չի մատնանշվում ընտրելի պատգամավորի ազգա-

նունը։ Այժմ էջմիածնի քվեարկության արդյունքները պետք է դուրս բերվեին Կ. Պոլսում ստացված քվեների քանակին և չորս ընտրելիներից առանձնացվեր ձայների բացարձակ մեծամասնություն ստացած թեկնածուն։ Այս միջոցը բավարարում է արևելահայերին և 1884-ի ընտրությունները տեղի են ունենում ժամանակի մամուլի արտահայտությամբ՝ «միջին ճանապարհով»[98]։

Վերջապես տեղի են ունենում ընտրությունները և ձայների բացարձակ մեծամասնությամբ կաթողիկոս է ընտրվում Ներսես Վարժապետյանը։ Սակայն, քանի որ ընտրությունների ընթացքում Վարժապետյանը ներկայացրել էր իր հրաժարականները, Ալեքսանդր III-ը, օգտագործելով այդ հանգամանքը, չի հաստատում նրան։ Մերժումը պատճառաբանված էր այն կերպ, թե հակառակ Պոլոժենիեի, քանի որ Երկու թեկնածուների փոխարեն հաստատման է ներկայացված մեկը (չէր հաշվվում Ներսեսի թեկնածությունը), ընտրությունները բեկանվում են։ Այս փաստը հավասարապես հուզում է երկու հատվածի հայերին, որոնք աննախադեպ մեծ հույսեր էին կապում Ներսեսի ապագա քաղաքական գործունեության հետ։

Ներսես Վարժապետյանը վախճանվում է այս դեպքերից մեկ ամիս անց, 47 տարեկան հասակում, շաքարախտից։ Նրա անվան մեջ իսկ վառնդ նշմարելով, ցարական դրաքննությունը ապրելում է Կ. Պոլսից ստացված բոլոր թղթակցությունները, որոնք լուսաբանում էին հանգուցյալ պատրիարքի կյանքն ու գործը[99]։ «Արձագանքի» ընթերցողները միմիայն 1886-ի առաջնորդողներից մեկում են կարդում Ն. Տեր-Ղևոնդյանի խոսքերը Վարժապետյանի մասին («1884 թ. վերջերին մեր հույսերը առկայծյալ պատրույգի նման իրանց վերջին փայլից էլ զրկվեցան... Ննջեց դարուս ամենամեծ հայ հոգևորականը, ամենաճշմարիտ հայ մարդը. ննջեց և յուր հետ կարծես զերեզման տարավ մեր հույսերի մնացած նշխարները»[100]։ Կաթողիկոսական նոր ընտրությունների ժամանակ թեև միաձայն ընտրվում է Մելքիսեդեկ Մուրադյանը, բայց

---

[98] «Արձագանք», 1884, № 9։

[99] Այդ հարցին նվիրված 40 սյունակ շարվածք, որ նախատեսված էր «Արձագանքի» համար, առ այսօր մնում է Կովկասի դրաքննության կոմիտեի արխիվում։

[100] «Արձագանք», № 1886, № 1—2։

Ալեքսանդր III-ը հաստատում է երկրորդ Բենկենդոռֆ, առավել հլու նախարարի տեր կարծված Մակարին: Հայ հասարակությունը թե՛ Ռուսաստանում և՛ թե Արևմտյան Հայաստանում, թեև սաստիկ վրդովված, այս փաստի հետ հաշտվում և Մակարին կաթողիկոս է ճանաչում այն բանից հետո միայն, երբ հավաստիանում է, որ նա պետք է զբաղվի 1885-ին փակված հայկական դպրոցները վերաբացելու գործով:

Ուխտանական թվականներին ավելի ընդգծված է դառնում հայկական հարցի նկատմամբ Ալեքսանդր III-ի քաղաքականության վերապահ դիրքորոշումը. ավելի ցայտուն են դառնում Կովկասի ժողովուրդների ազգային-կրթական հիմնարկների գործունեությունը սահմանափակելու փորձերը. դնալով ծանրանում է և արևմտահայության նյութական ու բարոյական վիճակը: Ազգային-պահպանողականներն ապավինած լուսավորչական եկեղեցու ունեևալիք քաղաքական նշանակությանը, իրենց գործունեությամբ ձգտում են ապահովել եկեղեցու անկախ դիրքը և կառավարական շրջաններում բարձրացնել նրա հեղինակությունը: «Արձագանքը» միաժամանակ պայքարում էր կաթոլիկ և բողոքական միսիոներների դեմ, որոնք քայքայիչ գործունեություն էին ծավալում Հայաստանի տարածքում: Հայտնի է, որ դեռևս Նալբանդյանը «Պոլսահայ լուսավորչական համայնքը» իր տեղեկագրում ռուսական կառավարության ուշադրությունը հրավիրում էր միսիոներների գործունեության քաղաքական միտվածության վրա, պատասխան ակտիվ գործունեության կոչելով առաջնին: Հետագայում, 80-ական թվականներին նույնպես, «Արձագանքի» գործիչները ընդգծում էին այդ փաստը: Այսպես Ներին ահազանգում էր, որ անգլիական եկեղեցական գործիչների մի մեծ խումբ շրջագայելով Արևմտյան Հայաստանի հայկական դավառներում, հայտարարում է, թե հայերը ցանկանում են դավանափոխ լինել: Ա. Հովհաննիսյանը բացահայտում է կեղծիքը. հայերն այդ քայլին դիմում էին միմիայն ծայրահեղ աղքատության դրդված և կամ որոնում էին ֆիզիկական ապահովություն: Անգլիացիները հետամուտ էին քաղաքական նպատակների: Այդ դավադրության է ռուսական բաղաքականության դեմ, դրում է «Արձագանքի» տեսաբանը. Անգլիան իր 25 եպիսկոպոսների միջոցով, (որոնք միաժամանակ ճանաչված քաղաքական գործիչներ էին), իրենց հետևորդ նպատակների համար ձգտում են նվաճել Փոքր Ասիայի հայերի համակրանքը: Այս վտանգի հանդիման «Արձագանքի» խմբագրությունը պահանջում էր Հայաստանում հաստա-

տել բարեկարգ դպրոցներ, ընկերություններ, ծավալել հրատարակչական գործունեություն։

Առերևույթ կրոնական-դավանաբանական հարթություն ունեցող քաղաքական այս պայքարում հաջողության հասնելու համար՝ «Արձագանքի» խմբագրությունը մի շարք պահանջներ է առաջադրում հայ հոգևորականությանը։ Ինամական առաջնորդներին հանձնարարվում է հասարակության մեջ գործել «ազգային շահերի տեսակետից» և հայ ժողովրդին օգնել մրցելու «մյուս համաբնակ ազգությունների հետ լուսավորության ասպարեզում»։ Այնուհետև պահանջվում է քահանաների ընտրության գործում դրսևորել բացառիկ ուշադրություն և զգաստ վերաբերմունք։

Եթե ժողովուրդն անհոգ է այդ հարցում, ապ հոգևոր վարչությունը պետք է մտահոգված լինի լավ ընտրություն կատարել («բայց հոգևոր վարչությունը կարծես դիտմամբ առաջ է քաշում վերջերս ուգեհաներին»)։ Ալ. Երիցյանն այդ խնդրի հաջող լուծումը պայմանավորում է քահանաների նյութական դրության բարելավումով[101]։ «Արձագանքի» թղթակից Հ. Ճաղարբեկյանը հայ հասարակությանն առաջարկում է համատեղ ուժերով լուծել քահանայական դասի ընտրության ժամանակի հարցը, որը, նրա կարծիքով պետք է օգներ հոգևորականության նշանակության բարձրացմանը ժողովրդի աչքում։ Նա այն համոզմունքն է հայտնում, թե սխալ է հայերին բաժանել աշխարհականների և հոգևորականների։ Նրանց շահերը մեկ են, գործունեության ասպարեզը՝ նույնպես. ուստի իրեև լծակից պետք է միացած ուժերով վարեն հատարակաց անդաստանը և առաջ տանեն արորը։ Իսկ այժմ (իմա 1896-ին) ավելի, քան երբևիցե, անհրաժեշտ է բոլոր կուսակներից իմբուկ հարկանել, փող փչել ու գոռալ միացած ուժերով գործելու կարևորության[102]։

Ինչպես տեսնում ենք, թե՛ Ճաղարբեկյանը, թե՛ Երիցյանը՝ «Արձագանքի» մյուս աշխատակիցների հետ միասին առաջնորդվում էին մեկ նպատակով։ Այդ՝ ազգի ուժերի համախմբման անհրաժեշտության գիտակցությունն էր, որը բացառում էր դավանաբանական կամ այլ կարգի պառակտման որևէ հնարավորություն։ Նրանք ազգի կազմում մերժում էին դասակարգային հակամարտությունները և անհնար գտնում հոգևորականների և աշխարհականների շահերի տարանջատումը։ Հայ լուսավորչական եկեղեցին դիտելով իրեև սահմանադրական (հետևապես և

---

[101] «Արձագանք», 1886, № 20, 22—24։

[102] «Արձագանք», 1896, № 121։

ժողովրդական հիմնարկ) ազդային-պահպանողականները այդ բավարար հիմք էին համարում արդարացնելու համար իրենց կողմնակալ վերաբերմունքը եկեղեցու և եկեղեցականների նկատմամբ և հետևողականորեն քննադատելու կաթոլիկ և բողոքական եկեղեցիները։

«Փորձի» և «Արձագանքի» էջերում տպագրվել են և քննադատական հոդվածներ, որոնց հեղինակները կշտամբում էին հոգևորականությանը՝ էջմիածնի պատերից դուրս ազգային ուսումնարանների և հաստատությունների նկատմամբ նյութական խնամատարություն չունենալու համար[103]։ Բաֆֆին նույնպես՝ «Պարսկաստան» թղթակցության մեջ նկարագրելով տեղի հայ դպրոցների թշվառ վիճակը, հայ մտավորականության և Աթոռի ուշադրությունը հրավիրում էր դպրոցական ցանցի ընդլայնման և գործող ազգային դպրոցներին նյութական օժանդակություն ցույց տալու հարցերի վրա[104]։ Այս հոդվածները, սակայն, եկեղեցու դերը ժխտելու կամ նույնիսկ նսեմացնելու միտում չունեին, մինչդեռ ազգային-պահպանողականները շատ հիվանդագին էին ընդունում եկեղեցու և Աթոռի մասին ժամանակի մամուլի օրգաններում տպագրված քննադատական ելույթները։

Այսպես, 80-ական թվականներին բանավիճելով «Մշակի» խմբագրի հետ, «Արձագանքի» տեսաբանները նրան անվանում էին ազգի և եկեղեցու թշնամի։ «Հատել է ժամանակը,— բանավիճում պնդում էր Արծրունին,— երբ մենք կարող ենք համարձակապես արհամարհել ազգային եկեղեցու առաջնակարգ նշանակությունը ազգային գոյության խնդրում և բան ամենայնի հենվել գոյության մյուս ֆակտորին— մայրենի լեզվին»։ «Արձագանքի» հոդվածագիրը պատասխանում է, թե մայրենի լեզվի հետ մեկտեղ «եկեղեցին ազել է ի սկզբանե հետէ մեր ազգի պահպանության հզորագույն նեցուկներից մեկը և տակավին պիտի լինի ըստ երկար»[105]։

Հետաքրքրական է այն երևույթը, որ երբ նոր հիմնադրված «Նորդարը» սկսում է քննադատել բարձրաստիճան հոգևորականներին և անփութորեն է արտահայտվում Աթոռի մասին, ազգային-պահպանողականները խզում են հարաբերությունները Սպ. Սպանդարյանի հետ։ Ընդամենը 1876-ին դրեթե մրցում են պարձնում Պ. Սիմեոնյանից, որն ընդդատա-

---

[103] Տե՛ս «Մեր հոգևորականության պարտականությունները» հոդվածը («Փորձ», 1876/77, № 3)։

[104] Տե՛ս «Փորձ», 1876/77, №1։

[105] «Արձագանք», 1883, № 25։

ջելով Մանկունու դեմ գրված անթվով բողոքներին ու նամակներին, «Մեղու Հայաստանի» թերթում տպագրում է «Սոդոմ-Գոմոր (վենտ ասպետական ժամանակից)» ֆելիետոնը[106], որտեղ այլաբանորեն ներկայացված էր էջմիածնի միաբանության վարքը («Անառակ խառն ասպետական համայնք») և ամենամռայլ գույներով քննադատված էին Մանկունու չարաշահությունները ու կաթողիկոսի անգործությունը:

Ազգային-պահպանողականները այս ֆելիետոնը համարում են անպատեհ հանդգնություն և անձնական նամակներում հայհոյում Սիմեոնյանին: Այսպես, Եվանգուլյանը գրում էր. «Նրա հոդվածները հոգևորականության դեմ, մանավանդ ալեզօրիական Սոդոմ-Գոմորը, միանգամայն զզվանք է ծնում ամեն ընթերցողի մեջ: Այդ աստիճան վայր գցել կաթողիկոսի դրությունը հասարակության աչքում, ինչպիսին նա և լինի, միանգամայն անկարդ բան է»[107]: Ավ. Բաբայանը «Մեղուն» համարում է վնասակար և քանդող դասի օրգան: Փիլ. Վարդանյանը ֆելիետոնի տպավորության տակ գրում է Պատկանյանին. «Արդյոք կարդացի՞ք «Մեղվի» վերջին համարի ֆելիետոնը «Ասպետական կարգի» մասին: Не в бровь, а в глаз! Բայց Սիմեոնյանից այդպիսի կոպիտ և իշավարի բան չէի սպասում: Ամեն բան չափ ունի»[108]:

Կ. Եղյանը բացատրություն է պահանջում Սիմեոնյանից, իսկ վերջինս չհամարձակվելով ուղղակի նրան դիմել, Սանասարյանին գրած մի ընդարձակ նամակում բացատրում է ֆելիետոնը գրելու շարժառիթները: Նա ասում է, թե իրեն իզուր են մեղադրում կաթողիկոսի և հայ հոգևորականության դեմ իր բռնած «հարձակողական ընթացքի համար». ինքը նրանց դեմ թշնամություն չունի, բայց այլևս չի կարող լռել, տեսնելով նրանց անիրավ գործերը, «որք Ձեզ հայտնի չեն, բայց որք բոլոր Թիֆլիսին զզվանք և դայթակղություն են պատճառում»[109]:

Եթե ազգային-պահպանողականների մասին դատելու լիներ մամուլի էջերում տպագրված նրանց հոդվածներով և բանավիճային ելույթներով, ապա կարելի կլիներ ենթադրել, թե Աթոռի գործունեության մեջ

---

106 Մանկունին Գևորգ կաթողիկոսի հետ ժամանել էր Կ. Պոլսից: Էջմիածնի միաբանության մեջ այդ եպիսկոպոսն անասելիորեն իշխանություն էր վայելում և օգտվելով կաթողիկոսի մոտ ունեցած վստահությունից, մեծամեծ ապօրինություններ կատարում:

107 ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 21/8—76 թվակիր նամակից:

108 ԴԱՔ, Ս. Պատկանյանի ֆոնդ, վավ. 1117:

109 ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Փ. Վարդանյանի 5/8—76 թվակիր նամակից:

նրանք չէին տեսնում որևէ բիծ, որը կարող էր ինչ-որ ձևով դժել եկեղեցու հեղինակությունը: Նրանց նամակագրությունը, սակայն, բացում է մի շատ հետաքրքրական դաղտնիք, որը նոր լույս է սփռում այդ հոսանքի գործելակերպի վրա:

Սկսած Գևորգ կաթողիկոսի գահակալության օրերից, ազգային-պահպանողականներն իրենց անձնական նամակներում անվերջ ցավով արձանագրում են Աթոռում նկատվող հոռի երևույթները: Այսպես, 1876-ին խոսում են Մանկունու իշխանության տխուր հետևանքների մասին. «Այնպիսի կաշառակերություն, անկարգություն, գումարների վատնություն՝ ասում են երբեք չի եղել»: Արշակ Նահապետյանը 1882-ին գանգատվում էր նույն վիճակից. կաշառակերություն, անօրենություն իշխում են էջմիածնում և այս պայմաններում մենք դեռ ուզում ենք աշակերտներին ստիպել, որ հոգևորական դառնան: Գ. Եվանգուլյանն այն կարծիքին էր, թե Գևորգ IV-ի մահից հետո էջմիածնում ինքը կաթողիկոսության ոչ մի հարմար թեկնածու չի տեսնում: 1882-ին Եվանգուլյանը եղել էր էջմիածնում և ծանոթացել տեղի հոգևորականների հետ. «Երանի՛ թե չէի տեսել», խոստովանում է նա Եղյանին ուղղված նամակներից մեկում, այն դեպքում, երբ «Արձագանքում» տպագրած իր ուղղություններում մեջ մեծ խնամքով պաշտպանում էր միաբանության գործունեությունը: 1891-ին Ռուբեն Հասան-Ջալալյանը գրում էր էջմիածնից. «Միաբանության մեջ կատարյալ անմիաբանություն, անարխիա է տիրում». կամ՝ «Այստեղ ոչ մի մխիթարական բան չկա, որ հաղորդեմ Ձեզ, այսքանս կասեմ, որ հոգևորականության ինտրիգանները և անամոթությունը վերջին աստիճանին է հասել»[110]:

Այս առումով հետաքրքրական է նրանց վերաբերմունքը Խրիմյանի նկատմամբ: Խրիմյանը անվերապահ հեղինակություն էր Եղյանի խմբի համար: Նրա ընտրությունն անցնում է բուն ոգևորության պայմաններում. ազգային-պահպանողականները քիչ հուզումներ չեն ապրում մինչև Խրիմյանի գահին հաստկելը: Թիֆլիսում նրան ցույց է տրվում արտակարգ ընդունելություն, եթե ոչ կառավարության կողմից, ապա հենց իրենց՝ ազգային-պահպանողականների: (Ժամանակակիցները հիշում են, որ կառավարությունը պաշտոնապես շրջեղ ընդունելություն է կազմակերպել միայն Մակար կաթողիկոսի համար): Եվանգուլյանն իր նամակներից մեկում նկարագրելով Խրիմյանի մուտքը Կովկաս՝ հպար-

---

[110] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ռ. Հասան-Ջալալյանի 20/11—91 թվակիր նամակից:

տուիչյամբ է խոսում նրա արտաքին հմայքի և հոգևկան խրոխտության մասին[111]։ Այս ամենի տակ չի կարելի չնկատել նոր կաթողիկոսի գահակալության հետ կապված Եվանդուլյանի հույսերի տարայծումը։ Այո՛, աղգային-պահպանողականները հույսեր էին կապում Վասպուրականի բարձրադիա արծվի հետագա թռիչքների հետ և հուսախաբվում են կարճ ժամանակից։ Խրիմյան Հայրիկը, որ արդեն 80-ական թվականներին ինչ-որ չափով փոխել էր իր գործողությունների տակտիկան, կասեցնում է Վասպուրականում սկսված ազգատարական շարժումների ընթացքը և ապավինում խաղաղ զարգացման, տեղացիների հետ համագործակցության և ամենաշատը՝ ժողովրդին ինքնապաշտպանության պատրաստելու քաղաքականություն է վարում, ոչ մի կերպ չկարողանալով դիմագրել ցարիզմի՝ մնկը մյուսին հաջորդող հակահայկական ելույթներին։

Ազգային-պահպանողականները որոշակի և գործնական քայլեր էին սկսում կաթողիկոսից և նկատելով նրա անձեռնհասությունը, միմյանց հետ կիսում էին իրենց պատրանքների կործանման դառնությունը։

1894-ին Եվանդուլյանը գրում է Խրիմյանի մասին. «Կաթողիկոսի սրած գործերը միանգամայն պարմանքի և տխուր մտածմունքների պատճառ են դառնում։ ...Բոլորովին նա վայր դրեց կաթողիկոսության նշանակությունը։ Մի ձեռքով կթին խոհեմ կարդադրություն է անում, մյուսով աչնպիսի բաներ է անում, որ շվարած ես մնում։ Կարծես ինքն նա չէ հասկանում կաթողիկոսության նշանակությունը»[112]։

1895-ին, հայկական ջարդերի շրջանում, Եվանդուլյանը գրում է. «Կաթողիկոսը դոնն այս տեղի գործերի համար պիտի գնա մայրաքա-

---

[111] «Դուք և շատերը կարծում էին, թե Հայրիկը կաթողիկոս դառնալով կշարունակի յուր հին սովորությունները. բայց ո՛չ, այնպես վեհ է պահում իրան, այնպես «տղոգաններ» է բռնում որ поражает царственным величием... Այո՛, այսպես է վարպետ վանքի արծիվը։ Բարձրագույն հրովարտակի ընթերցման ժամանակ պալատում՝ կառավարչապետից սկսած մինչև վերջին հանդիսականը ձգված կանգնած էին, իսկ Հայրիկը աջ ձեռքը կողքին դրած озабоченный լսում էր։ Ով որ այս դիրքով լսեր կայսերական հրովարտակը, ամեն մեկին կպախարակեին, բայց Հայրիկին այնքան սազում էր այս դիրքը, ամենքը այնքան բնական և ո՛չ շինծու էին այս համարում, որ ոչ ոք չխոսեց, թեև ամենքը նկատեցին» (տե՛ս ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանդուլյանի 8/9—93 թվակիր նամակը)։

[112] Նույն տեղում, Գ. Եվանդուլյանի 10/10—94 թվակիր նամակից։

գար, ապա թե ոչ, կաթողիկոսը՝ կաթողիկոսություն այլևս չէ կարող անել»[113]: 1896-ին. «*Կաթողիկոսը հարցերի խորությունը կարծես թե չի ըմբռնում, որոշ կարծիքներ չունի, վաանորո այս կողմից այն կողմն է ընկնում. սարսափում եմ մտածելով, թե ինչո՞վ պիտի այս ամենը վերջանա*»[114]: 1903-ին, երբ վանքապատական դույքը սիստականացվում է և Խրիմյանը դիմում է հղում կայսեր, Ալ. Բաբայանը զայրույթի վերածելով նրա այդ քայլը, հետևյալն է գրում Նշյանին. *Հայրիկը աղերսագիր է գրել կայսեր՝ բացատրելով խնդրի բարդությունը, մանրամասնությունը և յուր անելանելի վիճակը: «Ասում են Հայրիկը յուր բանաստեղծական և գրամաղրական ոճերից հիացած՝ մեծ հույս է տածում այդ թղթի ազդեցությունից: Մինչդեռ թուղթը փոստին է հանձնված. ասում գիտեն, թե նա տեղ կհասնի*»[115] (ընդգծումները մերն են— Մ. Մ.): Պարզ է միանգամայն, որ ազգային-պահպանողական գործիչների համոզմունքով «դիվանագիտական» ոճի աղերսագրերի ժամանակն անցել էր: Նրանք կաթողիկոսից ակտիվ քաղաքական գործունեություն էին պահանջում, իրենք էլ չպատկերացնելով, որ Աթոռը չուներ նրանց ենթադրած քաղաքական դեմքը և իրավական որևէ կշիռ ներկայացնում կառավարական շրջանակներում:

Ազգային-պահպանողականների քննական վերաբերմունքը կաթողիկոսի և հոգևորականության գործունեության նկատմամբ կամ նրանց ջանքերը՝ ակնհայտ դարձնելու լուսավորական-կրթական մեծ գործոն, ոչնչով չեն պակասեցնում նրանց աշխարհայացքային սահմանափակության չափը: XIX դարի վերջորդ կեսում պաշտպանել այն դրույթը, թե հոգևորականությունից զուրկ մի ժողովրդի քաղաքական պրոբլեմները, նշանակում էր ապացուցել սոցիալական ծրագրի ժամանակավրեպ լինելը:

Գ. ԱՂՊԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՂՊԱՅԻՆ-ԱՂԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հայկական ազատագրական շարժումներին նախորդում են պատեղամական ժամանակների մեծ իրազարթնությունները: Արևմտյան Հայաստանի գործիչները պատրիարք Ներսես Վարժապետյանի գլխավորու-

---

[113] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի 18/8—95 թվակիր նամակից:

[114] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի 9/4—96 թվակիր նամակից:

[115] Նույն տեղում, Ալ. Բաբայանի 23/9—1903 թվակիր նամակից:

թյամբ նախապատրաստում էին տեղի հայության վիճակի բարվոքման հարցի քննարկումը՝ բարձր ատյաններում։ Հուզումները և սպասումների տագնապները բաժանում էին Արևելյան Հայաստանի մտավորականները, Թիֆլիսում հրատարակվող հայկական պարբերականների շուրջ համախմբված հասարակական տարբեր հոսանքների ներկայացուցիչները։ Կրիզոր Արծրունին խանդավառ համարներ էր հրատարակում՝ ռուսական զենքի փայլուն հաղթանակների մեջ տեսնելով հաջողության երաշխիքը։

Ռուս-թուրքական պատերազմը ոտքի է հանում և ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներին։ Մեր պատմական գրականության մեջ շատ է խոսվել Երևանի խմբակի գործունեության մասին, որի մասնակիցները հիմնականում ազգային-պահպանողականներ էին։ Չնայած դրան, դեռևս ամբողջ խորությամբ չի լուսաբանվել դարավերջի հայկական շարժումներին այդ հոսանքի ունեցած մասնակցության խնդիրը։ Հանդամանորեն խոսելով Արծրունու խմբակի գործունեության մասին, մեր պատմաբանները չեն նկատել ազգային-պահպանողական գործիչների աշխատանքի կազմակերպված բնույթը և տեղերի մեջ են թողել այն։ Ազգային-պահպանողական հոսանքը, տակավին, սկսած ռուս-թուրքական պատերազմի օրերից, մեծագույն ուշադրությամբ հետևում էր հայկական հարցի ընթացքին դրա տարբեր փուլերում։ Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարը՝ շուրջ քառորդ դար այս հոսանքի գործունեության ծրագրային հարցերից էր։

80-ական ԹԹ. նրանք իրազեկ էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ամեն ու դարձին, սերտ կապեր ունեին արևմտահայ գործիչների հետ, տեղյակ էին «Պաշտպան Հայրենյաց» խմբակի գոյությանը։ Նրանք հետևում էին 90-ական ԹԹ. Կարինի դեպքերին և իրենց թերթերի էջերում լուսաբանում Կարինի ձերբակալությունների հետ կապված փաստերը։ Արզ. Հովհաննիսյանը մասնակցում էր Արծրունու գաղտնի խմբակի աշխատանքներին, իր տանը նույնպես կազմակերպում ժողովներ ու հավաքույթներ։ Իբրև Ալաշկերտի գաղթականների օգտին հանդանակության ժողովող մասնաճյուղի անդամ, նա բարեգործական այդ պարտականությունը մեծ համբույթամբ համատեղում էր ազատագրական շարժումների նախապատրաստման գործի հետ։

Թիֆլիսի ազգային-պահպանողականները ծանոթ էին Մոսկվայի «Հայրենասերների միության» կազմակերպությանը, ձևերի տակ ունեին նրանց կոչերը։ Նրանք անկեղծ հուզմունքով էին հետևում Կուկունյանի խմբի ճակատագրին։ Սակայն հայ ժողովրդի ազգային-ազատագրական

պայքարի նկատմամբ նրանց տածած բուռն հետաքրքրությունը, որը Կովկասի կառավարչապետությանը հիմք է տալիս նրանց մեղադրելու սեպարատիստական ձգտումներ ունենալու մեջ, կապված է պատերազմական օրերի բարձրացրած հարցերի հետ: Ինչ վերաբերում է ռուս-թուրքական պատերազմի նախօրյակի նրանց տրամադրություններին, ապա դրանք բացահայտված են Եվանդուլյանի նամակներից մեկում, որը նա եղյանին է ուղարկում մասնավոր մարդու ձեռքով: Այդ նամակից երեվում է, որ ազգային-պահպանողականները դժգոհ էին Կովկասի հայերի վիճակից, այն բանից, որ նրանք ազգային-քաղաքական կյանք չունենալով, ենթակա են ցարիզմի դաղութատիրական քաղաքականության բերած փորձություններին: Նրանք ծանրաբեռնված են հարկերով, դրամ է Եվանդուլյանը այդ նամակում, զրկված են արդար դատաստանից, ժողովրդի ցավերը հասկացող վարչություն: Հայերը ինչ-որ չափով կաշկանդված են. նրանք չեն կարող ազատորեն ծավալել իրենց ազգային-մշակութային ձեռնարկումները և զարկ տալ դպրոցական գործին: Ազգային-պահպանողական հոսանքի Թիֆլիսի ղեկավարը տուրք տալով 60-ական թթ. «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի շուրջ համախմբված գործիչների մտայնությանը, այն միտքն է հայտնում, որ եթե հայերին վիճակված է մի օր ազատ շունչ առնել և դուրս գալ իրենց ծանր վիճակից, այդ պետք է լինի Արևմտյան Հայաստանում[116]:

Ռուս-թուրքական պատերազմի ստեղծած իրադրությունը, սակայն, միանգամայն նոր հեռանկարներ է բացում և հիմնովին փոխում ազգային-պահպանողականների գործելակերպը: Մեծապես խանդավառված սլավոնական ժողովուրդների մոտալուտ փրկության զաղափարով, նրանք՝ ռուսական զենքի օգնությամբ արդեն հնարավոր են գտնում հուսալու նաև արևմտահայերի քաղաքական ազատության ձեռքբերումը:

Ինչպիսի՞ սպասելիքներ ունեին նրանք պատերազմի ավարտից: Հարցի լավագույն լուծումը նրանք համարում էին հայկական ինքնավարության ստեղծումը Արևմտյան Հայաստանում, իսկ եթե այդ չհաջողվեր, ապա նրանք պատրաստ էին հաշտվել և սահմանադրության զաղափարի հետ (ինչպիսին տրված էր Լիբանանին): Պատերազմի ընթացքը և սլավոնական ժողովուրդների ազատագրումն ստույգ հեռանկարը այն երաշխիքն էին տալիս, թե վատթարագույն դեպքում՝ օսմանյան սահմանադրության ներքո (որի գոյությանը դեռևս հավատում էին), Հայաստանի

---

[116] Տե՛ս ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, 9. Եվանդուլյանի 18/12—77 թվակիր նամակը:

անկախության պահանջի ազդեցությամբ և եվրոպական երկրների հավանավորությամբ, հայերը պետք է առաջադիմեն, և այն էլ ոչ թե «օսմանյան պետության զանազան անկյուններում, այլ Հայաստանում, որն որ այսուհետև, հավատացած ենք, էլ լոկ պատմական և աշխարհագրական տերմին չպետք է լինի, այլ վարչական մի մասին, ինչպես Բուլղարիան, Լիբանանը և այլն»[117]: Բոլոր դեպքերում նրանք խորապես համոզված էին, թե պատերազմից հետո Հայաստանը պետք է դառնար վարչական անկախ մի մասին և դադարեր պատմական և աշխարհագրական տերմին լինելուց, ինչպիսին էր այն մինչ այդ: Ահա թե ինչու ազգային-պահպանողականները այդ օրերին հիմնադրին են ընդունում Աբդուլհերից սկրսված գաղթի լուրը: 1877 թ. սեպտեմբերին Կարապետ Եղյանը մի նամակով հրահանգում է Եվանդուլյանին՝ անել ամեն ինչ, որ «ազգի մնացորդը Հայաստանի մեջ մնա»: Այդ օրերին Կովկասում սկսվում է մի ամօրինակ շարժում, Թիֆլիսում և Երևանում ստեղծվում են գաղթականներին օգնող հատուկ հանձնաժողովներ, որոնք հանգանակություններ են կազմակերպում և զբաղվում գաղթականներին պատսպարելու, նրանց խնամքի և բուժման հարցերով: Այդ գործի մեջ ընդգրկվում են «Մշակի», «Մեղվի» և «Փորձի» շրջանակի գործիչները, Թիֆլիսի հայ մտավորականներից շատերը: Ազգային-պահպանողականների այդ օրերի գործունեության հիմնական ուղղությունների թեման մեծ հետաքրքրություն էր պատճառում: Հարկավոր էր ոչ միայն ահռելի կազմակերպել գաղթականական շարժումը, այլև հետ վերադարձնել իրենց հողը լքած հայ բնակիչներին:

Տեղի է ունենում Սան-Ստեֆանոյի պայմանագրի ձևակերպումն ու արարողությունը: Կ. Եղյանը 16-րդ հոդվածը համարում է կարևոր նվաճում: Բացվում էին գործունեության բոլորովին նոր հորիզոններ և Եղյանը Կովկաս է ուղարկում իր անսպառ հրահանգները: Այս պահին նա ամենայն շրջահայեցությամբ վերանայում է ազգային-պահպանողականների երթևեկի տեսակետները և դնում, որ իրենք քյուրմանցության մեջ մեն եղել արևմտահայերի, այսպես կոչված, բարեկեցության հարցում: Ամենայն հավանականությամբ նկատի ունենալով և Եվանդուլյանի վերը հիշված նամակի ոգին, Եղյանը՝ նրան ուղղած մի նամակում աղդարարում է. «Տարակույս չկա, թե այն կարծիքը, թե Տաճկաստանի հայերը փրկանիկ վիճակի մեջ են և թե նոցա համար բնավ մտածելու

---

[117] ՀՊՊՄԱ, Եղյանի ֆոնդ, Եվանդուլյանի 18/12—77 թվակիր նամակից:

հարկավորություն չկա, իմ աչքում միանգամայն անհիմն ու նախապաշարյալ է. նոքա ողորմելի, անապահով և ջնջվելու վտանգի մեջ են։ Այդ բանը ի նկատի ունենալով հարկավոր էր, անշուշտ, օգուտ քաղել ներկա քաղաքական հանգամանքներից և հայոց համար այնպիսի արտոնություններ ստեղծել, որ ապագայն ունենալու հույս լինի»[118]։ Սա գործողությունների նոր ծրագիր էր։ Հատակորեն տեսնելով արևմտահայերի «ջնջվելու վտանգի մեջ» գտնվելու հանգամանքը, ազգային-պահպանողականները կենտրոնացնում էին բոլոր ուժերը՝ փրկելու համար այդ ճակատը։

Այդ օրերին պատրիարքի հատուկ հանձնարարականով Ռուսաստան են ժամանում Խորեն Նարբեյ և Մ. Իզմիրլյան եպիսկոպոսները։ Առաջինը պետք է տեսնվեր Ռուսաց Թագավորի, իսկ երկրորդը՝ կաթողիկոսի հետ։ Հուսադրված այն բանից, որ Ալեքսանդր II-ը Սան-Ստեֆանոյում համաձրանքով էր արտահայտվել հայ ժողովրդի մասին, Ներսես Վարժապետյանը նրանից խնդրում էր առաջիկա կոնգրեսում պաշտպանել իրենց առաջարկները։ Կաթողիկոսին պատրիարքը խորհուրդ էր տալիս պաշտոնական մի դրությամբ արևմտահայության համար կոնգրեսից խնդրել ինքնավարություն կամ գեթ Սահմանադրություն, ինչպիսին տրված էր Լիբանանին։ Ու մինչդեռ Պետերբուրգում Եզյանն ուղեկցում էր Նարբեյին, նրան խորհուրդներ տալիս, թե պալատական գործիչներից ում հետ է հարկավոր տեսնվել և ինչ խոսել, (իսկ Սահնազարյանը հոգում էր նրա ծախքերը), Թիֆլիսի գործիչները շրջապատել էին Իզմիրլյանին։ Վերջինս մեծ հույսեր էր կապում ռուսական պետության միսիայի հետ և ենթադրում էր տեսնել ինքնավար Հայաստանի գոնե արշալույսը։ Այդ պատրանքները ոգեշնչում են և Եվանգուլյանին. նա հավատում է, որ այս անգամ արդեն Հայաստանը քաղաքական մի ամբողջություն կկազմի, ուստի առաջարկում է բուն Հայաստանում՝ Կարինում հիմք դնել ազգային հաստատություններին։ «Շատերը շատ շնորհակալ կլինեին ռուսաց մարդասեր քաղաքականությունից, եթե այդ բանին նա նպաստեր»,— գրում է նա։

1877-ի երկրորդ կեսին և 1878-ին Թիֆլիսի ու Երևանի հանձնաժողովները զուգարներ են հանգանակում, բաշխում ալաշկերտցի կարոտյալներին, միայր զումարը պահպանելով նրանց վերադարձի ծախքերը հոգալու համար։ Եվանգուլյանը դիմում է Սահնազարյանին, խնդրում եզ-

[118] ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Եզյանի 10/5—1878-ի նամակի սևագրությունից։

յանին՝ ազդել Թիֆլիսի հանձնաժողովի կոմիտեի նախագահի վրա, որպեսզի դաղթականներին կամ վերադարձնեն հայրենիք և կամ նրան այդ հնարավոր չէ, նրանց բնակեցնեն Հայաստանի բարձրադիր գավառներում: Նա պայքարում էր այն առաջարկների դեմ, որոնք խոսում էին հայերին Շամախի կամ Կուբան ուղարկելու մասին: Ելևանդուլյանը Եղյանին խորհուրդ է տալիս կաթողիկոսի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել, որպեսզի նա իբրև ազդեցության պարագլուխ, ռուսական արքունիքի ու պատրիարքի միջոցով հիշված հարցի մասին բանակցի Բ. Դռան հետ: Այդ ջանքերը հասնում են շոշափելի արդյունքի: Բացառությամբ մի քանի հարյուր ընտանիքների, որոնք ցանկություն են հայտնում բնակություն հաստատել Երևանի նահանգում, մնծ թվով գաղթականներ վերադառնում են հայրենիք:

Ազգային-պահպանողականների անելիքները դրանով չէին սպառվում. Թիֆլիսի կոմիտեի հանգանակած գումարներից 10000 ռ. դեռևս մնում էր և հարկավոր էր տնօրինել. վճռվում է 8000-ը տրամադրել Հայաստանի դպրոցների բարեկարգմանը, իսկ 2000-ով Կարինում մի օրիորդաց դպրոց բացել: Այդ միտքը տալիս է Եղյանը: Նա անհրաժեշտ է դանում նյութապես օգնել «Արարատյան» և մյուս կրթական կազմակերպություններին: Ելևանդուլյանը ողջունում է այդ առաջարկը. «Մեր ամենանարբադան պարտականությունը պիտի լինի ամեն կերպ աշխատել տաճկական Հայաստան գումարներ ուղարկել՝ մինչև անգամ ի վնաս Թիֆլիսի» (ընդգծումը Գ. Ելի-ինն է)[119]:

1878 թ. հոկտեմբերին Եղյանը Արևելյան Հայաստանում ճանապարհորդելու նպատակով գալիս է Թիֆլիս, բայց հանկարծ վճռում է հրաժարվել իրեն սպասող «վայելչություններից և մխիթարություններից» և վերադառնում է Պետերբուրգ: Նոյեմբերի 2-ի թվակիր նամակով նա բացատրում է իր վճռի շարժառիթը. «Հայկական խնդիրը և Տաճկաստանի հայոց ապագա վիճակը, որոնց հետ թե ծանոթանալ և թե որևիցե կերպով նպաստել, այսօր կարելի է միայն Պոլսում»[120]: Նա մեկնում է Կ. Պոլիս. դժվար չէ կռահել, որ այդ գաղափարը նա հղանում է Թիֆլիսի համախոհների շրջապատում:

1879 թ. տենդագին նախապատրաստություններ մի շրջան էր: Կ. Պոլսից Թիֆլիս է գալիս դոկտոր Շիշմանյանը (Մերենց), Կարինից՝ վա-

---

[119] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Ելանդուլյանի 4/12—78 թվակիր նամակից:

[120] ԳԱՔ, Կ. Կոստանյանի ֆոնդ, վավ. 790:

ճառական նշիկյանը. Կարինից սպասում են Հարություն Բաստուրմաճյանին... պրոյցները պատվում են Հայաստանում դպրոցներ բացելու հարցի շուրջը. հայ երիտասարդներն իրենց ծառայությունն են առաջարկում՝ ուսուցչության մեկնելու Արևմտյան Հայաստան: Կամսարականը Եվանգուլյանին գրած նամակով խնդրում է Եղյանի աջակցությունը՝ Կարինում մի դպրոց բացելու: 1879-ի ամռանը Ս. Մանդինյանը և Նշ. Մարգարյանը ուղևորվում են Կարին՝ աշխատելու տեղի ազգային ուսումնարանում: Այնտեղ է մեկնում և Շահնազը... Այս մոտ հարաբերությունները գնալով ավելանում՝ են և տա ասուված, որ այսպես լինի. «Մեզ համար այժմ Կարինը մեր ամենամոտիկ և մոտիկ քաղաքն է», գրում է Եվանգուլյանը[121]:

Անցնում են օրեր: Սամսոնարյան դպրոցի մասին խոսվում էր, բայց դեռևս վճռական քայլեր չէին արվում: Եվանգուլյանն առանց երկնչելու իր բարեկամների հեղինակությունից, մի ամսակով հանդիմանում է նրանց: Մի՞թե նրանք չեն հասկանում, որ մեկ օր առաջ բացված դպրոցը այժմ մեկ տարվա օգուտ կտա. հարկավոր է շարկ տալ ազգային կյանքին, գրում է նա, «Չէ՞ որ центр тяжести-ն հիմա փոխվում է Կ. Պոլսից Հայաստան: Ազգային գործերի կարգադրությունը այնտեղ, տպարան և լրագիր հիմնելը, ազգային ժողովին կանոնավոր կերպարանք տալը, էլ չեմ ասում մի մեծ ուսումնարան հիմնելու մասին,— ահա այն բոլոր հաստատությունքը, որոնց միջոցով մենք կարող ենք ամբողջ եվրոպական մեծ պետությանց արդար ուշադրությունը գրավել»[122]: Եվանգուլյանը հակահարձակման է անցնում. ինչո՞ւ են ուրեմն հապաղում... Մի՞թե չեն վախենում մահից, չէ՞ որ Սամսոնարյանի մահվան դեպքում նրա ժառանգները կվիճարկեն կտակը և Եղյանի իրավունքները[123]: Վերջապես չէ՞ որ ինքը՝ Եղյանն էլ ապահովագրված չէ ոչ մահից, ոչ հիվանդությունից:

1880 թ. սկսվում է վասպուրականի սովի արհավիրքով: Կամսարականը Կովկասի հայ մտավորականության ուշադրությունը հրավիրում է այդ փաստի վրա, իսկ հետագայում շնորհակալություն հայտնում Կովկասի հայերին և թերթերի խմբագրություններին, վանի սովյալներին հասցրած նրանց օգնության համար: Հետագա նամակներում նա պատ-

---

[121] ՀՊՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 4/21—78 թվակիր նամակից:

[122] Նույն տեղում, 27/7—79 թվակիր նամակից:

[123] Հայտնի էր, որ Եղյանը Սամսոնարյանի կտակակատարներից մեկն էր լինելու:

մում էր Վանում բացված որբանոցի և նորաստեղծ հիվանդանոցի մասին, խնդրում օգնել Խրիմյանին՝ Վանում գործնական երկրագործական դպրոց հիմնադրելու համար: Ամիսներ անց, նոյեմբերի 20-ին, Կամսարականն արդեն ոգևորությամբ պատմում էր Առաքելոց վանքում բացված երկրագործական ուսումնարանի և Վարագա վանքում Խրիմյանի հիմնադրած երկրագործական դպրոցի մասին:

1879-ի վերջին Մանդինյանը վերադառնում է Կարինից: Նա տապնապալի լուրեր էր բերել: Մուշի հարյուրավոր հայկական գյուղերը նախկինի նման ճնշվում էին քրդերի կողմից, որոշ գյուղեր սկսել էին զինվել և ապահովագրել իրենց՝ քրդերի հարձակումներից: Մանդինյանը խոսում էր հայերին զինելու անհրաժեշտության, ապագա շարժումների առնչության մասին: Այդ շրջանում էլ հենց, ցարական գրաքննության մամուլի հայ օրգաններին արգելում է հայկական շարժմանը նվիրված լուրերի արտատպումը «Голос» լրագրից: Թերթերին արգելվում է խոսել արևմտահայերի ինքնորոշման հարցի մասին: Եվանգուլյանին սաստիկ զարմացնում էր այն, որ հայկական շարժումը, «որ վերաբերում է միմիայն տաճկահայ Հայաստանին (կարող ամ ստրա մեջ Ձեզ հավատացնել)» և դրա հետ կապված հարակից հարցերի քննարկումը զայրացնում էին ցարական պաշտոնյաներին: Ինչո՞ւմն է բանը, հարցնում է նա Եղյանին, ինչո՞ւ են իրար հակասում Պետերբուրգի դիվանագիտությունը և տեղական կառավարությունը («եթե միայն ես չեմ սխալվում Պետերբուրգի մասին»). Եվանգուլյանը, հարկավ, սխալվում էր «Պետերբուրգի մասին»: Իրականում բավական ժամանակ էր հարկավոր, որպեսզի Կովկասի ազգային-պահպանողականները և լիբերալները հասկանային ցարիզմի քաղաքականության նոր ընթացքը: Մինչ այդ՝ նրանք գործում էին մեծ չափով ապավինած այդ քաղաքականության երբեմնի բարյացակամ դրսևորումներին: Անդամ Եվանգուլյանը պատմում էր, թե ինչ ակնկալություններ ունեին հայ գործիչները, կապված պետականի խոշոր պաշտոնյա, հայազգի Լորիս-Մելիքովի հետ, որի կարիերան այդ օրերին շլացնում էր ոմանց. «Մեր լուսավորյալների օպտիմիստ մասը հույս է հայտնում,— գրում է Եվանգուլյանը,— գուցե Կոմս Լորիս-Մելիքյանը Տաճկահայ Հայաստանի համար խաղա կոմս Կապոդիստրիայի դերը, որ սա խաղաց Ալեքսանդր Ա-ի ժամանակ Հունաստանի համար: Ո՞ վիտե»[124]: Եվ մինչդեռ օպտիմիստները ապատում էին, Արևմտյան

[124] ՀՊԿՊՄ., Եղյանի ֆոնդ, Կ. Եվանգուլյանի 14/3—80 թվակիր նամակից:

Հայաստանում հայկական շարժումները դնալով ավելի էին ձևավորվում։ Մասնավորապես Վասպուրականում «բնական կերպով» ծավալվող շարժումները հոկտեմբերին ուշադրություն են դրավում։ «Голос» և «Մշակ» թերթերը խոսում են այդ մասին, Երևանի հայ գործիչները լրջորեն նախապատրաստվում են օժանդակել արևմտահայերին։ Սեպտեմբերին Ելանդուլյանը ոգևորված պատմում է Իզդիրում կազմակերպվող համավորական խմբերի մասին։ Լուր է ստացվել, որ Երևանում նույնպես շարժում կա, գրում է նա, «և ամեն կողմից վոլոնտյորներ են պատրաստվում»։ Համաժողովրդական ապստամբական շարժման սևմին Ելանդուլյանը հետևյալ միտքն է հայտնում. «Եթե արդարև ապստամբությունը ուղղական հանգամանքներն են ծնել, իհարկե սա բնական բան է և համակրանաց արժանի, բայց եթե դրսից է առաջ բերած, վա՛յ մեզ։ Ինչևիցե, եթե ապստամբությունը կա, պիտի օգնել, այսպես են կարծում այստեղի պանիսլամողականները»[125] (ընդգծումը մերն է— Մ. Մ.)։ Այս համոզմունքով պիտի բացատրել և շարժման ծավալումը Թիֆլիսում։ Դաղթականներին օգնող մանաժողովի նիստում վճռվում է նախկինում հանդանակված և դեռևս չծախսված միջոցները տրամադրել այս գործին. կարճ ժամանակից 2000 ռ. ուղարկվում է Իզդիր, 4000 ռուբլի՝ Երիմյանին։ Ելանդուլյանն այս օրերին գրում է. «Մշակի» խմբագրության մեջ, այլև «Փորձի», փողեր են ուղարկվում հանուն և հօգուտ հայկական շարժման, բայց տեղվոյս կառավարությունը արգելից թե՛ շարժման մասին գրելու, և թե՛ նվիրատվությանց մասին հրատարակելու»։ Նա հայտնում է նաև, թե Երևանի նահանգապետը կամավորական շարժման հարցով երբ ցուցում է ստացել փոխարքայից, վերջինս պատասխանել է. «следить, но не преследовать»։ Հայ գինվորականները ուսումնասիրում են «մեր շարժման» ստրատեգիական հանգամանքները, շարունակում է Թիֆլիսի «կենտրոնի» գեկավարը, սակայն նրանք մեծ սխալ են համարում շարժումն սկսել՝ «չունենալով երանց հետևից ռուսական տերության հաստատ օգնությունը, որովհետև նոցա խոսքով, տաճկական սովարիները կոչնչացնեն մեր կամավորներին, և նոցա հետո էլ քրդերը տակն ու վրա կանեն հայոց գյուղերը։ Հետաքրքիր է Ձեր կարծիքը սորա մասին, և թե ինչ պիտի անել այս խառն հանգամանքներում»[126]։

---

[125] Նույն տեղում, 16/9—80 թվակիր նամակից։

[126] Նույն տեղում։

Բնհրաւդյանը, որ ինչ-որ չափով կապավորի դեր էր կատարում Թիֆլիսի ու Պետերբուրգի կենտրոնների միջև, Եվանգուլյանին հայտնել էր, թե կոմս Իգնատևը և Լոռիս-Մելիքյանը գտնում են, որ հայկական շարժումը հարկավոր է: Եթե այդ այդպես է, հարցնում է Եվանգուլյանը, Կովկասում ինչո՞ւ են արգելում խոսել շարժման մասին: «Կարծում եմ, որ մինչև մենք իրավունք չունենանք ազատորեն գործելու, ոչինչ չենք կարող առաջացնել, դուցե և վնասենք գործին», մերկացնում է նա[127]:

Հոկտեմբերին, Ավ. Բարայանի ձեռքով ստացվում է Եղյանի պատասխան նամակը: Եվանգուլյանը գրում է, թե իրենք համաձայն են նրա նամակի բոլոր դաղափարներին. ըստ երևույթին Եղյանը կարգադրում էր Թիֆլիսում «կազմել մի կենտրոնական գործադիր հանձնաժողով, որ ընդհանուր ծրագիր մշակի և հարկավոր պատրաստություններ տեսնի»: Եվանգուլյանը հարցը դիտում է ավելի լայն շրջանակների մեջ:

«Բոլոր Ձեղ հայտնի տեղեկություններից դուք տեսնում եք,— գրում է նա,— որ մի շարժում լինելու է տեղական Հայաստանում, բայց որ այդ շարժումը մեծամեծ վնասներ չտա ազգին և հայկական խնդրի լուծվելուն, հարկավոր է նախ, որ ամեն մի հայն, թե այն կողմնացին, թե մեր կողմնացին, գիտենա, որ իրան տեսից հզոր ուսաց օգնություն կա և ուսաց ամենազորմած կայսեր համակրություն (թեև զաղտնի)»: Ուստի նա կարծում է, թե անհրաժեշտ է ամ հարկն է՝ տեղյակ պահել, որ «հայերը գործիք չեն դառնում զանազան նպատակներին, այլ որ հանդամանքները բանը բերել են և հասցրել են այնտեղ, որ հայերի և ուրիշների շահերը միանում են: Պետերբուրգում և՛ մարդիկ կարող են գտնել հիշյալ նպատակը իրագործելու համար և, որ դլխավորն է՝ առանձ և գաղտնի դործունեություն սորա համար»[128]:

Այս էր պատճառը, որ նա հնարավոր չի համարում Թիֆլիսում գործադիր հանձնաժողով ստեղծել: Այդ բանի համար անհրաժեշտ էր ունենալ մի ստրատեգ դինվորական, որը գնար Հայաստան և ուսումնասիրեր տեղի առանձնահատկությունները, ճշտեր հայկական ստրքի պատրաստվածության աստիճանը տարբեր վայրերում: Նա գտնում էր, որ ավյալ միտյալի համար պատրաստ գործիչները Պետերբուրգում են գտնվում և այս գործը կարող կլինեն իրականացնել՝ միմիայն Պետեր-

---

[127] Նույն տեղում, 26/9—80 թվակիր նամակից:

[128] Նույն տեղում, 29/10—80 թվակիր նամակից:

բարդի թուլությունը դեպքում։ Առհասարակ Ելանդուլյանը տագնապի տեղիք ուներ։ «Ամենքին սարսափի մեջ է պղտոր այն, ինչ որ պատրաստվում է և ինչ որ լինելու է,— գրում է նա։— Հազիվ թե մեր մեջ մարդիկ գտնվեն, որ գործի դեկը վերցնեն և կառավարեն։ Դեռ շատ անպատրաստ ենք։ Չէ՞ որ հայկական խնդիրը դեռ երեք ամյա ևս չէ։ Քանի որ հայերը անպատրաստ են այսպիսի վսեմ գործի համար, այնքան հետևանքները զուցե վատ լինեն»[129]։ Անպատրաստությունը նա տեսնում է այն բանի մեջ, որ բոլորն իրենց սպասելիքները կապում են Թիֆլիսի հետ, մինչդեռ «այստեղ խոսողներ շատ կան, իսկ գործող՝ ոչ»։ Հետաքրքրական է, որ Ելանդուլյանը խնդրում է այս նամակի պատասխանն ուղարկել Ալիշի հասցեով։ Թիֆլիսի քաղաքական մթնոլորտն արդեն վախեցնում էր նրան։ Եվ չնայած դրան, Թիֆլիսը գործում էր։ Գործում էր՝ արևմտահայության ղեկավարների հետ ձեռ-ձեռքի։ Փոստային ճանապարհով Ալֆեոիք Բաբայանը նամակ է ստանում Վարժապետյանից. նրա լակոնական ոճով գրած մի միտքը Բաբայանը քաղվածաբար ուղարկում է Եղյանին՝ այն շատ հարազատ գտնելով Եղյանի 29/10—80 թվակիր նամակում արտահայտած մտքերին. «Մենք խաղաղության զինվոր եմք, բայց երբ պետք ըլլայ, պետք է որ ինքզինքնիս պաշտպանեմք, բանզի մեռնելն եմք մարդու պես պատուով մեռնելու է» (ընդգծումը Վարժապետյանինն է)։ Արեմն, հարում է Բաբայանը՝ «Ամեն դեպքի համար անշուշտ պետք է պատրաստություն տեսնել»[130]։

Այդ օրերին Բաբայանը Եղյանին հաղորդում է Թիֆլիսի և Երևանի նորություններ։ Նրա նամակից հայտնի է դառնում, որ հոկտեմբերի վերջին պաշտոնական այցով Թիֆլիս ժամանած Գաբրիել Նորատունկյանը հանդիպումներ է ունեցել տեղի հայերի հետ[131]։ Նախկինում «Արարատյան ընկերության» նախագահ Նորատունկյանն այդ պահին սովելոց հանձնաժողովի անդամ էր և հորդորում է Թիֆլիսի գործիչներին, որ արձագանքեն պատրիարքի մասնավոր նամակներին։ Հայ հարուստները չեն ներկայանում ժողովին, որովհետև նրանց հայտնի էր դարձել, որ փոխարքան կասկածով է նայում այդ հանդանակությունների։ «Ժողովին շատերը չեկան, որովհետև Ազատիրյանցից լուր դուրս

---

129 Նույն տեղում։

130 Նույն տեղում, Ալ. Բաբայանի 18/11—80 թվակիր նամակից։

131 Նորատունկյանը տաճկական կողմից սահմանները որոշող հանձնաժողովի անդամ էր, որ իբրև քարտուղար 3 ամիս հանապարհորդում է Հայաստանում, ապա ընդունվում Թիֆլիսի փոխարքայի կողմից և իբրև տաճկական պաշտոնյա՝ շրջանչան առանում։

նկավ, թե մեծ իշխանն ասել է իրեն, թե սուլթանց համար հավաքված փողը հայերը զենք առնելու են գործ ածում, այդ բանին պետք է արգելք դրվի և այլն։ Չնայելով այսպիսի անհաջող լուրերի, ժողովը պատրիարքին այնուամենայնիվ պատվեց և նրա նամակներին 10 հազար ռուբլի բատրաքրությամբ պատասխանեց։ Նորատունկյանն ասում էր,— շարունակում է իր հաղորդումը Բաբայանը,— որ ամեն տեղ, ամենն գյուղ, ուր նա եղել է, մեծ ոգևորություն էր նկատում և ժողովրդի պատրաստվելը տեսնում (ընդգծումը Բաբայանինն է)։ Նա կարծում է, որ պատրիարքը նպաստում է այդ պատրաստությանը[132]... բայց ամենևին չի ուզենա, որ Ռուսաստանի հայերի կողմից յանգէտս շարժում սկսվի։ Թիֆլիսում մի ընկերություն կարող է կազմվել այդ Բաբվա մարդասիրական ընկերության պես, մի ընկերություն, որ գործի երեսը լինի, աստառը՝ ուրիշ։ Տեսնե՞նք, դուցե հաջողվի»[133] (ընդգծումը Բաբայանինն է)։ Նորատունկյանի հետ խորհրդակցում են և շարժման գլխավոր կենտրոնն ընտրելու հարցի շուրջ։ Նա առաջարկում է, որ կենտրոնը լինի Կ. Պոլսում, և կամ՝ եթե Թիֆլիսի գործիչները կուզենային — Թիֆլիսում։ Ի՞նչ է իրենից ներկայացնում Թիֆլիսը, բացատրում է Բաբայանը, ի՞նչ քաղաքական գործի կենտրոն կարող է այն լինել և ովքե՞ր են Թիֆլիսի ուժերը։ Կովկասի գավառական քաղաքներում և Թիֆլիսում կարելի է ստեղծել միայն նպաստիչ խմբեր, առավել ճնշհաս է Երևանի խումբը։ Բաբայանի այդ կարծիքը հաստատվում է փաստերով. ահա թե ինչ է նա հաղորդում Երևանի խմբի գործերի մասին. «Անցյալները Ռ[ուբեն] Զ[ալալյանը] Երևանից նկած էր հատկապես իմանալու, թե այստեղ փոքրիշատե կազմակերպյալ մի բան կա՞, որի հետ յուրյանց խումբը հարաբերություն ունենա և այլն։ Ի՞նչ է շինում իրանց խումբը (6—8 հոգի). ոմնեն մի 6—7 հարյուր ռուբլի. առնում են զենք և հավատարիմ մարդ-

---

[132] 1880-ի հոկտեմբերի 18-ին Կ. Պոլսի դեսպան Նովիկովի հանձնարարությամբ դնդապետ Ֆիլիպովը հանդիպում է ունենում պատրիարքի հետ և հարցնում նրա կարծիքը՝ կովկասահայերի Թուրքիա անցնելու նպատակի և առհասարակ հայկական շարժման մասին։ Ներսես Վարժապետյանը չի թաքցնում շարժման առկայության փաստը, և հայտնում է, որ ինքը ևս զսպում է երկու հատվածի իրեն դիմող «էնտուզիաստներին», բայց անհավանական չի համարում, որ շարժումը մի օր կրռկնվի, երբ «ներկա ազատներից առաջացած տառապանքները ստառնն ժողովրդի համբերությունը» (տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 463—465)։

[133] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ա֊վ. Բաբայանի 18/11—80 թվակիր նամակից։

կանց ձևով վաճառում Վասպուրականում հայերին, առանց շահի։ Ասում է, որ առնողներ շատ կան և դինը ճաղդ վճարում ևն։ Այս իսկական գործ է, որ հանկաստ միջոցներով, առանց աղմուկի կատարվում է. Երևանի խումբը լիակատար համակրության արժանի է (ընդգծումները Ա. Բ.-ինն են)[134]։

Թիֆլիսում դեռևս «переливают из пустого в порожнее»,— շա-

---

134 Մեկ ամիս անց՝ այս հարցերի մասին անձամբ Եղյանին գրում է Երևանի խմբի գործունյա անդամներից մեկը՝ բժիշկ Հասն Տիգրանյանը. մեջ ենք բերում այդ նամակից մի քաղվածք. «...Իմ նամակներից Ձեզ հայտնի է, որ մեր բոլոր քաղաքների ժողովուրդը սկզբում պատրաստվում էին և աշխատում էին զենքով պաշտպանել տաճկահայոց իրավունքները. այդ ձգտումը և շարժումը շարունակվեց, մինչև որ Ձիշտ լուրեր ստացանք Հայրիկից և Պոլսից։ Հայրիկը մեզ գրում է. «Հանդիստ մնանք առժամանակ, մինչև որ դեպք լինի, բայց պետք է անդադար և ամենայն զորությամբ աշխատենք, ամենայն բոլոր պատրաստ լինել»։ Այդ միտքը մենք բացատրում ենք հետևյալ կերպիվ՝ որ մեզ հարկավոր է զինակրություն։ Այս գործն առաջ տանելու համար պետք է աշխատենք զենք տարածել ժողովրդի մեջ։ Եթե այդ զենքը հարկավոր լինի գարունքը, գյուղացիքը փայտերով չեն պատերազմի տաճկի հետ, իսկ եթե խաղաղություն տիրե Փորր Ասիայում, այդ զենքը կգործադրվի ինքնապաշտպանության համար քուրդերի դեմ, և այդ կերպով՝ մենք առժամանակ հանգամանքներին համաձայն, հասած կլիներնք մեր նպատակին, նրանով, որ ժողովրդին զինակրության կսովորեցնենք. դուք ինքներդ գիտեք, որ զինակիր ժողովուրդը շլինքը չի ծռի, և հարմար դեպքում անպատրաստ չի լինի, ո՞վ գիտե ե՞րբ, ի՞նչ կպատահի, բայց ամենայն դեպքում հրացանը ձեռքին պատրաստ ունենալը օգտակար բան է։

Այս է Երևանի և Թիֆլիսի կարծիքը, նմանապես և մյուս քաղաքների, այս պատճառով մտադիր ենք զենքի դուքան բանալ Երևանում մի վաճառականի անունով, որ անձնատուր մարդ է և զենքը կամաց-կամաց անցկացնել Տաճկաստան և ծախել այնտեղ, և այս կերպով աբարտոններ անել։

Տաճկաստանից այս երկու օրերս ուրախալի Ձիշտ լուրեր են գալիս մեզ, որ սպասելի չէր։ Մի պաշտոնական ճանապարհորդ (հայ), որ Կ[ոստանդին] Կ[ամսարականի] հետ ճանապարհորդել է բոլոր ամառ Հայաստանում, ասում է, որ հայերին ճանաչել չի կարելի, նրանք գլուխները բարձր են պահում, անվախ են և եթե իմանան, որ կարելի է զենք ձեռք բերել, փողը չեն խնայի և ահագին ցանկություն ունեն զենք ձեռք բերելու։ Զենքի դուքան բանալու համար, իհարկե, պատրաստ փող է հարկավոր, մենք կամենում ենք նվիրատվություններով հավաքել, բայց բավարար չի լինի, ինձ խնդրեցին դիմել Ձեզ, որ մոտավորապես 3000 մանեթ փոխադարձաբար կամ մի ուրիշ պայմանով տաք մեր հանձնաժողովին, եթե կամենաք նրաշխավորությամբ, հաստատ նրաշխավորներ էլ ունենք, որոնց դուք ճանաչում եք, որոնք կայքի տեր են։ Խնդրեմ այս հարցի պատասխանն շտապով ուղարկել, որովհետև մինչև գործ սկսելը, իրավունք ստանալը և այլն, բավական ժամանակ կկորցնենք, գոնյա ինչ անելու ենք, շուտով սկսենք, որ անմեղ տեղ ժամանակ չկորցնենք» (տե՛ս ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Հասն Տիգրանյանի 26/12—80 թվակիր նամակից)։

րոնակում է Բաբայանը,— իրարուց բոլորովին բաժանված, իրար մարդկային հարգ չճանաչող, իրար չհավատացող կրթյալ վերիտասարդներ— ի՞նչ ընդհանուր գործ կարող են միասին տեսնդով կատարել: Հիմար լրագիրների վեճը ամեն բանի մեջ խցկվում է: Մի երկու անգամ ինձ մոտ, Եվանգուլյանի մոտ հավաքվեցանք, այս կամ այն պարոնը, որ պետք են գործի, չեկան, քանզի մեր տանն էր: Վերջը Դր. Արծրունու մոտ հավաքվում է մի քանի (34) մարդիկների խումբը, որ իբր այդ պատրաստության համար ծածուկ աշխատող խումբ է Թիֆլիսում, այդ խմբի մեջ են մեր կողմից Աբգ[արը] և Կ. Բհհբ[ուդյանը]: Սոքա մեծ բան պիտի՞ կարողանան անել՝ իբրև կենտրոնական խումբ, չգիտեմ (ընդդեմ ծամը իրենն է): Այսքան գիտեմ, որ առայժմ ոչ մի կոպեկ դրամ չունեն, թեև Ռուբենին քաջալերեցին, հույսեր տվին և այլն»[135]: *Բաբայանը մասնավորապես դժգոհում է տեղի կապիտալիստներից, որոնց մասին գրում է, թե վերին աստիճանի վախկոտ են և «առանց հավատի դեպի սուրբ գործը»:*

Եվանգուլյանը նույնպես 1880-ի վերջին տնդագին օրեր էր տպրում: Նրա նամակները օրագրային նշումների բնույթ էին կրում և Եղյանին ծանոթացնում էին Թիֆլիսի «կենտրոնի» և, սրա միջոցով՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Ախալքալաքի հայության խանդավառության ու ձեռնարկումների հետ: Ախալքալաքում և Ախալցխայում ոգևորությամբ, դալի ու զուռնայով են գնում դեպի տաճկական սահմանը, գրում է նա, «իբր թե Հայրենիքը ազատելու»: Հոկտեմբերի 26-ին Եվանգուլյանը հաղորդում է, թե հայ կամավորներին խրիմյանը հետ է վերադարձրել Ուչքիլիսե վանքից: Նույն նամակում նա պատմում է «Աբգարի տանը» մի քանի անգամ տեղի ունեցած հավաքների մասին. իրենք գրուցել են Ներսես Վարժապետյանի պատվիրակ, Տիգրանակերտի առաջնորդ Փիլիպոս եպիսկոպոսի և սովելոց մասնաժողովի անդամ Գաբրիել Նորատունկյանի հետ: Պարզվում է, որ Փիլիպոս եպիսկոպոսը ուղղ դիմելու նպատակով էր Կ. Պոլսից եկել Կովկաս: Նա հայտնում է, որ Կ. Պոլսից Կարին է ուղարկվել մի «գյուղատնտեսական» մեքենա, որ փամփուշտներ է պատրաստում: Նոր կազմակերպված հեղափոխական ընկերությունը և սովելոց հանձնաժողովը հանդանակություններ պետք է կազմակերպեն, հասկանալի է՝ այլ նպատակներով: Եվանգուլյանը հայտնում է, թե իրենք ասել են Նորատունկյանին, որ հանգանակությունը

---

135 ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ա.վ. Բաբայանի 18/11—80 թվակիր նամակից:

էֆնկա չի տա, բայց «երե այն կողմերը բաներ սկսվի, հույս ունենք հարյուր հազարների. մարդոց և սպայից մասին խոսք չկա, որ խիստ շատ կլինենն»[136]: Եվանգուլյանը հայտնում է նաև, որ Կ. Պոլսի և Խրիմյանի հետ հաստատուն կապեր են ստեղծված, ընդ որում՝ Խրիմյանի հետ նշանագրերով են խոսում (ուխտադնացությոն վարագա վանքը և սուրբ Կարապետը, տոն կատարելը, նախատոնեք և այլ տերմիններ փոխարինում են այլ հասկացողություններին): Պոլսեցիները հետաքրքրվում են, պրոմ է նա, թե ռուսական բանակում քանի հայ մասնագետ է ծառայում (հրետանավոր, բժիշկ, ինժեներ և այլն): Եվանգուլյանը հարցնում է՝ արդյոք Սանասարյանը չի՞ կամենա Մուսսունի մեջ պահած հրացանների համար նշանակած գումարը հանձնել Երևանի մասնաժողովին և ապա՝ հարցնում է, հնարավոր չէ՞ Պետերբուրգում զենք գնելու իրավունք ստանալ և զենքը ուղարկել Երևան ու Ալեքսանդրապոլ (որտեղ նույնպես ծրագրված էր մասնաժողով ստեղծել):

Եվանգուլյանը նոյեմբերի 8-ի թվակիր նամակը Եղյանի պահանջով ուղարկում է մասնավոր մարդու միջոցով: Այս նամակում նա հանգամանորեն հաշիվ է տալիս Երևանում և Թիֆլիսում շարժման մեջ ընդգրկված մարդկանց մասին, ընդգծելով այն փաստը, որ շարժմանը մասնակցում են և՛ արևմտահայերը, և՛ արևելահայերը: Արդեն իբրև կատարված փաստ, նա հայտնում էր, թե փոխարքան պաշտոնապես հրավիրել է առաջնորդ Աղափիրյանցին և հայտնել, թե ինքը իրազեկ է, որ հայերը զինվում են՝ Տաճկաստան գնալու համար: Իբրև առաջնորդ զգուշացրեք հայերին, ասում է փոխարքան, որ Տաճկաստանը մեզ համար բարեկամ պետություն է և չի կարելի նրա շահերին դիպչել: Եվանգուլյանը և նրա գաղափարակիցները զարմանալի կերպով վնթադրում էին, թե ցարական կառավարությունը հայկական շարժմանը միայն առևրես էր դիմ[137]:

---

[136] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի 25/10—80 թվակիր նամակից:

[137] Այդ նամակի գրության օրվանից մեկ ամիս առաջ, սակայն, Կովկասի փոխարքան հեռագրով շտապել էր հայտնել արտաքին գործոց մինիստր Գիրսին, թե հայ երիտասարդության մեջ ձգտում է նկատվում անցնել Թուրքիա՝ մասնակցելու համար Թուրքահայերի ապստամբությանը, և թե ինքը խիստ միջոցներ է ձեռնարկել՝ արգելելու այդ շարժումը: Կարճ ժամանակից Պետերբուրգում Թուրքական դեսպան Շաքիր փաշան շնորհակալություն է հայտնում Գիրսին՝ «նորին մեծության Կովկասի փոխարքայի ձեռնարկած միջոցառումների համար, որոնց շնորհիվ կովկասահայերի մուտքն Անատոլիա՝ արգելվում էր» (տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 463, 466):

Ի դեպ այս նամակում Եվանգուլյանի հայտնած այն նորությունը, թե Աբգարը, Արծրունին և Բեհբուդյանը միացել են և հույս ունեն գումարներ հանգանակել «ընդհանուր նպատակի համար», զայրացնում է Եղյանին: Մանավանդ մարդու միջոցով ուղարկած իր պատասխան նամակում նա ցասումնալից տողեր է գրում իր անխոհեմ բարեկամներին. ինչպե՞ս են նրանք վստահել ցարական կառավարությանը նվիրված Արծրունուն... «Եթե իմանամ, որ դուք նորան հաղորդում եք իմ ծրագրությունը, ես կդադարեմ...», գրում է Եղյանը: Եվանգուլյանը սաստիկ խռովված այս տողերից, բացատրություն է տալիս նրան և հայտարարում, թե ինքը նույնպես չի վստահում Արծրունուն:

Իր «Հիշողություններում» Եղիշե քահանա Դեղամյանը պատմում է համավորական խմբերի կազմակերպման հետ կապված իրադարձությունները: Նա ևս ներգրավված էր այդ գործի մեջ և իբրև Ախալցխայի կոմիտեի ղեկավար, համավորներ էր հավաքագրում և զինում նրանց: Դեղամյանը պատմում է իր հանդիպումը այդ օրերի եռանդուն գործիչ Արսեն Թոխմախյանի հետ: Վերջինս նրան հայտնում է, թե «Թիֆլիսում մի ընկերություն է կազմվել, որ նպատակ ունի Տաճկահայաստանի ազատությունը»[138]: Այդ ընկերությունը գավառներում իր ճյուղերն էր ստեղծել և գործում էր խիստ կոնսպիրացիայի պայմաններում: Դեղամյանի այն հարցին, թե ովքեր են ընդգրկված կենտրոնի կազմում, նրա խոսակիցը պատասխանում է, որ ընկերության անդամները չպետք է ճանաչեն միմյանց և հարկ եղած դեպքում պետք է հաղորդակցվեն միայն նամակների ու ծածկագրերի միջոցով: Ի դեպ ընդունված ծածկագրի բանալին նա տալիս է Դեղամյանին:

Երբ փոխարքայության Ախալցխա ուղարկված ներկայացուցիչը Դեղամյանին հայտնում է, որ համավորական խմբերի գործը «ստիպ է տվել միջազգային բանակցության տանել մեր (ռուսաց) հյուպատոսներ ու դեսպանների մեջ», տեղի շարժումը կանգ է առնում: Հետաքրքրական է այն փաստը, որ ստեղծված անորոշ վիճակից դուրս գալու համար Դեղամյանը երբ մեկնում է Թիֆլիս, այն մարդիկ, որոնց հետ տեսնվում է՝ Պ. Սիմեոնյանը, Աբգ. Հովհաննիսյանը և Գր. Արծրունին էին[139]: Միանգամայն պարզ է, որ այդ օրերին հայ խմբագիրներն ընդ-

---

[138] «Լումա», 1906, № 4, էջ 22:

[139] Նույն տեղում, էջ 23:

պրկված էին Թիֆլիսի կոմիտեի մեջ, ինչպես այդ երևում է և Ալ. Բաբայանի վերը հիշված նամակից։

1881 թ. սկզբից շարժման կորագիծը փոխվում է։ Խանգավառ նախապատրաստական աշխատանքները, որով զբաղված էին Կովկասի հանձնաժողովները, ասես պաղում են. առաջին աղդակը կամավորներին վերադարձնելու փաստն էր Ուչքիլիսեի վանքից։ Դրան հաջորդում են Շևրենցի, Խրիմյանի և Կամսարականի նոր հրահանգները։ 1830 թ. դեկտ. 9-ին Եվանգուլյանը զեկուցում է Պետերբուրգ, թե Կամսարականը և Շիշմանյանը «պնդում են, որ հարկավոր է Կարնո մեջ, որ Հայաստանի մայրաքաղաքը համարվելու է, շուտով մի մեծ ուսումնարան բանալ։ Այս երկուսի կարծիքով էլ զենքի մասին խոսքը նշանակում է իզուր ֆշնամություն հարուցանել, քանի որ մենք ուժ չունենք Օսման տերությանը հաղթել (ընդգծումը Գ. Եվ-ինն է)։ Սոցա կարծիքով մեր զենքը պիտի լինի լուսավորություն, ուսում, որոնց հետ և նյութական զորությունը կգա»։ Շիշմանյանն արդեն դռնում էր, որ «մի լավ ուսումնարանը ավելի բան կարող է կատարել, քան թե հայկական խմբերի քրդերի վերա արած հաղթությունը»։

Եզյանն շտապում է հարցում ուղարկել Կարին։ Եվանգուլյանը նրա երկու նամակները հատուկ մարդու միջոցով հասցնում է Կամսարականին. պատասխանն անդրդվելի էր. «Նա դարձյալ կարծում է, որ ապըստամբությունը այժմյան հանգամանքներում վնասակար է, եթե Ռուսաստանի կամ Անգլիայի օգնության մեջ հաստատ համոզված չլինենք։ Ապստամբության համար պատճառներ, ասում է նա, խիստ շատ կան (և օրինավոր պատճառներ), և ամեն ժամանակ էլ կլինեն»[140]։ Մեր ձեռքի տակ են և Կամսարականի նամակները, որոնք ինչ-որ չափով լույս են սփռում նրա հայացքներում կատարված շրջադարձի վրա։ Չի կարելի ասել, թե նա առհասարակ մերժում էր ապստամբության գաղափարը. ընդհակառակը, արևելահայ կամավորների բաղձանքը՝ անցնելու Թուրքիա և կռվելու հայերի ազատագրման համար, Կամսարականը համարում է «վերին աստիճանի ուրախալի» և հուզիչ փաստ։ Նա պարզապես վաղաժամ էր գտնում վճռական միջոցների դիմելը, որովհետև տեղի հայությանը ոչ միայն անպատրաստ էր համարում ինքնուրույն մարտական գործողությունների, այլև անպատրաստ և անզեն՝ ինքն իրեն պաշտպանելու համար։ Կամսարականը խորհուրդ է տալիս նախ

---

[140] ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 8/2—81 թվակիր նամակից։

զինել արևմտահայերին, նրանց պաշտպանել ամեն մի պատահականությունից, ապա միայն վճռել «խաղալ կրակի հետ»: Այլ կերպ վարվել, պրում էր նա, կնշանակեր տեղի հայությանը զոհել մահմեդական բնակչությանը, «որի երկաթե օղակով շրջապատված է նա ամենուրեք»: Այս առումով էլ նրա համակրանքը վանում կազմակերպված գաղտնի կոմիտեների այն թևի գործիչների կողմն էր, որոնք ոչ թե ապստամբության կոչ էին անում Թուրքական կառավարության դեմ, այլ պահանջում էին զինել ժողովրդին:

Արդեն 1881-ի սեմին՝ Կամսարականի համոզմունքով օրվա հիմնական հարցը, հայերի ամբողջ ուժը և փրկությունը դպրոցներն էին: Նա մեծ նշանակություն էր տալիս Առաքելոց վանքում այդ օրերին բացված երկրագործական ուսումնարանի աշխատանքներին, խանդավառված էր Վարագա վանքում Երիմյանի՝ երկրագործական դպրոցի հիմնադրումով: Եղյանը և նրա համախոհները հարկադրված էին մի պահ դադար առնել: Հարկավոր էր նոր ժամանակներում նոր ձևով իմաստավորել երևույթները և հնարավորին չափ ճիշտ կողմնորոշվել հետագա քայլերի մեջ: Այդ առավել ևս անհրաժեշտ էր, քանի որ 1881-ը իր հետ բերեց մի խոշոր իրադարձություն: Ռուս հեղափոխական նարոդնիկների ձեռքով նետված ռումբը սպանեց Ալեքսանդր II-ին: Ռուսաստանում և հայ ժողովրդի համար սկսվում է մի նոր, մղձավանջային թագավորություն: Ութսունական թվականները ինչպես ողջ Ռուսաստանում, Կովկասի ժողովուրդների համար ևս բացում էր սև ռեակցիայի տասնամյակը: Պոբեդոնոսցևի անմիջական ներգործությամբ Ալեքսանդր III-ը իրեն ազատ է համարում նախորդ թագավորի լիբերալ խոստումներից, իր թագավորության առաջին իսկ օրերից ռեակցիոն որոշակի կուրս է ընտրում: Առանց հայտարարության չէ, որ Պոբեդոնոսցևը այդ օրերին գրում էր, թե իրեն հաջողվեց մեկուսացնել թագավորին՝ նրան շրջապատող անձանցից և կարողացավ տապալել Լորիս-Մելիքովի պատրաստած սահմանադրության նախագծի ընդունումը[141]: Նա Ալեքսանդր III-ի գահ բարձրանալուց անմիջապես հետո կարողանում է թագավորին ընդունել տալ իր կազմած մանիֆեստի նախագիծը, որը կանխորոշում էր Ալեքսանդրի թագավորության քաղաքականության բնույթը...

Կառավարության վերաբերմունքը որոշակի է դառնում և հայկական

---

[141] Տե՛ս «Արարատ», 1907 № 12, Կ. Պ. Պոբեդոնոսցևի նամակները Ե. Կ. Տյուտչևային (Ալեքսանդր III-ի թագավորության առաջին օրերի մասին—3/3—1/5—1881 թ.):

հարցի նկատմամբ։ Ցարական վարչարարները ամեն պատեհ առիթի հիշեցնում էին հայ մտավորականներին, թե Թուրքիան բարեկամ պետություն է և իրենք չեն թույլատրի որևէ շարժում՝ ուղղված նրա դեմ։ Հայկական շարժման առիթով շրջանառության մեջ է դրվում «հայկական սեպարատիզմ» տերմինը և շարժման հետ առնչվող անձինք արդեն դիտվում են իբրև ցարական կառավարության հակառակորդներ։

80-ական թվականների սկզբին չնայած փոխարքայության ջանքերով կառևցվում է կամավորական խմբերի մուտքը Վասպուրական, բայց Վանը և Կարինը նախապատրաստվում էին դինված ելույթների։ Կարինում 1881-ին հիմնադրված «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության ղեկավարները ժամանակին այցելել էին Թիֆլիս և տեղի գործիչներին ծանոթացրել իրենց ծրագրերին։ Երևանի և Թիֆլիսի՝ այդ հարցի հետ կապված մտավորականները ակնդետ հետևում էին Կարինում ծավալվող իրադարձություններին։

Կարինի մարտական մթնոլորտը նույնպիսի ոգի է հաղորդում կովկասցիներին։ Բնական դրանով պետք է բացատրել այն վճռական և թափ շունչը, որ 1882-ին նկատվում է «Մեղու Հայաստանի» թերթի էջերում։ «Մեղվի» դլխավոր աշխատակից Սպանդարյանը, վերլուծելով արևմտահայության տնտեսական և քաղաքական անելանելի դրության պատճառները, ժողովրդին կոչ է անում իր ձեռքը վերցնել իր կյանքի ապահովության գործը (ընդգծումը մերն է— Մ. Մ.)։ Հենվելով պանդուխտ մշակների հետ ունեցած իր զրույցների վրա, նա այն միտքն է հայտնում, թե հայերը բնավ էլ վախկոտ չեն, նրանք կարող են իրենց կյանքը, պատիվն ու ստացվածքը պաշտպանել, բայց բողոքում են, որ «մեջք» չունեն, չունեն առաջնորդներ։ «Պատրաստեցե՛ք հայաստանցի հայերին ինքնաճանաչության մեջ,— գրում է Սպանդարյանը,— պատրաստեցե՛ք նրանց այնպես, որ նրանք «մեջք» ունենան...»[142]։

Ոստիկանությունը շարունակում էր հսկել Կովկասի գործիչներին, բայց նրանց հետապնդելու կոնկրետ առիթ դեռևս չուներ։ Շուտով բռնեղծվում է և այդ առիթը։ 1883 թ. Երևանի խմբակի անդամ Մհերյանը իր դիմնազիստ եղբոր գործով ապտակում է գիմնազիայի վերատեսուչ Բրաժնիկովին։ Ապտակը հարմար պատրվակ էր՝ հաշվեհարդար տեսնելու Երևանի շարժման մասնակիցների հետ։ Միջադեպից հետո տեղի հայ մտավորականների մի խումբ դատական պատասխանատվության է

142 «Մեղու Հայաստանի», 1882, № 65։

կանչվում։ Նրանք մեղադրվում էին քաղաքական շարժումներ հարուցելու մեջ ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Ռուսաստանում՝ հայկական թագավորություն ստեղծելու դիտավորությամբ։ «Շատ խուզարկություններ եղան Երևանում,— հայտնում է Եվանգուլյանը նշանին,— որտեղ բանտարկված է և Տեր-Ջաքարիա անունով պարոնը։ Խուզարկությունք եղան և «Մշակի» խմբագրատանը և խմբագրի մոտ»։

Եվանգուլյանը ցանկանում է կանխել վտանգը. անպաշտոն ձևով նա բազմիցս հանդիպումներ է ունենում կառավարչապետության գատական պալատի դատախազ Անդրևևի հետ («որը բարեկամաբար մի-մի անգամ հետաքրքիր տեղեկություններ է ինձ հաղորդում»), փորձում իմանալ տեղի ունեցող անցուդարձը։ Եվանգուլյանը հավատիացնում է նրան, որ և՛ արևելահայերը, և՛ արևմտահայերը Արևմտյան Հայաստանի ազատագրումը կապում են ռուսաց տերության պաշտպանության հետ։ («Տաճկահայաստանի հայերը գուցե ավելի կամենում են ռուսաց ձեռքը անցկացնել իրանց երկիրը, քան թե անորոշ ռևֆորմն սատանալ»)[143]։ Անդրևևը, առանձին մի անհատ, համամիտ էր Եվանգուլյանի միտարկներին։ Նա նույնիսկ բնական է համարում այն, որ պատմական մեծ անցյալ ունեցող մի ժողովուրդ, ինչպիսին են հայերը, սիրում է իր լեզուն, եկեղեցին և ազգությունը։ Նա պնդում է, որ այդ զգացումները չի կարելի դատապարտել, ինչպես չի կարելի դատապարտել լեհերի սերը՝ Միցկևիչի նկատմամբ։ «Հանցանքն այն ժամանակն է,— ասում է նա,— երբ հիշյալ բնական զգացմունքները գործ դրվին ժողովուրդը ոտքի կանգնեցնելու, ի վնաս տերության գործելու»[144]։ Անդրևևը խոստանում է օգնել գործին, սակայն նա անզոր էր։ Կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովը, որ վճռականորեն փոխել էր վերաբերմունքը հայերի նկատմամբ, մեծ բավականությամբ հայտնում է Անդրևևին, թե ներքին գործոց նախարարն արդեն ոստիկանական հսկողություն է սահմանել հայերի վրա։ 1883-ի դեկտեմբերի 19-ի թվակիր մի հրահանգով կառավարչապետը դիմում է Կովկասի նահանգապետներին. «Երևանի վերատեսչին վիրավորանք տալու մասին եղած քննությունը այն եզրակացության է բերում,— գրում էր նա,— որ ռուսահայք ունեն տենդենցիա՝ միանալով տաճկահայոց հետ, ազատանն իրանց հայրենիքը ոչ թե միայն Տաճկահայաստանում, այլև ռուսաց իշխանության տակ եղած հայոց

---

[143] ՀՊԿՊԱ, եղյանի ֆոնդ, Եվանգուլյանի 26/5—83 թվակիր նամակից։

[144] Նույն տեղում, Եվանգուլյանի 29/7—83 թվակիր նամակից։

գավառներում»[145]: Նա միաժամանակ նշում է, թե քանի որ այդ գործին նպաստում են հայկական բարեգործական ընկերությունները, ապա նահանգապետները պետք է ստուգեն այդ ընկերությունների մասյանները: 1883-ի ամռանը Բոգորոդսկում ձերբակալվում է հայ ուսանող Սրապիոն Տեր-Գրիգորյանը, որի մոտ խուզարկության ժամանակ գտնվել էր «Հայրենասերների միության» կոչից երկու օրինակ («Սորա մի քանի հատ և Թիֆլիսում ստացվեցավ...»): Երևանում ձերբակալվում են երևանյան հանձնաժողովի գործոն անդամներ Լևոն Տիգրանյանը, Ռուբեն Հասան-Ջալալյանը, Հայկ Մատակյանը, Գայանե Հովհաննիսյան-Մատակյանը, որոնք աքսորվում են Ղզլար կամ Օդեսա[146]: Մհերյանն աքսորվում է Սիբիր: Ընդհանուր տագնապի այս օրերին Գ. Եվանգուլյանը կոմս Լորիս-Մելիքյանի հանձնարարությամբ հատուկ նամակ է ուղղում Կարապետ Եզյանին[147]... Ամեն բանից առաջ նրան խնդրում է զգույշ լինել և առանձնապես թղթերը պահել՝ որպես հարկն է: Բանն այն էր, որ իշխան Դոնդուկով-Կորսակովը կոմս Լորիս-Մելիքյանի հետ ունեցած զրույցում երկու անգամ հիշատակել էր Եզյանի անունը: Եվանգուլյանը նրան հաղորդում է նաև, որ կոմսը թեև առերես բարեկամություն է անում Կովկասի ուսումնական օկրուգի պետ Յանովսկու հետ, բայց նա «մեր ամենամեծ թշնամին է»:

Ինդրում է անձամբ զբաղվել Երևանի գործիչների դատական պրոցեսով և ջանալ թեթևացնել մեղադրանքը: Քանի որ կառավարչապետը

---

[145] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի 25/5—84 թվակիր նամակից:

[146] Գայանե Հովհաննիսյանը բժշկապետ Հ. Հովհաննիսյանի դուստրն էր (ավարտել Հովհաննիսյանների քույրը): Վաղ պատանեկան տարիներից նվիրվում է հասարակական, մանկավարժական գործունեության, աշխատում է Նորաբաց Գայանյան օրիորդաց դպրոցում: Ովկիյոսարիայում մանկավարժական կրթություն ստանալուց հետո սկսում է աշխատել Քութայիսում, ապա Երևանում: Այստեղ նա ձրի աշխատում էր իրեն Գայանյան և Սահակյանների դպրոցների տեսուչի, ուներ և իր մանկապարտեզը: Երևանում Գայանեն ամուսնանում է մանկավարժ Հայկ Մատակյանի հետ: Տեղի՝ «Հայաստ — Ազգասեր» ընդհատակյա խմբակի աշխատանքներին մասնակցելու համար Մատակյան ամուսիններն աքսորվում են Օդեսա: Հ. Մատակյանը վախճանվում է աքսորավայրում, իսկ Գայանեն իր մանկահասակ որդու հետ անցնում է Կ. Պոլիս և կրկին նվիրվում մանկավարժական աշխատանքի: 1888 թ. սեպտեմբերին նա արդեն Գատը գյուղում հաստատել էր իր մանկապարտեզը: 90-ական թթ. արևմտահայ թերթերը մեծ համակրանքով են արտահայտվում Գ. Մատակյանի հայրենասիրական գործունեության մասին. նրան կոչում՝ «իդեալի կին»: Գ. Մատակյանը վախճանվել է Կ. Պոլսում 1900-ին, 48 տարեկան հասակում:

[147] Այս տեղին, 1883-ի ամռանը, Մ. Տ. Լորիս-Մելիքյանը գտնվում էր Թիֆլիսում:

գործը պետք է նախ ներկայացներ արդարադատության նախարարին, իսկ սա իր հերթին՝ ներքին գործոց մինիստրի հետ թագավորին, հանձնարարում է արդարադատության նախարարի օգնական Մարիուլին («որ Ձեր բարեկամն է»), ծանոթացնել Երևանի գործի հետ, այն ներկայացնելով իբրև ծիծաղելի բան: Միաժամանակ նպատակահարմար է գրառում դատախազ Յուզեֆովիչի և Դոբժինսկու միջոցով գործի հետ ծանոթացնել նաև ոստիկանական դեպարտամենտի դիրեկտոր Պլևակին («կարծեմ և Դուք ինքներդ Պլևակի հետ ծանոթ եք»): Այնուհետև Լևանդուլյանը խնդրում է հասնել այն բանին, որ ոստիկանությունը գործին ընթացք տա միայն նյութերին ստանալուց հետո:

Հետաքրքրական է վերջին հանձնարարականը. Լևանդուլյանը խորհուրդ է տալիս, օգտվելով այն բանից, որ Ե. Օրժևսկին[148] «ապրանատրուն ֆշնամի է Դոնդուկովի հետ, Ն. Սանասարյանի միջոցով նրան ծանոթացնել Երևանի պրոցեսին և «բոլոր բանի մեղքը դնել Դոնդուկովի վերա»[149]: Ին ինչպես է իրականացնում այս հանձնարարությունները Եղյանը, դժվար է ասել, բայց շարժման մասնակիցները, այնուամենայնիվ, երեք տարով արտաքսվում են Երևանից: Թիֆլիսի «կենտրոնը» խուսափում է պատասխանատվությունից: Գ. Լևանդուլյանը և նրա համախոհները ըղբաղվում են առանձին հոգևորով: Նրանք մեծ եռանդ են դնում կաթողիկոսական ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործի մեջ և մեծ ուշադրություն մսվիրում հայկական դպրոցների պահպանմանը:

1887-ի վերջին Օրմանյանն առաջարկում է Սանասարյան դպրոցը Կարինից տեղափոխել Խարբերդ: Մեր ձեռքի տակ չկա Օրմանյանի նամակը, բայց Լևանդուլյանի պատասխանից կարելի է կռահել նրա փաստարկները: Լևանդուլյանը չի համաձայնվում այդ առաջարկին, որովհետև չի հավատում, թե «Կարնո ապագան պիտի վճռված և վերջացած համարել»[150]: 1890 թ. Կարինից ստացված լուրերը կրկին ոգևորում են Լևանդուլյանին: «Ինչպես ամեն տեղից լսվում է,— գրում է Եղյանին,— դարնանը տաճկական Հայաստանում շարժում պիտի լինի: Ոչ ոքին չես հավատացնի, որ այդ շարժումը թագավոր կայսեր կամքին հակառակ է: Ամենքն էլ պնդում են, թե դա կարող է հակառակ լինել Շալիկովին (Տոմիչևին), բայց ոչ ռուսաց կառավարության և Ռուսաստանին: Կարծում

---

[148] Ներքին գործոց մինիստրի տեղակալը:

[149] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Լևանդուլյանի 29/7—83 թվակիր նամակից:

[150] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Լևանդուլյանի 25/7—87 թվակիր նամակից:

համ, հնարք չկա դեմ կենալ և կանգնեցնել այդ շարժումը... պատմում են, որ գյուղերում 10—15 տարեկան աղերք կփախչեն յուրյանց խոհեմ ծնողներից, պատմում են և այն, որ 50 տարեկան ծերության հասած մարդիկ մանուկների նման ոգևորված են: Սարսափելի հետևանքներ պիտի առաջ գան, եթե տերությունը խոհեմությամբ ուղղություն չտա այդ շարժման: Բայց ո՞վ է իմանում, թե ի՞նչ դույներով և ի՞նչ տեսակ է ներկայացրած այս գործը Պետերբուրգին: Շատ ցավալի պիտի համարել, եթե հայոց ազգը ուրիշների ազդեցության տակը պիտի ընկնի, և ոչ թե յուրյանց բնական բարեկարի»[151] *(ընդգծումը մերն է— Մ. Մ.):*

Ազգային-պահպանողականների համար Կարինի անցքերը վերկության երաշխիք էին, որոնց պետք էր օժանդակել, չխանգարել ոչ մի կերպ... «Խնդիրը նորա մեջն է,— գրում է նա,— որ շատ մեծ սխալ արած կլինեն, եթե այժմյան շարժման արհեստական միջոցներով դեմ կենան: Թող լինի վերջ ի վերջո այն, ինչ որ ասածո կամքն է»[152]*: Կարինից ըստացված նամակների նյութերով Եվանգուլյանը թղթակցություններ էր կազմում և ուղարկում ռուսական թերթերին: Հետաքրքրական է նկատել, որ նա այդ հոդվածները կանխավ ուղարկում էր Եղյանին՝ նրա կարծիքն իմանալու համար, միաժամանակ թույլատրելով նրան՝ «բոլոր փոփոխությունները անել»: Այդ թղթակցությունների մեջ նա ցանկանում էր ճշմարիտ լույսի տակ ներկայացնել տեղի ունեցող իրադարձությունները և անուղղակիորեն հերքում էր այն միակողմանի մեկնաբանությունները, որ տալիս էին օտարազգի թղթակիցները հայկական շարժմանը:*

Կարինի շարժումների հետ մեծամեծ հույսեր էին կապված, բայց հաղթանակն անկարելի էր երևակայել առանց զորավոր զինակցի և հովանավորի: Եվանգուլյանը խորհուրդներ է տալիս Պետերբուրգի իր բարեկամին. «էրզրումի անցքերը, ինչպես տրհում է, ծանր կերպարանք են ունեցել: Եթանի թե դուք կարողանայիք գնալ Պոլիս և այնտեղ տեսնվել երևելի ազգայնոց հետ, որ հայոց շարժման խոհեմ ուղղություն տան: Ուզեն, չուզեն շարժումը կա և դորան ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել: Հարկավոր է ուրեմն նորան կամ մի մեծ գարկ տալ, որ դրսից ուշք դարձնեն, կամ գործքը ներքին ուժերով կազմակերպել: Իմ խորին համոզմունքն այն է, որ առանց ասի՝ մենք միայն կոտորվածքներ կունենանք, բայց թե ինչպես ասի հետաքրքրություններ ձևոք բերել, սորա մասին պի-

---

[151] Նույն տեղում, Գ. Եվանգուլյանի անձնական նամակից:

[152] Նույն տեղում:

ոի մտածել և գուցե միայն Զինովևն է, որ կարողանա Զեզ հարկավոր տեղեկություններ տալ»[153]: Գևորգ Եվանդուլյանը շարունակ հրահրում է շարժմանն ընթացք տալու, այն ղեկավորելու գաղափարները: Մեկ անգամ չէ, որ նա ընդհանրացնում է իր և յուրայինների հայացքն այս խնդրի մասին. «Ասել թե շարժումը հիմար և վնասակար գործ է, այլևս չէ կարելի. որքան ինձ հայտնի է, բոլոր ազգերի շարժումները այդպես են սկսվում և գուցե միայն Ինչ և ոչ ևեռուն մտածողներն են, որ մեծ գործեր են առաջ բերում»[154]:

Ալեքսանդր III-ի քաղաքականությունը, սակայն, արամադրորեն հակառակ էր ազգային շարժումների հայ տեսաբանների համոզմունքներին ու ակնկալություններին: Այդ բանում նրանք համոզված էին քայլ առ քայլ: Կարինի շարժման դեկավարները զնդաններն են նետվում. հայկական և այլալեզու մամուլի օրգաններում նկարագրվում են նրանց անօրինակ տառապանքները և միայն այդքան: Շարժումը փաստորեն դրվատված էր: Երկու հատվածի հայ մտավորականները նոր մտահղացությունների առաջ էին կանգնած: Ռուսական կայսեր կողմից հաստատված կաթողիկոս Խրիմյանը զանվում էր Երուսաղեմի իր աթոռավայրում և սուլթան Աբդուլ Համիդը չէր արձակում նրան... Հոդվածներ, բանակցություններ, բողոքներ... սուլթանն անդրդվելի էր: Ծանր խոհեր են պատշարում ազգի ճակատագրով մտահոգված գործիչներին, բայց նրանց մրնում էր միմիայն անձնական նամակներում դառնորեն դանդատվել իրենց վիճակից[155]:

---

[153] Նույն տեղում, Գ. Եվանդուլյանի 20/7—90 թվակիր նամակից:

[154] Նույն տեղում:

[155] Ահա թե ինչպես է ներկայացնում արևմտահայության համար տեղծված վիճակը Հովհ. քահանա Մկրյանը. «Ի՞նչ պետք է անել. ա՜հ, ի՞նչ պետք է անել. մենք Զեզ և դուք մեզ պիտի կրկնենք հաճախ— ի՞նչ պետք է անել: Վերուցիք Տաճկաստանի հայոց վրայն ամեն հույս և ակնկալություն, անշարժ դիակ եղած է, մեռուցին մարմնով, մեռուցին հոգվով, մեռուցին և մատը: Հայ ժողովուրդը ոչ մի ժամանակ այսպիսի բրտնություն տեսած է պատմությանց նկարագրած և ոչ մի չար և դժնդակ ժամանակների մեջ: Մեռուցին և կմեռցունեն մարմնով բոլոր դավառներու մեջ բանտերու մեջ փտեցունելով եպիսկոպոս, վարդապետ, քահանա և ժողովուրդ, բաղում թվով, առանց դատաստանի, առանց օրինաց, գոնե հոգևորականաց համար չկա բացառություն՝ երբ ըստ պատրիարքական պերաթի հարկ էր նորա դիտությամբ լիներ ձերբակալումն և դատաստանն, ո՜չ, ո՜չ չկա՜ այնպիսի բան, հնրիք է, որ հայոց վերա երթա մի ոմն սուտ մատնություն անե. անմիջապես կձերբակալվին ի շղթայս և ի կոճղս կոխվին. և գայս բռնության անող մութասարիֆ, վալի կամ որևէ պաշտոնյա կլինի մեծ ատելանալոր և

Գ. Եվանգուլյանը կրկին ապավինում է ազատագրական շարժումնե-
րի գաղափարին՝ սեփական միջոցներով: Լսելով Վանում սկսված խռո-
վություններուի լուրը, նա հույս է հայտնում, թե Խրիմյանի գահ բարձրա-
նալը «դուցե շատպետին անկարգությունների տարածվիլը»: Բոլոր դեպ-
քերում նա պնդում է շարժումների օրինաչափ լինելը և հայտարարում է
թանիցս, թե «մեր ձեռքին չէ բնական հոսանքը կանդնեցնելը»: Այս ան-
գամ արդեն, 1893-ի ամռանը, Եվանգուլյանը հայացքը դարձնում է կա-
թողիկոսին և ապատում նրա հետ ունենալիք հանդիպմանը («եթե ապրժա-
նանամ նորան այցելելու, մասնավորապես խոստանում եմ Ձեզ՝ կաշխա-
տեմ նպաստելու, որ ազգը մեծամեծ չարիքներին չհանդիպի»):

պատվական՝ յաչս տերության: Մեռուցին և կմեռցունեն հոգվով, հայաստանյայց եկե-
ղեցի բառն արգելելով, շարականներու և ժամագրքերու մեջ այդ բառերն հանելով ար-
պագրել հրամայելով: Հայաստան բառը ոչ թե դրել, այլ բերան առնուլ քրեական հան-
ցանք համարելով և բանտարկելով:

Մեռուցին և կմեռցունեն մտոք, թույլ չտալով տպագրել մեր նախնյաց պատ-
մություն, մեր հայրենյաց տեղագրություն, և բաց ասած բոլոր այն իմաստասիրական
կամ փիլիսոփայական գրություններն, յորում գրված լինի մարդկային մտաց ազատու-
թյան վերա դիտության մեջ: Ազատություն բառ հրաման չկա գործածել. երդերու և կամ
ուխտավորներու մեջ մինչև իսկ խծրծանքներ անելով ծուռ մեկնություններ տալ. եթե մի
օտարազգի ինքը կամ գիրք եկեղեցվույդ և հավատքիդ դեմ հայհոյած է, չես կարող
պատասխան դրել պաշտպանել և այլն և այլն, ո՞րն ասեմ և կամ ո՞րն խոստովանիմ.
ժողովուրդն դի անկենդան և կռճղ անպիտան ըրին, և եկեղեցականին, եպիսկոպոսին,
առաջնորդին, պատրիարքին պաշտպանության իրավունքն իսպառ մերկացուցին և ձայներ-
նին խեղդեցին և կխեղդե՜ն, և կճմլե՜ն, կճմռե՜ն, և կսպանեն դմարմին և հոգի միանա-
դամայն: Այսպիսի վիճակի մեջ ի՞նչ շարժում կարող է անել ժողովրդապետն կամ ժո-
ղովուրդն. եթե անշարժ վիճակի մեջ անդամ այս ասպիճան բանացած են և կրընանան.
մի քիչ շարժում տեսնելու լինին, ինչե՜ր չպիտի անեն, քննդանոցների բերան պիտի
տան, ճշմարի՜տ. և ո՞ր քրիստոնյա պետություն է, որ պիտի պաշտպանե այս անգեն,
այս գերի քրիստոնյա ժողովուրդն:

Այս բոլոր ասածներիս ապացույց տալ հարկ չէ. ահավասիկ կաթողիկոսական
խնդիրն աչքի առաջ ունինք: Ահեղազոր ռուսաց կայսրության հողին մեջ և նորա հարգած
ու հաստատած օրինոք Հայոց ազգի միաձայնությամբ կաթողիկոս կընտրվի մի եպիսկո-
պոս, ռուսաց անսվաճառի կայսրն յուր բարձրագույն հաստատությունը կշնորհե, և սա-
կայն եպիսկոպոսն չէ կարող երթալ այսքան ամիսներէ ի վեր յուր Աթոռն, և ի՞նչ կա-
սեմ, ռուսաց տերությունն չէ կարող շոգենավ մի ուղարկել և մեջը դնել եպիսկոպոսն և
տանել յուր Աթոռն: Այս ակներև բռնաբարությունն ահա՜ աշխարհի առջև հայտնի եղած
է, և այս անիրավությունն ռուսաց օրինաց դեմ կգործվի, բայց հայոց ազգի համար է
ասելով, ոչ որ անպատվություն կհամարի և լռություն կպահվի, ուր մնաց հայոց եկե-
ղեցականության, որ ելնէ ձայն կամ ճիկ հանէ...» (Հովհ. քահ. Մկրյանի՝ Եղյանին ուղ-
ղած 17/2—93 թվակիր նամակից, տե՛ս ԳԱՔ, Եղյանի ֆոնդ):

1893-ի վերջին Սարգիս Կուկունյանի խմբի ձախողումը վերջնականապես խորտակում է ցարիզմի հետ կապված բոլոր հույսերը: Այս անդամ Եվանգուլյանը գործում էր իբրև դատապաշտպան: Դատական պայաառում նա ոչ միայն պաշտպանական մի ոգեշունչ ճառ է արտասանում, այլև կազմում է երկու հարակից ծանոթություններ, որոնք կցվում են գործին և ուղարկվում Սենատ. դրանք էին՝ «Об отношении России к армянам» և «О положении армян в Турции» մեկնաբանումները: 1893-ի դեկտեմբերի 13-ի թվակիր նամակով Եվանգուլյանը խնդրում է Եղյանին՝ ծանոթանալ Կուկունյանի խմբի գործին, իր ճառի և ներկայացրած փաստաթղթերի հետ և ամեն ինչ անել, որպեսզի սենատը բնկանի վճիռը («վճիռը ջնջեն»): «Երանի թե դուք կարողանաք մի տեսակ ազդել, որ պաշատի վճիռը փոխվի»,— կրկնում է նա[156]:

Դեպքերը հաջորդում են իրար մեծ արագությամբ: Կարինի շարժման տապալումից հետո հայությանը հուզում է Կուկունյանի խմբի պրոցեսը, այնուհետև Կովկաս է հասնում Սասունի կոտորածների դույժը: Ողջ 1895 թվականին Կովկասի մամուլը հրապարակում էր Արևմտյան Հայաստանի հայկական գավառների սպանդի հետ կապված լուրերը: Ազգային-պահպանողականները որոշակի ծրագրեր չունեին. նրանք սպասում էին իրերի ընթացքին, սպասում էին մեծ պետությունների վճռական գործողություններին:

1895 թ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած անցքերը, որ հուզում էին ողջ հայ ազգությանը, («մեծը և պստիկը, այր և կինը, ծերը և երիտասարդը նույն վիճակի մեջ ևն»), Եվանգուլյանը չի համարում միակ առիթը: Ցարական կառավարության ներքին քաղաքականությունը նույնպես սաստիկ մտահոգիչ էր դառնում. «այժմյան խորհրդականները հեռատես և մտածող պետական մարդիկ չեն,— դանդատվում է նա,—

---

[155] Սարգիս Կուկունյանը Պետերբուրգի «Հայրենասերների միության» խմբի անդամներից էր: Քրդերից և Թուրքերից վրեժխնդիր լինելու նպատակով (տեղի հայության հրած տառապանքների համար), նա 125 հոգուց կազմված իր խմբով փորձում է անցնել Թուրքիա: Ուսական սահմանը անցնելու պահին, 1892-ի սեպտեմբերին խումբը բռնվում է և դատի տրվում: Կուկունյանը դատապարտվում է 20 տարվա տաժանակիր աշխատանքի, իսկ նրա խմբի անդամները՝ 8-ից 12 տարվա աքսորի:

Պետք է ենթադրել, որ Եղյանը փորձել է օգնել, որպեսզի վճիռը մեղմացվի (Սենատում Կուկունյանի օգտին փայլուն ճառ է արտասանում Միրոնովը), սակայն արդյունքի չի հասնում (տե՛ս «Արձագանք», 1894, № 16):

նամանավանդ թույլ խելքի տեր է երևում Գորեմիկինը»[157]: Եվանգուլյանը թվարկում է այն պահանջները, որ ներկայացվել էին Աբոռին՝ հայկական ազգային կյանքը ճնշելու ուղղությամբ (դպրոցները հանձնելու պահանջ, ճեմարանի կանոնադրությունը վերափոխելու, կոնդակների միջոցով հայոց ազգին դատապարտելու պահանջ, «որ նա անկարգություններ չանե Տաճկաստանում», ճեմարանից արևմտահայ հոգևորական և աշխարհիկ անձանց վտարելու պահանջ, և այլն, և այլն)—«Եվ այս բոլորը մի երկու ամսվա մեջ թափվել են կարկտի նման մեր գլխին: Անում ենք, ինչ կարող ենք»[158]: Կովկասում մի մասնաժողով է կազմվում՝ սովյալների համար հանդանակություն կազմակերպելու և որոշելու այն հարցը, թե «այժմյան հանգամանքներում ի՞նչ պետք է անել»: Եվանգուլյանն իր նամակներում եզյանին պատմում է Արևմտյան Հայաստանից ստացած լուրերը, նկարագրում Կովկաս հասած գաղթականների թշվառությունը. («Բախտավոր ես, որ անձամբ չես տեսնում նոցա ողորմելի վիճակը կամ անմիջապես չես լսում նոցա դրության նկարագիրը»)[159]: Եզյանն առաջարկում է անել այնպես, որ գեթ որբերին պահեն հայրենիքում, չտանեն օտար երկրներ: 1897-ին մտահոգությունները խտանում են Կովկասում: Ցարական կառավարությունը Կովկաս է ուղարկում ռեակցիոներ Գոլիցինին և Կովկասի նոր կառավարչապետը մեծ ինքնավստահությամբ սկսում է իրականացնել կառավարական վերին շրջաններում մշակված կովկասյան ժողովուրդներին ռուսացնելու ծրագիրը: Մինչ այդ արդեն՝ 1896-ի հոկտեմբերից, Կովկասում սկսել էին փակել հայկական դպրոցները. հատկանշական է, որ այդ լուրը Եվանգուլյանը եզյանին հաղորդում է սող սև երիզի մեջ առնված նամակով: Նույն նամակում նա պատմում է կատարվող ձերբակալությունների փաստի մասին. «Բոլոր ձերբակալվածները մեղադրվում են ոչ թե տերության դեմ գործած հանցանքների մեջ, այլ այն հանցանքների մեջ, որ գործել են և իբր թե

---

157 Ներքին գործոց մինիստր:

158 ՀՊԿԱ, Եզյանի ֆոնդ, Եվանգուլյանի 26/12—95 թվակիր նամակից:

159 Եզյանը արևմտահայ իր գաղթակիցներից նույնպես տեղեկություններ էր ստանում ժամանակի անցուդարձի մասին. ահա մի հատված Հովհ. Մկրյանի նամակից. «Ջմնաց ուղ, չմնաց գավառ, չմնաց տուն, որ չվնասվի, կոտորած և կողոպտում—ազգը հետին աստիճանի թշվառության մատնեցին, որով վերջին հարվածը (երանի թե վերջինը լիներ), հրեց մայրաքաղաքը, չլսած անօրենություն, անգթություն և վայրենություն մեր աչաց առջև, այնուհետև հայոց դունդագունդ վտարանդի լինելը ի օտար աշխարհ, մեզ մնացորդացս թողուց ահ և երկյուղ, և խանգարումն կենսապահիկ պայմանաց...» (տե՛ս, ԿԱՔ, Եզյանի ֆոնդ, Մկրյանի 31/1—97 թվակիր նամակից):

գործում են «против соседней дружественной страны»[160]։ Նիատելիոն ավելանում են հայերի նկատմամբ անվստահության դրսևորումները, վրացիներին դրդում մեծ հայերի դեմ և այլն։ Եվանդուլյանին մնում էր համբագրել կառավարության ուղղված կաթողիկոսի բազմաթիվ դիմումներն ու աղերսագրերը...

Ծանր ժամանակները քաղաքական ասպարեզից հեռացնում են գործիչներին։ Նրանք զբաղվում էին Կովկաս ներհոսած գաղթականների դրության բարվոքման, նրանց ապաստարանների, սննդի, հնարավորության դեպքում՝ նրանց վերադարձը կազմակերպելու հարցերով։ 1900-ի մայիսի 18-ին Եվանդուլյանը դիմում է Եղյանին. «Վաղուց է, շատ վաղուց է, որ ես Ձեզ նամակ չեմ գրել. այն տեսակ նամակ, որ առաջ գրում էի։ **Մեր կյանքը կարծես դադարել է**» (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։ Ամիսներ անց, մի այլ նամակում նա կրկին բողոքում է. հայկական հասարակական կյանքը կարծես քնի մեջ է. «չդիտեմ մինչև անգամ քուն է, թե մահ»։ «Դուք պիտի այս կողմերումը լինեք, տեսնեք, թե ինչպես նոր հոսանքին ընկճվում են և կամ սարկաբար և կամ անգիտակցաբար ենթարկվում։ Ակամա մարդս ինքն իրան հարցնում է. **Միթե բոլորը արհեստական էր, որ առաջին ճամին ցրեց ամեն կողմ, առանց որևիցե հետևանք թողնելու**»[161]։ Եվանդուլյանին այժմ զբաղեցնում էր Արևմտյան Հայաստանը բարեկարգելու, այնտեղ դպրոցների և որբանոցների ցանց ստեղծելու խնդիրը։ Նրան վախեցնում էր այն միտքը, թե կարող է դավանափոխեն որբերին։ Այժմ արդեն նա մեծահարուստ հայերի հետ շոշափում է Արևմտյան Հայաստանում որբանոցներ հիմնադրելու խնդիրը։ 1900-ին Եվանդուլյանը խնամախանում է Մանթաշյանի հետ։ Բարեկամական այս նոր կապը ինքնավստահության է ներշնչում Եվանդուլյանին։ Նա Եղյանի խորհրդով Մանթաշյանի ուշադրությունը հրավիրում է բարեգործության նորաձեւ եղանակների վրա, որոնք նրանց կարծիքով շատ ավելի պիտանի կարող էին լինել ազգին, քան ուսանողներին թոշակով ապահովելը։ Երբ Մանթաշյանը իրենց գրույցներից մեկում պատրաստակամություն է հայտնում հաստատարան հիմնադրել Թիֆլիսում (և խոստանում է 1 միլիոն 300.000 ռ. տրամադրել այդ նպատակին), Եվանդուլյանը նրան խորհուրդ է տալիս հետևել Սմիռնայան վարժարանի օրինակին։ Ակնարկը պարզ էր, սակայն գոլիցինյան ռեժիմը ահաբեկում

---

[160] ՀՊԿՊԱ., Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 15/1—96 թվակիր նամակից։

[161] Նույն տեղում, 12/12—1900-ի թվակիր նամակից։

էր անգամ Մանթաշյանին. «Նա պատասխանեց, որ ապահով չէ, կասկածանաց նյութ կտա»: Այնժամ Եվանգուլյանը խորհուրդ է տալիս նրան «այժմյան հանգամանքներից օգուտ քաղել, գումար որոշել և Հայաստանը ծածկել որբանոցներով, որոնց համար թույլտվություն է տալիս սուլթանը և դա կարելի է դնել մեր դեսպանատան հովանավորության ներքո»: Այդ հարցին ազգային-պահպանողականները մեծ կարևորություն էին տալիս, քանի որ նրանք վախենում էին, թե Արևմտյան Հայաստանում ռուս-հայկական որբանոցներ հիմնադրելու Ջանշյանի նախաձեռնությունը կարող էր ձախողվել՝ հիմնադրի կանխահաս մահվան պատճառով: Մանթաշյանը խոստանում է գնալ Կ. Պոլիս և անձամբ ուսումնասիրել հարցը...[162]:

Դարավերջին, երբ արևմտահայ կյանքն այլևս կաթվածահար էր և վաղուց արդեն ջախջախվել էր հավատը՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության ստեղծման կամ գեթ այնտեղ բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ, ցարական ռնակցիայի հետևանքով կասեցվում է և արևելահայ մշակութային կյանքի զարգացման բնականոն ընթացքը: Խոսք չէր կարող լինել ոչ միայն Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժումների արծարծման, այլև տեղում ազգային ազատություն նվաճելու մասին:

Ազգային-պահպանողականները համոզվելով այն բանում, որ ցարական կայսրությունը արևմտահայության փրկելու իրենց ջանքերը խրախուսելու փոխարեն հետապնդում է, առժամանակ մի կողմ են թողնում քաղաքական ծրագրերը: Գլխավոր է դառնում: Նա, որ չորս տասնամյակ հրահանգներ էր ուղարկում Կովկասի ազգային-պահպանողականներին և փաստորեն էջմիածնի աթոռի անսպաշտոն խորհրդականն էր, այժմ նահանջում է: Հրապարակավ ընդդիմանալ կառավարականն միջոցառումներին, հետևապես անցնել ցարիզմի դիմադիր կուսակցության կողմը, ցարական վարչական ապարատի աստիճանավորը չէր կարող, ուստի դիմելով իր բարեկամներին, նա խորհուրդ է տալիս գործել հնարավորին չափ զգույշ: Հետաքրքրական է 22/7—1899 թվակիր նրա նամակը՝ ուղղված էջմիածնի ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին: «Խոհեմությունը պահանջում է, որ մենք զսպենք մեր ցույցամոլությունը, որ շատ վնասներ մեզ պատճառեց. բարվոք է, որ մեզ չնկատեն և մոռանան, ուստի երկյուղ եմ կրում, որ ճեմարանի 25-ամ-

---

[162] Նույն տեղում, 9/8—1900-ի թվակիր նամակից:

յակ տոնելը նորանոր փորձանքների ապիրի չդառնա։ Թող բավականանան հոգեհանգիստներով, մաղթանքներով չորս պատի մեջ, առանց ճառերի և ուրիշ ցույցերի։ Ի սեր Աստծո, ում հարկ է զգուշացրնք, լռեն կարելի է, բարվոք է բնավ չտոնել»[163]։

Կարապետ Եղյանն այս նամակով ատորագրում էր իր հոսանքի բարոյական պարտության վկայաթուղթը։ Կարճ ժամանակից նրա կուսակիցները հեռանում են գործունեության ասպարեզից, բնական ճանապարհով։ 1901 թվականին հանկարծամահ է լինում Գ. Եվանգուլյանը, 1902-ին իր մահկանացուն է կնքում Ալ. Երիցյանը։ Սրբազար Հովհաննիսյանը, որ հիվանդ էր և մեկուսացված ազգային գործերից, վախճանվում է 1904-ին։ Մեկ տարի անց մեռնում է Կարապետ Եղյանը։ Կովկասում ամենազոր գոլիցինյան ռեակցիայից խուսափելով, արտասահման են անցնում Փ. Վարդանյանը, Կ. Բհհբուդյանը, Ավ. Բաբայանը։ Այսպիսով, մի ամբողջ հոսանք, ազգային-պահպանողականների հոսանքը, որը ծնունդ էր առել XIX դարի 60-ական թվականների սկզբին, գործնեց իբրև ազգային զարթոնքի ժամանակների կենդանի արտահայտություն, ռուս-թուրքական պատերազմի տարիներին և դրան հաջորդող շրջանում ապրեց իր հախուռն կյանքը և աստիճանաբար մարեց 1905 թվականի մեծ իրադարձությունների ահեին։

Ազգային-պահպանողականները ջերմ հայրենասերներ էին և համազգային շահերի պաշտպաններ։ Նրանց գործունեությունն արտահայտում էր բուրժուազիայի զարգացման ժամանակաշրջանի ազգային շարժման այն առաջադիմական միտումները, որոնց մասին Վ. Ի. Լենինը գրում է. «Ճնշված ազգի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման, և հենց այդ բովանդակությունն է, որ մենք անպայման պաշտպանում ենք, խիստ զատելով իր ազգային բացառիկության ձգտումը»[164]։ Հեռու մնալով ազգային բացառիկության դատարկահունչ քարոզներից, նրանք ձգտում էին հայ ժողովրդի հոգևոր վերածնության գործին և ձգտում էին սեփական բնօրրանի, Հայաստանի ազատագրմանը՝ Թուրքական լծից։ Ի՞նչ հեռանկարներ ունեին նրանք կապված ռուսական հասարակության հայության ապագայի հետ, ի՞նչ իրական առնչություններ՝ «հայկական անպարտիզմի» մեղադրանքի հետ։

---

[163] ԳԱՓ, Կ. Կոստանյանի ֆոնդ, վավ. 836։

[164] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 513։

Մի առիթով խոսելով Արևմտյան Հայաստանում ծագելիք ազգային շարժումների օրինաչափ լինելու մասին, Եվանգուլյանը գրում է. «Գալով այն բանին, թե չէ՞ որ կա և ռուսական Հայաստան, որի մասին խոսում ես՝ շատ պնդում է Շալիկովը, թե ինչ է լինելու սրա հետ հարյուր տարիներից հետո, այդ ասվածն դիտեմ, բանի որ քագավորության կյանքը ևս ենթարկվում է բնական կանոններին»[165] (ընդգծումը մերն է— Մ. Մ.):

Ազգային-պահպանողականների համար հիմնական խնդիրը Արևմտյան Հայաստանի— մայր երկրի ազատագրումն էր, սեփական հողի վրա, հայկական դավառներում լիարժեք և ապահով ազգային կյանք ստեղծելու խնդիրը: Արևելյան Հայաստանն ազատ էր անմարդաշխատ անհրնկալներից և քիչ մտահոգվելու բան կար այս հատվածի հայության ճակատագրի համար, բայց քանի որ առհասարակ «քաղաքականության կյանքը ևս ենթարկվում է բնական կանոններին», ապա նրանք բացառված չէին հատվածում՝ ի վերջո երկու հատվածներում ինքնուրույն քաղաքական կյանք ստեղծելու գաղափարի իրականացումը:

Ահա թե ինչու ազգային-պահպանողականները միշտ և շարունակ ոգևորվում էին ազգային-ազատագրական շարժումների փաստերով և հնռանկարներով: Սակայն ոգևորվում էին՝ շազատագրվելով անվճռականությունից ու կասկածներից. չլինի՞ թե ավելորդ արյուն թափվի, մերը շարժումներն սկսվեն՝ հայերը կարո՞ղ կլինեն դիմագրավել մահմեդական տարրի ֆանատիզմին... հարցեր էին սրանք, որ շարունակ ծառանում էին շարժման ղեկավարների առաջ: Իվերջո, ազգային-պահպանողականները ձևակերպում են իրենց գործողությունների տակտիկան. պետք էր դիմել զենքի, ոտքի հանել ժողովրդին, սակայն պայմանով, որ ռուսական կայսրությունը կանգնած լիներ հայության թիկունքում: Ընդունք ցանկանում էին, որ կրկնվեր բուլղարական հանդուգնալուծումը, ցանկանում էին արժանանալ բուլղարացիների բախտին, չերկնչելով արյուն թափելու հեռանկարից: Ռուսաստանը, սակայն, չէր կարող կանգնել այդ շարժման դիրքերում. դիվանագիտական բավիղներում ցարիզմն առաջնորդվում էր բազում այլ հաշիվներով, որոնց թվում չէր նշմարվում հայկական «չնչին» հարցը: Բայց ոտնահարված էր ոչ միայն հայկական հարցը: Ռուսաստանի բազմազգ ժողովուրդները նույնպես տառապում էին ցարիզմի լծի տակ: Այդ օրերին երկրում ստեղծված քաղաքական

---

[165] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի անձնական [1890] նամակից:

վիճակը հետևյալ կերպ է բնութագրված «Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմության» մեջ. 1905 թվականի հեղափոխության նախօրյակին «կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումը Ռուսաստանում կրկնապատկվում էր ցարական ինքնակալության կամայականությամբ, որը ճնշում էր այն ամենը, ինչ կենդանի էր ու առաջադիմական։ Շահագործողների շահերին պահապան էին կանգնած բանակը, ոստիկանությունը, դատարանը, ցարիզմի ողջ պետական սիստեմը։

Ճնշման բոլոր՝ կալվածատիրական, կապիտալիստական, ազգային ձևերի զուգակցումը ինքնակալության ոստիկանական բռնակալության հետ, անտանելի էր դարձնում ժողովրդական մասսաների դրությունը և առանձնապես սուր ու խոր բնույթ էր հաղորդում դասակարգային հակասություններին»[166]։

Այդ հակասությունների լուծումը իր խնդիրն է դարձնում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, որն իրեն զորավիգ էր ընտրել երկրի ամենահզոր ուժը, ռուսական բանվոր դասակարգին։ Եվ այդ հասկանալի է. «Միայն բանվոր դասակարգն էր հետևողականորեն պայքարում ամեն տեսակ ազգային ճնշման դեմ, ցարիզմի կողմից ճնշված ազգերի լիակատար ինքնորոշման համար»[167]։

Սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, Անդրկովկասում գործում էին նարոդնիկական առաջին խմբակները, որոնք ոչ միայն ռուսական համանման խմբակների հետ պայքարում էին միևնույն նպատակների համար, այլև մասնակցում էին արտասահմանում գործող ռուս վտարանդիների նարոդնիկական խմբակների աշխատանքներին[168]։

1881 թ. Մոսկվայի հայ ուսանողների հիմնադրած «Հայրենասերների միություն» անվեղար կազմակերպությունն ուղիղ դծով առնչվում էր ռուս հեղափոխական նարոդնիկության դաշտափարախոսության հետ։ «Ազատության ավետաբեր» իրենց թերթով խմբակը հայ երիտասարդությանը կոչում էր սոցիալական և ազգային ազատագրական պայքարի։

«Սերտ շփման մեջ լինելով ռուս նարոդնիկների հետ,— գրում է Ս. Բարսեղյանը,— «Հայրենասերների միության» անդամները իրենց

---

166 «Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմություն», Երևան, 1963, էջ 96։

167 Նույն տեղում, էջ 97։

168 Տե՛ս Ս. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, գիրք 1, էջ 135—139։

ազատաբաղձությամբ ոգեշնչում էին աշխատավորներին, սովորեցնում դասեր քաղել առաջավոր ժողովուրդների հեղափոխական փորձից, անձնվիրաբար ծառայել ազատության վսեմ գործին»[169]:

Հայ իրականության մեջ (Ալեքսանդրապոլում և Մեծ Դարաքիլիսայում) 70-ական թվականներին առաջին համարձակ քայլերն են անում հայ մտավորականներ Ա. Կրիտյանը, Գ. Խոսրովյանը և Հ. Բալասանյանը, որոնց հիմնադրած «Բարենպատակ ընկերությունը» և «Կանաոր հայրենյաց սիրո» խմբակը նոր ոգի են հաղորդում գավառի հայ իրականությանը, ազգային դեմոկրատական գաղափարներով տոգորում հայ երիտասարդներին[170]:

Ավելի ուշ, հայ դեմոկրատ գործիչները կապվում են Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խմբակի հետ, ծանոթանում մարքսիստական գրականությանը, մասնակցում խմբի բանավեճերին, սկսում թարգմանել Մարքսի և Էնգելսի աշխատությունները[171]: Երբ Վ. Ի. Լենինը 1895-ին Պետերբուրգի բանվորական մարքսիստական խմբակները միավորեց «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» կազմակերպության մեջ, հայ առաջավոր երիտասարդները կողմնորոշվեցին դեպի ռուսական սոցիալ-դեմոկրատական հեղափոխական այդ կազմակերպությունը:

Առաջին հայ մարքսիստներ Բ. Կոնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ս. Ավետիսյանը, Հ. Մելիք-Հովսեփյանը գործել են այդ կազմակերպության կազմում, հայ իրականության մեջ պրոպագանդել մարքսիզմի գաղափարախոսությունը[172]: Հայկական մարքսիստական առաջին խմբակների հիմքի վրա 1898-ին Անդրկովկասում հիմնադրվում է հայ բանվորների՝ «Բանվորական միություն» սոցիալ-դեմոկրատական մարքսիստական առաջին խմբակը, որի շնորհիվ հայ բանվորները տարերային տնտեսական ընդվզումներից անցան հեղափոխական, գիտակցական պայքարի»[173]: Այնուհետև արդեն Ստ. Շահումյանի, Բ. Կոնունյանցի և Ա. Զուրաբյանի նախաձեռնությամբ 1902 թ. կազմակերպվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» և նույն թվականին էլ հիմնադրվում է հայ-

169 Նույն տեղում, էջ 143:

170 Տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:

171 Տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հատոր I, էջ 190—192:

172 Նույն տեղում, էջ 255—259:

173 Նույն տեղում, էջ 282:

կական առաջին մարքսիստական օրգանը՝ «Պրոլետարիատ» թերթը։ Այստեղ հրապարակված հայ սոցիալ-դեմոկրատների միության «Մանիֆեստը» ազդարարելով կազմակերպության համերաշխությունը ՌՍԴԲԿ-ի հետ, մասնանշում է և պայքարի իր ուղղությունը՝ «հանուն Ռուսական պրոլետարիատի՝ շահերի ընդհանրապես և հայկականի— մասնավորապես»[174]։

XX դարի սկզբին գլխավորելով հայ աշխատավորության պայքարը ցարիզմի դեմ, հեղափոխական գործիչներ Ստ. Շահումյանը և Ս. Ազատարյանը իրականացնում էին Նալբանդյանի հեղափոխական ավանդները, ազգային-ազատագրական շարժման գործը միավորելով Ռուսաստանի աշխատավորության քաղաքական պայքարի հետ։ Հայ ժողովրդի ազգային և մշակութային հարցերի լուծումը նույնպես Շահումյանն անբաժան էր համարում նրա քաղաքական ազատության գաղափարից։ Ազգային մշակույթի զարգացման համար նախ պետք է կռիվ հայտարարել «այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ,— գրում է Շահումյանը,— որոնք արգելում են ժողովրդի, այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը»[175], որովհետև «Մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն ու կամայականություն է տիրում,— այնտեղ կուլտուրական գործունեությունը այն չինությունն է, որ կատարվում է ավազի վրա»[176]։ Այնուհետև ծանոթացնելով հայ սոցիալ-դեմոկրատների անելիքներին, Ստ. Շահումյանը նշում է. «Ազգային-կուլտուրական գործունեության փոխարեն... մենք բաղաքական-հեղափոխական կռիվ ենք քարոզում. բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

Կռի՛վ բռնակալության դեմ,
Կեցցե՛ քաղաքական ազատությունը»[177]։

Պատմության զարգացման ընթացքն ապացուցեց Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրի ճշմարտացիությունը։ Միմիայն աշխատավորության հեղափոխական պայքարի

---

[174] Նույն տեղում, էջ 304։

[175] Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 24—25։

[176] Նույն տեղում, էջ 27։

[177] Նույն տեղում, էջ 29։

շնորհիվ ձեռք բերված հաղթանակը ցարիզմի դեմ՝ Ռուսաստանի ժողովուրդներին ազատագրեց ազգային և սոցիալ-քաղաքական ճնշումներից։

Ինչ վերաբերում է ազգային-պահպանողականներին, ապա ընդհուպ մոտենալով լիբերալների քաղաքական դիրքերին, նրանք շարունակում էին կաշկանդված մնալ միապետական սիստեմի կախարդական շրջապծում։ Այդ սիստեմը նրանց ճակատագիրն էր, անխուսափելի ուղեկիցը։ Եվ քանի որ դարավերջին ցարիզմը հեղափոխական շարժումներից իր համար ելք գտնելու ուղղություններ մեջ ուժեղացնում էր հարվածները մասնավոր ազգությունների վրա, ազգային-պահպանողականները սպառելով իրենց հնարավորությունները, XX դարի առաջին տարիներին իջնում են պատմության բեմից։

ԳԼՈՒԽ ՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՍՈՑԻԱԼ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ «ՓՈՐՁ» ՀԱՆԴԵՍԸ

Ա. «ՓՈՐՁԻ» ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

XIX դարի 60-ական թթ. բուրժուազիայի զարգացման համար և ֆեոդալական հարաբերությունների դեմ ծավալված պայքարի բովում հայ իրականության մեջ աստիճանաբար իջած հասարակական հոսանքները ստեղծեցին մամուլի մի շարք օրգաններ: «Հյուսիսափայլ», «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին», «Ճռաքաղ» պարբերականները հակառակ դիրքերից արտացոլում էին դեմոկրատական աշխարհայացքի անցիջում պայքարը՝ ֆեոդալական ճահճացման և կրոնական նախապաշարումների դեմ: «Հյուսիսափայլ» ամսագիրը հայկական լուսավորական շարժման արդասիքն էր. այն հայկական առաջադեմ բուրժուական դեմոկրատական հոսանքի մարտական օրգանն էր, որը մատնանշեց հայ կյանքի և մշակույթի զարգացման դեմոկրատական ուղիները, ստեղծեց մնայուն ավանդույթներ, որոնք անընդմեջ դեկավարեցին հայկական հասարակական միտքը XIX դարի երկրորդ կեսին:

70-ական թթ. տնտեսական վերընթաց շարժումը, բուրժուական հարաբերությունների զարգացման ընթացքը՝ կովկասահայ իրականությունը տարան մեծ վերափոխումների հունով: Այդ հողի վրա արգասավորված հասարակական կյանքի աշխուժացումը ծնունդ տվեց ժամանակի լիբերալ-բուրժուական հոսանքի առաջնագահան օրգան «Մշակ» լրագրին: Բուրժուական հարաբերությունների զարգացումը 70-ական թթ. կեսերին նոր ուժով դրսևորեց նաև ազգային շահախնդրությունների և ազգի միասնության գաղափարների պրոպագանդման անհրաժեշտու-

Բյուրեղ։ Ժամանակը թելադրում էր զարկ տալ ազգային կյանքի կենսունակ ուժերի համախմբմանը, ինքնաճանաչության հասցնել հայ ժողովրդին, նրան հաղորդակից դարձնել եվրոպական քաղաքակրթության նվաճումներին։ Կովկասահայ կյանքի հարաճուն զարգացումը, օտարամուտ կապիտալին դիմագրավելու խնդիրը, դպրոցական գործի վերելքը, կանանց կրթության պահանջը, թատրոնի ստեղծման և այն ապահովելու անհրաժեշտությունը, գրականության զարգացմանը նպաստելու համար մամուլի օրգաններ ստեղծելու և հրատարակչական մարմիններ կազմակերպելու կարիքը՝ նոր ուժեր հայտնաբերեցին հայ իրականության մեջ։

Այս օրերին կյանքի ուղեկիր ստացավ «Փորձ» եռամսյա հանդեսը։

1876 թ. փետրվարի սկզբին Ա. Հովհաննիսյանը Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությանն է ներկայացնում իր դիմումը՝ «Փորձ» հանդեսի հրատարակության վերաբերյալ, դրան կցելով կրթության վկայականը (գիմնազիական դասընթաց ավարտելու մասին) և հանդեսի ծրագիրը։ Այս փաստաթղթերը փետրվարի 6-ին ուղարկվում են Կովկասի դրաքննական կոմիտեի նախագահին՝ դրաքննական կանոնադրության հետևյալ անհրաժեշտ տեղեկացություններ տալու։ Փետրվարի 11-ին Հովհաննիսյանի փաստաթղթերը վերադարձնելով փոխարքայության գրասենյակ, կոմիտեից հայտնում են, թե դրանք բավարարում են թերթ հրատարակելու համար առաջադրվող պայմաններին։ 1876 թ. մարտի 4-ի № 1348 գրությամբ փոխարքայության գլխավոր վարչության գրասենյակից Դրաքննական կոմիտեին սրաշտոնապես հաղորդում են, որ մեծ իշխան փոխարքան թույլատրել է Ա. Հովհաննիսյանին՝ 1876 թ. հուլիսի 1-ից հրատարակել «Փորձ» հանդեսը[1]։

Ա. Հովհաննիսյանը բազմացնում և 1876-ի ապրիլի կեսին տարածում է «Փորձի» հրատարակության հայտարարությունը («Հայտարարություն «Փորձ» ազգային և գրականական եռամսյա հանդեսի»)։ Այդ ծանուցման մեջ հիմնական գծերով նշված էին ապագա հանդեսի նպատակը, ուղղությունն ու ծրագիրը։

Հատկորեն ընդգծելով այն ճշմարտությունը, որ ամեն ազգի «հայոց նեղիա կյանքի զարգացման կարևորագույն գործոններից են», խմբագրությունն իր խնդիրն է համարում հրատարակվելիք ամսագրի

---

[1] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցուցակ Ա, գործ 243։

միջոցով օժանդակել ժողովրդի «լուսավորության գործին», բավարարել նրա ընթերցասիրության պահանջներն ու մտավոր պիտույքները: Նա արժանին է համարում «Հյուսիսափայլ» և «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականներին՝ հայ ժողովրդի բարոյական դաստիարակության ասպարեզում նրանց ունեցած վաստակի համար և նպատակադրվում է շարունակել նրանց սկսած գործը[2]:

Հանդեսի ուղղությունը բխում էր խմբագրի համոզմունքներից և հիմնականում հանգում էր ազգայնության գաղափարի պաշտպանությանը: Ազգությունները պատմական կատեգորիա են և պիտականորեն հիմնավորված է նրանց «ինքնուրույն մտավոր զարգացման, ինքնուրույն բարոյական կյանք ունենալու իրավունքը»: Աբ. Հովհաննիսյանը հայտնում է այն միտքը, որ իրենց պատմական անցյալով և ներկա վիճակով հայերը բոլոր նրաշխիքներն ունեն ինքնուրույնաբար զարգանալու համար:

Ազգային կյանքի վերելքի ապահովման, ժողովրդին ժամանակի պահանջների մակարդակին հասցնելու համար, ինչպես 60-ական թվականների լուսավորիչները ռուս իրականության մեջ, ինչպես հյուսիսափայլյան գործիչները, «Փորձի» խմբագրությունը ևս վճռական նշանակություն է տալիս եվրոպական քաղաքակրթության նվաճումների յուրացմանը: Այնուհետև ընդգծելով ևս մի գործոնի՝ եկեղեցու դերը հայության կյանքում, «Փորձի» խմբագիրն այն միտքն էր հայտնում, թե պետք է ջանա «օգնել հոգևորականությանը՝ բարձրանալ յուր սուր աստիճանից»:

«Փորձի» ծրագիրը կազմված էր ինը բաժիններից համար, որոնք լրնդգրկում էին բազմաթիվ հարցեր: Առաջին բաժինը, որը միաժամանակ բնութագրում էր հանդեսի ընդհանուր ուղղվածությունը՝ նվիրված էր հայկական և թարգմանական գրականությանը: «Ազգային ու գրականական» պարբերաթերթի երկրորդ բաժինը նվիրված էր պատմական պրոբլեմատիկային և ենթադրում էր հոդվածների հրատարակում հայոց, ռուսաց և ընդհանուր պատմությունից: Գրաքննադատության և մատենագիտության բաժինը ծրագրում էր արձագանքել հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով տպագրված գրական երևույթներին: Ուսումնական և մանկավարժական բաժինները պետք է իրենց նպատակը բերեին հայ ժո-

---

[2] Ի դեպ, դիտակցելով հանձն առած խնդրի ամբողջ ծանրությունը, Ա. Հովհաննիսյանը հայտնում է, թե իր նախաձեռնությունը կլինի մի համեստ վոճռ միայն:

ՓՈՐՁ

ԱՅՓԱՅԻՆ ԵՒ ՖՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՐԱՄՍԵՍԻՑ ՀԱՅԵՐԷՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ I.

ՑՓՐԻՍ
1876.

«Փորձ» հանդեսի տիտղոսաթերթը։

ղովրդի կրթական-լուսավորական շարժմանը։ Ազգային տեսության բաժնում պետք է զետեղվեին հոդվածներ՝ նվիրված հայության առօրյային, նրա վիճակի քննությանը, մշակութային և կրթական հաստատություններին։ Ինչպես ամեն մի ամսագիր, «Փորձը» ևս պետք է ունենար ներքին տեսության, «Այլ և այլք» կոչվող, ինչպես և հայտարարությունների բաժինները[3]։

Ս. Հովհաննիսյանը ճիշտ էր կռահել օրերի մեծ պահանջը։ Արդեն դադարած «Հյուսիսափայլը» և «Կռունկը» կատարել էին իրենց դերը, իսկ «Հայկական աշխարհը» թեև ձգտում էր շարունակել նրանց ավանդույթը, բայց չի կարողանում հասնել նրանց մակարդակին։ Ասպարեզը բափուր էր և միանգամայն ժամանակին հրապարակ էր իջնում «հաստ ամսագրի» լավագույն օրինակը հայ իրականության մեջ. այն պետք է հրատարակվեր երեք ամիսը մեկ անգամ՝ 20—30 մամուլ ծավալով։ «Փորձին» աշխատակցելու էին հրավիրված ժամանակի գրական և հրապարակախոսական կարող ուժերը։ Ծանուցման մեջ հիշատակվում էին հետևյալ անունները. Գ. Բարխուդարյան, Հ. Գեղամյան, Ալ. Երիցյան, տիկին Սրբուհի Երիցյան, Միք. Թամամշյան, Պ. Ղամբարյան, Հ. Ղուկասյան, Ս. Մանդինյան, Հ. Մելիք-Հակոբյան, օր. Գայանե Հովհաննիսյան, Հովհ. Նազարյան, Արշ. Նահապետյան, Գ. Զմշկյան, Ստ. Պալասանյան, Ռ. Պատկանյան, Ալ. Քիշմիշյան։ Հրատարակչական աշխատանքները պետք է գլխավորեր և հանդեսը սրբագրեր Ղ. Աղայանը։

«Փորձի» առաջին համարների հաջողությունն այնքան մեծ էր, որ Ս. Հովհաննիսյանը 1876-ի հոկտեմբերին դիմում է ներկայացնում փոխարքայության գլխավոր վարչության պետին՝ «Փորձը» հրատարակելու ամիսը մեկ անգամ։ Փոխարքայության արած հարցմանն ի պատասխան, գրաքննական կոմիտեն անհարմար է գտնում բնդառաջել Հովհաննիսյանի ցանկությանը, քանի որ «Փորձի» հրատարակված երկու համարները դեռևս ամբողջական գաղափար չէին տալիս հանդեսի ուղղության և բնույթի մասին։ Միմիայն 1878-ի վերջին, երկրին անդրադառնալով Հովհաննիսյանի նոր դիմումին, Գրաքննական կոմիտեն գտնում է, թե քանի որ «Փորձը» բավականաչափ դրսևորել է իր ուղղությունը, խմբագրին կարելի է թույլատրել այն դարձնելու ամսագիր[4]։ 1879-ի սկզբից «Փորձը» հրատարակվում է ամիսը մեկ անգամ։

---

[3] Տե՛ս «Արարատ», 1876, № 5, էջ 158—160։

[4] ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, գիրք Ա, գործ 243։

«Փորձն» իր արծարծած հարցերի լայն շառավիղով և հայ նոր գրականության հանդեպ բացառիկ ուշադրությամբ դուրս էր գալիս մի հոսանքի պարտադրած սահմանափակումներից և անշուշտ, մի քայլ առաջ էր «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրից: Ժամանակի գրական և քննադատական ուժերը համախմբելով «Փորձի» շուրջը, ստեղծեցին մի գրականություն, որն արտացոլում էր 70—80-ական թվականների Կովկասի անտեսական հեղաբեկումների պատկերը և արևմտահայ ժողովրդի ազատագրման քաղաքական բաղձանքները: Ամսագիրն օրինակելի էր և՛ կառուցվածքի կատարելության, և՛ բովանդակության հարստության առումով: «Փորձը»՝ «պարզ ճակատով կարող է ախոյան կանգնել ամեն մի աչքապի եվրոպական պարբերագրություններին»,— գրել է Ռ. Պատկանյանը: «Փորձը»՝ «եվրոպական ամսագրերներուն ամենեն նշանավորներու հետ կրնար մրցիլ թե՛ քանակի, թե՛ որակի կողմե», հաստատում է Մ. Մամուրյանը: Ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլորիեն գրել է. «Ձեր գործը արժանի է տեղ բռնել համանման ամենաբնտիր հրատարակությունների շարքում, որ ունի մեր Արևմտյան Եվրոպան. նա պատիվ է բերում այն ազգին, որ ընդունակ է այսպիսի աշխատություններ արտադրելու և մի բարձր գաղափար է տալիս քաղաքակրթության այն աստիճանի մասին, որին այդ ազգը արդեն հասել է»[5]:

«Փորձ» հանդեսի հրատարակության ժամանակաշրջանը զուգադիպում է ռուս-թուրքական պատերազմին, որը, բնականաբար, սրբագրություններ է մտցնում խմբագրության մշակած ծրագրի մեջ: Այսպես, կովկասահայ իրականության սոցիալ-անտեսական խնդիրները մղվում են առին պլան, իրենց տեղը զիջելով արևմտահայ կյանքի հրատապ հարցերին: Հանդեսի հրատարակության հենց առաջին օրերից, երբ սուլթան Աբդուլ Համիդը Միդհատի սահմանադրության հրատարակումով խաղում է Կոստանդնուպոլսում հրավիրված դեսպանաժողովի խաղաթղթերը, «Փորձի» խմբագրությունը ուշադրությունը բևեռում է արևմտահայ իրականության վրա: Այնուհետև սկսվում է պատերազմը և պատերազմական նյութերի հետ մեկտեղ Ա. Հովհաննիսյանը մեծ տեղ է հատկացնում արևմտահայության տնտեսական կյանքին, երկրի քաղաքական իրադրությանը, բազմակողմանիորեն քննարկում է գավառահայության վիճակը և ժողովրդի հայցած ինքնավարության հեռանկարային հարցերը:

---

[5] «Արձագանք», 1882, № 1:

Կովկասահայության տնտեսական կյանքին «Փորձի» աշխատակիցները թեև նվիրել են մի քանի հոդված միայն, բայց սակավաթիվ այդ հոդվածները շոշափում էին ժամանակի ամենասուր պրոբլեմները։ Հետևֆորմյան Անդրկովկասի գյուղերը արյունաքամ էին լինում հողազրկությունից։ Կաշառակերության, վաշխառության, գյուղացիական ձեռքերի արտագնացության փաստերը հայ գյուղերի առօրյան էին, այն մաշող հոգսերը, որոնցից ազատվելու ոչ մի ելք չկար։

«Փորձի» աշխատակից Գ. Քուշարյանցը «Լոռու գյուղական կյանքից պատկերներ» իր հոդվածում քննության է առնում Անդրկովկասի հայության կյանքը քայքայող երկու խոշոր ագենտները—կաշառակերությունը և վաշխառության հարցը[6]։ Ֆեոդալական հողատիրական հարաբերությունները քննադատված Ս. Ն.-ի «Գուգարաց աշխարհ» ճանապարհորդական նոթերում[7]։ Խոսելով այն մասին, որ հողերը Գուգարքում մեծ մասամբ պատկանում են Օրբելյան իշխանին, «Փորձի» աշխատակիցը անթաքույց դժգոհությամբ է արձանագրում և այն, որ Գուգարքի հողամասերի մի մասն էլ Վորոնցովի փոխարքայության ժամանակ անցել էր Կովկասում վերաբնակեցված մալականներին։ Հոդվածագիրն այն միտքն է հայտնում, որ հայ գյուղերը (օրինակ Շուլավերը) հող ունենալու դեպքում կարող էին մրցել գերմանական գյուղերի հետ և բարեկարգել իրենց տնտեսությունները, բայց նրանք օրն օրին զրկվում են իրենց պապենական հողերից, ջուր չունեն ոռոգումների համար և առհասարակ զուրկ են տեղական վարչության պաշտպանությունից։

Մի այլ ծավալուն ուսումնասիրության մեջ «Փորձի» հոդվածագիրը ընդհանուր ակնարկ է նետում Թիֆլիսի շրջակա գյուղերի վիճակի վրա[8]։ Այստեղ հանդամանալից քննության է ենթարկված թավադների և զանազան իշխանական տների հողատիրական իրավունքների հարցը, մի բան, որ գյուղացիների «տնտեսական և բարոյական թշվառության աղբյուրն է»։ Հոդվածագիրն ընդգծում է, որ հին ժամանակների բռնություններն ընդարմացրել են ժողովրդին։ Նա չէր կարող ուրի կանգնել այդ սարսափական չծի դեմ (որ «շատ բնական բան կլիներ»), որովհետև գյուղացիները զարդացած չէին և «շատ հնազանդ էին իրանց ճակատա-

---

[6] «Փորձ», 1880, № 4 (Հավելված)։

[7] Պետք է ենթադրել, որ «Փորձի» աշխատակից Արշակ Նահապետյանն է։

[8] Ստորագրված է «գյուղացի»։

դրին»։ Միայն Իուսաստանի հովանավորության տակ անցնելուց հետո է, որ «ժողովուրդն սկսել է փոքր առ փոքր դուրս գալ հնադարյան ընշվառության, բայց նա դեռևս կաշկանդված է հին բռնակալության ազդեցությամբ, որ ժառանգական ցավի պես ընկնավորել է նորա արյունն ու մարմինը»[9]։ Հզոր Իուսաստանն իր հովանավորության տակ է առնում Վրաստանը և նրան պաշտպանում արտաքին ընչնամիներից, բայց ներքին սարկական վիճակը չի վերացնում, «ըստ որում՝ նույնիսկ Իուսաստանի մեջ էլ միևնույն վիճակի մեջ էր ժողովուրդը»։ Ընդհակառակը, ցարական կառավարությունը նոր հնարավորություններ է ստեղծում ազնվականական ինստիտուտի ընդլայնման համար, որի հետևանքով, հազար ու մի կեղծ փաստաթղթերով, ավելանում է ընավաղների և ազնվականների բիվը (նաև հայերի մեջ)։ Արհեստական ճորտացումներն ու բռնությունները պահպանվում են։

1861 և 1864 թթ. ռեֆորմներից հետո նույնպես, ընդգծում է հեղինակը, «ժողովուրդը դարձյալ մնաց յուր նախկին կալվածատերերի ազդեցության տակ և նախկին ստիության և ընշվառության մեջ, որում այսօր և այժմ տեսնում ենք և պատճառը չիմանալով՝ հանդիմանում նորան»[10]։

«Փորձի» աշխատակիցը ապավինելով ռեֆորմներին, հարցի լուծման միակ հուսալի եղանակը համարում է ֆեոդալական հողատիրության ոչնչացումը, այն վիճակի ստեղծումը, «երբ ավատատանության չի լինի և հողը կպատկանա հողագործ դասին»[11]։ Այս հոդվածներում ընրթի աշխատակիցները մեծ ուշադրություն են նվիրում նաև տեղական, ազգային խոցերին։ Այսպես, նշվում է, որ մի շարք գյուղերում դպրոցներ չկան, եղած դպրոցները զուրս են ընկնական տեսուչների ուշադրությունից, քահանաները մտածում են սոսկ իրենց զրպանի մասին, իսկ «գյուղացին, խեղճ գյուղացին ընդ մնա յուր տգիտության մեջ. ի՞նչ փույթ։ Երանի՛ մեզ...»[12]։

Վրաստանի գյուղերում շարունակում են ավելանալ հարկերը, ձրիակեր մոլորակները ծանրանում են գյուղացիության չնչին բյուջեի վրա, իսկ նոր տեսակ ցեցերը ոչ թե մտրակում են մանում գյուղերը, «այլ խայ

---

[9] «Փորձ», 1876/77, № 2, էջ 413։

[10] Նույն տեղում, էջ 417։

[11] Հոդվածն ընդհատված է կախման կետերով. այն անավարտ է։

[12] «Փորձ», 1876/77, № 2, էջ 426։

ու ավետարանով, երկայն ու սպիտակ մորուքներով»։ Դրանք՝ գանգատան հաջորդներ, գործակալներ, քահանաներ ու նվիրակներ «գնում էին գյուղերը ոչ թե քարոզելու, մխիթարելու, ուղիղ ճանապարհ ցույց տալու, վերջապես օգնելու բարոյապես, այլ դարձյալ փո՛ղ, փող և էլի փող ժողովելու»[13]։ Այս ամենի հետևանքով գյուղական տնտեսությունները քայքայվում են և գյուղացիները գնում են քաղաք՝ մշակությամբ զբաղվելու։ Դրանց թիվն անհամեմատ մեծ է, իսկ աշխատանքը քիչ, ուստի քաղաքում հավասար չափով թշվառ են և՛ հայ մշակները, և՛ վրացի բեռնակիրները։ Հոդվածագիրն առաջարկում է զարկ տալ արդյունաբերության զարգացմանը, որը թեև համարում է ոչ ռևալ միջոց, բայց և ընդունելի՝ որպես հողատերերի և գործարանատերերի միջև մրցակցություն առաջացնելու մի գործոն։

Ինչպես նախորդ տասնամյակի հայ հրապարակախոսներին, «Փորձի» խմբագրությանը նույնպես հուզում է Կովկասի արհեստավորության դիրքերի ամրապնդման խնդիրը։ Վաղուց արդեն երկրում ապատոբեն ևս ու մուտ էին անում արտասահմանյան առևտրական տների ներկայացուցիչները, որոնք Անդրկովկասից առատ հումք տանելով, այն մշակում էին արտասահմանյան առաջնակարգ գործարաններում և պատրաստի ապրանքը կրկին թափում Անդրկովկասյան շուկան։ Ինչո՞ւ այդ ամենը չի կարելի մշակել տեղում՝ սեփական միջոցներով, հարց է բարձրացնում «Փորձի» թղթակից Աբիսողում Հովհաննիսյանը։ Չէ՞ որ հայ արհեստավորները և առևտրականները նախկինում փայլել են աշխարհի բազում շուկաներում։ Ինչո՞ւ ուրեմն տալ։ «Թո՛ղ այդ հանճարը զարթնի մեծ և փոքրի մեջ և երկիրը ծածկվի գործարաններով, արհեստները առաջ գրնան, երկրագործությունը զարգանա և կառավարչական հանճարն էլ կարողանա օգուտ քաղել նորանից։ Թո՛ղ երկրի բերքերը, նորա գետակների ուժերը ու խելքը նախ յուր երկրի շահերին ծառայե»[14]։ Լույս և գործ,— կոչ է անում հոդվածագիրը, սրանց միջոցով ևնթադրելով կենսունակություն հաղորդել քայքայվող գյուղատնտեսությանն ու Կովկասի արհեստավորական դասին։

«Փորձի» խմբագրին մինչև ամսագրի դադարումը այլևս առիթ չի ներկայանում անդրադառնալ Կովկասի հայ ազգաբնակչության սոցիալ-

---

[13] Նույն տեղում, էջ 423։

[14] «Փորձ», 1877/78, № 4, էջ 318։

տնտեսական հարցերին։ Պատմական իրադարձությունների թելադրանքով ամսագիրը կարուկ շրջադարձ է կատարում դեպի քաղաքական հրապարակախոսությունը։

Բ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին և դրան հաջորդած մի քանի տարին Ա. Հովհաննիսյանը հիմնականում քննարկում էր արևմտահայության ազատության, պատերազմի առիթով քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ նաև նրա՝ ինքնավարության ձեռք բերելու կենսական հարցը։ Այդ պահանջի իրավական ակունքները հիմնավորելու և հայության թշվառությունը ցույց տալու համար, Հովհաննիսյանն իր ամսագրի էջերում ներկայացնում է Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքում առկա ճգնաժամը։ «Փորձը» պատկերում է այդ հատվածի հայության աղքատությունը, նրա նկատմամբ կիրառվող անմարդկային հարստահարությունն ու բռնությունները։ Արդարության հարկը պահանջում է ասել, որ վերը հիշված հարցերը լուսաբանվում են այնքան բազմակողմանիորեն, որ «Փորձը» այսօր կարելի է համարել անցյալ դարի վերջին քառորդի սկզբի Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական դրության ուսումնասիրության կարևորագույն և շատ հավաստի աղբյուրներից մեկը։

Ինչպես 1876/77 թ. «Փորձի» երկրորդ համարում Ա. Հովհաննիսյանը Հայաստանի քաղաքական ազատության պահանջը իրավական հիմքի վրա խարսխելու համար քննության է առնում Արևմտյան Հայաստանի բարոյական և տնտեսական տագնապալի կացությունը։

«Փորձի» տեսաբանն այն միտքն է հաստատում, թե համայն ազգերի բնականիքում ընդունվելու համար յուրաքանչյուր ազգություն պետք է նախ ապացուցի, որ իր աշխատասիրությամբ և ստեղծած արժեքներով ինքն ընդունակ է ազգ կոչվելու։ Այդ իրավունքը նվաճելու համար արևմտահայությունը պետք է կուլտուր-լուսավորական լայն գործունեություն ծավալի, ստեղծի կրթական և լուսավորական հիմնարկների լայն ցանց, բանկերի և գյուղատնտեսական ընկերությունների միջոցով ջանա ապահովել ժողովրդի նյութական բարօրությունը։ Սակայն «Փորձի» խմբագրությունը, ինչպես և Գր. Արծրունին, անհրաժեշտ է համարում նախ ապահովել աշխարհագրական Հայաստանի պատմական և բարոյական իրավունքները։ Հայոց վերածննդությունը պետք է առաջ տարվի

բուն հայկական տարածքում և ոչ Կ. Պոլսում կամ Զմյուռնիայում։ Այն ազգը, որը չունի յուր երկիրը, ազգ չի համարվում։ Հոդվածագիրը արևմտահայ մտավորականության ուշադրությունը հրավիրում է Վանի և Կարինի վրա, նշելով, թե քանի դեռ հայ գործիչները այդ երկրամասերը համարում են սոսկ զավառներ, «մենք իրավունք չունինք մեր ազգը ազգության կարգը դասել և նորա համար քաղաքական իրավունքներ պահանջել։ Հայաստանը Բարձրագույն Դռան առաջ պիտի Հայաստան ընդունվի և հայերի մասին խոսելիս՝ այդ երկիրը նոցա հայրենիքը պիտի համարվի և նոցա իրավունքների բունը»[15]։ Ապագայում հաջողության հասնելու համար հոդվածագիրը հրապարակախոսներից պահանջում է նաև՝ ներկայացնել ռևալ Հայաստանը՝ իր հոգևորով, ցավերով և հույսերով։

«Փորձի» մեսարանը վերոհիշյալ իր հոդվածում մեկ առ մեկ թվարկում է իրական Հայաստանի անդրամանելի ցավերը և միաժամանակ փորձում դեղատոմս նշել այդ ամենի դեմ։

«Տաճկական Հայաստանի ժամանակակից ցավը՝ գաղթականությունն է,— գրում է նա,— սա այնպիսի ցավ է, որ եթե շուտով նորա առաջքը չառնվի, գուցե հետո ուշ լինի»։ Հոդվածագիրն առաջարկում է ընկերություններ ու բանկեր հիմնադրել, ճանապարհներ շինել, դիմել եվրոպական դրամատներին և կանխել գաղթականության աճը։ Նույն հեշտությամբ էլ նա միջոցներ է առաջարկում մյուս խոշոր ազետի՝ հայության կյանքի և գույքի անապահովության դեմ։

Երրորդ ցավոտ խնդիրը, պետական պաշտոնյաների կամայականությունները, կապվում էր օսմանյան կառավարության քաղաքականության հետ։ Եթե կառավարությունը չի ուզում զսպել իր զանցառու պաշտոնյաներին, գրում է հոդվածագիրը, ապա ժողովուրդը պետք է մտածի ինքնապաշտպանության հնարների մասին։ «Փորձի» մեսարանը հայերին հորդորում է չթողնել հայրենի երկիրը և սուր ու հրացան գործածել՝ խաղաղ ապրուստ գտնելու համար։ Ժողովրդին կոչելով ակտիվ ինքնապաշտպանության, նա գրում է.

«Ամենայն իրավունք և բարություն աշխարհիս մեջ, ասում է գերմանացի իրավաբան Իհերինգը, ատացվում են կռվով։ Միայն այն իրավունքը և բարությունը թանկ և հաստատուն են ժողովրդի մեջ, ավելացնում ենք մենք, որ հենց միայն կռվի միջնորդությամբ են ատացվել։

---

[15] «Փորձ», 1876/77, № 2, էջ 407։

Ձոխով ասելով,— բացահայտում է միտքը հոդվածագիրը,— չենք ուզում հասկանալ հեղափոխական միջոցները, ապստամբությունը և այլն։ Հայերի դրությունը Թուրքիայում, նոցա վայելած իրավունքներն ու արտոնությունները դեռ այնքան են, որ առանց ապստամբության դիմելու, կարող են բարվոքել իրանց դրությունը»[16]։

Սակայն, «Փորձի» միևնույն համարում Ա. Հովհաննիսյանը հրապարակում է այնպիսի հոդվածներ, որոնք ապացուցում էին թե Թուրքիայում «հայության վայելած իրավունքներն ու արտոնությունները» շատ կասկածելի հիմքեր ունեին։ Այսպես, տպագրվում է Մ. Խրիմյանի «Վանդույժի» դրախոսությունը, որը պատկանում էր Պալասանյանի գրչին։ Այս հոդվածում դրախոսը հրապարակում է Խրիմյանի գրքի այն հատվածները, որոնք հայությանը նրա ընդարմության վիճակից դուրս էին կոչում։ Խոսելով այն մասին, որ Արևմտյան Հայաստանում հայերի անսահման հավատարմությունը չի գնահատվում, Խրիմյանը նշում էր, թե այդ հավատարմությունը հայերին անբարբառ դիակ է դարձրել։ Պետք չէ այդքան սարկանալ և աղարտել մարդկային պատիվը, ասում է նա։ Խրիմյանի «Դրախտի ընտանիքի» մասին գրած դրախոսությունը նույնպես Պալասանյանը դարձնում է միջոց՝ քննարկելու համար արևմտահայության սարկական վիճակը։ «Փորձի» տեսաբաններին կյանքը սովորեցնում էր, որ կուլտուր-կրթական միջոցառումները երկիրը բարեշինելու շատ անհուսալի ծրագրեր էին, երբ այդ երկրում իշխում էր բռնությունն ու թալանը։ Հետագայում Ա. Հովհաննիսյանը հրապարակում է մի շարք պերճախոս փաստաթղթեր, որոնք ներկայացնում էին գավառահայության կյանքի ստույգ պատկերը։

Օգտվելով այն առիթից, որ Ներսես պատրիարքը երեք վարդապետ էր գործուղել գավառները՝ գաղթականության առաջն առնելու և վիճակագրական տեղեկություններ հավաքելու համար, Հովհաննիսյանը հրապարակում է նրանցից մեկի՝ Սրվանձտյանցի տեղեկագիրը։ Այս տեղեկագրում նույնպես, իբրև հայության առօրյա կյանքի մեծագույն աղետներ, հիշատակվում են՝ դատական ապօրինությունները և հայերի իրավազրկությունը դատարաններում, հարկահավաքների անգթությունները, ոստիկանների բռնությունները։ Սրանց ավելանում էին և ապիկար հայ

---

[16] Նույն տեղում, էջ 411։

առաջնորդները, որոնցից ոմանք իրենց վատ վարքի պատճառով էին ըշվել դավառները:

1879-ին Կ. Պոլսում տպագրվում է վերոհիշյալ վարդապետներից երկրորդի՝ պարտիզակցի Վահանի «Խոսք դհայրենեաց» հրապարակային դասախոսությունը: «Փորձում» զետեղվում է Պալասանյանի գրախոսությունը՝ հիշյալ գրքի մասին: Վահան վարդապետը, որ ողջ գործունեությունը ծառայեցրել էր գավառահայությանը, հետևյալ ընդհանրացումն է անում. «Ամենուրեք, ուր հայ մարդը կապրեր, Հոն խավարն ու աղքատություն տիրած էր: Հազարամյա զարհուրելի հարատահարության մը տակ ժողովուրդն ապուշ աղքատ դարձած էր, իսկ ժողովուրդեն վեր եղող դասը բռնավոր կամ բռնավորին գործակից»[17]: Գրախոսը բարձր է գնահատում Պարտիզակցու գրքի հարուստ փաստերը և մեջ է բերում եղրակացությունը. «Ահա այսպիսի սկզբունքի տեր ազգերու և ցեղերու մեջ մեր ողորմելի ազգը հակառակ սկզբունք ունենալով, այսինքն գողություն ու սպանություն չընել, մեկն եթե երեսին ապտակ մի զարնելու լինի, մյուսը դարձնել, կապրի: Այս նկատմամբ է, որ ես ևս տարբեր համոզում ունեցած եմ Ավետարանի բարոզության նշանակին վրա, վասնզի լեռնական ժողովրդյան մի ձևվները բարոյապես կապկելը, երբ մյուսներն արձակ ու ազատ ձգված (թողված) են, արդարության դեմ ոճի՞ր է»[18]: Պալասանյանը ողջունում է Վահան վարդապետի ընդվզումը Ավետարանի պատվիրանների դեմ և բարձր գնահատում գրախոսվող գրքի ճանաչողական նշանակությունը: «Այդ գիրքը,— գրում է նա,— սրբազան պարտավորություն է դնում ամեն ճշմարիտ հայի վրա, ատոծո տաճարի բեմից սկսած մինչև դպրոցական ամբիոնը, ամենից առաջ այս երկու բանը հալեցնել հայաստանցու ականջին. Ա. Թե ուսումը անպետք ու անօգուտ չէ մարդուս համար. Բ. Թե Ավետարանը ոչ ոքի չի արգելում յուր մարդկային և ազգային իրավունքները պաշտպանել: Այն օրը, որ այս ճշմարտությունները մուտ կգտնեն վնջին գեղջուկի խրճիթը, կարող ենք վստահ լինել, Թե փրկված ենք»[19]:

1876 թ. Կ. Պոլսում հրատարակվում է «Տեղեկագիրք գավառական հարատահարության» (պաշտոնական հրատարակություն ազգային պատրիարքարանի) աշխատությունը: Բաֆֆին այդ նյութերի հիման

---

[17] «Փորձ», 1880, № 1, էջ 143:

[18] Նույն տեղում, էջ 146:

[19] Նույն տեղում, էջ 148:

վրա դրում է մի ծավալուն հոդված, որն ուղարկում է «Փորձին», բայց հոդվածը չի տպագրվում: Այն ուղարկելով «Մշակին», Րաֆֆին տողատակում դրում է. «Այժմ, թեև փոքր ինչ հնացած, հրատարակում ենք, սույն տալու համար Տաճկաստանի հայոց թշվառ դրությունը մի կողմից և «Փորձի» ուղղությունը նրանց վերաբերյալ մյուս կողմից»[20]: Ինչո՞ւ Ա. Հովհաննիսյանը չի օգտվում Րաֆֆու ծառայությունից: Վճռական հարցում Րաֆֆու և «Փորձի» խմբագրի հայացքները հեռանում էին իրարից: Իր հոդվածում Րաֆֆի-Մելիքզադեն հստակորեն առաջ է քաշում զենքին դիմելու հարցը: Հայերը չեն մտածում, գրում է նա, որ իրենց փրկությունն արյան մեջ է: Նրանք չգիտեն, թե «բացի ստրկական խոնարհությունից կա և մի ուրիշ բան անձնապաշտպանության համար՝ զենքը»[21]: Այնուհետև Րաֆֆին քննադատում է պատրիարքարանի գործունեության ոճը: Փոխանակ ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելու կալվածական խնդիրների վրա, քանի որ 1872-ից սկսած քոչվոր քրդերը գալիս և հափշտակում են հայկական գյուղերի հողերն ու վանքապատկան կալվածքները, պատրիարքն իր բողոքները կառուցում է առանին թալանի և հարստահարությունների մանրիկ փաստերի վրա. Րաֆֆին աչքակապություն է համարում պատրիարքի այն շրջաբերականը, որտեղ գրված էր, թե իբր 4 միլիոն հայերը գոհ են իրենց «բարեխնամ կառավարությունից»: Կ. Պոլսի Ազգային Սահմանադրությունը նա համարում է մի խաղալիք, որ խորամանկ դայակը դրել է երեխայի ձեռքին, նրան հանգիստ պահելու համար: Եվ ամեն տարի հայ էֆենդիները, գոհ այդ խաղալիքով, տոնում են իրենց ողորմելի պատրանքի տարեդարձը: Կառավարությունը, գրում է նա, «այժմ պատրաստել է մի ավելի վիթխարի խաղալիք իր հպատակների ձեռքը տալու համար՝ իր պետության մեջ ընդհանուր սահմանադրական վարչություն»: Ա. Հովհաննիսյանը, սակայն, որոշակի հույսեր էր կապում Միդհատի սահմանադրության հետ, իսկ Ազգային սահմանադրությունը համարում էր արևմտահայության ազգային կյանքի զարգացման հուսալի երաշխիքը: Զենքի հարցում այդ օրերին նա չափավոր պահանջներ էր դնում, գտնելով, թե պետք է միայն ինքնապաշտպանության սեփական միջոցներ ունենալ: Արևմտյան Հայաստանը Հովհաննիսյանը համարում էր տեղի հայության վերջին

---

[20] «Մշակ», 1878, № 145—150:

[21] Նույն տեղում, № 148:

և միակ հանգրվանը, որտեղ պետք էր պայմաններ ստեղծել, որպեսզի նա շարունակեր ծխել իր նախնիների հազարամյա կյանքի ծխանը:

Բաֆֆին, ելնելով իրերի առկա վիճակից, միանգամայն թերահավատ էր Արևմտյան Հայաստանի ապագայի նկատմամբ և հանդում էր «Փորձի» խմբագրության համար անընդունելի եզրակացության: «Հայի ապագան Տաճկաստանումն է, ասում են կարճատեսները: Մենք չենք հասկանում, թե ինչ ապագա կարող է լինել մի երկրում, ուր կյանքի և կայքի ապահովություն չկա: «Հետո կլինի», երևակայում են կարճատեսները: Ով որ չէ խոստովանում մահմեդականության կլանող և ոչնչացնող բնավորությունը, նա ուրանում է պատմությունը. բայց ուրանալ պատմությունը, նշանակում է ուրանալ ճշմարտությունը:

Որևիցե ժողովրդի համար ոչինչ բախտավոր ապագա գուշակել չէ կարելի, քանի որ նրա ապրուստի պահանջները հաստատուն հիմքերի վրա կայացած չեն, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում է և կլանվում մի ուրիշ և ավելի զորեղ տարրից: Ասիական Տաճկաստանի հայը ապահովված դրություն չունի և դրա մեծ ապացույցն այն է, որ նա իր տան մեջ ապրուստ ճարել չի կարողանում, և ինչ որ էլ վաստակում է, նրա ձեռքից խլում վեր, և նա միշտ մնում է աղքատ ու սոված, և միշտ ստիպված է պանդխտության մեջ հաց որոնել: Տաճկաստանի հայը երեխայ և տատանյալ վիճակի մեջ է ապրում: Այսպիսի տունկը արմատ ձգել կարող չէ և շուտով կչորանա»[22] (ընդգծումը մերն է— Մ. Մ.):

Նույն թվականին Ա. Հովհաննիսյանը տպագրում է Ստ. Պալասանյանի «Գաղթականության խնդիրը» ծրագրային հոդվածը: Հայը Արևմտյան Հայաստանում չի կարողանում իր ապրուստը հայթայթել: Նա հարկադրված է պանդխտել, ասում է Բաֆֆին: Հայը պետք է մնա իր պապենական օջախում, հայրենական հողը, ասում է Պալասանյանը: Իր ուսումնասիրության մեջ Պալասանյանը խոսում է այն մասին, թե հնուց ասած ինչ գաղթականություն է ներհոսել հայոց աշխարհը, հայերը ո՞ր դարերից և ի՞նչ շարժառիթներով են թողել Հայաստանը: Զուգահեռ է անցկացվում գաղթված հայերի և Ամերիկա գաղթած նորբնակների անտեսական կյանքի օրինաչափությունների միջև: Պալասանյանի խնդիրը մեկն էր, պատմական փաստերի միջոցով հաստատել կենսական այն ճշմարտությունը, թե ազգությունները չպետք է գաղթեն:

---

[22] Նույն տեղում, № 149:

ինչ վերաբերում է հայերին, ապա հոդվածագիրը նրանց հորդորում է բնավ չգաղթել: «Չէ՛, պանդխտասեր հայ, բա՛վ է որքան քո հայրերն ու պապերը թափառեցան օտար երկնքի տակ. իմացի՛ր, որ եթե դու էլ և բնդ նայելով քո որդիքն էլ աչքերդ անդադար հայրենիքից դուրս ունենաք, օր կգա, որ ձեզանով ոչ միայն ձեր ազգությունը կորուստ կունենա, այլև մարդկությունը, որին յուրաքանչյուր ազգ, նախախնամությունից վիճակված բախտի համեմատ պարտավոր է ծառայել»[23]: Պալասանյանն այնուհետև հանգանք և ապերախտություն է համարում պանդրխտել վերջին տարիներին, երբ... սակայն նրա միտքն անավարտ է մնում: Կասկած չի կարող լինել այն բանում, որ հոդվածն ընդհատել է դրաքննիչի միջամտությունը:

Հրապարակելով ձեռքի տակ եղած պատրիարքարանի տեղեկագրերի նյութերը, Ա. Հովհաննիսյանն այնուհետև որոնում և տպագրում է այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք նվիրված էին Արևմտյան Հայաստանին: 1879 թ. նա տպագրում է Մ. Անանյանի «Վանա շրջակայքները» հոդվածը, որը նվիրված էր Վան քաղաքի և նրա շրջակայքի նկարագրությանը: Այստեղ խոսվում է տեղի պատմական հուշարձանների, Վանա լճի ու նրա բարեմասնությունների, բնակչության խտության, կենցաղի, աշխատանքի պայմանների մասին. կրկին հատուկ ուշադրություն է նվիրվում պանդխտության հարցին:

Վանը հայության օրրանն էր, նրա ազնվության հնագույն վկայականը, Վանն իր մեջ ամփոփում էր ազգի կորիզը և նրա առանձնահատկությունները. Վանը Արևմտյան Հայաստանի մայրաքաղաքի կշիռ ուներ. ահա թե ինչու, ամեն քայլում հայ մամուլը բարձրացնում էր Վանի հնությունները ճանաչելու և դրանք պահպանելու խնդիրը, ուշադրության կենտրոնում պահում ժողովրդի մտավոր զարգացման անհրաժեշտության հարցը:

Բեռլինի կոնգրեսի ավարտից մեկ տարի հետո Կարինի մտավորականները նախապատրաստում են բարեզորոգումների ծրագրի նախագիծ և այն ներկայացնում Կարինի և Վանի նահանգների նոր կոմիսարներին, որոնք իրը պիտք է իրականացնեին բարեզորոգումները: Եթե նույնիսկ ծրագիրը չիրականանա, դրում են առաջարկում դրա հեղինակները, ապա դարձյալ այն նշանակալից երևույթ է, «բուն ժողովրդական ձըգ-

[23] «Փորձ», 1877/78, № 4, էջ 200:

տումների տարտահայտություն»։ Ա. Հովհաննիսյանը ձևոք բերելով ծրագրի ձեռագիրը, այն հրապարակում է «Փորձում»[24]։

1877—78 թթ. պատերազմի ընթացքում և դրան հաջորդած առաջին տարիներին հայ հրապարակախոսների և մտավորականության ուշադրությունը Կարինի և Վանի նահանգներից հետո անմիջապես դառնում էր դեպի Կիլիկիա։ Պահպանել Կիլիկիայի համեմատական ազատությունը և համեմատական անկախությունը՝ յուրաքանչյուրի մտահոգության առարկան էր։ Հովհաննիսյանը նույնպես բազմաթիվ էջեր է տրամադրում այդ հարցին, վեր հանում Կիլիկիայի հայության թշվառության պատկերը, խոսում պատմական հուշարձանների ավերման, հնամենի քաղաքների ամայացման, ճանապարհների ու բնական հարստությունների անտերության մասին։

1879-ին «Փորձում» հրապարակվում է Մանդրոյի «Կիլիկիա» ուսումնասիրությունը, որը գրված էր անգլիացիների կողմից Կիպրոսը գավթելու առիթով։ Հեղինակը միաժամանակ փորձում էր պարզել այն խոստումնալից հեռանկարը, որ իբր պետք է ստեղծվեր Կիլիկիայում՝ նոր հարևանության հետևանքով։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հոդվածի պատմական տեսության բաժինը, որը վերաբերում էր հայկական կիլիկյան պետականության պատկերը։ Հեղինակն այնուհետև նշում է, թե ինչպես են հին փառքին հաջորդում մոռացումն ու ավերածությունները։ Հին ճանապարհները ավերվում են, անտառները հատվում, այրվում, կրծվում, ոչնչացվում։ Հեղինակը համակրանքով է խոսում զեյթունցիների հերոսական նկարագրի մասին և հույս հայտնելով Կիլիկիայի ապագա վերածնության վերաբերյալ, գրում է. Զեյթունի նոր ապստամբությունը «բավական ապացույց է, թե անկախության ոգին չի մեռել այն մարդոց սրտում, որոնց հռոմեացիք անվանում էին «ազատ կիլիկեցիք», թեև, ինչպես հիշատակում է հոդվածագիրը, այդ ազատ կիլիկիացիների թիվը արդեն իջել էր մինչև 150 հազարի (դրանցից հայեր էին 100 հազարը)։

Ա. Հովհաննիսյանն ակներևաբեն ինչ-որ հույսեր էր կապում անդրադառնալ հեղինակի դատողությունների հետ։ Արդյոք ի՞նչ է սպասում Կիլիկիային... Անգլիայի հարևանությունից հետո Օսմանյան անմարդաբնակ դաշտերը կկենդանանա՞ն շոգեկառքի ազմուկով, Կիպրոսի և Ալեքսանդրեթի ափերում խարիսխ կգցե՞ն Միջերկրականի նավերը։ Ինչ էլ որ լի-

---

[24] «Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» (տե՛ս «Փորձ», 1879, № 9)։

ներ, «Փորձի» խմբագրությանը ոգևորում էր հեղինակի այն հայտարարությունը, թե «մոտ է այն ժամանակը, երբ Կիլիկիան պիտի վերածնի՝ նոր կյանքով ապրելու համար»: Բարեփոխելով Կիպրոսը, Մանդրոյի կարծիքով անգլիացիները պետք է վերանորոգեին և հանդիսակաց Կիլիկիան:

Կիլիկիային նվիրված ավելի հանգամանալից ուսումնասիրություն էր հայ գրող և հրապարակախոս Մևրենցի հրապարակային դասախոսությունը, որը նա կարդում է Թիֆլիսում 1879 թ. ապրիլի 29-ին: Գնահատելով հանրերգ Մանդրոյի հոդվածը, Մևրենցը այն կարծիքին էր, ոսկայն, թե հայ հեղինակներն այլ մոտավորություններ ունենալով՝ բոլորովին ուրիշ դիրքերից պետք է քննարկեն Կիլիկիայի հետ կապված հարցերը: Դասախոսության նպատակն էր՝ Կիլիկիայի 100000 բնակչությանը լուսավորելու և նրա համար փոքրիշատե բարեկեցիկ կյանք ըստեղծելու համար խնդրել Թիֆլիսի մտավորականության օգնությունը: Ա. Հովհաննիսյանը «Փորձում» հրապարակում է Մևրենցի մեծարժեք դասախոսությունը:

Մևրենցը իր ունկնդիրներին և «Փորձի» ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում է լեռնային և դաշտային Կիլիկիայի աշխարհագրական ու կլիմայական պայմաններին ու ժողովրդի սոցիալ-անտեսական վիճակին: Նա հիմնավորապես քննարկում է տեղի քրիստոնյա բնակչության քաղաքական դրությունը և մեկ առ մեկ թվում այն պատճառները, որոնք Կիլիկիայի ազգաբնակչությանը տանում էին դեպի կործանում (հարկահանության քաղաքականությունը, կաշառակերությունը, կրոնական խտրականությունը, դատարանային սխտեմը, սովը, համաճարակները և այլն): Երկրի ավերման, վաճառականության ու արհեստների անկման, ժողովուրդների միջև ստեղծված ատելության բուն պատճառը նա համարում է «կառավարության սխալ և թյուր վարմունքը»[25]:

Մևրենցը Կովկասի հայության ուշադրությունը հրավիրում է Կ. Պոլսում նոր կազմակերպված «Կիլիկյան ընկերության» վրա և խնդրում օգնել նրա լուսավորական ձեռնարկումներին:

Մինչդեռ Մևրենցը, Ա. Հովհաննիսյանը, Կարինի բարեգործությունների ծրագիրը մշակող մտավորականները և Կ. Պոլսի «Կիլիկյան ընկերությունը» բանական ուղիներ էին որոնում փրկելու համար գավառների հա-

[25] Նույն տեղում, № 11, էջ 16:

յությանը, Աբդուլ Համիդի դիվային քաղաքականության մեքենան նոր-րանոր միջոցների էր դիմում՝ աշխարհին մոռացնել տալու և՛ հայկական հարցը, և՛ հայությանը հուզող բարենորոգումների խնդիրը։ Այն բանից հետո, երբ 6 տերությունների դեսպանները՝ բարենորոգումներն իրականացնելու պահանջով միացյալ նոտա են ներկայացնում Թուրքական կառավարությանը, սուլթանն արտաքին գործերի մինիստր Աբդին փաշայի օգնությամբ կեղծում է երկրի բնակչության մասին եղած վիճակագրական տվյալները։ Այդ միջոցով նա վրձռում է թղթի վրա կիսել հայ բնակչության թիվը՝ մինչև հասնելին «հարմար» ժամանակներ՝ սրի օգնությամբ իրականացնելու այդ ծրագիրը։ Թեև Թուրքիայում 40 տարի առաջ էր մարդահամար անցկացվել, որը անսահման թերություններ ուներ, բայց կառավարությունը առանց մարդահամարի, 1880-ի հունիսին ի լուր աշխարհի հայտարարում է, որ հայությունը տաճկական Հայաստանում կազմում է տեղի բնակչության 17 տոկոսը միայն։ Հայ ժողովուրդը խոչվում էր թիկունքից։ Անհրաժեշտություն է ղգացվում պատասխանել դրպարտությանը, պետության հրապարակած սուտին։ Ա. Հովհաննիսյանը շտապով հոդված է պատվիրում. այս անգամ ևս նրան օգնության է հասնում «Փորձի» մշտական աշխատակից, պատմաբան և բանասեր Ալ. Երիցյանը։ Վերջինս, երբ 1878 թ. Կարինում աշխատում էր իբրև ռուսական բանակի շտաբի հատուկ հանձնարարությունների պաշտոնյա, կազմել էր Կարինի վիլայեթի վիճակագրությունը (երբ դեռևս Վանը և Մուշը բաժանված չէին այդ վիլայեթից)։ Այդ նպատակի համար Երիցյանն օգտագործում է օսմանյան կառավարության պաշտոնական տեղեկությունները՝ կազմված զինվորական հարկի համար, հայ հոգևորականների ունեցած տվյալները, որոնց մեջ չէին մտնում քրդերի մեջ ապրող կիսաքուրդ հայերը, ռուսաց գավառապետների տվյալները և իր հավաքած վիճակագրական նյութերը։ Այս ամենի հիման վրա Երիցյանը գրում է իրեն հանձնարարված աշխատությունը ռուսերեն լեզվով[26], որից և «Փորձի» համար պատրաստում է պահանջված հոդվածը։ Անդրադառնալով օսմանյան կառավարության հրապարակած փաստաթղթին, նա գրում է. «Այս տեսակ հայտարարությամբ հիշյալ մահմեդական տերությունը իբր

[26] *Ա. Երիցյան*, Материалы для описания Турецкой Армении, I Эрзерумский вилает, Тифлис, 1884.

[illegible] նվաղեցնում է հայոց իրավունքը քաղաքական և վարչական օրենքների պաշտպանությունը վայելելու... Մի կողմ թողնելով Տաճկաստանի քրիստոնեից խնդիրը, այս անգամ պարտք եմ համարում պնդել, որ օսմանյան պետության հրատարակած հիշյալ թվանշանը ոչ միայն սխալ է, այլև պաշտոնյանների հնարած սուտ»[27]: Այնուհետև նա հրապարակում է իր կազմած վիճակագրական գիտական տախտակը, որից քաղվածաբար մենք ենք բերում վերջնական թվերը:

Կարինի վիլայեթում 1872—78 թթ. բնակվում էին՝

1.162.900 հոգի, որից՝

թուրքեր՝ 214.350	*լազեր՝ 577*
քրդեր՝ 357.578	*թուրքմեններ՝ 866*
ղզլբաշ՝ 41682	*հայեր՝ 498.007*
եզիդիներ՝ 2984	*հույներ՝ 25.516*
պարսիկներ՝ 2745	*ասորիներ՝ 17.400*
կովկասյան լեռնականներ՝ 1.195	

Այսպիսով՝ ոչ քրիստոնյաներ էին 621.977 հոգի և քրիստոնյաներ՝ 540.923 հոգի: Տոկոսային հարաբերությամբ՝ թուրքերը կազմում էին 17½ տոկոս

քրդեր՝ 30½ տոկոս	*կովկ. լեռնցիք՝ 1/10 տոկոս*
ղզլբաշներ՝ 3½ տոկոս	*թուրքմեններ՝ 1/13 տոկոս*
եզիդիներ՝ 1/4 տոկոս	*հայեր՝ 42½ տոկոս*
պարսիկներ՝ 1/4 տոկոս	*հույներ՝ 2½ տոկոս*
լազեր՝ 1/20 տոկոս	*ասորիներ՝ 1½ տոկոս*

ընդամենը՝ ոչ քրիստոնյաներ՝ 53½ տոկոս
քրիստոնյաներ՝ 46½ տոկոս

Արևմտահայության համար վրա են հասնում ծանր ժամանակներ. օսմանյան պետական քաղաքականության օղնում են բնական աղետները: 1879-ի սեպտեմբերին վանից ապրնապալի լուրեր են ստացվում այնտեղ սկսված սովի մասին: Արդար Հովհաննիսյանը «Փորձի» էջերում «սուրբ և անհրաժեշտ պարտականություն» է համարում կոչ անել «ուղ-

---

[27] «Փորձ», 1880, № 6—7, էջ 216:

սիաբնակ հայերին օգնության ձեռք մեկնել և այդ անողորմ պատուհասից ազատել մեր այն եղբայրներին, որոնք այսքան տարիներ դառն նեղությունների դիմանալով, պահպանում են հայրենի հրկիզը, և որոնք նորերումս մոտալոր գեղեցիկ ապագայի հուսով այնքան հետզհետե մեր ամենից սիրտը։ Թողնել, որ մեր եղբարք սովից կոտորվին, նշանակում է թուրքից, քրդից, չերքեզից և ամենավատից վատ լինել։ Պետք խիստ սոսկալական է, հետաձգելը՝ անկարելի»[28]։

«Մշակի», «Մեղվի», «Փորձի» խմբագրությունները դումարներ են հանգանակում և առաքում Վան։ Պարբերաբար տպագրվում են դրամական օժանդակության ցույց տված բազաբացիների ազգանունները։ Կարինում աշխատող Հուբենյանը, որ կովկասյան նվիրատվությունների միջոցով պատրաստվում էր տեղում երկրագործական ուսումնարան բացել, այդ նպատակով հավաքված դումարներից 1000 ռուբլի է ուղարկում Վանի և Ալաշկերտի սովյալներին՝ «իբրև առավել սոսկալական պահանջ։ Սովը շարունակվում է և հաջորդ տարին, քանի որ 1880-ի ամռան բերքը չի արդարացնում սպասված հույսերը։ «Փորձի» 6—7-րդ միացյալ համարում խմբագրությունը կրկին դիմում է ազգայիններին օգնության. «Հայերի արտերը անխնայաբար ոտնակոխ են լինում, հայերին եղած օժանդակությունները դանազան պատրվակներով արգելվում են, քրդերի ասպատակությունները և ավազակությունները օրեցօր սաստկանում են։ Տաճիկը հայերի թիվը հայկական գավառներում իսկ կամենում է 17 տոկոսի հասած տեսնել, ինչպես և հրատարակում է այդ այժմեն իբրև իրողություն։

Ի՞նչ են այս ամենը, եթե ոչ մի սարսափելի պատերազմ հայոց տարրի դեմ։ Հայ ազգը կամենա՝ չկամենա, բայց տաճիկը ասպարեզ է հրավիրում նորան գոյության կռվի։ Շատ բնական է, ուրեմն, որ ամեն երկրի և ամեն գավառության հայերը պետք է աշխատին ամեն ճիգ ու եռանդ օգնել հայաստանյայց հային այս անողոք պատերազմում յուր գոյությունը պաշտպանելու։ Չպետք է թողնենք, որ գալոց տարին ևս սովը շարունակվի Հայաստանում, այդ պիտի նշանակի, ինչպես տեսանք վերի հոդվածից, միլիոնավոր հայերի կոտորած»[29] (ընդգծումները հեղինակինն են)։

---

[23] Նույն տեղում, 1880, № 1, էջ 173—174։

[29] Նույն տեղում, № 6—7, էջ 241։

«Փորձի» նույն համարում զետեղված էր բժիշկ Ավ. Բաբայանի «Սովը և սովի հետևանքները բժշկական տեսակետից» հոդվածը։ Հենվելով Հնդկաստանում տիրող սովի հետևանքների մասին անգլիացիների կազմած վիճակագրության վրա, Բաբայանը սովի ամենավտանգավոր հետևանքը համարում է ծննդաբերության կրճատումը 50 տոկոսով։ «Եթե Տաճկահայաստանում տիրապետող սովը ևս երկրորդ տարին շարունակվի,— գրում է Բաբայանը,— այդ երկրի ազգաբնակչությունը կիսվակես պակասելու վտանգի մեջ կլինի։ Հարցնում եմ այժմ, ո՞ր սարսափելի պատերազմը, ո՞ր ահռելասար ուժերով ապստամբությունը պիտի համեմատվի այդ չափով ժողովրդի պակասելու վտանգին»[30]։

«Փորձը» շարունակում է դրամական հանգանակություններ կազմակերպել՝ հաջորդ տարին ևս օգնություն ցույց տալու համար աղետյալներին։ Այնուհետև առաջարկ է արվում տարափոխիկ հիվանդությունները մերկրում կանխելու նպատակով Կարմիր խաչի ընկերության հովանավորությամբ առողջապահական խմբեր ուղարկել սովից տուժած նահանգները։

Արևմտյան Հայաստանի նյութական ու բարոյական ծանր վիճակը լուսաբանելու հետ միասին Ա. Հովհաննիսյանը մեծ նշանակություն էր տալիս քաղաքակրթության ասպարեզում պատմական Հայաստանի մատուցած ծառայությունների վեր հանմանը։

«Փորձի» խմբագրությունը հետևողականորեն հրապարակում է հայ հեղինակների պատմական ուսումնասիրությունները և ուղեգրությունները, որոնք լուսաբանում էին պատմական Հայաստանի դերը անցյալում և վեր հանում նրա հուշարձանների նշանակությունը։ «Փորձում» միաժամանակ մեծ տեղ էր հատկացվում արտասահմանյան գիտնականների, ճանապարհորդների և միսիոներների այն աշխատությունների համառոտագրությանը, որոնք այս կամ այն չափով առնչվում էին Արևմտյան Հայաստանի պատմության ու նեիրկային։ Այսպես, Ստ. Պալասանդյանի թարգմանությամբ հրապարակվում է հայագետ Վիկտոր Լանգլուայի «Հրովարտակիրք Ութինյան թագավորության դիվանատան» գրքից կազմված մի հոդված՝ «Եվրոպացոց վաճառականությունը Կիլիկիայի հետ՝ Ութինյանց ժամանակ» խորագրով (1877/78, № 1)։ 1879-ին Ա. Հովհաննիսյանը տպագրում է պատմաբան Ջիբելի «Խաչա-

---

30 Նույն տեղում, էջ 173։

կրաց արշավանքների պատկեր» ծանր ու դժվարամարս ուսումնասիրության համառոտագրությունը։

«Փորձի» 1880 թ. 2-րդ համարի Հավելվածում Ա. Հովհաննիսյանը տպագրում է Շվեյցեր-Լերխենֆելդի «Հայաստան» աշխատության հատվածները (Ենա, 1878 թ.)։ Հեղինակը տալիս է Արարատյան նահանգի բնության պատկերը և Հայոց Բագրատունյաց պատմական ակնարկը։ Ա. Հովհաննիսյանը եվրոպական աղբյուրների վկայակոչումով կրկին անգամ ցանկանում էր հայոց Բագրատունյաց պատմության հիմքի վրա հաստատել հայկական ինքնավար պետության ունենալիք պատմաբարոյական իրավունքները։

Հոդվածների այս շարքը լրացնում են բնագետ Թևսիիլոս Դեյրոլի «Ճանապարհորդություն Լազիստանի և Հայաստանի մեջ» աշխատությունը և Գաստեյրաս «Եվրոպայի ճանապարհորդները Հայաստանում ԺԲ դարուց մինչև ԺԷ» ուսումնասիրությունը։

Այս գործերից յուրաքանչյուրը հավաստում էր Հայաստանի պատմական անցյալի խոշոր դերը և ներկա թշվառ վիճակը։ Այնուհետև Մ. Անանյանի համառոտագրությամբ և բարդմանությամբ «Փորձը» տպագրում է հայագետ Հ. Պետերմանի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» երկհատորյա աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում էին հայերին։ Բոլոր այդ հոդվածներին կցված էին անհրաժեշտ ծանոթություններ՝ դրանց տպագրության շարժառիթների մասին։

1880 թ. հրապարակվում է անգլիացի հոգևորական Քևթի «Քրիստոնյայք կիսալուսնի տակ Ասիայում» աշխատությունից քաղվածաբար կազմված մի հոդված, որը շոշափում էր հայ իրականության և հայկական եկեղեցու հետ կապված մի շարք խնդիրներ։ Աշխատության մեջ խոսվում է Հալեպի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Վանի հայության, նրանց վիճակի, ազգային խորհրդանության ծանր հետևանքների մասին հայ իրականության մեջ։ Հեղինակը հայերի փրկության երկու ուղի է նշում. առաջինն, երբ քրիստոնյա պետությունները յուրաքանչյուր խաչակրաց արշավանք սկսելով կկործանեն օսմանյան տիրապետությունը, և անգլիական, որի շնորհիվ դիվանագիտությունը կստիպի սուլթանին՝ հոգալ իր հպատակ քրիստոնյաների մասին։ Սակայն անգլիացի հեղինակը դրանցից առավել դորավոր միջոց էր համարում դավանափոխությունը։

Այսպես, Քեթը այն կարծիքն է հայտնում, թե սուլթանի լծի տակ կրված քրիստոնյաները սկսել են «այս հզոր անգլիական ժողովրդյան

մեջ տեսնել մի բնական դաշնակից Հռոմա դեմ, և մի հավանական պաշտպան՝ մահմեդականության դեմ, և օգնության կոչել մեր համակրությունը և օժանդակությունը»: Նա գրում է, որ վաղուց կարծիք կա, թե «Անգլիո ժկեղեցին կարող է մի կենտրոն լինել, որ նորա շուրս կողմերը ժողովվելով, հավաքվեն, միանան բրիստոնյա եկեղեցիք և հիմա կարծես սկսում են դեպի այդ միջնակետը շարժել»: Քեթսն առաջարկում է ակտիվ քաղաքականություն վարել և «աշխատել հաստատել ամենամտերմագույն հարաբերությունք եկեղեցու մյուս ճյուղերի հետ, մտքերն իրար հաղորդել փոխադարձաբար, և միության համար ամենուրեք փափաք հարուցանել»[31]:

Ա. Հովհաննիսյանը հրապարակելով Քեթսի գրքի համառոտագրությունը, հարկավ չէր հրապուրվում հայության նկատմամբ հեղինակի արտահայտած համակիր մտքերով: Հայ հրապարակախոսն անհրաժեշտ էր գտնում պայքարել ազգության միաձուլության և եկեղեցու ամրության համար: Մենք տեսանք, որ հայկական հարցի արծարծման այս քառասնյին մթնոլորտում «Փորձ» տարբեր դավանության պատկանող հայության միաձուլության կոչն էր անում. նոր և մասսայական հերձվածը կարող էր կործանել ամեն հույս: Քեթսի հոգևածի տպագրությունը հայերին զգուշացնում էր վերահաս այն վտանգից, «թե որպիսի քողարկված ձգտումներ և հայացքներ ունի անգլիական հոգևորականության մի մասը» հայ եկեղեցու վերաբերությամբ[32]:

Հայ հեղինակների ուղեգրություններից, որոնք տպագրվել են «Փորձ» հանդեսում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Փորձի» թղթակից Հովակիմ Վեղամյանցի «Ախալցխայից մինչև Անի» ճանապարհորդական նկարագրությունը, նվիրված հայրենասեր լուսանկարիչ Հ. Քյուրքչյանին[33]: Աշխատության առաջին բաժինը գրված է Ախալշտապ և Համառոտ (Ախալքալաքից Ալեքսանդրապոլ), մինչդեռ, ինչպես երևում է երկրորդ բաժնի ծավալից, հեղինակը ամբողջ ուշադրությունը նվիրել է Անիին: Առհասարակ ուսումնասիրություն այն տպավորությունն է թողնում, թե Վեղամյանցի գործը առավելապես պատկանում է ազգային տեսության ոլորին: Հեղինակը Անիի պատմության և ճարտարապետական կոթողների նկարագրությամբ հիմնականում ասեք փորձում է

---

[31] «Փորձ», 1880, № 2, էջ 121:

[32] Նույն տեղում, էջ 106:

[33] Նույն տեղում, № 5, էջ 38:

պատասխանել մեկ հարցի. «Ինչո՞վ է, որ ազգեր և ազգներ զորանում, հառաջանում, տերություններ և քաղաքներ են կանգնեցնում, և ինչո՞վ է, որ այդ տերությունները թուլանում, կործանվում և նոցա քաղաքները բանդվում, ամայանում և ավերակ դառնում: Բագրատունյաց հարստության մայրաքաղաքի պատմությունը և նորա հինգ հարյուր տարվան ավերակները ուշի ուշով ընթերցասիրելը և հետազոտելը ամեն մի հայի անուշիկ պարտականություն է»[34]:

«Փորձում» զետեղված ճանապարհորդական նոթերը բոլորը չէ, որ հավասար արժեք են ներկայացնում. այստեղ տպագրվել են և թույլ, պատմականությունից հեռու, նկարագրական հոդվածներ. այդպիսիններից են՝ Օսկար Հեյֆելդերի «Բաթումի նահանգը» հոդվածը, Գ. Պաուլի «Վանից մինչև Տիգրիս» ուղեգրությունը և այլն:

«Փորձի» հրատարակության առաջին տարիներին Ա. Հովհաննիսյանը մեծ հետևողականությամբ լուսաբանում է ամսագրի ծրագրի հիմնական դրձած հարցը՝ Արևմտյան Հայաստանի տնտեսական վիճակին ու հայոց դատը՝ դիվանագիտական բավիղներում: 1879—80 թթ. թեև իրրև ամսագիր «Փորձը» ավելի հնարավորություններ էր սաանում թարմ լուրեր հաղորդելու ընթերցողներին, բայց իրականում ազգային տնտեսության բաժինը թուլանում է: Ցարական կառավարության քաղաքական կուրսը որոշակի շրջադարձ էր կատարել հայկական հարցում, բռնելով Թուրքիային միրաշահելու ուղին: Ստեղծված քաղաքական նոր իրավիճակը դժվարացնում էր «Փորձի» հրատարակության գործը տեղում, ինչպես և դրա տարածումը Թուրքիայում: 1880 թ. մարտի 13-ին փոխարքայության դրասենյակից դաղտնի գրությամբ տեղյակ են դարձնում դրաքննական կոմիտեի նախագահին, որ Պոլսից ստացված պաշտոնական հաղորդման համաձայն «Մշակ», «Փորձ» և «Մեղու» թերթերն արդիլվել են Թուրքիայում՝ թուրքական կառավարության դեմ սիստեմատիկաբար թշնամական հոդվածներ տպագրելու համար[35]: Դրան հաջորդում են այլ իրադարձություններ, որոնց հետքերով դրաքննական կոմիտեի նախագահը 1880-ի հոկտեմբերին հատուկ գրությամբ դիմելով փոխարքայության գլխավոր վարչության պետին, հայտնում էր, որ արևմտահայության նկատմամբ Կովկասում սկսված համերաշխության ցույցերը դժվարին կացության մեջ են դրել դրաքննությանը: Քանի որ

---

[34] «Փորձ»ը 1879, № 12, 1880, № 4, 5, 6, 7, 8—9:

[35] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գ. Լրացուցիչ Ա, վ. 52:

հարցը վերաբերում էր «միջազգային խնդիրներին», կոմիտեի նախագահը խնդրում էր ցույցում տալ, թե ինչպես վարվեն այդ հոդվածների նկատմամբ, որոնք համակրանքով են տպագրված դեպի «հայերի ներկայիս բաղաքական շարժումները Թուրքիայում»[36]:

Այս էր պատճառը, որ Ա. Հովհաննիսյանն այս օրերին երեմն ընթերցողներին հայտնում էր, թե «իր կամքից անկախ պատճառներով» չի կարող հրատարակել ազգային տնտեսության բաժնի համար նախատեսված նյութերը: Բայց խմբագիրն, այնուամենայնիվ, ելք է գտնում վիճակից և վերակենդանացնում ազգային տնտեսության բաժինը՝ մեծ հնարամտությամբ:

1880-ի ամռանը Հովհաննիսյանը գնում է Կ. Պոլիս, որտեղ ի թիվս այլ գործերի, նա պետք է թղթակից գտներ «Փորձի» համար: Ուշագրավ է, որ հասնելու առաջին օրն իսկ Հ. Իփեքճյանը նրան ծանոթացնում է Պարոնյանի հետ և վերջինս համաձայնվում է աշխատակցել «Փորձին»: Արդեն 1880-ի երկրորդ կեսից նրա «Հիշատակարանն» սկսում է տպագրվել, Հովհաննիսյանի կողմից վերանվանվելով «Հոսհոսի ձեռագիրը»[37]:

Պարոնյանի «Հիշատակարանում» (որն իր ձևով հիշեցնում էր «Հյուսիսափայլում» պարբերաբար տպագրված Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը»), քննարկվում էր սուլթանի կառավարության և եվրոպական տերությունների քաղաքականությունը հայկական հարցի նկատմամբ, հայ ժողովրդի հուսահատական վիճակը ռուս-թուրքական պատերազմից հետո: Հարկավ սրանով է բացատրվում այն, որ խմբագիրն այս գործը զնահատել է ոչ թե փիլոլոգիական գրականության, այլ հանդեսի ազգային տնտեսության բաժնում:

Պարոնյան-Հոսհոսը ծաղրում էր դեսպանաժողովի ընդունած ձևական որոշումները, որոնց իրականացումը կախված էր միմիայն թուրքական կառավարության կամքից: Նա զավեշտի էր վերածում և այն դատարկահնչուն ազդարարությունները, որ պետությունները ուղղում էին սուլթանին, բարենորոգումներն իրագործելու վերաբերյալ: Հայ հրապարակախոսը ծաղրում է տերությունների միջև եղած տարաձայնությունները, նրանց սին շաղակրատանքները՝ բարձր ոլորտներում:

---

[36] Նույն տեղում, վ. 51:

[37] «Պատիվ ունինք հայտնել մեր հարգելի ընթերցողներին,— ծանուցում էր խմբագրությունը,— որ պ. Հոսհոսը այսուհետև ամեն ամիս ուղարկելու է մեզ յուր «Հիշատակարանը», «Փորձի» մեջ հրատարակելու (տե՛ս «Փորձ», 1880, № 6—7, էջ 230):

Պարոնյանը մերկացնում է «հայասեր» Անգլիայի նվաճողական քաղաքականությունը: «Ազատրիական կառավարությունը հայտարարեց,— գրում է նա,— որ եթե օսմանյան կառավարությունը Հունաստանի հետ պատերազմել սկսի՝ ինքն ալ պիտի բարեհաճի Նովի-պազարը գրավելու: «Ինչո՞ւ»: Յուր սահմանները պահպանելու համար: Հարկավ Անգղիան ալ պիտի ուզի ուրիշ կողմ մը գրավել Հնդկաստանի նամբան ապահովելու համար»[38]: Արդեն 1880-ի սկզբին Պարոնյանն անվերապահորեն էր խոսում այդ քաղաքականության կեղծուպատիր էության մասին: «Անգղիո կառավարությունն այժմ ուրիշ խնդիրներով զբաղված ըլլալով՝ հայկական խնդիրը քիչ մը մոռցած ըլլալ կթվի, սակայն անդրիտսիր հայերը կհուսան, թե Անգղիա կառավարությունն վերստին ձեռք պիտի առնե Հայաստանի բարեկարգության խնդիրն, զոր այնչափ եռանդով պաշտպանեց[39]:

Ամենայն սրությամբ քննադատելով եվրոպական երկրների դիվանագիտական խաղերը, Պարոնյանը ցույց է տալիս դրա տրամաբանական հետևանքը՝ Բ. Դուռն վարած հայակործան քաղաքականությունը: Նա խոսում է այն մասին, որ կառավարությունն անցել է արշավել՝ հայկական մտավոր կյանքի, հայ հոգևորականության, մամուլի ու գրականության վրա:

Անդրադառնալով գավառահայության վիճակին, Պարոնյանն ընդգծում է այն, որ մի ներքին համաձայնություն է տեղծվել այդ քաղաքականության և քրդերի գործողությունների միջև, որի հետևանքով թալանն ու ավազակությունը օրինականացվել են գավառներում: Բարենորոգումներ մացնելու իր պարտավորություններն իրագործելու փոխարեն, սուլթանն անցել էր ամենակոպիտ բռնություններին: Զերբակալությունները ու սպանությունները դարձել էին սովորական երևույթ: Լրագրային շատ աղդու մի ձևի, ամենօրյա հեռագրերի միջոցով Պարոնյանը ներկայացնում է Սեբաստիայի ձերբակալությունների պատկերը. «14-ը նոյեմբերի. Սեբաստիայեն հետևյալ հեռագիրն եկավ. «Կուսակալն տղջային գավառական ընդհանուր ժողովոյ անդամները բանտարկից»: 15-ի հեռագիրը. «Կուսակալն քաղաքական ժողովոյ անդամներն ալ բանտարկից»: 16-ին հաղորդում են, թե ձերբակալվել են տղջային վարժարանի 25 աշակերտներ: 17-ին՝ «Բարեբախտաբար բանտարկու-

---

38 Նույն տեղում, էջ 271:

39 «Փորձ», 1881, №1, էջ 134:

Բյան լուր չեկավ այսօր Սեբաստիայեն։ Ես կկարծեմ, թե կուսակալը Սեբաստիո բոլոր հայերն բանտարկած է և հետևապես դուրսը մարդ չէ մնացած, որ անոնց բանտարկվելին հետազրավ իմացումնեն մեզ։ Տաճկաստանի մեջ բա՜նտ... Բանտի մեջ բանտ»[40] *(ընդգծումները մերն են — Մ. Մ.)*:

Պարոնյանը պայքարում է համարում օսմանյան կառավարության ընթացքը, և առավել անհանդուրժելի՝ գավառահայության սոցիալական լուծյունը։ Կառավարությունը ժամանակ չունի զբաղվելու Հայաստանում գտնվող հարստահարությունների հարցով, և այդ հասկանալի է, գրում է Պարոնյանը։ «Այն մարդն, որուն փորը կճեղքեն բժիշկներն, սանտր չուզեր անշուշտ մորուքը սանտրելու համար... Բայց մորուքը խառնաշփոթ վիճակի մեջ է եղեր, որո՞ւ հոգ. երբ բռնկի՝ այն ատեն կառավորություն կըտրվի...մորուքին»[41]։ *Ի՞նչ նշաններ կային, թե գավառներում «Մորուքը» ընդունակ էր բռնկվելու։ Ո՛չ մի։ «Գավառացի հայն ամեն օգնություն պատրիարքարանեն կսպասե,— գրում է Պարոնյանը— երեք քուրդն մը, կամ չերքեզն մը հափշտակվի անոր շորը, անմիջապես կհեռագրե պատրիարքարան, որ շոր ղրկվի իրեն, սպառնալով միանգամայն, որ կրոնքը պիտի փոխե, երե յուր խնդիրը մերժվի պատրիարքարանեն»։ Եզրակացությունը երկուսն էր. նախ՝ «վա՜յ այն մարդու կրոնքին, որ շորեն կախում ունի», երկրորդ, գավառահայերը պետք է փոխեն իրենց ընթացքը։ Որ նրանց վիճակը անելանելի է և կան բազմաթիվ օրինակով պատճառներ, որոնք անկարելի են դարձնում ինքնապաշտպանությունը քրդերից և չերքեզներից, այդ հայտնի բան է. «Սակայն, ժա՛մ է, որ գավառացի հայն այդ պատճառներուն բարձրանը աշխատի, որչափ որ կարող է իրե՛ն, և այն ատեն միայն դիմե պատրիարքարան՝ երբ յուր ուժն անբավական է դիմադրել վտանգին»*[42] *(ընդգծումները մերն են — Մ. Մ.)*:

Առավել հատակ անկարելի էր խոսել։ Պարոնյանն ակտիվ գործունեության էր կոչում գավառահայությանը՝ ինքնապաշտպանության հարցը դարձնելով առաջնային։

Ինքնապաշտպանության դիմելու Պարոնյանի կոչը բխում էր պատմական ժամանակաշրջանի ոգուց։ Հայտնի է, որ ռուս-թուրքական պա-

---

40 «Փորձ», 1881, № 1, էջ 134։

41 Նույն տեղում, № 8—9, էջ 254։

42 Նույն տեղում, էջ 258։

ռեթաղմից հետո հայերը բավարարություն չստանալով, հայկական մի շարք գավառներում դիմում են վճռական միջոցների: 1879-ից գինվում են Մուշը, Կարինը, Վանը: Արևմտահայության ապագվող շարժումներին օժանդակելու նպատակով Թիֆլիսում և Երևանում կազմակերպվում են գաղտնի խմբակներ և կամավորական ջոկատներ, որոնց մասին խոսք եղավ նախընթաց բաժիններում: Պարոնյանն այն հրապարակախոսներից մեկն էր, որոնք իրենց գործունեությամբ ոչ միայն արձագանքում էին շիկացած օրերի կանչին, այլև իրենք էին փորձում ճիշտ հունի մեջ գնել օրավուր հզորացող ժողովրդական ընդվզումները:

Պարոնյանի մարտաշունչ ելույթները՝ արևմտահայ ժողովրդի սոցիալ-քաղաքական իրավիճակի մասին ամբողջական պատկերացում տալուց բացի, օգնում էին «Փորձի» հրապարակախոսությանը՝ դառնալու ավելի հստակ ու նպատակասլաց:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ «ՓՈՐՁԻ» ԷՋԵՐՈՒՄ

Ա. «ՓՈՐՁԸ» 1877—1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1876 թ. ամռանը, երբ սկսում է հրատարակվել «Փորձ» հանդեսը, Բալկանյան երկրներում ծավալվող ազատագրական շարժումներն իրենց վրա էին հրավիրել ազատասեր ժողովուրդների ուշադրությունը: «Փորձի» առաջնորդները, որ լուսաբանում էին այդ իրադարձությունները, մեծ համակրանքով էին խոսում թուրքական լծի դեմ ոտքի ելած փոքր ժողովուրդների ազատագրական ելույթների մասին: Վկայակոչելով հույն ժողովրդի և իտալացիների պայքարի օրինակը, «Փորձի» հոդվածագիրը կանգ է առնում այն օրինաչափության վրա, որ չնայած իրենց ուժերով թույլ, նրանք այնուամենայնիվ հաղթում են՝ պատմության օրենքների, ժամանակի ոգու և մանավանդ ազգայնության սկզբունքի զորությամբ: Սերբիան, գրում է «Փորձի» աշխատակիցը, ոտքի է ելել և ազգային ու ժողովրդական այդ պատերազմում ձգտում է «հայրենի սահմանները պաշտպանել և ցեղակից ու հավատակից եղբայրներին ազատել մահմեդականների լծից»: Սլավոնների «հերոսական պատերազմը տաճկական լծից ազատվելու համար,— գրում է հոդվածագիրը,— ցույց է տալիս, որ նոքա հատատատպես վճռել են վաղ թե ուշ իրանց վշտերին վախճան տալ»[1]: Եվ, սակայն, ռևալիստորեն գնահատելով ստեղծված իրավիճակը, «Փորձի» խմբագրությունը այն միտքն է հայտնում, որ եվրոպական երկրներն իրենց շահերից ելնելով երբեք թույլ չեն տա, որ «Տաճ-

---

1 «Փորձ», 1876/77, №3, էջ 389:

կաստանի կայսրությունը բոլորովին հիմնահատակ լինի»։ Նրանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական շահերը Արևելքում, որ անհրաժեշտ է համարում պահպանել։ «Փորձի» հողվածագիրը մեկ առ մեկ վեր է հանում եվրոպական մեկերների շահախնդրություններն և այդ հողի վրա նրանց միջև առաջացած հակասությունների պատկերը և հանգում հետևյալ ուշագրավ հետևության. «Պահպանել օսմար տերությունների համահավորդությունը և արծարծել հպատակ քրիստոնյա ժողովուրդների փոխադարձ ատելությունը և այդպիսով «արևելյան խնդրից» կազմել մի խավար լաբիրինթոս, մի վտանգավոր հրեշ, որ անդադար սպառնում է տակնուվերև անել Եվրոպան, ահա օսմանյան քաղաքագիտության գաղտնիքը»[2]։

Սուլթան Աբդուլ Համիդը 1876-ի ամռանը դահ բարձրանալով, խոստանում է ընդունել Սահմանադրությունը և այն հռչակում է դեկտեմբերի 23-ին՝ ի չիք դարձնելով Կ. Պոլսում հրավիրված Եվրոպական երկրների ներկայացուցչական կոնֆերանսը, որը սուլթանին պետք է պարտադրեր ռեֆորմներ անցկացնել Բալկանյան երկրներում[3]։

1876-ի ամռանը Արևելյան ճգնաժամն իր հանգուցալուծմանն էր մոտենում։ 1827 թ. Հունաստանն անկախություն էր ձեռք բերել։ 1830-ին Ադրիանապոլսի խաղաղությունից հետո, անկախություն է ստանում Սերբիան։ 1858-ին Փարիզում հրավիրված դիվանագիտական հատուկ կոնֆերանսը անկախ զարգացման հնարավորություններ է ընձեռում Մոլդավիային և Վալախիային, որից հետո, 1862-ին, երանք միավորվում և կազմում են ռումինական ազգային պետությունը։

Թուրքական լծի տակ դեռևս տառապում էին Բուլղարիան, Ալբանիան, Մակեդոնիան, Բոսնիան, Հերցեգովինան, Էպիրը և Թեսալիան։ Չերնոգորիան փաստորեն ազատ էր, բայց դեռևս չուներ անկախության վավերացումը։

Յոթանասնական թվականներին ուժեղանում են Բալկանյան երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ Առանձնապես նշանակալից էին բուլղարների ելույթները (1875, 1876)։

---

[2] Նույն տեղում, էջ 392։

[3] Հայտնի է, որ այդ ղրկի օգնությամբ դժվարին պահին հաստատական միտքը խաբկուց հետո, սուլթանն անցնում է հակահարձակման։ Մեծ վեհերը 1877-ի սկզբին աքսորվում է, իսկ 1878-ի փետրվարին սուլթանը ցրում է պառլամենտը։ Վրա են հասնում սուլթան Աբդուլ Համիդի բռնապետության մռայլ օրերը։

Թուրքական դինված ուժերը արյան հեղեղներում խեղդեցին այդ շարժումները:

Հուզումները Բոսնիայում և Հերցեգովինայում սկսվել էին դեռևս 50-ական թվականների կեսերին: 1875-ին գյուղացիներն ըմբոստանում են Թուրք հարկահավաքների դեմ, որոնք հաշվի չառնելով 1874-ի սովը, թալանում էին ժողովրդին: Հուզումներն ընդգրկում են ողջ երկրամասը: 1876-ի հունիսին Սերբիայի և Չերնոգորիայի կառավարությունները Թուրքական կառավարությունից պահանջում են պատժիչ ջոկատներ չուղարկել Բոսնիա և Հերցեգովինա, և երբ Թուրքիան շարունակում է նախկին ընթացքը, Սերբիան և Չերնոգորիան պատերազմն են հայտարարում նրան: Միմիայն Ռուսաստանի միջամտությունից հետո այդ պատերազմը դադարում է: Բալկանյան ժողովուրդների ազատագրության հարցը պայմանավորված էր և ողջ XIX դարում ձգձգվող արևելյան հարցի լուծումով. այս հարցի հետ էին առնչվում նաև եվրոպական խոշոր պետությունների շահերը. «Անգլիական դիվանագիտությունը նախկինի նման խոսքով հանդես էր գալիս օսմանյան կայսրության «ամբողջության» պաշտպանությամբ, սակայն Ռուսաստանի արտաքին քաղաքականության ծրագրերի դեմ հակազդելու տրադիցիոն այդ միջոցը միաժամանակ թաքցնում էր Մերձավոր Արևելքի տերիտորիալ նվաճումների իր իսկ, անգլիական ծրագրերը»[4]:

Յարիզմին նույնպես գրավում էին Մերձավոր Արևելքի և Բալկանների տերիտորիանները. «Հետևիֆորմյան շրջանում նրա քաղաքականության մեջ էլ ավելի լուրջ նշանակություն են ստանում տնտեսական մոտիվները՝ կապված Ռուսաստանի հարավային ծայրամասերի զարգացման, Սև ծովի նավահանգիստներով հացի արտահանման, ռուսական ապրանքները Մերձավոր Արևելքի շուկաները մտցնելու հարցերի հետ»[5]: Հարկավ, այս ամենի հետ մեկտեղ ցարական կառավարությունը հույս ուներ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը և Ռուսաստանի հաղթանակը օգտագործել՝ երկրում զարգացող հեղափոխական շարժումները ջախջախելու համար: Ավստրո-Հունգարիան ևս մեծ ակնկալություններ ուներ՝ կապված արևելյան հարցի հետ: Նա չէր դադարում հուսալուց, որ իրեն կհաջողվի իշխանություն ձեռք բերել Բոսնիայի և Հերցեգովինայի վրա[6]:

---

[4] «Всемирная история», том VII, М., 1960, стр. 171.

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում:

Օսմանյան պետությունը չէր էլ մտածում իրականացնել բազմիցս տառնձնած պարտավորությունները։ Ժողովուրդները Բուլղարիայում, բռնակալական քաղաքականությունը Հայաստանում, Հույների նկատմամբ կատարվող ոտնձգությունները, Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբությունները ստիպում են մեծ տերությունների ներկայացուցիչներին հրավիրել Կ. Պոլսի կոնֆերանսը։ Սուլթանը, սակայն, անուշադրության է մատնում ընդունված որոշումը։ Յարական կառավարությունը, կանխապես համաձայնության գալով Ավստրո-Հունգարիայի և Ռումինիայի հետ, 1877-ի ապրիլի 24-ին պատերազմ է հայտարարում Թուրքիային։

Մինչ այդ, 1876 թ. դեկտեմբեր, նորատաղած «Փորձի» էջերում զեկուցվում են մի շարք հոդվածներ, որոնք քննարկում էին երկրում առկղծված վիճակը, ջանում ճշտել հայության փոխհարաբերությունները կառավարության հետ։ Այս առումով ուշադրության արժանի է 1876 թ. վերջին Եռամսյակում տպագրված «Ազգային տեսությունը», որի հեղինակը սկզբից դիվանագիտորեն հայտարարելով, թե օսմանյան պետության կազմակերպությունն ու քաղաքական դրությունը «ամենայն միջոց ատելիս է», որպեսզի ազգն առաջադիմի, այնուհետև առաջ է քաշում խիստ հրատապ մի պրոբլեմ՝ աշխարհագրական Հայաստանի քաղաքական և իրավական իրավունքների ձևակերպման անհրաժեշտությունը։

Հաշվի առնելով այն, որ հայկական գավառները դիտվում էին իբրև օսմանյան գավառներ, հոդվածագիրն անկարելի է գտնում նման պարագաներում խոսել քաղաքական իրավունքների մասին։ Նա պահանջում է նախ իրավական տեսություններ ստեղծել Հայաստանի հասկացողության համար, որն իբրև այդպիսին ընդունվեր կառավարության կողմից։ Դրանից հետո միայն, նա գտնում է, որ «այդ երկրի վրա պիտի դառնա բոլոր հայերի ուշադրությունը, նորա բնակիչների համար պիտի մատածեն խոհական հայերը, նոցա գրությանը պիտի աշխատեն բարվոքել»[7]։

Հեղինակը խոսելով արևմտահայերի օրվա չարիքների՝ գաղթականության, պետական պաշտոնյաների չարաշահումների և դեղծարարության, անձի անապահովության մասին, առաջարկում է միջոցներ, որոնք խիստ ուշագրավ են։ Նա առաջ է քաշում քրդական տարրի հետ՝ գործավոր հարևանության հիմքի վրա բարեկամական կապերի նորոգման

[7] «Փորձ», 1876/77, № 2, էջ 406։

և համերաշխության ապահովման հարցը, մեծ նշանակություն է տալիս հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը, «ինչո՞ւ հայն ինքը չպետք է պաշտպանե յուր կյանքն ու կայքը այդպիսի հանցավորների դեմ, երբ կառավարությունը չի հասնում նոցա հալածելուն, եթե մինչև անգամ հարկավոր լինի սուր և կրակ գործ դնել»[8]: «Փորձի» տեսաբանը դնում է, որ պետք է պայքարել, կռվի միջոցով ձեռք բերել անհրաժեշտ իրավունքները, սակայն 1876 թվականին ավելի հեռուն չի գնում: Ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, նա այն միտքն է հայտնում, թե արևմտահայերի դրությունն ու նրանց վայելած իրավունքներն այնպիսին են, որ առանց ապստամբության դիմելու՝ նրանք կարող են բարվոքել իրենց դրությունը[9]:

Պետք է ենթադրել, որ 1876-ին «Փորձի» խմբագրությունը ամբողջ խորությամբ չէր պատկերացնում արևմտահայության կյանքի առանձնահատկությունները, երբ հեշտությամբ հարց էր տալիս. «Ինչո՞ւ հայերը չեն կարող անել այնպես, որ «Հայաստանը Հայաստան համարվի և նորա բնակիչները այն դրությունն ընդունին, որ իրենց պատիվը, ընտանիքը, կյանքը ապահով ու բարվոքյալ վիճակի մեջ լինի»[10]: Եթե մի կողմ թողնելու լինենք այն դյուրահավատությունը, որի հետևանքով «Փորձը» ենթադրում էր, թե առանց ապստամբության՝ հայերը Թուրքիայում դեռևս կարող են բարվոքել իրենց դրությունը, վերոհիշյալ հարցադրումը մյուս կողմից պարզում է «Փորձի» ունեցած այն համոզմունքը, թե՝ օբյեկտիվորեն Հայաստանը Հայաստան չէ համարվում, բնակիչները չունեն պատվի, կյանքի և ընտանիքի ապահովություն, նրանք չեն ապրում բարվոք վիճակով[11]:

---

8 Նույն տեղում, էջ 408:

9 Նույն տեղում, էջ 411:

10 Նույն տեղում, էջ 410:

11 Այս համոզմունքն էր պատճառը, որ 1880 թ. նույնպես «Փորձը» պնդում էր արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպման առաջարկը, անուղղակիորեն պատասխանելով նրանց պախարկները: Այսպես, «Լոռու գյուղական կյանքից պատկերներ» հոդվածում գյուղացիները մի դրույցում անդրադառնալով արևմտահայերի կյանքի անապահովության հարցին, նրանց կշտամբում են վինված դիմադրություն չկազմակերպելու համար. «Տո՛, մի ասող ըլի... Թուր ու թվանք, գյուլլա, բարութ էլա առ, որ դուշմանը գալիս լաց չի ըլիս ծըծաղար էրեխի նման: Ա՛յ գիդի հա՛, քու հողին ու ջրին մեռնիմ Լոռի ու Փամբակ, քու տղին տղա չի հասնուլ, քու սրին սուր չի հասնուլ, մեր տեղի մարդին ինչ բրդի բոլոզ կդիմանա»: Այստեղ դժվար չէ տեսնել Աղասու ժառանգների

1876-ի դեկտեմբերին ընդունված Միդհատի սահմանադրությունը բավականաչափ հուսադրում է «Փորձի» խմբագրությանը: «Միդհատի սահմանադրությունը» հոդվածում խմբագրությունը նախ ողջունում է պետության պառլամենտական կազմության գաղափարը, ապա հայտնում այն միտքը, թե սահմանադրությունը կազմված է ռամկավարական ոգով և եթե բարեխղճաբար գործադրվի, «քաղաքական ազատությունը կարող է շուտով արմատ գնել Թուրքիայի հողի վրա» և զարկ տալ երկրի քաղաքական կյանքին: Այդ հավատը կապվում էր հետևյալ ժամանակների հետ, մինչդեռ օրվա անհետաձգելի հարցերը լուծում էին պահանջում: «Փորձի» տեսաբանն այդ միևնույն հոդվածում քննելով արևելյան հարցը, իբրև դրա լուծման միջոցներ առաջարկում է նախ՝ վերացնել շարիաթը և կրոնական օրենսդրությունն ամեն հատատառել բրիստոնեական օրենսդրություն: Այնուհետև նպատակահարմար է դիտվում օսմանյան մահմեդական զորքը դարձնել ազգային, դրա մեջ ընդգրկելով և քրիստոնյաներին: Ի վերջո, անհրաժեշտ է համարվում քրիստոնյաներին նույնպես ընդունել պետական ծառայության մեջ: Այսպիսով, ընդհանրացնելով առաջարկը, հոդվածագիրն ասում է. հայ ժողովրդի վիճակի բարվոքման համար անհրաժեշտ են՝ իրավունք, ուժ՝ պաշտպանելու այդ իրավունքը և միջոցներ՝ կյանքում պահպանելու ձեռք բերված իրավունքները: Հատկանշական է, որ այս ամենի իրականացման համար հոդվածագիրը որոնում է լրացուցիչ ուժեր. «չի կարելի հույս դնել լոկ Բ. Դռան վրա,— գրում է նա,— այլ պետք է դիմել կայսրության բոլոր բնակիչներին և Եվրոպայի լուսավոր գործակցությանը, որով միայն հնար է վերոհիշյալ արմատական վերանորոգությունը գլուխ տանել, այսինքն մահմեդական կառավարությունը բաղաքական կառավարության փոխել՝ բոլոր ցեղերին ու դավանություններին հավասար իրավունքներ շնորհելով: Ահա այն ճանապարհը, որով կարելի է օրինավոր կերպով վճռել արևելյան խնդիրը»[13] (ընդգծումները մերն են— Մ. Մ.):

Պատմությունը շատ կարճ ժամանակամիջոցում ցույց տվեց, թե՛ Արևելյան հարցի լուծման այս առաջարկի կյանքից կտրվածությունը, և՛ թե Միդհատի սահմանադրության իսկական արժեքը:

օրինական հպարտության արտահայտությունը իրենց մոտ անցյալի պատմական մեծագործության և պարսկական բռնակալական լծից ազատագրվելու բարեբախտության համար («Փորձ», 1880, № 4, Հավելված, էջ 10—11):

12 «Փորձ», 1876/77, №3, էջ 400:

13 Նույն տեղում, էջ 394:

Ռուս-թուրքական պատերազմի լուրը հուզում է երկու հատվածների հայությանը։ Այն հավատը, որ Ալեքսանդր II-ը մտնում էր կռվի մեջ՝ թուրքական բռնապետական լծից ազատագրելու քրիստոնյաներին, նոր հույսեր է ներշնչում հայերին։ Ալեքսանդր երիցյանը «Փորձի» էջերում սկսում է տպագրել «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած ռազմական ծառայություններում» ծավալուն ուսումնասիրությունը, որը թարգմանվելով ձեռագրից՝ միաժամանակ տպագրվում է «Тифлисский вестник» լրագրում։ Այդ աշխատության մեջ արխիվային բազմաթիվ փաստաթղթերի միջոցով Երիցյանը վերականգնում էր ռուսական արքունիքի և հրամանատարության հետ արևելահայ գործիչների ունեցած փոխհարաբերությունների ստույգ պատմությունը։ Ուսումնասիրությունն ավարտվում է Ալեքսանդր I-ի՝ հայերին ուղղած 1813 թ. հրովարտակով, որով գնահատելով նրանց հավատարմությունը՝ թագավորը երախտագիտության խոսք էր ուղղում հայ ժողովրդին[14]։ Հայ հրապարակախոսներն այս օրերին հիշատակելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամության փաստերը, ասեք անուղղակիորեն, ցանկանում էին Ալեքսանդր II-ի մեջ արթնացնել պատասխանատվության և պարտքի զգացումը։ Ամբողջ «Փորձը» վեր է ածվում մարտաշունչ մի հրապարակախոսության, որն առաջավոր մտածողներին կոչ էր անում՝ պաշտպանել աշխարհի ազնիվ ժողովուրդներից մեկի իրավունքները, ի տրիտուր նրա վատակի, արդարամտության և հավատարմության։

Պատերազմի ընթացքում «Փորձը» հրապարակում է ժամանակի ռուսական և եվրոպական թերթերում տպագրված այն հոդվածների համառոտագրությունները, որոնք առնչվում էին հայկական հարցի հետ։ Այսպես, «Московские ведомости»-ի հոդվածագիրը հարցնում էր. «Մի՞թե միջազգային դեսպանախորհրդում ոչ ոք չի պահանջի հայոց համար ամենաանհրաժեշտ իրավունքներ միայն այն պատճառով, որ այդ ազգը թեև տանջվում ու չարչարվում է, բայց միշտ համբերում է և երբեք չէ ապստամբում»։ «Православное обозрение»-ն ինքնավարություն էր պահանջում հայերի համար, ինչպիսին պահանջում էին Բալկանյան երկրները։ Հայկական հարցում ռեակցիոն դիրք բռնած «С. Петербургские ведомости»-ն անգամ պահանջում էր ազատություն տալ ասիական Թուրքիայի հայերին, ինչպիսի ազատություն ստանում էին սլավոններն ու հույները։

---

[14] Տե՛ս «Փորձ», 1877/78, № 1, 2։

Ինչպիսին էր հայերի դիրքորոշումը։ Այդ շրջանում արտահայտվել են թեր և դեմ զանազան կարծիքներ, որոնցից կարևորները վկայակոչելով, «Փորձի» խմբագրությունը ինչ-որ տեսք է հաղորդել դրանց։ Այսպես, կանգ առնելով Սեթ Աբգարյանի կազմած հիշատակագրի այն նյութի վրա, թե հայերը չեն դիմում զենքի, սպասելով օրինական ճանապարհով ստանալ իրենց իրավունքները, «Փորձի» տեսաբանը հաստատում է այդ դրույթը։ Նա գրում է. հայերը շահասեր չեն և ոչ էլ վաճառականական ազգ են, ինչպես երբեմն հորջորջում են նրանց։ «Հայկը նեղշնչել է մեր մեջ անկախության ոգին, Արամը ժառանգել է մեզ անձնուվեր հայրենասիրություն, Արտաշեսներն ու Տիգրանները անվնհար քաջասրտություն, Տրդատներն ու Ներսեսները—աշխարհաշինություն, Վռամշապուհներն ու Սահակները—ուսումնասիրություն, Վարդաններն ու Վահանները— անընկճելի արիություն, Սմբատները— անպայման հավատարմություն, Աշոտները— քրիստոնեական ողորմածություն և այլն»[15]։ Հայերը երկչոտ չեն և չեն վախենում զենքից. այդ է հաստատում նրանց մոտ անցյալը (Ձկլիոնի ելույթը, Դարաբաղի մելիքների կռիվները պարսկական բռնապետության դեմ)։ Հայերն իրենք են պահանջում զինվորագրվել, բայց կառավարությունը մերժում է նրանց։ Հայերին այժմ ինքնավարություն է հարկավոր՝ սուլթանի կողմից հաստատված ինչխանով։ Հայերը պետք է անկախ լինեն իրենց ներքին գործերում, սակնան սեփական զենք՝ ներքին բարենորոգումների համար, միջազգային հարցերում՝ լինեն չեզոք։ Հակառակ դեպքում «կարելի է պահանջել այդ համաձայնությունը, ինչպես պահանջեցին և նա տվավ Հունաստանին, Ղարադաղի, Սերբիայի և Ռումինիայի համար»[15]։

Ընդհանրացնելով զանազան թերթերի և գործիչների՝ այդ հարցի կապակցությամբ հրապարակած նյութերը և առաջարկները, «Փորձի» խմբագրությունը հայ մտավորականության վրա սուրբ պարտականություն է դնում հայկական և օտար մամուլի էջերում «արծածել և մշակել այս գաղափարը, որպեսզի վերջապես հասարակական կարծիքը լուսավորվի և պատրաստվի ապագա միջազգային խորհրդի համար, որ անշուշտ պիտի գումարվի օսմանյան պետության բրիստոնյա հպատակների բախտը վճռելու»[16]։

Միաժամանակ ռուս-թուրքական պատերազմի ավարտի օրերին, երբ

---

15 Նույն տեղում, էջ 366։

16 Նույն տեղում։

դեռևս չէր կայացել դեսպանաժողովի նիստը, հայ հրապարակախոսները հարկ են համարում եվրոպական կարծիքը նախապատրաստելուն զուգընթաց նախապատրաստել և հայ հասարակությանը: Այս առումով Ա. Հովհաննիսյանին մեծ ծառայություններ է մատուցում «Փորձի» գլխավոր աշխատակից Ստ. Պալասանյանը: «Հունաստանի անկախությունը» խորագիրը կրող իր հոդվածին նա կցում է հետևյալ ծրագրային առաջաբանը, որը ցույց է տալիս «Փորձի» խմբագրության նպատակալաց աշխատանքը այդ օրերին: Պալասանյանը գրում է.

«Ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը քաղաքական անկախությունը ձեռք բերելու: Հունաստանը, Բանուբյան իշխանությունները, սլավոնական փոքրիկ իշխանությունները— Մոնտենեգրոն և Սերբիան, Հունգարիան, վերջապես Իտալիան և Գերմանիան, յուրաքանչյուրը յուր ազգային ոգու և շրջապատող հանգամանքների համեմատ, զանազան միջոցներ են գործ դրել, այլևայլ ճանապարհներով են ընթացել, իրանց գարևոր ցանկությունների հասնելու: Բայց նոցա բոլորի նպատակը միևնույնն էր,— ազատվիլ օտարական իշխանություններից և մի քաղաքական ու ազգային մարմին կազմել: Ցույց տալ այդ ազգերի մտավոր ու բարոյական գործունեությունը, ցույց տալ, թե որքան հաստատամբություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել նոքա իրանց բաղձանքին հասնելու, մի խոսքր պարտավորություն է համարում յուր համար մեր հանդեսը»[17] (ընդգծումը մերն է — Մ. Մ.):

Պալասանյանն այս առաջաբանից հետո հայ ընթերցողին է ներկայացնում մի ուսումնասիրություն՝ քաղված Գերվինուսի «19-րդ դարի պատմությունը» աշխատությունից: Հունաստանի պատմության իր շարադրանքում նա կարողանում է պատմական փաստերը մանրնաբանել արդիականն շնորհ: Հունաստանի ազատագրության համար մղված պայքարի պատմությունից հեղինակն առանձնացնում է այն դրվագները, որոնք, ենթադրվում էր, թե ուսանելի կարող էին լինել հայերի համար: Այսպիսին է Կորայիսին նվիրված հատվածը: Զմյուռնացի Ադամանտիոս Կորայիսը Փարիզում թողնում է բժշկությունը և զբաղվում բանասիրական գործունեությամբ: Նա հրատարակում է հին հունական հեղինակներին, ծավալում մտավորական լայն շարժում: Նրա գնահատու-

---

17 Նույն տեղում, №2, էջ 163:

թյամբ գործող բոլոր գպրոցները դառնում են քաղաքական գործունեության մի-մի օջախ, «ուր բոլոր դասատվության և ուսումնառության մեջ թագավորում էր այն գաղափարը, թե պետք է խորտակել մահմեդական լուծը»[18]: Կորայիսը լուսավորության է կոչում ժողովրդին, գանելով, որ «Հունաստանի քաղաքական վերածնությունը պիտի պատրաստվի նախ հոգևոր վերածնությամբ»: Այնուհետև, երբ խոսվում է այն մասին, թե տառապանքի ուղիներով անցնելուց հետո հույն ժողովուրդն այնուամենայնիվ ձեռք է բերում իր աղատությունը, Պալասանդյանն անուղղակիորեն դիմելով հայերին, ավելացնում է. «Հույն ժողովուրդը չուր երկաթաև և փառավոր կռվով ցույց տվեց, թե արժանի է այն անկախության, որի համար նա զենք էր բարձրացրել»[19]:

Բ. ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԴՐԵՍԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Հայկական հարցն արդեն արծարծվում էր դիվանագիտական շրջանակներում. Եվրոպան անծադուխ լարվածությամբ սպասում էր մոտակա կոնդրեսին, որտեղ պետք է քննության դրվեր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Այդ օրերին առաավել ևս «Փորձի» խմբագրությանը հուզում էր նույն հարցը. ի՞նչ պետք է անել դժալի արդյունքների հասնելու համար: Առաջին տարիների օրինակով Ս. Հովհաննիսյանը իր հանդեսի էջերում զետեղում է ոչ միայն տնտեսական-քաղաքական հոդվածներ, այլև օտար լեզվով լույս տեսած զանազան դրքերի տեսություններ, որոնք հաճախ վեր էին ածվում այդ դրքերի համառոտագրության: Այս առումով ուշադրության արժանի են Ջ. Պրոբինի «Հայաստան և Լիբանան» աշխատությունը (Լոնդոն, 1877), «Դեսպանաժողովը և հայերը» բրոշյուրը (Լոնդոն, 1878) և «Սթենլեյան խնդիրը և հայերը» դրքույկը (Լոնդոն, 1878):

Ջ. Պրոբինն իր աշխատության մեջ նախ վեր էր հանում քաղաքական այն իրավունքները, որոնք ձեռք էր բերել Լիբանանը, 1860 թ. ապստամբությունից հետո՝ Ֆրանսիայի և Անգլիայի միջամտությամբ: Երկրում ստեղծվում է վարչական նոր կարգ, օսմանյան զորքերը հեռանում են Լիբանանից և ստեղծվում են զինված խմբեր՝ տեղացիներից:

---

18 Նույն տեղում, էջ 189—190:

19 Նույն տեղում, էջ 218:

Նոր վարչակարգն ապահովում է Լիբանանի ժողովրդի կյանքի և գույքի անձեռնմխելիությունը։ Հայերը, սակայն, չեն ապաստամբվում թուրքական կառավարության դեմ և նրանից միմիայն խնդրում են վերջ տալ հայկական նահանգներում կատարվող անիրավություններին։ Պրոբինն այնուհետև թվարկում է այն պահանջները, որոնք հայերը 1876-ի սեպտեմբերին ներկայացրել էին Մահեմմեդ Ռուշդի փաշային (կաթվածական իրավունքների խնդրի լուծումը, եկեղեցական և վանքապատկան հողերի հարցի լուծում, գյուղական բնակչության ապահովություն՝ դերեբեյների հարստահարություններից, անչափահասների պաշտպանություն՝ բռնի հավատափոխությունից, քրիստոնյաների վկայության ընդունումը դատարաններում և այլն, և այլն)։

Ա. Հովհաննիսյանն այնուհետև հրապարակում է Պրոբինի գրքի այն էջերը, որոնք պատմում էին հայերի կրած անլուր տառապանքները՝ Փոքր Ասիայում։ Պրոբինի գրքի առթիվ խմբագրությունը հայկական հարցի լուծման երկու ուղի է մատնանշում. նախ՝ խմբագրությունը որոշակի հույսեր է կապում եվրոպական երկրների հետ և դոնում, թե պետք է ավելի մեծ ազդեցություններ պահանջել Հայաստանի համար, քան դրանք տրված էին Լիբանանին։ Երկրորդ՝ լուրջ նշանակություն էր տրվում և սուլթանի՝ պատրիարքին տված խոստումներին։ Հայտնի է, որ պատերազմի ամենաթեժ օրերին, 1877 թ. օգոստոսի 22-ին, Ներսես Վարժապետյանին պարգևատրելով «Օսմանյան» շքանշանով, Աբդուլ Համիդը հայտնել էր այն միտքը, թե պատերազմից հետո «իր հայ ազգը» կվարձատրվի կրած զրկանքների համար, «կտեսնի բարօրության օրեր և կհնձե յուր հավատարմության պտուղները»։ «Փորձի» տեսաբանն այն միտքն է հայտնում, թե «երբեք օսմանյան սուլթանն այդքան անկեղծ ցավակցություն չէ ցույց տվել յուր որևէ հպատակ ազգին», և թե՝ «որքան հայերի զոհողությունները ծանր եղան, այնքան և փոխարենը մեծ պետք է լինի»[20]։ Իբրև հայ ընթերցողների համար արված հետևություն՝ խմբագրությունն առաջարկում է ազգին՝ լուծել իր հարցը և բարձրաբարբառ պահանջել իր «անբռնաբարելի իրավունքները»։ Նա «պետք է ցույց տա, որ արևելյան քրիստոնյաների մեջ չկա մեկը, որ յուր չափ չարչարված և միևնույն ժամանակ յուր նման սակավ արտոնու-

---

[20] Պրոբինի գրքի տեսությունը («Հայկական Տաճկաստանի ազատությունը և անգլիական մամուլը») տպագրված է «Փորձի» ազգային տեսության բաժնում՝ անստորագիր։

թյուններ վայելած լինի միայն նորա համար, որ երբեք բուն միջոցների չէ դիմել յուր իրավունքների պաշտպանության համար»։

Ուշագրավ է և 1878-ի մարտին Լոնդոնում տպագրված «Դևսպանաժողովը և հայերը» բրոշյուրը, որի մասին գրված տեսությունը նույնպես տպագրվում է «Փորձի» ազգային տեսության բաժնում՝ առանց բառորակրության[21]։

Գրքույկի հեղինակը, հավանաբար մեկը՝ Անգլիայում գործող հայ մտավորականներից, խոսելով Հայաստանի պատմական ճակատագրի, քաղաքակրթության ասպարեզում հայերի ձեռք բերած նվաճումների և նրանց ներկա թշվառության մասին, փորձում է կռահել նրանց հետագա ճակատագիրը։ Նա անկեղծ վրդովմունքով է խոսում Թուրքիայում տեղի ունեցող բարբարոսություններին մասին, և զարմանք հայտնում, որ Եվրոպական Թուրքական կառավարությանը չի պարտադրում կատարելու ստանձնած պարտավորությունները։ Չէ՞ որ եթե հայերի նկատմամբ կատարվող բռնությունները հրապարակվին Եվրոպայում, ապա «բուլղարներին հասցրած տանջանքները շատ հնսևմանալին»։ Հեղինակը խնդրում է եվրոպական երկրներից՝ առաջիկա դևսպանաժողովում այնպիսի վճիռ տալ, որ Թուրքիայի բոլոր ազգությունները (այդ թվում և Թուրքերը) վայելեն արդար կառավարության հովանավորությունը։

«Դևսպանաժողովը և հայերը» գրքույկի հեղինակը, սրտշակի անգլիական կողմնորոշում ունի։ Նա վստահ չէ, որ ռուսները արևմտահայերին ինքնավարություն կտան և հույսը դնելով Անգլիայի վրա, պատրաստակամություն է հայտնում ընդունել նրա բոլոր առաջարկները։ Սակայն, այսուհանդերձ, հետաքրքրական է այն պայմանը, որով նա կամոլին մտնում է անգլիական դրոշի տակ։ Անգլիան պետք է հատուցանեցնե հայերին իրենց հայրենի երկրում ինքնավարություն տա։ Կհատուցա՞ր այդ պայմանը, իրենք Անգլիայի հետ կլինեն, իսկ եթե անգլիական պետական գործիչները խանգարելով ռուսների Հայաստանին տիրելուն, կլինեյով իրենց շահերից, Հայաստանը պետք է թողնեն փաշաների տիրապետության տակ, և երկիրը պետք է «այսպես դատապարտված մնա մշտական թշվառության, որպեսզի Հնդկաստանը պաշտպանվի,

---

21 *Իր խոսքի համար իրեև բնաբան՝ «Փորձի» տեսաբանը վերցրել է Բյորնեի հետևյալ տողերը. «Ինձ սիրուհի տո՛ւր, ինձ աստված տո՛ւր.— տո՛ւր ինձ հայրենիք։ Ես բիչ բան եմ պահանջում. տուր ինձ մի փոքր, մի փոքրիկ հայրենիք»։*

այն ժամանակ մենք կասեինք. «ավելի լավ է, որ ռուսները առնեն Հայաստանը»[22]:

Չբաժանելով հանդերձ գրքույկի հեղինակի մի շարք տեսակետները, Բուլղարիային տրված անհույժ գնահատականը և Անգլիայի դերի գերագնահատումը, խմբագրությունն, այնուամենայնիվ, այդ գրքի տեսությանը կցած իր խոսքում փորձում է ակտիվացնել հայ գործիչներին: Նրանց նա հարկադրում է եվրոպական մամուլի էջերում արծարծել Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը, անընդհատ նյութ մատակարարել եվրոպական թերթերին՝ Հայաստանի փառավոր անցյալի և նրա թշվառ ներկայի մասին[23]:

«Արևելյան խնդիրը և հայերը» ուսումնասիրության հեղինակը քննում է մեկ հարց. արդյոք պատերազմը լուծե՞լ է արևելյան հարցը. պատասխանը բացասական է: Այս գրքույկի հեղինակը նույնպես ընդգծում է, որ Ասիայի քրիստոնյաների տառապանքների համեմատությամբ բուլղարացիների կրածը չնչին բան է: Հայերը, շրջապատված զանազան ցեղերով, մշտապես ապրում են սրի, կրակի, սրբապղծության վտանգների մեջ, գրում է հեղինակը և նշում, որ նրանց վիճակն ավելի կծանրանա պատերազմից հետո, քանի որ ռուսական զենքից հալածված մահմեդական ցեղերը քշվելով Ռումելիայից (Արևելյան Բուլղարիա), իրենց վրեժը կլուծեն Հայաստանի քրիստոնյաներից: Այս հեղինակը նույնպես անգլիական կողմնորոշում ունի և մեծ սպասելիքներ՝ Անգլիայի օգնությունից: Նա համոզմունք է հայտնում, որ ազատագրված հայերը իրենց խաղաղ աշխատանքով կգոհացնեն ինչպես սահմանակից Ռուսաստանին, այնպես էլ Անգլիային և տեղական մահմեդականներին: Նա վստահություն է հայտնում, որ «քրիստոնյա և մահմեդական շուտով կեղբայրանային, եթե այժմյան անմիտ կարգերի տեղ, որոնք հատարյա հավասարապես ծանրանում են ինչպես առաջինների, այնպես և վերջինների վրա, հաջողեին մի ավելի կանոնավոր վարչություն սահմանել»[24]:

Վերջապես ավարտվում է պատերազմը: Շահագրգռված կողմերը սպասում են դեսպանաժողովի հավաքին: Այդ օրերին «Փորձը» հրապարակում է «Տաճկական Հայաստանի ինքնավարությունը» ծրագրային

---

22 «Փորձ», 1877/78, №4, էջ 444:

23 Նույն տեղում, էջ 433:

24 Նույն տեղում, էջ 170:

հոդվածը, որը հայ հասարակության ուշադրությունը հրավիրում էր օրվա հրատապ հարցի վրա։ Տաճկական Հայաստան։ Կատանա՞ արդյոք նա իր ինքնավարությունը և ի՞նչ ճանապարհով։ Ո՞րն է դեպի այն տանող գործնական ու բանական ուղին։

Թերթի տեսաբանը[25] ճակատագրական սխալ է համարում այն մեկուսի վիճակը, որին դատապարտել են իրենց հայերը՝ եվրոպային անծանոթ թողնելով հայ ժողովրդի պատմության ու ճակատագրին։ Զրկվելով քաղաքական ազատությունից, հայերն ամբողջ հինգ դար ապրել են հուսահատության մեջ, որպեսզի չդրգռեն մոլեռանդ բռնակալների զայրույթը։ 1862-ի Զեյթունի իրադարձությունները եվրոպայի ուշադրությունը առաջին անգամ հրավիրեցին հայերի վրա. դա՝ «առաջին բողոքն էր ամոթալի ստրկության դեմ»։ Եվրոպան պատկերացում է կազմում ստրկության մեջ տառապող Ասիական Հայաստանի մասին։ «Այո՛ — հայտարարում է «Փորձի» տեսաբանը,— մենք ինքներս ենք հանցավոր, եթե եվրոպային անծանոթ, հետևապես և անօգնական ենք մնացել։ Մենք ենթարկվել ենք ամեն տեսակ տանջանքների, բռնաբարվել և հալածվել ենք ամենաստորը իրավունքների համար, և երբեք չենք մտածել բողոքելու արդարության առաջ, հավատացած լինելով, թե հայի «ճակատի գիրն է» միայն նեղություն ու տանջանք տեսանել երկրի վրա»[26]։

Բողոքել արդարության առաջ՝ նշանակում էր դիմել եվրոպական պետությունների դատաստանին, սակայն՝ դիմել ոչ դատարկ ձեռքով։ Հոդվածագիրը վկայակոչում է Հունաստանի օրինակը։ Այդ երկրի ժողովուրդը չէր կարող հույս դնել Ռուսաստանի վրա՝ իր ոչ սլավոնական ծագման պատճառով։ Այդ շատ նման է հայերի վիճակին. սակայն հույն ժողովուրդը շարժեց Մեծ Ռուսաստանի սիրտը և նա զորավիգ կանգնեց տառապող Հունաստանին և Անգլիայի ու Ֆրանսիայի հետ մեկտեղ անկախություն շնորհեց նրան։ Ինչո՞վ հույները գրավեցին այդ երկրների ուշադրությունը. այն մտավոր շարժումով, որ նրանք ծավալեցին հենց ստրկության մեջ, ստրկական լծի առկայության պայմաններում։ Հունաստանը ոչ այնքան իր նյութական ուժերով է ազատագրվում, որքան բարոյական ջանքերով։ Ուրեմն, եզրակացնում է «Փորձի» տեսաբանը,

---

25 Հոդվածը հրատարակված է Ազգային տեսության բաժնում՝ առանց ստորագրության։

26 «Փորձ», 1877/78, №3, էջ 351—352։

ամենն դևպքում չէ, որ ապատութեան համար անհրաժեշտ է լինում արյուն թափել: «Հոնտաստանի օրինակը ցույց է տալիս դարձյալ,— գրում է հոդվածի հեղինակը,— թե ինչ խախուտ հիմն ունի այն անձանց կարծիքը, որոնք պնդում են, թե առանց զենք բարձրացնելու և առանց արյուն թափելու միշտ անհնարին է սորկութեան լուծը թոթափել: Հույները ապստամբեցան և երկար ժամանակ փոփոխակի բախտով պատերազմեցան Թուրքերի տիրապետութեան դեմ, բայց վերջիվերջո ապստամբությունը պիտի զսպվեր և բոլոր երկիրը Թուրքաստանդ լիներ, եթե Եվրոպան միջամտած չլիներ: Եվ այդ ընդհանրական համակրութեան հույները արժանացան ոչ թե իրանց նյութական զորութեան, այլ բարոյական արժանավորութեանների համար»[27] *(ընդգծումը մերն է — Մ. Մ.):*

Հոդվածագիրը զինված ապստամբութեան միջոցը մերժում է և բուլղարացիների օրինակով: Նրանք նույնպես ընդհանրական ապստամբութեան չեն դիմել, սակայն 1876 թ. զարհուրելի կոտորածները քաղաքակիրթ աշխարհին դրդում են օսմանյան կառավարութեան դեմ և առիթ տալիս ռուսաց թագավորին՝ զենք բարձրացնելու:

Հայերն անփույթ են դտնվել: Բռնութիւնները հայկական նահանգներում թևև զերազանցում են բուլղարական ժողովրդի կրած տառապանքները, բայց հայերը հանցավոր անտարբերութեամբ չեն բարձրացրել իրենց բողոքի խոսքը: Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերը մնացել են անպատասխան կառավարութեան կողմից և հետազոտում չեն դրավել հայ մտավորականների ուշադրութեյունը: «Զարմանում ենք, թե ինչպես չդտնվեցավ մի հայ մարդ, որ այդ՝ տպագրութեյամբ հրատարակված և ազգի մեջ ցրված տեղեկագրերը կարդալուց հետո՝ մտածեր հայ ժողովրդի կրած տառապանքները Արևմտյան մամուլի միջնորդութեյամբ ներկայացնել Եվրոպական հասարակական դատաստանին, մինչ անցյալի օրինակներից ամենի համար ակներև պիտի լիներ, թե այդ ամենահաստատուն միջոցն էր մեր ազգի նման դրութեյուն ունեցող ժողովրդի վիճակին մի դարման անելու»[28]*:*

Հայերի թշվառութեյան փաստերի հրապարակումը հարցի մնկ կողմն էր: Հոդվածագիրն առաջարկում է և երկրորդ միջոցը, բարոյական զործոնի վճռական դերը: Նա անհրաժեշտ է գտնում եվրոպական պետութեյուններին ծանոթացնել հայ ժողովրդի ստեղծած մշակութեային ար-

---

27 Նույն տեղում, էջ 353:

28 Նույն տեղում, էջ 355:

ժնքներին, պատմել գործող դպրոցների մասին, հայտնել, որ հայերն ունեն մամուլ, «ունեն զարգացած գրականություն, որը կարող է մրցել եվրոպական ժողովուրդների գրականության հետ»: Հոդվածագիրը կարծում է, որ այս կերպ կարելի էր դրավել ազգերի համակրանքը, եվրոպայի ուշադրությունը հրավիրել հայության վրա և ապացել, որ նեղիա ճգնաժամում արևմտյան հասարակական կարծիքը ավելի «համակամ և համամիտ ձայն բարձրացներ Թուրքիայի հայերի համար»:

«Փորձի» խմբագրությունը մեծ ակնկալություններով է սպասում առաջիկա դեսպանաժողովին, վստահ, թե Ռուսաստանը քրիստոնյաներին ազատագրելու իր միսիան իրականացնելու ժամանակ՝ բարի աշքով կնայի և հայկական դատին:

Ի՞նչ էր պահանջում խմբագրությունը հայերի համար. ինքնավարություն, և ոչինչ՝ պակաս դրանից: «Պրան թուլության և ապօրինությունների առաջն առնելու անձեռնհասության պատճառով՝ Հայաստանի վիճակը բարվոքելու միակ հնարը իսկական է, որ միջոց կտա հայ ժողովրդին քրդերի հարստահարություններից և տեղական վարչության անիրավություններից ազատվելու: Անցյալի օրինակները պարզապես ցույց են տալիս,— ասված է նույն խմբագրական հոդվածում,— թե բոլոր այն Խաթթի Հյուսայուններն ու Խաթթի Շերիֆները, որ օսմանյան կառավարությունը ամեն ծանր ճգնաժամերից հետո շնորհել է յուր քրիստոնյա հպատակներին, միշտ մեռած տառ դրություն են ունեցել, և թե այլևս չէ կարելի հույս դնել այնպիսի խոստումների վրա, որ այսօր տրվում են՝ վաղը մոռացվելու համար»[29]:

Ինչո՞վ էր զբաղված այս օրերին «քաղաքակիրթ եվրոպան»: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չի ընդունվում: Արևմտյան պետությունները այս անգամ ևս ակտիվորեն միջամտում են Թուրքիայի գործերին՝ փաստորեն կանգնելով ռուսական նվաճումների ճանապարհին: Նրանք մասնավորապես հիմնադրային էին ընդունում Ռուսաստանի նվաճումների հետևանքները Փոքր Ասիայում և «Մեծ Բուլղարիայի» ստեղծման գաղափարը: Ռուսական զորքը չի մոտենում Կ. Պոլսին. անգլիական նավատորմը կազմ ու պատրաստ էր՝ պաշտպանելու Թուրքիայի պետականության անվտանգությունը, մի բան, որ նշանակում էր անգլիացիների սեփական նվաճումների ապահովումը ապագայի համար: Ռուսաստանը հարկադրված էր լեզու գտնել Անգլիայի հետ. մայիսի 30-ի գաղտնի

29 Նույն տեղում, էջ 355—356:

դաշնագրով երկու պետությունները հաշտության երեք են գոնում... փլուզվում է «Մեծ Բուլղարիա» պետության ստեղծման ծրագիրը և Ռուսաստանը վիջում է Փոքր Ասիայի իր նվաճումները: Հայկական նահանգների ճակատագիրը պետք է լուծեր Բեռլինի կոնգրեսը: Այն հրավիրվում է հունիսի 13-ին և իր աշխատանքները շարունակում է մինչև հուլիսի 13-ը: Կոնգրեսի աշխատանքի օրերին Անգլիայում ծայր է առնում շովինիստական պրոպագանդի մի շրջան և անգլիական քաղաքագետները այդ շրապռուայի մեջ առնելով նաև Լոնդոնում գտնվող հայ գործիչներին, մեծ հաջողությամբ մոլորեցնում են հասարակական կարծիքը: Բանն այնտեղ է հասնում նույնիսկ, որ հուլիսի 1-ին, երբ կոնգրեսում դեռևս չէր լսվել հայկական հարցը (այն լսվում է 4-ին և 5-ին), Լոնդոնում հրավիրվում է մի հատուկ միտինգ՝ նվիրված հայ ազգի իրավունքների պաշտպանությանը: Ինչ է ասվում տխրահռչակ այդ հավաքում, որը բացում է Վեստմինստերի դեկանը[30]: Վերջինս Հայաստանի աղետները բացատրում է ոչ այնքան վատ կառավարությամբ, որքան քուրդ ցեղերի հարձակումներով, որոնց՝ կառավարությունը չէր կարողանում հնազանդեցնել: Միտինգի նախագահը հայերի խնդիրն է համարում «այնպիսի միջոցներ գտնել», որոնք նրանց ապահովեին հարստահարություններից:

Վեստմինստերի դքսի ուղարկած նամակն անսքող էր՝ քաղաքական իր միամտությամբ. նա հայերին մաղթում էր ազատումն բռնակալական հպատակությունից, պայմանով սակայն, որ չանցնեն Ռուսաստանի ձեռքը: Միտինգի բոլոր հռետորներն իրենց ելույթներում հայերին խորհուրդ էին տալիս հետու մնալ ռուսական տիրապետության տակ մտնելու գայթակղությունից:

Միտինգում հրապարակվում է հայերի շնորհակալական խոսքը. այնտեղ ասված էր. Վանը կործանվում է, Մուշը՝ նույնպես: Քրդական խմբերը այնպես են ավերել երկիրը, որ մի քանի շրջաններում մարդիկ սովամահ են լինում. կան սպանություններ դեպքեր: Եվ, սակայն, հայերը վստահություն են հայտնում, որ Վեհաժողովի ներկայացուցիչները կպաշտպանեն իրենց գործը:

Միտինգի մասնակիցների անունից հրապարակվում է և որոշում, որով նրանք շնորհակալություն էին հայտնում անգլիական կա-

---

30 Վեստմինստերը Լոնդոնի արվարձանային բաղամասն է, որտեղ գտնվում են կառավարական գրասենյակները և հնագույն այն տաճարը, ուր թագադրվում են անգլիական թագավորները: Դեկանը՝ տաճարի գլխավոր պետն է:

ռավարությանը, «որը խոստացել է նոցա՝ քննել վեհաժողովում ասիական Տաճկաստանի հայոց խնդիրը և Հայաստանում լինելիք վարչական բարեփոխության վերա ուշադրություն դարձնել»[31]:

Հայկական հարցի համերաշխությանը նվիրված միտինգը անգլիական ննջգավոր քաղաքականության փառավոր հաղթանակներից մեկն էր: Անգիտակ՝ խայտառակ դավադրությանը իրենց մասնակցության մեջ, արևմտահայության դառը պաշտպանող Լոնդոնի հայ գործիչները խանդավառության մեջ էին: Անգլիական թերթերից վերցրած արմենոֆիլ տերմինը նրանք սիմվոլացնում էին միտինգի ոգու հետ և անգլիացիների հայասիրական ցույցերի մեջ տեսնում իրենց ժողովրդի փրկության երաշխիքը: Նրանք չարաչար խաբված էին: Կառավարության պարագլուխների հետ կայացված համաձայնությունը՝ պատվար կանգնելու, այսպես կոչված, ռուսական վտանգի դեմ, արևմտահայության ներկայացուցիչներին անուղղակիորեն ստորագրել էր տալիս հայկական հարցի ձախողման որոշման տակ:

Գ. ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀԵՏՈ

Վերջապես տեղի է ունենում Բեռլինի կոնգրեսը: Օրեր շարունակ քննարկվում է ռուս-թուրքական պատերազմի ելքի հետ կապված օրինագիծը: Վերափոխվում է Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, նեղացվում են Ռուսաստանի իրավունքներն ու ձեռք բերված նոր սահմանները: Հայ պատվիրակությունը ձայն չուներ: Նրա պահանջները ներկայացնում էր Ֆրանսիայի ներկայացուցիչը: Օրակարգ է մտցվում կոնգրեսի նախագահին ուղղված հայոց պատրիարքի նամակը, հայ պատգամավորների դիմումը[32], Հայաստանի համար ծրագրված վարչական կանոնագիրը և վիճակագրական մի տեսություն Հայաստանի մասին: Կոնգրեսում արգելք հայտնի էր դարձել, որ Թուրքիայի հետ կնքված գաղտնի պայմանագրի համաձայն Անգլիան հունիսի 4-ին զավթել էր Կիպրոսը, դրա փոխարեն

---

31 Միտինգին վերաբերող մեջբերումները քաղված են Ա. Հովհաննիսյանի «Հայը և Հայաստանը օտարների աչքում» հրապարակային դասախոսությունից (տե՛ս «Փորձ», 1881, № 1, 2):

32 Բեռլինի կոնգրեսին մասնակցելու մեկնած հայ պատվիրակների թվում էին՝ Մկրտիչ Խրիմյանը, Խորեն Նարպեյը, Խրիմյանի թարգմանիչ Մինաս Չերազը և Սահակյան Փափազյանը:

նրաշխատավորելով օսմանյան կայսրության Ասիական հատվածի ամբողջականությունը: Այսպիսով, անուղղակիորեն Անգլիան դառնում էր դրության տերը և հայկական հարցի քննարկումը ստանում էր ձևական բնույթ:

Հուլիսի 13-ին ստորագրվում է Բեռլինյան տրակտատը: Կառավարությունների պարագլուխների հետևյալ խաղերի և Անգլիայի ու Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի, Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքված գաղտնի պայմանագրերի ուժով արմատապես վերափոխվում է Սան-Ստեֆանոյի պայմանագիրը:

Հայաստանին վերաբերող 16-րդ հոդվածը խմբագրվում է և ձևակերպվում իբրև 61-րդ հոդված: Դրա համաձայն Բ. Դուռը պարտավորվում է բարենորոգումներ կատարել հայկական նահանգներում՝ բոլոր պետությունների հսկողության տակ: Հոդվածը հետևյալ ձևակերպումն ուներ. «Բ. Դուռը պարտավորվում է իրագործել այն բարվոքումները և բարեգործություններ, որոնք առաջ կբերեն հայաբնակ գավառների տեղական պահանջները և ապահովել նրանց անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Նա պարտավոր է պարբերաբար տեղեկություններ հաղորդել այդ նպատակի համար ձեռք առած միջոցառումների վերաբերմամբ այն տերություններին, որոնք պետք է հետևեն նրանց իրագործմանը»:

Հուլիսի 21-ին Ազգային ժողովը քննարկում է Բեռլինյան կոնգրեսում ձեռք բերված արդյունքները: Նիստում հանդես եկած Ներսես Վարժապետյանը, դատելով նրա ելույթից, ինչ-որ չափով բավարարված էր 61-րդ հոդվածով և փորձում է մխիթարել իր ատյանի թերահավատներին: Եթե չլիներ պատերազմը, նրա կարծիքով սուլթանը կիրականացներ Սահմանադրությամբ նախատեսվող բարենորոգումները հայկական գավառներում: Պատրիարքը չի խոսում կոնգրես ներկայացված իրենց աղերսագրի բովանդակության մասին. այն հիմնականում պահանջում էր՝ «Հայոց վարչություն Հայաստանի մեջ», Բ. Դռան անվերապահ դեկավարությամբ: Այժմ պատրիարքը գոհ է այն բանի համար, որ հայերին ճանաչել են Եվրոպայում, միջազգային կոնգրեսը քննել է նրանց հարցը, հայոց դեսպանությունը գրավել է կոնգրեսի մասնակիցների ուշադրությունը և նույնիսկ... համակրանքը: Ի պատասխան իր դեմ եղած այն մեղադրանքին, թե պատրիարքը ձախողել է հայկական խնդրի լուծումը, Ներսես Վարժապետյանը լավատեսորեն կրկնում է, թե չի կարելի կորուստ համարել ձեռք բերածը. պարզապես հարցի լուծումը կա-

րում է ժամանակին։ Նա վստահություն է հայտնում, թե հայոց կյանքում սկսվում է նոր շրջան և բռնությունները այլևս չեն կրկնվի։ Պատրիարքը առաջարկում է երկրի վերաշինման մի ընդարձակ ծրագիր։ «Ուղիներ պիտի բացվին, ջրանցքներ պիտի շինվին. գործարաններ պիտի կառուցվին. Անգղիոյ դրամատերք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. Թո՛ղ երթան մեր դրամատերք ալ, ընկերություններ կազմենն այս օրվընէ, ընկերություններ՝ ամեն քաղաք ու գյուղ դպրոցներ հաստատելու համար. ընկերություններ՝ առևտրական հարաբերություններ հաստատելու համար։ Հնդկաստանեն, Հայաստանեն, Անգլիայեն, Թուրքիայեն, Ռուսիայեն, Ավստրիայեն ու մինչև Պարսկաստանեն միանան, ձեռք-ձեռքի տան բոլոր հայերը...»[33]։

Ներսես Վարժապետյանի վարդապուշն պատրանքները չէր բաժանում Խրիմյան Հայրիկը, որը զգաստ հայացքով է դնահատում իրենց աղերսագիրը. «Երբ կտեսնեի Զեռնակորիայի նվիրակին գետնաբարշ սուրի շառաչմունք,— պատմում է նա հետագայում,— և իր բարձրաձայն զրույցելը , թե «Մենք արյուն թափեցինք և իրավունք ունինք խոսելու» ես ճիկ հանելու քաջասրտություն չունեի, մանավանդ որ կհիշեի, թե ժամանակիս սրամիտ քաղաքագետ մը ըսած էր. «Մենք հրեհը ուր տեսանք՝ հոն կդիմենք մարելու»[34]։

Հայկական հարցի լավագույն գիտակ, հրապարակագիր և գրող Ներսեսը 1879 թ. իր՝ Թիֆլիսում գտնված ժամանակ հրավիրվում է աշխատակցելու «Փորձին»։ Հանդեսի համարներում տպագրված նրա երկու հոդվածները ոչ միայն պարունակում են Բեռլինի պայմանագրի սուր քննադատություն, այլև ուղիներ են նշում արևմտահայությանը դուրս բերելու համար տնտեսական և քաղաքական այն փակուղուց, որի մեջ գտնվում էր։

Ներսեսը ծաղրում է հայերի աղերսաթուղթը և այն կարծիքին է, թե խոշոր տերությունները, որ 10 միլիոնանոց բանակ ունեն, պարզապես մեծահոգությունից դրդված է, որ ունկնդրել են հայ «սևագլուխ մուրացկանաց խնդրագրին...»։ 40 տարուց ի վեր հայությունը խոստումներ է լսում. այժմ էլ՝ «մի շարք եռանդուն գրիչներ» հորդորում են հայերին՝ հավատալ շրջված 61-րդ հոդվածին և ձեռքերը պարզել՝ «հասուն պտուղը քաղելու համար»։ Անգլո-թուրքական դաշնագրի հրապարա-

---

33 «Մշակ», 1878, № 159։

34 «Փորձ», 1879, № 1, էջ 206։

կամից հետո Մերենցը ամեն ինչ պատմանավորում է Անգլիայի դիրքով։ Նա գրում է. «Անգլիա բարոյապես և նյութականապես պատասխանատու և գործակից և ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 Հունիսի 4-են վերջը։ Այո՛, այն օրվնե, որ Անգլիա Կիպրոսը օսմանյան տերությենեն առնելով յուր սեփականություն ընելով, փոխարեն նորա ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհը գի՛նքը պատասխանատու կճանաչե լինելիք թե լավ, և թե վատ գործունեությանց»[35]։

Մերենցը մեկնաբանում է հայկական բարենորոգումների առիթով սուլթանի մեծ վեզիր Քյամիլ փաշայի արտահայտած մտքերը և ըզգաստության է կոչում հայ գործիչներին։ Մեծ վեզիրի անսքող հարցադրումներն արտահայտում էին կառավարության նոր դիրքորոշումը հայկական հարցում։ Տասնամյակներ շարունակ սին խոստումներով խարելով հայերին, սուլթանի կառավարությունը պատերազմից հետո բուռն հալածանքներ է սկսում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության դեմ՝ նրան բնաջնջելու վճռականությամբ։

Մերենցը հրապարակում է Քյամիլ փաշայի կառավարության հեղինակած այդ ահարկու ծրագիրը, որի իրականացմանը նույնիսկ չէր ուզում հավատալ։ Թուրքիան ոչ մի օգուտ չտեսավ Ռումինիային և Սերբիային տված ինքնավարությունից, ասում է մեծ վեզիրը, ուստի այդ անհնար է տալ Ասիական Տաճկաստանի հայերին։ Նա հայտարարում է. «Խելոքությունը ջնջել վերցնել է այն ամեն տարերը, որ օր մը կրնար մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ և գործիք լինել»[36]։

Տաճկաստանի և Անգլիայի համար արդեն Հայաստան անունն անգամ գոյություն չունի։ Այդ երկրամասը պետք է խնամքով պահպանվի օտարի միջամտությունից և միջամտության առիթներից... «ուստի, այդ սուրբ նպատակին համար,—խորհրդածում է Քյամիլ փաշան,—պետք է, և պետական իրավունք կպահանջե, որ ո՛նիցէ կասկածելի տարր աննետ ընենք, որպեսզի ապագայն ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, աննետ և աննետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք— քուրդ, չերքես, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ·

---

35 Նույն տեղում, էջ 208։

36 Նույն տեղում, №7—8, էջ 204։

կրոնական պատերազմ մը կհրատարակենք, և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան: «Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե տաճկական Ասիո մեջ, կթողու զմեզ հանգիստ և այն ատեն կզբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբք»[37]:

Մերենցը իր ժամանակակիցների մեջ առաջիններից է, որ դրսևորում է արտակարգ խորաթափանցություն, սակայն, ռեալ եզրահանգումներ անելուն նրան խանգարում է անվերապահ հավատը՝ քաղաքակրթության նվաճումների նկատմամբ: «Քյամիլ փաշայի արբանյակները,— գրում է նա,— այսօր Տորոսի լերանց վրայեն, վաղը Վանա ծովուն եզերքեն, մյուս օրը Մշո դաշտերեն բնաջինջ ընել կմտածեն հայ ազգը և անունը»[38]: Սակայն մարդկային երևակայությունն անզոր է ընկրկել այդ հնարավորությունը. Քյամիլ փաշան ի վիճակի չէ ջնջել ոչ հայերին, և ոչ Հայաստան անունը: «Ապագան ճենկիզխաններու, Լենկթիմուրներու չէ»,— ավարտում է նա խոսքը:

Քանի որ Մերենցի համոզմունքով ապագան պատկանում էր քաղաքակրթությանը, հրապարակախոսը մշակում է ազդեցիկ իր ուրույն ծրագիրը: Ամեն բանից առաջ նա հույս է հայտնում, թե կգան լավ ժամանակներ և ավելի խոհեմ քաղաքագետներ կլծորդեն միմյանց տարբեր կրոնների շահերը և հայ ժողովուրդը կփրկվի: Մինչ այդ՝ Մերենցն առաջարկում է կազմակերպել օրինագետ ընկերություններ, որոնք պայքարեն օրենքների խախտումների դեմ և պատժեն օրինազանց պաշտոնյաներին: Առաջարկում է կազմակերպել ընկերություններ, որոնք զինեն ժողովրդին՝ բարբարոսների հարձակումներից պաշտպանվելու համար: Հայ ժողովրդի փրկության գործում Մերենցը վճռական նշանակություն է տալիս լուսավորությանը և Եկեղեցուն: Նա պահանջում է ազատել հոգևոր եկեղեցականներին, անսկզբունք լրագրողներին, թերուս գործիչներին, ապաշնորհ գրողներին: Անհրաժեշտ է գտնում նպաստել Հայաստանում և Եվրոպայում սովորող հայ երիտասարդությանը, որ նա լիարժեք կրթություն ստանալով, մայրենի հողի վրա հայերի բարոյական և մտավոր արժանավորությունների վրա ավելացնի և գիտության ստացվածքը: Վաշխառուների դեմ պայքարի նպատակով Մերենցը առաջար-

---

37 Նույն տեղում, էջ 204—205:

38 Նույն տեղում, էջ 206:

կում է հիմնադրել դրամատներ: Հայ վաճառականներին խորհուրդ է տալիս տաճկական նավահանգիստներում Ռուսաստանի հովանավորությամբ ռուսական վաճառատներ հաստատել՝ մրցելու համար եվրոպական առևտրական տների հետ:

Ներսեսը մեծ դեր է տալիս և ուսյալ հոգևորականությանը, որը բացի առօնին իր պարտականություններից, ցանկության դեպքում կարող է դիմագրավել և օտարերկրյա միսիոներների գործունեությանը Հայաստանում: Փորձելով օգտվել ռուսական պետության հովանավորությունից, Ներսեսը մի քայլ առաջ է անցնում: Աշխարհի բոլոր ծայրերից գալիս և Տաճկաստանում հանգրվանում են բազմաթիվ կաթոլիկ և բողոքական միսիոներներ: Նրանք ավերածություն են կատարում տգետ հայության շրջանակներում, իսկ ռուսահայ հոգևոր գործիչները հեռու են մնում ասպարեզից: Ինչո՞ւ նրանք չեն փորձում օգտվել հզոր Ռուսաստանի հովանավորությունից և գործունեության հրապարակ իջնել: «Ի՞նչ կարգիլե զիրենք Հայաստանյայց եկեղեցվո դրոշակը պարզելու ընդդեմ կաթոլիկության և պրոտեստանտության՝ հայրենի երկրին մեջ, ուսմունքով և ուսումնարանով մրցելու այդ օտար քարոզության հետ և նույն ազատությունքը և համարձակությունքը վայելելու, մինչդեռ իրենք մեծ դյուրություն ունին արևելյան և ազգային լեզուներ արդեն գիտնալով»[39]:

Ներսես Վարժապետյանի և Ներսեսի ազգաշինական ծրագրերը, բուն Հայաստանում կուլտուր-լուսավորական և տնտեսական զարգացման միջոցառումների մշակման նրանց քաղաքականությունը ինչ-որ չափով ներդաշնակում էր և Գրիգոր Արծրունու հրապարակախոսությանը:

Գրիգոր Արծրունին արձագանքում էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին: Ընդունված է Միքհատի սահմանադրությունը. Արծրունին զերծ է պատրանքներից: Այդ փաստաթուղթը նա համարում է «մի ամենախոշոր սուտ, ամենաանաղնիվ, ամենակոպիտ, անշնորհք խաբեություն»: Վրա է հասնում 1877—78 թթ. պատերազմը. Արծրունու խորին համոզմունքով՝ «Ռուսաց զորքը հանդես է գալիս պատերազմական բեմի վրա՝ ճնշված ազգերը, քրիստոնեությունը, ազատությունը և ընդհանուր մարդկային առաջադիմությունը և լուսավորությունը պաշտպանելու դիտավորյամբ»[40]: Արծրունու ամբողջ հույսերը կապված էին Ռուսաստանի հետ. նա տեսու ելք էր նախա-

---

39 Նույն տեղում, էջ 209—210:

40 «Մշակ», 1877, №26:

տեսում. կամ Ռուսաստանի օգնությամբ հայերը պետք է ինքնավարություն ստանային և կամ դոնն հասնեին այն բանին, որ կարողանային միանալ Անդրկովկասին: Պատերազմի ավարտից հետո ևս նա շարունակում էր հուսալ, թե սլավոնական ժողովուրդների ազատագրությունից հետո Ռուսաստանը կհոգա և Փոքր Ասիայի քրիստոնյաների մասին:

Սան-Ստեֆանոյի համաձայնագրի առիթով «Մշակը» բարձրացնում է հայության անելիքների հարցը և պարզաբանում, թե հայերն ինչ պետք է ստանան բարենորոգումների առումով (քրիստոնյա նահանգապետ, քաղաքային և գյուղական վարչություններ, դույքի և անձի ապահովություն, սեփական կամ խառն դատարաններ և այլն): Քրդերից և չերքեզներից պաշտպանվելու համար հայերին, նրա կարծիքով, անհրաժեշտ էր «սեփական տեղական պահապան զորք ունենալու իրավունք»:

Անգլիայի նկատմամբ որևէ հավատ չտածելով, Արծրունին ևթե քրիստոնյաների ազատությունը Ռուսաստանի ավանդական քաղաքականությունն է համարում, ապա Անգլիային համարում է այդ քաղաքականության ավանդական թշնամին: Կոնգրեսի նախօրյակին Արծրունին թևե շատ լավ էր տեսնում Անգլիայի կառավարող շրջանակների քաղաքականության նպատակը, սակայն դեռևս ինչ-որ հույսեր էր կապում Սրիմյանի պատվիրակության և Անգլիայի հասարակական կարծիքի հետ: Կիպրոսի զավթումն անսպասելի մի քայլ չէր. պարզապես Արծրունու կանխատեսումներն իրականանում էին. «Անգլիան հասավ իր նպատակին,— գրում է նա՝ «Ինչ արավ Անգլիան» առաջնորդողում:— Նրա համար փոքր ազգերի անհատական քաղաքական կյանքը նշանակություն չունի, նրա համար նշանակություն ունի միայն իր սեփական նյութական շահը: Այժմ պարզ երևում է,— ավելացնում է նա,— որ Ռուսաստանի շահերը պահանջում էին քաղաքական կյանք տալ Հայաստանին, իսկ Անգլիայի շահերը պահանջում էին խեղդել հայոց ազգի մեջ ձգտում դեպի քաղաքական կյանքը»[41]:

Արևմտահայ գործիչներից Արծրունին պահանջում է ակտիվ գործունեություն ծավալել Հայաստանի տարածքում, գավառներում և Ազգային ժողովը անսպասման տեղափոխել Կարին կամ Վան: Այնուհետև նա հայ մտավորականներին հրահանգում է զարկ տալ լուսավորական գործունեությանը՝ այն հաշվով, որ նրանք ոչ միայն ազգի մեջ տարածեն եվրոպական քաղաքակրթությունը, այլև ամեն կերպ դեպի իրենց գրա-

---

[41] «Մշակ», 1878, № 116:

վեն շրջապատող վայրենի ցեղերին և նրանց մեջ նույնպես տարածեն այդ քաղաքակրթության արդյունքները: Արծրունին միաժամանակ անհրաժեշտ է դանում մեացած «Քշնամի բափառական ցեղերի դեմ զենքը ձեռքին պաշտպանվել»: Այն բանից հետո, երբ անգլիական կառավարությունը հանդգնում է Կարինի հյուպատոսարանն անվանել Քուրդիստանի հյուպատոսարան, Արծրունին ազատություն է տալիս իր զայրույթին: «Այժմ դուցե բթամիտ անգլիացիները կհամոզվեն, որքան անկեղծ է Անգլիայի սերը դեպի հայոց ազգը... Մենք միշտ հարձակվել ենք Անգլիայի դեմ, միշտ զգուշացրել ենք Թուրքաց հայերին մարդասեր Բրիտանիայի նենգավոր և կեղտոտ որոգայթների դեմ... մեզ չէին կամենում լսել և ահա այժմ մեր խոսքերը իրագործվում են»[42]: Այնուհետև Արծրունին ուշադրությունը հրավիրում է գավառներում ծավալվելիք գործունեության անհրաժեշտության վրա:

«Ազգային ժողովի իդիոտները,— գրում է Արծրունին սիրական ոճով,— իրանց իդիոտ նախագահի հետ միասին չեն հասկանում, որ համառությամբ մնալով Կ. Պոլսի մեջ, Հայաստանից դուրս, նրանք իրանք անտես են առնում Հայաստանը, իրանք առիթ են տալիս մտածել, որ Հայաստանը Քուրդիստան է անվանվում և ոչ թե Հայաստան»: Նրանց առաջարկելով գնալ գավառները, Արծրունին խորհուրդ է տալիս. «Այնտեղ Ձեր հայրենի հողը մշակեցեք, այնտեղ աշխատեցեք, այնտեղ Ձեզ կառավարեցեք, այնտեղ Ձեր Ազգային ժողովը տեղափոխեցեք և այն ժամանակ կտեսնենք, ո՞ր Բիկոնսֆիլդ, ո՞ր անգլիական կամ եվրոպական պետություն կհամարձակվի Ձեր հայրենիքը Քուրդիստան, կամ Չինաստան անվանել:

Ասածած վկա, դուք արժանի էիք այն խաղին, որ անգլիացիները ձեր դլխին են խաղացել»[43]:

«Մշակի» էջերում պարբերաբար տպագրվում էին Բաֆֆի-Մելիք-զադեի հոդվածները և տեսությունները՝ նվիրված Արևմտյան Հայաստանի խնդրին: «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածում Բաֆֆին հակադրվելով Մխեաս Չերազին, հայտարարում է, թե 61-րդ հոդվածը իբրև ոսկու հանք՝ չի շլացնում իրենց: Այդ հոդվածը նա որակում է իբրև մնռած ռեցեպտ, որը գրվում է այն ժամանակ, երբ դեղերն այլևս չեն գործադրվում հիվանդի վրա: Միակ խելամիտ միջոցը՝

---

42 Նույն տեղում, №107:

43 Նույն տեղում:

ապագայում ինչ-որ արդյունքի հասնելու, նա համարում է «անդադար և անընդհատ նախապատրաստությունը»: Նա կրկնում է Արծրունուն. հայերը պետք է ջանան պատրաստ դիմավորել ապագա հնարավորություններին: Կարող է դեռևս զարկել ազատության ժամը,— գրում է նա Փոքրոլյուբովի ոճով,— «իսկ այդ օրը կկրկնվի և շատ անգամ կկրկնվի... գուցե շատ հեռու չէ մեզանից»[44]:

Մի այլ հոդվածում մշակելով Արևմտյան Հայաստանի վերանորոգումների ծրագիրը, Րաֆֆին լուրջ ուշադրություն է դարձնում հայերի հողատիրական իրավունքի ապահովման, նրանց զինակրության, հայկական գավառներում տեղական միլիցիա պահելու հարցերի վրա: Նա մատնանշում է դատարանային նոր սիստեմ ստեղծելու անհրաժեշտությունը՝ եվրոպական օրինադրական սկզբունքներով:

Հանուն ազգայնության գաղափարի հաղթանակի, Րաֆֆին պահանջում էր պայքարել կրոնական երկպառակությունների դեմ և միավորել այլադավան հայերին:

Ռուս-թուրքական պատերազմի օրերին Թիֆլիսում շարունակում էր հրատարակվել Պետրոս Սիմեոնյանի «Մեղու Հայաստանի» թերթը: «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրությունը հավատում էր պատերազմի ազատագրական մարդասիրական միսիային, հավատում այն բանին, որ Եվրոպան հաշվի առնելով հայերի կրած բազմադարյան տառապանքները, նրանց ինքնուրույն ներքին վարչության կշռորհի մեծ պետություններից մեկի հովանու տակ: Պատերազմի սկզբում «Մեղու Հայաստանի» թերթի տեսաբանները խոշոր պետություններից նախապատվությունը տալիս էին Ռուսաստանին: Ավետիք Բաբայանը կոչ էր անում, որ Անատոլիայի հայերը չվհատվեն, քանի որ Ռուսաստանը զորավիգ պետք է լինի նրանց: «Ի՛ղ բոլոր լուսավոր աշխարհը տեսնեն,— գրում է նա,— որ Ռուսաստանը հանել է յուր սուրը և թափում է յուր արյունը, հիրավի, անխրտիր Տաճկաստանի բոլոր քրիստոնեից վիճակի թեթևության և ազատության համար»[45]:

1877-ի օգոստոսի 22-ին սուլթան Աբդուլ Համիդը ընդունում է Ներսես պատրիարքին. բոլոր թերթերը, այդ թվում և «Մեղու Հայաստանին» տպագրում են նրանց միջև տեղի ունեցած զրույցի մանրամասնները. այդ նշանավոր հանդիպմանը սուլթանը հավաստիացնում է

---

44 Նույն տեղում, №126:

45 «Մեղու Հայաստանի», 1877, №31:

պատրիարքին՝ հայ ժողովրդի նկատմամբ իր ունեցած «հայրական» զգացումների անկեղծության մեջ։ Ներսես Վարժապետյանը կաշառված այդ ընդունելությամբ՝ Գում-Գափուի Մայր եկեղեցում պատարագ է տալիս և խոսում սուլթանի պարզության, սիրալիրության և համեստության մասին։ «Մեղուն» տարակուսանքի մեջ էր։ Այդ ամենից արդյոք որևէ օգուտ պիտի ստանա՞ն «Տաճկաստանի խեղճ հայերը», հարցնում է խմբագրությունը, թե, ինչպես անցյալ բոլոր սուլթանների խոստումները, ամեն ինչ պետք է անհետևանք մնա[46]։

«Մեղու Հայաստանին» քննադատաբար է վերաբերվում պատրիարքի գործունեությանը, ակնդետ հետևում նրա յուրաքանչյուր քայլին։ Թերթը դժգոհ է մնում սուլթանին ներկայացված աղերսագրից, որը կոնկրետ պահանջներ չէր պարունակում[47]։ «Մեղվի» տեսաբանն այն միտքն է հայտնում, թե սուլթանը ձևականորեն համաձայնություն կտա լուծելու այդ խնդիրները, բայց իրականում ոչինչ չի փոխվի գավառներում։ «Սակայն կարծիքով,— գրում է հոդվածագիրը,— Տաճկահայաստանի վարչությունը բոլորովին բաժանելու է ընդհանուր Տաճկաստանի վարչությունից և նրան ինքնավարության կերպարանք տալու է, ընդ հովանավորությամբ պաշտպան քրիստոնյա տերությանց, մանավանդ սահմանակից Ռուսաստանի, որոյ զորաց մի մասը, ինչպես և տաճկացը կարող էին մնալ այնտեղ մինչև տևղական պահապան զորք կկազմվեր և վարչությունը կձևակերպվեր հայ տարրից»[48]։

Ինչպես տեսանք, Բեռլինի կոնգրեսում ռուսական կառավարության ներկայացուցիչներին չի հաջողվում պահպանել ձեռք բերած նվաճումները։ Անգլիան թելադրում էր իր կամքը. ձևակերպվում է 61-րդ հոդվածը։ «Մեղվի» տեսաբանները բավարարված էին ձեռք բերված արդյունքներով։ Նրանք հավատում էին հաջողությանը, հավատում մեծ պետություններին. «Մի՞թե կարելի է մտքով անգամ անցնել, որ հզոր

---

46 Նույն տեղում, №35։

47 Աղերսագրում ձևակերպված պահանջներն էին՝ աշխատանքի ազատություն և պաշտպանություն, անձի և սեփականության ապահովություն, դպրոցների, մենաստանների, եկեղեցիների և ազգային կալվածքների երաշխավորություն։ Այնուհետև պահանջվում էր դեպքերում ունեցող ոստիկանական սխատեմի տեղ ստեղծել այնպիսի վարչական կազմակերպություն, որը համապատասխաներ ժամանակի պահանջներին։

48 «Մեղու Հայաստանի», 1878, №10։

մեծ տերություններ կարող են խաբել Բշվառ և անզոր մի ազգի, որ կարող է պաշտպանության: Եվ ինչո՞ւ պետք է խաբեն, ուստի՞ է վերկյուղը...»[49]: Մի այլ առաջնորդողում Պ. Սիմեոնյանը, դուշակելով հայության բարօր ապագան, հայերին հորդորում է այլևս չվախենալ քրդերից և չերքեզներից, քանի որ «Բեռլինի դաշնադրությունը Տաճկահայաստանի ապահովությունը Եվրոպայի հովանավորության ներքո է դնում և քանի որ Ռուսաստանի երկչվյա արծիվը նորա սահմանի վերայից սրատես աչքով դիտելու է այնտեղ կատարվող ամեն մի աննշան դեպք և անկարգություն, բողոքելու և առաջն առնելու համար»[50]:

Կարճ ժամանակից, երբ հրապարակվում է այն հաղորդումը, թե տաճկական հատուկ հանձնաժողովը Շևֆիկ բեյի նախագահությամբ մեկնել է գավառները՝ ուսումնասիրելու տեղական հանգամանքները, «Մեղուն» խանդավառված հայտնում է իր ընթերցողներին, թե հարցը վճռման ճիշտ ընթացքի մեջ է: Թերթի տեսաբան Յունուսը (Սպանդար Սպանդարյան) նույնիսկ այն միտքն է հայտնում, թե հայերին միմիայն բարեռորոգումներ են հարկավոր, քանի որ նրանք հասունացած չեն ինքնավարության համար (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Նա համոզմունք էր հայտնում, թե Անգլիան կօգնի հայերին՝ առաջադիմելու թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես[51]: Ահա թե ինչու «Մեղու Հայաստանի» թերթի աշխատակիցները, ռուս-թուրքական պատերազմին հաջորդած առաջին տարիներին մերժում էին ազգային-ազատագրական շարժումների նպատակահարմարության հարցը: Բեռլինի դեսպանաժողովի նախօրյակին Սիմեոնյանը հայտնում է այն միտքը, թե Ազգային ժողովը «օրինավորության սահմաններում», «ոչ իբրև ապստամբ», այլ իբրև «հլու հպատակ», պետք է Բ. Դուռն միջոցով խնդրի «յուր արդար իրավունքի պաշտպանությունը»: Որովհետև հայերն իրենց ուժերով անկարող են գործ տեսնել, շարունակում է թերթի տեսաբանը, պետք է իրենց վիճակի փոփոխությունը հուսան «եվրոպայի մեծ տերությանց մարդասիրությունից և պաշտպանությունից»[52]: Հետաքրքրական է, որ նրբ Արծրունին Սիմեոնյանին մեղադրում է բրքասիրության մեջ, «Մեղվի» խմբագիրը մի նոր հոդվածում շարունակում է զարգացնել իր հայացքները: Տնտեսության մի բույլ ժողովրդի դրդոել ուժեղ բշնա-

49 «Մեղու Հայաստանի», 1878, №26:

50 Նույն տեղում, №35:

51 Նույն տեղում, №32:

52 Նույն տեղում, №5:

մու դեմ, գրում է նա. հայերը չունեն զորք, զենք, փող, դիտություն... ուստի պետք է դործեն օրենավորության և իոհևմության սահմաններում, իրենց իրավունքները խնդրեն և՛ տաճիկներից, և՛ օտարներից: Պետրոս Սիմեոնյանն այնուհետև կոչ է անում արևմտահայերին՝ զբաղվել շինարարական խաղաղ աշխատանքներով, չդաղթել Հայաստանից, բարելինել երկիրը: «Գիրք և դպրոց, ահա տաճկահայերի զենքը»,— գրում է նա այդ օրերին. հայերը պատրաստ չեն ինքնավարության համար և եթե անգամ այն ստանալու լինեն, չեն կարողանա իրենց ենթարկել քրդերին ու չերքեզներին: Նրանք չպետք է ռիսկի դիմեն, պետք է դործեն գիտակցաբար, պատրաստվեն և ապա միայն ձեռք բերեն իրենց ցանկացածը: Փույթ չէ, թե այդ օրը կհասնեն նրանց որդիները կամ թոռները...[53]:

1878 թ. տարեվերջին հրապարակելով Մինաս Չերազի «Թե ինչ շահ ունցանք Պեռլինի վեհաժողովեն» դրքույկի տեսությունը (ըստ որի՝ «հայերը ավելին ստանալ ոչ կարող էին և ոչ էլ պետք է ցանկանային»), «Մեղվի» խմբագիրը անուղղակիորեն հրապարակում է իր հավատամքը: Նա գրում է, թե իրենք «բոլորովին համաձայն են պ. Չերազի հայեցվածքներին»: Այդ սկզբունքները, շարունակում է Սիմեոնյանը, դրդում են ազգը աշխատության՝ յուր օրինավոր բաժինը ձեռք բերելու բնական ճանապարհով և ոչ յապաղդյուն հուսահատության, որպես անում են ոմանք մեր անհեռատես հրապարակախոսներից»[54]:

Մեր պատմական գրականության մեջ դեռևս չի լուսաբանվել «Փորձ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների դերքորոշումը հայկական հարցում:

Ճիշտ է, Ա. Հովհաննիսյանը, ինչպես և Պետրոս Սիմեոնյանը, պատկանում էին միևնույն՝ ազդային-պահպանողական հոսանքին, սակայն նրանց պարբերականները մի շարք էական հարցերում տարբերվում էին միմյանցից: Մենք ծանոթացանք «Փորձի» ազդային տեսության բաժնի նյութերին, որոնք մատնանշում էին այդ հանդեսի քաղաքական ուղենիշը: Սակայն «Փորձի» ուղղության մասին է՛լ ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ ևս մեկ վիճատաթղթի հետ, որը հրապարակվել է «Փորձի» էջերում, դրա հրատարակության վերջին տարին:

---

53 Նույն տեղում, №42:

54 Նույն տեղում, №45:

1879 թ. մայիսի 17-ին Թիֆլիսի ժողովարանում Ա. Հովհաննիսյանը կարդում է մի հրապարակային դասախոսություն, որը հետագայում տպագրվում է և՛ «Փորձի» էջերում (1881 թ. № 1, 2), և՛ առանձին գրքով («Հայը և Հայաստանը օտարների աչքում»)։ Դասախոսությունը երկու նպատակ էր հետապնդում. նախ՝ ցույց տալ, թե ի՞նչ կարծիք ունեն արտասահմանյան գործիչները հայերի մասին, որքանո՞վ օբյեկտիվ են արտացոլվում հայկական իրադարձությունները արտասահմանյան հրապարակների և ճանապարհորդների երկերում, ինչպե՞ս է լուսաբանում հայկական հարցը «աշխարհի 6-րդ պետությունը»՝ մամուլը։ Երկրորդ խնդիրն էր՝ անհրաժեշտ ճշտումներ կատարել վերը հիշված աշխատություններում, սրբագրել դրանց մեջ սպրդած սխալները, այն հաշվով, որ Հայաստանին և հայերին նվիրված աշխատությունների հետագա հրատարակությունները մաքսիմալ ճշգրտությամբ ներկայացնեին իրավիճակը Հայաստանում։

Ա. Հովհաննիսյանի վերոհիշյալ ուսումնասիրությունը նրա առաջադրությունը կրող առաջին նշանակալից հրապարակախոսական էլույթն է, և իբրև այդպիսին՝ է՛լ ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Դասախոսությունը նա պատրաստել էր մեծ սիրով և պատասխանատվության զգացումով և ինչպես երևում է նրա մի անձնական նամակից, այն արժանացել էր ունկնդիրների հավանությանը[55]։ Հովհաննիսյանը տիրապետում էր մի քանի օտար լեզուների. այդ նրան հնարավորություն էր տալիս անձամբ հետևելու արտասահմանյան մամուլին և գրական նորույթներին, և հենց այդ հանգամանքն էլ թերևս նրան դրդում է հանդես գալ հիշյալ դասախոսությամբ։

Եվրոպայի և Հայաստանի փոխհարաբերությունների պատմությունը Ա. Հովհաննիսյանը բաժանում է 3 շրջանի. նախազեյթունյան, երբ հայերը դիտվում էին իբրև մեծ ձիրքեր ունեցող քրիստոնյա ժողովուրդ, որը քաղաքակրթություն էր տարածում Արևելքում. Ջելթունից մինչև ռուս-թուրքական պատերազմն ընկած ժամանակները, որ հրապարա-

---

55 Նշանին ուղղված նամակում Հովհաննիսյանը գրում է, որ այդ «գեղեցիկ նյութը» մշակելու վրա շատ ջանք և բոլոր ընդունակություններն է գործադրել։ Ինչ վերաբերում է դասախոսության ընդած տպավորությանը, ապա այդ նկարագրում է հետևյալ կերպ. «Երևակայեցեք Թիֆլիսի ամենամեծ դահլիճի մեջ 600 մարդ հայ ունկնդիրները ոգևորված, ոչինչ շարժմունք երկու ժամվա ընթացքում, լսում է միայն դասախոսի ձայնը ու անվերջ ծափահարություններ։ Հաջողությունը իմ բոլոր ակնկալությունները գերազանցեց» (տե՛ս ՀՊԿՊԱ, Նշանի ֆոնդ, Արգար Հովհաննիսյանի 27.4. 79 թվակիր նամակը)։

կախոսը կոչում է Բաղամական շրջան և Սան-Ստեֆանոյի համաձայնագրին հաջորդած ժամանակաշրջանը, որը պայմանական ձևով միջազգային է անվանվում: Հովհաննիսյանը այս շրջանի վերջնադիծը համարում է այն ժամանակները, երբ միջազգային բառը կդադարեր սոսկ խոսք լինելուց և Արևմտյան Հայաստանը կդառնար ինքնուրույն երկիր՝ միջազգային հսկացողությամբ:

Հրապարակելով Հայաստանի պատմության այս երեք շրջաններում ստեղծված եվրոպական հեղինակների աշխատությունների տեսությունը, Ա. Հովհաննիսյանը փորձում է միաժամանակ դնահատել դրանք: Այնուհետև Աբգար Հովհաննիսյանը գտնում է, որ հայերն իրենց քաղաքակրթության ասպիճանով, դասական լեզվով, բարձրարվեստ գրականությամբ, իրենց ազգային ուրույն դիմագծով, աշխատասիրությամբ և խաղաղությամբ մեծ երաշխիքներ են տալիս ապագա գործունեության համար: Նրանք անփոխարինելի միջնորդներ են՝ արևմտյան քաղաքակրթությունը Արևելքում տարածելու գործում: Նա, սակայն, ցավով է նշում, որ Բեռլինի կոնգրեսի մասնակիցները հաշվի չեն առել այս ամենը: Հովհաննիսյանը հիշում է կոնգրեսի հայ պատգամավորներից մեկի խոստովանությունը, թե իրենք նախանձով էին նայում վոքրիկ Մոնտենեգրոյի պատգամավորին, որը «հզոր՝ յուր իրավունքներով, յուր ազգի՝ պատերազմի դաշտում թափած արյունով, համոզված էր, թե յուր ձայնը լսելի պիտի լինի և Բաղամականությունից պիտի ստանա՛, ի՛նչ որ հայ պատգամավորները զուր սպասում էին ստանալ արդարամիտ ատենի մարդասիրությունից»[56] *(ընդգծումը մերն է—Մ. Մ.):*

Հովհաննիսյանն անհրաժեշտ է համարում ապացուցել այդ Բաղամականությանը, որ հայերի պահանջները բնավ էլ չեն հակադրվում որևէ ժողովրդի շահերի: Սվելին, հայկական նահանգներն իրենց բնական և աշխարհագրական դիրքով շատ հարկավոր են Բարևան պետությունների: Հայաստանը և՛ ռազմական առումով, և՛ առևտրական, և՛ տնտեսական, շատ Բշանակալից հեռանկարներ ունի: Ժողովուրդը խաղաղասեր է, զբաղվում է երկրագործությամբ և առևտրով և երբեք աշխարհակալական ձգտումներ չի ունեցել: Հայերն, ասում է հեղինակը, ստեղծված են ինքնավարության համար. Թույլ տվեք նրանց զարգացնել իրենց տնտեսությունը, տվեք ազգային միլիցիա՝ պաշտպանվելու Բարևան ցե-

---

56 «Փորձ», 1881, №2, էջ 34:

ղերի հարձակումներից և կհամոզվեր, թե այդ խաղաղ ժողովուրդը որքան օգուտներ կարող է տալ մարդկությանը:

Ստեղծված ճգնաժամային վիճակից դուրս գալու միջոցը Ա. Հովհաննիսյանը համարում է ժողովրդի ազգային գիտակցությունն արթնացնելու անհրաժեշտությունը: Երբ մի ժողովուրդ սկսում է ճանաչել իրեն և քննել իր անկման պատճառները, ապա կարելի է ասել՝ նա ձեռք է բերում փրկության ստույգ երաշխիքը: Պատմական ավյալ ժամանակաշրջանում, ասում է Հովհաննիսյանը, հայերը պետք է հետևողական լինեն, լինեն արմենոֆիլ և հաստատամտությամբ պայքարեն իրենց իրավունքների համար: Նա հայտնում է այն միտքը, թե նորագույն ժամանակների պատմության բազմաթիվ օրինակներից հայտնի է, որ փոքր ժողովուրդների «օգնության աղաղակները մինչև արձագանք են գտել քաղաքակիրթ աշխարհի մեջ», ընդ որում՝ «որքան նոցա գործ դրած ջանքերը մեծ են եղել, այնքան ավելի համակրության արժանի են եղել, համակրություն, որի մեջ ջերմ խոսքերին հաճախ հետևել է և գործը»[57]: Տվյալ դեպքում, եվրոպական մամուլը կարեկից է հայության տառապանքներին, ասում է նա, օտար հեղինակները, դիտնականները, ճանապարհորդները, չնչին բացառությամբ ամենադրական ձևով են արտահայտվում հայ ժողովրդի մասին, Եվրոպան, մասնավորապես Անգլիան, զորավիգ է հայոց հարցին: Ա. Հովհաննիսյանը չի հուսահատվում այն բանից, որ Բեռլինի կոնգրեսում հայկական հարցը բավարար լուծում չի գտնում: Նրա կարծիքով անգլո-հայկական բարեկամական ընկերության նիստերը, հայության օգտին կազմակերպվող միտինգները, անգլիական պետական քարտուղարների ելույթները՝ այդ հարցին ապագայում բավարար լուծում տալու երաշխիքներ էին: Ի լրումն ամենի՝ Ա. Հովհաննիսյանը հանգամանորեն նկարագրում է հայկական հարցի համերաշխությանը նվիրված միտինգը, որը կազմակերպվել էր Լոնդոնում 1878-ի հուլիսի 1-ին, Բեռլինի կոնգրեսի աշխատանքի օրերին[58]:

Մենք ասացինք, որ Ա. Հովհաննիսյանն իր գաղափարությունը կարդում է 1879-ին, երբ պատերազմի ավարտից հետո հայ գործիչները

---

57 Նույն տեղում, №1, էջ 3:

58 Ինչպես երևում է Ա. Հովհաննիսյանի նամակից, միտինգի ամբողջական նկարագրությունը նրան էր ուղարկել Եղյանը («Այն միտինգի հաշիվը,— գրում է նա,— որ բացացա Ձեղանից և որ վերջում կարդացի— պատկեց բոլոր գործը»):

դեռևս հույսեր էին կապում անգլիական կառավարության գործունեության հետ՝ Փոքր Ասիայում։ Անցնում է երկու տարի և «Փորձի» խմբագրությունը վերանայում է նախկին դիրքորոշումը։ Անգլիան, գրում է ամսագրի տեսաբանը, «թեև պաշտոնապես համամիտ ու համակարծիք էր ցույց տալիս իրան մյուս պետություններին, բայց ձեռքի տակից սկսեց Թուրքիայի կարծեցյալ շահերը պաշտպանել և, որ ցավալի է, արևելյան քրիստոնյաների արդարացի պահանջների առաջ խուլ մնալ»։ Թվում է այս փաստը բավական էր, որպեսզի խմբագրությունն անհրաժեշտ հետևություն աներ, սակայն Ա. Հովհաննիսյանը հայկական հարցի ձախողումը վերագրում է սոսկ Բիկոնսֆիլդի «երկմիտ ու մասամբ անգործունյա քաղաքականությանը»։ Խմբագրությունը «նշանակալից» հեղաշրջում է անվանում այն փաստը, որ իշխանության ղեկը տորիներից (պահպանողականներ) անցնում է վիգերի ձեռքը (ազատականներ) և բարձրաբարբառ հրապարակում է իշխանության նոր ղեկավար Գլադստոնի հետևյալ միտքը. «Արևելքը պետք է արևելյան քրիստոնյաներին պատկանի, յուրաքանչյուրին յուր սահմաններում»[59]։

Աբգար Հովհաննիսյանը «Փորձի» շրջանն ավարտում է և «Արձագանքի» հրատարակության գործն սկսում՝ չհասած մի վերջնական եզրահանգման։ Պատերազմի նախօրյակին որոշ ժամանակ արևմտահայության վիճակի բարելավմամբ նա կապում էր Միդհատի սահմանադրության և, առհասարակ, տերության ներսում կատարվելիք բարեփոխումների հետ։ Պատերազմը փոխում է նրա ծրագրերի ուղին, և 16-րդ հոդվածը արևմտահայության ճակատագիրն ուղիղ գծով կապում է ռուսական պետության հաղթանակների հետ։ Կարճ ժամանակից, սակայն, Անգլիայի խարդավանքի հետևանքով այդ հույսերն ի դերև են ելնում և Հովհաննիսյանը Բեռլինի կոնգրեսից հետո թեքվում է դեպի եվրոպական դիվանագիտությունը, որի բնդհանրական հսկողության էր հանձնարարվել բարենորոգումների իրականացման գործը՝ Փոքր Ասիայում։

Հովհաննիսյանի հայացքները որոշակի էվոլյուցիա են ապրում 80-ական թթ. սկզբներին, երբ ոգևորված Արևմտյան Հայաստանում սկսվող շարժումների հետևանքով, նա ներգրավվում է այդ շարժումներին օժանդակող խմբերի մեջ և զբաղվում թե՛ նյութական միջոցնե-

59 «Փորձ», 1881, №2, էջ 135։

բի հանգանակության, և՛ թե արևմտահայության դիմելու դեպքում[60]։ Այդ և հետագա շրջանում նա իր պարբերականներում հաճախ է հրապարակում հոդվածներ՝ նվիրված եվրոպական փոքր ժողովուրդների ազատագրական պայքարի փորձին։ Սակայն հայկական հարցի լուծմանը հետագա երկու տասնամյակներում ևս տոկում է «Արձագանքին» խմբագրին, շարունակել խնդրի լուծման իր ցավագին որոնումները։

Հայ խմբագիրների դիրքորոշման փոփոխականությունը պայմանավորված էր ժամանակաշրջանի հրամցրած հարցերի բարդությամբ և այդ գործիչների գաղափարական հավատամքի տատանումներով։ Վերահաս պատերազմը, ռուսական զնդի հաղթանակը, 16 և 61-րդ հոդվածների երևան գալը, խոր հուզումների աղբյուր են դառնում։ Հայ գործիչները դիվանագիտական փորձ չունենալով և չկարողանալով խոթամուխ լինել հարցերի քաղաքական սրամտաբանության մեջ, դժվարությամբ էին կողմնորոշվում ստեղծված իրավիճակում։

Ինչպես տեսանք՝ «Մշակի» դիրքն այդ օրերին ավելի սրմտատակն էր և կայուն. Բաֆֆին և Արծրունին հավատ չէին ընծայում եվրոպական դիվանագիտությանը և ապավինելով Ռուսաստանի ազատագրական միտքին, միաժամանակ առաջ էին քաշում զնդի ուժով հայերի ազատությունը նվաճելու ծրագիրը։ Աբ. Հովհաննիսյանը միջին տեղում էր. «Մշակից» աջ և «Մեղվից»՝ ձախ։ Հատկորեն պատկերացնելով արևմտահայերի թշվառության աստիճանը և նրանց վիճակի բարվոքման անհրաժեշտությունը, նա, սակայն, ինչպես տեսանք, հարկադրված էր առաջարկել հարցի լուծման մի քանի տարբերակ։ Ընդ որում, եթե մինչև Բևզիկի կոնդրեսը նա չհման կետեր ուներ՝ Պ. Սիմեոնյանի հետ, ապա կոնդրեսից հետո երկու գործիչների դիրքորոշումները բաժանվում են։

Ամեն բանից առաջ Հովհաննիսյանը դժգոհ էր կոնդրեսի արդյունքներից, այն դեպքում, երբ Սիմեոնյանը շլացած էր 61-րդ հոդվածով։ Երկրորդ՝ Հովհաննիսյանի համար անընդունելի էր «Մեղվի» խմբագրի այն կարծիքը, թե հայերը պետք է գործեն խոհեմաբար, և ջանան իրենց «օրինավոր բաժինը ձեռք բերելու բնական ճանապարհով»։ Կոնդրեսից

---

60 Ազգային-ազատագրական պայքարի հարցում ազգային-պահպանողականների տարած զարգացումը հատատում է և Արշ. Միլիբյանը իր «Նյութեր հայ հասարակական կյանքի և մտքի» ձեռագիր աշխատության մեջ (էջ 144—145)։

հետո Հովհաննիսյանը ազգը կոչում էր ինքնաճանաչության, համոզված, որ ժողովուրդը որքան լավ պատկերացնի իր ստրկական վիճակը, զրկված լինի պրանից, այնքան հեռանոզական կլինի լավագույն ապագային հասնելու իր ձգտումների և պայքարի մեջ և այնքան հավանական կդառնա Եվրոպայի կամ Ռուսաստանի օժանդակությունը:

Երրորդ հիմնական խնդիրը, որի լուծմանը նրանք մոտենում էին տարբեր ծայրերից, Հայաստանի ապագա վարչական կառուցվածքի հարցն էր: Սիմեոնյանը պատերազմից անմիջապես հետո հայտնեց այն տեսակետը, թե հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ ինքնավարության ձեռք երկիրը ղեկավարելու համար և նրան հարկավոր են միմիայն բարենորոգումներ: Մինչդեռ «Փորձի» ամբողջ հրապարակախոսությունը ուղղված էր մեկ նպատակի՝ Արևմտյան Հայաստանի համար ամեն գնով ձեռք բերել երկրի ղեկավարման ինքնավար վարչաձև:

Այն բանից հետո, երբ Բեռլինի կոնգրեսի մի շարք մասնակիցներ հայ պատվիրակության պահանջը համարում են «մի հանդուգն, բոլոհական ազդեցության տակ ներշնչված կամ թե Թուրքիայի թշնամիներից դրդված դաղափար», Ս. Հովհաննիսյանը վճռում է հակահարված տալ Բերահավատներին և նրանց ծանոթացնել հարցի պատմությանը: 1880 թ. «Փորձի» համար պատրաստվում է մի հոդված՝ «Հակոբ Շահամիրյանի մատենագրական գործունեությունը Հնդկաստանում» խորագրով, որը փաստորեն Հայաստանի ապատագրման և ինքնավարության համար հայ գործիչների մղած պայքարի պատմությունն էր: Հոդվածագիրն անդրադառնալով կոնգրեսում արտահայտված այն կարծիքներին, թե ինքնավարության գաղափարը հանդուգն միտք է, ներկայացնում է ինքնավարության համար մղված պայքարի 160 տարիների պատմությունը: Այնուհետև հիշատակվում է այն իրողությունը, որ այդ հարցը ռուսական բարձր տյաններում քննարկվել է 4 անգամ, և միշտ հնդկահայ գործիչների ակտիվ մասնակցությամբ (Պետրոս I-ի, Եկատերինա II-ի, Նիկոլայ I-ի օրերին և ռուս-թուրքական վերջին պատերազմի ժամանակ): Հոդվածի վերջին բաժնում խոսվում է Շահամիրյանի գործունեության, մասնավորապես նրա «Որոգայթ փառաց» աշխատության մասին, ընդ որում համապատասխան վերաբերմունք են գրքի այն հատվածները, որտեղ խոսվում է հանրապետական կարգերի առավելության մասին և նշանակվում միապետական սիստեմը:

1880-ի մայիսին հոդվածը մերժվում է գրաքննության կողմից: Արխիվում պահպանված զեկուցագրից պարզվում է, որ 1880-ին «Փորձից»

մերժվել է ևս երկու հոդված («Մեծ և փոքր ազգությունները» և գերմաներենից թարգմանված «Արևելյան հարցի ամենահասարակ տարրերը»)։ Հետաքրքրական է, որ Ա. Հովհաննիսյանը արտասահմանից վերադառնալուց հետո կարողանում է Շահամիրյանին նվիրված այդ հոդվածն, այնուամենայնիվ, տպագրել 1881-ի 2-րդ համարում՝ Սրբուհի Երիցյանի ստորագրությամբ։ Նույն թվականի առաջին համարում նա զետեղում է մեծ գործիչների ասույթները ազգի և հայրենիքի մասին, հավատացած, անշուշտ, դրանց դաստիարակչական նշանակության մեջ[61]։

Այս ասույթները խորհրդանշում էին Հովհաննիսյան-խմբագրի անցնելիք ուղին՝ «Փորձին» հաջորդող տարիներին։ Նույն 1881 թ. «Փորձի» ուղղությանը առանձնահատուկ սրություն է հաղորդում Պարոնյանի քաղաքական հրապարակախոսությունը, որը հետագայում օգնում է Հովհաննիսյանին՝ ուշագրության կենտրոնում պահելու արևմտահայության ազատագրության հարցը և այն քննարկելու առավել լայն շրջանակներում։

---

61 Հիշենք այդ ասույթներից մի քանիսը. «Մարդուս առաջին առաքինությունն է՝ պահել յուր անձը հայրենիքին»։

«Անկարելի է ստրկացնել մի ազգ, որ հաստատ կամք ունի ազատ լինելու»։

«Ազգերի բարօրությունը կարող է ծնվիլ մեյն յուրյանց հողի վրա»։

«Նույնիսկ հայրենյաց ծուխը քաղցր ու ախորժելի է մեզ»։

«Ստրկացած ազգը երջանիկ օրեր չունի»։

«Ամենայն ազգ, որ ցանկացել է ազատության, միշտ ազատ է եղել»։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

«ՓՈՐՁԸ» ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ա. ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

XIX դարի 70—80-ական թվականները արևելահայ իրականության մեջ հայտնի են դպրոցաշինության վերելքով: Քաղաքներում և գյուղերում բազմանում են հայ դպրոցները, ավելանում է Եվրոպայում և ռուսական համալսարաններում կրթություն ստացած մանկավարժների թիվը, հայ մտավորականությունը զարկ է տալիս հրատարակչական գործին: 60—70-ական թվականներից երևում են առաջին մանկավարժական հանդեսները, հրատարակվում են ուսումնական ձեռնարկներ, մանկական գրքեր: Դպրոցների զարգացման հարցը դաղափարական լուրջ հարց էր, որի լինելիությունը «Փորձի» խմբագրությունը լծորդում էր ազգի ամբողջականության պահպանման ծրագրի հետ: «Փորձի» տեսաբան Պալասանյանը հանդեսի գաղափարական ուղղությունն էր հաստատում, հրապարակելով հետևյալ միտքը. «Հայ ժողովուրդը նույնպես սկսում է ըմբռնել, որ մեծ դպրոցը առհասարակ անհրաժեշտ է, մեզ համար նա կյանքի և մահվան խնդիր է, մի խնդիր, որի հետ սերտ կապված է մեր լեզվի գոյությունը, ազգային կյանքի այս ամենահաստատ սյունը»[1] (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Ազգի կենսունակության ապահովման գաղափարը, որին բոլորանվեր ծառայում էր «Փորձը», դպրոցի միջոցով խարսխված էր լեզվի պահպանման հիմնական ծրագրին: Ահա թե ինչու, հրատարակության հենց առաջին տարվանից «Փորձի» էջերը սրամտորվում են

[1] «Փորձ», 1876/77, №4, էջ 90:

դպրոցական գործի լուսաբանմանը Կովկասում և Արևմտյան Հայաստանում:

Խմբագրությունը մի քանի հոդվածներով անդրադարձել է Ներսիսյան դպրոցին. տպագրվել և քննարկման է դրվել դպրոցի անուշ Մանդինյանի կազմած կանոնադրության նախագծի մեկնությունը, հրատարակվել է Ներսիսյան դպրոցի 56-րդ տարեզարձի առիթով դպրոցի տնօրինության ներկայացրած հաշվետվությունը: Ամսագրի աշխատակիցները ընթերցողների ուշադրությունը հրավիրել են նաև մանկավարժական կադրերի պատրաստման, գեղարվեստական դրականության հրատարակման, դպրոցի ուսումնական շենքի կառուցման հարցերի վրա:

«Փորձի» էջերում հարց է բարձրացվել ուսումնական խնդիրներում սահմանափակել հոգաբարձուների իրավունքները, նրանց իրավասությանը հանձնելով միմիայն դպրոցների նյութական ու անտեսական գործերը: Բանավիճելով «Փորձի» այս հարցադրման դեմ, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու Գ. Եվանգուլյանը հայտարարում է, թե ուսուցիչների ընտրության գործը միմիայն տեսչին վերապահելով՝ նրան կարելի է դարձնել միապետ, իսկ հոգաբարձուների իրավունքների սահմանափակումը կնշանակեր անուղղակիորեն փակել դպրոցի դռները նրանց առաջ[2]: «Փորձի» առաջարկը վիճարկվում է և ժամանակի այլ գործիչների կողմից:

«Փորձի» խմբագրությունը արձագանքում է Գայանյան օրիորդաց դպրոցի 10-ամյակին, հանգամանորեն շարադրում նոր Նախիջևանում հաստատված արհեստագիտական դպրոցի հիմնադրման պատմությունը և հրապարակում դպրոցի կանոնադրությունը:

Ա. Հովհաննիսյանը ընդհուպ մոտենում է գավառական հայ դպրոցների վիճակին և էջմիածնի կողմից այդ դպրոցներին ցույց տրվող օգնության հարցին: «Մեր հոգևորականության պարտականությունները» հոդվածը նվիրված է ժամանակի հայ դպրոցների առջև կանգնած ընդհանուր դժվարություններին: Վերատեսուչների նշանակման կարգը չի արդարացնում իրեն, ասված է այդ հոդվածում: Նրանց աշխատանքը չի գնահատվում ըստ արժանվույն: Հիշատակվում է այն փաստը, որ Թիֆլիսի, Քութայիսի և Ելիզավետպոլի գավառներում առանց օգնականի մի տեսուչ է նշանակված միայն, այն դեպքում, երբ նույն տեղերի պետական դպրոցներում ծառայում էին երեք նահանգական վերատեսուչ-

2 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880, №20, 24:

ներ՝ իրենց օգնականներով (աշխատավարձի չափը ևս համապատասխանաբար տարբերվում է՝ 800 ռուբլի՝ 2500 ռուբլու դիմաց)։

«Փորձի» թղթակիցները նկարագրելով Թավրիզի ազգային դպրոցի անապահով վիճակը, ցավ են հայտնում, որ էջմիածինը և տեղական եկեղեցիները չեն մտածում նյութական օգնություն հասցնել դպրոցին։ Աթոռի անփութությանն է վերագրվում և այն փաստը, որ սինոդի անդամ, ճանաչված բանասեր Աբել արքեպիսկոպոսը մնոնում է Թվաառության և պրիանքները մեջ։ Ամսագրում հաղորդումներ են հրապարակվել, նվիրված առաջիկայում հրավիրվելիք ուսուցչական երկրորդ ժողովին և այլ խնդիրների։

Կրթական գործի պատկերը ամբողջական դարձնելու նպատակով Ա. Հովհաննիսյանը հանձնարարում է Պալասանյանին՝ կազմել Ռուսաստանի հայկական ծխական դպրոցների վիճակագրությունը[3]։

Պալասանյանը միաժամանակ հրապարակում է ծխական դպրոցների կանոնագրությունը, նշելով նաև դրա ակնառու թերությունները։ Այսպես, նա ավելորդ է համարում կրոնագիտության դասերին նախատեսվող ազոթքները, գտնում է, որ անբնական բան է մայրենի լեզուն ուսուցանել դրաբար լեզվով։ Հինգ տարի անց Ա. Հովհաննիսյանը «Արձագանքում» ուսուցչական ժողովի նախօրյակին հրապարակում է Ալ. Երիցյանի կազմած վիճակագրական նոր տվյալները, որոնք ցույց էին տալիս կրթական գործի վերելքը հայ իրականության մեջ։

«Փորձ» ամսագրում մեծ տեղ է նվիրվել և մանկավարժական գիտության նվաճումներին Եվրոպայում։ Բարձրացնելով կրթությունը դիտելով իբրև «կյանքի ու մահվան խնդիր», Հովհաննիսյանը այդ հարցի արմատական ուսումնասիրության համար ամսագրում զետեղել է առանձին հոդված՝ գերմանական համալսարանների, իբրև կատարյալ սիստեմի, ներքին կառուցվածքի մասին։ Հայկական դպրոցներում օտար լեզուների դասավանդման նոր եղանակները մշակելու համար «Փորձի» էջերում տեղ է գտել այդ հարցին նվիրված արտասահմանյան խոշոր մանկավարժների մեթոդական ուսումնասիրությունների տեսությունը։ Տպագրվել են թարգմանական բազմաթիվ հոդվածներ (Հերբարտի՝ «Սկզբունք մանկավարժական», պրոֆ. Բոդրիլեարի՝ «Ժողովրդական դրագարաններ և դասախոսություններ», էդ. լաբուլեի՝ «Հրապարակական դասախոսությունների մասին» և «Կրթությունն Ամերիկայում»

3 Տե՛ս Ս. Պալասանյան, «Ազգային կրթություն» հոդվածը, «Փորձ», 1876/77, №4։

ուսումնասիրությունները)։ Եվրոպայի մանկավարժական մտքի նվաճումները հայ մանկավարժներին ծանոթացնելու նպատակով Հովհաննիսյանը հրապարակել է Փարիզի 1878 թ. աշխարհահանդեսում է. Բերժեի, Բրուարի, է. Լըվասէօրի կարդացած դասախոսությունների բնագրերը՝ մայրենը լեզվի, պատմության և աշխարհագրության առարկաների ուսուցման մեթոդների մասին։

«Փորձում» հրապարակվել են և մի շարք դրախոսություններ, նվիրված ժամանակի դպրոցական ձեռնարկներին և մանկական գրականությանը։ Ս. Մանդինյանը, դրախոսելով Ն. Տեր-Ղևոնդյանցի «Մայրենի լեզու» դպրոցական ձեռնարկը, առաջ է քաշում ազգային ոգով ու մատչելի լեզվով այնպիսի դասագրքերի պահանջը, որոնց մեջ մեծապես օգտագործվեին Աբովյանի, Աղայանի, Րաֆֆու, Սրվանձտյանցի ստեղծագործությունները։ Նույն դրախոսը Գամառ-Քաթիպայի «Մանկական երգերում» բացահայտում է արվեստական բանաստեղծության և ժողովըրդական երգերի տարբերությունները՝ մանկական ընկալումների առումով։ Ճիշտ է, Մանդինյանը որոշ հիմքեր ուներ մերժելու Պատկանյանի մի քանի երգերը, բայց նա ընկնում է ծայրահեղությունների մեջ՝ ամբողջ հոդվածը ուղղելով «արվեստական» բանաստեղծությունների դեմ։ Մանկական գրականության երկու ճյուղերի բացահայտ հակադրման մեթոդին դիմելով, հոդվածագիրը փաստորեն գրողների ուշադրությունը սրում էր միմիայն ժողովրդական երգերի հավաքման գուտ բանասիրական աշխատանքի վրա։

Հայկական դպրոցների հետ անմիջական առնչություն ուներ Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերությունը, որին Ա. Հովհաննիսյանը նկատելի տեղ է հատկացրել «Փորձի» հրատարակության վերջին տարիներին։

1879 թ. մտավորական Գաբրիել Միրզոյանի ղեկավարությամբ մի խումբ երիտասարդներ հիմնադրում են «Հայերեն մանկական գրքեր հրատարակելու ընկերություն» և մշակում այդ ընկերության կանոնադրությունը։ Միրզոյանը և նրա ընկերները դպրոցական ձեռնարկների և մանկական գեղարվեստական գրականության հրատարակության միջոցով նպատակ ունեին օգնել հայ դպրոցներին։ Առաջին տարին նրանք լույս են ընծայում «Թավամատ մեղու» և «Կարմիր լապտեր» գրքույկները։ Ս. Հովհաննիսյանը, նշմարելով այդ խմբի գործունեության օգտակարությունը, համաձայնության է գալիս ընկերության հիմնադիրների հետ, որպեսզի միացյալ ուժերով ընդլայնեն գործի շրջանակները

և ուսումնական ձեռնարկներից ու մանկական գրքերից բացի զարկ տան առհասարակ գեղարվեստական գրականության հրատարակության։ Առանձնացված հանձնաժողովը մշակում է նոր կանոնադրության նախագիծ, որը 1880 թ. հունվարի 31-ին հաստատում է Կովկասի փոխարքան։

Ընկերությունն անվանվում է «Թիֆլիսի ընկերություն հայերեն գրքերի հրատարակության», որի հիմնական նպատակն էր կատարելագործել Կովկասում ծավալվող դպրոցաշինական գործը։ Այդ ծրագիրը ստանում է հետևյալ ձևակերպումը. ամեն մի ժողովուրդ, որը ցանկանում է ապահովել իր ապագան, պետք է առողջ հիմքերի վրա բարձրացնի դաստիարակության շենքը։ «Լուսման ու գիտության ծառը միայն այն ժամանակ կրողբոջի ու գեղեցիկ պտուղներ կտա, երբ խոր արմատներ է ձգել ազգի բարոյական հողի մեջ»[4]։

Ընկերության նախաձեռնությամբ տպագրվում են Ռ. Պատկանյանի բանաստեղծությունների գիրքը, Խորենացու «Հայոց պատմությունը» (Իզմիրլյանի առաջարկով և տրամադրած միջոցներով), Մորիս Բլոկի «Գործնական տնտեսություն» գիրքը (Պալասանյանի թարգմանությամբ). դպրոցական ձեռնարկների շարքից հրատարակվում են Նահապետյանի «Կենդանաբանություն» և Ալ. Քիշմիշյանի «Բուսաբանություն» գրքերը։

«Փորձի» խմբագիրն իր ամսագրի էջերում շարունակաբար լուսաբանում է այս ընկերության գործունեությունը և տպագրում նիստերի արձանագրությունները։

Արևմտյան Հայաստանի մշակութային կյանքում նույնպես այս օրերին մեծ աշխուժություն էր նկատվում։ Դեռևս ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին տեղի հայ մտավորականությունը, զարկ տալու համար ժողովրդի կրթության ու լուսավորության գործին, սկսել էր հիմնադրել կրթական զանազան ընկերություններ։ 1870-ին հիմնադրվում է Բզոցասիրաց ընկերությունը, 1876-ին՝ Առեղյան ընկերությունը։ Հայաստանի մեջ, մասնավորապես Տարոնի գավառում ազգային կրթությանը նպաստելու նպատակով, այդ ընկերությունները 1878-ին միավորվում են։ Կիլիկիայում ազգային կրթությանը զարկ տալու նպատակով Հաճըն քաղաքում, 1871 թ. կազմակերպվում է Վարդանյան ընկերությունը, որը 1879-ին Ներսես պատրիարքի հովանավորությամբ վերակազմվում է և ստանում Կիլիկյան ընկերություն անունը։ Վասպուրա-

---

4 «Փորձ», 1880, №3, էջ 122։

կանի շրջանի դյուղերի մանուկ սերնդի ուսման և կրթության գործը հոգում էր Արարատյան ընկերությունը:

Ռուս-թուրքական պատերազմից հետո այս ընկերությունների գործունեությունը դառնում է ավելի նպատակասլաց: Լուսավորության ու կրթության ճանապարհով արևմտահայ մտավորականությունը ևմիտրում էր ժողովրդին հասցնել ազգային ինքնագիտակցության, նրան բարձրացնել բարոյապես և Եվրոպայի ուշադրությունը հրավիրել այս լուսավորված ու աշխատասեր ազգի վրա: Այդ առիթով «Փորձի» տեսաբանն այն միտքն էր հայտնում, թե Բեռլինի վեհաժողովը հայերին սովորեցրեց, որ «ամենայն ազգ, որ ապրել է կամենում՝ ամենից առաջ հույսն յուր վրա պիտի դնե, և թե չկա արտաքին օգնություն, որ ներքին ինքնօգնության կարողանա հավասարվիլ»[5]: «Փորձի» խմբագրությունը նահանգապին կոչ է անում «ամենայն բանիմաց և գործին հմուտ անձանց», ամեն կերպ օժանդակել Արևմտյան Հայաստանում կազմակերպված կրթական-մշակութային ընկերություններին: Մամուլի օրգաններին խմբագրությունը խորհուրդ է տալիս՝ «անդադար յուր խորհուրդներով ուղղություն ու սնունդ տալ նոցա գործունեությանը, ցույց տալով այն բարվոքումներն ու վերանորոգություններըը, որ արևմտյան ազգերը մտցրին ազգային դաստիարակության գործի մեջ»[6]:

1879—1881 թթ. Ա. Հովհաննիսյանը արձագանքում է արևմտահայ իրականության կրթական կյանքի նորույթներին, լուսաբանում վերը հիշված ընկերությունների գործունեությունը: Այսպես, նա հրապարակում է Ներսես պատրիարքի կոնդակը՝ Հայաստանում «վարժարաններ հաստատելու, ընկերություններ կազմելու և արդեն կազմածներն քաջալերելու»: Ա. Հովհաննիսյանը ոչ միայն «Փորձում» զետեղում է Ամբր. վրդ. Ռուբինյանցի հայտարարությունը՝ դավառի երեխաների համար Կարինում երկրագործական դպրոց բացելու մասին, այլև մանակցում դպրոցի օգտին Թիֆլիսում կազմակերպված հանգանակությանը և խրախուսում հայերին, օժանդակելու այդ գործին: 1878—79 թթ. «Փորձում» հրապարակվում են Կարոցասիրաց-Արևելյան ընկերության առաջին շրջանում ծավալած գործունեության տեղեկագրերը, Կիլիկյան ընկերության կանոնադրությունը, Արարատյան ընկերության նոամյա գործունեության հաշվետվությունը և այլն:

---

5 «Փորձ», 1879, №9, էջ 128:

6 Նույն տեղում, էջ 129:

1880-ի հունիսի 1-ին հրապարակվում է այս ընկերությունների միավորումն ապահովող ծանուցումը: Սա հսկայական քայլ առաջ էր՝ գավառի լուսավորության գործի ասպարեզում: Ծրագրվում էր կրթական միօրինակ սիստեմ ստեղծել գավառներում, ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել տեղական պահանջներին, մեծ ուշադրություն դարձնել մանկավարժական կադրեր պատրաստելու և ուսումնական ձեռնարկներ հրատարակելու գործին: Ընկերության բյուջեն տարեկան պետք է կազմեր 5000 ռուբլի: «Փորձում» տպագրվել է Միացյալ ընկերության կանոնադրությունը և տնօրեն ժողովի դիմումը հայությանը:

«Փորձը» հայկական դպրոցների զարգացման անհամեմատ բարենպաստ տարիներին օժանդակում էր դպրոցաշինական գործին Կովկասում և Արևմտյան Հայաստանում, օգնում առաջնորդվելու Եվրոպական մանկավարժական գիտության մեթոդներով: Հանդեսի մանկավարժական բաժինը ճանաչողական մեծ արժեք ունի և ցույց է տալիս այդ գիտության զարգացման բարձր մակարդակը՝ նախորդ տասնամյակի համեմատությամբ:

Բ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ազգային գրականական «Փորձ» հանդեսն, ամենայն իրավամբ, կարող էր կոչվել և գիտական բանասիրական պարբերական: Տարիներ շարունակ այն կատարել է հայ իրականության դեռևս անծանոթ՝ մասնագիտական, պատմա-բանասիրական ամսագրի դերը և իբրև այդպիսին, մինչև այսօր էլ պահպանում է իր մեծ նշանակությունը: Այստեղ տպագրվել են Մկրտիչ Էմինի, Ք. Պատկանյանի, Հ. Գնեղամյանցի հոդվածները, Սեն-Մարտենի կենսագրությունը, Պետերմանի ասույթները հայերի մասին: Ամսագրի բանասիրական բաժնի մեծարժեք ուսումնասիրություններից է Վահան վարդապետ Բաստամյանի «Ամուսնությունը ըստ հայոց եկեղեցական իրավաբանության» հետազոտությունը և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երա գրած առաջաբանը: «Փորձի» պատմաբանասիրական բաժինը, հիմնականում վարում էին ամսագրի աշխատակիցներ Ալ. Երիցյանը և Ստ. Պալասանյանը:

«Փորձում» տպագրվել են Ալ. Երիցյանի բազմաթիվ ուսումնասիրությունները (Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ, Բողոքականությունը Տաճկական Հա-

յաստանում, Տաճկաստանի հայոց իրավունքները, Թոնդրակեցի հայք)։ Երիցյանի գրչին են պատկանում նաև Ներսես կաթողիկոսի կյանքին և գործունեությանը նվիրված հոդվածաշարը, Լոռիս-Մելիքյանի տոհմաբանությունը լուսաբանող հոդվածը, Ռուսաստանի հայոց, Թիֆլիսի հայերի և Կարինի շրջանի բնակչության վիճակագրությունը, հայկական հնատիպ գրքերի մատենագիտական ցանկը։ «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի հայտնի խմբագրից հետո[7] Երիցյանն առաջին փորձն է անում՝ խ. Աբովյանի ձեռագրերը հավաքելու և հրապարակելու ուղղությամբ։ Ալ. Երիցյանն առաջիններից մեկն էր նաև, որ մամուլում լուսաբանում էր հայ ժողովրդի բազմադարյան ձեռագիր արվեստի հարցերը։ 1872 թ. Հաղբատի շրջակայքում կատարած պեղումների ընթացքում նա ձեռք էր բերել կիսաքայքայած մի շարք ձեռագրեր, որոնք ցուցադրում է 1876-ին Պետերբուրգում տեղի ունեցած արևելագետների 3-րդ համաժողովում։ Այստեղ կարդացած իր զեկուցման մասին նա հանդամանալից մի հաղորդում է հրապարակում «Փորձում»։

«Փորձի» դիտական կշիռն իր հոդվածներով անառարկելիորեն բարձրացրել է և Ստեփաննոս Պալասանյանը։ Բացի «Գրիչ» գրական կեղծանունով տպագրած գրաքննադատական հոդվածներից, որոնց մասին խոսք կլինի հետագայում, Պալասանյանն իր ստորագրությամբ տպագրել է պատմական, բանասիրական բազմաթիվ հոդվածներ ու թարգմանություններ։ Դրանցից հիշատակության արժանի են Հայոց մատավոր շարժողությունը և դարում, Ազգային պատմության նշանակությունը, Ազգային կրթություն ԺԲ դարում, 19-րդ գարու նշանաբանը, Ազգերի զարգացման օրենքները, Թե ինչ վիճակի մեջ է հայկական գրականության պատմությունը, Եվրոպացոց վաճառականությունը Կիլիկիայի հետ և այլն։ Վերոհիշյալ հոդվածները դուռ պատմական նշանակություն ունենալու հետ մեկտեղ անպայմանորեն առնչվում էին և ժամանակի իրադարձություններին, ինչ-որ չափով օգնում հասկանալու օրվա հուզող խնդիրները։

Դժվար է գերագնահատել Ալ. Երիցյանի և Ստ. Պալասանյանի մատուցած մեծ ծառայությունը հայ հասարակությանը և դիտական աշխարհին։ Հանձին «Փորձի» նրանք ստեղծել են հայ առաջին դիտական

---

7 Մ. Տեր-Ավարյանց, *Մեկ բանի խոսք Ապովյանի վերայ* («Կռունկ հայոց աշխարհին», 1861, №7)։

լավագույն հանդեսի տիպը, որի օրինակով տարիներ անց սկսեցին հրատարակվել մի շարք հայկական մասնագիտական հանդեսներ[8]։

«Փորձում» զգալի տեղ է հատկացվել տեղագրական ուսումնասիրություններին (Ախալցխա, Վան), նկարագրվել են Հայաստանի առանձին գավառների բնակլիմայական պայմանները, լուսաբանվել բնակչության զբաղմունքի և կուլտուր-կրթական հաստատությունների վիճակի հետ կապված հարցերը։ Տեղագրական հոդվածների ավանդույթը գալիս էր հայկական պարբերականներից («Հյուսիսափայլ», «Հայկական աշխարհ») և եթե մի կողմից այդ նպաստում էր պահպանելու առանձին քաղաքների պատմությունը, մյուս կողմից հետապնդում էր ժողովրդի ազգային ինքնաճանաչության ոգին արթնացնելու նպատակը։

«Փորձի» բանասիրական բաժնին աշխատակցել է նաև Քաջբերունին։

Խաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի) ծնվել է 1837 թ. Վաղարշի գավառի Ուզունթալա գյուղում։ Ավարտել է Ներսիսյան դպրոցը, ապա ընդունվել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որպեսզի «բժիշկ դառնալով օգտակար լիներ աղքատ դասակարգին»։

Ուսանողական տարիներին նա զբաղվում է գրական գործունեությամբ և Ս. Շահազիզի, Մ. Սագաթյանի, Մ. Սիմոնյանի և այլ գործիչների հետ մասնակցում «Հյուսիսափայլի» աշխատանքներին։ Այդ տարիներին նա գրում է մի վեպ գյուղական որսորդական կյանքից (անտիպ), «Ջուխտ անիծյալ դերեզման» վիպակը (անտիպ), «Սուրբ Գևորգի զուլը» պատմվածքը, որը տպագրվել է 1872 թվականին։ 1861 թ. «Հյուսիսափայլի» էջերում տպագրվում է Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» վեպի առաջին մասը, որը քննադատական ռեալիզմի առաջին ցայտուն արտահայտություններից էր հայ գրականության մեջ։ Միքայել Նալբանդյանը «Քաղցկեղ Հայաստանի» անունն է տալիս «Տեր Սարգիս» վեպին և դրա հեղինակին մեծարում «Հայ Գոգոլ» անունով։ Ու թեև Նալբանդյանը «մի փայլուն գալոշք» է մաղթում Տեր-Հովհաննիսյանին, նրա վեպի շարունակության տպագրությունն արգելվում է գրաքննու-

---

8 Չհաշված ամսագրի ազգային և քաղաքական տեսությունների բաժիններում հրապարակված բազմաթիվ անստորագիր հոդվածները, որոնցից շատերը, անկասկած պատկանում են Պալասանյանի և Երիցյանի գրչին, «Փորձ» հանդեսում ևս. Երիցյանի ստորագրած հոդվածների ծավալը կազմում է ավելի քան 760 էջ, իսկ Պալասանյանինը՝ ավելի քան 650 էջ։

թյան կողմից, իսկ ճանապարհները «հայ Դոդոլին» տանում են այլ ուղղությամբ։

Իր հետագա գործունեության ընթացքում Գ. Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի) աշխատակցել է ժամանակի գրեթե բոլոր կովկասյան պարբերականներին («Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Ազդագրական հանդես», «Լումա», «Արարատ», «Նոր-դար», «Кавказ», «Баку», «Труды первого съезда кавказских врачей», «Труды общества врачей г. Баку», «Протоколы императорского кавказ. мед. общества», «Кавказское сельское хозяйство» և այլն)։

«Փորձ» հանդեսի չորս տարվա համարներում է տպագրվել Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողություններ» ուղեգրական նոթերի առաջին կեսը։ Երկրորդ, առավել ծավալուն բաժինը հեղինակը տպագրել է «Արարատ» հանդեսի 1888—1892 թթ. համարներում[9]։

Այս աշխատությունը սոսկ ուղեգրական գործ չէ։ Քաջբերունի—գավառական բժիշկը ողջ կյանքը անցկացնելով շրջապատյուններում, հարկադրված ընդունում է գրական աշխատանքը, բայց 1867—98 թթ. պաշտոնի բերումով ճանապարհորդելով Կովկասի բազմաթիվ գավառներում, ինքնամոռաց կերպով նվիրվում է հայրենի հնություններին, պատմական հուշարձանների, ժողովրդական բանահյուսության ուսումնասիրմանը։ Ականատես լինելով այն բանին, որ հին հուշարձաններն արդեն ավերվում են, և համոզված, որ այդ պրոցեսը հազիվ կարելի լինի կասեցնել, Գ. Տեր-Հովհաննիսյանը վճռում է սերունդներին ներկայացնել դրանց ամբողջական նկարագրությունը, «որպեսզի ապագայի համար մնա գոնե պատմություն՝ փոխանակ ավերակների, որոնք արդեն անհետանալու վրա են»[10]։ Պատմական հուշարձանների հետ մեկտեղ երբեմնի «հայ Դոդոլը» իր ուղեգրություններում նկարագրում է և հայ գավառների կյանքը, բնակչության աղքատությունը և հետամնացությունը, լուսավորության գործի դրվածքը տեղերում, հրապարակում է ժողովրդական զրույցների, խաղերի, ծեսերի, հավատալիքների բազմաթիվ օրինակներ։ Այստեղ մեկ անգամ ևս փայլատակում է «Տեր Սարդիան» ստեղծող վիպասանի տաղանդը, որը դեղարվեստական

---

9 Ամբողջ աշխատության ծավալը կազմում է 532 էջ, որից 214 էջը բաժին է ընկնում «Փորձին», իսկ 318 էջ տպագրվել է «Արարատում»։

10 «Արարատ», 1892, №6, էջ 518։

գործի մակարդակին է հասցնում «Ճանապարհորդական նկատողություններ» դրքի բազմաթիվ էջեր։

Քաջբերունու ուղևորությունն սկսվում է Ալեքսանդրապոլից և ընդգրկում Երևանի, Նախիջևանի, Ագուլիսի շրջանները և Վայոց ձորի բոլոր գյուղերը[11]։ Այս ուղևորությունը պատկերող աշխատությունը բաղկացած է 51 գլուխներից և ամփոփում է գլխավորապես Վայոց ձորի հին հայկական հուշարձանների նկարագրությունը։ Թե որքան լայն էին Քաջբերունու հետաքրքրասիրության սահմանները, այդ երևում է նրա ուշադրության արժանացած հնությունների հետևյալ թվարկումից. «խաչքարեր, տապանաքարեր, գերեզմանատներ, մատուռներ, հոյակապ եկեղեցիներ, վանքեր, գյուղերի փլատակներ, կամուրջներ, ամրոցներ, բարվանսարայք»[12]։

Յուրաքանչյուր հնություն Քաջբերունին ներկայացնում է գիտական բարեխղճությամբ։ Տեղագրական անհրաժեշտ ծանոթություններից հետո նա նկարագրում է հուշարձանի արտաքին տեսքը (պահպանված վիճակում), այնուհետև հրապարակում բոլոր արձանագրությունները, վերծանում դրանց դժվարընթեռնելի հատվածները, ճշտում շիրմաքարերի պատկանելությունը, ստուգաբանում բնակավայրերի անունները։ «Իմ նկարագրությունս մի լիակատար ուղեցույց է,— գրում է նա,— և կազմված է այն ձևով, որ ամեն մի վանքի կամ ավերակի պատմություն կարելի է առանձին բրոշյուրով հրատարակել»[13]։ Քաջբերունու մեծարժեք այդ աշխատությունը այսօր ևս պահպանում է իր նշանակությունը, իբրև մեր հնագիտական գրականության լավագույն աղբյուրներից մեկը։

Վաստակավոր բանասերի մանրակրկիտությամբ Քաջբերունին փորձում է Շարուր-Նախիջևան ճանապարհին կռահել Տիգրան Ա. Երվանդյանի հիմնադրած Տիգրանակերտի տեղը, վկայակոչում է Խորենացուն, Ասողիկին, Էմինին, Ստ. Օրբելյանին, Շոպենին։ Այլևայլ առիթներով նա հիշում է Բաքրաձեին, բազմիցս ճշտում իր նախորդ Ս. Ջալալյանի թույլ

---

11 Թուս-Թիւրքական պատերազմի կապակցությամբ 1878 թ. Քաջբերունին ուղարկվում է Կարս, տեղի ռուսական զորաբանակի գլխավոր բժշկի տրամադրության տակ։ Ապրիլից-Հունիս, իր Կարսում գտնված միջոցին, Քաջբերունին ուսումնասիրում է շրջակայքի հին հայկական հուշարձանները, որոնք հետագայում նկարագրում է իր «Հիշողություններում» (տե՛ս «Լումա», 1903, № 3, 4, 5, 6 և 1904, № 2, 3, 4, 5)։

12 «Փորձ», 1877/78, №4, էջ 321։

13 «Արարատ», 1892, №6, էջ 519։

տված վրիպումներն ու սխալները[14]։ Հիշում է ողջ պատմական գրականությունը, կապված Նախիջևանի հիմնադրության հետ։ Մի շարք առիթներով ավանդությունները համադրելով փաստերի հետ, ջանում է ճշտել ավանդության պատմական հենքը[15]։

Քաջբերունին բազմիցս անդրադառնում է էջմիածնում պատմական թանգարան ստեղծելու մտքին, մի բան, որ ներդաշնակում էր և «Փորձի» խմբագրության ծրագրերին։ Սակայն, երազելով հանդերձ էջմիածնի ապագա հնագիտական թանգարանը, Քաջբերունին ունայ հայացքով է դիտում վայոց ձորի հոյակապ հուշարձանների կործանումը՝ էջմիածնի հարևանությամբ, այն, փաստը, որ էջմիածինը բնավ չի հետաքրքրվում շարունակաբար հայտնաբերվող հնագիտական բազում նյութերով։ Քաջբերունին ցավով է նշում, որ էջմիածինը չի պատասխանում հայկական մտավոր կենտրոնին առաջադրված պահանջներին։ Ձեռագրերը պահվում են անխնամ, գրական գործիչների հիշատակը և նրանց գերեզմանները մոռացության են տրվում և այլն։ Իր աշխատության բաժիններից մեկը վերնագրելով «Վանքի կալվածքը, նորագյուտ իրեղեններ, գովասանք էջմիածնին», Քաջբերունին արդեն անուղղակիորեն ընդգծում էր իր վերաբերմունքը վանքի բարքերի նկատմամբ[16]։

Հսկայական դժվարություններ է հաղթահարել Քաջբերունին հավաքելու համար իր ուղեգրության նյութերը։ Ուխտագնացի մոլեռանդությամբ նա քայլել է դեպի հնություններ՝ ամռան տապին և ձմեռվա բքաշունչ օրերին, հաճախ սողալով է մուտք գործել ավերակ նկեղեցիները, մաքրել դամբարանների շիրմաքարերը, ուժերի մեծագույն լարումով և տիտանական համբերությամբ վերծանել արդեն եղծված արձանագրությունները։ Գիտնականի քննախույզ հայացքով իրեն հասած տողերը համադրելով Ստ. Օրբելյանի պատմության համապատասխան դրվագներին, նա միշտ գտել է այս կամ այն առեղծվածի ճշգրիտ բանալին և կամ ստեղծել իր վարկածը։

Ինության անմատչելի հատվածներում Քաջբերունին երբեմն նպատակին հասնում էր՝ կյանքը վտանգի ենթարկելով. սակայն լսենք իրեն՝

---

14 Ջալալյան Սարգիս, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, ի Տփխիս, 1858։*

15 Այս առումով գերազանց է գրված Վայոց ձորի պատմական հուշարձաններին նվիրված պատմա-քննական տետրյունը, որը հրապարակվել է «Արարատի» 1888—1892 թթ. մի շարք համարներում։

16 «Փորձ», 1877/78, №4, էջ 352։

հնագետին. «Ո՞վ է շինել այդ կամուրջը և ե՞րբ։ Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է դիմենք ո՛չ թե որևէ գրական աղբյուրի կամ թե սրբազան Ջալալյանի գրքին, որի մեջ կամրջի վերա խոսք անգամ չկա, այլ պետք է դիմել միակ ամենաթանկագին աղբյուրին, այն է նույն կամրջի հայկական արձանագրությանը։ Վերջինը գետնված է կամրջի արևելյան ծայրի հյուսիսային ճակատի վերա մի ամբողջ երկայն սալաքարի երեսին։

Ո՜հ, որքան տանջանք, որքան չարչարանք եմ կրել, ընթերցող, սորա արձանագրությունը կարդալու համար։ Երևակայեցեք արձանագրությունը ունի ահագին բարձրություն, տառերը խճճվել են և մամռով ծածկվել, ներքևից նաև դիտակով (բինոկլ) անկարելի է ջոկջկել նոցա։ Բայց կամրջի պատմական ծագման հայտնագործությունը հարկադրել է ինձ գործ դնել ամեն մի միջոց արձանագրությունը կարդալու։ Երեք-չորս անգամ թոկով կախվել է տողերիս դրողը, երեք չորս անգամ կախվել են նորա ուղեկիցները՝ տառերը մաքրելու և ածխով նշանելու։ Այս անելով, այնուամենայնիվ դժվարին էր կարդալ։ Վերջապես երկայն բարդի ծառեր միմյանց ծայրից կապել եմ և թոկերով սանդուղ շինել, որով և բարձրացել մինչև արձանագրությունը։ Այս միջանկյալ հանգամանքը թեև ավելորդ էր հիշել անդամ, բայց նպատակս այն է, որ ցույց տայի, թե որքան դժվար է առանց անհրաժեշտ գործիքների, առանց նպատակի և օգնության ճանապարհորդել այս կողմերում և մամռի, հողի, քարերի, ավերակների տակից լույս աշխարհ դուրս բերել շատ պատմական տեղեկություններ, որ գուցե առանց այս չարչարանքների կորչեին հավիտյան»[17]։

Խոսելով պատմական հուշարձանների մասին, Քաջբերունին տեսադաշտից դուրս չի թողել տեղի բնակչության մոտ անցյալի պատմությունը և նրանց առօրյան կյանքի հանգամանքները։ Այսպես, աշխատության վերջին գլուխները նա նվիրել է ռուս-պարսկական պատերազմից հետո Վայոց ձորում բնակություն հաստատած պարսկահայերի գաղթի պատմությանը։ Նա դրի է առել գաղթի մասնակիցների հիշողությունները, «աչքի առաջ ունենալով որ մի սերունդ ևս անցած, արդեն թանկագին նյութերը կմտնին գերեզման», կազմել է այդ բնակչության վիճակագրությունը և այլն։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Քաջբերունու ուղեգրու-

---

17 «Փորձ», 1879, №10, էջ 49։

թյան այն էջերը, որոնք նվիրված են ժողովրդական ավանդություններին, ծեսերի նկարագրությանը, աշուղական երգերին, բանահյուսության նյութերին։

Տարբեր գավառների ժողովրդական երգերի, ավանդությունների ու ծեսերի մեջ Քաջբերունին փնտրել է դրանց տարբերակները, դրանք կապել հնագույն պատմական և անգամ նախապատմական կյանքի հետ, ջանացել ավանդությունների արձագանքը գտնել հայ պատմիչների երկերում։ Քննախուզական այդ մեթոդով էր նա պատրաստվում ուսումնասիրել հայ պարարվեստը, փորձելով պատասխանել այն հարցին, թե «այդ բանաստեղծական շարժումներից (պարերից ու կաքավներից) ո՞ր տեսակներն են փոխ առած այլ ազգերից, որո՞նք դուռ հայկական են, և ժառանգությո՞ւն են արդյոք հին, հայկազանց նահապետական դարերից, թե նոքա պատկանում են մեզ ավելի մոտ ժամանակներին»[18]։ Ժբախտաբար Քաջբերունուն չի հաջողվել իրագործել բանասիրական ստեղծագործական աշխատանքի իր մեծ ծրագրերը։ 1903 թ. «Հայկական սովորություններ» ժողովածուի առաջաբանում նա խոստովանում է. «անսահման ցանկություններից մինն է եղել կարելուչն չափ ընդարձակ քննողության և ուսումնասիրության առնել ազգային սովորությունները, ավանդությունները, երգերը»։ Նա ափսոսանքով է հիշում, սակայն, որ «ճանապարհորդական նկատողություններից բացի իրեն չի հաջողվել հրատարակել ձեռքի տակ եղած հսկայաբանակ նյութերը։ Նրա ստեղծագործական լաբորատորիան կորավել է, ի ցավ հայկական բանասիրական գիտության։ Հնագիտական-հանքաբանական իր հավաքածուն Քաջբերունին 1894-ին նվիրել է Գևորգյան ճեմարանին։

«Փորձը» մեծ ծառայություն է մատուցել սերունդներին՝ պատշաճ տեղ հատկացնելով հայ բանասիրության բնագավառի մի շարք ծաղրակշիռ հետազոտություններ։ Ստանալով Ա. Հովհաննիսյանի աջակցությունը, բանասերներն իրենց հերթին վարձահատույց են եղել նրան և «Փորձը» դարձրել գիտական հանդեսի այն նոր տիպը, որի պահանջն արդեն զգացվում էր հայկական կյանքում՝ հայագիտության աննախընթաց զարգացման շնորհիվ։

---

18 «Փորձ», 1881, №3, էջ 90։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ՓՈՐՁԻ» ԷՋԵՐՈՒՄ

Ա. ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ «ՓՈՐՁԸ»

«Փորձը» իբրև գրական օրգան՝ բացառիկ երևույթ էր հայ իրականության մեջ։ 60-ական թվականների գրական վերելքին հաջորդած համեմատական խաղաղությունն ընդհատվում է 70-ական թվականների ազգային կյանքի բուռն իրադարձություններով, որոնք իրենց կնիքն են դնում այդ օրերի գրականության վրա։ «Հյուսիսափայլի» դադարից հետո անցել էր ավելի քան տասը տարի։ «Վերք Հայաստանի», «Մեռելահարցուկ», «Տեր-Սարգիս», «Սոս և Վարդիթեր» վեպերը, Պատկանյանի, Նալբանդյանի, Շահազիզի բանաստեղծությունները խոր հետք էին թողել հայ հասարակական և մտավոր կյանքում։ Վերջին տասնամյակում թևև գրական կյանքը կորցրել էր 60-ական թվականների աշխուժն ու հմայքը, բայց Կովկասի հայ պարբերականները շարունակում էին նպաստել հայ նոր գրականության զարգացմանը, և ընթերցողներին են հրամցնում իշխան Բագրատունու (Ստեփանե) բանաստեղծությունները ու արձակը, Գ. Տեր-Հովհաննիսյանի, Գ. Տեր-Ալեքսանդրյանի կենցաղային պատկերներն ու պրոյցները, Հ. Քուչուբեկյանի բանաստեղծությունները, մի շարք հետաքրքրական թարգմանական գործեր։ Տպագրվում են Գ. Սունդուկյանի առաջին վոդևիլները։

70-ական թթ. երկրորդ կեսի քաղաքական նոր իրադրության պայմաններում «Մշակ» և «Փորձ» պարբերականները դառնում են այն հիմնական օջախները, որտեղ նոր ուժով սկսում է բորբոքվել հայ գրական

միտքը: Ստեղծվում են արժեքներ, որոնք նոր որակ են հաղորդում տասնամյակի գրական համեստ նկարագրին:

«Մշակի» էջերում երևում է Սունդուկյանի քաղաքացիական հրապարակախոսության նորանշան արգասիքը՝ նրա «Մասլահաթների» շարքը: Այս թերթի էջերում երևում և առնականանում է Բաֆֆու ինքնատիպ արձակը, որը շուտով պետք է իշխեր հայ մտքերի վրա: «Փորձը» ուղի է բացում Պատկանյանի պոեզիայի ամենաժողովրդական շարքի՝ «Ազատ երգերի» հաղթարշավի համար: Թեև դարաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրներին նվիրված իրենց ստեղծագործություններով Սունդուկյանը, Պռոշյանը, Աղայանը հավատարիմ էին մնում 60-ական թվականների հայ գրականության մեջ սկզբնավորված ռեալիստական ուղղությանը և առավել ամրապնդում այն, այդուհանդերձ, 1875—1885 թթ. գարաշրջանի հայ գրականությունը Ս. Սարինյանը բնութագրում է իբրև «դասական ռոմանտիզմի ամենաբուռն վերելքի շրջանը»: Բաֆֆու, Պատկանյանի, Բարխուդարյանի, Շևրենցի և ժամանակի այլ գրողների ստեղծագործությունները տոգորված էին հայ իրականությանը համակած ազգային-ազատագրական գաղափարներով: Այս շրջանի ռոմանտիզմի առանձնահատկությունը Ս. Սարինյանը համարում է այն, որ «ի տարբերություն նախորդ շրջանի ռոմանտիզմի լուսավորական բովանդակության և շեշտված երազայնության, ավելի որոշ է կանգնում կյանքի վերափոխման, ազգային ու սոցիալական ազատագրության իրական հնարավորությունների ըմբռնման վրա[1]»:

Այս օրերի գրական շարժման մեջ նշանակալից դեր են կատարում «Փորձի» շրջանակի գրողները, որոնց ստեղծագործությունն առավել ամբողջական ձևով, քան ժամանակի որևէ այլ օրգանի էջերում, ներկայացնում է 70-ական թթ. վերջի և 80-ական թթ. սկզբի հայ գրականության զարգացման ամենաբնորոշ ուղղությունները:

Սկսելով «Փորձի» հրատարակությունը, Ա. Հովհաննիսյանը աշխատակցության է հրավիրում՝ «Հյուսիսափայլին» և «Կռունկին» ժամանակին մոտ կանգնած հայ գրողներ Ռ. Պատկանյանին, Պ. Պռոշյանին, Գ. Բարխուդարյանին, Գ. Տեր-Հովհաննիսյանին (Քաջբերունի), ինչպես և իր օրերի արդեն ճանաչված գրողներ Սունդուկյանին, Աղայանին, Բաֆֆուն և ուրիշներին: «Փորձի» խմբագիրն իր հանդեսի հետ է կապում նաև

---

1 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 85:

Ներենցին ու Պարոնյանին, որոնում և տպագրում է Մ. Նալբանդյանի անտիպ երկու ստեղծագործությունները:

Ստեղծագործական այս կոլեկտիվի ջանքերով 1876—1881 թթ. հնարավոր է դառնում հանդեսի էջերում տպագրել հայկական և թարգմանական գրական երկերի պատկառելի մի շարք: Հովհաննիսյանի խոստովանությամբ՝ «Փորձը» «ժողովրդի ընթերցանության քաղցը հագեցնելու համար բավմակողմանի նյութեր էր տալիս»[2]: Այս առումով ուշադրության արժանի է խմբագրի և այն խոստովանությունը, թե մեկ տարվա ընթացքում «Փորձում» տպագրված գրական երկերի ծավալը գերազանցում էր Ռուսաստանում և Արևմտյան Հայաստանում նույն ժամանակամիջոցում ընթերցանության համար տպագրված հայ գրականության ընդհանուր ծավալը[3]:

«Փորձում» են տպագրվել և կյանքի ուղեգիր ստացել Պերճ Պռոշյանի «Հացի խնդիր», «Կռվածաղիկ» և «Շահեն» վեպերը, որոնցից «Հացի խնդիրը» Հովհաննիսյանը հրատարակել է նաև գերմաներեն՝ «Հայկական գրադարան» մատենաշարի V և VI հատորներում:

Լաֆֆին աշխատակցել է «Փորձին» իբրև հրապարակախոս: Հանդեսում տպագրվել են նրա «Պարսկաստան» հոդվածը և «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» ուղեգրությունները: Եթե հաշվի առնելու լինենք քաղաքական այն շիկացած մթնոլորտը, որում հրատարակվում էր «Փորձը», ապա հասկանալի կդառնա, թե ինչու Պարոնյանը և Ներենցը նույնպես՝ հանդեսի էջերում հանդես էին գալիս որպես հրապարակախոսներ: Ներենցը «Փորձի» ընթերցողներին ծանոթացնում էր արևմտահայ իրականության և օրվա առաջադրած հարցերին: Քերևս հենց սկզբից կանխանշված ծրագրով՝ Պարոնյանը վերակենդանացնում էր Կոմս Էմմանուելի «Հիշատակարանների» ավանդույթը, 80-ական թթ. հայ կյանքի ամենակենսական հարցերն ընթերցողին մատուցելով պատմական ժամանակաշրջանի նրբին զգացողությամբ, քաղաքագետի խորաթափանցությամբ և գրական փայլով: Նա միաժամանակ ձայնակցում էր «Փորձի» գրաքննադատական դպրոցի բարձրացրած հարցերին և «Հոսհոսի ձեռատետրում»՝ թեկուզ էպիզոդիկ, բայց շատ ուսանելի դիտողություններով ամրապնդում ամսագրի սկզբունքները:

---

2 Տե՛ս «Արձագանք», 1882, №1:

3 Հայկական «Հասա ամսագրի»՝ «Փորձի» յուրաքանչյուր համարը կազմված էր միջին հաշվով տասներկու մամուլից:

Գաբրիել Սունդուկյանը, որ առհասարակ շատ էր կապված «Փորձի» խմբագրության հետ, այդ հանդեսի էջերում տպագրել է իր «Խաթաբալա» կոմեդիան։ «Փորձում» է տպագրվել ժամանակին գրական աշխարհին դեռ անծանոթ, երիտասարդ Մուրացանի պատմական մի հետազոտությունը՝ «Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալյանի համառոտ կենսագրությունը»։ Չնայած խմբագիրը մեծ հույսեր էր կապում Ղ. Աղայանի աշխատակցության հետ, բայց, իրերի բերումով, ընդհարվելով խմբագրության անդամների հետ, «Փորձի» հիմնական գրական աշխատակիցը կարճ ժամանակից հեռանում է։

Ստեղծագործական և բարեկամական ջերմ կապերով էր կապված Ռափայել Պատկանյանը Աբ. Հովհաննիսյանի հետ։ «Փորձի» էջերում տպագրվել են Պատկանյանի երեսուներեք բանաստեղծությունները, «Ես նշանած էի» և «Փառասեր» վիպակները, «Ճանապարհորդական տպավորություններ» ուղեգրությունների երրորդ և չորրորդ հատվածները[4]։ Պատկանյանի «Ազատ երգերը» առաջին անգամ տպագրվել են «Փորձի» էջերում և Հովհաննիսյանը հետագայում այն միտքն է հայտնել, թե «Փորձն» է թելադրել նրան երկարամյա լռությունից հետո հնչեցնել «այն ազատ երգերը, որոնք այնքան դեղեցիկ ապացուցում էին մեր ղպացմունքները, ձգտումներն ու հույսերը, մեր լավագույն «ես»։

Պատկանյանի բանաստեղծությունների մի մասին Աբ. Հովհաննիսյանը ծանոթացել էր 1876 թ. սկզբին Պետերբուրգում, Եղյանի տանը։ Այն ժամանակ Փիլ. Վարդանյանն արդեն ստացել էր այդ ձեռագրերը, դրանք տպագրելու իր հրատարակելիք «Լումա» ամսագրում։ «Լումայի» ձախողումից հետո Վարդանյանը Եղյանի հետ մտածում են այդ բանաստեղծությունները տպագրել առանձին գրքով, ապա, թերևս հեղինակի ցանկությամբ, ձեռագրերն ուղարկում են Հովհաննիսյանին՝ հրատարակելու «Փորձում»[5]։

Այնուհետև արդեն Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունները սկսում են երևալ «Փորձի» առաջին տարվա 3-րդ համարից (որտեղ տպագրվել են 10 բանաստեղծություն) մինչև այդ ամսագրի հրատարակության վերջը։ Հարկավ, իրավացի էին և Փ. Վարդանյանը (Եղյանի ու Սանասարյանի հետ) և Հովհաննիսյանը, որոնք Գամառ-Քաթիպայի բա-

---

4 Առաջին և երկրորդ հատվածները հրատարակվել են «Մշակի» 1879 թ. 121 և 124 համարներում։

5 Տե՛ս ԳԱԹ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 1115—1119, 1121—1123։

նաստեղծություններին հաջողություն էին գուշակում, իբրև օրվա հրատապ հարցերի հաջողված արձագանք: Բանաստեղծությունների մի մասը հեղինակն սկսել էր գրել 1876 թ., այն ժամանակ, երբ արևմտահայության տնտեսական, բարոյական ու քաղաքական դրությունը հուսահատական աստիճանի էր հասել: Պատկանյանը նկարագրում էր Արևմտյան Հայաստանի թշվառ իրավիճակը. ավարառություն, առևանգություններ, սպանություններ, անապահով ու անհնոանկար կյանք («Հազարեն մեկը», «Մերուկ վանեցի», «Երկու պատկեր», «Թալանած գեղ» և այլն):

1876—78 թթ. Պատկանյանի պոեզիան ծնվեց պատմական ժամանակաշրջանի թելադրանքով և նոր դարագլուխ բացեց հայ գրականության մեջ: Բալկանյան երկրներում սկսված ազատագրական շարժումները ոգեշնչում են բանաստեղծին և նա սլավոնական ժողովուրդների պայքարի օրինակով փորձում է ուրբի հանել արևմտահայերին: Պատկանյանն ստանձնում է փողհարի պաշտոնը. արթնացնել հայերին, սթափեցնել ամենօրյա հաշիվների մեջ մանրացած ու ընդարմացած նրանց հոգիները. զենքի կոչել ժողովրդին և նրա վրա հրավիրել Եվրոպայի ուշադրությունը... Չէ՞ որ դուռը չբախած՝ ոչ ոք չի բացում և ոչինչ չի ստանում նա, ով ցանկացածը չի հայցում:

1876-ին գրած մի նամակում Պատկանյանը այն համոզմունքն էր հայտնում, որ Վանի հարցը «մեր օրերով պիտի լույս աշխարհ ելանե»: Այդ հարցը, որ կարճ ժամանակից արդեն ընդգրկում էր ողջ Արևմտահայաստանը, Պատկանյանը դիտում է իբրև իր սերնդի առաջնահերթ խնդիրը: «Խոհեմություն, զգաստություն և երկյուղ՝ նվաստ զգացմունքներ են այս դիպվածումը,— գրում է նա:— Մինչև մեր կյանքը առավել արդյունք պիտի ունենա, քան թե ազգ սթափեցնողի երախտիքը... Մինչև ցորենը չի մեռնի՝ պտուղ չի տալ, ով որ մեղանից առավել աղնիվ է, թող ցույց տա այլոց նահատակվելու ճանապարհը»[6]:

Այդ օրերի իր բանաստեղծություններում Ռ. Պատկանյանը նշում է հայերի ճակատագրի փոխակերպման նոր ուղեգիծ: Պատկանյանն աղնիվ պայքարի է կոչում սարկական լծի տակ կքված, բայց բնավ երբեք ազատությունը չմոռացած իր հայրենակիցներին: Մշեցի գեղջուկը արդեն զենք ու դինամիթերը է պահանջում մայրաքաղաքի հայերից, վանեցի մայրը որդուն ճանապարհում է մարտի դաշտ և բարեմաղթում. «ըստրուկ զընա՛ արյան դաշտը, վերադարձի՛ր ազատված»: Գեղջուկը թող-

---

6 Ռ. Պատկանյան, *Երկերի ժողովածու*, 1963, հատ. I, էջ 289—290:

նելով վար ու ցանքը, խոփը հանձնում է դարբնին՝ սուր ու սուսեր կռելու։ «Ձայն բարբառոյ յանապատի», «Հայերուս բաղձանքը», «Հայերուս ցուրբը» «Ազգասեր» և այլ բանաստեղծություններում Պատկանյանի քաղաքացիական քնարը հնչում է միանգամայն նոր երանգներով։

Պատկանյանն ընդվզում է եվրոպական դիվանագիտության նամոլ ու անարդար քաղաքականության դեմ։ Եվրոպան անտեսում էր հայերի փառավոր անցյալը, նրանց ծառայությունը քաղաքակրթությանը և հենց իրենց, եվրոպական երկրներին։ Բանաստեղծի ազգային արժանապատվությունը խոցված էր և դրանից էլ թերևս սնունդ է առնում նրա պոեզիայի մի նոր ուղղությունը, հայ մարդու խիղախության և ամենակարողության չափազանցված դրվատումը։

Հայաստանի փրկության անհրաժեշտության և նրա մոտալուտ ազատության գաղափարները, քաղաքակիրթ ազգերի շարքում իր արժանի տեղը նվաճելու հայերի երազանքը՝ այրող հանդերով բռնկվում են «Փորձի» էջերում։ Դա ազգային ինքնաճանաչության այն նոր աստիճանն էր, որին ձգտում էին հասցնել ժամանակի ընթերցողներին հայ մտավորականները։

Ուսումնասիրել Պատկանյանի պոեզիայում առկա ազատագրման հույսի մշտավառ շողը և հանկարծահաս վհատությունը, նրա բուռն սերը հայ շինականի նկատմամբ և հուսահատությունը՝ քանդվող օջախների հանդիման, հավատը՝ Գլադստոնի և Եվրոպայի նկատմամբ, այլև դրան հաջորդած հուսախաբությունը՝ արտացոլում էին պատմական այդ բարդ ժամանակաշրջանի առանձնահատկությունները։ Պատկանյանի «Ազատ երգերն» արտահայտում էին ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ բանաստեղծի սերնդակիցների դեղեցիկ պատրանքները և դրանց խորտակման իրողությունը։ Եվ այնքանով, որքանով ժամանակի և՛ լիբերալ, և՛ դեմոկրատական, և՛ ազգային-պահպանողական հոսանքների գործիչները հավասարաչափ տոգորված էին արևմտահայության ազատագրման գաղափարներով, Պատկանյանի պոեզիան այդ օրերի համազգային ոգևորության արդասիքն էր և այդ ոգևորության կազմակերպողը՝ միաժամանակ։ «Փորձի» էջերում տպագրվող «Ազատ երգերը» դաստիարակում էին հայ ընթերցողներին, նրանց խանդավառում ազգային-ազատագրական պայքարի մեծ հեռանկարներով։

Ժամանակին այդ բանաստեղծությունները լայն տարածում էին գտել ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև Արևմտյան Հայաստա-

նում: Իրան մեծապես նպաստել էր Աբ. Հովհաննիսյանը, առաձին ժողովածուով հրատարակելով այդ բանաստեղծությունները: Գրքույկից հարյուր օրինակ ուղարկելով հեղինակին, Հովհաննիսյանը հաղորդում է հետևյալ հետաքրքրական փաստը. «Ազատ երգերը» տպել եմ 8000 օրինակ, 4000 ուղարկել եմ Տաճկաստան՝ ձրի բաժանելու»: Հայ գրականության պատմության համար պակաս հետաքրքրական չէ և այն փաստը, որ Հովհաննիսյանն է ընտրում գրքույկի վերնագիրը («Ազատ երգեր» անվանեցի այս հրաշալի ժողովածուն»)[7]:

«Փորձի» հիմնական աշխատակիցներից էր Գևորգ Բարխուդարյանը: Իբրև բանաստեղծ նա զիջում էր ժամանակի հայ քնարերգուներին, բայց հավատարիմ «Հյուսիսափայլի» ավանդներին, իր պոեզիայով քաղաքացիական սերտագործության էր կոչում նոր սերնդին: Բարխուդարյանի «Վանեցու երգ», «Գարուն Հայաստանի», «Հույս» բանաստեղծությունները լավատեսական տրամադրություններով են տոգորում ընթերցողներին: Թեև Հայաստանն ավերված է, հայերը՝ թշվառ, բայց միևնույն է՝ ձմռանը գարուն կհաջորդի, վանեցի կտրիճը իր սրով կլուծի ընտանիքի դժբախտությունների վրեժը...:

«Փորձում» տպագրվել է Բարխուդարյանի «Մ. Նալբանդյանցի հիշատակին» բանաստեղծությունը՝ «XXX-ցի հիշատակին» աղճատված վերնագրով[8]: Հայ հեղափոխական-դեմոկրատին նվիրված այս ներբողը գրված է Նեկրասովի «Դոբրոլյուբովի հիշատակին» հայտնի բանաստեղծության նմանողությամբ: Հարկավ, Բարխուդարյանը չէր նկատում Դոբրոլյուբովի և Նալբանդյանի գործունեության ընդհանուր ակունքը և նրանցից յուրաքանչյուրին տեսնում էր հերոսացած սեփական ազդի հորիզոնում, բայց երկու մեծ գործիչների ճակատագրերի համանմանությունը, անկասկած, հուզել և բանաստեղծական ներշնչանք է հաղորդել Բարխուդարյանին:

Շատ հետաքրքրական է, որ «Փորձի» հենց հաջորդ համարում Բարխուդարյանը տպագրում է դարձյալ Նեկրասովի շնչով գրված մի բանաստեղծություն՝ ուղղված գրաքննության դեմ: «Ափսո՜ս աշխատանք» խորագիրն է կրում այդ բանաստեղծությունը, որտեղ Բարխուդարյանն ընդգծում է այն իրավիճակը, երբ մտքի մշակը, համակված իր ժողովրդի

---

7 ԳԱՔ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 842:

8 «Փորձ», 1877/78, №3, էջ 360:

վշտերով, թարգմանում է ճշմարտության աղնիվ սկզբունքները, բայց փորձը[9] ցույց է տալիս, որ՝

Ոչ ամեն գրվածք բարենպատակ
Կարող է ընկնել միշտ մամուլի տակ։

Արդեն սրբագրված ձեռագիրը պատրաստ է տպագրության, բայց «Մի գրչի շարժվածք մի վայրկյանի մեջ» նրա գոյությանը վերջ է տալիս...

Գևորգ Բարխուդարյանը, սակայն, մեր գրականության պատմության մեջ է մտել ոչ թե իր բանաստեղծական վաստակի մեծությամբ, այլ կատարած թարգմանություններով։

«Փորձի» խմբագիրը մեծ ծառայություն է մատուցել հայ գրականությանը, ամսագրի էջերում հրապարակելով Միք.Նալբանդյանի անտիպ աշխատությունների երկուսը։ «Փորձի» 1877—78 թ. 3-րդ համարում Հովհաննիսյանը հրապարակել է Նալբանդյանի «Նկատողություններ» դրախոսությունը, որը Նալբանդյանը գրել էր Պետրոպավլովյան ամրոցում՝ Մխիթարյանների հրատարակած Վարդան Բարձրբերդցու «Պատմության» առիթով։ Ձեռագիրը ձեռք բերելով Նալբանդյանի բարեկամներից, Ա. Հովհաննիսյանը բնագրի առաջաբանում նշում է. «Տպագրելով հանգուցյալ Միքայել Նալբանդյանցի այս գործը, որ բոլորովին պատահաբար գտնվել է նորա մի բարեկամի թղթերում, պարտավորություն ենք համարում հայտնելու, որ մի առանձին պատիվ կհամարևինք մեզ համար, եթե կարողանայինք «Փորձի» էջերը զարդարել այս հեղինակի անտիպ մնացած գրվածքներով»[10]։ Նալբանդյանի հոդվածից անմիջապես հետո Հովհաննիսյանը զետեղել է Գ. Բարխուդարյանի «Նալբանդյանցի հիշատակին» («XXX-ի հիշատակին») բանաստեղծությունը, որի մասին խոսք եղավ նախընթաց էջերում։

Մի քանի տարի անց Ա. Հովհաննիսյանին հաջողվում է ստանալ Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետի ձեռագիրը, որը հրապարակում է արդեն «Փորձի» ամենավերջին, 1881 թ. 5—6-րդ միացյալ համարում։ Այս ձեռագրին նույնպես «Փորձի» խմբ-

---

9 Փորձ բառը պետք է հասկանալ իբրև բառախաղ. բանաստեղծը նկատի ունի «Փորձ» հանդեսը։

10 «Փորձ», 1877/78, №3, էջ 247։

բագիրը կգում է շատ չերմ մի ծանոթություն. «Հրատարակելով այս հոդվածը, որ մոտերումս մեր ձեռքն ընկավ մեր բարեկամներից մեկի շնորհիվ, հարկավոր ենք համարում ավելացնել, որ նույնիսկ Նալբանդյանցի ձեռքով է գրած և տեղ-տեղ սրբագրած է (!) Նազարյանցից: Հավանական է, որ յուր ժամանակը լույս չէ տեսել «հեղինակից և խմբագրությունից անկախ պատճառներով»: Ակնարկությունները վերաբերում են ժամանակի անցքերի և անձանց՝ Մխիթարյանց, Մսերին, Այվազյանին, Սարգիս եպիսկոպոսին և վերջապես Ներսես կաթողիկոսին: Շատ հարձակողական ուղղություն ունի կաթոլիկության նկատմամբ, որ այն ժամանակ Ֆրանսիայի պաշտպանությամբ սպառնում էր երկպառակություն ձգել ազգի մեջ, որպսլով հայերին յուր բակարդը:

Երջանիկ ենք, որ մեզ հաջողեցավ կորուստից ազատել մեր ամենահամակրելի հեղինակի այս գրվածքը»[11]:

Ակնածանքը՝ Նալբանդյանի ստեղծագործության և նրա անվան նկատմամբ, հետագայում պահպանվում է և «Արձագանքի» էջերում:

Բ. «ՓՈՐՁ» ՀԱՆԴԵՍԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

«Փորձ»-ը, իբրև գրական պարբերական հայ գրականությանը զուգընթաց ընթերցող հասարակությանը ծանոթացնում էր և եվրոպական գրականության հետ: Տարիներ շարունակ Գևորգ Բարխուդարյանի ջանքերով «Փորձի» էջերը զարդարվել են այնպիսի երկերի թարգմանություններով, ինչպիսիք էին Շիլլերի «Դոն Կարլոս», «Օրլեանի կույսը», «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում» ողբերգությունները, Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», Լեսսինգի «Նաթան իմաստունը», Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Ուլանդի, Մյուլլերի, Լերմոնտովի, Պետեֆիի բանաստեղծությունները: Փիլ. Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել է Գյոթեի «Կլավիդո» ողբերգությունը, Գվերացցիի «Նոնցայի բերդը», Հայդեի «Բևաթրիչե» վիպակները:

Եթե եվրոպական դասական հեղինակների հռչակված ստեղծագործությունների թարգմանությամբ Ա. Հովհաննիսյանը և Գևորգ Բարխուդարյանը հայ ընթերցողին հաղորդակից էին դարձնում արվեստի և մտքի աշխարհի խոշոր նվաճումներին, ապա մի շարք ստեղծագործու-

---

11 «Փորձ», 1881, № 5—6, էջ 156:

բյուների միջոցով նրանք ուղղակիորեն արձագանքում էին օրվա հարցերին: Բարխուդարյանը թարգմանում է հունգար բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Շանդոր Պետեֆիի բանաստեղծությունները («Երկու ճանապարհորդ», «Իմ խնդրած մահը», «Հայրենիքի մասին», «Երեք սրտի պատմություն», «Շղթա»): Հայրենիքի երբեմնի փառքի դովերդումն ու նսեմ ներկայի պատճառած տվայտանքները, ստրկության շղթաների ծանրության ու վիրավորանքի դիտակցությունը, ազատության ու անկախության տենչանքը, ազգության ոտնակոխ եղած սուրբ իրավունքների վիշտը, և բաղձանքը՝ փշրված տեսնելու ստրկական շղթաները, մոտիվներ էին, որ կարող էին կոչվել նույնքան հունգարական, որքան էլ հայկական և համամարդկային:

Հայերին հարազատ էին հնչում նաև հույն ժողովրդի ազատագրական պայքարի էջերը դրվատող «Ֆանարիոտը» և «Հույների պատերազմական երգը» բանաստեղծությունները: Առաջինը պատկանում է Վ. Մյուլլերի գրչին, իսկ երկրորդը կրում էր որպես հեղինակ, Ադամանտի Կորաիսի անունը: «Հույների պատերազմական երգի» հեղինակը միասնության կոչ է անում բուլղարներին, ալբանացիներին, հայերին, հույներին և թուրքական լծի տակ հեծող մյուս ժողովուրդներին, բարձրացնելու համար ազատության դրոշը և փշրելու ստրկության շղթաները: Բանաստեղծը պահանջում է թողնել վնճները, դժտությունները, ներքին պառակտումները, հանուն ավելի մեծ և ազնիվ գաղափարի. չէ՞ որ՝

Ոչջ աշխարհում չկա այնքան
Փառավոր մի բան,
Քան թե մահը ապրի համար
Եվ ազատության:

Վերջերս հայտնի դարձավ, որ Գևորգ Բարխուդարյանը «Հույների պատերազմական երգը» ղզալի կրճատումներով, թարգմանել է ռուս բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Մ. Միխայլովի թարգմանությունից: Եվ քանի որ ժամանակին, ըստ իմ տվյալների, ռուսական հրատարակության մեջ շփոթվել է բանաստեղծի անունը և երգը վերագրվել Կորաիսին, Բարխուդարյանը նույնպես այն համարել է նրա ստեղծագործությունը: Իրականում այն պատկանել է հույն ժողովրդի ազատագրական պայքարի հերոս Ռիգաս Վելեստինլիսի գրչին (1757—1798): Բանաստեղծությունն սկզբնապես կոչվել է «Ռազմական հիմն», ժամանա-

կին մեծ տարածումն է գտել Հունաստանում և երգվել Ռիգասի իսկ հորինած երաժշտությամբ[12]։

Հայրենիքի ազատության համար զոհված զինվորի փառքն էր գովերգվում Բայրոնի «Կյուցյաղնի մահը» բանաստեղծության մեջ, որը թարգմանել էր Գր. Խալաթյանը։

«Փորձ» հանդեսի բանաստեղծությունները՝ Ռ. Պատկանյանի «Ազատ երգերն» են դրանք, թե Ռիգասի մարտաշունչ հիմնը, տպագրվել են համբագրության մեկ նպատակամղումով՝ հայ ժողովրդի մեջ դաստիարակել ազատասիրական տրամադրությունները, նպաստել արևմտահայերի ազատագրական պայքարի կազմակերպման գործին։

Հարուստ է և բազմազան «Փորձի» արձակի թարգմանական բաժինը։ Ասացինք, որ թարգմանվող բանաստեղծություններն իրենց բնույթով ներդաշնակում էին ամսագրի գաղափարական ուղղությանը։ Այս սկզբունքը, բնականաբար, պահպանվում էր և արձակի բաժնում։ Դասական երկերի թարգմանությամբ հայ գրականությունը հարստացնելու հետ մեկտեղ հանդեսի էջերում զգալի տեղ էր հատկացված և, այսպես կոչված, ծրագրային ստեղծագործությունների թարգմանությանը։ Թերևս այդ նպատակով էլ «Փորձի» համարներին կից ստեղծվել էր Հավելվածի ծավալուն բաժինը։

«Փորձի» առաջին տարվա երրորդ համարում զետեղվում են Ալֆոնս Դոդեի «Երկուշաբթի օրվան պրույցներ» գրքից թարգմանված երեք պատմվածքներ։ Պրուսական նվաճողների դեմ ֆրանսիացիների մղած կռիվներից առանձին դրվագներ են դրանք, որ դաստիարակչական նշանակություն պետք է ունենային հայ ընթերցողների համար։ Պատմվածքներից առաջինը՝ «Վերջին դասը» իր գաղափարական միտվածությամբ այնքան համահնչուն էր հայ իրականությանը, որ տարիներ անց Ա. Հովհաննիսյանն այն տպագրում է և «Արձագանքի» էջերում։ Սյուժեն պարզ է, շատ հուզիչ։ Պրուսացիները գրավված էլզասում արդելում են ֆրանսիական լեզվի դասավանդումը։ Երբ արդեն կարգադրված էր ֆրանսերենը հանել դասատախտակից, այդ լեզվի ամենավերջին ժամին ուսուցիչը աշակերտներին պատմում է ֆրանսերենի առանձնահատկությունների մասին. այն, ասում է ուսուցիչը, «աշխարհի ամենագեղեցիկ,

---

12 Տե՛ս Մ. Հակոբյան, Ռիգասը, նրա ծրագիրը և հայերը («Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, №8)։

ամենապարզ և ամենահաստատուն լեզուն է։ Մենք պետք է պահպանենք այդ լեզուն և երբեք չմոռանանք նորան, որովհետև երբ մի ժողովուրդ ստրկանում է, եթե յուր լեզուն պինդ բռնում է, նույնն է, թե յուր բանաի բանալին բռնած ունենար...»[13]։ Նա գրատախտակին իբրև վարչչաքրության օրինակներ՝ գրում է Ֆրանսիա, Ալզաս... դանգից հետո գրատախտակին մնում են ուսուցչի գրած վերջին բառերը՝ «Կևցցև Ֆրանսիան»։

Անձնական երջանկությունը հայրենիքին զոհաբերելու սրտառուչ մի պատմություն է Կրենվիլ Մյուրրեի «Հայրենասեր օրիորդ» պատմվածքը։ Կրկին հայրենիքին նվիրվածության, հավատարմության ու ժողովրդասիրության գաղափարներն են ջատագովվում Գվերացցիի «Նոնցայի բերդը» վիպակում։ Էրկման-Շատրիանի «Դպրոցական վարժապետի պատմությունը» ամբողջ ազգի կրթության ծրագիրն է, հերձվածի ու պատահատումների, հավատափոխության ու մոլեռանդության պարտավությամբ։ Դիկկենսի «Սանպիեռրինները», «Վաճառականի սիրտը», «Հին կաղնյա պահարան» պատմվածքները ներբողում են մարդասիրությունը, աշխատանքը, հասարակ մարդու հնարամտությունն ու ազնվությունը, անկաշառ սիրուն՝ անձը և անգամ ազատությունը զոհաբերելու գնղեցիկ խորհուրդը։ Արևելյան գրույցներին հատուկ երանգով են գրված Այբեր Այնոյի «Ժուրդի լեռան» և «Ֆերիդադեի երգը» գրույցները։ Թվում է, թե առաջին գրույցի թարգմանիչը և խմբագիրը կաշառվել են այն իրողությամբ, որ հեղինակը պատմվածքի գործողությունների վայր է ընտրել Արևմտյան Հայաստանը։ Գործող անձերից մեկը հայ է, որ սրտի ցավով է նշմարում հայկական գյուղերի թշվառությունը («նա մտորում է, թե որքան դժբախտ է իր հայրենիքը՝ ոտնակոխ եղած ոչ միայն թշնամական ցեղերից, այլև իր ազգակիցների կռիվներից քայքայված»)։

«Փորձում» զետեղված թարգմանական գործերը շարունակ պատվում են նույն՝ ազգային-ազատագրական պայքարի հարցի շուրջը. այդ գաղափարը առավել չափով արտահայտված է Պոլ դը Մյուսեի «Դոն Ժուանո» վիպակի մեջ։ Իտալիայի ազգային-ազատագրական շարժումների մի դրվագի նկարագրությամբ հեղինակը զարգացնում է մեկ հիմնական սկզբունք՝ հայրենիքի ազատագրությանը պետք է նվիրել և՛ հարստությունը, և՛ սերը, և՛ անձը... Այս առումով հատկանշական է

---

13 «Փորձ», 1876/77, № 3, էջ 182։

իտալացի գրող և քաղաքական գործիչ Մասսիմո դ'Ազելիոյի (1798—1886) պատմական վեպի թարգմանությունը։ Իր պատմական այլ վեպերում և «Փորձում» տպագրված «Հեկտոր Ֆիերամոսկա կամ Բարլետտայի մարտակոչը» վեպում Մասսիմո դ'Ազելիոն շոշափել է մեկ հիմնական հարց՝ հայրենիքի ազատագրության գաղափարը։ Տարբեր ազգերի միջև ծագած գժտությունները աղետ համարելով, վիպասանը ավելի սրբապիղծ աղետ է համարում ազգի ներսում ծագած պառակտումները։ XVI դարի սկզբի Իտալիայի պատմությունից վերցված համանման մի դրվագի վիպական նկարագրությամբ հեղինակը հույս ուներ պատմական անցքերը ուսանելի դարձնել Իտալիայի միավորման գործին նվիրված ժողովրդի համար։

Թարգմանիչը[14] իր ծավալուն Առաջաբանում խոսում է այն շարժառիթների մասին, որոնք դրդել են իրեն հայ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել իտալացի հայրենասեր, խիզախ զինվորական Հեկտոր Ֆիերամոսկայի կյանքի կարճատև, բայց սխրալից պատմությունը։

«Դ'Ազելիոն թարգմանեցի,— գրում է նա,— որովհետև այն գրությունը, այն ցավերը և այն հույսերը, որ երբեմն Իտալիայինն էին և նա այնքան հմուտ գրչով և ղգայուն ոգով նկարագրած է յուր Հեկտոր Ֆիերամոսկայի մեջ, նման եղած են մերիններին, եթե ոչ բոլորովին՝ գոնե մեծ մասով։ Մեր գրությունը տակավին նույնն է։ Իտալիան այժմ ժպիտն երեսին է։ Դ'Ազելիոնները մխիթարված են. արյուն քրտինք մտան, իրենց արյունով ոռոգեցին ցանած սերմերը՝ երբ հարկը պահանջեց, քաղեցին արդյունքը առատ բարությամբ, շռեմարանեցին ապահով, և արդ վայելում են ուրախությամբ»[15]։

Թարգմանիչը դ'Ազելիոյի և նրա կնոջ նամակագրությունից բերված քաղվածքներով ցույց է տալիս այն խանդավառ մթնոլորտը, որ իշխում էր Իտալիայում, անձնազոհության գաղափարը, որով տոգորված էր ժողովուրդը։

Հայրենասիրության, ազգային-ազատագրական պայքարի թեմատիկան մնում է գերիշխող «Փորձի» հրատարակության բոլոր տարիներին։ Անհամեմատ քիչ տեղ է հատկացվում խոհական-փիլիսոփայական

---

14 Այս և մի շարք այլ թարգմանությունները տպագրված են առանց թարգմանչի անվան հիշատակության։

15 «Փորձ», 1880, №6—7, էջ 3 (Հավելվածի բաժնում)։

երկերին։ Սակայն բացառիկ ուժով է հնչում անգլիական սատիրիկ Էդուարդ Ջենկինսի «Ջինկսի երեխան» քաղաքական պամֆլետը[16]։

Աղքատ մի բանվոր, Ջինկսը, նոր ծնված իր 13-րդ զավակին փորձում է նետել գետը։ Նրան այդ արգելում են. երեխայի խնամքը հանձնվում է կաթոլիկ միանձնուհիներին. մի առ ժամանակից, սակայն, երեխան թողնվում է բախտի քմահաճույքին։ Մինչև 15 տարեկան հասակը մանուկը անցնում է ձեռքից ձեռք, հաստատությունից հաստատություն, ընկնում է ոստիկանատուն, ապա նրան նորից հանձնում են հորը։ Վերջինս մանկանը թողնելով լորդերի ակումբի աստիճանների վրա, ընտանիքով գաղթում է Կանադա։ Կրկին անապահով վիճակ, մշտական քաղց, փողոց, ի վերջո գողություն... 15-ամյա պատանին հանահատության մեջ նետվում է գետը և ազատվում անգլիական իրականությունից։

15 տարի շարունակ անապատան երեխայի ճակատագրով զբաղվում են զանազան բարեգործական ընկերություններ, կաթոլիկական և բողոքական գործիչներ, լորդերի պալատում տասնյակ ճառեր են խոսվում, բայց ապարդյուն։ «Պարոն փիլիսոփանե՛ր, մարդասերնե՛ր, քաղաքագետնե՛ր, պապականնե՛ր և բողոքականնե՛ր, նախարարնե՛ր, աստիճանավորնե՛ր, դուք ի՞նչ բերիք Ջինկսի երեխի գլխին։ Մինչ դատեցիք, վիճեցիք, վերացական մտքեր հուզեցիք, օրենքներ դրեցիք, ներգործեցիք ու կարգադրեցիք, ո՞ւր, ողորմա՜ծ աստվա՜ծ, ո՞ւր կորավ Ջինկսի երեխայն»[17]։ Ուշնչացնող այս մեղադրականով է ավարտվում վեպը։ Հեղինակը բարձրացնում է հարյուր հազար անապատան և քաղցած մանուկների ճակատագրի հարցը։ Չէ՞ որ դա մի ամբողջ սերունդ է ... կարող է հրդեհ բռնկվել, զգուշացնում է Ջենկինսը։ Սակայն նա լիբերալիզմի դիրքերից քննադատելով բյուրոկրատական ապարատի գործողությունները, միաժամանակ ենթադրում էր, թե «խելացի գործունեությամբ, նախատեսությամբ և անհրաժեշտ զոհողությամբ կարելի էր

---

[16] Էդուարդ Ջենկինսը XIX դարի II կեսի անգլիական քաղաքական գործիչ էր, պառլամենտի անդամ, հրապարակախոս։ Պայքարում էր գաղութատիրության դեմ։ Գրել է սատիրական երկեր, որոնցից մեծ ժողովրդականություն էր վայելում «Ջինկսի երեխան» (1869)։

Ջենկինսի ստեղծագործությունները 70-ական թթ. տպագրվել են Նեկրասովի «Отечественные записки» հանդեսում։

[17] «Փորձ», 1879, №12, Հավելված, էջ 29։

շննքը անկիզելի դարձնել»[18]: Կառավարությանը «խելացի գործունեության» մղելու նպատակով էլ հեղինակն առաջարկում է լուսավորական մի շարք միջոցառումներ ձեռնարկել:

Հարկավ, Չննկինսի վիպակի ուժը այդ ծրագրի մեջ չէ: «Ջինկսի երեխան» քաղաքական սուր սատիրայի նմուշ է, որն օբյեկտիվորեն պսակաղերծ է անում անգլիական պառլամենտական կարգերի արատավոր էությունը:

Ամսագրի թարգմանությունների բաժինն ամբողջացնում էր խմբագրության ընդհանուր ծրագրային աշխատանքը, մի բան, որ խոստովանում է և խմբագիրը: Սկսելով «Արձագանքի» հրատարակությունը, Հովհաննիսյանը հետևյալ գնահատականն է տալիս «Փորձի» գրական քաղաքականությանը: «Եվրոպական կլասիկական հեղինակների այն զեղեցիկ թարգմանությունները, որ Գ. Բարխուդարյանի գրչի տակից դուրս եկան, ինքնուրույն վիպասանական գրվածքները, այն ժամանակից եվրոպական հեղինակների մատենագրությունները, որոնց հետ «Փորձը» առաջինը ծանոթացրեց հայ հասարակությանը», դրանք այնքա՞ն էին «համապատասխանում «Ազատ երգերի» ուղղության»[19]:

Եթե «Ազատ երգերն» ընդունենք որպես ազգային-ազատագրական պայքարի երգեր, հետևապես՝ ժամանակի առաջադիմական գրականության ուղղության բնութագրման չափանիշ, ապա «Փորձի» գրական բաժնին տրված վերոհիշյալ գնահատականը ճշմարիտ է, որը հաստատվում է այդ հանդեսի ամբողջ պատմությամբ:

Ինչ-որ չափով թարգմանական բաժնի հետ էին առնչվում և մի քանի հոդվածներ ու փոխադրություններ, որոնք ամբողջացնում էին խմբագրության գաղափարների պրոպագանդը՝ ազգային կյանքի վերածնության մարդում:

Այսպես, «Փորձի» էջերում հրապարակվել է Ֆրանկլինի կենսագրությունը, որը լուսավորական գործունեության մղում կարող էր տալ հայ ընթերցողին, Մաձձինիի կյանքի պատմությունը, որը նվիրված էր Իտալիայի «վերածննդության, առաջադիմության և ազատության սկզբունքներին»: Հայ ընթերցողի համար միանգամայն հասկանալի էր և ժամանակին՝ Ժորժ Զանդի «Գարիբալդի» հոդվածի թարգմանության տպագրությունը 1879-ին: Նույն թվականին հրապարակվում է Կաստելյարի

---

18 Նույն տեղում, էջ 81:

19 «Արձագանք», 1882, №1:

իտալական ուղեգրություններից մի հատված՝ «Հռոմի դետտոն», որտեղ խոսվում էր հրեաների կրած հալածանքների, խղճի ազատության նկատմամբ գործադրվող բռնությունների մասին։ Հեղինակը դատապարտում է ցեղասպանությունը, խրախուսում ժողովուրդներին՝ ազատորեն պաշտպանելու դավանած հավատը։ «Կայրոլյան գերդաստան» գրքի տեսությունը ներկայացնում էր Գարիբալդիի վինվորներ՝ Կայրոլի չորս եղբայրների հերոսական պայքարի պատմությունը՝ Իտալիայի ազատագրման համար։

Գ. ՍՏ. ՊԱԼԱՍԱՆՅԱՆԸ ԵՎ «ՓՈՐՁԻ» ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

«Փորձ» հանդեսի հրատարակության տարիներին հայ գրականության աննախընթաց վերելքին ներդաշնակ զարգանում էր և գրաքննադատական միտքը։ «Հյուսիսափայլին» հաջորդած տարիներին արդեն բավականաչափ ուսումնասիրվել էին 60-ական թվականների գրաքննադատական մտքի նվաճումները. «Հայկական աշխարհ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների գրական տեսաբանները յուրացնելով Նալբանդյանի գրականագիտական սկզբունքները, փորձեր էին անում դրանք զուգակցել ռուսական առաջադիմական դեղադիտական գպրոցի դրույթներին և հետևություններ անել հայ գրականության զարգացման հեռանկարների վերաբերյալ։ Մեր մամուլի էջերում 60—70-ական թթ. պարբերաբար քննության է ենթարկվել «Մենք գրականություն չունենք»՝ Բելինսկու հայտնի թեզը, որը մատնանշում էր ռուսական գրաքննադատական մտքի և ռեալիստական գրականության զարգացման նոր ուղիներին անցնելու անհրաժեշտությունը։

Արդեն հաջորդ տարիներին հայ գրաքննադատական միտքը մրտնում է զարգացման իր նոր փուլը։ «70—80-ական թվականների գրական շարժումը որոշակիորեն փոխում է քննադատության բնույթն ու կոնկրետ խնդիրները,— գրում է Ս. Սարինյանը։ Տեսական դրույթների հետ միասին, նա վերլուծում է քանակական որոշակի մեծության հասած գրական արտադրանքը, ավելի կոնկրետ նյութի վրա հիմնավորում ժամանակի գեղագիտական սկզբունքները։

Գրականության հասունացումը անխուսափելիորեն ծնում է բազմակի հարցեր՝ գրական փոխազդեցությունների, ոճի, լեզվի, տիպական արվեստի, հասարակական տենդենցի և գեղագիտական այլ բմբռնում-

նների կոնկրետ հիմնավորումներ, որոնց և պատասխան է տալիս գրական քննադատությունը»[20]:

Այս հարցերի մի զգալի մասը քննարկվել է և «Փորձ» հանդեսի գրաքննադատական հոդվածներում: Հովհաննիսյանը գեղարվեստական գրականության հետ մեկտեղ մեծ տեղ է նվիրել գրական քննադատությանը, մատենագիտական բաժնում արժեքավորել նոր հրատարակված բազմաթիվ գրքեր: Հանդեսի գրաքննադատական և մատենագիտության բաժնի հոդվածները նա հանձնել էր ձեռնհաս մի գրականագետի՝ Ստեփաննոս Պալասանյանի տնօրինությանը: Այնուհետև «Փորձի» հրատարակության առաջին տարվանից մինչ հանդեսի դադարումը գրաքննադատական բաժնի և՛ տեսական ծավալուն հոդվածները, և՛ գրախոսությունները գրում է Պալասանյանը՝ Գրիչ գրական կեղծանունով: Քանի որ Պալասանյանն ստիպված էր կատարել բաժնի բոլոր աշխատանքները, ապա այստեղ բազմակողմանիորեն դրսևորվում են նրա գրականագիտական և լեզվաբանական սկզբունքները, մեծ էրուդիցիան և գեղագիտական ճաշակը:

Ստեփաննոս Պալասանյանը ծնվել է 1837 թ. Ռումինիայի Բոդուշան քաղաքում: Սովորել է Փարիզի Մուրադյան վարժարանում: 1858-ին մանկավարժական աշխատանքի է հրավիրվում Խալիբյան դպրոցը: 1863 թ. փոխադրվում է Թիֆլիս և նվիրվում մանկավարժական և բանասիրական գործունեության: Ներսիսյան դպրոցում նա 18 տարի դասավանդում է հայոց լեզու և գրականություն, ֆրանսերեն լեզու և ընդհանուր պատմություն: Հինգ տարի անվճար պարապում է Դայանյան օրիորդաց դպրոցում: 1881-ին Պալասանյանը հրավիրվում է Գևորգյան ճեմարանը, որտեղ աշխատում է մինչև կյանքի վերջը՝ 1889 թվականը: 1882 թ. իբրև էջմիածնի ներկայացուցիչ մասնակցում է Թիֆլիսի ուսուցչական ժողովին: Նա աշխատակցել է «Կռունկ հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի», «Վարժարան» և «Արարատ» պարբերականներին, խմբագրել է «Մշակի» բանասիրական բաժինը (1872—1875):

Սակայն էլ ավելի մեծ է Պալասանյանի գիտական վաստակը: Նա գրել է «Քերականութիւն մայրենի լեզուի» ձեռնարկը, գրաբարի «Գործնական քերականութիւն»-ը, «Փորձ քերականութեան գաւառական հայ լեզուին», «Ընդհանուր տեսութիւն արևելյան նոր գրաւոր լեզուի հայոց»,

---

20 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 64—65:

«Պատմութիւն հայոց», «Պատմութիւն հայոց գրականութեան» (Բերլի) աշխատությունները։

Ստ. Պալասանյանը 40—60-ական թթ. ռուսական դասական գեղագիտական դպրոցից և Նալբանդյանից ժառանգած գեղագիտական տեսության հիմքի վրա «Փորձի» էջերում բարձրացրել է հայ քննադատական մտքի ուրույն շենքը։ Օգտվելով նոր տպագրվող գրականությունը գրախոսելու մեծ հնարավորություններից, նա իր բազմաթիվ հոդվածներում արծարծել է ժամանակի հայ գրականության զարգացման հետ առնչվող մի շարք անհետաձգելի հարցեր, վեր հանել գրականության գաղափարական բովանդակության, նրա դաստիարակչական նշանակության կարևորությունը հայ ժողովրդի կյանքում։ Պալասանյանը միաժամանակ ծանոթություն է տվել գրական ժանրերի մասին, քննել գրողների լեզվի և ոճի հետ կապված հարցերը, մշակել գրականության, պատմագրության, թարգմանական գրականության, լեզվաշինության հետագա զարգացման հեռանկարները։

Լինելով 70-ական թվականների առաջնակարգ, գրեթե միակ քննադատը, Պալասանյանն իր հոդվածները տոգորել է հայ գրաքննադատական մտքի զարգացման շահագրգռությամբ, ձգտելով հասնել այն բանին, որ գրական քննադատությունը ոչ միայն կարողանա օբյեկտիվորեն գնահատել տպագրվող երկերը, այլև օգնի հայ գրականության հետագա զարգացմանը, ընթերցողներին բարձրացնի մինչև գրական երկերը հասկանալու մակարդակը։ Ինչպես 60-ական թթ. ռուսական հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները, Պալասանյանը նույնպես հնարավորություն չունենալով ուղղակիորեն արտահայտվել իր օրերի քաղաքական պրոբլեմների մասին, գրաքննադատական հոդվածները դարձնում էր միջոց՝ արծարծելու այդ հարցերը։ Այսպես, ռուս-թուրքական պատերազմի օրերին գրելով Խրիմյանի «Վանգույժ» և «Դրախտի ընտանիք» առեղծադրծությունների գրախոսությունները, Պալասանյանը բնագրից կատարված ծավալուն մեջբերումներով արևմտահայությանն անուղղակիորեն ակտիվ պայքարի էր կոչում բռնակալության դեմ։ Նույնը կարելի է ասել նաև Վահան Պարտիզակցու «Խոսք ղհայրենեաց» գրքի գրախոսականի մասին, որը հայության կողմից իրենց «մարդկային և ազգային իրավունքները» պաշտպանելու մի զեղեցիկ խրախուսա էր։

Այս առումով խիստ ուշագրավ է Ծերենցի «Թորոս Լևոնի» վեպի մասին գրած Պալասանյանի գրախոսությունը։ Քննադատն այստեղ բն-

Ընթերցողին օգնում է հասկանալու պատմական վեպի բուն ոգին, դրա այժմէական նշանակությունը։ Հեղինակի նպատակն է եղել, գրում է նա, «ներկա տագնապալից ժամանակում» ցույց տալ, «թե ինչպես անցյալի համանման պարագաներում Թորոսի հայրենասեր ու անվեհեր հոգին հայ ժողովրդին կորստյան անդունդից ազատեց և վերակենդանության կանչեց»։ Հեղինակը ցույց է տալիս, շարունակում է վերը հիշված միտքն ամրապնդել Պալասանյանը, «թե ինչպես մի ափ ժողովուրդ կարող է յուր ընկած տեղից բարձրանալ, որպես հրաշքներ կարող է գործել նա, եթե միայն կամք ու հոժարություն ունենա Թորոսների ձայնը լսելու, նոցա գեղեցիկ օրինակին հետևելու»[21]։

Ժամանակակիցներին անցյալի հեղափոխական տրադիցիաներով դաստիարակելու նպատակով Պալասանյանը դիմել է և հունգարական հեղափոխության ժամանակների հունգարական ազատասիրական պոեզիայի թեմատիկային։

Հաշվի առնելով գրական քննադատության մեծ դերը հասարակական կյանքում, Պալասանյանը կշտամբանքի խոսք է ուղղում այն քննադատներին, որոնք ղեկավարվում էին ոչ թե օբյեկտիվ չափանիշներով, այլ բարեկամության կամ շինամանքի զգացումների թելադրանքով։ «Քննադատության այս անվայել ընթացքը,— գրում է նա,— մեծապես վնասեց գրականության առաջադիմությանը։— Ի՞նչ օգուտ կարելի էր սպասել այն մարդկանց գործունեությունից, որոնք իրանց անձնական կրքերը ճշմարտությունից բարձր էին դասում և ամեն բոպե պատրաստ էին իրանց գրիչը անպատվել»[22]։

Առաջնորդվելով իսկական գրականություն ստեղծելու սկզբունքներով, Պալասանյանն իր պարտքն է համարում «ամենայն զորությամբ պատերազմել» գրական խոտանի դեմ, որպեսզի այն ավելի ու ավելի չտարածվի։ Նա կոչ է անում և մամուլի օրգաններին՝ անհանդուրժող լինել պատահական գրչակների նկատմամբ։ Աբ. Դուլամիրյանի 1878 թ. օրացույցը Պալասանյանը որակում է իբրև «չափազանց տգիտության և չափազանց հանդգնության» արգասիք, որը մնում է անպատիժ, թեև «կա մի մամուլ, որի պարտավորությունն է ամեն մի ախտ հրապարակ հանել և հարվածել»[23]։

---

21 «Փորձ», 1879, №2, էջ 136։

22 «Փորձ». 1877/78. № 1, էջ 337։

23 Նույն տեղում, №3, էջ 343։

Ստ. Պալասանյանը՝ զառանցանք և տխմար ֆանտազիայի ու տգիտության խառնուրդ է համարում ոմն Խ. Տեր-Խաչատրյանի «Մնողասներ Թեկղին» արկածային վեպը։ Ջավեշտի արժանի այդ գիրքը գրախոսը ոչնչացնում է գրական մի շատ պարզ հնարանքի միջոցով։ Խ. Տեր-Խաչատրյանի կիսագրագետ լեզվով նա վերապատմում է վեպի բովանդակությունը, էլ ավելի ցցուն դարձնելով հեղինակի մտածողության ողորմելիությունը և տրամաբանության տկարությունը։

Այս կրքով էլ նա ոչնչացնում է Ալ. Շահազիզյանցի հրատարակած Իրիցփուխովի «Ռուս-հայերեն բառարանը», որը արատավորյունն էր բառարանի 1854 թ. հրատարակության։ Առանց որևէ փոփոխության և խմբագրական աշխատանքի, վաղուց հնացած և սխալներով լի բառարանի վերահրատարակությունը զուտ կոմերցիոն գործ էր, որ անողոք գրչով մերկացնում է քննադատը։ Ստ. Պալասանյանը անընդունելի է համարում և Մխիթար Գոշի, Ողիմպիանու և Եղովպոսի ընտիր առակների՝ Խորեն քահանա Միրզաբեկյանի թարգմանությունը (Բաքու, 1878)։

Ստեփաննոս Պալասանյանին մեծապես զբաղեցրել է գրականության պատմության ու պատմագրական երկերի ստեղծման խնդիրը։ Հարցի հրատապությունը նրան ստիպում է պատմաքննական հայացքով հանգամանորեն վերլուծել Գարեգին Զարբհանալյանի աշխատանքի մեթոդը՝ նրա «Պատմություն հայերեն դպրության» գրքի հրատարակության առիթով։ Խոսելով հարցազրույցների մասին, Պալասանյանը մերժում է հայ ազգը բացառիկ ազգ և հայոց լեզուն նոյախոս լեզու հռչակելու հեղինակի ժամանակավրեպ թեզերը։ Քննադատը գիտական գրականության մեջ անընդունելի է համարում պատմական և գրական երևույթները նեղ դավանաբանական մղումներով գնահատելու ամեն մի փորձ, այդ բանում և Զարբհանալյանի թույլ տված համանման վրիպումները։

Ի վերջո, Պալասանյանը բարձրացնում է հայ նոր գրականության գիտական գնահատականի անհրաժեշտության հարցը և պահանջում ըստ արժանվույն գնահատել Նալբանդյանի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի ստեղծագործությունները։ «Փորձի» քննադատը առարկում է հայ գրականության պատմության հեղինակին՝ Արսեն Բագրատունու գնահատականի հարցում, որի «Հայկ դյուցազնը» Զարբհանալյանը համարում էր «ազգային նոր մատենագրության դարագլուխ կազմող գործերից մեկը»։

Պալասանյանն իր հոդվածներում քննարկել է պատմական գիտության զարգացման հարցերը, նշել այն հիմնական ասպեկտները,

որոնք պետք է ընկնեին հայ պատմական գրականության հիմքում։ Այսպես, ողջունելով հանդերձ Կ. Կոստանյանի «Հյուսվածք բանից» գրքի հրատարակությունը (որը ներկայացնում էր մարզպանության շրջանից մինչև արաբական արշավանքներն ընկած ժամանակամիջոցի հայոց երկրի վիճակը), Պալասանյանը միաժամանակ պահանջում է ստեղծել քննական, գիտական պատմագրություն։ «Անկարելի է պատմության անվանել այն գրվածքները,— գրում է նա,— ուր կյանքի նշանավոր և աննշան իրողությունները խառնիխուռն կուտակվում են միմյանց վրա, առանց նոցա սկզբնապատճառն ու հետևանքները քննության տակ ձգելու»[24]։ Գիտական չեն կարող լինել և այն պատմությունները, որոնց մեջ խոսվում է սոսկ թագավորների գործողությունների ու պատերազմների մասին, բայց մոռացության է տրվում ժողովրդի բարոյական և ընկերական կյանքը։ Պատմությունը պետք է օգնի հասկանալու ժողովրդի, ազգի անցյալ կյանքի պատմությունը և ներկայի մեջ ցույց տա ապագայի ճանապարհները։

Այս պահանջներն էլ ավելի լուրջ ձևակերպում են ստանում Պալասանյանի «Ազգային պատմության նշանակությունը» հոդվածում, որտեղ քննադատվում էր Գ. Աբեղյանի «Հայոց ազգի պատմությունը» աշխատությունը։ Օգտվելով առիթից, Պալասանյանը ներկայացնում է «Հայոց պատմության» մեկ տասնյակի հասնող ձեռնարկների դիտական տեսությունը, ծրագրային առաջարկներ անում ապագա պատմաբաններին։

Պատմական գրականության համար նա հավասարաչափ անընդունելի է համարում և՛ ազգային անապարծության երանդները, և՛ ողբասացությունը։ Պալասանյանը մի ազգի պատմության ամենաէական կողմը համարում է նրա կենսունակության հիմքը, ժողովրդի ապրելո՛ւ, ստեղծագործելո՛ւ, լավատեսության կարողությունը։ Այս իմաստով հայոց պատմության համար նա բնորոշ է համարում ոչ այնքան արտաշեհների ու տիգրանների հաղթական արշավանքները, («Փորձով գիտենք, ավա՛ղ, այդ արտաքին շառաչյունների վաղանցուկ փառքը»), որքան Մեսրոպի լուսավորական գործունեության պատմական խոշոր նշանակությունը։ Նա անխմաստ է համարում և հայերի թշվառության նկարագրության օրինակները («բավական է, աստուծո սիրուն, որքան ողբացիք ազգի անմիաբանության և թշվառության վրա»)։ Ի վերջո ազգությունն ապրում է և հարատևում ո՛չ այդ գործոնների միջոցով։ Պատ-

---

24 «Փորձ», 1877/78, №2, էջ 304։

մաբանը պետք է կարողանա վեր հանել ժողովրդի բարոյական զորության գաղտնիքը, որի շնորհիվ թշվառությունների ու հալածանքների մեջ ժողովուրդը կարողանում է պահպանել իր ազգային ինքնուրույնությունը։ Պատմաբանը պետք է ժողովրդին կատարյալ հավատ ներշնչի նրա վաղվա օրվա նկատմամբ. «Այս անելով ավելի մոտ կլինենք ճշմարտության, և ավելի շուտ կհասնենք ձեր նպատակին,— գրում է նա,— քան թե անդադար խլացնենք մեր ականջները անցյալ փառքերի երևխայական պարծանքներով, կամ եթե չարագուշակ բուի պես շարունակ ողբաք ներկայի ավերակների վրա[25]։

Ստեփաննոս Պալասանյանը մեծ ուշադրություն է նվիրել նաև թարգմանական գրականությանը։ Հետաքրքրական է, սակայն, որ իր գրախոսությունների մեջ, նա շեղվելով բուն նյութից, հայ ընթերցողներին նախ ծանոթացնում է եվրոպական հեղինակների կյանքի և գործունեության հետ, ապա միայն քննարկում թարգմանության լեզուն, ոճը, համապատասխան հեղինակների գործերի ընտրության նպատակահարմարության խնդիրը։ Այսպես, նա իր ծավալուն հոդվածի կեսը նվիրում է Ժորժ Զանդի կյանքին և գործունեությանը և ապա միայն անդրադառնում Գ. Մսերյանի և Գր. Չիլինկիրյանի կատարած թարգմանություններին։ «Դոն Քիշոտի» թարգմանության առիթով բնութագրում է ողջ ասպետական գրականությունը, հայ ընթերցողին ծանոթացնում Սերվանտեսի կյանքի և գործունեության, «Դոն Քիշոտի» համաշխարհային նշանակության հետ։ Ալֆոնս Դոդեի պատմվածքների տպագրության հետ մեկտեղ զետեղում է Դոդեի կյանքի և գործունեության համառոտ տեսությունը։

Պալասանյանը թարգմանական գրականության սկզբունքային հարցերից է համարում թարգմանվող երկերի ընտրության հարցը, գտնելով, որ նոր ժամանակներում աննեղելի է թարգմանել «մաշված ու հնացած գաղափարների վրա» ստեղծված երկերը։ Գրական ստեղծագործությունը մարդկային բարձր առաքինությունների ոգով դաստիարակելով իր ընթերցողներին, պետք է մեծապես նպաստի հասարակական կյանքի առաջընթացին։

Ստ. Պալասանյանը շարունակելով 60-ական թվականների իր նախորդների ձեռնարկած գործը, գրաքննադատական իր ելույթներում անդրադառնում է գրական լեզվի մշակման խնդիրներին։ Այս առումով

---

25 «Փորձ», 1877/78, №3, էջ 308։

նա գրախոսության ենթակա բոլոր գրքերի առիթներով պրոպագանդում է աշխարհաբարի զարգացման, այն հարստացնելու անհրաժեշտությունը և նշում լեզվի զարգացման մի շարք ուղիներ: Պալասանյանը մեծ նշանակություն է տալիս հայկական գավառաբարբառների հավաքման և ուսումնասիրության գործին: Օգտվելով Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, բանասեր Մաքս Մյուլլերի այն ասույթից, ըև գավառաբարբառները առուներ են, որ լցվում են գրական լեզվի ծովի մեջ, Պալասանյանը զարգացնում է այդ միտքը. «Գրականական լեզվի կենդանությունն ու գոյությունն անգամ կախված են գավառական բարբառների մշակությունից և այս վերջինների հարստությունները առաջինի մեջ մտցնելուց»[26]: Անդրադառնալով այն հեղինակներին, որոնք ուզում էին գրաբարյան ձևերով սրբագրել ու «մաքրել» աշխարհաբարը, Պալասանյանն անդիջում պայքար է հայտարարում այդ գործիչներին: Նա իրավամբ հիշում է 60-ական թվականների գրապայքարի փորձը և գրաբարի նոր տեսաբաններին համեմատում ճառաքաղյան գործիչների հետ: Այդ հեղինակներին նա ուսուցանում է լեզվի օրինաչափ զարգացման տրամաբանությունը. գրաբարի վերականգնումը «անիրագործելի երազ է, մի ցնորք, որի օրինակը ոչ մի գրականություն չէ ներկայացնում մեզ և միայն այն օգուտն ունի, որ նոր լեզուն յուր բնական սահմանից հանում և նորա կանոնավոր զարգացումը ընդհատում է»[27]:

Հայ գրականությունը, սակայն, տալիս էր և մի այլ, գրաբարը աշխարհաբարի հետ հաշտեցնելու անբնական օրինակը. էդուարդ Հյուրմուզյանը «Խոսնցնալը» վեպի թարգմանությունը կատարում է այդ բնկերությունով— երկխոսությունները գրում է աշխարհաբարով, իսկ նկարագրությունները և հեղինակի խորհրդածությունները՝ գրաբար: Մի ժամանակ եթե Մխիթարյանները սկզբունքորեն ցանկանում էին գրաբարը խոսակցական լեզու դարձնել, ապա հետագայում համոզվեցին, որ «այդ ցնորքը անիրագործելի է», գրում է Պալասանյանը: Հետագայում նրանք աշխարհաբարը մշակում էին՝ այն դեպի գրաբարը տանելու դիտավորությամբ: Այս սկզբունքը ևս Պալասանյանը համարում է այլանդակ: Ուրեմն ի՞նչն է ստիպում Հյուրմուզյանին դիմել մի երրորդ, առավել «չտեսնված ուղղության»:

Լեզվի հարցում Պալասանյանը հակադրվում է և Մինաս Չերազի

---

26 «Փորձ», 1876/77, №2, էջ 357:

27 «Փորձ», 1876/77, №3, էջ 321:

լեզվական տեսությանը, մերժում լեզվաշինական նրա դրույթները։ Այսպես, նրա «Գրական փորձեր» աշխատության մասին գրված դրախոսության մեջ քննադատելով Չերազի ինքնահնար լեզվաձևերը, Պալասանյանն այդօրինակ լեզուն համեմատում է ավազի վրա բարձրացրած շենքի հետ. դրան զուգընթաց նա սխալ է համարում հայոց լեզուն եվրոպական լեզուների կաղապարին հարմարեցնելու արևմտահայ որոշ գործիչների ջանքերը։ «Այս փորձերը,— գրում է նա,— լեզուն յուր բնական սահմանից դուրս հանելու և քմածին ու կամայական ձևերով պատվաստելու՝ դեռևս շարունակվում են Բոսֆորի ափերում, չխրատվելով ամենևին այն հանգամանքից, որ այդ տղայական փորձերը մեկ կողմից երևում են, մյուս կողմից մոռացության անդունդն են գնում»[28]։

Պալասանյանը մեծ վերապահությամբ էր քննարկում և Մինաս Չերազի առաջարկը՝ արևելահայ և արևմտահայ լեզուների միավորության մեկ ընդհանուր գրական լեզու ստեղծելու մասին։ Ազգի մտավոր և գործնական միության համար այդ ցանկությունը համարելով գեղեցիկ և օգտակար, Պալասանյանը դրա իրագործումը գտնում է դրեթե անհնար և շատ վաղաժամ։

Քննադատելով գրական լեզվի մշակման մի շարք ձևերը, որ առաջադրում էին հայ մտավորականները, Պալասանյանն առաջարկում է լեզուն հնարավորին չափ զերծ պահել օտարամուտ ազդեցություններից, և ջանալ մշակել այն երկու հիմնական աղբյուրները, որոնք աննդի հարատև աղբյուրներ են արդի լեզվի համար՝ գավառական բարբառները և գրաբար լեզուն։ Այնուհետև արդեն, երբ լեզվի հարուստ գանձերը երևան կգան և լեզուն կմշակվի գիտականորեն, «մնացած գործը կկատարեն ազգային բանաստեղծությունը»,— հայտարարում է Մ. Պալասանյանը։

Հայ նոր գրական լեզվի մշակման գործում բարձր գնահատելով Մ. Պալասանյանի վաստակը, էդ. Աղայանը նրա «Ընդհանուր տեսության արևելյան նոր գրաւոր լեզուի հայոց» աշխատությունը համարում է «դարագլուխ կազմող գործ», իսկ Պալասանյանին՝ «ժամանակակից հայոց լեզվի գիտական ուսումնասիրության հիմնադիրը»[29]։

Հայ գրական կյանքում իրադարձություն էր Ալեքսանդր Երիցյանի «Ստեփաննոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը» հոդվա-

---

28 «Փորձ», 1876/77, № 2, էջ 363։

29 Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, հատ. 1, էջ 228։

ծը։ Այն գրված էր Նազարյանի մահվան առիթով, բայց իր ոգով միանգամայն շեղվում էր նման պարագաներում գրվող գրվածական հոդվածների ավանդույթից։ Երիցյանը պատմական հայացքով քննելով փաստերը, փորձում է գիտական և անաչառ գնահատական տալ հայ մեծ հրապարակախոսի գրական ստեղծագործությանը։ Ծավալուն այս հոդվածում Երիցյանը բանասերի մանրակրկիտությամբ անդամահատելով Նազարյանի գրական ժառանգությունը, ջանում է ցույց տալ դրանց գրական ակունքները եվրոպական գրականության մեջ[30]։ Ու թեև նրա «հետազոտական» կիրքը եղրահանգումները հասցնում է չափազանցությունների, Նազարյանին գրեթե զրկում ինքնուրույնությունից և օբյեկտիվորեն արժեքազրկում Նազարյան-հեղինակի ամբողջ վաստակը, բայց տվյալ դեպքում էականն այդ չէ։ Երիցյանն իր հոդվածով տալիս էր գրական երկերի պատմա-քննական տեսության մի համարձակ օրինակ, աշխատելով հայ դրաքննադատական միտքը բարձրացնել ժամանակի ռուսական և եվրոպական գրականագիտական մտքի մակարդակին։ Այդ հոդվածն ազմուկ է բարձրացնում. հայտնի է, թե Նազարյանի աշակերտ Սմբատ Շահազիզն ինչպիսի վրդովմունքով է պատասխանում Երիցյանին[31]; վերջինս, սակայն, իր երկրորդ հոդվածում համառորեն հիմնավորում է իր դիրքերի արդարացիությունը[32]։

Այսօր, մեկ դար հետո այդ բանավեճից, կարելի է հաստատապես ասել, որ Երիցյանն անձնական անբարյացակամության հետքերով ընկել էր ծայրահեղության մեջ և դավաճանել «Փորձի» դրաքննադատական բաժնի օբյեկտիվության սկզբունքին։ Բայց միաժամանակ պատմականորեն մոտենալով խնդրին, այդ փաստի մեջ չի կարելի չտեսնել քննական մոտեցման այն երևույթը՝ որը 80-ական թվականների ընկղմին երևան եկավ հայ գրականագիտական մտքի մեջ։

«Փորձ» հանդեսի գեղարվեստական գրականության և գրականագիտության բաժնի պատկերը ամբողջական չէր լինի, առանց այդ հանդեսի գրաքննության պատմության։

Ի. ԿՐԱՔՆՆԻՉՅԱՆԸ ԵՎ «ՓՈՐՁԸ»

1877 թ. «Փորձում» տպագրելու համար գրաքննության է ներկայացվում «1848—1849 թթ. պատերազմի ժամանակաշրջանի հունգարա-

30 Տե՛ս «Փորձ», 1879, № 11 և 1880, № 1։

31 Ս. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1880։

32 Տե՛ս «Փորձ», 1881, № 5—6։

կան պոեզիան» հոդվածը, որը հավանաբար թարգմանել էր Պալասանյանը՝ ֆրանսիական «Revue des deux Mondes» հանդեսի 1872 թ. օգոստոսի համարից։ Գրաքննական կոմիտեն դեկտեմբերի 20-ին այն մերժում է՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Այլ ժողովուրդների [ապստամբական] ելույթների անալոգիայով հեղինակը նպատակ ունի ընթերցող հայերի մեջ առաջացնել հակապետական գաղափարներ՝ հայերի ապագա քաղաքական վերածնության մասին»։ Հովհաննիսյանը բողոքում է կոմիտեի որոշման դեմ և քանի որ սկզբնապես չէր նշել, թե հոդվածը թարգմանական է, իր դիմումի հետ մեկտեղ ներկայացնում է և «Revue»-ի համապատասխան համարը, որը գրաքննության թույլտվությամբ ժամանակին տարածվել էր Ռուսաստանում։ Շահագրգռված լինելով հոդվածի տպագրությամբ, նա միաժամանակ դիմում է Կովկասի փոխարքայության քաղաքացիական գործերի գլխավոր վարչության պետին, խնդրելով դրականորեն լուծել հարցը։ Գրաքննության կոմիտեն նորից է անդրադառնում նրա հոդվածին և հանձնարարում գրաքննիչ Ս. Մելիք-Մեհրաբովին՝ զեկուցել այդ հարցի մասին։ Հենվելով Մելիք-Մեհրաբովի նոր զեկուցագրի վրա, գրաքննական կոմիտեն փոխարքայությանն ուղղած ծավալուն մի բացատրությամբ հիմնավորում է հոդվածի մերժումը։ Փոխարքայության վարչության պետը քննելով և՛ դիմումը, և՛ գրաքննական կոմիտեի եզրակացությունը, հայտնում է հետևյալը. «Փորձ» հանդեսի խմբագրի՝ մեծ իշխան փոխարքային ուղղված դիմումի և գրաքննական կոմիտեի բացատրության ասիթով հայտնում ենք, որ նորին արքայական մեծությունը հաշվի առնելով գրաքննական կոմիտեի ներկայացրած բացատրության հանգամանքները, որոնք ըստ իրեն կոմիտեին մերժել այդ հոդվածը, այլև գտնելով, որ հոդվածն իր բովանդակության պատճառով չի կարող թույլատրվել տպագրության, բարեհաճեց կարգադրել՝ Հովհաննիսյանի բողոքը թողնել առանց հետևանքի։

Այս մասին հարկ ենք համարում հաղորդել գրաքննական կոմիտեին՝ հետագա կարգադրությունների համար»[33]։

Գրության լուսանցքում կոմիտեի աշխատակցի ձեռքով գրված է. «Հայտնել «Փորձի» պարոն խմբագրին»։ Մի փոքր ներքև՝ «կարդացի և ընդունեցի ի գիտություն. Աբգար Հովհաննիսյան»։

---

33 ՎԿՊՊԱ. ֆ. 480, ց. 1, գ. 333։

Դժբախտաբար մեզ չհաջողվեց համապատասխան ֆոնդի գործերում հայտնաբերել այդ հոդվածը, սակայն հենվելով գրաքննական կոմիտեի զեկուցագրի վրա, կարելի է ընդհանուր գծերով գաղափար կազմել դրա մասին։

Զեկուցագրում շեշտվում է, թե հոդվածում ակնհայտորեն աշխույժ հետաքրքրություն է նկատվում ինչպես մեջ բերվող ազատասիրական և ազգային անկախության գաղափարները դրվատող երգերի, այնպես էլ հունգարական ապստամբության նկատմամբ, որի նպատակն էր տապալել երկրի դերագույն իշխանությունը։ Ընդգծվում է հոդվածի այն հատվածը, որտեղ ասված էր, թե նոր ազատագրված ժողովուրդների վերածնության գաղափարը կարող է աքանչելի օրինակ լինել փոքրոգի անձանց համար, որոնք այլևս ոչ մի սպասելիք չունեն ապագայից։ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բնագրում տեղ գտած հետևյալ կոչի վրա. «Մինչև ե՞րբ պետք է շարունակվի այս փոքրոգությունը. ժամանակն է արթնանալ, ժամանակն է»։

Զեկուցագրում նշվում է նաև, թե թարգմանիչը բազմիցս շեղվում է բնագրից, իր կողմից ավելացնելով մտքեր և արտահայտություններ, որոնք ավելի են միտումնավոր դարձնում հոդվածը։ Այսպես, երբ խոսվում է 1848 թ. ապստամբության մասին, թարգմանիչն ավելացնում է. «Դժբախտաբար այն բարեհաջող ելք չունեցավ». կամ կասկածելի է համարվում «հունգարացիների և այլ նոր ժողովուրդների վերածնության օրինակը...» արտահայտությունը։ Ֆրանսիական բնագրի այն մասում, որտեղ ասվում է, թե հունգարացիները ձեռք բերեցին իրենց պահանջների մի մասը, ավելացված է, թե ի՛նչ ստացան. «Սեփական ազգային ժողով, որը պաշտպանում է նրանց ազգային շահերը, հոգում ժողովրդի կրթական գործը և այլ հոգսերը։ Սեփական զորք՝ երկրի սահմանները պաշտպանելու համար» և այլն։ Երրորդ դիպում, որտեղ խոսվում է հունգարացիների անձնազոհության և հաղթանակների մասին, հիշատակվում է խիղախ Կոբզդի անունը (որը փախուստի ժամանակ սպանում է կնոջը, որպեսզի վերջինս թուրքերի ձեռքը չընկնի)։

«Այն հանդամանքը,— այնուհետև նշվում է զեկուցագրում,— որ հոդվածը թարգմանություն է ֆրանսիականից, բնավ էլ չի փոխում դրա բնույթը, որը արտահայտված է հունգարացիների հուզումների նկարագրության մեջ՝ իրենց օրինական կառավարողների դեմ. հուզումներ, որոնց ճնշման գործին, ինչպես հայտնի է, մեր կառավարությունը գործուն մասնակցություն ունեցավ»։ Ապա ասված է. «Առանձնահատուկ

ուշադրություն են գրավում հոդվածի վերջին էջերը, որտեղ խոսվում է այն մասին, թե հունգարական ապստամբության ճնշման ժամանակ Ռուսաստանի օգնությունը ավստրիական կառավարությանը, նրա դեմ ֆշնամանք առաջացրեց հունգարացիների մեջ»։ «Այս ամենը,— եզրափակում է դեկուցագրի հեղինակը,— հոդվածը ավելի ևս անհարմար են դարձնում հայկական մամուլում հրատարակելու համար, եթե մանավանդ հաշվի առնելու լիներք դրա [նոր] խմբագրությունն ու հավելումները»։

Ինչ վերաբերում է այն փաստին, թե հոդվածի բնագիրն ի սկզբանե ֆուլյատրված է եղել ցարական գրաքննության կողմից, ապա զեկուցագրում վկայակոչվում է գրաքննական կանոնադրության 18-րդ անհեթեթ հոդվածը, որի համաձայն ժամանակին գրաքննության ֆույլտվությամբ տպագրված նյութերի արտատպությունները ենթակա էին առավել խիստ ստուգման[34]։

1879 թ. աշնանը Ա. Հովհաննիսյանին մի նոր անախորժություն էր սպասում գրաքննական կոմիտեում։ Նա պատրաստում և ֆույլտվության է ներկայացնում «Փորձ» հանդեսի 10-րդ համարը, որը կազմված, պատրաստ էր հրատարակության։ Համարում զետեղված էր հայ գրող Ալ. Քիշմիշյանցի «Հայի կորուստը» պատմվածքը՝ մեկ և կես մամուլ ծավալով։ Գրաքննիչ Մելիք-Մեհրաբովը արգելում է այդ պատմվածքի տպագրությունը և կասեցնում համարի լույս ընծայումը։ Ա. Հովհաննիսյանը պետք է քանդեր կազմված համարը և ողջ տպաքանակի համար պատրաստեր նոր շապիկներ, քանի որ ցանկի մեջ հիշատակված էր Քիշմիշյանցի պատմվածքը։ Հովհաննիսյանը փորձում է շրջանցել գեթ նյութական վնասը։ Իր դիմումներից մեկում խնդրելով լույս ընծայման իրավունք, նա հիշեցնում է, որ նման դեպքեր անցյալներում եղել են տեղի ռուսական և վրացական օրգաններում։ «Ես չեմ կարող նորից տպագրել տալ շապիկը,— գրում է նա,— քանի որ դրա համար անհրաժեշտ գումարը ֆույլ չունեմ պահեստած, իսկ Թիֆլիսում ձեռք բերել դրանից՝ չեմ կարող։ Ի վերջո, այդ ֆույլը սահմանք ֆանկ է, որպեսզի ես նման անարտադրողական ծախք անեի՝ ի հաճույս

---

34 Եթե «Փորձի» էջերում Ա. Հովհաննիսյանին չի հաջողվում տպագրել այդ հոդվածը, ապա «Արձագանքի» 1892 թ. 17—19 համարներում, այնուամենայնիվ, տպագրվում է համանման մի հոդված՝ «Հունգարացոց ազգային բանաստեղծությունը 1848—49-ի պատերազմի ժամանակ (Ստեփաննոս Պալասանյանի ձեռագրներից)» խորագրով։

պրաքննիչի քմահաճույան»[35]։ Փիմումների շնորհիվ նրան հաջողվում է պահպանել արդեն տպագրված շապիկը, որի ցանկում թեև նշված է «Հայի կորուստը» պատմվածքի վերնագիրը, սակայն ամսագրի 117 էջից բոիչը է կատարված մինչև 139 էջը։ Հանված պատմվածքի շարվածքը (էջ 118—138) պահվում է գրաքննական կոմիտեի գործերում[36]։

Ի՞նչ հարցեր էին արծարծված այդ պատմվածքում։ Իրադարձությունները տեղի են ունենում Ալաշկերտի գյուղերից մեկում։ Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին գյուղը բաժանվում է երկու խմբակցության. նրանցից առաջինը, նկատի ունենալով ցարական կառավարության դիտավորությունը՝ տաճկական լծից ազատագրելու քրիստոնյա ժողովուրդներին, առաջարկում է խաչ ու խաչվառով ընդառաջել Տեր-Վաչիսովի զորաբանակին և նյութական օժանդակություն ցույց տալ նրան։ Երկրորդ խումբը, վախենալով թուրքական կառավարության հաշվեհարդարից, գերադասում է ձեռնպահ մնալ։ Սկսվում է պատերազմը։ Ալաշկերտի հայությունը օգնում է Տեր-Ղուկասովին թե՛ նյութապես թե՛ բարոյապես։ Նահանջի ծանր օրերին գյուղը կրկին կանգնում է երկընտրանքի առաջ... մի քանի ընտանիք միայն վճռում են չթողնել պապենական հողը։ Քիշմիշյանցը նկարագրում է գաղթի ճանապարհի ահավոր սարսափները... մեկ տարի անց, գաղթականներից մի քանի ընտանիք վերադառնում է տուն... նրանք զարմանում են՝ տեսնելով, որ թուրքերը ձեռք չեն տվել գյուղում մնացածներին։ Գաղթականները, սակայն, մեկ տարվա տառապանքների միջոցին բազմաթիվ զոհեր էին տվել և վճռել, այնուամենայնիվ, դառնալ հայրենիք։ Այժմ նրանք ձեռնամուխ են լինում իրենց օջախների վերանորոգմանը, հանդելով այն համոզմունքին, թե չպետք է օտարության մեջ երջանկություն փնտրել («Մեր երջանկությունը հոս պիտի փնտրենք. մարդիկ ամեն տեղ մեկ են»)։

Ալեքսանդր Քիշմիշյանցի պատմվածքը, որ աչքի չի ընկնում գեղարվեստական որևէ արժանիքով, ծրագրային ստեղծագործություն է, որի միջոցով հեղինակը մեկ անգամ ևս արևմտահայերին կոչ էր անում ապրել սեփական հողի վրա, չլքել հայրենի օջախը։ Գրաքննությունը արգելում է պատմվածքի տպագրությունը, հավանաբար հաշվի առնելով Արևելյան Հայաստանում հայ գաղթականների ապրած տառապանքների անսքող նկարագրությունը։

---

35 ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 388։

36 Նույն տեղում, գ. 379։

Հետագայում Աբ. Հովհաննիսյանի «Արձագանք» թերթի հրատարակության գործը նույնպես ընթանում է գրաքննական կոմիտեի հետ անվերջանալի բախումների և պայքարի ճանապարհով:

1881 թ. հուլիսին Հովհաննիսյանը ժամանակավորապես ընդհատում է ամսագրի հրատարակությունը: Նրան ստիպում էր սիրած գործն ընդհատել հայ խմբագիրներին բաժին ընկած դրամական ճգնաժամը: «Փորձի» հրատարակության ընթացքում Հովհաննիսյանը կրում է 14 հազար ռուբլու վնաս, որը նրան կանդնեցնում է անանկության շեմին: Նա համոզված էր, որ կկարողանա կարգավորել ֆինանսական գործերը և կարճ ժամանակից վերսկսել «Փորձի» հրատարակությունը:

«Փորձ» ամսագիրը մեծ նպաստ է բերել ժամանակի գրական շարժմանը, իր հարուցած հասարակական-քաղաքական հարցերով լայն ճանաչում գտել երկու հատվածների հայ իրականության մեջ:

Ճշմարտության հարկը պահանջում է ասել նաև, որ ամսագրի խմբագրությանը չի հաջողվել նույնիսկ խորությամբ լուսաբանել արևելահայերի կյանքը, ինչպիսի ուշադրության արժանացել է Արևմտյան Հայաստանը: «Փորձը» անհրաժեշտ չափով խորամուխ չի եղել արևելահայ իրականության սոցիալ-տնտեսական հարցերում և տեսադաշտից դուրս է թողել հայության կյանքը՝ Անդրկովկասի պայմաններում: Այդ ներգործ անհերքելի է մի բան: Օրակարգում էր արևմտահայության ապատագրման հարցը և Ա. Հովհաննիսյանը ամեն ինչ ծառայեցնում էր այդ մեծ նպատակին: Նա հայ գործիչներից պահանջում էր օտար երկրների մամուլի էջերում նույնպես «արծարծել և մշակել տաճկական Հայաստանի ինքնավարության գաղափարը», ցույց տալ նրա անցյալը, ներկա վիճակը և նրա հերոսական ջանքերը՝ «յուր վայել տեղը բռնելու լուսավոր ազգերի շարքում»[37]: Աբգար Հովհաննիսյանն շատախոս էր և շատախոսում: Պատեհ առիթն ստեղծված է, ասում էր նա և հրահանգում ազգի բախտով զբաղվող գործիչներին, որ «այդ հանգամանքները ձեռքից չթողնեն» և հարմար պահին օգուտ քաղեն ազգային նպատակների համար: «Լռել այս ճակատագրական օրերին, հանցանք է, որի համար մեր որդիքը խստությամբ կդատեն մեզ»[38],—գրում է Ա. Հովհաննիսյանը: Ահա թե ինչու մամուլի պատմաբանը ձեռնամուխ լինելով «Փորձի» ուսումնասիրությանը, այն առաջին հերթին պետք է քննության առնի իբրև «ճակատագրական օրերի» պարբերական:

37 «Փորձ», 1877/78, №4, էջ 433:

38 Նույն տեղում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

«ԱՐՁԱԳԱՆՔ»

(1882—1898)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ԱՐՁԱԳԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ա. ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1881 թ. հուլիսին հարկադրված լինելով դադարեցնել «Փորձ» ամսագիրը, Աբգար Հովհաննիսյանը նույն տարվա վերջին կրկին ձեռնամուխ է լինում մի նոր պարբերականի՝ «Արձագանք» շաբաթաթերթի հրատարակությանը: Նա ենթադրում էր համապատասխան թույլատրություն ստանալուց հետո միաժամանակ վերսկսել «Փորձի» հրատարակությունը, քանի որ հայ իրականությանը տվյալ պահին հավասարաչափ անհրաժեշտ էին և՛ ամսագիրը, և՛ թերթը: Եթե «Փորձի» խնդիրն էր «ժողովրդի ընթերցանության քաղցը հագեցնելու համար բազմակողմանի նյութեր տալ նրան», ապա շաբաթաթերթը այլ պարտականություններ ուներ. («օրական հարցերը, որոնց մեզանում մի ամսագիր կարող է միայն մի ընդհանուր պատասխան տալ, «Արձագանքի» գլխավոր բովանդակությունը կլինեին»)[1]:

1881-ի դեկտեմբերի 17-ին Ա. Հովհաննիսյանը Կովկասի փոխարքայության գլխավոր վարչության պետին է ուղղում հետևյալ դիմումը. «Ցանկանալով առաջիկա 1882 թվականի հունվարից իմ խմբագրությամբ, Թիֆլիսում, կից ներկայացվող ծրագրով հրատարակել «Արձագանք» շաբաթաթերթը, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրել Ձերդ գերապանցությանը, որ հաճեք միջնորդել՝ ստանալու Կովկասի փոխարքայի թույլտվությունը:

---

[1] «Արձագանք», 1882, №1:

Կից պատիվ ունեմ ներկայացնել Թերթի ծրագիրը, հայտարարելով, որ «Արձագանքի» բոլոր բաժինների պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա։ Ինչ վերաբերում է իմ ինքնության մասին օրենքով պահանջվող փաստաթղթին, ապա ես այն ներկայացրել եմ, երբ միջնորդություն էի հայցում «Փորձ» ամսագրի թույլտվությունն ստանալու համար[2]»։ Հովհաննիսյանը միաժամանակ ստորագրություն է տալիս այն մասին, որ պարտավորվում է ղեկավարվել զրաքննական կանոններով և ոչ մի դեպքում չհեռանալ դրանցից։ Նա ներկայացնում է նաև «Արձագանքի» ծրագիրը, որը կազմված էր հետևյալ 11 բաժիններից. պաշտոնական լուրեր, հրապարակախոսական հոդվածներ՝ նվիրված հասարակական կյանքի կարևորագույն հարցերին, տնտեսական հարցեր, ժող. կրթության հարցը, մամուլի տեսություն, արտասահմանյան կյանքի տեսություն, քննադատություն և մատենագիտություն, դատական խրոնիկա, ֆելիետոն (զրախոսություն), այլ և այլք, հայտարարություններ։

Փոխարքայության զրասենյակի հարցմանն ի պատասխան զրաքննական կոմիտեից դեկտեմբերի 23-ին հայտնում են, որ Ա. Հովհաննիսյանի ներկայացրած ծրագրի նկատմամբ առարկություններ չկան։ 1882 թ. հունվարի 22-ին փոխարքայության գլխավոր վարչության պետը № 216 գրությամբ հայտնում է զրաքննության կոմիտեին, թե փոխարքան թույլատրում է Հովհաննիսյանին՝ ներկայացված ծրագրով հրատարակել «Արձագանք» շաբաթաթերթը, սակայն պայմանով, որ Կովկասյան զրաքննական կոմիտեի անմիջական հսկողության տակ ճշտությամբ կատարվեն մամուլի և զրաքննության մասին օրենքով հաստատված կանոնները[3]։


«Արձագանքը» սկսում է լույս տեսնել 1882 թ. փետրվարի 21-ից, կիրակի օրերը, երկու մամուլ ծավալով[4]։ Թերթին աշխատակցում էին Ալեքսանդր Երիցյանը, մանկավարժ Նիկողայոս Տեր-Գևոնդյանը, հրապարակախոս Հարոն (Նիկողայոս Տեր-Հարությունյան), Գաբրիել Սունդուկյանը, Գևորգ Եվանգուլյանը և ուրիշներ։

Սունդուկյան-Հադիդը «Արձագանքի» առաջին համարում հրապարակված իր «Մասլահաթով» շնորհավորում է Թերթի մուտքը և փոր-

2 ՎԿՊՊԱ, ֆ. 480, ղիրք Ա, գործ 457։

3 Նույն տեղում, գործ 457։

4 «Արձագանքի» առաջին հոգսերը Ա. Հովհաննիսյանին հնարավորություն չեն տալիս իրականացնել նրա ծրագրի երկրորդ մասը՝ վերսկսել «Փորձի» հրատարակությունը։


ԱՐԾԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

«Արձագանք» շաբաթաթերթի առաջին համարի առաջին էջը

ձում բնութագրել «Արձագանքի» ուղղությունը: Նա հույս է հայտնում, որ Թերթը կկարողանա դառնալ հայ կյանքի արձագանքը: «Ինչ անիս, մեր ասկի չոռ ու ցավը շատ է,—գրում է Հաղիդը,—մեր վայ վազլախին հնսաբ չկա, մեր ախպրտանց լացն ու տանջանքը վիրչ չունե... չիդ ասա միզ դիփ էտունք, դիփ մնտի չիդ ասա... էնդուր որ ծածկած ու թաքցըրած յարին դարման չկա... ամա անդճնիրդ լավ սրե «Արձագանք», չի ըլի որ էսղադա չոռ ու ցավի համա, էսղադա վայ վազլախի համա, էսղադա լաց ու տանջանքի համա արարած աշխարքի քունջ ու պուճախներումը մէ մէ փրկութենի ձեն էլ է չիմանաս խանդիսխան ու էս փրկությունն էննենց բզավի, որ ձէնդ երգինքը հասնի»[5]: Թե ինչպես էր շաբաթաթերթը արձագանքում հայ կյանքի օրվա հարցերին, ցույց է տալիս «Արձագանքի» պատմությունը:

«Արձագանքը» իբրև շաբաթաթերթ ուներ հետաքրքրությունների անհամեմատ մեծ ընդգրկում: Հայկական հարցի հետ կապված տապնապներին հաջորդել էր անորոշ սպասումների մի ծանր ժամանակաշրջան: Այժմ Աբ. Հովհաննիսյանը ուշադրության կենտրոնում է պահում արևելահայերի առօրյան, քննության առարկա դարձնում նրանց տնտեսական, բարոյական ու մտավոր կյանքի հետ կապված հոգսերն ու ակնկալությունները:

80-ական թվականների սկիզբն էր. Կովկասում արագորեն զարգանում էին բուրժուական հարաբերությունները. երկիրը թևակոխել էր կապիտալիստական զարգացման ոլորտը: Տեղի ազգային բուրժուազիան առաջընթաց քայլեր է կատարում, փորձելով ուժերը չափել եվրոպական ֆիրմաների գործարար ներկայացուցիչների հետ: Հայ լրագրողները խրախուսում են այդ քայլերը, միաժամանակ նրանց խորհուրդ տալիս հրաժարվել երբեմնի հետամնաց արդյունագործության եղանակներից և դիմել ժամանակակից տնտեսական դիտելիքներով: Գյուղական տնտեսությունները ռեֆորմներին հաջորդած տասնամյակներում կապիտալի հարվածների տակ անդառնալիորեն քայքայվում են, բանվորական ուժ մատակարարելով արդյունաբերական կենտրոններին:

Հայ մտավորականությունը նախկին եռանդով շարունակում է ընդլայնել դպրոցական ցանցն ու բարելավել կրթական գործը երկրում: Վերելք են ապրում հայ ազգության համախմբմանը նպաստող

---

5 «Արձագանք», 1882, №1:

կրթական ու մշակութային հաստատությունները՝ դպրոցները, թատրոնը, հրատարակչական կազմակերպությունները, բարեգործական ընկերությունները։ Դեմոկրատական, ազգային-պահպանողական և լիբերալ հոսանքների գործիչները, թեև ոչ համատեղ, բայց միևնույն նպատակին ուղղված գործունեություն են ծավալում՝ հայ գրականության, թատրոնի, բանասիրության, պատմագիտության, ազգագրության, բանահյուսության զարգացման ուղղությամբ։ Գիտական մշակման է ենթարկվում և արագորեն հարստանում գրական լեզուն։

Հայ հասարակական կյանքում շարունակում է պահպանվել կենդանի հետաքրքրությունը արևմտահայության վիճակի և նրա ճակատագրի նկատմամբ։ «Արձագանքը» պետք է արձագանքեր այս ամենին և, ինչպես բարեմաղթում էր Սունդուկյանը, երբեմն նաև փրկության ելք մատնանշեր։

Հովհաննիսյանի թերթը 80-ական թթ. և հաջորդ տասնամյակում հետևողականորեն լուսաբանում է Կովկասի հայ հասարակության հուզող ուսումնական և մշակութային կյանքի նշանակալից երևույթները, ընթերցողներին հրամցնում ժամանակի հայ գրողների նոր ստեղծագործությունները, հրապարակում՝ հայագիտության բնագավառի նորույթները, քննության առնում արևմտահայության վիճակը։ Հայ գյուղը և գյուղացին, հողային հարցը, քաղաքային արհեստավորության և Բաքվի նավթարդյունաբերության բանվորների ճակատագիրը նույնպես զբաղեցրել են «Արձագանքի» խմբագրության։

Համառոտակի ծանոթանանք շաբաթաթերթի հարցադրումներից կարևորների հետ։

Բ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«Արձագանքի» խմբագրությունը մեծ տեղ է նվիրել սոցիալ-տնտեսական հարցերին, փորձել է լուսաբանել ժողովրդի աղքատացման և հողազրկության երևույթը հայ գյուղում։ 1861 թ. ռեֆորմին հաջորդած ժամանակաշրջանն էր այս, երբ «տնտեսական զարգացման ուժը Ռուսաստանին քաշում էր դեպի կապիտալիզմի ուղին»։ 1861-ի ռեֆորմը Վ. Ի. Լենինը համարում է առաջին քայլը՝ «դեպի ճորտատիրական ինքնակալությունը բուրժուական միապետության վերածելու ուղիով»[6]։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 137։

Ռեֆորմը մեծապես խթանում է երկրի տնտեսական զարգացմանը, կապիտալիզմը սկսում է զարգանալ այնպիսի արագությամբ և երկրում կատարվում են «այնպիսի փոփոխություններ, որպիսիները եվրոպական մի քանի հին երկրներում տևել էին ամբողջ հարյուրամյակներ»[7]։

Հետռեֆորմյան շրջանում կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում արագացնում է «ծայրամասերի, այդ թվում նաև Անդրկովկասի և Հայաստանի տնտեսական յուրացումը»[8]։ 1870 թ. Հայաստանում և Ադրբեջանում անցկացված գյուղացիական ռեֆորմը ի տարբերություն 1861-ի ռեֆորմի, ուներ այնպիսի սահմանափակումներ, որոնց հետևանքով Անդրկովկասի գյուղացիության և կալվածատերերի միջև եղած փոխհարաբերությունները գրեթե մնում էին նախկինը։ Այսպես, ունենալով հանդերձ հողի հետգնման իրավունք, գյուղացիները իրականում ոչ մի հնարավորություն չունեին իրենց տրված հողակտորը հետ գնելու, իսկ փոխատվության այն սիստեմը, որը կիրառվում էր Ռուսաստանում, չէր նախատեսված Անդրկովկասի համար։ Սրան զուգընթաց հողի մեծ կարիքի մեջ էին պետական գյուղացիները, որոնք սեփականատեր չեն դառնում։ Հողերի սահմանազծման աշխատանքները և ետ գնման արարողությունները արհեստականորեն ձգձգվում և ավարտվում են միայն 1912 թ., երբ Ռուսաստանում այն վերջացել էր 1880-ին[9]։

Կապիտալիստական հարաբերությունները արագացնում են գյուղի շերտավորումը. կուլակության և վաշխառուների անարգել գործունեությունը, հողի վաճառքի և վարձակալման իրավունքը հողազրկման են դատապարտում գյուղացիներին, արագացնում նրանց արտագնացը դեպի քաղաքները[10]։ Մյուս կողմից, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը արագացնում է գյուղական համայնքների վերջնական քայքայումը։

«Արձագանքի» էջերում հրապարակվել են բազմաթիվ նյութեր,

---

7 Նույն տեղում, էջ 132։

8 Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 255։

9 Այս մասին հանգամանորեն տե՛ս Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, Կ. Պանիկյան, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում, Երևան, 1973։

10 Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, էջ 25։

որոնք դրեթե համակողմանիորեն արտացոլում էին գյուղի քայքայման օրհասական իրադարձությունները։ Մի շարք թղթակցություններում խոսվում էր հայ գյուղացիության հողազրկության պրոբլեմի մասին։

Այսպես, 1883-ին Շիրակում դրությունն այնքան լարված էր, որ գյուղացիները իրենց շրջանն այցելած կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովից թույլտվություն են խնդրում գաղթելու Կարսի նահանգը։ Վիճակը շատ ծանր էր Ջանգեզուրում, որտեղ 1884 թ. հաջողվում է նոր հողաբաժանում անց կացնել (ժառանգական հողատիրության փոխարեն անցնում են համայնական հողատիրության)։ «Արձագանքի» թղթակիցներից Հ. Խ.-ն՝ Գանձակի, Երևանի, Բաքվի և Թիֆլիսի նահանգների օրինակներով ցույց է տալիս, որ գյուղատնտեսությունն Անդրկովկասում, թեև ավելի դանդաղ, քան Ռուսաստանում, բայց դարձյալ անկում է ապրում. «գյուղացին դեպի քաղաք է դիմում, յուր օրական պարենը հայթայթելու համար»։ Մեծ Ղարաքիլիսայի թղթակիցը նույնպես բողոքում է գյուղացիների սակավահողությունից. «Միջին և ստորին դասակարգերը թաղված են պարտքի մեջ,— գրում է նա,— և անագորույն հարստի անգթությամբ այդ հասնում է մինչև կոկորդը»[11]։

Ծաղկաձորից, Ախալքալաքից, Երևանից, Նուխիից, Ղազախից ուղարկված նամակներում վաշխառուների աշխուժացումը դիտվում է իբրև հողազրկության ու սովին համարժեք պատուհաս։ Շատ պերճախոս է Խաչենի Ղշլաղ գյուղից ստացված մի նամակ, ուր ասված էր, թե «գյուղացիների տնտեսական քայքայվելու գլխավոր պատճառներից մեկն էլ վաշխառուների անսանձ հարստահարությունն է»։ Գյուղացինեը տգետ են, որից օգտվելով՝ վաշխառուները կողոպտում են նրանց. իբրև օրինակ հիշվում է մի գյուղացի, որը 4 տարվա ընթացքում իր ունեցած 6 ռ. պարտքի փոխարեն վաշխառուին վճարում է 22 ռ. 40 կ. և դարձյալ մնում պարտք՝ 26 ռուբլի։ «Տարիների ընթացքում,— շարունակում է նամակի հեղինակը,— ոչ օրենքը յուր բոլոր խստությամբ և ոչ մամուլը յուր անխնա հարվածներով չեն կարողացել արմատախիլ անել այդ չարիքը գյուղացիների միջից»[12]։

Բարձրացնելով այս հարցերը, «Արձագանքի» նամակագիրներից յուրաքանչյուրն իր առաջարկներով փորձում է օգնել դործին։ Այսպես, Երևանի թղթակիցը խորհուրդ է տալիս գյուղացիներին օժանդակելու

---

11 «Արձագանք», 1885, №6։

12 «Արձագանք», 1897, №105։

համար ստեղծել գործնի շահմարաններ և դրամագլուխ։ Շիրակի թղթակիցը՝ համապատասխան ապահովագրական ընկերություններից պահանջում է կապիտալ ներդրումներով օգնել գյուղացիներին («կապիտալ մտցնել հողի մեջ»)։ Մեկ այլ հոդվածագիր (Հ. Խ.) վերլուծելով գոյություն ունեցող ծանր իրավիճակը, գտնում է, որ այդ հետևանք է գյուղական ինքնավարությունների անբավարար աշխատանքի և «գյուղական պաշտոնյաների ու գավառական ոստիկանության ստորին գործակալների կատարյալ անսանձ կամայականության»[13]։ Քանի որ այս հոդվածը գրված էր ներքին գործոց մինիստրության այն նախագծի առիթով, որը նախատեսում էր գյուղացիների բաժանումը գյուղական հասարակությունների (сельские общества) և գավառակների (волость), ապա հոդվածագիրն անվերապահ հավատ է ծածում գործի հաջողության նկատմամբ։ Նա առաջարկում է խմբագրությանը, բացահայտել գյուղական ժողովների իրավունքները, վեր հանել հողաբաժանման սկզբունքները, ինչպես և լուսաբանել գյուղական ինքնավարությունների աշխատանքի թերությունները։

«Արձագանքի» էջերում բազմիցս խոսվել է Ղազախի, Շուլավերի, Գանձակի և այլ գավառներում տարածված ավազակության մասին։ «Ով ուշադրությամբ հետևել է այսպես անվանված «Կովկասյան ավազակությանց» խնդրին,— գրում է թերթի հոդվածագիրը,— նա կտեսնի, որ շատ անգամ մեր երկրի ավազակությունները կապված են հողի հարցի հետ։ Մեկը հողային վեճի պատճառով սպանում է մյուսին, ապա իբրև մարդասպան, հանցավոր, դառնում է փախստական և բռնի ավազակություն է անում, խմբելով յուր կողմը բազմաթիվ աղգակիցներ և ընկերներ»[14]։ Միղավորն այս դեպքում պաշտոնատար անձինք են և հողաչափները, որոնց անբարեխիղճ աշխատանքի հետևանքով հողային վեճերում շարունակ հաղթում են բեկերն ու հզորները։

Պայքարելու համար ավազակության դեմ, «Արձագանքի» հոդվածագիրն առաջարկում է գյուղացիներին բավարարել հողով, աշխատանքով, լայնացնել դպրոցական ցանցը, փոխել ոստիկանական կազմը և այլն[15]։

---

13 «Գյուղական ինքնավարության խնդրի առթիվ» (տե՛ս «Արձագանք», 1897, №77, 79)։

14 «Արձագանք», 1897, №147։

15 Նույն տեղում, №110։

«Արձագանքի» աշխատակից Ալ. Երիցյանը լրջորեն հավատում էր «Շինական-հողային» բանկեր բացելու մասին կառավարական հրահանգի հաջողությանը, որի նպատակն էր փոխարինաբար փող տրամադրել գյուղացիներին՝ հող գնելու համար։ Ժողովուրդը այն ժամանակ կհասնի բարօրության, երբ աղքատությունը վերանա, գրում է Երիցյանը, «իսկ աղքատությանը վերջ տալու համար կարևոր է, որ ամեն մեկը ունենա յուր ապրելու համար պետք եղած հողը»[16]։ Քանի որ ռուսական թագավորը ցանկանում է ռուս շինականներին կալվածատեր դարձնել, շարունակում է Երիցյանը, ապա «երկրիս բարձրագույն վարչությանը կմնա ջանալ տարածել կայսեր շնորհը նաև Անդրկովկասի վերա»։

1893 թ. «Արձագանքի» խմբագրությունը ծավալուն մի հոդվածով մեկնաբանում է պետական նոր օրենքը, վաշխառուների դեմ պայքարելու մասին։ «Հայ երկրագործի այժմյան դրությունն անտանելի է,— գրում է խմբագրականի հեղինակը,— հարկավոր է բարեփոխել նորա առօրյա պարապմունքը, տարածելով գյուղերի մեջ այգեպանություն, բանջարանոցապահություն և արհեստներ։ Մյուս կողմից, գյուղացուն պիտի օգնել և խնայողական-փոխատու գյուղական գանձարաններ հիմնելով, որոնց պաշտոնական կանոնադրությունը վաղուց հրատարակել է ռուսական կառավարությունը, բայց որո իրագործելու մասին հայ գյուղորայքում դեռ մտածող չկա»[17]։

Վերը նշված նյութերից դժվար չէ տեսնել այն իրողությունը, որ «Արձագանքի» խմբագրությունը գիտակցելով գյուղացիության վիճակի անելանելիությունը, այդ դրությունից դուրս գալու հիմնական միջոցն է համարում ռեֆորմի սկզբունքների և կառավարական զանազան միջոցառումների անշեղ իրագործումը, խնայողական-փոխատու գանձարանների, հասարակական շտեմարանների, շինական-հողային բանկի հաստատումը, այլև հայ գյուղի լուսավորումը՝ գրողների և մտավորականության միջոցով։

Երկրորդ ուղին, որը մատնանշվում էր գյուղի փրկության համար, համայնքի պահպանման ծրագիրն էր, որը դարավերջի հայ մամուլի էջերում մեծ եռանդով զարգացնում էին լիբերալ-նարոդնիկության ներկայացուցիչները։ Այս հարցի մասին «Արձագանքի» էջերում հոդվածներ

16 «Շինական-հողային» բանկը (տե՛ս «Արձագանք», 1882, № 18—19)։

17 «Արձագանք», 1893, №81։

ևն դեռևս թերթի դլխավոր աշխատակից, 80-ական ԹԹ. նարոդնիկական «Դործ» հանդեսի խմբագիր Ս. Հախումյանը, Մոսկվայի Պետրովյան ակադեմիայի ուսանողներ Ն. Աբելյանը և Դ. Ենդիբարյանը։ Սրանց մասնակցությունը «Արձագանքին»՝ խոսում է ազգային կյանքի նյութական ու բարոյական հիմքերի ամրապնդման մարդում «Արձագանքի» խմբագրության համերաշխության մասին ժամանակի դեմոկրատական շրջանակների դործիչների հետ։ Օդտվելով այն առիթից, որ Անդրկովկասի պետական դյուղացիության վիճակը հատուկ հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել էր և հրապարակի վրա էին «Նյութեր անդրկովկասյան երկրի պետական դյուղացիների տնտեսական կացության ուսումնասիրության համար» հրատարակության չորս հատորները (ռուսերեն), Ներսես Աբելյանն սկսում է պարբերաբար «Արձագանքում» հրատարակել հայ դյուղացիությանը վերաբերող վիճակագրական տվյալները[18]։ Վիճակագրական այս տվյալների համաձայն Անդրկովկասի հայ բնակչության մեծ մասն զբաղվում էր հողագործությամբ և արքունական, կալվածատիրական, վանքական ու սեփականատեր դյուղացիների մեջ մեծ թիվ էր կազմում։ Աբելյանն անուղղակիորեն բանավիճում է այն հեղինակների հետ, որոնք հայերին գերազանցորեն վաճառականական ազգ էին համարում։ 1875-ի վիճակագրական տրվյալներով ցույց տալով, որ քաղաքային բնակչությունը կազմում է միայն 12 տոկոս, իսկ դյուղականը՝ 88 տոկոս, Աբելյանը հայտարարում է. «Ուրեմն մի բազմահայ կենտրոնի համար ոչնչանում է այն շրջիկ կարծիքը, թե հայերը գլխավորապես քաղաքաբնակ վաճառականներ են»[19]։ Նա վկայակոչում է 1885-ի վիճակագրական տվյալները, որոնց համաձայն հայ դյուղացիների թիվը հասնում էր 478.809-ի, (ամբողջ արքունական դյուղացիների 28.10 տոկոսը)[20]։ Ն. Աբելյանը որևէ ընդհանրացում չի կատարում և մնում է ենթադրել, թե հաստատելով հայ ազգաբնակչության դյուղական դիմագիծը, Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերների միության» խմբակի անդամ Աբելյանը պնդում էր նարոդնիկական այն կարծիքը, թե ազդի հիմքը դյուղացիությունն է։

---

18 Տե՛ս «Արձագանք», 1887, № 2, 5, 7—9, 11, 30, 44, 46—48, 1888, № 6, 7, 9, 10, 45։

19 «Արձագանք», 1887, №11։

20 Երևանի նահանգում արքունական հայ դյուղացիների թիվը 60, 56 տոկոս էր կազմում, Ելիզավետպոլի նահանգում՝ 37.00 տոկոս, Թիֆլիսի նահանգում՝ 22,03 տոկոս, Բաքվի նահանգում՝ 3,52 տոկոս։

Այն օրերին, երբ դեռևս չէր ավարտվել Ն. Աբելյանի կոմպիլյատիվ աշխատության տպագրությունը, «Արձագանքում» երևում է թերթի Մոսկվայի թղթակից Գ. Ենգիբարյանի «Ի՞նչ է հողային համայնքը» ծավալուն հոդվածը: Սա նույնպես կոմպիլյացիա էր (թարգմանորեն մշակեց՝ Գ. Ե.») վերը հիշատակված Անդրկովկասի պետական գյուղացիների վիճակն ուսումնասիրած հանձնաժողովի նյութերից (հեղինակներ՝ Երիցյան, Ջելինսկի, Խանաղյան):

Հայ ժողովրդի տնտեսական կյանքի առանձնահատկությունները հանգամանորեն ուսումնասիրելու համար, Ենգիբարյանը ցանկանում է պարզաբանել մեկ հարց՝ որքանո՞վ է գյուղերում պահպանվել համայնական հողատիրությունը: Նա գրում է, թե համայնական հողատիրության սկզբունքը թեև դարերի ընթացքում աղարտվել է և վեր ածվել մասնավոր սեփականության, այնուամենայնիվ դրա հետքերը դեռևս պահպանվել են Հնդկաստանի հյուսիս-արևմտյան նահանգներում, Ռուսաստանի արևելյան և միջին նահանգներում, Կովկասի գավառներում («Թեպետ այստեղ համայնական սկզբունքը տիրապետող ազգերի զանազան օրենքների և կառավարիչների ազդեցության տակ այլանդակվել է և շատ տեղ կորչելու վերա է»)[21]: Համայնական հողատիրության առանձնահատկությունները Գ. Ենգիբարյանը թեև պարտադիր չի համարում հայ իրականության համար, բայց և այնպես իր ընթերցողներին ծանոթացնում է դրանց հետ: Հոդվածում ցույց է տրվում հողի համայնական օգտագործման երեք տիպ. առաջին դեպքում ամբողջ հողը պատկանում է գյուղի բնակչությանը, հողը մշակվում է կոլեկտիվի կողմից, իսկ բերքը հավաքվում և բաշխվում է հավասարապես: Երկրորդ ձևի դեպքում հողը պատկանում է համայնքին, բայց ամեն ոք մշակում է իրեն հատկացված կտորը: Այս բաժանումը պայմանական է, որովհետև հողերը ժամանակ առ ժամանակ նորից բաժանվում են ծխերի վրա: Համայնական հողատիրության երրորդ տիպը նա բնորոշ է համարում Կովկասի համար. այստեղ հողի մի մասը անհատների սեփականությունն է. «Տան տեղերը, բանջարանոցները, այգիները՝ սեփականություն են կազմում, իսկ խոտատեղերը, արոտատեղերը՝ պատկանում են համայնքին»:

Մամուլի գավառական թղթակիցներին և հայ ուսուցիչներին Ենգիբարյանն առաջարկում է մի շարք հարցեր, որոնց պատասխաններն

---

21 «Արձագանք», 1887, №27:

անհրաժեշտ էին նրա հետագա ուսումնասիրությունների համար։ Այսպես, նրան հետաքրքրում էր այն, թե Հայաստանի շրջաններում համայնական հողատիրության ո՞ր ձևերն են պահպանվել, հողերն ի՞նչ սկզբունքով են բաժանվում, կա՞ն արդյոք հողի մշակման և գյուղատնտեսական այլևայլ բնագավառների կոլեկտիվ աշխատանքի երևույթներ, գոյություն ունե՞ն համայնական շտեմարաններ, խնայողական դանձարան և այլն, և այլն։ Հարկավ, նկատի ունենալով հետռեֆորմյան ժամանակները, Ենգիբարյանը հարցնում էր, թե վերջին 20 տարում գյուղացիության վիճակն արդյոք լավացե՞լ է, թե վատացել։

Թեև «Արձագանքում» հրապարակվում է նրա հարցաթերթը, հետագայում խմբագրությունը չի ամփոփում այս հարցը. հավանաբար Ենգիբարյանին չի հաջողվում ստանալ անհրաժեշտ նյութեր՝ իր ուսումնասիրությունն ավարտելու համար։

Դարավերջի գյուղը զբաղեցրել է և «Արձագանքի» գլխավոր աշխատակից Սիմեոն Հախումյանին։ Նա տագնապով է խոսում այն փաստի մասին, որ գյուղերը դատարկվում են։ Վաշխառուներից և նրանց կալվածքների կառավարիչներից կախված գյուղացիները այնպես են ճզմըված ծանր հարկերի տակ, որ «նրանց սպառնում է սնանկությունը և գաղթը, եթե ժամանակին նրանց սեփական կամ համայնական հողատերեր դարձնելու հոգս չտարվի»։ Հախումյանը մեծ հույսեր է կապում կառավարական հողային նոր կարգադրության հետ, որը, նրա կարծիքով, հիմնական նշանակություն ունի «գյուղացիների հողային իրավանց մասին, շատ մեծ չափով ապահովում է այդ իրավունքները և միևնույն ժամանակ արգելք պիտի լինի գյուղական գաղթականության, որի հետևանքը երկրի տնտեսական անկումն կառաջացնի»[22]։

Հախումյանն առաջարկում է ստեղծել հասարակական շտեմարաններ և դրամագլուխներ, որոնք նյութապես կարող էին ապահովել գյուղացիներին և աղբյուր դառնալ հասարակական երջանկության ստեղծման համար։ Ազատվելով առօրյա հոգսերից, գյուղացին, ըստ Հախումյանի, միջոց կստանար «խաղաղ սրտով մտածելու և մասնակցելու երկրի քաղաքակրթության գործին»[23]։ Նա մտավորականներից և գյուղատնտեսներից պահանջում էր սերտ կապեր հաստատել գյուղական շրջանների հետ և օգնել գյուղացիությանը՝ վերակառուցելու իր

---

22 «Արձագանք», 1897, №84։

23 Նույն տեղում, 1896, №48։

տնտեսությունը։ Մասնագետ գյուղատնտեսների խնդիրն է համարում՝ պարկ տալ շերամապահության, խաղողագործության և դաշտավարական աշխատանքների զարգացմանը գյուղում, խորհել գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացնելու հարցի շուրջ։

Գյուղացիական հարցի «Արձագանքի» տեսաբանների նարոդնիկական հայացքներն արտահայտվել են և նրանց գրաքննադատական հոդվածներում, այնքանով, որքանով գյուղափրկիչ նրանց ծրագրերը մեծ չափով խարխլվում էին նաև գրականությանը պարտադրվող՝ նրանց հանձնարարականների վրա։ Այսպես, Գ. Ենգիբարյանը պահանջում է կյանքի ճշմարտացի արտացոլմամբ գյուղական հասարկությանը հասցնել սոցիալական ինքնաճանաչության և նրան ոտքի հանել պայքարելու հարստահարությունների դեմ։ Ս. Հախումյանը կրկնում է իր վաղեմի պահանջը՝ ժողովրդի կյանքին հաղորդակցվելու՝ ժողովրդի վշտերի պոեզիան ստեղծելու վերաբերյալ։ Հ. Ճաղարբեկյանը ղեկավարվելով 80—90-ական թթ. լիբերալ նարոդնիկության ժողովրդասիրական հայտնի քարոզներով, վճռական նշանակություն էր տալիս դեպի գյուղ գնացող երիտասարդության միսիային։

Եվ այսպես, «Արձագանքի» խմբագրությունը մտահոգված էր հայ գյուղի և գյուղացիության խնդրով և մտավորականության ուշադրությունը բևեռելով գյուղացիների հողազրկության և համայնքի քայքայման փաստերի վրա, անկեղծորեն փորձում էր փրկել կապիտալիզմի զարգացման ճանապարհին փլուզման դատապարտված գյուղական տնտեսությունները։ Սակայն թերթի նարոդնիկ տեսաբանները և խմբագրության գործիչները հեռու էին հարցի ռեալ ըմբռնումներից։ Նրանք կրկնում էին ռուս նարոդնիկներին, որոնք Վ. Ի. Լենինի բնութագրությամբ՝ իդեալականացնելով համայնքը, «ծայրահեղ թեթևամտությամբ էին վերաբերվում գյուղացիության այն իրական կարիքներին, որոնք բխում են ավյալ տնտեսական զարգացումից»[24]։ 90-ական թթ. վերջնականապես ապացուցեցին լիբերալ-նարոդնիկության կտրվածությունը կյանքից և նրանց ծրագրերի իրականացման անհնարինությունը։

Հայ գյուղը քայքայվում է արագ թափով։ Հողազուրկ գյուղացիները մասսայաբար մեկնում են արդյունաբերական Բաքու և մշակներին աշխատանք երաշխավորող Թիֆլիս կամ կիսաքաղց գոյություն քարշ

---

24 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 2, էջ 663։

տալիս՝ դավառական վաշխառուների, պետական հարկերի, տարերային աղետների և ավազակների դեմ մղվող ամենօրյա պայքարում։

Կովկասի կենտրոնական քաղաքներում սկսվել էին ուժեղ տեղաշարժեր. արագ թափով զարգանում էր արդյունաբերությունը։ Բաքուն իր վրա էր հրավիրում եվրոպական գործարար կապիտալիստների ուշադրությունը։ Մուտք գործելով Կովկաս և իրենց դիրքերն ամրապնդելով Բաքվում, նրանք հսկայական միջոցներ էին ներդնում՝ շահագործելու Անդրկովկասի նաև այլ վայրերի բնական հարստությունները։

«Մեր տնտեսական կյանքը» առաջնորդողում «Արձագանքի» խմբագրությունը 1886-ին ահազանգում է սպասվող վտանգի մասին։ Տեղական արդյունաբերողներն ու առևտրականները աստիճանաբար շարքից դուրս են գալիս և իրենց տեղը զիջում օտար դրամատերերին, գրում էր առաջնորդողի հեղինակը, հավանաբար Շիրվանզադեն։ Այդ երևույթը խորհրդանշում է նոր ժամանակների ոգին, դրա անողոք խորհուրդն է՝ «հալածել հետզհետե տնտեսական ասպարեզից բազմաթիվ մանր դրամատերներին և նոցա տեղը անդառնալի կերպով հանձնել զորեղ դրամատերներին»[25]։

Հոդվածագիրը ներկայացնում է օտարամուտ կապիտալիստներին. բելգիական ընկերությունները հարստահարում են Վրաստանի անտառները, Սիմենսը՝ Դանձակի պղնձի հանքերը և 10.000 դեսյատին պետական անտառ։ Եվրոպական մի քանի ընկերություններ շահագործում են Քութայիսի նահանգի մարգանեցի հանքերը։ Ռոտշիլդը հաստատվել է Բաքվում և մտածում է մուտք գործել նաև գինեգործության ասպարեզը. ոչ մի երաշխիք չկա, որ այդ անկոչ գործարարները չեն մխրճվի տնտեսության այլ բնագավառները ևս։ Հոդվածագիրը խրախուսում է Դանձակի մի խումբ գինեգործների նախաձեռնությունը՝ բաժնետիրական ընկերություն հաստատելու ճանապարհով դիմադրելու օտարներին և զարկ տալու տեղական գինեգործության զարգացմանը։ «Արձագանքը» կոչ էր անում «ոչ միայն խրախուսել գանձակեցիների ձեռնարկությունը, այլև աշխատել, որ նոցա օրինակը գրավի մեր տեղային արդյունաբերների բոլոր շրջանները»։

«Արձագանքի» աշխատակից Ալ. Երիցյանը նույնպես հոռետեսորեն էր դիտում եվրոպացի կապիտալիստների ներխուժումը Կովկաս, հետևում էր նրանց ձեռներեց գործակալների պատյաններին երկրի ծայ-

---

25 «Արձագանք», 1886, №42։

թամասերում։ Երիցյանը հասկանում էր, որ թեև երկիրն առատ է բնական հարստություններով, բայց տեղական արդյունաբերողների անորակ արտադրանքը չի կարող բավարարել միջազգային շուկայի պահանջարկը։ «Թիֆլիսը օրեցօր ընկնում է նյութապես,— գրում է նա,— և այդ բոլորը զգալի է նախ և առաջ սորա վարչական կառավարության համար։ Առևտրի բացակայությունը, արհեստների անկումը և հետադիմությունը առաջ են բերում ընդհանուր չքավորություն և աղքատություն-այնպիսի մի ախտեր, որոնց հետ պիտի մաքառի ամեն մի սրտացավ քաղաքացի։ Հարկավոր է կենդանացնել քաղաքը, զարկ տալ սորան, կենդանության հրավիրել և այդպես ապագա չարիքի առաջն առնել»[26]։ Հետաքրքրական է, որ Երիցյանը արդյունաբերության զարգացման հեռանկարներ չէր տեսնում Թիֆլիսում։ Նա քաղաքի բարօրության երաշխիքը փնտրում է նրա բարոյական և նյութական նշանակության բարձրացման մեջ։ Նման մի ճանապարհ էր Թիֆլիսում գյուղատնտեսական աշխարհահանդես կազմակերպելու գյուղատնտեսական ընկերության նախաձեռնությունը, որը խրախուսում է Երիցյանը։

1890 թ. նախաշեմին, Նոր տարուն նվիրված հոդվածում Ա. Հովհաննիսյանը խոսում է սեփական միջոցներով երկրի բնական հարստությունները շահագործման հանձնելու միջոցառումների մասին։ «Ժամանակ չէ՞ արդյոք,— գրում է նա,— որ հայ երկրագործը և հողատերը պիտանային օգուտ քաղել իրանց հողի հարստությունից և ներս մուծվող օտարազգիների օգնությանը կամ դրամին կարոտ չլինեին։ Ժամանակը չէ՞, որ երկրիս հարստությունը մշակվեր նույնիսկ տեղացիների ձեռքով, որ մեր գործավորը և արհեստավորը ձեռքը ծոցին քաղցած չմնային։ Պակաս բարեմաղթությանց կարոտ չէ նաև մեր առևտրական կամ վաճառականական դասը, որին հատուկ է օր առաջ դուրս գալ յուր գործունեության նեղ շրջանից և մի պատվավոր դիրք բռնել յուր հետ հաջողությամբ մրցող զանազան ազգությանց մեջ»[27]։ Մի այլ հոդվածում Աբգար Հովհաննիսյանը ավելի հստակորեն է բարձրացնում սեփական նախաձեռնության և երկրի բնական հարստությունները տեղական միջոցներով շահագործման հանձնելու հարցերը։ Նա անուղղակիորեն գծում է և հայրենի երկրի տնտեսական զարգացման հեռանը-

26 «Արձագանք», 1886, №38։

27 Նույն տեղում, 1889, №49։

կարները, ժամանակակիցների ուշադրությունը հրավիրում մեծ ծրագրերի և երկրի ապագան վերափոխելու հարցերի վրա։

«Պիտի գա ժամանակ,— գրում է նա,— երբ Երևանի նահանգը ծանրաբեռնած նավերով ուղարկե Եվրոպային դեղեցիկ ապակի և հայելիներ, գեղեցիկ անոթներ և արձաններ—և այդ բոլորը յուր զարմանալի առատ գույնզգույն վանակատի (օբսիդիան) քարահանքերից, որ այսօր միմիայն անցորդ եվրոպացվոյն զարմանք են պատճառում խրճուղվո վերա իրանց բացած հարուստ երակներով։ Այս երկրում չկա լեռնային մի տափարակ առանց գայլախազի, առանց չեչաքարի։ Բայց ի՞նչ օգուտ։

Եվ այդպես ահա, մենք տակավին չկիտենք օգուտ քաղել մեր երկրի հարստությունից»[28]։

Հետևողականորեն զարգացնելով այս միտքը, «Արձագանքի» խմբագիրն առաջարկում է գործունեության մաքսիմում ծրագիր՝ ճանապետական արդյունագործության փոխակերպումը մեխենական արդյունագործության։ Դեպի այդ նպատակը գնալու մինիմում ծրագիրը կրթության ճանապարհն էր, սկսելով այդ՝ սկզբնական, տարրական աստիճանից։

Եթե 1882—83 թթ. շաբաթաթերթի աշխատակից Ալ. Երիցյանն այն կարծիքին էր, որ արհեստները մեծ դեր ունեն կատարելու երկրի տնտեսական կյանքում, ապա 90-ական թթ. սկզբին խմբագրությունն առաջ է քաշում առևտրական մասնագիտական դպրոցներ հաստատելու հարցը։ Այդ դպրոցները խմբագրությունն անհրաժեշտ էր համարում՝ բարոյապես և մտավորապես զարգացած առևտրական կադրեր դաստիարակելու համար, որոնք պետք է զարկ տային երկրի արդյունաբերության վերելքին։

Արդյունաբերությունը դիտական հիմքի վրա զարգացնելու պահանջները առաջադրել էր Շիրվանզադեն դեռևս 1885-ին «Արձագանքում» տպագրված իր «Բաքու» ակնարկաշարում[29]։ Նա այդ ուսումնասիրությամբ ցույց էր տալիս, թե ինչ նյութական և բարոյական նշանակություն ունի Բաքվի արդյունաբերությունը Անդրկովկասի և, մասնավորապես, անդրկովկասյան հայության համար։

Շիրվանզադեն նկարագրում է նավթաշխարհի ծնունդը և աճը 40

---

28 Նույն տեղում, 1883, №32։

29 Նույն տեղում, 1885, №4, 5, 6, 9։

տարիների ընթացքում, ընթերցողներին ծանոթացնում Բաքվի բարեկարգման պատմությանը: Նա ներկայացնում է Սաբունչիի և Բալախանիի նավթային հրապարակների արդյունագործության նախնական եղանակները, ինչպես և դրանց մոդեռնացումը: Վիճակագրական տվյալները խոսում են նավթաշխարհի հարստության անբավ պաշարների, հանույթի հսկայական աճի մասին: Շիրվանզադեն, սակայն, «Արձագանքի» դիրքերից բարձրացնում է գլխավոր հարցը, այն, թե ո՞ւմ ուժերով է արդյոք զարգանում նավթային արդյունաբերությունը—տեղակա՞ն, թե արտասահմանյան արդյունաբերողների...

Հոդվածագիրը դատափետում է տեղական արդյունաբերողներին նրանց հետամնացության համար, որի պատճառով նավթային արդյունաբերությունն աստիճանաբար կենտրոնանում էր օտարերկրյա ֆիրմաների ձեռքում:

Այնուհետև նա կանգ է առնում տեղական արդյունաբերողների բարոյական նկարագրի վրա. արդյոք այդ դասակարգը ի վիճակի՞ էր ըստանձնել նրան հանձնարարվող ծանր պարտականությունը. «Երեկվա հասարակ կոշկակարը, ջրկիրը, մշակը, գործակատարը... մի քանի տարվա ընթացքում դառնալով նշանավոր հարստության տեր, այսօր արմատապես փոխվելով, բարոյական կետից ներկայացնում են մեր ժողովրդի մեջ մի աննախիրար դասակարգ»[30] (ընդգծումը մերն է—Մ. Մ.):

Շփվելով Ռուսաստանի արդյունաբերողների հետ, նրանք ընդօրինակել են միայն արատավորն ու խոտելին: Շռայլում են հարստությունը, առանց խորհելու ապագայի մասին: Նրանց կյանքի ներքին և արտաքին բովանդակությունը տխուր է... «Բաքվի տեղացիները,— եզրակացնում է Շիրվանզադեն,— նամանավանդ սոցանից երիտասարդները, վերջին տասնյակ տարիների ընթացքում բացի անբարոյականությունից, շռայլությունից, ոչինչ չեն կարողացել օտարներից ընդունել իրանց կյանքի մեջ»[31]: Առավելապես երիտասարդությունը, շեշտում է հոդվածագիրը, իրենից «ներկայացնում է բարոյապես ընկած և ֆիզիկապես քայքայված մի դասակարգ, որը նշանավոր չարիքներ է սպառնում մեր ապագա սերնդին»:

Շիրվանզադեն փորձում է դաստիարակել այդ «աննախիրար դասակարգի» ներկայացուցիչներին, ջանում հասկացնել նրանց՝ իրենց

---

30 Նույն տեղում, №9:

31 Նույն տեղում:

շահերը և պատասխանատվությունը՝ հայրենի երկրի առաջ։ Այդ կարդի ելույթներից է «Հնկա և Թղուկներ» անստորագիր հոդվածը[32]։ Նկատի ունենալով այն անխոհեմ խանդավառությունը, որով Բաքվի նավթարդյունաբերողները ընդունել էին Ռոտշիլդի մուտքը Բաքու, Շիրվանզադեն կրկին անգամ նախազգուշացնում է տեղացիներին. «Ռոտշիլդի ֆիրման բարեգործական ֆիրմա չէ. նա նավթային արդյունաբերության մեջ մատ է խառնում ոչ թե երկրին կամ տեղացիներին օգնելու, այլ շահվելու նպատակով»։ Շիրվանզադեն այնուհետև ցույց է տալիս այն ուղիները, որոնք տեղացիներին կարող էին փրկել կործանումից։

Սակայն որքան էլ «Արձագանքը» զգաստության և շրջահայեցության կոչեր էր անում, միջազգային շուկայում տեղացիները հետ էին մնում ամերիկյան մոնոպոլիստներից։ Թեև Բաքվի նավթն ավելի որակյալ և էժան էր, արդյունահանության քանակով՝ այն տեղը զիջում էր ամերիկականին։ Բաքվի նավթարդյունաբերողների անհաջողությունը միջազգային շուկայում, «Արձագանքի» տեսաբանը բացատրում է նրանց անկազմակերպվածությամբ, անփութությամբ և տգիտությամբ։

«Արձագանքի» խմբագրությունը, որ կոչ էր անում թողնել մանրավաճառությունն ու կալվածատիրությունը և ձեռնարկել արդյունաբերության զարգացման գործին, բոլոր հնարավոր միջոցներով օժանդակում է այդ ծրագրի իրագործմանը։ Այսպես, հրապարակում է Ափշերոնյան թերակղզու 1889 թ. նավթային արդյունաբերությանը վերաբերող վիճակագրական տեղեկությունները, հրապարակում է հաղորդումներ ու հոդվածներ՝ երկաթուղիների սակագնի, կառուցվող խճուղային ճանապարհների, Սևանա լճի վրա շոգենավի շահագործման և այլ հարցերի մասին։ Խմբագրությունը խրախուսում է Բաքվի գործարանատերերի կողմից կազմակերպված միությունը և հարց բարձրացնում փոխադարձ վարկի սակավարյուն ընկերությունից բացի Բաքվում բանդեծել Բաքվի բանկի առանձին բաժանմունք։

Բաքվում արդյունաբերության զարգացումն ընթանում է ամբողջ ճակատով, սակայն այդ իրողությունն իր հետ բերում է և անխուսափելի հետևանքներ։ Հրապարակի վրա էր մի ամբողջ դասակարգ՝ բան-

---

32 Անկախ այն բանից, որ հոդվածի լեզուն, ոճն և ոճը անվերապահորեն պատկանում են Շիրվանզադեին, հոդվածի հենց սկզբում նա անուղղակիորեն հաստատում է, որ ինքն է հեղինակը (որպես իր հոդվածները՝ նա վկայակոչում է նախորդ տարվա տասբազրված ակնարկաշարը՝ նվիրված Բաքվին)։

վորութիւնը («Բաքվի մշակները»), որն իր զարհուրելի վիճակով՝ ոտքի է կանգնեցնում «Արձագանքի» խմբագրութիւնը։

1897 թ. լրագրի էջերում զետեղված հոդվածները խոսում են այդ դաստակարգի կյանքի անմարդկային պայմանների մասին, առաջավոր մտածողների ուշադրութիւնը հայկական հարցից հետո հրավիրելով Բաքվի մշակների ճակատագրի վրա։

Բանվորական հարցի հիմնական տեսաբաններն էին Ա. Բալայանը, Արշարունին և Ափշերոնցին[33]։

Ափշերոնցին կանգ է առնում բանվորների հանգստի իրավունքի հարցի վրա։ Նրանք թեև նվաճել են կիրակնօրյա հանգստի իրավունքը, բայց այն չեն կարող օգտագործել։ «Մտել եք ծառայութեան և այդ բավականաչափ փաստ է, որ դուք վաճառված եք,— գրում է նա։— Այստեղ կուլ գնացած պիտի համարեք և՛ ձեր ևսը, և՛ ձեր բարոյականը, մտավորը, հոգեկանը և այլն։ Դուք կատարյալ ստրուկ եք. և ի՞նչ է այս բոլորի վարձատրութիւնը—քայքայված մարմին, սպառված ուժեր, ցնցված նյարդեր, ֆիզիկական, հոգեկան և մտավոր կատարյալ սբենանկութիւն, զրկանք, վիշտ, դառնութիւն, կսկիծ»[34]։ Արշարունին նկարագրում է Բաքվի նավամատույցներից մեկը. մշակը՝ համեստը մեջքին, շտապում է այնտեղ՝ երկու սև կոպեկ աշխատելու... նրա իդեալն է փողը. և առհասարակ, Բաքվում այդ հիմնական հարցն է, որին հրապատակվելով մարդիկ մոռանում են, որ մարդ են։ Ըստ գրպանի փողի քանակութեան միայն՝ այստեղ որոշվում են մարդու արժանիքները։ Սա քաղաք չէ, այլ դժոխք, որի ճակատին Դանտեի հանճարն արձանագրել է. «Իմ միջով անցնում են դեպի վշտի կացարանը, իմ միջով անցնում են դեպի հավիտենական տանջանքները, անցնում են դեպի անդարձ կորածները... Ամենևքյան, որ մտնում եք այստեղ, թողեք ձեր բոլոր հույսերը»[35]։

«Յոթն օր Բալախանում» թղթակցութեան մեջ Արշարունին պատմում է, որ բանվորների վիճակը գնալով ծանրանում է. 8—9 ժամի փոխարեն նրանք աշխատում են 15 ժամ։ Չոր հացն է միայն նրանց ուտելիքը, բնակարան չունեն, չունեն աղատ օր, լողանալու, հանգստանա-

---

33 Արշարունի գրական կեղծանունով գրում էր Մեսրոպ Ղազարյանը։ Ափշերոնցու ինքնութիւնը հայտնի չէ մեզ։

34 «Արձագանք», 1896, №71։

35 Նույն տեղում, №78։

լու, եկեղեցի գնալու հնարավորություններ։ Ինժեներները ևս անտարբեր են նրանց նկատմամբ և գոնե չեն փորձում ընդօրինակել օտարերկրացիների գործարաններում հաստատված կարգ ու կանոնը։ Կովկասցի ձեռնարկատերերը առաջնորդվում են միմիայն մեկ մղումով. հնարավորին չափ եղմել մշակներին, մի քանի կոպեկ ավելի շահելու համար։ Նրանք չեն զգում իրենց վարմունքի տմարդի, գծուծ և ստոր լինելը[36]։ Արշարունու վրդովմունքը ծայր աստիճանին է հասնում նրա «Ստորերկրյա բնակիչներ» նիստակցության մեջ։ Բանվորներն զբաղեցնում են միմիայն նկուղային հարկերը՝ առաստղելական վարձ վճարելով դրանց համար։ Այդ նկուղները խոնավ են, անլույս, զուրկ ամենատարրական հարմարություններից։ «Տոկուն մշակը, տարիներ շարունակ ապրելով այդտեղ, հյուծվում է, մաշվում, այլանդակվում... «որու փույթ,— բացականչում է նիստակիցը,— նա ստորերկրյա բնակիչ է»։ Չկա մեկը, որին կարողանար դիմել բանվորը, շարունակում է Արշարունին, չկա մեկը, որին նա համարձակ ասեր՝ «Լույս, խարխափում ենք խավարի մեջ»։ «...Ո՞վ է նա, ինչացո՞ւ է... անբան անասուն և ավելի ոչինչ, իսկ անասունի տեղը մթին գոմն է միայն. ուր թագավորում է մշտական խավարը, ուր շնչում են աղբի հոտով, ուր նեխված է օդը, ուր անասունները նստում և վեր են կենում իրանց աղբի վրա...»։ Մինչդեռ այդ «ստորերկրյա բնակիչները» բնական արարածներ են, մեզ նման մարդիկ։ Ավելին, «նրա՛նք են այդ հսկայական շինությունների հիմնաքարը, նրա՛նք են մարդկանց բարօրության մշտական և անըսպառնալի աղբյուրը, նրանց կորովի բազուկների ուժն է, որ առաջ է մղում կյանքի հսկա մեքենան, կառքը, որի վրա մարդկության մի ուրիշ դասակարգ միայն բազմել գիտե և ականատես է, թե ինչպես նրանք հերթով ընկնում են կես ճանապարհին շնչասպառ. որո՞ւ փույթ, չէ՞ որ ստորերկրյա արարածներ են նրանք...»[37]։ Գործարանատերերը չեն այցելում նրանց՝ կենդանի թշվառությունը սեփական աչքերով չտեսնելու վտանգին չենթարկվելու համար։ Սակայն՝ «...Նայեցե՛ք այդ ողորմելիների դրությանը,— դիմում է գործարանատերերին Արշարունին,— ինչո՞վ են զանազանվում նրանք անբան անասուններից։ Սոսկացե՛ք նրանց կրած տանջանքներից, թողեք ձեր զարհուրելի անտարբերությունը, դո՛ւրս եկեք ձեր մեհյաններից, մտեք ձեզ շրջապատող

36 Տե՛ս նույն տեղում, № 116։

37 Նույն տեղում, №83։

կյանքի մեջ և այն ժամանակ միայն կհամոզվեք, որ ձեր ամբողջ բարօրությունը բացառապես կառուցել եք ձեր պատկերը կրող միլիոնավոր կենդանի դիակների վրա»[38]:

Արշարունին, հիրավի, ամենառեալ գույներով է նկարագրել բանվորների աշխատանքային անմարդկային պայմանները և նրանց ահավոր իրավազրկությունը: Սակայն, զարմանալի կերպով բանվորների վիճակի բարվոքումը նա կապում է միմիայն գործարանատերերի բարի ցանկությունների հետ: Մենք տեսանք, որ «ստորերկրյա բնակիչների» անհավատալի դառն կյանքը նկարագրելուց հետո նա, այնուամենայնիվ, ինչ-որ հավատով դիմում է գործարանատերերին. «Թողե՛ք ձեր զարհուրելի անտարբերությունը, դո՛ւրս եկեք ձեր մեհյաններից, մտեք ձեզ շրջապատող կյանքի մեջ»... նրան թվում է, թե Բաքվի կապիտալիստները կուշաբերվեն, երբ հասկանան, որ իրենց հարստությունը ձեռք են բերել իրենց պատկերը կրող անհատների ջանքերով: Այս է պատճառը, որ Արշարունին մի հոդվածով ողջունում է բանվորների համար բնակելի շենքեր կառուցելու որոշումը, նույնիսկ խանդավառությամբ է խոսում Բալախանիում և Բիբի-Հեյբաթում ծառայողների երեխաների համար ձրի դպրոցներ բանալու որոշման մասին և այլն: Նա գոհ է, որ արդեն ուշադրություն է նկատվում բանվորների կյանքի նկատմամբ, մի կյանք, «որ կարող ենք հավատացնել,—գրում է նա,—տաժանակիր աշխատանքներից ոչնչով չէ զանազանվում»[39] (ընդգծումը մերն է—Մ. Մ.):

Դարավերջին «Արձագանքում» թղթակցություններ են տպագրվել Ալավերդու պղնձահանքերի աշխատանքների, Խաչենի Ղշլաղ գյուղի մետաքսագործարանում կանանց ու երեխաների աշխատանքի դաժան շահագործման, Անդրկովկասի մետաքսագործության վիճակի, դրա զարգացման հեռանկարների մասին: «Արձագանքի» աշխատակիցները անվերապահորեն ընդունելով հանդերձ կապիտալիզմի զարգացման անհրաժեշտությունը, այդ հարցի մեջ երկու կողմ են տեսնում: Նախ, ինչպես արդեն նկատեցինք, Կովկասի արդյունաբերության զարգացման հեռանկարների մեջ նրանք մեծ նշանակություն են տալիս ազգային բուրժուազիայի զարգացմանը (տեղական) և նրա ձևներեցությանը՝ ժամանակի պահանջների առումով: Այնուհետև միայն, նկատելով այդ

---

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում, № 122:

բուրժուազիայի ոչ ազգային (քաղաքացիական), այլ միջազգային-էգոիստական առանձնահատկությունները, անխնայորեն մերկացնում են նրա դիշատչական էությունը։

Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Շիրվանզադեի ելույթը հայ վաճառականության դեմ։ Նրա «Հայ ազգի կատաղի թշնամին» հոդվածը մեծ աղմուկ է բարձրացնում վաճառականության շրջաններում[40]։ Հոդվածն անստորագիր էր և սկզբում վերագրվում էր Աբգար Հովհաննիսյանին։ Վերջինս Շիրվանզադեի հոդվածի ոգով և նույն խորագրով մի քանի հոդված է զետեղում «Արձագանքում» (արդեն իր ստորագրությամբ)[41], և ինչպես Շիրվանզադեն է հիշում իր մեմուարներում՝ «ալեկոծված ճահճի վրա» յուղ է թափում...

Շիրվանզադեն հստակորեն գծում է միջազգային շուկա դուրս եկած հայ վաճառականների բարոյական նկարագիրը։ Այդ մարդիկ, գրում է Շիրվանզադեն, «մի իրականացած զզվանք են»։ «Սրտի դատաստանը և խղճի օրենքը վաղուց հետ նորա համար գոյություն չունեին», գրում է նա։ Նրանց համար ոչ կրոնի, ոչ ազգության խորություն չկա։ Վաճառականը իր շահի համար կարող է հարստահարել մերձավոր բարեկամին և հարազատ եղբորը։ Նրանք ընդունակ են ամենաստոր գործերի, շարունակում է գրողը, անբարոյականության, կեղծ սրտանկության... սակայն ամենանողկալին այն է, որ շփվելով օտար ազգերի հետ, անխիղճ կերպով արատավորում և ոտնակոխ են անում հայի անունը։ Օտարները հայերի մասին չեն կարող գաղափար կազմել ազգության մաքուր տարրի՝ գյուղացիության և արհեստավորների միջոցով։ Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մտավոր-բարոյական վիճակի մասին նրանք պատկերացում են կազմում այն դասակարգի միջոցով միայն, «որի կյանքի նպատակը լոկ նյութականն է»։ Նման ներկայացուցիչ ունենալը՝ կատարյալ դժբախտություն է, ասում է Շիրվանզադեն։ Ավելին, «Հայ վաճառականը հայ ազգի կատարյալ թշնամին է,— գրում է նա,— և մենք կասենք, որ չկա ավելի վտանգավոր, ավելի անխիղճ և ավելի բարբարոս թշնամի, քան թե նա։ ...Նա յուր ժողովրդի կատարյալ ցեցն է»[42]։

---

40 Տե՛ս «Արձագանք», 1887, №39—40։

41 Տե՛ս «Արձագանք», 1887, №41—42, 46։

42 «Արձագանք», 1887, №39։

Շիրվանզադեն այդ ցեցերին պատկերում է և «տանը», իրենց հայրենիքում։ Հասարակական խնդիրներ չկան այդ մարդկանց համար։ Նրանք օտար են հայ կյանքին և խուլ՝ նվիրատվությունների ժամանակ։ Իր «Բարեգործություն և առևտուր» հոդվածում Շիրվանզադեն զարգացնում է վերոհիշյալ մտքերը։ Նա ցանկանում է ընդհանուր քննարկման առարկա դարձնել այս հարցը. չէ՞ որ հասարակությունը նույնպես մեղավոր է՝ այդ բարոյազուրկ մարդկանց հասարակական կյանքի առաջին աստիճանների վրա տեղ տալով։ Մեղավոր է ծախու մամուլը, որը ներբողում է նրանց նվիրատվությունները...

Եվ այսպես, «Արձագանքի» գլխավոր աշխատակիցը ազգ հասկացողությունը կապում է միմիայն գյուղական հասարակության և արհեստավորության հետ, վաճառականության և բուրժուազիայի դասակարգը դիտելով իբրև ազգության թշնամի, ժողովրդի ցեց։ «Շիրվանզադեն հարցը դնելով սոցիալական-քաղաքական հիմքի վրա,— այս առիթով նկատում է Հր. Թամրազյանը,— Միք. Նալբանդյանի պես ազգության հաստատարանն ու լծակը համարում է բուն ժողովրդին, աշխատավորությանը, տեսնում է սոցիալական ներհակությունները, որ գոյություն ունի հայ վաճառականության և բուն ժողովրդի միջև, ազգային երազանքների ու վաճառականության նյութամոլության միջև»[43]։

Ասացինք արդեն, որ Ա. Հովհաննիսյանը ամբողջացնում է Շիրվանզադեի հոդվածաշարը։ Նա նույնպես հաստատում է, որ պատմության մեջ չտեսնված անարդարություն է՝ վաճառականներին հատուկ ախտերը վերագրել ողջ ազգին։ Վաճառականներն առհասարակ կրթություն չունեն և ծանոթ չեն վաճառականական արվեստին. դոյության կռվից հաղթող դուրս գալու համար նրանք դիմում են ամեն մի անազնիվ միջոցի։ Փողը նրանց գերագույն նպատակն է։ Վաճառականի համար «խանութը դառնում է նորա եկեղեցին, դազգան-նորա սեղանը, դավթարը նորա ավետարանը, սընդուկը-սուրբ սրբոցը, ոսկին-նորա աստվածը և վարկը-նորա դավանությունը»[44]։

«Արձագանքի» տեսաբանները հետագայում ևս խորամուխ լինելով դարաշրջանի հիմնական խնդիրների մեջ, անզոր դտնվեցին լուծել տնտեսական կյանքի առաջադրած՝ դարի առեղծվածը։ Կապիտալիզմի զարգացման անհրաժեշտության գաղափարը և կապիտալի գործիչների

---

43 Հր. Թամրազյան, *Շիրվանզադե, կյանքը և գործը*, էջ 66։

44 «Արձագանք», № 46։

այլասերման փաստը՝ անուղղակիորեն փակուղու առաջ են կանգնեցնում ազգային-պահպանողական հոսանքի դաղափարախոսներին։ Մի բան ակնհայտ է, սակայն, որ «Արձագանքի» հրապարակախոսները հստակորեն տեսնում էին երկու դասակարգերի միջև առկա հակամարտությունը, տեսնում էին հայ ազգի «կատաղի թշնամիներին», վաճառականության բարոյական նողկալի դեմքը, Բաքվի միլիոնատերերի արգահատելի նկարագիրը, նրանց զավակների այլասերումը։ Տեսնում էին և ջանում... վերադաստիարակել կապիտալիստներին, նրանց սրտերում դուր շարժել և առաջացնել մարդասիրական զգացումներ՝ նրանց համար իսկ նյութական բարիքներ ստեղծող դասակարգի՝ բանվորների նկատմամբ։

Դարավերջին Արևմտյան Եվրոպայում բանվոր դասակարգի շարժումները, հակամարտությունը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև ակնառու փաստեր էին, որոնք նույնպես նկատում էին «Արձագանքի» աշխատակիցները։ Շաբաթաթերթի արտասահմանյան կյանքի տեսությունները գրում էին Կ. Յաղուբյանը և Հ. Տիգրանյանը։ Վերջինս ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և սկսած 1884-ից՝ մի շարք հոդվածներում քննության էր առնում Արևմտյան Եվրոպայի քաղաքական կարգերը, մատնանշում աշխատանքի և կապիտալի միջև ծագած սուր հակասությունների և սոցիալիստական շարժումների փաստերը։ Այս առումով հետաքրքրական են նրա մի քանի հոդվածները, որոնց վրա նկատվում է ժամանակի ռուսական առաջադիմական մտքի և մարքսիստական դրականության ազդեցությունը։

«Արևմտյան Եվրոպայի քաղաքական կարգերի արդի ճգնաժամը» հոդվածաշարում Տիգրանյանը քննության է առնում 80-ական թթ. եվրոպական քաղաքագետներին հուզող պրոբլեմները՝ Եվրոպայում սրվող քաղաքական ճգնաժամի հարցը և օրավուր ծավալվող հասարակական շարժումների երևույթը[45]։

Տարբեր երկրների պետական սիստեմների հետազոտությամբ Տիգրանյանը ցույց է տալիս այն իրավիճակը, որ անցյալի հեղափոխություններին հաջորդած ոչ մի կառավարություն (մանավանդ Ֆրանսիայում), չի կարողացել բավարարություն տալ «հասարակական անթիվ պահանջներին»։ Ներկա ժամանակներում նույնպես անհրաժեշտ ուշա-

---

45 Տե՛ս «Արձագանք», 1884, №13, 15, 17, 19, 21։

դրության չի նվիրվում օրինականության ամրապնդմանը և հասարակական ապահովության ստեղծմանը, որը Տիգրանյանը համարում է երկրի քաղաքական կարգերի բարօրության չափանիշ։ Նա անբավարար է գտնում նաև ժողովրդի ունեցած քաղաքացիական աղատությունը։ Ժամանակի եվրոպական երկրներից յուրաքանչյուրը գտնվելով ճգնաժամի մեջ, յուրովի է բավարարում իր ժողովրդի պահանջները, ուստի և ամեն մի տերության առջև ծագում են քաղաքական բարենորոգումների առանձնահատուկ հարցեր։ Սրան զուգընթաց այդ երկրներում աճում են և «տնտեսական» ու «ընկերական» (սոցիալիստական) շարժումներ, որոնք հետևանք են պետությունների հոդի քաղաքականության։ Իր այդ հոդվածաշարում հեղինակը հարցի լուծումը առկախ է թողնում։

Եվրոպական քաղաքագետների օրինակով նա ամեն ինչ պայմանավորում է պետությունների հետագա քայլերով. «Պիտի կարողանա՞ն արդյոք ազգերի այժմյան քաղաքական կարգերը դարմանել ժողովրդի վշտերը և գոհացուցիչ կերպով բավականություն տալ նորա անթիվ պահանջներին, թե՞ հին կարգերը պետք է անհետանան՝ թողնելով ասպարեզը նորանոր պետական ուժերին»[46]։

Իր հաջորդ հոդվածաշարը («Ընկերական շարժողություն Արևմտյան Եվրոպայում[47]») Տիգրանյանը նվիրում է այն կոնկրետ ընկերական-հասարակական շարժումներին, որոնցից սարսափած, եվրոպական պետությունները դիմում էին զինված ուժերի օգնությանը։ Փարիզի Կոմունայի ստեղծումը, իտալական բանվորների հուզումները և գերմանական ընկերավարականների գործունեությունը հուզում են մտքերը։ Ծագում է նույն հարցը. կկարողանա՞ն ժամանակի քաղաքական կարգերը «առաջավոր ազգերի ընկերական շարժողությանց իրավացի պահանջներին բավականություն տալ» և կանխել նրանց հեղափոխական միտումները։

Հաշվի առնելով բանվոր դասակարգի ունեցած մեծ կշիռը, Տիգրանյանը շարադրում է նրա առաջացման պատմությունը։ XVIII դարի լուսավորիչները մերժում էին աբսոլյուտիզմը. նրանք մարդկային բնական իրավունքների պաշտպանության շահախնդրությամբ վերաքննում էին «հին հասարակական կազմվածքը», որը հիմնված էր տարբեր

---

46 Նույն տեղում, №13։

47 Նույն տեղում, №33, 40։

դասակարգերի անհավասարության և դրանց մի մասի ունեցած իրավական արտոնությունների վրա։ Նոր կարգերը պետք է վերացնեին անհավասարությունները և ազգերի համար ստեղծեին հավասարություն և ընկերական աղատություն։ «Այսպես էին հասկանում մեծ հեղափոխության ղեկավարներն իրանց թելադրած քաղաքական նորոգության նշանակությունը, որ պիտի ջնջեին ազգերի մեջ նաև տնտեսական և ընկերական կյանքի բոլոր չարիքները»։

Տիգրանյանը ծանոթացնում է այդ ծրագրի հետ, որը հասարակական կյանքում ենթադրում էր նյութական հարստության արտադրության, դրա բաշխման և փոխանակության կատարյալ ներդաշնակության պահպանումը։ Մինչդեռ կապիտալիզմի զարգացումը առավել հիմնավոր և նոր ձևերով է երևան բերում «հին դասակարգային խըտրությունները»։ «Նոր ձեռնարկողների դասակարգը,— գրում է Տիգրանյանը,— նույն առավելություններ ստացավ ստորադրյալ բանվորների դասակարգի վերաբերությամբ, ինչ որ հնումն էլ կար, միմիայն ուրիշ ձևով»։ Կապիտալիզմի զարգացման բնական հոսանքը՝ «ամբողջ արտեսական աշխարհը երկու թշնամի բանակների բաժանեց, խռովություն սերմանելով բանվորների և ձեռնարկողների մեջ», գրում է Տիգրանյանը՝ մարքսիստական գրականության իրազեկությամբ[48]։ Հիրավի, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով Մարքսի և Էնգելսի գործունեությունը և «Կոմունիստական մանիֆեստի» գոյությունը, Տիգրանյանը գրում է, թե բանվորական խնդրի լուծման «նպատակին են ձգտում նույնպես և Արևմտյան Եվրոպայի ընկերավարականք, որ ունին իրանց կազմակերպված կուսակցություններ զանազան երկրներում, ունին իրանց վարդապետությունը և ընկերական կյանքում գործելու նախագիծը»[49] (ընդգծումը մերն է—Մ. Մ.)։

«Արձագանքի» տեսաբանը այսուհանդերձ՝ մերժվող հարաբերությունների տեղ չի կարողանում նշմարել որևէ «նոր կարգ» կամ «նոր կազմակերպություն», որը կենսունակ լիներ և փոխարիներ հին սիստեմին։ Տիգրանյանը պատմագիտի լավատեղյակությամբ էքսկուրսներ է կատարում անցյալ և ներկա ժամանակներում, իբրև դրական ձեռքբերում շեշտում իրավական և քաղաքական կարծեցյալ աղատությունների իրականացումը Անգլիայում, իսկ սոցիալ-տնտեսական անհավա-

48 Նույն տեղում, №40։

49 Նույն տեղում, №33։

սարության փաստի հետ հաշտվում է հեղորեն, այդ համարելով քաղաքակրթության անխուսափելի ուղեկիցը։ Նա դրսևորում է՝ ժողովրդին պետական վարչական օրգաններին մոտեցնելու իդեալի վրա կառուցված լիբերալ-ռեֆորմիստական աշխարհայացք։

Այս ամենով հանդերձ Տիգրանյանն օբյեկտիվորեն պատկերելով Արևմտյան Եվրոպայում ստեղծված քաղաքական իրավիճակը, հանգում է խիստ ուշագրավ հետևությունների։ Ազատության, տնտեսական, բարօրության և հավասարության խոստումները նոր շրջանում մոռացված են։ «Այս ամենի տեղ՝ չորս կողմից դանգատներ են լսվում Եվրոպայում, որ աշխատավոր ամբոխի ընդհանուր կացությունը հուսահատական նշաններ է կրում իր վերա թե՛ տնտեսական անապահովության վերաբերությամբ, և թե՛ բարոյական ապականության նկատմամբ, որ գործարանն ստրկացնում է բանվորին, ճնշելով նորան տնտեսականապես և ապականելով նորան բարոյապես, որ ամենայն մի տնտեսական ձեռնարկություն բացառապես ծառայում է դրամատերերի շահերին, հանձնելով աշխատավոր մեծամասնության շահերը առաջինների կամայականությանը, որ արդի հասարակական կարգերը վերջապես՝ անզոր են տնտեսական շաւերի ներդաշնակություն ստեղծելու և ընկերական հաւասարաշխության ծառայելու»[50] (ընդգծումը մերն է—Մ. Մ.)։

Հոդվածագիրը հետևցնում է, թե այժմ բանվորական հարցը դարձել է օրվա հարց, «որի լիակատար լուծումը կախված է՝ թե՛ նպատակահարմար տնտեսական կարգեր սահմանելուց, և՛ թե ընկերական զորեղ ձևեր և կազմակերպություններ հաստատելուց»։

Հաջորդ տասնամյակում «Արձագանքում» հրապարակվել են հոդվածներ միջազգային զանազան կազմակերպությունների ժողովների, մայիսմեկյան բանվորական ցույցերի մասին և այլն։ Այդ հոդվածների մի մասը արդելվել է գրաքննության կողմից։ Այսպես, 1888-ին մերժվել է Կ. Յաղուբյանի՝ «Բանվորների կյանքի պետական ապահովությունը» հոդվածը, որտեղ հեղինակը քննարկում էր եվրոպական երկրներում բանվորների աշխատանքի ու կյանքի անմարդկային պայմանները։ Խոսելով նրանց կյանքի անապահովության, ամենօրյա վթարների և դժբախտ դեպքերի մասին, Կ. Յաղուբյանը նշում էր, թե ստեղծված մասնավոր ապահովագրական ընկերությունները չեն կարող փրկել

50 Նույն տեղում, №40։

դրությունը, իսկ պետականորեն քիչ բան է արվում բանվորների համար[51]։

1892-ին մերժվել է Յյուրիխում կայացած սոցիալիստների ժողովի մասին շարված հոդվածը։ 1893 թ. գրաքննություն արդելել է Փարիզից ստացված մի հաղորդում, որտեղ խոսվում էր «Կանանց ազատության դաշնակցություն» կազմակերպության ժողովի և այնտեղ ընդունված որոշումների մասին[52]։

«Արձագանքի» խմբագրությունը 15 տարի շարունակ քննարկել է Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական ու բարոյական վիճակը, փորձելով հուսալի ուղիներ գտնել աշխատավորության կյանքի բարվոքման համար։ Գյուղական տնտեսությունների կայունացման նրա առաջարկած միջոցները չէին կարող դիմանալ կապիտալիզմի բուռն զարգացման ժամանակների փորձությանը, քանի որ խմբագրությունն ի վիճակի չէր ընկալել իրերի դրության պատմական անխուսափելիությունը։

Ընդառաջելով հանդերձ կապիտալիզմի զարգացմանը Անդրկովկասյան երկրամասում, «Արձագանքի» տեսաբանները աշխատում էին նպաստել բանվորության վիճակի թեթևացմանը, դարձյալ չհասնելով այն գիտակցությանը, որ կապիտալիզմի զարգացման երևույթն ինքնին՝ անհամատեղելի էր ինչպես գյուղական տնտեսությունների ամրապընդման, այնպես էլ բանվորության կացության բարելավման ծրագրերի հետ։ Այդուհանդերձ, չպետք է անգիտանալ «Արձագանքի» մատուցած պատմական ծառայությունը ժամանակի սերնդին։ Թերթի տեսաբանները և թղթակիցները պաշտպանելով իրավազուրկ գյուղացիության և գործարանային բանվորների դատը, դիմոկրատական հնչեղություն են տվել իրենց պահանջներին և օբյեկտիվորեն նպաստել և՛ բանվորության դասակարգային ինքնագիտակցության հասունացմանը, և՛ գյուղացիության բարոյական կշռի բարձրացմանը։

Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Կովկասի հայ դպրոցը 80-ական թվականներին դարձել էր հայ իրականության նշանակալից գործոններից մեկը։

Անդրկովկաս մուտք գործած բուրժուական հարաբերությունները

---

51 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք Ա, գ. 871։

52 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք Ա. գործ 1122, 1188։

մի կողմից սասանում էին տնտեսական հին կացութիւնը, մյուս կողմից պարտադրում գիտութեան և առաջընթացի նորանոր պահանջներ։ «Արձագանքի» հրապարակախոսները ապավինելով դպրոցին, ենթադրում էին հավասարակշռություն ստեղծել տնտեսական հեղաբեկումների շեմին գտնվող ժողովրդի նյութական և բարոյական ուժերի միջև։ Խոսելով այդ օրերի իրավիճակի մասին, Ա. Հովհաննիսյանը նշում էր, թե հասարակության և անհատի կենսապայմանները րոպե առ րոպե ծանրանում են, նյութական ապրուստը դժվարանում է, «հողագործության, արհեստների և վաճառականության նորագույն պահանջներին չհետևողը, վաղը սովամահ պիտի լինի»։ «Հայ ուսուցիչն է միայն,— շարունակում է նա,— որ պետք է ծանոթացնի մանուկին բնության հարստությանց և նոցա հետ խոհեմ ու տնտեսաբար վարվելու եղանակի հետ»[53]։

Բարոյական ճակատում նույնպես հարցերը հրատապ էին։ Կյանքի և մահվան քայլ է անում հայ ժողովուրդը, գրում է Հովհաննիսյանը, մտավոր վերածննդության, ազատ շնչելու փորձ և այդ քայլի պատասխանատուն հայ ուսուցիչն է։ Ուսուցիչների պարտականությունն էր օգնել հայ ժողովրդին՝ հասնելու քաղաքակիրթ ժողովուրդներին, պայքարել հայ հասարակական կյանքում բռնակալական ժամանակներից մնացած վատ սովորույթների դեմ, հայ կանանց ուսուցանել հոգևոր հարստությունները պահպանելու գաղտնիքը։ «Արձագանքի» հրատարակության առաջին տարին համընկնում է հայ իրականության համար հիշարժան մի իրադարձության, Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի կազմակերպման ժամանակի հետ։ Հրավիրվող ուսուցչական ժողովը հայ մտավորականության բարոյական ուժերի յուրատեսակ հաշվեկշռի միջոց էր, որը պետք է ընդհանուր հայտարարի բերեր հայ մտավոր կյանքի հաջողությունները և առավել կազմակերպված հունի մեջ դներ դրա հետագա զարգացումը։ Ժողովի նախօրյակին «Արձագանքի» աշխատակից Նիկ. Տեր-Ղևոնդյանը հրապարակում է հոդվածների մի շարք, որոնց մեջ քննարկում է կյանքի ու դպրոցի փոխհարաբերության և կրթական բնույթի մի շարք հարցեր։

Անկախ այն բանից, որ ժամանակի հայ դպրոցները հիմնվում էին եկեղեցիներին կից, Տեր-Ղևոնդյանը կրթության միակ չափանիշը համարում է դրանց մասսայականությունը, իսկ դպրոցի ուղղության հիմ-

---

53 «Արձագանք», 1882, №27։

նական ելակետը՝ ազգային ոգին։ Այն պարագաներում, երբ հայերի մտավոր զարգացումը գտնվում է ստորին աստիճանի վրա,— գրում է նա,— երբ ժողովուրդը խարխափում է նախապաշարումների մեջ և հարկադրված է ապավինել տգետ քահանաներին, կենսական անհրաժեշտություն է, որ դպրոցը լինի ազգային։ «Ճշմարիտ ուսումնարանի նպատակակետը պիտի լինի ընդհանրության, բազմության, ամբոխի առաջադիմությունը,— շարունակում է Տեր-Դևոնդյանը,— նորա օր առաջ ազատվիլը դարևոր նախապաշարմունքներից, տգիտությունից առաջացած բյուր չարիքներից, դեպի յուր սեփական ուժերն ունեցած անվստահությունից[54]։ Այդ ամենի համար մի գլխավոր դարման կա՝ ճշմարտապես զարգացուցիչ և կրթողական ուսումն, իսկ դորան ավանդելու մի միջոց՝ մայրենի կենդանի լեզուն»[55]։ Այնուհետև քննարկելով արդի հայերենի զարգացման հեռանկարների հարցը, Տեր-Դևոնդյանը գտնում է, որ դպրոցական ուսուցման լեզուն անվերապահորեն պետք է լինի աշխարհաբարը։ «Աշխարհաբարը պիտի լինի հիմը, ուսանելի լեզուն,— գրում է նա,— իսկ գրաբարը և նորա հետ էլ դավառական բարբառների ուսումնասիրությունը պիտի երկրորդական տեղը բռնեին և գլխավորին ծառայեին։ Ահա՛ սորա միջն է ուսումնարանի զորությունը լեզվի կազմակերպության և աճման վերաբերությամբ»[56]։

Այս հոդվածների միջոցով «Արձագանքի» խմբագրությունը հրապարակում էր իր վերաբերմունքը օրվա առաջադրած հիմնական հարցի նկատմամբ. հայկական դպրոցները պետք է լինեին ազգային, ժողովրդական և երիտասարդ սերնդին կրթեին կյանքի համար։ «Արձագանքի» աշխատակիցները, հարկավ, մենակ չէին, ներկայացնում էին 80-ական թվականների հայ առաջավոր մտավորականության համոզմունքները և ժողովի աշխատանքների ամբողջ ժամանակամիջոցում, նրանց հետ միասին, օժանդակում էին այդ մեծ միջոցառման հաջող անցկացմանը։

Ուսուցչական ժողովը (առաջին մասնայական կազմակերպված հավաքը հայ մտավոր կյանքում) սկսվում է 1882-ի գոռտոռի 20-ին։

---

54 Հղինակի հայացքների համար խորհրդանշական է այն, որ նրա հոդվածի որոշ մտքեր բառացիորեն համընկնում են ռուս խոշոր մտածող Պիսարևի «19-րդ դարի սխոլաստիկան» հոդվածի համապատասխան հատվածին (տե՛ս «Արձագանք», 1882, № 10)։

55 Նույն տեղում, №10։

56 Նույն տեղում №11։

Ա. Հովհաննիսյանը օգոստոսի 22-ի փոխարեն «Արձագանքի» հերթական համարը հրատարակում է 20-ին և 100 օրինակ ուղարկում ժողովի մասնակիցներին: Շաբաթաթերթի առաջնորդողը ողջունում էր ժողովի հրավիրումը և մի քանի գծերով վեր հանում դրա բարոյական նշանակությունը: Մինչդեռ Արևելքը և Արևմուտքը քաղաքական շահերին հետամուտ վիճում են ուժի և զենքի լեզվով, ռումբեր են պայթեցնում, գրված էր առաջնորդողում, «հայը պարապած է այն սրբազան գործով, որ օրհնել է երկինքը-քաղաքակրթությունը, առաջադիմությունը...»:

Հանրագումարի բերելով ուսուցչական ժողովի աշխատանքները, «Արձագանքի» խմբագրությունը, հետագայում մեծ հետևողականությամբ լուսաբանում է Կովկասի դպրոցական կյանքը: Թերթի էջերում մեծ ուշադրություն է նվիրվել Ներսիսյան դպրոցին՝ իբրև ազգային դպրոցի տիպարի: Հայտնի է, որ այդ դպրոցում ուսուցանում էին ազգի պատմությունը, անցյալ քաղաքական և կրոնական կյանքը, մայրենի լեզու և կրոն: «Ներսիսյան դպրոցը մի կոթող է մայրենի լեզվի, մի կոթող, որի վրա արտաքին հարվածները դժվար կազդեն և կարող է միայն ներսից վտանգվել», գրում է Հովհաննիսյանը և տարիներ շարունակ խոսում «ներքին վտանգի», այն է՝ կազմակերպչական մի շարք հարցերի մասին: Քանի որ Հովհաննիսյանը Ներսիսյան դպրոցը համարում էր եվրոպական մանկավարժական սիստեմով ղեկավարվող առաջին դպրոցը հայ իրականության մեջ, ապա պահանջում է, որ այն օրինակ ծառայի հայկական մյուս դպրոցների համար՝ թե՛ իր կանոնադրությամբ, թե՛ ուսումնական ծրագրերով, և՛ թե մանկավարժական ռեժիմով:

Նա այնուհետև կանգ է առնում կադրերի հարցի վրա, հաստատելով այն վիճակի անպատեհությունը, որ ուսուցիչների ընտրությունը կատարվում է անմտածված, բարձրորակ մանկավարժները չեն կապվում դպրոցների հետ և մշտական հոսունությունը կործանում է դպրոցները: Նա պահանջում է կադրերի ընտրությունը կատարել լրջությամբ և այնպես ապահովել ուսուցիչներին, որ նրանք ամբողջովին նվիրվեն իրենց գործին: Այս առումով նա օրինակելի է համարում Հովնանյան դպրոցի ղեկավարության մտցրած կարգը, որի համաձայն դպրոցում 10 տարուց ավելի աշխատած մանկավարժների աշխատավարձը բարձրանում էր 10 ռուբլով: Առհասարակ դպրոցական գործի մասին խոսելիս, Ա. Հովհաննիսյանը հաճախ է վկայակոչում Հովնանյան օրիորդաց դպրոցը, որը Ներսիսյանից հետո համարվում էր կրթական լավագույն

հաստատությունը։ Հիրավի, եթե 60-ական թվականներին միայն առաջին քայլերն էին կատարվում օրիորդաց դպրոցներ ստեղծելու ուղղությամբ, ապա 1882-ին ռուսահայ իրականության մեջ արդեն գործում էին իգական 83 դպրոցներ՝ 4300 աշակերտուհիներով։ Հովնանյան դպրոցի 8 դասարաններում սովորում էին 240 աշակերտուհի։ Դպրոցն ուներ 21 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք աշխատում էին փոքր աշխատավարձով (դպրոցի տարեկան բյուջեն կազմում էր 9000 ռուբլի)։

«Արձագանքի» էջերում տարիներ շարունակ քննարկվում են ուսուցիչների կրթական ցենզի ապահովման, նրանց բարոյական վիճակի կայունացման, դիտական պատրաստության խնդիրները։ Այս առումով առաջին հարցը, որին բախվում էին հրապարակախոսները, ուսուցչի բախտը տնօրինող հոգաբարձուներն էին։ «Դավառական հոգաբարձուք» հոդվածը (Ն. Դ.-ի) լուսաբանում է իրերի դրությունը հայկական դպրոցներում, ընդ որում պարզվում է, որ նույնիսկ հայկական դպրոցների ծաղկման էտապում, 1884 թվականին, հաջողությունները ձեռք էին բերվում մեծամեծ դժվարությունների հաղթահարման գնով։ Դավառական հոգաբարձուները մեծ մասամբ տգետ մարդիկ էին, որ ոչ մի կապ չունենալով մանկավարժության հետ, տնօրինում էին մանկավարժի ճակատագիրը, ուսուցիչներ էին ընտրում և արձակում, վանքապատկան գումարները ծախսում էին ցանկացած ձևով և այլն։ Նրանց կամայականության վերաբերյալ հիշատակվում է մի փաստ. երբ դպրոցներից մեկում ուսուցիչները պահանջում են բնագիտության ուսուցիչ հրավիրել, հոգաբարձուն բացականչում է. «Ի՞նչ հարկավոր է բնագիտությունը, բնագիտությունը ի՞նչ բան է, որ ներս եք մտցրել-հարկավոր չէ»։ Այս հոդվածին կցած տողատակի ծանոթության մեջ խմբագիրը հաստատում է, որ հոգաբարձուների դասի գլխին հարկավոր է ունենալ մի զորեղ ղեկավար մարմին, հանձին որի նա տեսնում էր թեմական վերատեսչին։ «Արձագանքի» խմբագրության բարձրացրած տագնապը տեղին էր։ Այդ ուսումնական տարվա վերջին իրենց վիճակից անբավական լինելով՝ ստանձնած պարտավորություններից հրաժարվել էին Երևանի, Շուշիի, Թավրիզի և Ագուլիսի հայ դպրոցների ուսուցչական կոլեկտիվները։ Սակայն, եթե թեմական վերատեսուչները ինչ-որ չափով կայունացրին դպրոցի վիճակը, 1885 թ. ճգնաժամից հետո այդ պաշտոնը վերացվեց։ Եվ մի բողոքով ընդգծելով այդ փաստը, խմբագրությունը 1888 թ. հայկական դպրոցների նոր կանոնադրության առիթով արձանագրում է. «Հայ ուսուցչի դրությունը երբեք

լավ եղած չէ, բայց, երբ վերջացավ թեմական տեսչությունը, ուսուցչի միակ ձեռնահաս պաշտպանը, նորա դրությունը ավելի վատթարացավ, և դրեթե անտանելի դարձավ»[57]: Հայ ուսուցիչները նորից ընկնելով տըգետ հոգաբարձուների իշխանության տակ, հուսահատված երբեմն թողնում են դպրոցը, չկարողանալով զոհել իրենց մարդկային արժանապատվությունը:

Ուսուցիչների բարոյական և նյութական ապահովության հարցերը մնում էին թերթի օրակարգում նաև հետագա տարիներին:

«Արձագանքի» խմբագրությունը բազմիցս քննարկել է ծխական դպրոցների ուսուցիչների կրթական վկայականների ձևակերպման հարցը, քանի որ ցարական կառավարությունն այդ պատրվակը կարող էր օգտագործել՝ հայկական դպրոցների ուսուցիչներին արձակելու իր դիտավորությունն իրականացնելու ժամանակ: Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրելով այդ հարցին, խմբագրությունը խորհուրդ է տալիս ծավալել նաև վանական դպրոցները, կատարելագործել դրանց ծրագրերը: Հովհաննիսյանը մեծ ուշադրություն է նվիրել և թեմական դպրոցներին, որոնք կազդեր պատրաստելու հիմնական օջախներն էին: Այդ դպրոցների դիտա-մանկավարժական մակարդակը բարձրացնելու շահախնդրությամբ նա առաջարկում է դասական լեզուների փոխարեն ծրագրերում մտցնել ժամանակակից օտար լեզուներ:

Սբգար Հովհաննիսյանին զբաղեցնում էր ոչ միայն ընդհանուր, այլև մասնագիտական կրթության հարցը: Նա առաջարկում է մայրենի լեզվի ուսուցիչներ ուղարկել Ստոկհոլմ, Էջմիածին, Թիֆլիս, որպեսզի Ն. Բյուզանդացու և մյուս հայագետների ղեկավարությամբ նրանք խորանան իրենց մասնագիտության մեջ:

«Արձագանքում» տպագրվել են նաև նեղ մասնագիտական բնույթի հոդվածներ, որոնց հեղինակները քննարկում էին ուսման հետ կապված մի շարք խնդիրներ (բնագիտական առարկաների դասավանդման մակարդակի բարձրացումը, աշխատանքային դաստիարակությանը նպաստող ձեռնարկների հրատարակման անհրաժեշտությունը, ծնողների մասնակցությունը դպրոցականի դաստիարակության գործին, մարմնամարզության նշանակությունը ֆիզիկական դաստիարակության մեջ, մանկական խաղեր, պատիժ և այլն):

---

57 Նույն տեղում, 1888, №49:

Դիդակտիկական, դաստիարակչական հարցերին զուգընթաց «Արձագանքի» խմբագրությունը լուսաբանել է հայ դպրոցների ընթացիկ աշխատանքները, տպագրել դպրոցների տարեկան հաշվետվությունները և քննությունների արդյունքները։ Խմբագրությունն ուշադրության կենտրոնում է պահել գավառական դպրոցների վիճակը։ Հոդվածներ են նվիրվել և արտասահմանյան երկրների ու Ռուսաստանի դպրոցների պատմությանը (Ռուսաստանի հոգևոր-ծխական դպրոցների տեսությունը, կանանց բարձրագույն կրթությունը Ամերիկայում և Եվրոպայում, Գերմանիայի բարձրագույն դպրոցները, ժողովրդական կրթությունը Ավստրիայում և այլն)։ Միաժամանակ ներքը կապ էր պահպանում Արևմտյան Հայաստանի, Պարսկաստանի, Բուլղարիայի և հայկական զանազան գաղութների հայ դպրոցների հետ, պարբերաբար լուսաբանում դրանց վիճակը և աշխատանքների ընթացքը։

Հայ ժողովրդի վերածննդության հաջողության երաշխիքներից մեկն էր երիտասարդ սերնդի մասնակցությունը հասարակական կյանքին, ուստի Հովհաննիսյանը երբեմնապես հոդվածներ է նվիրել և հայ ուսանողության անելիքների հարցին։ Նա դժգոհ էր համալսարանական կրթություն ստացած հայ երիտասարդներից, որոնք կյանք մտնելուց հետո հեռու էին մնում ազգային հարցերից։ Ուսանողների մի աննշան մասն էր կապվում գիտության և հրապարակախոսության հետ, մինչդեռ, Հովհաննիսյանի համոզմունքով, նրանք հասարակությանը շատ օգտակար կարող էին լինել այդ բնագավառների աշխատանքներին ունեցած իրենց մասնակցությամբ[58]։

«Արձագանքի» հրատարակության գրեթե բոլոր տարիներին այդ պարբերականին աշխատակցել է հայ նշանավոր մանկավարժ, ժամանակին լայն տարածումն գտած «Մայրենի լեզու» հայոնի դասագրքի հեղինակ Նիկողայոս Տեր-Գևոնդյաներ։ Նա կենտրոնական դրավաճառանոցի իրավաստեր էր և «Արձագանքի» հրատարակության սկզբնական շրջանում միաժամանակ հանդես էր գալիս իբրև շաբաթաթերթի հիմնական աշխատակիցը։ Գրում էր առաջնորդողներ, հայ հասարակական կյանքի տեսությունները, բարոյա-դաստիարակչական հոդվածներ և այլն։

1882 թ. ամռանը, երբ Թիֆլիսում տեղի էին ունենում ուսուցչական ժողովի աշխատանքները, Տեր-Գևոնդյանի հոդվածները ողողում

---

58 Տե՛ս «Համալսարանականներ» առաջնորդողը («Արձագանք», 1889, №42—43)։

էին ամբողջ համարներ։ Այդպես էր և 1883—84 թթ. կաթողիկոսական ընտրությունների նախապատրաստական շրջանում, երբ Տեր-Ղևոնդյանը հանդամանորեն վեր էր լուծում ընտրության հետ կապված պարագաները, բանավիճում Պ. Սիմեոնյանի, Հ. Իփեքճյանի և Ծերենցի հետ։ 1886 թ. նոր հարցեր է բերում իր հետ։ Անհրաժեշտ էր ամրապնդել վերաբացված ծխական դպրոցների հիմքերը, ուշադրություն դարձնել մանկավարժական կադրերի պատրաստման հարցին։ Տեր-Ղևոնդյանը մեծ նշանակություն է տալիս այն փաստին, որ Ներսիսյան դպրոցում մտցվում է աշխարհաբար լեզվի դասավանդումը. «վստահացնում ենք հուսալ,— գրում է նա,— որ այդ ուսուցումը ձևական չի լինիլ, այլ նույնքան հիմնական ու պարտավորեցուցիչ, որքան դրաբարի ուսումը»։ Նա ափսոսանք է հայտնում, որ ծխական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստող ճեմարանում այդ առարկան չէր դասավանդվում։

Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի հոդվածներից ուշադրության արժանի է «Վարդանանց նահատականության հիշատակը» հոդվածը, որը, սակայն, մերժվել է դրաքննության կողմից։ Գայանյան դպրոցում ներկա գտնվելով Գեղամյանի զեկուցմանը, որը նվիրված էր Վարդանանց պատերազմին, Տեր-Ղևոնդյանը ողջունում է Ճառախոսի նոր թեզը, ըստ որի նոր որակում էր տրվում Վարդան Մամիկոնյանի և նրա զինակիցների սրբացման խնդրին։ Հայերը եղել են մեծ հայրենասերներ, գրում է Տեր-Ղևոնդյանը այդ առիթով, և հայ պատմիչները պարզապես տուրք են տվել ընդհանուր մտայնությանը, հայերի կռիվները վերագրելով նրանց կրոնական մոլեռանդությանը։

«Եթե հայի հայրենասիրությունը շատ անգամ կրոնասիրության կերպարանքի տակ է մտնում, այդ ոչ թե գաղափարի պակասության կամ թուլության պետք է տալ, այլ այն բացառիկ հանգամանքին, որ մեր ազգի պատմությունը գրվել է հոգևորականների ձեռքով» և այդ այնպիսի ժամանակ, երբ հոգևորականը որքան էլ զարդացած լիներ, չէր կարող շեղվել յուր ուղղությունից, չէր կարող թողնել յուր կղերական տեսակետը (այս սխալից չի խուսափել անգամ Եղիշեն)[59]։ Հետա-

---

59 Դեռևս 1880 թ. Տեր-Ղևոնդյանն այս հարցին նվիրված մի հոդված է հրապարակել «Փորձում»։ Նա նկարագրում է Վարդանանց տոնակատարության հանդեսը Երևանի հոգևոր դպրոցում և ամբողջությամբ մեջ է բերում այդ հանդեսում արտասանած իր ճառը։ Այսպիսով, առաջին անգամ ոչ թե Գեղամյանը, այլ Տեր-Ղևոնդյանն է վերանայում այն հարցը, թե Վարդանանց տոնը կրոնակա՞ն պետք է համարել, թե ազգային։ Նա պատմական հայացքով բննում է պատերազմի պատճառները և բնույթը, նշում, որ այդ պատճառ

դայում միայն, երբ «պատմական ամենադառն հանգամանքների շնորհիվ» հայերը ցրվում են երկրից-երկիր, հայրենասիրական գաղափարները տեղի են տալիս ազգասիրականին։

Իր հոդվածներում Տեր-Դևոնդյանը երկու հատվածի հայ ժողովրդի մտավոր վերածննդության գործում դպրոցներին զուգընթաց մեծ նշանակություն էր տալիս հայ նոր գրականությանը, թատրոնին, պարբերական մամուլի գործունեությանը։ Նա բանավիճում էր Սուվորինի «Новое время» թերթի հետ, հաստատելով հայերի իրավունքը՝ նրանց մտավոր զարգացման մարդում[60]։

Մանկավարժական բազմաթիվ հոդվածների հեղինակ է Ներսիսյան դպրոցի գրականության պատմության ուսուցիչ, բանասեր Նիկողայոս Քարամյանը։

1882 թ. Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը Քարամյանին ուղարկում է արտասահման՝ լեզվաբանություն ուսանելու և մասնագիտանալու հայագիտության մեջ։ Նա կանխավ պայմանագիր է ստորագրում այն մասին, որ ավարտելուց հետո 6 տարի պետք է աշխատի Ներսիսյան դպրոցում։ Քարամյանը կրթություն ստանում է Գերմանիայում, 6 ամիս մասնագիտանում Վիեննաիկի Մխիթարյանների մոտ և 1887 թ. աշնանը վերադառնում Թիֆլիս։ Ներսիսյան դպրոցում 3 տարի աշխատելուց հետո հրավիրվում է Գևորգյան ճեմարան, բայց այստեղ աշխատում է միայն 1890—91 ուսումնական տարում. «ճեմարանի նոր տեսչությունը անհամապատասխան գտնելով ինձ յուր ուղղության, ազատ կացույց ինձ ճեմարանի ուսուցչությունից»,— գրում է նա հետագայում։ Այնուհետև իր խնդիրքով Քարամյանը կրկին ուղարկվում է Ներսիսյան դպրոց։ Շիրվանզադեի վկայությամբ Ա. Հովհաննիսյանը Քարամյանին հրավիրել է «Արձագանքում» աշխատելու 1887-ի աշնանն իսկ, երբ երիտասարդ մանկավարժը հենց նոր վերադարձել էր արտասահմանից։ Հովհաննիսյանի որդու՝ Ռուբեն Հովհաննիսյանի խոսքերով Ն. Քարամյանը «Արձագանքի» հիմնական աշխատակիցն էր և նկատելի դեր էր կատարում խմբագրական աշխատանքներում. նա

էր քաղաքական կյանքի, մայրենի լեզվի և հավատի պահպանման համար։ Եղիշեն ինքն գործում է «այս մեծ և ազգային սերտազործության» լոկ կրոնական պատերազմի տեսք տալ, չի հաջողվում։ Նրա մոտ նույնպես դուրս է գալիս «ազգայնության ոգին, անկախության վանմ գաղափարը, շատ անգամ կրոնական գաղափարի հետ աչակցված և բազմից նորա անթափանցիկ վերարկուի մեջ կոլոլված» (տե՛ս «Փորձ», 1880, № 4, էջ 129)։

60 ՎԿՊՊԱ, ֆ. 480, գ. Ա, գործ 593։

գրում էր նաև հոդվածներ, նվիրված հայ հասարակական կյանքի բազմազան հարցերին։

Սկսած 1888 թ. «Արձագանքում» երևում են անհայտ մի դործչի, N N-ի հոդվածները։ Բանասիրական որևէ փաստարկ չունենալով N N-ի ինքնության վերաբերյալ, մենք, այնուամենայնիվ, եկել ենք այն եզրակացության, որ այդ գրական կեղծանունով ստորագրել է Նիկ. Քարամյանը։ Այս վարկածի օգտին է խոսում այն իրողությունը, որ N N-ը «Արձագանքում» երևում է Քարամյանի հետ միաժամանակ և, ինչպես նա, այդ թերթին աշխատակցում է մինչև դրա դադարումը։ Ուշագրավ է այն երևույթը, որ նրա հոդվածները խիստ պակասում են 1890—91 ուս. տարում, երբ Քարամյանը պաշտոնավարում էր էջմիածնում։

Թերևս անուղղակիորեն, բայց այդ վարկածն է հաստատում նաև՝ երկու հեղինակների ունեցած բացառիկ արտոնյալ դիրքը խմբագրության մեջ։ Ինչպես երևում է նրա հոդվածների բնույթից, N N-ը սոսկ թղթակից չէր, այլ թերթի հիմնական աշխատակիցներից մեկը, որը հաճախ գրում էր և առաջնորդող հոդվածներ, խմբագրության կողմից մասնակցում բանավեճերին և զանազան հարցեր բարձրացնում՝ դրանց վրա հրավիրելով հայ հասարակության ուշադրությունը։ Նրա ոճը ինքնավստահ է, հրապարակախոսի «կեցվածքը»՝ առնական և անկախ։ N N-ը ունի լեզվական բարձր կուլտուրա, հրաշալի է կողմնորոշվում մանկավարժական, հասարակական, իրավագիտական խնդիրների մեջ։ Ինչպես Ն. Քարամյանի, այնպես էլ նրա ստորագրությունը կրող հոդվածներն ունեն ընդհանուր լուսավորական, առաջադիմական ուղղվածություն։ Սակայն, կային քաղաքական սկզբունքներ, որոշակի և հստակ հարցադրումներ, որոնք բնութագրեին երկու հեղինակների քաղաքական հավատամքը, չեն երևում նրանց հոդվածներում։

Այնուհետև N N-ի հոդվածների մեջ սպրդած կենսագրական ժլատ տեղեկություններից հայտնի է դառնում, որ նա գերմանական կրթություն ունի, եղել է Մխիթարյանների մոտ, գրականագետ է։ Այն օրերին, երբ գործում էր N N-ը, «Արձագանքի» հիմնական աշխատակիցներն էին Շիրվանզադեն, Գյուտ Ադանյանը և Քարամյանը։ Հայտնի է, որ առաջինը հեռանում է խմբագրությունից և 1891-ից այլևս չի աշխատակցում «Արձագանքին», իսկ Ադանյանը արտաքսմանյան կրթություն չուներ և, բացի այդ, Քարամյանից տարբերվում էր հարցասիրությունների նեղ, բանասիրական շրջանակով։

Եվ այսպես, N N-ի՝ մեզ հայտնի կենսագրական տվյալներին համապատասխանում են միմիայն Քարամյանի կյանքի փաստերը, լրագրողի նրա առանձնահատկություններին՝ Քարամյանի լեզուն, ոճը, հասարակական, գրական և գիտական հարցերի ասպարեզի նրա ունեցած նախասիրությունները։

N N-ի ստորագրությունը կրող հոդվածներում նույնպես քննարկվել են ուսումնական ծրագրերի, դպրոցների տիպերի, ուսուցչական կադրերի ընտրության, նրանց նյութական ապահովության հետ կապված բազմապիսի հարցեր։ Նրա ծրագրային ելույթներից մեկն է «Ինչպես պետք է օգնել» բանավիճային հոդվածը։ Ընդունելով հանդերձ, որ բուրժուազիայի զարգացման ժամանակաշրջանում անհրաժեշտ է կատարելագործել արհեստների ձևերը և տարածել տեխնիկական գիտելիքներ, նա սխալ է համարում «Մշակի» այն տեսակետը, թե տարրական ու սկզբնական դպրոցներում պետք է արհեստներ ավանդվեն։ Վիճակագրական տվյալներով ցույց տալով, որ կրթական մակարդակով Կովկասը շատ հետ է մնում Ռուսաստանից և եվրոպական երկրներից, նա գտնում է, որ ամեն բանից առաջ պետք է տարրական նորմալ կրթություն տալ աճող սերնդին։ Այս առիթով նա գրում է. «Եթե մենք մեր երկրում տեխնիկական գիտություն տարածելու համար հերքենք տարրական կրթությունը, դորանով ոչ միայն չենք հասնիլ մեր նպատակին, այլ քանդելով առաջինը, մենք չենք շինած լինիլ երկրորդը, որովհետև առաջին տիպարի ուսումնարանը միակ հաստատ հիմք է երկրորդի ծաղկման և առանց տարրական կրթության անկարելի է արհեստագիտական կրթություն»[61]։

«Հին ցավ» հոդվածում N N-Քարամյանը շոշափում է քահանաների և մանկավարժների ընտրության հարցը։ Նա պահանջում է բարձրացնել հասարակության գիտակցությունը, կազմակերպվածություն մտցնել հասարակական գործերում և ընդհանուր ժողովներում նախապես քննարկել քահանաների թեկնածությունները։ Այնուհետև նա կանգ է առնում ուսուցչական կադրերի ընտրության հարցի վրա և պահանջում լավ մանկավարժներին վարձատրել այնպես, որ նրանք անկարոտ ապրեն[62]։

Իր «Գավառական ուսուցիչներ և ժողովրդական գրականություն» ծավալուն հոդվածում Քարամյանը գավառական ուսուցիչներին կոչ է

---

61 «Արձագանք», 1889, №45։

62 Տե՛ս «Արձագանք», 1890, № 22։

անում միաժամանակ զբաղվել գրական, ստեղծագործական աշխատանքով։ Նա խորհուրդ է տալիս հավաքել և գրի առնել հայ ժողովրդական բարբառները և հայ բանավոր գրականության ճմուշները, այն ամենը, ինչ ներկայացնում է «ժողովրդի կյանքը, նորա բազմաթիվ կողմերը, նորա լեզուն-ժողովրդական բարբառները, նորա երևակայության աշխատությունը, որ նորա առասպելական-լեգենդական գրականությունով է արտահայտվում, նորա կյանքի զգայական կողմը, նորա սրտի ձգտումները, նորա ուրախությունն ու սխրությունը, որ ժողովրդական բանաստեղծությունով է արտահայտվում»[63]։ Այս ասպարեզում Քարամյանը ուսուցչի դերն անփոխարինելի է գտնում։

Ն. Քարամյանը (Ն. Ք.) մի հանգամանալից ուսումնասիրություն է նվիրել արևմտահայ դպրոցներին («Տաճկահայ դպրոցական վիճակը»)։ Արևմտյան Հայաստանի կրթական գործի ուսումնասիրությունը ներդաշնակում էր Ա. Հովհաննիսյանի գործունեության ընդհանուր միտվածությանը. այդ սոսկ հարևանի հետաքրքրասիրություն չէր, այլ հայկական դպրոցների վիճակի քննությունը՝ այն բարելավելու հաստատուն նկատառումներով։ Հոդվածի բնաբանը, որ առնված է Ժյուլ Սիմոնից, մեկ անգամ ևս հաստատում է այն նշանակությունը, որ տալիս էր «Արձագանքի» խմբագրությունը դպրոցական կրթությանը («Այն ազգը, որ լավագույն դպրոցներ ունի, առաջին ազգն է, եթե նա այսօր առաջինը չէ, անշուշտ վաղը կլինի»)։

Այդ հոդվածում Ն. Քարամյանը քննում է պոլսահայ դպրոցների նպատակը, ներքին և արտաքին կազմակերպությունը, մանկավարժական ուղղությունների հարցը, նշում է ծրագրի թերությունները և այլն։ «Արձագանքի» խմբագրությունը, ինչպես քննադատում էր արևելահայ դպրոցների հոգաբարձական սիստեմը, այնպես էլ անողոք է արևմտահայ դպրոցների ուսումնական խորհուրդների նկատմամբ։ Ն. Քարամյանը այն միտքն է հայտնում, որ դպրոցները կառավարվում են ոչ թե ուսումնական խորհրդի, այլ նրան ենթակա բաղական խորհրդի կամ սրա մի ճարպիկ անդամի կողմից, որ «միահեծան տերն է թե՛ դպրոցի, թե՛ եկեղեցու և թե՛ ազգային բոլոր գործերի»։ Այդ մարդիկ ազդեցիկ անձնավորություններ են, որ ուսուցիչների վրա նայում են իբրև ծառաների, նրանց անպատվում են, ղրկում, վռնդում և ուսու-

63 Տե՛ս «Արձագանք», 1888, № 49։

ցիչները պաշտպաններ չունեն։ Տպրակացությունն անմխիթարական է, բայց զգաստացնող, արևմտահայերի մեջ «դպրոցները դեռ չեն կազմակերպվել և չի մտել մի որոշ մանկավարժական ուղղություն, իսկ դպրոցական վարչությունը դեռ շատ և շատ թերություններ ունի»[64]։

«Արձագանքի» աշխատակից N N-ը դպրոցի գաղափարից անբաժան է համարում գրադարանների ստեղծումը։ Նա խրախուսում է Կովկասի բարեգործական ընկերության գավառական ճյուղերից 6-ի նախաձեռնությունը՝ գավառական գրադարաններ հաստատելու ուղղությամբ։ N N-ը խոսելով արտասահմանյան երկրների բազմաթիվ կրթական-մշակութային օջախների մասին, նշում է, թե Կովկասում այդ հիմնարկների աշխատանքը կոչված են կատարել միայն գրադարանները։ Հայ իրականության մեջ դրանք միաժամանակ մատենադարանի (ձեռագրատան) դեր պետք է կատարեին, ուստի նա հայ հասարակությանն ուսուցանում է ամբողջ խորությամբ գիտակցել գրադարանային հիմնարկների նշանակությունը։

Բազմազան էին Նիկողայոս Քարամյանի հետաքրքրասիրությունները։ Նա գրել է գրաքննադատական և գրականագիտական հոդվածներ, բանավիճել է ռուսական ռեակցիոն լրագրողների հետ, իբրև «Արձագանքի» հատուկ թղթակից, ծավալուն հաղորդումներ է տպագրել Խրիմյան Հայրիկի ժամանման և գահակալության հանդեսների մասին («Ուղևորություն Ամենայն հայոց վեհափառ Հայրապետի Թիֆլիսից մինչև Ս. Էջմիածին»)։

80-ական թթ. վերջին թեև հայկական ծխական դպրոցները վերաբացվել էին, բայց դրանց զարգացման հնարավորությունները խաթարված էին և կրկին անգամ փակվելու վտանգը Դամոկլյան սրի պես շարունակում էր ճոճվել օդում[65]։ Հայ հրապարակախոսներից յուրաքանչյուրը՝ դպրոցը փորձում էր պաշտպանել աներևույթ, բայց միշտ առկա այդ վտանգից։ Այսպես, 1886 թ. հոկտեմբերին «Արձագանքի» խմբագրությունը Ալեքսանդր III-ի 1884 թ. հունիսի 13-ի հրովարտակի մեկնաբանման պատրվակով քննարկում է ծխական դպրոցների հեռանկարների հարցը։ Այդ հրովարտակը ենթադրում էր ընդլայնել օրթոդոքս եկեղեցուն կից գործող հոգևոր-ծխական դպրոցների ցանցը։ Թեր-

---

64 «Արձագանք», 1889, №49։

65 Այս հարցի զարգացման ընթացքը՝ հանգամանորեն տե՛ս Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), 1970։

թե տեսաբան Ալ. Երիցյանը (Համբո) առաջնորդող հոդվածում հենվելով այդ հրովարտակի վրա, հայտարարում է, թե «Ռուսիո հպատակ բոլոր ազգությանցը կմնա հետևիլ այն օգտակար քայլերին, ինչ որ բարձրագույն իշխանությունը գործում է այսօր յուր բուն, տիրապետող ժողովրդի համար»[66]: Այնուհետև վկայակոչելով նաև Պոլոժենիեով հայ եկեղեցուն տրված իրավունքները, Երիցյանը ներկայացնում է Կովկասի ազգությունների եկեղեցական դպրոցների առկա վիճակը: Մի կողմ թողնելով հայկական դպրոցների առանին հոգսերն ու թերությունները, հոդվածագիրը կարևորություն է տալիս հարցի սկզբունքային լուծմանը՝ եկեղեցու հովանու տակ մանուկների սկզբնական կրթության ապահովմանը, որի երաշխիքը նա համարում է 1884-ի կայսերական հրովարտակը:

Ալեքսանդր Երիցյանը հենվելով հրովարտակի այն հոդվածի վրա, որի համաձայն ծխական դպրոցների ծախքը պետք է հոգար և ժողովուրդը (զեմստվոները), փորձում է նման դրությունը վավերացնել և հայ իրականության համար: Նա գրում է. «Երբ տերության այս ցանկությունը կիրագործվի իբրև օրենք, ասել է, թե պիտի հանդիսավոր հավանություն գտնե և այն իրողությունը, որ բոլոր հայ դպրոցները պահվել ու պահպանվում են միմիայն հայ ազգի առատաձեռնությամբ և համակրությամբ»[67]: Երիցյանը, իհարկե, չէր կարող գուշակել, որ Ալեքսանդրի հրովարտակով նախատեսվող այս իրողությունը մեկ տասնամյակ հետո պետք է դառնար հայկական դպրոցների փակման պատճառը:

Եթե Երիցյանն այդ հոդվածով փորձում էր անուղղակիորեն ամրապնդել ծխական դպրոցների գոյության իրավական հիմքերը, ապա Ա. Հովհաննիսյանին զբաղեցնում էր ցարիզմի ռուսականացման քաղաքականությանը դիմակայելու ընդհանուր խնդրի երկրորդ կողմը, ազգային լեզվի իրավունքների անձեռնմխելիությունը: Նիկ. Քարամյանի օգնությամբ նա դիմում է բացառիկ հետաքրքրություն ներկայացնող մի միջոցի, որով պաշտպանում է մայրենի լեզվի և ազգային դպրոցների դատը: N N-ը «Մայրենի և պետական լեզուներ» մեծարժեք հոդվածում «Новое обозрение» թերթից գրեթե արտատպում է փոքր ազգությունների դպրոցների համար հրատարակված վոլպերի ռուսաց

66 «Արձագանք», 1886, № 39:

67 Նույն տեղում:

լեզվի ձեռնարկների դրախոսությունը։ Այդ հոդվածում զարգացվում էր մի ամբողջ ծրագիր, որը տրամաբանորեն հաստատում էր մայրենի լեզվի դասավանդման անհրաժեշտությունը ազգային դպրոցներում։

Վոլպերը՝ Կովկասի, Ֆինլանդիայի, Լեհաստանի, Սիբիրի, Կազանի և Ղրիմի դպրոցների համար կազմած ռուսաց լեզվի իր ձեռնարկներում մերժում էր մայրենի լեզվի միջնորդության անհրաժեշտությունը ռուսաց լեզուն ուսուցանելու գործում և պահանջում էր մայրենի լեզվի դասավանդումն առհասարակ հանել դպրոցներից և հենց առաջին իսկ ամսից երեխաներին սովորեցրել ռուսաց լեզուն և դրա այբուբենը։ «Новое обозрение»-ի Վոլպերի գրքերի քննադատը հայտնում էր, թե առանց մանուկների միտքը մայրենի լեզվով զարգացման մի որոշակի աստիճանի հասցնելու, անկարելի և անբնական է՝ ստիպել նրանց, որ սկսեն մտածել, խոսել և կարդալ ռուսերեն։ Վոլպերի ձեռնարկները դիտվում են իբրև հակամանկավարժական գրքեր, որոնք «վերին աստիճանի վնասակար են կրոնական և ազգային կրթության տեսակետից»։ Դրանք ոչ միայն չեն նպաստի ռուսաց լեզվի յուրացմանը, այլև այդ առարկայի դասավանդումը կդարձնեն դորշ ու վերացական մի գործ։ N N-ը ամբողջությամբ մեջ է բերում «Новое обозрение»-ի գրախոսի կատարած քաղվածքները՝ Ուշինսկու աշխատություններից, հետևյալ ծանոթությամբ։ Մեծ Ուշինսկին նույնպես «ցույց տվեց, որ պետական լեզվի արդյունավոր դասատվությունը անկարելի է՝ առանց մայրենի բարբառի օգնության»[68]։ Ամբողջական պատկերացում կազմելու համար այն հարցի մասին, թե որքան դիպուկ էր «Արձագանքի» նկատքը ժամանակի ամենակենսական այդ խնդրի շուրջը, ծանոթանանք Ուշինսկու մտքերի հետ, որոնք հնչում են «Արձագանքի» էջերից։

«Լեզուն ամենակենդանի, ամենահորդառատ և ամենահաստատ կապն է, որ կապում է ժողովրդի անցած, կենդանի և ապագա սերունդները և մի մեծ պատմական ամբողջություն կազմում։ Մեր արևմտյան ցեղակիցները, ամենածանր տանջանքներ կրելով օտարներից, երբ այդ տանջանքները հասան լեզվին, հասկացան, որ այժմ ժողովրդի կյանքի և մահվան խնդիր է։ Քանի կենդանի է լեզուն ժողովրդի բերանում, կենդանի է և ժողովուրդը։

---

68 «Արձագանք», 1889, №29—30։

Չկա բռնություն ավելի ծանր, ավելի անտանելի, քան այն, երբ ուզում են խլել ժողովրդի ժառանգությունը, որ դիզված է նոցա նախորդների անթիվ սերունդների աշխատությունով։ Խլեցեք ժողովրդից ամեն բան, նա կարող է վերադարձնել։ Բայց խլեցեք նորա լեզուն, և նա երբեք նորից չի ստեղծի։ Նոր հայրենիք կարող է ստեղծել նա, նոր լեզու-երբեք։ Մեռավ ժողովրդի բերանում նորա լեզուն, մեռած է և ժողովուրդը։ Բայց եթե մարդկային հոգին սարսափում է մի կարճատև կյանքի տեր մարդու սպանման առջև, ի՞նչ պիտի նա զգա, սպառնալով ժողովրդի բազմադարյան պատմական կյանքի վրա, այդ ամենամեծ աստվածային պարգևի, որ կա այս աշխարհում»[69]։

Ա. Հովհաննիսյանը փորձում էր ռուս խոշոր մտածողի օգնությամբ ցարական չինովնիկությանը հետ կանդնեցնել մայրենի դպրոցների դեմ նրա հնարավոր ոտնձգություններից, բայց այդ չի օգնում գործին։ Իննսունական թվականների կեսերից հայ մշակութային կյանքն սկսում է թոշնել։ 1896-ին փակվում են ազգային ծխական դպրոցները, կարճ միջոցից հետապնդվում են բարեգործական ընկերությունները, 1903-ին բռնագրավվում է եկեղեցապատկան գույքը։ Հրապարակախոսները հարկադրված էին դիմել զանազան կողմնակի միջոցների՝ պահպանելու համար դպրոցական հաստատությունների դեմ այն փշրանքները, որոնք իրերի բերումով, դեռևս գործում էին այս ու այնտեղ։ Այսպես, «Արձագանքի» էջերում հրապարակելով Թավրիզից ստացված մի թղթակցություն, որի հեղինակն առաջարկում էր դպրոց բացել այնտեղ, Ա. Հովհաննիսյանը թղթակցին ձայնակցում է առաջնորդող հոդվածով։ Հարցադրումը հստակ էր. եթե պետականորեն հայկական դպրոցներն արգելվում են Ռուսաստանում, ապա դրանք պետք է կառուցել հայաշատ այլ վայրերում։ «Մեզ թվում է,— գրում է նա,— որ կարևոր է և անհրաժեշտ է հնար եղածին չափ շուտով բանալ Պարսկաստանում, Թավրիզ քաղաքում կամ Սալմաստում, մի միջնակարգ դպրոց, բարձրագույն դասընթացների բաժանմունքով և կրկնում եմ, այն բարերարը, որ կրմբռնե այս գաղափարը և կհիմնե այդ դպրոցը, նա կդնե նոր լուսավորության առաջին անկյունաքարը»[70]։

«Արձագանքի» ամենավերջին, արդեն լրագրի դադարումն ազդարարող, մեկ էջանոց համարում, իբրև մարտահրավեր ցարական կառա-

---

69 Նույն տեղում (Ուշինսկու «Մանկավարժական մարդաբանություն» գրքից)։

70 «Արձագանք», 1897, №149։

վարուժյանը և ահազանգ յուրայիններին, Հովհաննիսյանը զեստեղում է Կովկասյան ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկու հաշվետվությունը, հայկական ծխական դպրոցները փակելու մասին[71]։

Հայկական դպրոցները կառավարչապետությունը փակում է այն պատրվակով, որ դրանք պահվում էին ոչ թե եկեղեցիների միջոցներով, ինչպես նախատեսված էր Պոլոժենիեի համապատասխան հոդվածով, այլ հայ հասարակությունից գանձվող գումարներով։ Իր հաշվետվության մեջ Յանովսկին հրապարակում էր կառավարչապետության կողմից անցկացված ստուգման արդյունքները, որից պարզվել էր, որ հայկական դպրոցներից միմիայն 22-ն են պահվում եկեղեցիների հաստույքներով։ Հրահանգի համաձայն կաթողիկոսը պետք է կարգադրեր վիճակներին, դպրոցները հանձնելու ուսումնական իշխանության իրավասությանը։ Այդ կարգադրությունը չի արվում և գրեթե բոլոր դպրոցները փակվում են։

Հրապարակելով այս պաշտոնական հաղորդումը, Ա. Հովհաննիսյանը ամենավերջին, անուղղակի ելույթն ունեցավ հայ հասարակության առաջ. ելույթ, որը մատնանշում էր հայ մտավոր կյանքի, դպրոցների և պարբերական մամուլի օրհասական վիճակը՝ ցարական ռեակցիայի օրերին։

Դ. ԹԱՏՐՈՆ

Հայ հասարակական կյանքի կենսունակության հիմնական տարրերից էր և թատրոնը, որը սկսած 60-ական թվականներից, շարունակաբար գտնվել է հայ մտավորականության և պարբերական մամուլի ուշադրության կենտրոնում։ 60-ական թթ. սկզբին սիրողների կողմից հայ կյանքում մտցված աշխույժը 70-ական թվականներին առաջ է տարվում առավել կազմակերպված հունով և թատերական ներկայացումները մտնում են հայ հասարակության կենցաղի մեջ։ Մի խումբ թատերասեր գործիչների ջանքերով ստեղծված հայկական թատրոնի վարչությունը կարողանում է ստեղծել ազգային թատերական բեմադրանկ. միաժամանակ թարգմանվում են ժամանակի եվրոպական և դա-

---

[71] «Հաշիվ՝ Կովկասի հայոց փակված դպրոցների վերաբերյալ» (տե՛ս «Արձագանք», 1898, № 6)։

սական հեղինակների պիեսները։ Կ. Պոլսից Թիֆլիս են հրավիրվում առաջին հայ դերասանները և 70-ական թվականների վերջին Թիֆլիսի հայ բեմից հնչում է Ագամյանի խոսքը։ Ա. Հովհաննիսյանը իբրև վարչության անդամ և նորաստեղծ թատրոնի դիրեկտոր՝ շատ է նպաստում թատրոնի հիմքերի ամրապնդմանը։ Նա ֆրանսերենից և գերմաներենից անձամբ թարգմանում է մի շարք պիեսներ, օգնում Ագամյանին՝ յողնելու ֆրանսիական մելոդրամաները և կապվելու դասական հեղինակների հետ։ Հովհաննիսյանի ջանքերով է իրականացվում Գրիբոյեդովի «Խելքից պատուհասի» բեմադրությունը Թիֆլիսում[72]։

«Փորձի» էջերում նա տպագրել է Դ. Էրիսթովի հոդվածը, նվիրված այդ բեմադրությանը[73]։ Էրիսթովը 1881-ի հունվարի 8-ը համարում է նշանավոր օր, երբ հայ դերասանների մշտական խումբը բեմ է բարձրացնում Գրիբոյեդովի անմահ կոմեդիան։ «Այդ գրվածքի ներկայացնելը մեծ պատիվ է բերում հայկական թատրոնի վարչության, քանի որում մինչև այժմ աշխարհիս և ոչ մի բեմի վրա ներկայացրած չեն այդ կոմեդիայի թարգմանությունը»[74]։

Սակայն, 80-ական թվականների կեսերին հայ իրականության մեջ սկսված թատերական կյանքը ծաղկում չի ապրում և 1882-ին ստեղծված «Հայկական դրամատիկական ակումբ» կազմակերպությունը չի արդարացնում իրեն։ Կենտրոնացած թատերական խումբը տարրալուծվում է և ներկայացումներ են տալիս առանձին դործիչների կազմակերպած խմբերը։ «Դրամատիկական ակումբը» չի մտահոգվում կայուն դերասանական խումբ ստեղծելու և թատրոնի նյութական միջոցները բարելավելու հարցերով։

---

72 Ա. Հովհաննիսյանի հին ձեռագրերի հավաքածուի մեջ էր և «Խելքից պատուհասի» ձեռագրի տարբերակներից մեկը, որը նա տրամադրում է վրացի բանասեր և լրագրող Դավիթ Էրիսթովին։ Վերջինս հրատարակում է այդ ձեռագիրը՝ իր հարուստ ծանոթագրություններով։

73 Իշխան Դավիթ Էրիսթովը Գրիբոյեդովի մասնագետ էր, ռուս ընթերցողին հայտնի՝ այդ հարցի մասին գրած իր մի շարք հոդվածներով։ Տպագրելով նրա հոդվածը՝ Ա. Հովհաննիսյանը որոշ հավելումներ է կատարում բնագրում (մասնավորապես թարգմանության լեզվի մասին), քանի որ գրախոսը հայերեն չգիտեր։ Հովհաննիսյանի համար կարևոր էր, սակայն, մասնագետի խոսքը։ Ինքը, Էրիսթովն էլ կարծում էր, որ «մի անհատ դիտողի ձայնը, որ կուսակցություններից դուրս է կանգնած, որին բանկ է ազգային թատրոնի զարգացումը Կովկասում, ինչ լեզվով և լինի այդ, գուցե ավելորդ չի լսել» (տե՛ս «Փորձ», 1881, № 2, էջ 142)։

74 «Փորձ», 1881, № 2, էջ 142։

«Արձագանքի» խմբագրությունը, որ չափազանց բարձր էր գնահատում թատրոնի դերը ժողովրդի կյանքում, մշտական ուշադրություն է նվիրել Թիֆլիսի թատրոնի առօրյային։ Թերթի էջերում տպագրվել են և՛ հաղորդումներ ընթացիկ ներկայացումների մասին, և՛ խմբագրական հոդվածներ։ Թատրոնի հարցի «Արձագանքի» տեսաբաններն էին՝ Շիրվանզադեն, N N-ը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Ճաղարբեկյանը։

«Արձագանքի» խմբագրությունը պրոպագանդում էր հայկական ներկայացումները, ձգտում հասարակությանը ոչ միայն կապել թատրոնի հետ, այլև մտահոգել նրան թատրոնի ապահովության հարցերով։ Թատրոնը՝ խմբագրության համոզմունքով հայ կյանքի առաջընթացի առհավատչյան էր, որը, Գարեգին Ենգիբարյանի խոստովանությամբ, «նպաստում է մայրենի լեզվի գործունեությանը և զարգացնում է ժողովրդի մեջ հասարակական կյանք վարելու ընդունակություն, միացնում է զանազան դասակարգերին պատկանող մարդկանց և կարող է դուրս մի քիչ շարժել մեր ընտանեկան կյանքի կանգնած և խեղդող մթնոլորտը»[75]։

1886-ին, երբ Շիրվանզադեն արդեն վարում էր «Արձագանքի» գլխավոր աշխատակցի պաշտոնը, շաբաթաթերթի էջերում երևում է նրա «Հայկական թատրոն» հոդվածաշարը, որը հսկայական նշանակություն ունեցավ թատրոնի գաղափարի մասսայականացման գործում։ Շիրվանզադեն խրախուսում է Եսայի Փիլոյանին, որի ջանքերով թատրոնը ամրանում է բարոյապես և նյութապես։ «Դրամատիկական ակումբի» ընդհանուր ժողովի նախօրյակին նա մի շարք հարցեր է բարձրացնում. նախ, քանի որ ակումբի անդամները չէին աշխատում, Շիրվանզադեն առաջարկում է վերընտրել նրանց («Եթե ակումբի անդամները բարոյական սկզբունք ճանաչում են՝ կամ պետք է իրանք գործեն, կամ պետք է ուրիշներին թույլ տան գործելու»)։ Այնուհետև պահանջում է կայուն դերասանական խումբ ստեղծել և ապահովել թատրոնի մշտական գոյությունը։ Թատրոնի պակասը մի ժողովրդի կյանքում, գրում է Շիրվանզադեն, «պետք է ինքնաճանաչության և անհատական ինքնասիրության կատարյալ չգոյություն համարել»[76]։

Սակայն տեսականորեն բացատրելով հարցի կարևորությունը, Շիրվանզադեն ստիպված էր խոստովանել և հայ հասարակության ան-

---

[75] «Արձագանք», 1884, № 39։

[76] Նույն տեղում, 1890, № 15։

տարբերության փաստը՝ թատրոնի նկատմամբ։ Հարուստները, պաշտոնյաները, արհեստավորները հայկական ներկայացումներին չէին հաճախում, իսկ փոքրաթիվ թատերասերները չէին կարող թատրոն պահել։ Հրապարակախոսի բուռն կրքով Շիրվանզադեն հայ հասարակության երեսին է նետում այն ճշմարտությունը, որ ձեռնածուների ֆոկուսներով զվարճացող հայերի մեծ մասի ընդունակությունից շատ բարձր է Ադամյանի տաղանդի իսկական դնահատումը։ «Օ՜ն առաջ այդպիսի ողորմելի հասարակության մեջ, թատրո՜ն,— դառնորեն հեգնում է հայ գրողը և հրապարակախոսը,— օ՜ն առաջ լրագրություն, օ՜ն առաջ դրականություն, օ՜ն առաջ... քաղաքակրթություն... է՜հ»[77]։

Մեկ տարի անց «Արձագանքում» հրապարակվում է «Թատրոնի մասին» առաջնորդողը, որը մեր համոզմունքով դարձյալ պատկանում է Շիրվանզադեի գրչին։ Հոդվածագիրը պահանջում է պատասխանատվության զգացումով նախապատրաստվել նոր թատերաշրջանին, խորհուրդ է տալիս Կ. Պոլսից դերասաններ հրավիրել, հրաժարվել ֆրանսիական էժանագին մելոդրամաներից և թարգմանել դասական պիեսներ։

1887 թ. նույնպես էական շարժում չնկատելով հայ թատերական կյանքում, Շիրվանզադեն վկայակոչում է Կովկասի փոքրաթիվ ռուսների նմանը, որոնք օպերա ունեին և նախապատրաստում էին դրամատիկական թատրոնի հիմնադրումը։ Նա հիշեցնում է և վրացիների օրինակը, որոնք հաստատուն հիմքերի վրա էին դրել թատերական գործը։ «Իսկ հիսուն հազար հայերը փող են վաստակում, ուտում են, խմում են, խաբում են և խաբվում են և այդպիսով իրանց կյանքը համարում են լիակատար։ Հասարակության ստորին դասակարգը յուր զվարճությունները վայելում է Թիֆլիսի անբարոյականացնող այգիներում և պանդոկներում, վաճառականը դիշերները համարակալի ձայնով է յուր սիրտը նրբացնում և զգացմունքները ազնվացնում, իսկ ինտելիգենցիան կանաչ դաշտերի վերա կավիճով է զարգացնում յուր խելքը, ճաշակը և սիրտը։

Ուրեմն արժե մի՞թե թատրոն կամ մի այլ բարոյական զվարճատեղի ունենալ, քանի որ առանց դորան էլ ամեն ոք զվարճանում է։ Ողորմելի՜ հասարակություն»[78]։

---

[77] Նույն տեղում, 1886, № 38։

[78] Նույն տեղում, 1887, № 34։

Շիրվանզադեն՝ Օդեսայի ռուսական թերթերից քաղվածաբար մեջ բերելով Ադամյանի հյուրախաղերին նվիրված հաղորդումները, մեծ ցավով է խոսում այն մասին, որ հայ հասարակությունը չի կարող նույնիսկ մի համեստ թատրոն պահել, Ադամյանին հնարավորություն տալու, որ հանդես գա իր հասարակության մեջ և կրթի սրա ճաշակը[79]:

Շիրվանզադեն զգալի ծառայություն է մատուցել հայ թատրոնին և իր մեծարժեք թատերախոսականներով: Նրա հոդվածները՝ նվիրված «Համլետի» բեմադրությանը, մինչև այժմ էլ պահպանում են իրենց գեղագիտական մեծ նշանակությունը: Շիրվանզադեն ըստ արժանվույն է գնահատել «Պեպո»-ի բեմադրությունը, վերլուծել դերասանների խաղը, խրախուսել երիտասարդ Համսիկի մուտքը բեմ: Նա քննադատել է Ջմշկյանի «Վարժուհի» պիեսի տրամաբանական կառուցվածքը (թեև բեմական առումով այն հաջողություն ուներ), Մուրացանի «Ռուզանի» թերի կողմերը:

Շիրվանզադեի թատերախոսականները մեկ նպատակ ունեին՝ օգնել հայ ռեալիստական թատրոնի ամրապնդմանը և սեփական թատերագրի ստեղծմանը: Այսպես, նա կանգ չի առնում «Արյան բիծ» դրամայի բեմադրության վրա, քանի որ այնտեղ չկային «մարդկային ճըշմարիտ զգացմունքներ և կենսական հարաբերություններ», այլ միայն՝ սուր, ատրճանակ, թույն... Հայ թատրոնի զարգացման և թատերագրի ընտրության գործում մեծ դեր խաղաց Շիրվանզադեի թատերախոսականը՝ գրված ժորժ Օնեի «Դարբնապետ» պիեսի բեմադրության առիթով: Ֆրանսիական գրականության մեջ ժամանակին աղմուկ հանած բուրժուական հեղինակի անարժեք գործերի ռեալ գնահատականը ճիշտ կողմնորոշում էր տալիս հայ թատերական գործիչներին:

Շիրվանզադեն կանգ է առել դերասանական վարպետության հարցի վրա, նշելով, թե «առանց խելքի և զարգացման դերասանը ծաղրածու է, առանց աշխատության ամենայն մի տաղանդ կարող է թուլանալ և հետզհետե ոչնչանալ»: Նա իր հոդվածներում մեծ նշանակություն է տվել և պիեսների թարգմանությունների լեզվին:

1889-ի աշնանը «Արձագանքի» խմբագրությունը կրկին անդրադառնում է թատրոնի աշխուժացման հարցին: Այս անգամ թերթի նոր աշխատակից N N-ը քննադատում է «նախկին թատրոնական խմբի» մի քանի անդամների կազմակերպած ներկայացումները, որոնց մա-

---

[79] Նույն տեղում, 1889, № 14:

կարդակը չէր համապատասխանում թատրոնի լավագույն ավանդներին։

Հիմնականում քննադատվում է այդ խմբի ճաշակը, թատրոնը զավեշտի վայր դարձնելու ջանքերը, ներկայացումները գռեհկաճաշակ տեսարաններով և ցինիկ քառատողերով համեմելու պրակտիկան։ Այդ հարվածում է հասարակության զգացումներին և վիրավորում նրա ճաշակը, գրում է N N-ը։ Էժանագին զվարճալիքը վնասակար է, շարունակում է նա, «Մենք ոչ միայն ժամանակ չունենք լոկ զվարճանալու, այլև վերին աստիճանի անբարոյական է թատրոնի սուրբ գաղափարը այդքան նսեմացնել և նորանից լոկ զվարճարան շինել»[80]։ Այսպիսի արվեստը, որ վայր է գահավիժում, չի ընդունվում կրթված հասարակության կողմից և մեռնում է։ Սակայն թողնել այս ասպարեզի ամլությունը, անկարելի է. «Թատրոնը մեզ համար մեր հասարակական կյանքի նշանավոր և անփոխարինելի (շեշտում ենք) գործոնն է»։

Թիֆլիսի հասարակությունը սիրեց թատրոնը, գրում է N N-ը։ Լսելով Ադամյանի, Մնակյանի, Սիրանույշի, Աստղիկի սքանչելի հայերենը, Թիֆլիսեցին սիրեց և իր մայրենի լեզուն։ Սակայն թատրոնը դրանով չի ավարտել իր անփոխարինելի դերը. հայ հասարակությունն օտարանում է թատրոնին և մտավորականությունն այդ պետք է կանխի։ «Արձագանքի» տեսաբանը առաջարկում է գեթ սիրողների ուժերով ներկայացումներ տալ, միջոցներ կուտակել մի մշտական խմբի համար և ջանալ 1890-ին թատրոնը ոտքի կանգնեցնել։ Նա պահանջում է նոր ուժեր ներարկել և կենդանացնել ծնվելուց ի վեր մեռած «Դրամատիկական ակումբը»։ N N-ը կարդում է այդ ակումբի և հայ հասարակության առաջավոր կոչված հատվածի դատավճիռը։ «Եթե մի հասարակության առաջավոր դասը անհամապատասխան է ներկայանում ժամանակի պահանջին և անպարտաճանաչ,— գրում է նա,—դա եղեռնագործությունների վատթարագույնն է, դա հասարակության առաջավոր դասակարգի եղեռնագործությունն է հասարակության շահերի և առաջադիմության դեմ»[81]։

1891—93 թթ. բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը «Արձագանքի» էջերում անստորագիր և հումո գրական կեղծանունով պարբերաբար գրել է հայկական թատրոնի բոլոր ներկայացումների թատերախոսա-

---

[80] Նույն տեղում, 1889, № 36։

[81] Նույն տեղում, № 37։

կանները, միաժամանակ հանգամանալից ծանոթությամբ հայ ընթերցողին ներկայացրել՝ եվրոպական խոշոր հեղինակների ստեղծագործությունները (Շիլլեր, Զուդերմանն, Իբսեն)։

Հ. Հովհաննիսյանը դերասանների խաղի անաչառ վերլուծությամբ նպաստել է նրանց արվեստի կատարելագործմանը, հասարակական կարծիք ստեղծել տաղանդավոր դերասանների մասին։ Նա իր դիտողություններով ճիշտ կողմնորոշում է տվել թատերական հանձնաժողովի աշխատանքներին։ Առավել մեծ էր Հ. Հովհաննիսյանի ծառայությունը՝ հայկական բեմադրությունների լեզվական կուլտուրան բարձրացնելու գործում։ Նա հաճախ է իր թատերախոսականներում հայ թատերական գործիչների ուշադրությունը հրավիրել թարգմանական պիեսների «բարբարոսական» լեզվի վրա։

Դարավերջին հայ թատրոնը գտնվում էր շատ ծանր վիճակում։ Նյութական անապահովությունը, թատրոնի սեփական շենք չունենալը մտահոգող խնդիրներ էին։ 1893 թ. Կ. Յաղուբյանը նշում էր, թե 35 տարվա ընթացքում հայերը չեն կարողացել կայունացնել թատրոնի վիճակը։ Նա առաջարկում է ստեղծել թատրոնական խորհուրդ, որը ապահովեր նրա գոյությունը, ճշտեր և՛ բեմացանկի, և՛ նյութական հարցերը։ Թատրոնի գործունեության բարելավումը Յաղուբյանը հայ հասարակության պատվի գործն էր համարում։

Հետագա տարիներին նույնպես «Արձագանք»-ում հաղորդումներ են տպագրվում հայկական թատրոնի ներկայացումների, Սիրանույշի խաղի մասին։ 1892-ին տպագրվում են Քաջբերունու «Հայկական ներկայացումներ Ալեքսանդրապոլում» հոդվածը, ինչպես նաև հաղորդումներ՝ Իտալիայում երաժշտական կրթություն ստացած Ներսես Շահլամյանի հյուրախաղերի մասին։ 1893-ից հաղորդումներ են եկում, նվիրված Նագեժդա Պապայանի ելույթներին։ «Արձագանքի» հրատարակության վերջին տարիներին տպագրվում են օր. Մարգարիտի հոդվածները՝ Թիֆլիսում կազմակերպվող երաժշտական երեկոների, ներկայացումների և համերգների մասին։ 1897-ին հրատարակվում են Գ. Տեր-Դավթյանի թատերական գործունեության 25-ամյակին նվիրված նյութերը, Բարդուղիմեոս վարդապետի հոդվածը՝ Թավրիզում հայ թատրոնի հիմնադրման պատմության վերաբերյալ։

1895—96 թթ. պարբերաբար հրապարակվում են Թերթի տեսաբան Ճաղարբեկյանի հոդվածները։ Նա թատերախոսական է գրել էմին Տեր-Գրիգորյանի «Բարեգործության դիմակի տակ» պիեսի և Սունդուկյանի

«Խաթաբալայի» մասին։ «Խաթաբալան» 30 տարվա ընթացքում չի կորցրել իր հնչեղությունը, քանի որ այդ պիեսը հայ իրականության ռեալ արտացոլումն է. «Էս աշխարհը դիփ մեկըս մեկու ուտելու է ստեղծած» բարոյականությունը դիշատիչ դազանի բարոյականություն է, որը, սակայն, հաստատուն կերպով իշխում է հայ իրականության մեջ։ Նոր զամբախովները, թեև արտաքուստ քաղաքակրթված, առավել վտանգավոր են, գրում է նա և ափսոսում, որ նոր, երիտասարդ գրողներ չկան, որոնք շարունակեին Սունդուկյանի գործը[82]։ Ճաղարբեկյանը «Արձագանքի» էջերում «Հայ արձակագիրներ» գրքից հրապարակում է Յուրի Վեսելովսկու ակնարկը՝ նվիրված Սունդուկյանին և նրա «Պեպո» կոմեդիային։ Նրա տեսական հոդվածներում արծարծվում են հայ թատրոնի նյութական հիմքերի ամրապնդման, դերասանական կադրերի պատրաստման հետ կապված հարցերը։

«Արձագանքը» հայ թատրոնի զարգացման հետ կապված մի շարք խնդիրների վրա է հրավիրում հասարակության ուշադրությունը, ցույց տալիս, որ պետականությունից զուրկ ժողովրդի ազգային ամբողջական նկարագիրը պահպանելու, քաղաքակիրթ ժողովուրդների շարքում տեղ նվաճելու համար որքան կարևոր է սեփական թատրոնի մշտական գոյությունը։ «Այսօր քաղաքակիրթ ազգերի մեջ թատրոնը մի մեծ գործոն է կրթիչ հիմնարկությունների թվում,— գրում է Թերթի տեսաբանը։— Դպրոցում ուսուցած, գրականության և մամուլի քարոզած դաղափարները հաղթանակ են տանում, երբ բեմի վրա կենդանանում են»։ Թատրոնը ժողովուրդներին ծանոթացնում է միմյանց հետ, բարեկամացնում նրանց, մշակում մայրենի լեզուն։ «Նա թե դպրոց է և թե գրականություն»[83]։

«Արձագանքը» ժամանակի մյուս պարբերականների հետ զարավ վերջին նշանակալից գործ է կատարել հայ հասարակությանը թատրոնի հետ կապելու, նրա մեջ գեղարվեստական ճաշակ պատվաստելու հարցում, թատերախոսականների միջոցով օգնել է դերասանական կադրերի գնահատմանը և նրանց վարպետության բարձրացմանը։

---

[82] Նույն տեղում, 1895, № 41։

[83] Նույն տեղում, 1891, № 25։

Ե. ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Արձագանքը» մեծապես նպաստել է հայ իրականության մեջ գիտական մտքի աշխուժացմանը և մասնավորապես խթանել բանասիրական գիտության զարգացմանը։ Թերթի էջերում լուսաբանվել է հայագիտության վիճակը Եվրոպայում և Ռուսաստանում, քննարկվել են հայ բանասերների բազմաթիվ աշխատությունները, հրապարակվել ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշները։

Անկախ այն բանից, որ «Արձագանքը» պարբերաբար հոդվածներ էր զետեղում գիտական նվաճումների, արտասահմանյան խոշոր գիտնականների կյանքի և գործունեության մասին, միաժամանակ ծավալուն հոդվածներով հայ ընթերցողին էր ներկայացնում եվրոպական հայագետների գործունեության հետ կապված մի շարք նյութեր։ Այսպես, հրապարակվել են էդ. Մայերի «Հնագարյան պատմության» աշխատության հայոց պատմությանը առնչվող հատվածը, Կարրիերի «Մ. Խորենացին և նահապետների ազգաբանությունը» ուսումնասիրությունը, Հյուբշմանի կարծիքը հայերենի արտասանության մասին, Լիմանի ուսումնասիրությունը՝ Վանի նախահայկական պետության մասին, հաղորդում՝ Կարրիերի «Խորենացու մեկ նոր աղբյուրը» ուսումնասիրության վերաբերյալ, հոդվածներ՝ պրոֆ. Ֆելիքս Նել'ի «Հին Հայաստանը և նորա դրականությունը» գրքի մասին, անգլիական գիտնական Ֆարրարի «Հովհան Ոսկեբերան» աշխատության շուրջ, հայագետ Ֆեատերը և հայ հին ազգային երգերը հարցի մասին և այլն։

Տպագրվել են և բազմաթիվ քաղվածքներ եվրոպական հայագետների ճանապարհորդական տպավորություններից, որոնք առնչվում էին պատմական Հայաստանի հետ։ Դրանցից են՝ Դը Բրունի «Ճանապարհորդությունից» քաղված «Նյութեր հայոց պատմության համար» ակնարկը, Ժորժ Պիսոնի և Ալբեր Դրվըլեի «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ուղեգրությունից առնված հատվածը, Ջեյմս Բրայսի «Վերելք յ'Արարատ» գործի նկարագիրը, Ժյուլ Լըկլերկի, Մյուլլեր-Սիմոնիի, Էդմոնդ Նաումաննի և այլ հեղինակների Հայաստանում կատարած ճանապարհորդությունների ուղեգրական նոթերից հատվածներ և այլն։ Միաժամանակ «Արձագանքում» զետեղվել են և արևելագետների միջազգային կոնգրեսների նյութերը, հայ և եվրոպական գիտնականների կարդացած զեկուցումների թեզերը, ինչպես և մի շարք բանավիճային հոդվածներ՝ կապված այս կամ այն հայագետի առանձին ուսումնա-

սիրության դրույթների հետ։ Ռուսաստանի հայագետներից տպագրվել են Ք. Պատկանյանի «Վրաց հին քրոնիկոն» ծավալուն ուսումնասիրությունը, բժիշկ, ճանապարհորդ և գիտնական Ա. Ելիսեևի զեկուցումը՝ Հայաստանի պատմական դերի, հայերի հայրենասիրության և նրանց միսիայի մասին (1886-ին Փոքր Ասիա և Միջագետք կատարած ճանապարհորդության առիթով)։ Տպագրվել են՝ հաղորդում Անիում Մառի պեղած հուշարձանների մասին և Յուրի Վեսելովսկու ուսումնասիրությունը Նոր Նախիջևան քաղաքի վերաբերյալ (կենցաղը, սովորույթները, ծեսերը)։

«Արձագանքի» տեսաբաններից Ստ. Մալխասյանը թարգմանաբար հրապարակել է Պ. Վ. Ստասովի գրախոսությունը՝ ֆրանսիացի Ժան Մուրիեի «Հայոց ձեռագիրներ և նոցա ծաղկանկարները» հրատարակության վերաբերյալ (1885)։ Գրախոսը նշում է, որ Ժան Մուրիեն փաստորեն թարգմանել է կոմս Ուվարովի «Էջմիածնի գրադարանը» հայտնի հոդվածի թեզերը և այդ ոչ միայն ներկայացրել է իբրև սեփական ուսումնասիրություն, այլև նույնիսկ որոշ կետերում Ուվարովի իսկ առաջաբանի նյութերով առարկել հեղինակին[84]։ Քննադատելով Ժ. Մուրիեի անբարեխղճությունը, Ստասովը ցանկություն է հայտնում օտար լեզուներով տպագրված տեսնել Ուվարովի աշխատությունը, որը «օտարազգի գիտունների համար դառնար վստահելի ուղեցույց և ձեռնարկ, և միևնույն ժամանակ ծանոթացներ աշխարհին Էջմիածնի Մատենադարանի անբավ, դեռ չգնահատված գանձերին, որովհետև մինչև այսօր ոչ Եվրոպայում և ոչ Ռուսաստանում ոչ ոք դեռ չէ ձեռնարկել այն աշխատության, որ Ուվարով կոմսը կատարեց այնքան հմտությամբ»[85]։ Թե ինչպիսի ակնածանքով էր վերաբերվում հայ պարբերականի խմբագրությունը Ուվարովի վաստակին, այդ երևում է այն բանից, որ Ստասովի հոդվածը, որը նախատեսված էր տպագրվելու «Журнал министерства народного просвещения» ամսագրի 7-րդ համարում, հեղինակի թույլտվությամբ նախ հրապարակվում է «Արձագանքում»[86]։

«Արձագանքի» բանասիրության բաժնում պարբերաբար տպագրր-

---

[84] Տե՛ս А. С. Уваров, «Эчмиадзинская библиотека» («Пятый археологический съезд в Тифлисе», М., 1879).


[85] «Արձագանք», 1886, № 29։

[86] Տե՛ս «Արձագանք», 1886, № 25, 27, 29։

վել են Ալ. Երիցյանի, Մ. Շովրյանի, Գյուտ քահանա Աղանյանի, Կ. Եղյանի, Փ. Վարդանյանի, Գ. Խալաթյանի, Ս. Եղիազարյանի առանձին ուսումնասիրությունները, հոդվածները, հաղորդումները և գրախոսությունները։ Այսպես, «Արձագանքի» խմբագրության մշտական աշխատակից, Գյուտ քահանա Աղանյանը տպագրում է իր ուսումնասիրությունները՝ հայ գրչագիրների, հմայիլների, միջնադարյան տաղարանների մասին, առանձին հոդվածներ՝ նվիրված հնդկահայերի վիճակին, Կարնո գաղթի պատմությանը, Ներսես V-ի և Սիմեոն կաթողիկոսի գործունեությանը և այլն։ Տպագրվել են Կ. Կոսիկյանի «Փավստոս Բյուզանդացի» հոդվածը, Կ. Եղյանի «Բոնի միության հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ» ժամանակակից հիշատակարանների առաջաբանը, Մալխասյանի հոդվածը՝ «Վահագնի ծնունդի» տաղաչափության մասին, Փ. Վարդանյանի, Ն. Քարամյանի գրախոսությունները և հոդվածները, Ս. Եղիազարյանի՝ Երևանի նահանգի քրդերի ազգագրական նկարագիրը, հայոց գաղթականության հետքը Կիևի արխիվում հոդվածը, Դարդելի «Ժամանակագրություն հայոց» աշխատության գրախոսությունը և այլն։

Բեղմնավոր էր հնագետ դիտնական, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Խաչատուր Հովհաննիսյանի գրիչը։ Նա և՛ իր ազգանունով և՛ Մ. Շովրյան գրական կեղծանունով բազմաթիվ բանասիրական, պատմական, հնագիտական հոդվածներ, ուսումնասիրություններ, գրախոսություններ է հրապարակել «Արձագանքի» էջերում, առանձին թղթակցություններով լուսաբանել Մոսկվայի մշակութային կյանքի նշանակալից երևույթները, Լազարյան ճեմարանի անց ու դարձը, Ռուսաստանի հայագիտության վիճակը։ Նրա հոդվածներից հիշատակության արժանի են «Վանի արձանագրությունները և նոցա նշանակությունը առաջավոր Ասիայի պատմության համար», Քերովբե Պատկանյանի «Վրաց Քրոնիկոնի» ամբողջ թարգմանությունը, «Հայկական ոճը ճարտարապետության մեջ», «ԺԴ դարու մի ավետարան», «Մի ձեռագիր երգարան», «Հայության բնակորներ Ռուսիայի հարավ-արևմտյան նահանգներում» և այլն։

«Արձագանքի» խմբագրությունը, խոսելով եվրոպական հայագիտության նվաճումների մասին, հայագիտական լավագույն աղբյուրների շարքում է դասում և «Armenische Bibliothek»-ի հատորները, որոնք տարածված էին Գերմանիայից մինչև Ամերիկա։ Ն. Քարամյանը իր «Գրական նշմարներ» հոդվածաշարում ներկայացնելով եվրոպա-


Armenische Bibliothek.

Herausgegeben von

Abgar Joannissiany.

I.

Drei Erzählungen

von

Raphael Patkanian.

Aus dem Armenischen übertragen

von

Arthur Leist.

Leipzig.

Verlag von Wilhelm Friedrich.

«Հայկական գրադարան» մատենաշարի առաջին հատորի տիտղոսաթերթը։

կան հայագետներին, գտնում է, որ պատմական Հայաստանից բացի կա և նրան շղթայված ներկա օրերի Հայաստանը, որի գոյությունը՝ գրական երկերի միջոցով հավաստում է «Armenische Bibliothek» մատենաշարը։ Նա իրավացի էր, երբ գրում էր, թե «Ոչ մի կերպ չէինք կարող համոզել եվրոպացուն, որ մենք էլ քաղաքակրթության ընդունակ ժողովուրդ ենք, եթե նրա առաջ չդնեինք մեր հոգու և մտքի արգասիքը։ Այս տեսակետով մի փայլուն միտք էր այն, որ տասը տարի առաջ հղացավ «Արձագանքի» խմբագիրը և իրագործեց մի քանի տարվան ընթացքում»[87]։

Չպետք է մոռանալ, որ այդ մատենաշարի հրատարակությունը նաև քաղաքական երևույթ էր։ Արդեն ասել ենք, որ Ա. Հովհաննիսյանը խնդիր էր դրել հայ մշակույթի նվաճումները ներկայացնել քաղաքակիրթ աշխարհին և ստեղծել որոշակի ու նպաստավոր կարծիք՝ իր դատի պաշտպանությունն սպասող ժողովրդի մասին։

«Փորձի» և «Արձագանքի» մշտական աշխատակիցներից էր և Աբգար Հովհաննիսյանի դաղափարակիցը, հռչակված հայ բանասեր Ալեքսանդր Երիցյանը *(1842—1902)*։ Երիցյանը սովորել է նախ Ներսիսյան դպրոցում, ապա Թիֆլիսի գիմնազիայում։ Նա թեև համալսարանական կրթություն չի ստանում, բայց զբաղվելով ինքնակրթությամբ, դառնում է իր օրերի զարդացած մարդկանցից մեկը։ Ալ. Երիցյանը գործուն մասնակցություն է ունեցել հայ հասարակական, մշակութային կյանքին։ Գ. Տեր-Ալեքսանդրյանցի հետ 1866—67 թթ. խմբագրել է «Վաճառական» շաբաթաթերթը, կազմել «Ընթերցարան» ձեռնարկը։ Երկար տարիներ աշխատել է Կովկասի հնագիտական հանձնաժողովի կազմում, մասնավորապես խորացել է Կովկասի պատմության հարցերի մեջ և դարձել առաջնակարգ հեղինակություն այդ մարզում։ Գրել է բազմաթիվ աշխատություններ։ Նրա գրչին է պատկանում արևելահայ ժողովրդի XIX դարի պատմության լավագույն սկզբնաղբյուրներից մեկը՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարումը» երկհատոր մենագրությունը, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի» աշխատությունը, «Վենետիկի Մխիթարյանք» ուսումնասիրությունը, «Ներսես կաթողիկոսի կենսագրու-

---

[87] «Արձագանք», 1893, № 89։

թյունը», բազմաթիվ ուսումնասիրություններ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով[88]։

1872—73 թթ. Երիցյանը խմբագրել է «Кавказская старина» պատմական, հնագիտական, ազգագրական և մատենագիտական ամսագիրը, որի 8 համարներում հրապարակել է մի շարք ուշագրավ հետազոտություններ։ Ալ. Երիցյանը զբաղվել է նաև գրական, թարգմանական աշխատանքներով, գրել է «Արուսյակ» ողբերգությունը, ավելի ուշ՝ «Գրավաճառ Գասպար» պիեսը։ Լեհերենից թարգմանել է «Սխալ հաշիվ» կոմեդիան, որը բեմադրվել է 1892-ին։

«Արձագանքի» էջերում տպագրվել են թերթի հրատարակության տարիներին Երիցյանի գրած գրեթե բոլոր աչքի ընկնող ուսումնասիրությունները։ Այսպես, 1882-ին, նա հրատարակում է «Բարեգործությունը հայոց մեջ» թեմայով կարդացած հրապարակային դասախոսությունը (որից ստացված գումարները տրամադրում է ուսուցչական ժողովի աշխատանքները կազմակերպող հանձնաժողովին)։ Սա մեծարժեք մի ուսումնասիրություն է, նվիրված դպրոցական գործի պատմությանը Ռուսաստանում[89]։ Երիցյանը հայոց դպրոցների բարգավաճումը Ռուսաստանում համարում է «պոռուզ հայոց բարեգործության»։ Սակայն, թեև անցյալի համեմատությամբ հայ դպրոցի զարգացումը վերելք էր ապրում, Երիցյանն արտասահմանյան երկրների կրթական մակարդակի չափանիշով այն շատ անբավարար է գտնում։ Հայկական ուսուցչական ժողովի նախօրյակին հրատարակված այդ ուսումնասիրությունն, անշուշտ, ծրագրային նշանակություն ուներ։

«Արձագանքի» էջերում շարունակում են տպագրվել Երիցյանի բանասիրական, պատմական, բանավիճային ուսումնասիրությունները, Կովկասի կրթական կյանքը, տնտեսական զարգացումը, կենցաղային զանազան հարցեր լուսաբանող հաղորդումները («Ս. Երուսաղեմը և հայք», «Վենետիկի Մխիթարյանք», «Ղ. Փարպեցին և Պ. Խալաթյան», «Պատմական տեսություն հայ պարբերական հրատարակությունների»)։ 1884-ին, արձագանքելով կաթողիկոսական ընտրություններին նախապատրաստմանը, Երիցյանը հրապարակում է «Համառոտ տեսություն

[88] «История армянской сцены» (Т., 1873), «Историческое и современное положение армянской женщины в связи с нравственностью армян» (Т., 1874), «Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении» (Т., 1881).

[89] Տե՛ս «Արձագանք», 1882, № 11, 14, 15։

ներկա տաճկահայոց» հոդվածը, որով ծանոթացնում էր Պատրիարքարանի, Ազգային ժողովի, Ազգային կենտրոնական վարչության կառուցվածքի հետ։ Կաթողիկոսական թեկնածուների առիթով բանավիճում է Սպանդարյանի հետ, առանձին հոդվածներով հանդես գալիս կաթողիկոսական ընտրությունների կարգի մասին։ Նա հոդվածներ է գրել ռուսական ինքնակալների օծման ավանդույթի, էջմիածնի սինոդի երկու դատախաղների գործունեության մասին, «Համբո» գրական կեղծանունով տպագրել է «Մոսկվայի աշխարհահանդեսը», «Ս. Ավետարանի թարգմանելու խնդիրը», «Հանդես թագադրության», «Առտնին արհեստագործությունը Կովկասում» հոդվածները, «Հին գինվոր» գրական կեղծանունով՝ «Զինվորական ծառայություն և հայեր» թղթակցությունը և այլն[90]։

Երիցյանը հրապարակել է մի շարք բանասիրական նյութեր, կապված Ն. Աշտարակեցու, Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանի, աշուղ Ալվան օղլիի (Թիֆլիսեցի Խոսրովենց Գասպար) կյանքի և գործունեության հետ։ Սայաթ-Նովայի մահվան 100-ամյակին նվիրված ծավալուն հոդվածում Երիցյանը վեր է հանել նրա վաստակի մեծությունը և թերևս առաջինը հայ իրականության մեջ՝ հայտարարել, թե սեպտեմբերի 12-ին Սայաթ-Նովան իրավունք ունի մի համեստ գերեզմանաքար պահանջելու հայ ժողովրդից՝ «Սայաթ-Նովա» մակագրությամբ[91]։

«Հայը և գիտությունը» հոդվածում Երիցյանը բարձրացնում է հայագիտության զարգացման անհրաժեշտության հարցը։ Նա վկայակոչում է հայագիտական դպրոցների առկայության փաստերը Եվրոպայում և Ռուսաստանում, և հաշվի առնելով հայոց լեզվի ուսումնասիրության հետ կապված դժվարությունները, հայ մտավորականներին խորհուրդ է տալիս օգնել ռուս և եվրոպացի հայագետներին։ Երիցյանը կոչ է անում Կովկասի 400 բարձրագույն կրթություն ունեցող գործիչներին և մոտավորապես 1500 հայ մտավորականներին՝ ուսումնասիրել հայ ժողովրդի անցյալն ու ներկան՝ ի մի բերել հայագիտական և ազգագրական նյութերը և դրանք տրամադրել աշխարհագրական ընկերության Կովկասի բաժանմունքին։

---

90 Մատենադարանի գրադարանին պատկանող «Արձագանքի» հավաքածուի մի շարք համարների վրա պահպանվել են Երիցյանի բազմաթիվ նշումները։ «Համբո» և «Հին գինվոր» ստորագրություններին մոտ նա փակագծերում ավելացրել է՝ «Աղ. Երիցյան» (տե՛ս «Արձագանք», 1886, № 39. Հավաքածուի գրադարանային թվահամարն է՝ 650)։

91 «Արձագանք», 1895, № 87։

«Արձագանքի» 1890—91 թթ. մի քանի համարներում տպագրվել է Երիցյանի «Ուղևորություն 'ի Տաճկա-Հայաստան» (քաղվածներ) ուղեգրական ակնարկաշարը, որը ոչ միայն մեծ հետաքրքրություն է ներկայացնում իբրև 1877—78 թթ. պատերազմի օրերին ռուսական բանակի նվաճած բնակավայրերի ժողովրդի կացության նկարագրությունը, այլև իբրև գեղարվեստական ստեղծագործություն[92]։

1877 թ. վերջին ռուսական բանակի հրամանատարությունը կազմում է էրզրումի նահանգը, որի մեջ մտնում էին Բայազետ, Դիադին, Ղարաքիլիսա, Ալաշկերտ, Խամուր, Ստորին և Վերին Բասեն, Խնուս, Օլթի, էրզրում-Մամախաթուն գավառները։ էրզրումի զինվորական նահանգապետ է նշանակվում նախ գեներալ Բ. Շելկովնիկյանը, իսկ սրա մահից հետո՝ գեներալ Դուխովսկոյը։ Ալ. Երիցյանը ուղարկվում է էրզրում և որպես առանձին հանձնարարությունների պաշտոնյա՝ ուսումնասիրում է էրզրումի նահանգը։ Ռուսական բանակի էրզրումից դուրս գալուց հետո նա իբրև հյուպատոսարանի աշխատակից, մնում է այստեղ։ Երիցյանը մեկ տարի ուսումնասիրում է նահանգի տեղագրությունը, թուրքաց վարչական կազմակերպությունը և այդ նյութերի հիման վրա գրում «Материалы для описания Турецкой Армении», Эрзерумский вилает ուսումնասիրությունը (1884 թ.)։ Հավանաբար այդ նյութերի տպավորության տակ էլ Երիցյանը շարադրել է իր ուղեգրական տպավորությունները՝ «իբրև ճանապարհորդական նկարագրություն և հիշողություն, նամանավանդ և այն հուսով, որ գուցե ընթերցողներից ոմանք կարող կլինեն ուղղել բազմաշխատ Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատասիրության մեջ յակամայից սպրդած մի քանի տեղագրական սխալները»[93]։

Ալ. Երիցյանը նկարագրում է 9 հոգուց բաղկացած իրենց խմբի ճանապարհորդությունը Կարսից մինչև Արաքսի նորակառույց կամուրջը։ Երիցյանից բացի խմբի մեջ էին մայորներ Կոստանդին Կամսարականը (հետագայում Կարինի, ապա Վանի փոխհյուպատոս), Թադևոս Տիգրանյանը և 6 պաշտոնյաներ, որոնք պետք է աշխատանքի անցնեին Կարինի նահանգական ռուսական վարչությունում։ Երիցյանը պատմում է Կարսում, Բեգլի-Ահմեդ, Ղըրխ-Բունղար, Ալի-Սոֆի, Մեջիդլի գյուղերում անցկացրած գիշերների, տեղացի հայ և քուրդ բնակչու-

---

[92] Տե՛ս «Արձագանք», 1890, № 36—39 և 1891, № 2—4։

[93] «Արձագանք», 1890, № 36։

բյան հյուրասիրությունների մասին։ Մեջիդլի գյուղում հյուրընկալված Երիցյան-բանասերը չի կարողանում անտարբեր մնալ հովիվ Ամոյի «Բրին-դարեն» («Կոտրած սիրտ») երգի նկատմամբ և այն ամբողջությամբ թարգմանելով, մեջ է բերում իր ուղեգրական ակնարկներում[94]։

Ալ. Երիցյանի ուղեգրությունների տպագրությունը մնացել է անավարտ։ Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից պետք է ենթադրել, որ աշխատության շարունակության տպագրությունը չի թույլատրվել[95]։ Հեղինակը 1891-ի առաջին համարում տպագրելու համար կոմիտե է ներկայացնում հերթական՝ հինգերորդ հատվածը («Մեր տան տերը և յուր փլավը» խորագրով)։ Այն մերժվում է հունվարի 2-ին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Քանի որ հոդվածը ենթակա է դիվնլորական դրաքննության, տպագրությունը արգելել»[96]։ Հատվածի մերժումից հետո Երիցյանը շարունակում է իր պատմությունը՝ մի պարբերությամբ փոքրիկ կամուրջ ստեղծելով նախորդ և հետագա գլուխների միջև (տան պատը փլվելու, բքի և ձյան տեսարանները)։ Շաբաթաթերթի 1891 թ. 2—4 համարներում տպագրվում են հաջորդ գլուխները, բայց ուղեգրությունների տպագրությունն, այնուամենայնիվ, չի ավարտվում։ «Արձագանքում» տպագրված Երիցյանի աշխատությունները օգնել են ստեղծելու Կովկասյան հայագիտական դպրոցը, որի հետ հաշվի էին նստում աշխարհի հայագետները[97]։ Նրա արժեքավոր ուսումնասիրություններներով էլ հիմնականում պայմանավորված է «Փորձի» և «Արձագանքի» գիտական-բանասիրական բաժինների մակարդակը։

«Արձագանքի» խմբագրությունը ըստ արժանվույն է գնահատել ժամանակի հայագետների գործունեությունը։ Այսպես, տարբեր ժամանակներում հոդվածներ են նվիրվել Մկրտիչ Էմինի կյանքին, գիտական գործունեությանը, Թողած վաստակին։ Խմբագրությունը արտահարդ ջերմությամբ է արտահայտվել Ղևոնդ Ալիշանի գործունեության հայրենասիրական նշանակության մասին, կազմակերպել է մեծ բա-

---

94 «Բրին-դարեն» երգը հրապարակել է Հաջին Ջնդին (տե՛ս «Հայ և թուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ», Երևան, 1965, էջ 100—101)։

95 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, դիրք Ա, գ. 1052։

96 Այդպիսի բաժանմունք Կովկասի կոմիտեն չուներ։

97 Ալեքսանդր Երիցյանի կյանքին, գիտական գործունեությանը և նրա աշխարհագրի մեկնաբանությանը առանձին հոդված է նվիրել Ազատ Համբարյանը («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1)։

նասերի աշխատությունների բաժանորդագրությունը, օգնել դրանց տարածմանը Արևելյան Հայաստանում։ 1885-ին ծանուցելով «Սիսուանի» հրատարակության լույրը, խմբագրությունն այն գնահատում է իբրև «հոյակապ ու հայոց գրականության մեջ աննման աշխատություն»։ 1889 թ. «Այբարատի» տպագրության առիթով մի շարք հոդվածներ են նվիրվում այդ աշխատությանը։ 1890-ին «Արձագանքի» խմբագրության և մասնավորապես, Ա. Հովհաննիսյանի ջանքերով մեծ շուքով կատարվում է Ալիշանի գրական-գիտական գործունեության 50-ամյա հոբելյանը։

«Արձագանքի» խմբագրությունը մեծ գործ է կատարել հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության նմուշների հավաքման և առանձին ուսումնասիրությունների հրատարակման ուղղությամբ։ Միաժամանակ զգալի աշխատանք է տարվել և տարբեր գավառներում ապրող հայ ժողովրդի հավատալիքների, ծեսերի և սովորույթների նկարագրության և հրապարակման գործում։ Տպագրվել են ուսումնասիրություններ՝ Պանդխտությունը ժողովրդական երգի մեջ, Ախալցխայի և Շամախու ժողովրդական երգերը, Ս. Սարգսի տոնը Մշո հայերի և քրդերի մեջ, Մշեցոց երգեր, Մշո հարսանիք, Վարդավառի տոները, Սասունցի Դավիթ, Նիժեցոց կյանքը, նշանդրեքը և հարսանիքը, և այլն։

1895 թ. տագնապալից օրերին «Արձագանքում» տպագրվում է Ն. Քարամյանի «Ժողովրդական դրականության նշխարներ» ուսումնասիրությունը։

Այն ծրագրային մի հոդված էր, որով խմբագրությունը մի կողմից խրախուսում էր բանավոր ստեղծագործության հավաքման աղնիվ գործը, մյուս կողմից ապացուցում հայ ժողովրդի գոյության փաստը կասկածի տակ առնող քաղաքագետներին, թե անկախ նրանց չարամիտ ջանքերից՝ հայը կա և կմնա՝ իր կենսունակության շնորհիվ։ Թեև տառապած ու արյունլվա, աշխարհին պարզելով իր հոգեկան հարստությունը, նա կապացուցի արևմուտքին իր ուժը, քանզի «որևէ ազգի վարած մտավոր կյանքը ամենալավ առհավատչյան է նորա կենսունակության»[98]։ Հոդվածագիրը մասնավորապես կանգ առնելով Բագրևանդին նվիրված Հայկունու աշխատության վրա, անհրաժեշտ է գտնում Արևմտյան Հայաստանի այն գավառների բանավոր ստեղծագործության

---

[98] «Արձագանք», 1895, № 89։

ուսումնասիրությունը, որոնց բարենորոգումների հարցը հոլովվում էր այդ օրերին։

Հ. Ճաղարբեկյանը վեր է հանում Հ. Ճանիկյանի «Հնություն Ակնա» աշխատության պատմա-ճանաչողական նշանակությունը և խրախուսում այդպիսի գրքերի հրատարակությունը։ Նա գտնում է, որ արևմտահայերի վիճակը աշխարհին ներկայացնելու համար թվերն ու վիճակագրական տվյալները շատ ավելի թույլ կգտնվեն, քան անտուներները։ Խմբագրությունը հարց է բարձրացնում օտար լեզուներով թարգմանել հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության նմուշները, հոդված է հրապարակում, նվիրված բանավոր ստեղծագործության գրական մշակման եղանակներին։

Բանավոր գրականության հարցին զուգահեռ խմբագրությունը մեծ ուշադրություն է նվիրել և տեղագրական նյութերի հրապարակմանը. այդ արվում էր պատմական Հայաստանի արդեն մասամբ ոչ հայաբնակ վայրերի պատմությունը կորստից փրկելու նպատակով։ Այս խնդիրը խմբագրին պբաղեցրել է առավելապես 1894—1896 թթ., երբ սուլթան Աբդուլ Համիդը սկսել էր դատարկել պատմական Հայաստանի գավառները։ Մանոթանանք «Արձագանքի» հրապարակած տեղագրական նյութերի ցանկին։

Այսպես, Արևմտյան Հայաստանը ներկայացված է հետևյալ նյութերով. Տիգրանակերտ և յուր բնակիչները, Հին Բայազետ, Տուրուբերան, Կիլիկիա և Զեյթուն, Քանդված քաղաք մը (Ակնա մասին), Ուրմի գավառ, Սասուն, Վանի պատմությունը, տեղագրությունը, ժողովրդի լեզուն, կյանքն ու կենցաղը, Մուշ-Տարոն և այլն։

Արևելյան Հայաստանը և Ռուսաստանի հայաբնակ քաղաքները ևս ներկայացված են բազմաթիվ հոդվածներով (Լոռի, Հաղբատ, Ջալալօղլի, Ապարան, Շիրակ, Շամշադին, Բորչալու, Ախալքալաք, Մողոկ, Ղրիմ, Անդրկասպյան երկիր և այլն)։

«Արձագանքում» հոդվածներ են երևում, նվիրված հայ մատենադիրների երկերի տպագրության և դրանց ուսումնասիրության հարցերին։ Թերթի տեսաբան Լորդը (Իս. Հարությունյան), խոսելով հայերի անտարբերության մասին, բարձրացնում է հայ հին գրականության ուսումնասիրության անհրաժեշտությունը («Գոնե օտարից սովորենք հարգել այն, ինչ որ մեզ կարևոր է»)։ Նիկողայոս Քարամյանը գրախոսում է Սամվել Աննցու «Ժամանակագրության» նոր հրատարակությունը (1893)։

Հայ ձեռագրական արվեստի, մատենագրության գիտական նշանակության և ձեռագրերի պահպանման մասին «Արձագանքում» տպագրվել են մի շարք հոդվածներ։ Առաքել Բաբախանյանը (Լեո) հիշատակելով այն ուշագրավ փաստը, որ դարաբաղցի (Թաղավարդ գյուղ) Գրիգոր քահանա Դադյանի ժառանգները վճռել են իրենց հորից մնացած 33 ձեռագրերը նվիրաբերել էջմիածնի թանգարանին, առիթն օգտագործում է և մի հոդված նվիրում հայ ձեռագրերին։ Նա նկարագրում է այդ արժեքավոր ավանդների ստեղծման պատմությունը, անցած ճանապարհը, գրիչների կրած տառապանքները...։

1889 թ. Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության խորհրդի նիստում ի վերջո որոշվում է ստեղծել կենտրոնական գրադարան։ «Արձագանքը» մի խմբագրական հոդվածով շնորհավորում է այդ նախաձեռնությունը, ընթերցողին ծանուցում, որ խմբագրության հուզած հարցը ի վերջո լուծում է ստանում։ Գրականությունից և ձեռագրերից բացի երիցյանը անհրաժեշտ է գտնում Թիֆլիսում ստեղծվելիք հայագիտական գրադարանում կենտրոնացնել փաստաթղթերի ու նամակների հավաքածուները։ Նա պատմում է, թե վերջին 30 տարում ինչ թանկարժեք արխիվներ են կորսվել Թիֆլիսում (Հովհ. Ղորղանյանի հայ ձեռագրերի, նամակների և կոնդակների ժողովածուն, բժշկապետ Ալեքսի Տեր-Ղուկասյանի հնությունների ժողովածուն և նամականին, գրնդապետ Արտ. Տեր-Ղուկասյանի պատմական և հնախոսական փաստաթղթերի արխիվը (որի «մի մասը,— գրում է Երիցյանը,— ես բազարում գնեցի, ընդամենը քսան կոպեկ վճարելով»)։

1891-ը նշանակալից տարեթիվ էր հայ գիտական աշխարհի համար։ Գիտա-հետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով Թիֆլիս և էջմիածին են ժամանում նախ հայագետ Մեյեն, ապա՝ Կոնիբերը։ «Արձագանքում» զետեղվում են բազմաթիվ թղթակցություններ, նվիրված անվանի գիտնականների գործունեությանը և, մասնավորապես էջմիածնում նրանց կատարած աշխատանքներին։ Այդ ժամանակ Նիկ. Քարամյանն աշխատում էր Գևորգյան ճեմարանում և Մեյեն նրա օգնությամբ Եվսեբիոս Կեսարացու ձեռագրի միակ օրինակը համեմատում է Ավգերյանի հրատարակության հետ, հաստատելով այն փաստը, որ Ավգերյանի հրատարակության սկզբնօրինակը եղել է էջմիածնում պահպանվող բնագիրը։ Հովհաննիսյանն այդ առիթով գրում է. «Գաղղիացի գիտնականը շատ դժգոհ էր էջմիածնի գրատան ցուցակ-

նկարից, որոնց անճշտությունը և խառնակությունը բացատրելու խոսք չէր գտնում»[99]։

Մի քանի ամիս անց Թիֆլիս է ժամանում Կոնիբերը։ «Արձագանքի» աշխատակցի հետ ունեցած զրույցում նա պատմում է իր տպավորությունները Հնդկաստանից և ցավով նշում, թե ինչպես են ոչնչանում հայ հին ձեռագրերը՝ գաղթականների ծանր կյանքի ճանապարհին... Նիկ. Քարամյանը «Արձագանքում» տպագրում է իր զրույցը Կոնիբերի հետ, ապա օրեր անց՝ մի այլ հոդվածով ծանուցում նրա վերադարձը էջմիածնից։ Ողջ հայ մտավորականության հասցեին հանդիմանության անուղղակի խոսք էր այն փաստի հիշատակումը, թե ինչպես իր նախորդ այցի ժամանակ Կոնիբերին չէր հաջողվել գտնել Դավիթ Անհաղթի հրնագույն ձեռագիրը, այնպես էլ 1891-ին նա չէր գտել Փիլոն Աղեքսանդրացու գործերի և Աստվածաշնչի հավելվածների իրեն անհրաժեշտ ձեռագրերը։ «Մենք ժամերով չարչարվում ենք այստեղ, գրքերը գտնելու համար»,— հարում է տիկին Կոնիբերը և հայտնում ամուսնու դիտավորությունը՝ կազմելու էջմիածնի ձեռագրերի ցուցակը[100]։ Հատկանշական է, որ հենց այս օրերին Ն. Քարամյանը «Արձագանքում» դիտեղում է մի առաջնորդող հոդված («Հայագիտության գրատան կարևորությունը»), որի հիմքում ընկած էր «չկա առաջադիմություն, առանց անցյալի ճանաչողության» թեզը։ Հին հայերը և՛ գրադարաններ ունեին, և՛ գիտեին ձեռագրերի հարգը, գրում է Քարամյանը։ Նրանք ձեռագրեր էին պատվիրում, դրանք հավաքում և պահպանում էին, իսկ երբ ձեռագրերը թշնամու ձեռքն էին ընկնում, այդ սրբությունները ազատում էին գերությունից։ Ձեռագրերի պաշտամունքը պահպանվում է Եվրոպայում, որտեղ Փարիզի ազգային մատենադարանը, Լոնդոնի Բրիտանական թանգարանը, Բեռլինի Արքունի գրադարանը ազգային պարծանքներ են և ունեն ձեռագրերի արժեքավոր հավաքածուներ[101]։ Եվրոպական ազգերը պարծենում են իրենց գրադարաններով, իսկ հայկական հնատիպ մեծարժեք գրքերը շուկաներում վաճառվում են չնչին կոպեկներով, վանքերը գրադարաններ չունեն, էջմիածնի ձեռագրատան վիճակն անմխիթար է... «Այս վիճակը մեր կար-

---

[99] «Արձագանք», 1891, № 19։

[100] Տե՛ս «Արձագանք», 1891, № 31։

[101] Ն. Քարամյանը կազմել էր Բեռլինի գրադարանի հայ ձեռագրերի ցուցակը (99 անուն) և այն հրատարակել Բեռլինում՝ 1888-ին։

ծիրով ամոթաբեր է հայերիս համար,— գրում է Քարամյանը,— և ժամանակ է վերջապես, որ այդ մասին մտածենք»[102]: Այդ օրերին «Արձագանքում» հանդես է գալիս և Լորդը: Նա հիշեցնում է 1888-ին տպագրած իր մի հոդվածը, որտեղ առաջարկել էր կազմել աշխարհում սփռված հայ ձեռագրերի ցուցակը: Իս. Հարությունյանը ընթերցողների ուշադրությունը կրկին հրավիրում է այդ հարցի վրա: Նա հայտնում է, թե արդեն կազմվել են Մխիթարյանների, Պետերբուրգի, Անգլիայի, Կռիա քաղաքի և այլ վայրերի ձեռագրերի ցուցակները. «Մնում է միայն սուրբ էջմիածինը: Արդյոք ժամանակ չէ՞ այդ թանկագին Մատենադարանի անգին հարստությանց ընդարձակ ցուցակը հրատարակել մի գործին տեղյակ և հմուտ անձի միջոցով»[103]:

1893-ին Ալ. Ասլանյանը Լոնդոնից ուղարկած իր թղթակցության մեջ նկարագրում է Բրիտանական թանգարանում պահվող մի շարք երկրների արձանագրությունների և հայ հին ձեռագրերի բաժինները[104]:

«Գրականական նշխարների պահպանությունը» առաջնորդողում Ա. Հովհաննիսյանը խոսում է ոչ միայն հին, այլև նոր շրջանի ձեռագրերի պահպանման հարցի մասին: Նա նույնպես բարձրացնում է հայ ձեռագրերի դիտական ցուցակներ կազմելու հարցը, ինչպես այդ ընդունված է քաղաքակիրթ ժողովուրդների մոտ: «Պետերման հայագետն, որ Երուսաղեմ էր գնացել հատկապես հայ ձեռագիրներ տեսնելու,— գրում է Հովհաննիսյանը,— ստիպված էր ձեռնունայն դառնալու, որովհետև գրատան բանալին չգիտեին Երուսաղե՞մ է, թե Պոլիս»: Ապա՝ շարունակում է. «Ե՞րբ արդյոք մեր վանքերի փոշիների տակից կհանվեն հայ ձեռագիրները և նրանց մասին տեղեկություն կստանա աշխարհն, դժվար է ասել, որովհետև չգիտենք «զաշխարհիս եկեալ աղետսն ողբալ, եթէ զապագայիցն ակնկալութիւն»[105]:

Հետագայում «Աննեերևի անհոգություն» խմբագրականում Հովհաննիսյանն անդրադառնում է պատմական հուշարձանների պահպանմանը:

Առավել լրջություն տալով հարցին, Գյուտ ք. Աղանյանը պահանջում է հիմնադրել Հայոց հնադիտական ընկերություն, փրկելու համար

---

102 «Արձագանք», 1891, № 46:
103 Նույն տեղում, № 50:
104 «Արձագանք», 1893, № 110:
105 «Արձագանք», 1891, № 34:

«այն, ինչ որ ազգի գոյության անհուշ արձան ու վկա է մնացել։ Դոքա են, որ անցյալ փառքի հիշատակ են մեզ համար գիտնական աշխարհի առջև»։ Հոդվածագիրը պահանջում է ուշադրություն և ընթացք տալ երկրում կատարվող հայագիտական աշխատանքներին[106]։

Եթե նույնիսկ այդ օրերին նշանակալից գործ չի կատարվում Ջուղայի վիճակի բարելավման, հայագիտական գրադարան հիմնադրելու և կամ Հայոց հնագիտական ընկերության հաստատման ուղղությամբ, «Արձագանքի» էջերում բարձրացված հարցադրումը ապացուցում է հայագիտական դպրոցի ապրած վերելքը արևելահայ իրականության մեջ։ Դրա ցայտուն դրսևորումն էին հնագիտական, տեղագրական, հայագիտական, ժողովրդական բանահյուսության հետ կապված այն բազմաթիվ նյութերի հրապարակումները, որոնք «Արձագանքը» դարձրին հայագիտական լավագույն օրգաններից մեկը՝ Մխիթարյանների պարբերականներից հետո և «Արարատից» առաջ։

---

[106] «Արձագանք», 1892, № 71։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԷՋԵՐՈՒՄ

«Արձագանքը» հրատարակության առաջին իսկ տարվանից, գեղարվեստական գրականության զարգացմանը խթանելու առումով, շարունակում է «Փորձի» ավանդները։ Սակայն, ի տարբերություն «Փորձի» ժամանակների, «Արձագանքի» հրատարակության շրջանում հայ գրքականությունը մտել էր զարգացման նոր փուլի մեջ և գրողների թիվը դուրս էր գալիս գրական մեկ հանդեսի շրջանակներից։ Խմբագիրները այժմ պետք է ճաշակ և հմտություն ունենային՝ իրենց թերթի հետ կապելու հայ գրականության առավել անվանի մշակներին, որոնք իրենց հերթին, արդեն գրողի բարձր արժանապատվությամբ, ոչ միայն տպագրվելու հնարավորություն էին որոնում, այլև իրենց հայացքների ազատության պայմանով ընտրում էին համապատասխան հոսանքի օրգանը։ Մամուլը հայ իրականության մեջ մնում էր բարոյական այն համախումբ ուժը, որը հոգում էր գրողների նյութական ապահովության հարցը, անուն ստեղծում նրանց համար, բարոյական սատար դառնում գրականությանը։ Այս իմաստով նշանակալից է «Արձագանքի» մատուցած ծառայությունը հայ մշակույթին։ Իր հոդվածներից մեկում Աբգար Հովհաննիսյանը հետևյալ կերպ է մեկնաբանում հայ հասարակական կյանքում գրականության դերի մասին՝ իր ըմբռնումները. «Մենք մի գանձ ունինք,— գրում է նա,— որ մեր ամենագեղեցիկ տիտղոսն է Եվրոպայի առաջ, որ մեզ քաղաքացիության անժխտելի իրավունք է տալիս լուսավորյալ աշխարհում, որ մեր ընտիր ձիրքերի ամենափայ-

լուն արտահայտիչն է, և այդ՝ մեր նորագույն գրականությունն է»[1]: Հովհաննիսյանը խորին համոզմունք է հայտնում, որ «այնպիսի բանաստեղծներ, որպես Դուրյան, Գամառ-Քաթիպա, Պեշիկթաշլյան, Ալիշան, արժանի են ամենայն գրականության մեջ պատվավոր տեղ բռնելու»: Ձեռնարկելով «Armenische Bibliothek»-ի հրատարակության գործին, նա նպատակադրվել էր «ծանոթացնել Եվրոպային մեր գրականության հետ, հաղորդակից անել նրան մեր այդ գանձին, ցույց տալ քաղաքակիրթ աշխարհին, որ «Թէպետ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ բազավորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»[2]:

Իր խմբագրական գործունեության ընթացքում Հովհաննիսյանը պրոպագանդում է հայ գրականության նվաճումները, օգնում բարձրացնելու դրա բարոյական կշիռը հասարակական կյանքում: «Արձագանք» պարբերաթերթը «Փորձից» հետո, և մինչև «Մուրճի» հանդես դալը շարունակում էր մնալ գրական այն հիմնական կենտրոնը, որտեղ համախմբված էին հայ նոր գրականության հիմնական ուժերը: Այդ պահին, 80-ական թթ. երկրորդ կեսին ստեղծագործում էին և՛ հայկական դասական ռոմանտիզմի ներկայացուցիչներ Պատկանյանը, Րաֆֆին, և՛ ռեալիստական դպրոցը ներկայացնող Սունդուկյանը, Պռոշյանը, Աղայանը, Շիրվանզադեն: Նրանց ստեղծագործությունները տոդորված էին սոցիալական անհավասարությունների նշավակման և ազդային-ազատագրական պայքարի պաթոսով, խորհրդանշում էին հայ գրականության դեմոկրատական և ազատասիրական միտվածությունը:

«Արձագանքի» գրական բաժնում տպագրվել են Սունդուկյանի՝ խորապես ռեալիստական «Մասլահաթները» և Շիրվանզադեի արձակը, Պատկանյանի երգիծական էջերը և վիպակները, որոնք հայ աշխատավորության շահերի պաշտպանության իրենց կրքով և բուրժուական հասարակարգի արատավոր բարոյականության քննադատությամբ նոր որակ են հաղորդում մեր գրականությանը: «Արձագանքում» տպագրված Պատկանյանի և Հովհաննիսյանի պոետական գործերը, թեև երկու գրական ուղղությունների դիրքերից՝ արտացոլում էին արևմտահայության ազետալի ճակատագիրը և շեփորում նրա ազատագրական պայ-

---

[1] «Արձագանք», 1896, № 102:

[2] Նույն տեղում:

քարի անհրաժեշտության գաղափարը։ Այդ պոեզիան մամուլի էջերում շնչավորում էր 80—90-ական թթ. հայ ժողովրդի ազատագրական ձգտումների մթնոլորտը։

Բաֆֆին և Մուրացանը «Արձագանքում» հրապարակելով իրենց մեծատաղանդ վեպերը, հայ ժողովրդի պատմական անցյալի ճակատագրական իրադարձություններին հաղորդում էին քաղաքական և արդիական մեծ հնչեղություն, ժամանակակիցներին դաստիարակում բռնակալության դեմ պայքարի և հայրենասիրության ոգով։ «Արձագանքում» տպագրված այլևայլ ժանրերի բազմաթիվ գործեր և թարգմանություններ՝ հիմնականում ամբողջացնում էին պարբերաթերթի առաջավոր գրողների շոշափած խնդիրները։

1880—90-ական թվականներին «Արձագանքի» գրաքննադատական դպրոցի տեսաբանները և մասնավորապես Շիրվանզադեն՝ մեծ եռանդ են ներդնում ռեալիզմի՝ «գրական նոր ուղղության գեղագիտական ըմբռնումների տեսական հիմնավորման» գործում[3]։

«Արձագանքի» շուրջը համախմբված գրական ուժերն առաջնորդվում էին ազգային և սոցիալական պայքարի ոլորտները ոտք դրած իրենց ընթերցողներին քաղաքական և սոցիալական ինքնագիտակցության հասցնելու, նրանց գեղագիտական ճաշակը կրթելու ազնիվ մղումով։ Նրանց գործելակերպը անվերապահ դեմոկրատական իր կնիքն էր դնում նաև «Արձագանքի» ուղղության վրա։

Տեսնենք, թե ի՞նչ կոնկրետ մասնակցություն են բերել ժամանակի հայ գրողները՝ «Արձագանքի» աշխատանքներին։

Գաբրիել Սունդուկյանը թեև «Արձագանքում» տպագրել է Հաղիդի մի քանի մասլահաթը միայն (1882—1886), սակայն միշտ կապված է եղել Հովհաննիսյանի հետ, բաժանել է նրա մտահոգությունները, և ապրել թերթի հաջողություններով։ 1888 թ. Աբ. Հովհաննիսյանը բարձրացրել է Սունդուկյանի գրական գործունեության 25-ամյա հոբելյանը կազմակերպելու հարցը։ «Մեր թատրոնի մթությունը լուսավորող աստղ», այսպես էր բնութագրում նա հայ մեծ դրամատուրգին, միաժամանակ չմոռանալով նրա՝ երդիծաբանի բացառիկ տաղանդը։ «Մշակի» ֆելիետոնի բաժինը «մի ժամանակ Համալի սրամտության հորդահոս աղբյուր էր», գրում է Հովհաննիսյանը և խոստովանում, թե Սունդուկյանը Հաղիդի մասլահաթներով զարդարել է և «Արձագանքը»։ Ար-

---

3 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 4, էջ 60։

պար Հովհաննիսյանը և՛ «Մշակի», և՛ «Արձագանքի» խմբագիրներին հավասարաչափ մեղադրում է Սունդուկյանի հոբելյանի նկատմամբ իրենց դրսևորած անփութության համար։ Այնինչ, նա ընդգծում է, որ Սունդուկյանի վաստակի նշանակությունը դուրս է գալիս հայկական շրջանակներից։ Նա գրում է. Սունդուկյանը «նպաստել է համերաշխության զարգանալու գործին մեր և վրացոց մեջ, որոնց ռևպերտուարում Սունդուկյանցի պիեսները պատվավոր տեղ են բռնում։ Նորա «Քանդած օջախ» դերմանների թարգմանությունը ցույց տվեց եվրոպացոց, որ մենք գտնվում ենք ինքնագիտության շավղի վերա»[4]։

Ալեքսանդր Շիրվանզադեն 1884—1892 թթ. «Արձագանքի» էջերում տպագրել է «Խնամատար», «Օրիորդ Լիզա», «Արամբին», «Ֆաթման և Ասադը», «Տասնհինգ տարի անցած», «Թանկագին կապանք», «Ջուր հույսեր», «Խելագարը» պատմվածքները և վիպակները, «Հաղբատ-Սանահին» ուղեգրությունները։

Հովհաննիսյանը բարձր էր գնահատում Շիրվանզադեի ոչ միայն գրական վաստակը, այլև նրա կատարած խմբագրական աշխատանքը։ Երբ 1887 և 1889 թթ. ամռանը «Armenische Bibliothek»-ի գործով նա մեկնում է արտասահման, երկու դեպքում էլ շաբաթաթերթի 28—38 համարները խմբագրում է Շիրվանզադեն։ Վերադարձից անմիջապես հետո «Արձագանքի» խմբագիրը հրապարակորեն շնորհակալություն է հայտնում իր գլխավոր աշխատակցին, ընդգծելով նրա հմտությունը իրեն լրացրող։ «Սկսելով ներկա համարից դարձյալ մեր խմբագրությամբ հրատարակել «Արձագանքը»,— գրում է Հովհաննիսյանը,— պարտավորություն ենք զգում մեր խորին երախտագիտական շնորհակալությունը հրապարակով հայտնել պ. Ալ. Մովսիսյանին (Շիրվանզադե), որ երեք ամիս շարունակ մեր բացակայության միջոցին վարեց խմբագրի պաշտոնից ծանրագույն՝ ժամանակավոր-խմբագրի պաշտոնը այնպիսի հրապարակախոսական հմտությամբ, որ ընդհանրապես շատ հաղվագյուտ է վիպասաններից մեջ։ Այստեղ ևս ձգտումն դեպի իդեալականը, զայրույթ անիրավության դեմ, մերկացումն մեր կյանքի տրտնող երևույթների, հրավեր դեպի վերածնություն,— ահա պ. Շիրվանզադեի այն գլխավոր հատկանիշները, որոնք միշտ և ամենուրեք պատիվ կբերեն նորա խելքին և սրտին»[5]։

---

[4] «Արձագանք», 1888, № 41։

[5] «Արձագանք», 1887, № 39։

Ա. Հովհաննիսյանի և Րաֆֆու բարեկամությունն սկսվել է շատ վաղուց, մինչև «Փորձի» հրատարակությունը: 1874 թ. Հովհաննիսյանը հրատարակում է Րաֆֆու «Փունջ» ժողովածուի I և II հատորները: Այնուհետև իր գործունեությունը ծավալելով «Մշակի» էջերում, Րաֆֆին միաժամանակ աշխատակցում է «Փորձ» հանդեսին: Նրա և Հովհաննիսյանի հայացքներում առաջացած փոքր տարաձայնությունները կենսունակ չեն դարձնում այդ տարիների ստեղծագործական կապը և Րաֆֆին շարունակում է մնալ «Մշակի» առաջատար աշխատակիցը: Երբ 1884-ին նրան չի հաջողվում հիմնադրել իր, Գ. Միրզոյանի և Ն. Աբելյանի գրական հանդեսը, Րաֆֆին 1885-ին հրաժարվում է աշխատակցել նորաբաց «Մշակին»: Նա հրավիրվում է «Արձագանք» և կյանքի վերջին տարիներին աշխատակցում այդ պարբերականին: «Արձագանքի» էջերում տպագրվել են Րաֆֆու «Խազփուշ» պատմվածքը, «Ղարիբ Մշեցին» վիպակը, «Բրուտի շունը» բանաստեղծությունը: 1885 թ., երբ փակվում են հայկական դպրոցները, ինչպես վկայում է Շիրվանզադեն, Ա. Հովհաննիսյանը խրախուսում է Րաֆֆուն գրելու «Սամվել» վեպը: Այն հրատարակվել է «Արձագանքի» 1886—1887 թթ. համարներում: Այդ առիթով Ա. Հովհաննիսյանը աղդարարում է. «Ոչինչ չխնայելով «Արձագանքի» բովանդակությունը, ըստ չափու կարողության և եղած գրական ուժերի, ընտիր անելու, մենք սիրով ընդունեցինք գրական բարդավաճման նախանձախնդիր անձանց առաջարկությունը՝ ընդհատել տալ այն վիպասանի լռությունը, որի ձայնը այնքան սիրելի էր ընթերցող հասարակության, որի երկասիրությունները մի եղակի երևույթ են ներկայացնում մեր մեջ, տարածվելով մի քանի տպագրությամբ»[6]:

Րաֆֆու մահից հետո «Արձագանքում» տպագրվում են նրա գրական նշխարներից մի քանիսը («Պարսկական նամակները», «Ճանճը» ակնարկը, «Պարկապղուկ ածողները գրականության մեջ» հոդվածը, «Նվեր Վասպուրականի արծվոյն» բանաստեղծությունը):

Ռափայել Պատկանյանի և Ա. Հովհաննիսյանի համագործակցությունը շարունակվում է նաև «Արձագանքի» հրատարակության տարիներին: Շաբաթաթերթի էջերում տպագրվել են Պատկանյանի բազմաթիվ բանաստեղծությունները, պատմվածքները, «Տիկին և Նաժիշտ» վիպակը, «Հայ ուխտավորի նամակները», ուղեգրությունները, «Աստառ» պամֆլետը:

---

[6] Նույն տեղում, 1886, № 7:

1892 թ. բանավիճելով Համբարձում Առաքելյանի հետ, Ա. Հովհաննիսյանը նախկին ջերմությամբ է արտահայտվում Պատկանյանի վաստակի մասին, մեկ անգամ ևս նշելով, որ նրա «Աղատ երգեր» կոչվող «ոսկեշունչ գրքույկը» պետք է զարդարե ամեն մի հայի սեղանը»: Ելնելով այդ ամենից, «Արձագանքի» խմբագիրը Armenische Bibliothek»-ի առաջին դիրքն արդեն նվիրել էր Պատկանյանին, հրատարակելով նրա երեք պատմվածքները («Ես նշանած էի», «Տրացինա», «Պաց աղպար»): 1887-ին նա կրկին մտածում էր այդ մատենաշարի համար թարգմանել Պատկանյանի գործերից, «աչքի առաջ ունենալով,— գրում է նա Պատկանյանին,— որ գրվածքներդ ամենայն իրավամբ մեծ ընդունելություն են գտել Եվրոպայում»: Նա սկսում է թարգմանել «Ջախուն» և խնդրում է Պատկանյանից, նոր արձակ գործեր ուղարկել 7-րդ հատորի համար[7]: «Ռափայել ջան,— գրում է Հովհաննիսյանը,— դու իրավունք ունիս անուն վաստակել Եվրոպայում, քեզ պատկանելի տեղը վայելել ընդհանուր գրականության պատմության մեջ և ես երջանիկ եմ, որ ինձ վիճակվեցավ Եվրոպային ծանոթացնել քեզ հետ»[8]:

Ռափայել Պատկանյանի մահվան արձագանքները հայ մամուլի էջերում ցնցող են: «Հայ սրտերի և ոգու իշխանն անկավ»,— աղդարարում էր «Արձագանքի» առաջնորդողը: Պատկանյանի պատմական ծառայություններից թվում հիշատակվում են մասնավորապես երկու գործ. աշխարհաբարի մշակումը և հայ աղգային բանաստեղծության ստեղծումը:

Պետճ Պռոշյանը «Արձագանքում» անհամեմատ քիչ է տպագրվել: 1888-ին այստեղ հրատարակվել է նրա «Գյուղական վարժապետներ» պատմվածքը, 1894-ին՝ «Աքցիոզլի» վիպակը, 1897-ին՝ «Մխքել աղենց Աբդուլը» պատմվածքը և «Կարմրուկ» զրույցը[9]: Վերջին զրույցի սյուժեն մի վերհուշ է այն իրադարձության, երբ տասնամյակներ առաջ Աշտարակում փակել են տալիս Շապուհ վարժապետի դպրոցը, իսկ ուսուցչին քշում գյուղից: Զրույցն ունի իր ենթատեքստը և արծարծում

---

[7] Հայտնի չէ ինչու, հետագայում VII հատորում նա դնետղում է Սունդուկյանի «Քանդած օջախը», իր թարգմանությամբ:

[8] ԳԱԹ Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 841:

[9] Զարմանալի է, որ «Կարմրուկ» զրույցը դուրս է մնացել գրականագետների ուշադրությունից և տեղ չի գտել Պռոշյանի երկերի ժողովածուներում:

է ժամանակի հայ իրականության կենսական հարցերից մեկը։ Այն թերվականին, երբ գրվում է «Կարմրուկը», հայկական դպրոցներն արգեն փակված էին և հայ մտավորականությունն օգտագործում էր ամեն մի պատեհ առիթ՝ ժամանակակիցներին ահազանգելու մայրենի լեզվին սպառնացող վտանգի մասին։ Պռոշյանը, որ հսկայական վաստակ ուներ հայ դպրոցների բարդավաճման ասպարեզում, գրելով այս գրույցը, կատարում է իր քաղաքացիական պարտքը. նա ընթերցողներին ստիպում է խորհել ստեղծված իրադրության շուրջը[10]։

Մուրացանը կապերը խզելով «Նոր-դար» թերթի հետ, 1896-ից ընկերում է աշխատակցել «Արձագանքին»։ Նրա ստեղծագործության գլուխգործոցը՝ «Գևորգ Մարզպետունի» վեպը տպագրվում է 1896 թ.։ Այնուհետև, մինչև «Արձագանքի» փակվելը, Մուրացանը հրապարակում է «Տիկին Փիլարյանի վիշտը» պատմվածքը, «Առօրյա գրույցներ» շարքից երկու պատմվածք, «Սերն անապատում» խոհական պոեմը և «Երեկ և այսօր» պատկերը։

Վրթանես Փափազյանը 1896 թ. Պարսկաստանից վերադառնում է Թիֆլիս և սկսում աշխատակցել «Արձագանքին»։ 1897 թ. այդ լրագրում տպագրվում են Փափազյանի ինքնատիպ և բարձրարվեստ ստեղծագործությունները, որոնք գերազանցապես նվիրված էին արևմտահայության առօրյային և 1894—1896 թթ. հայկական ջարդերին («Սանթո», «Արյան բծեր», «Ջվարճացանք», «Ոչխարներ», «Առաջին սեր», «Կըշլան», «Մեկը մի փող», «Խենթը», «Երկու թռչուն»)։ Մեծ կտավի գործերից տպագրվել են՝ «Էմմա» և «Ասի» վիպակները։ Փափազյանի վերջին գործերը, որ հրապարակվել են «Արձագանքում»՝ «Հայկական մելոդիաներ» շարքի չորս գրույցներն են։ Անձամբ քաջածանոթ լինելով Թիֆլիսում հաստատված հայ գաղթականների արտասավալի վիճակին, Փափազյանը կերտում է մեկը մյուսից ցնցող պատկերներ, որոնցով նպատակ ուներ արթնացնել տեղացիների գութը՝ նրանց եղբայրներին և քույրերի թշվառության նկատմամբ։ Այս շարքի վերջին գրույցը՝ «Կաղանդի երգը» լույս է տեսել 1898 թ. առաջին համարում։ Կաղանդի զարմանալի տխուր նվեր էր պատրաստել ընթերցողի համար Վրթանես Փափազյանը։

Հետաքրքրական է հիշել, որ Փափազյանը գրական իր առաջին քայլերը նույնպես կատարել է «Արձագանքի» էջերում։ Այս շաբաթա-

---

[10] «Արձագանք», 1897, № 16։

Ներքի առաջին տարվա համարներում տպագրվել են Փափազյանի «Կաֆելանքում», «Հաշրմ», «Խաղողի դողուբյուն» և «Մուրադ աղայի ըսպանումը» պատմվածքները։

Ժամանակի այլ արձակագիրներից «Արձագանքում» տպագրվել են Բ. Այվազյանի մի շարք պատմվածքները և «Աշոտ Երկաթ» պատմավեպը, Ս. Քամալյանի պատմվածքները և ղրույցները, Կրպեի (Կարապետ Հովհաննջանյան) ղրույցները, Ալ. Քիշմիշյանցի, Հ. Գեղամյանցի, Գաբրիել-Մաճկալի (Գաբրիել Մնացականյան-Բաբկենց) արձակ էջերը, Մարգարիտի փոքրիկ պատկերները և այլն։

1892 թ. մինչև «Արձագանքի» հրատարակության վերջը Ա. Հովհաննիսյանի լրագրի էջերում պարբերաբար տպագրվել են Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունները, որոնցից շատերը արտատպություն էին «Արարատից»։ Եթե «Արձագանքում» տպագրված սկզբնական շրջանի նրա բանաստեղծությունները սիրային և բնապաշտական երգեր էին կամ կրոնական տոների հետ կապված հավուր պատշաճի ոտանավորներ, ապա 1896 թ. Հովհաննիսյանի քնարի համար բնորոշ է դառնում քաղաքացիական պաթոսը։ Նրա երգերն ասեք շաւաչում են ցավից, ցասումից, անզորությունից... Հովհաննիսյանն ամբողջ խորությամբ վերապրում է իր ժողովրդին բաժին ընկած մեծ ողբերգությունը և հուսախաբությունը։ 1896—97 թթ. տպագրվում են նրա «Սգո օրեր», «Մայրս», «Եվ նկավ գարուն և անցավ ամառ», «Սարն ի վեր», «Նոր տարի», «Ա՛խ, ես գիտեմ, թվա՛ղ հղբայր», «Նոր գարուն» բանաստեղծությունները։ 1898-ի առաջին համարը բացվում է «Որբի տոնական երգը» բանաստեղծությամբ։

Գեվորգ Բարխուդարյանի թարգմանական գործերից բացի «Արձագանքում» տպագրվել են «Տ. Մկրտիչ ամենայն կաթողիկոս հայոց», «Ներսես հինգերորդ» բանաստեղծությունները, «Նվեր իմ կրիտիկոսին» բանավիճային ոտանավորների շարքը[11]։

Ա. Հովհաննիսյանը տպագրել է «քաջ եվրոպական գրականագետ» Արշակ Չոպանյանի հոդվածները և բանաստեղծությունները, իսկ 1898 թ. նա գրաճել է «Արձագանքի» Փարիզի մշտական թղթակիցը։ Դժբախտաբար լրագրի դադարեցման պատճառով արևելահայ ընթերցողներին

---

[11] Այս ոտանավորները, որ ի դեպ երգիծական երանգ ունենալով հանդերձ սրամիտ չեն, գրված են Գ. Բարխուդարյանի բանաստեղծությունների ժողովածուի մասին Ս. Մանդինյանի գրած գրախոսության առիթով (տե՛ս «Արձագանք», 1897, № 80, 93—97)։

բախտ չի վիճակվում կարդալու Զոպանյանի թղթակցությունները Փարիզից[12]։ «Արձագանքի» 3-րդ համարում տպագրվում է Փարիզի թղթակցի առաջին և վերջին հոդվածը՝ «Ամբոխը» խորագրով։ Այն գրված է Ամանորի տխուր խորհրդածությունների ձևով։

Հովհաննիսյանը տպագրել է Գրիգոր Զոհրապի հոդվածները և «Տալիլյան» նովելը։

Հակոբ Պարոնյանին Ա. Հովհաննիսյանը, ամենայն իրավամբ, համարում է «Փորձի» և «Արձագանքի» աշխատակիցը։ Հիրավի, Պարոնյանը 1880-ի երկրորդ կեսին կանոնավորապես աշխատակցում է «Փորձին» և այնուհետև, 1881-ի հունվար-հունիս ամիսներին թղթակցում Մսերյաննների «Փարոս Հայաստանի» հանդեսին։ Պետք է ենթադրել, որ «Փորձի» խմբագիրը դրամական ճգնաժամի մեջ ընկնելով, իր թղթակցին զգուշացրել էր ամսագրի վերահաս դադարի մասին։ Սակայն, սկսելով «Արձագանքի» հրատարակությունը, մեր կարծիքով, նա Պարոնյանին կրկին աշխատակցության է հրավիրել։ Հակոբ Պարոնյանը «Արձագանքի» խմբագրությանն է ուղարկում «Միծաղներ» նոր ակնարկաշարի երկու հատվածները։ Դրանցից առաջինը, որը գրվել է 1882-ի հունվարի 8-ին, մնում է անտիպ, իսկ «Արձագանքի» առաջին համարում տպագրվում է հունվարի 25-ի թվակիր երկրորդ թղթակցությունը։ Մինչև այժմ առեղծվածային է մնում այն փաստը, որ Հակոբ Պարոնյանի աշխատակցությունը «Արձագանքին» դրանով ավարտվում է։

Ի՞նչը կարող էր լինել այդ լռության պատճառը։ Բանն այն է, որ հունվարի 8-ի երդիծական ակնարկում Պարոնյանը գերազանցապես կանդ է առնում առօրյա հարցերի վրա և իբրև օրվա չարիք՝ քննարկում է Ներսես պատրիարքի հերթական հրաժարականի հարցը։ Խոսելով այն մասին, թե ժողովրդի վրա որքան թանկ է նստում այդ հրաժարականը, Հակոբ Պարոնյանը վճռական հետևություններ է անում։ Նա ծաղրում է աղգային թերթերի խմբագիրներին, որոնցից ոչ մեկը քաջություն չուներ հրապարակավ ասել, թե եթե իրոք պատրիարքը ցանկանում է

---

[12] 1898 թվականին լսելով «Արձագանքի» փակվելու լուրը, Զոպանյանը հետևյալ նամակն է ուղղում Հովհաննիսյանին. «Անհուն ցավով իմացա «Արձագանքին» ջնջման լուրը։ Գրեցի արդեն պ. Փափազյանին՝ տեղեկություններ հայտնելու համար։ Չեք կարծեր դոնե, որ ունէ կերպով շնորհ մը ըլլայի և վճիռը եթե առնվի։ Կովկասի միակ գրական թերթը կորսված կմնա այսպիսով։ Պիտի կրնա՞ք ուրիշ organe մը ստեղծել։ Կմաղթեմ, որ հնարավոր ըլլար այդ բանը» (տե՛ս ԳԱՔ, Արգար Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 45)։

հրաժարվել աթոռից, թող նա դնա և այդ աթոռը ղրաղեցնի ավելի աշխատունակ մեկը։ Ինչ վերաբերում է իրեն, ապա Պարոնյանը հայտարարում է. «Իմ կարծիքս այն է, որ եթե անկեղծ է սրբազան պատրիարք հոր այն հայտարարությունը, թե յուր հրաժեշտն ազգին համար օգտակար է, և անկեղծ չլիներլուն վրա տարակուսելու հանդգնությունը չունինք, հարկ է ընդունել այդ հրաժարականը և թույլ տալ նորին սրբազնության, որ քիչ մը հանգիստ առնու և յուր տկարությունն դարմանե»[13]։ Թվում է, թե հենց այս կարծիքն էլ դարձել է պատճառ, որ Հովհաննիսյանը թղթակցությունը չուղարկեր տպարան։

Երկրորդ ակնարկի հիմքում նույնպես ընկած է այդ հարցը և առավել խորությամբ է լուսաբանվում պատրիարքի հրաժարականի ծանր հետևանքները։ Սակայն ողջ դաղանիքը նրանում է, որ երդիծաբանի հետևությունները արդեն ընդունելի էին. «Հարկ անհրաժեշտ է, որ երևելիները միանան և ազգին պատրիարքն բարձրացնեն վերստին յուր աթոռի վրա, Միծաղներուն թողլով այս խնդրոյն պատճառավ ազգին կրած վնասներուն պատասխանատուն դտնել և ազգին ցույց տալ»[14]։

Ներսես Վարժապետյանը մեծ հեղինակություն էր Հովհաննիսյանի համար, ուստի նա ցավագին էր ընդունում նրա հասցեին ասված ամեն մի անփույթ արտահայտություն։ Հնարավոր ենք դտնում ենթադրել, որ առաջին երկու թղթակցություններն ստանալուց հետո Հովհաննիսյանը խորհուրդ տար Պարոնյանին՝ շրջանցել պատրիարքական հարցը։ Կարծում ենք, Պարոնյանը չի համաձայնվել իրեն կաշկանդել որևէ պայմանականությամբ և այլևս չի ուղարկել իր թղթակցությունները։

Եթե հիշենք և այն, որ «Արձագանքի» հրատարակության հենց սկզբից Հովհաննիսյանի դրամական դործերը շատ խառը վիճակում էին, ապա պետք է ենթադրել նաև, որ նախկին չափերով հոնորար վճարել Կ. Պոլսի իր տաղանդավոր թղթակցին, նա, հավանաբար, չի կարողանում։ Այդ բանից իսկույն օգտվում է Զ. Մսերյանը, որն շտապում է Պարոնյանին կապել իր «Փարոս Հայաստանի» շաբաթաթերթի հետ։ Պարոնյանի երեք թղթակցություններն այնուհետև տպագրվում են «Փարոսում»՝ լուսարար գրական կեղծանունով։

Անկախ այս ամենից, Ա. Հովհաննիսյանը շարունակում է ակնա-

---

[13] «Արձագանք», 1892, № 12։

[14] «Արձագանք», 1882, № 1։

ծանրով խոսել Պարոնյանի մասին, իսկ նրա հիվանդության օրերին և մահվանից հետո տպագրում է Կ. Պոլսի իր թղթակցի մի շարք հոդվածները «Հայ Մոլիերի» հիվանդության ընթացքի և նրա մահվան մասին[15]:

«Արևելքի» մի հոդվածի կապակցությամբ Հովհաննիսյանը հարց է բարձրացնում հայ մտավորականության առաջ, հանգանակություն բացել Կովկասում՝ Պարոնյանի անօգնական ընտանիքին օժանդակություն ցույց տալու համար: «Արձագանքի» խմբագիրը հետագայում «Մասխարա» արտատպում է Պարոնյանի ֆորիզմները, Հրանտ Ասատուրի հոդվածը՝ նվիրված Պարոնյանի խմբագրական գործունեությանը, ինչպես և մեծ երգիծաբանի անավարտ մնացած «Պռույզ» պիեսից մի պատկեր, որի տպագրության առիթով հույս է հայտնում, որ այդ նշխարը՝ իբրև «մեր միակ անղուգական երգիծաբանի գրչի արդյունք, ամենքին կհետաքրքրե»[16]:

Պարոնյանի մահվանից հետո Հովհաննիսյանը հրապարակում է նրա երկու անտիպ հոդվածները: Առաջինը՝ Հոսհոսի ձեռատետրի ըսկիզբն է, որը ժամանակին խմբագրությանն էր հասել մեծ ուշացումով, այն ժամանակ, երբ Ձեռատետրի տպագրությունն ընթացքի մեջ էր և ընթերցողներին ծանուցված, թե «սկիզբը չէ հասել խմբագրությանս»: 1891-ի հոկտեմբերին հրապարակելով անտիպ այդ հոդվածը, Հովհաննիսյանը գրում էր, որ եթե ժամանակին հարմար չի եղել ուշացված հատվածը տպագրել, ապա «այժմ, երբ նշանավոր երգիծաբանի ամեն մի տողը առանձին արժեք ունի, հրատարակում ենք խնամքով պահած այդ հոդվածը: 11 տարի առաջ գրված այդ հիշատակարանը,— շարունակում է նա,— այսօր ևս թարմ տպավորություն է թողնում և ցույց է տալիս մեր գրականության՝ Պարոնյանի մահվամբ կրած մեծ կորուստը»[17]:

Ավելի ուշ, 1892-ի հունվարին, նա հրապարակում է 1882-ին «Արձագանքի» համար նախատեսված Պարոնյանի «Ծիծաղներին» առաջին հոդվածը, որը թեև Հովհաննիսյանը չէր տպագրել ժամանակին, բայց դարձյալ խնամքով պահել էր[18]:

---

[15] Տե՛ս «Արձագանք», 1891, № 7, 14, 15, 19, 30:

[16] «Արձագանք», 1892, № 66:

[17] Նույն տեղում, 1891, № 30—31:

[18] Նույն տեղում, 1892, № 12:

«Արձագանքի» հրատարակության բոլոր տարիներին Հովհաննիսյանը առանձնահատուկ սիրով, գրեթե երկյուղածությամբ է հիշատակել Պետրոս Դուրյանի անունը, հրապարակել նրա մասին խմբագրության ստացած մի շարք նյութեր: Նա արևմտահայ թերթերից արտատպել է Դուրյանի նորահայտ բանաստեղծությունները, հոդվածներ և հուշեր՝ նվիրված նրա ստեղծագործությանը և կյանքի վերջին տարիներին[19]:

Ինչպես «Փորձի» հրատարակության շրջանում, Ա. Հովհաննիսյանը մեծ ուշադրություն է նվիրում հայ գրականության նշխարների հավաքմանը: Այսպես «Արձագանքում» հրատարակվել են Սայաթ-Նովայի երկու անտիպ խաղերը, Բաֆֆու չորս նամակները, Նազարյանի մի անտիպ նամակը (արտատպված «Հանդես գրականական և պատմականից»), և այլն: Հայ բանասիրության պատմության համար կարևորություն է ներկայացնում մի այլ փաստ. «Արձագանքի» 1885 թվականի 26-րդ համարի հետ խմբագրությունը իր բաժանորդներին է ուղարկում Հովհաննես ավագ քահանա Մկրյանի «հատկապես «Արձագանքի» համար պատրաստված» Մեսրովբ Թաղիադյանի մանրամասն կենսագրությունը:

Այս ամենը նկատի ուներ խմբագրությունը, երբ 1892 թ. տարեվերջի առաջնորդողում («Միամյա հաշվեկշիռ»), խոսելով իր կատարած այլևայլ գործերի մասին, նշում էր. «Մոռացության և փոշու տակից հանեցինք մեր հին և նոր գրականության փշրանքներն այն չափով, որ չափով հնարավոր էր մեզ:

Դնպի հավիտենականություն սլացող հայ հանճարների հիշատակը վառ պահեցինք միշտ և նրանց մտքի ծնունդն ամենայն կերպով մատչելի անել աշխատեցինք հասարակության»[20]:

«Արձագանքի» հրատարակության օրերին նույնպես Հովհաննիս-

---

19 Իրրև Դուրյանի անվան սրբացման արտահայտություն պետք է նկատել այն փաստը, որ Հովհաննիսյանը Պատկանյանի մահվանը նվիրված «Արձագանքի» առաջնորդողին դնում է հետևյալ բնաբանը.

Ինծի կըսեն.—«Մի՛շտ ախուր նա»—
«Ինչպե՞ս չըլլամ. մեկիկ, մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք.
Արշալույս մը չանցավ սրտես»:

20 «Արձագանք», 1892, № 152:

յանը բացառիկ ջերմ վերաբերմունք է ցուցաբերել Նալբանդյանի նկատմամբ։ Հայ իրականության մեջ Նալբանդյանի ստեղծագործության առաջին հրապարակային գնահատականը տալիս է Շիրվանզադեն՝ «Արձագանքում» տպագրված իր մի հոդվածում։ Նա գրախոսելով «Հանդես գրականական և պատմականի» երկրորդ գիրքը, շատ բարձր է գնահատում «վաթսունական թվականների մի հուշակավոր բանաստեղծհրապարակախոսի բանաստեղծությունները լեզվի հարստության և ըզգացմանց բարդության տեսակետից», որոնք «սիրով և հաճույքյամբ են կարդացվում ոչ միայն հեղինակի թանկ անվան, այլև իրանց ներքին արժանավորության շնորհիվ»։ Շիրվանզադեն խրախուսում է «Հանդեսի» այս հատորում զետեղված՝ Նալբանդյանի «երկու խոսք» և «Հառաջաբան» գործերի հրապարակման երևույթը[21]։ Տարիներ անց, 1895-ին, «Արձագանքի» խմբագրությունը կրկին գրախոսում է «Հանդեսի» հերթական վեցերորդ գիրքը և ընդգծում այդ հատորում հրապարակված Նալբանդյանի «Ճառի» մեծ կարևորությունը։

1893 թ. Ա. Հովհաննիսյանը «Արձագանքում» տպագրել է Արշակ Բումանյանի «Կաղնի» բանաստեղծությունը, նվիրված Մ. Նալբանդյանին[22]։ Ինքը, Հովհաննիսյանը, սիրում էր՝ իբրև թևավոր խոսք օգտագործել Նալբանդյանի ասույթները և՛ բանավիճային պայքարում, և՛ իր հրապարակախոսական հոդվածներում։

Ժամանակի հայ գրողների ստեղծագործություններից բացի՝ «Արձագանքի» էջերում տպագրվել են և Աբ. Հովհաննիսյանի երգիծական պատկերները և ֆելիետոնները։ Ամեն ինչից երևում է, որ Հովհաննիսյան-ֆելիետոնիստը լրջորեն ուսումնասիրել է Պարոնյանի և Պատկանյանի երգիծական արվեստը, գրել ֆելիետոնների շարք, որը կազմում է արևելահայ լրագրային երգիծանքի ուշագրավ էջերից մեկը։

Բ. ՄԱԽԼԱՍԻ ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐԸ

Ա. Հովհաննիսյանի ֆելիետոնները «Մախլաս» գրական կեղծանունով տպագրվել են «Արձագանք» թերթում, դրա հրատարակության բոլոր տարիներին։ Մախլասի շոշափած թեմանները բազմազան են։ Ներսիսյան դպրոցի հոգաբարձական ընտրությունները, բարեգործական ընկերության ժողովները, քաղաքային դումայի և քաղաքագլխի ընտ-

---

[21] «Արձագանք», 1889, № 47։

[22] «Արձագանք», 1893, № 63։

բութքյունները, թատերական որոշ ներկայացումները և այլ իրադարձություններ նրա գրչի տակ ստացել են երգիծանքի համապատասխան արտահայտչաձև և ավելի դիպուկ դարձրել հրապարակախոսի ասելիքը։

Մշակութային ու հասարակական հարցերից բացի, որոնք Ա. Հովհաննիսյանը քննարկել է քաղաքացիական բուռն կրքով, նա մեծ հաճույքով արձագանքել է և լրագրային բանավեճերին։ Մախլասի բանավիճային հոդվածները հիմնականում ուղղված են «Մշակ» և «Մեղու Հայաստանի» թերթերի դեմ։ Պայքարը «Մշակ» և «Արձագանք» թերթերի միջև անհաշտ էր և տևական։ Թե՛ Արծրունին, և՛ թե Հովհաննիսյանը հաճախ մոռանում էին չափի զգացումը և բանավիճային հոդվածներում դուրս գալիս լրագրային էթիկայի սահմաններից։ Այդ խմաստով եթե որոշ հոդվածներ գրված են սուբյեկտիվ դիրքերից և գրական առանձին արժեք չեն ներկայացնում, երկուստեք գրվել են և ֆելիետոններ, որոնք զուրկ չեն գրական փայլից և հնարամտությունից։ Հովհաննիսյանը սիրում էր ծաղրել «Մշակի» խմբագրի ինքնավստահ ոճը, նրա և աշխատակիցների փոխհարաբերությունները։ Այս թեմային նվիրված ֆելիետոններից ուշադրության են արժանի «Անվերջ վոդեվիլ»-ը, Արծրունու 25-ամյա հոբելյանին նվիրված ֆելիետոնը, Ռուբինշտեյնի հյուրախաղերի առիթով գրված պարոդիան։

«Անվերջ վոդեվիլը» (Չուանը կտրածը) ֆելիետոնում նկարագրված է «Մշակի» խմբագրության առօրյան։ Ռուբինշտեյնի հյուրախաղերին նվիրված պարոդիայում Մախլասը զավեշտի է վերածում Ասիացու մի ֆելիետոնը։ Շատ սրամիտ է կառուցված Արծրունու հոբելյանի առիթով գրված ֆելիետոնը։

Հովհաննիսյան-Մախլասը չբավարարվելով ֆելիետոնի ավանդական ձևով, որտնում և գտնում է երգիծանքի այլևայլ ձևեր ու միջոցներ։ Այս առումով մեծ հետաքրքրություն է առաջացնում Թիֆլիսի քաղաքային դումայի նորընտիր անդամներին տված նրա երգիծական բնութագիրը։ Գրական այդ հնարանքը պատկանում էր նրա ժամանակակիցներից մեկին, որը Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» թերթին աշխատակցում էր «Бедный Макар» գրական կեղծանունով։

1891 թ. սկզբին «Новое обозрение» թերթի խմբագիր Ուսպենսկին տպագրում է դումայի անդամների կենսագրությունները։ Հունվարի 1-ի համարում «Бедный Макар»-ը ռուսական պոեզիայից քաղված տողերով բնութագրում է դումայի 17 անդամներին և մեկ հավաքական խմբ-

բի։ Հունվարի 6-ի, 9-ի և 11-ի համարներում նույն թերթում լույս է տեսնում Մախլասի «Новая Тифлисская дума в характеристике русских писателей» երգիծական բնութագրությունների շարքը։

Ռուս դասական գրականության փայլուն իրագեկությունը հնարավորություն է տվել երգիծաբանին դիպուկ տողերով բնութագրելու քաղաքային դումայի 72 անդամներին։ Այս բնութագրերի համար օգտագործված են Գրիբոյեդովի, Ժուկովսկու, Լերմոնտովի, Կռիլովի, Պուշկինի, Դերժավինի, Գոգոլի, Բատյուշկովի, Դմիտրիևի, Կուրոչկինի, Կոզլովի, Կոլցովի, Նեկրասովի, Վյազեմսկու և այլ գրողների ստեղծագործությունները։ Մի ճաշակ տալու համար երգիծական այս հնարանքի մասին, դիմենք երգիծաբանի ստեղծած պորտրեներին[23]։

Др. С. Б. Халатов
«Поросенок есть?»
— Есть.
«С хреном и со сметаною?»
— С хреном и со сметаною.
«Давай его сюда!»
(Гоголь, «Мертвые души)

Н. Я. Николадзе
Напрем, ударим, поразим!
(Дмитриев)

Г. Г. Шахбудагов
Осторожность! осторожность!
Осторожность, господа!..
(Некрасов)

А. Ф. Придонов
Нет у нас денег на дело,
На безобразие есть.
(Жулев)

А. А. Иоаннисиани
Будет буря — мы поспорим,
и поборемся мы с ней!
(романс Языкова)

---

[23] «Новое обозрение», 1891, № 2423, 2425, 2427.

Անցնում է երեք տարի։ Քաղաքային դումայի հերթական ընտրությունները հետո Ա. Հովհաննիսյանը վճռում է կրկնել հին փորձը և դումայի անդամներին բնութագրել՝ այս անգամ հայ պոեզիայի ընձեռած հնարավորություններով։ Հետաքրքրական է, սակայն, որ բոլոր իր հերոսների համար նա սպառիչ նյութ է գտնում բանաստեղծ Ռ. Պատկանյանի ստեղծագործություններում։ Եվ այսպես, Ա. Հովհաննիսյանը Ռ. Պատկանյանի տողերով ընթերցողներին է ներկայացնում Թիֆլիս քաղաքի «հայրերին» և նրանց «աշխարհայեցողությունը»[24]։ Բերենք մի քանի օրինակ.

Իսահակ Մովսեսյանց

Չէ, չէ, թևև դու բորսայի ես զարդ
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ։

բժ. Խուդադյանց

Տումային մեջն ալ լիպեռալ իմ ես
«Քաղաքս ծաղկեցնունք», կը կանչեմ թեզ թեզ։

Բարսեղ Կանդուրալյան

Հալխին մեջ սուս-փուս բանըս կը նայեմ։

Ս. Ս.

Որդյակ, թե քեզի շատերն նըմանին,
Շուտ իրը մնալու չէ Հայաստանին[25]։

Աբգար Հովհաննիսյան

Անգութ ողնանց, մի՞թե չես տալ
Աղետալի բախտս սգալ։

Ա. Հովհաննիսյանը Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերի» նմանությամբ ստեղծել է արևելահայ ջոջերի չորս դիմանկար («Ներսիսյան դպրոցի 12 նորընտիր հոգաբարձուները»)։ Այս շարքի առաջին ակնարկը նվիրված է նորընտիր հոգաբարձու, բժիշկ Իվան Զաքարիչ Լորիս-Մելիքովին։ Ակնարկը կառուցված է ինքնին զավեշտական մի քանի դրվագների վրա, որոնք վեր են հանում հերոսի կեցվածքի և էության մի-

---

[24] Տե՛ս «Արձագանք», 1894, № 1, 3։

[25] Դումայի որոշ անդամների մասնավոր նրբանկատորեն անվանում է Ս. Ս., Ս. Ս., Զ. Զ.։

ջև եղած աղաղակող հակասություններըը, մերկացնում՝ կարիերայի հասնելու նրա տենչը: Այսպես, երիտասարդ բժիշկը ներկայանում է իբրև հայազգի ղորավար, պետական գործիչ Մ. Լորիս-Մելիքյանի եղբորորդին, մինչդեռ հայտնի է դառնում, որ նրանց միջև անգամ հեռավոր բարեկամություն չկար: Ղորավարի մահվանից հետո բժիշկը Փարիզում մի ամբողջ տարի «օրինակելի ճշտությամբ» սուգ է պահում, անելով այն ամենը, ինչ պատշաճ է մերձավոր ազգականի հիշատակը հարգելու համար (գլխարկի վրա սև ժապավեն է կրում, այցեքարտը պատվիրում է սև շրջանակով, պատեհ անպատեհ առիթներով լալաձայն ասում է՝ «իմ հանգուցյալ հորեղբայրը»): Գալով Թիֆլիս, նա դարձյալ ճանաչված անունների շուրջն է պտտվում և ժողովրդականություն է ստանում Արծրունու հիվանդության առիթով: «Բժշկում էր, ինչպես մեր շատ վաղամեռիկ հայ գործիչներին, ինքը դոկտոր Գասպարյանը, իսկ բժիշկ Լորիս-Մելիքովը խնամում էր հիվանդին, չէր հեռանում նորա անկողնից. հուղարկավորության միջոցին բժիշկը սգալից դեմքով, սև ձեռնոցներով, ճիշտ ինչպես defunt oncle-ի մեռած ժամանակ, թև տված առաջնորդում էր այրիին»[26]:

Հասարակական կյանքում նա ցուցադրաբար ծայրահեղ առաջադիմական կուսակցությանն էր հարում (իմա՝ մշակական), բայց Մախլասը ծաղրում է նրան, հրապարակելով բարեգործական նպատակներով կազմակերպված միջոցառումներին նրա... համեստագույն մասնակցությունը: Լորիս-Մելիքովի կարիերիզմը երգիծաբանը ներկայացնում է ոչնչացնող սարկազմի միջոցով: Վախճանվում է բժշկի մայրը, դեռևս մորը չթաղած, որդին շտապում է հոգաբարձական ընտրությունների՝ իր թեկնածության համար ագիտացիա կազմակերպելու.

«Արդ՝ ի՞նչը, այո՛, ի՞նչը, եթե ոչ քաղաքացիական պարտաճանաչությունը կարող էր թելադրել փափկասիրտ բժշկին, որ մի ամբողջ տարի սուգ պահեց Փարիզում իր հռչակավոր oncle-ի համար, գլխարկին սև քող կրելով և այցետոմսը սև շրջանակով զարդարելով,— թողնել իր հարազատ մոր անշնչացած դիակը սեղանի վրա և անձնատուր լինել ընտրողական պայքարին...

Չէ՛, թշվառ չէ Հայաստան,
Եթե որդիք այսպես ե՛ն»[27]:

---

[26] «Արձագանք», 1894, № 80:

[27] Նույն տեղում:

Իբր ի միջիայլոց, Մախլասը շեշտում է նաև, որ Ներսիսյան դպրոցի նորընտիր այդ հոգաբարձուն և հասարակական գործիչը հայերեն չգիտեր, բայց իսկույն էլ իրոնիայով ավելացնում է. «19-րդ դարու վերջին պահանջել, որ հայ գործիչը հայերեն իմանա, արդարև մի նախապաշարմունք է. և միթե՞ ինքը մեծ բանաստեղծը չի ասել՝

Ո՞վ է հայը, միթե նա է, որ խոսում է հայ լեզվով,
Կամ թե որի մականունը հանգում է «յան» մասնիկով։

Ժամանակակիցների վկայությամբ ֆելիետոնը այնպիսի աղմուկ է բարձրացնում, որ Լորիս-Մելիքովը հեռանում է Թիֆլիսից և բնակություն հաստատում Փարիզում[28]։

Երկրորդ ակնարկը նվիրված է հրապարակախոս, լրագրող Ալեքսանդր Քալանթարյանին, որի դեմ Մախլասը հաճախ էր բանավիճում։ Քալանթարի նկատմամբ Հովհաննիսյանի անբարյացակամությունը, սակայն, պետք է բացատրել ոչ այնքան հրապարակախոսի անձնավորությամբ, որքան նրա թերթի անունով։ Քալանթարը խմբագրում էր «Մշակը», որը Արծրունու մահից հետո էլ շարունակում էր թշնամական հարձակումները «Արձագանքի» դեմ և, բնականաբար, ստանում էր պատասխան հարվածներ։ Երդիծական այս ակնարկում (և այլուր) զավեշտի աղբյուր է դառնում Քալանթարի դյուղատնտեսի մասնագիտությունը։ Մախլասը հակադրում է հույժ երկրային այդ մասնագիտությունը հրապարակախոսությանը և ստեղծում ծիծաղաշարժ դրություններ։

Երրորդ ակնարկի հերոսը նոտար, պալատական խորհրդատու, ինքնուս իրավաբան Բալաբեկ Մելիք-Ղարագյոզյանն է։ Մելիք-Ղարագյոզյանը ժամանակի ձեռներեց գործիչներից մեկն էր, որ ևկել էր Շուշիից, կարճ միջոցում հարստացել, ապա ձեռք բերելով նաև աղգային գործչի համբավ, ընտրվել Ներսիսյան դպրոցի հոգաբարձու։ Նա Թիֆլիսում աղմուկ է հանում իշխան Ջորջաձեի գործով, որին դարձնում է իր կոմպանյոնը, խաբում և հասցնում սնանկության։ Իր, այսպես կոչված, հասարակական պարտականությունները նույնպես նա կատարում էր, ելնելով սեփական շահերից, ուստի Սիմոդը նրան աղատում է հոգաբարձուի պաշտոնից։ Չնայած այս ամենին, Մելիք-Ղարագյոզյանը շարունակում էր դիտվել իբրև աղգային «աննկուն» գործիչներից մեկը և 1894-ին դարձյալ ընտրվում է Ներսիսյան դպրոցի հոգաբարձու և քաղաքային դումայի անդամ։

---

[28] Տե՛ս ԳԱՔ, Ա. Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 3։

Հայ հասարակական կյանքում տխրահռչակ մելիք-ղարագյոզյանների հաջողության հնարավորությունը, որ ժամանակի մտավորականության անտարբերության հետևանքն էր, դառնում է Մախլասի երգիծանքի աղբյուրը: «Երջանիկ հասարակություն,— փորձում է հեգնել Մախլասը:— Բայց ո՛չ,— շարունակում է նա,— ես զգում եմ, որ սկսեցի վատ ոճով գրել, «քաղաքացիական վիշտ» արտահայտել, մինչդեռ թերթոնագրի պաշտոնն է թեթև ոճով զրուցել, սրամիտ լինել...»[29]: Եվ ահա Մախլասը ձեռքն է առնում բանաստեղծի գրիչը և չափածո տողերով գովերգում իր հերոսին... Հայ գրականությունը հարստանում է «Անվնաս մարդը» բանաստեղծության երկրորդ ծնունդով, որը մինչ այժմ դուրս է մնացել գրականագետների ուշադրությունից: «Անվնաս մարդը» բանաստեղծության բնաբանն առնված է Ռ. Պատկանյանի համանուն բանաստեղծությունից.

«Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումս մարդու վնաս չի արի»:

Մախլասի այս ելույթը նույնպես մեծ հաջողություն է ունենում և թարգմանվում ու հրատարակվում է վրացական մամուլում:

Չորրորդ ակնարկի հերոսն է բժիշկ Կարապետ Քոչարյանցը: Մախլասը հարցազրույցի կենդանի ձևի միջոցով ծաղրում է տնաբույս բժըշկի ողորմելի գիտելիքները, հասարակական կյանքում նրա բացարձակ անպետքությունը:

Բառախաղի ստեղծման փայլուն օրինակներից է ուսուցչական ժողովի նյութի միջոցով ժամանակի արևելահայ բոլոր պարբերականներին Մախլասի տված դիպուկ բնութագիրը: «Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը փակվեցավ: Ի բոլոր սրտե ցանկանք, որ այս ժողովի վճիռները արձագանգ գտնեն գավառներում, որ այսուհետև մանկավարժական հարցերը եռանդով մշակվին[30], որ ուսուցիչների կատարելիք գործը արժանի լինի փորձին[31], որ վարժարանք[32] համապատասխանեն յուր վսեմ կոչման, տա ասուված, որ ուսուցիչների համբերության չափը հավասարվի «Մեղվի» առաջնորդող հոդվածների եր-

---

29 «Արձագանք», 1894, № 84:

30 Նկատի ունի «Մշակ» լրագիրը:

31 Ակնարկում է Ս. Հախումյանի՝ «Գործ» հանդեսի էջերում «Փորձին» տված անփույթ գնահատականը և առաջինը ստորագրում է «Փորձին»:

32 Բառախաղը վերաբերվում է Նիկ. Խորովյանի «Վարժարան» պարբերականին, որն սկսել էր հրատարակվել 1882 թ. Թիֆլիսում:

կարուիյան։ Այս բոլորը անհրաժեշտ է, որպեսզի Արարատի ստորոտում[33] գումարվելի երկրորդ ժողովը արժանավոր կերպով պսակե այն արդյունքները, որ[34]...

Սակայն «Պսակ» խոսքը կտրեց մեր մտածմունքների թելը...»[35]։

1895 թ. Ա. Հովհաննիսյանը մի ֆելիետոնում կշտամբում է «Մշակի» և «Տարազի» աշխատակիցներ շիրվանցիներին (Մելքումյան-Շիրվանցի և Շիրվանզադե), նրանց սկսած բանավեճի համար։

Ծանր օրեր էին. թերթերը ողողված էին Արևմտյան Հայաստանից հասնող ողբերգական լուրերով և Մախլասի խորին համոզմունքով՝ զբոսղի և հրապարակախոսի քաղաքացիական խիղճը չպետք է թույլ տար ղբաղվելու մասնակի հարցերով։ Տարօրինակ է տեսնել,— գրում է նա,— որ մի պարոն «հայկական խնդրի այս տաք ժամանակ, հարմար առիթ է գտել ղբաղվելու «Մշակի» էջերում գեղարվեստական հարցերով. այս նորագույն Բելինսկին (Մելքումյան-«Շիրվանցի») մի երկար, տակավին չվերջացած ֆելիետոն է դրել «Տենդենցիան գեղարվեստի մեջ» վերնագրով։ Իհարկե մեր այս տագնապալի օրերում գեղարվեստով ղբաղվելը, մինչև անգամ այնպիսի գեղարվեստով, ուր տենդենցիա կա, մի անմեղ պարապմունք է, այնքան անմեղ, որին նույնիսկ տաճկաց տերությունը թույլ է տալիս ամբողջապես անձնատուր լինել Թուրքիայի հայ լրագիրներին»[36]։

Ինչ վերաբերում է իրեն, Աբգար Հովհաննիսյանին, ապա նա մըտնում է առավել պատասխանատու և ծանր բանավեճի մեջ՝ ցարական ռևակցիոն պարբերականների հետ։ Սուվորինի և Վևլիչկոյի շովինիստական և աղգատյաց թերթերի դեմ պայքարի ելնել Մախլասի ֆելիետոններով՝ անիմաստ կլիներ։ Հարկավոր էր հրապարակախոսական արվեստի և դիվանագետի տրամաբանության օգնությամբ հերքել հայերի դեմ այդ թերթերի հերյուրած մեղադրանքները, ուստի Հովհաննիսյանը և նրա աշխատակիցները քաղաքական այդ պայքարը վարում

---

33 Ուսուցչական հաջորդ ժողովը որոշված էր անց կացնել երկու տարի անց՝ էջմիածնում։ «Արարատի ստորոտում» արտահայտությունը մատնանշում է Հովհաննիսյանի անբարյացակամությունը «Արարատ» ամսագրի նկատմամբ։

34 Ընդհատելով միտքը, Մախլասը ակնարկում է այն իրողությունը, որ այդ ժամանակ Կովկասյան դրաքննական կոմիտեի կողմից «Պսակը» ժամանակավորապես դադարեցված էր։

35 «Արձագանք», 1882, № 31։

36 «Արձագանք», 1895, № 68։

ևն առաջնորդողների և լրագրային ծանրակշիռ տեսությունների միջոցով[37]: Սակայն Ա. Հովհաննիսյանը այս օրերին էլ, երբևմն չկարողանալով զսպել հակառակորդին ծաղրելու ցանկությունը, մարտի դաշտը պիջում էր Մախլասին:

Նրա «Ազատ լրագիր» վերջին ֆելիետոնը «Արձագանքի» էջերում երևում է 1898 թ. առաջին համարում: Դա հայ քաղաքական երգիծանքի լավագույն օրինակներից է, որի միջոցով երգիծաբանը մերկացնում էր սուլթանական Թուրքիայի ծանոթ լրագրության ցինիզմը: Բանն այն էր, որ Պոլսում 1890-ից հրատարակվող «Osmanische post» լրագիրը 1898-ի հունվարից իբր թե խուսափելու համար օսմանյան դրաքննության հետապնդումներից, փոխագրվում է Վիեննա: Ընդգծելու համար իր ստացած ազատության փաստը, խմբագիրը փոխում է թերթի վերնագիրը, այն դարձնելով «Freie Osmanische post», որ թարգմանի «Ազատ օսմանյան փոստ» հենդում է Մախլասը, և իսկույն էլ ավելացնում. «Ազատ» և «Օսմանյան», որքա՜ն սազում են միմյանց այդ խոսքերը...»: Հարկավոր էր հրապարակավ ցույց տալ կեղծիքը և Ա. Հովհաննիսյանը մերկացնում է խմբագիր Ռոզենֆելդի գործունեությունը՝ նրա իսկ հրապարակած նյութերով: Մախլասը նշում է, որ նա՝ Վիեննայի իր «ազատության մեջ» պրոպագանդում է «մեծ քաղաքագետ», «բարեգործ» և «արդարամիտ» Համիդի քաղաքականությունը, պահանջելով միմիայն այն, ինչ հարկավոր էր Թուրքիային այդ պահին (նվամատական վիճակի կանոնավորում, դատավորական դասի բարելավում, մասնավոր ազատություն»): Ընդ որում, հաստատում է Մախլասը, Ռոզենֆելդը համոզված է անձնապես, թե թուրքական թերթերը (և ի՛ր թերթը) որքա՜ն ազատ են... կառավարությանը շողոքորթելու և քծնելու գործում:

«Ոչ, Ռոզենֆելդին Թուրքիայի հետ միացնող ժապավենները, ներողություն, կապերը շատ քնքուշ են,— գրում է Հովհաննիսյան-Մախլասը:— Երևակայեցեք, ընթերցող, որ թողնելով Պոլիսը, նա ընդարձակ Վիեննայում իր խմբագրության համար այլ փողոց չի գտել, բացի Türkenstrasse, որ պատահական զուգադիպություն է միայն, վասնզի բնավ հարկ չկա, որ տաճկական փողով հրատարակվող մի թերթ անպատճառ տաճկական փողոցում խմբագրվի...»[38]:

---

[37] Այդ հոդվածներին մենք անդրադառնում ենք «Արձագանքը» բանավիճային պայքարում» գլխում:

[38] «Արձագանք», 1898, № 1:

Սա Մախլասի կարապի երգն էր։ Երկու շաբաթ անց «Արձագանքը» դադարեցվում է։

Ժամանակակիցներից շատերն են խոսել Մախլասի ֆելիետոնների ժողովրդականության մասին։ Ալ. Շիրվանզադեն իր մեմուարներում անկեղծորեն խոստովանում է, թե «նա տաղանդավոր ֆելիետոնիստ էր և ամենասրամիտը, որ երբևէ ունեցել է հայ մամուլը։ Նա կլիներ երևելի երգիծաբան, եթե իրան չմանրացներ»[39]։ Ինչո՞վ է բացատրվում Ա. Հովհաննիսյանի ֆելիետոնների հմայքը։ Ամեն բանից առաջ՝ ինչպես նրա հրապարակախոսական ելույթները, երգիծական ստեղծագործությունները ևս օժտված են ժամանակի նուրբ ղգացողությամբ։ Հովհաննիսյանը բազմաթիվ թելերով կապված լինելով հայ հասարակական կյանքի հետ, կարողանում էր ժամանակին արձագանքել կյանքի առաջադրած կենսական հարցերին։ Այնուհետև Հովհաննիսյանի երգիծական ստեղծագործություններն աչքի են ընկնում իրենց տրամաբանական ուժով։ Հովհաննիսյան-երգիծաբանի հաջողությանը մեծապես նպաստում է հայ երգիծական գրականության հմտալից օգտագործումը (Պարոնյան, Պատկանյան)։ Հայ դասական գրականության նրա կողմից օգտագործված օրինակները ներդաշնակության կազմելով հեղինակային խոսքի, տրամադրության և դաղափարախոսության հետ, ստեղծում են երգիծանքի մի նոր որակ։

Սակայն հարուստ է և Ա. Հովհաննիսյանի երգիծանքի սեփական դինամոյը։ Նա ստեղծում է սրամիտ բառախաղեր (հրեա Ռոզենֆելդին կոչում է «Թափառական խմբագիր»), հակադրություններ (բժիշկ Լորիս-Մելիքովի ազգանվան հնչյունները փափկացնում է, այն դնելքում, երբ զորավարին կոչում է Լոռու-Մելիքյան), համապատասխան ոճի միջոցով անձնավորում է իր հերոսներին և այլն։

Մախլասի ֆելիետոնների անսպասելի, նովելի ժանրին հատուկ վերջաբանը շատ տպավորիչ է դարձնում ստեղծագործությունը։ Սակայն, միշտ չէ, որ նրան հաջողվել է ստեղծել լիարժեք գրական գործեր։ Ճիշտ է, նա խուսափել է կենցաղային մանրուքից և ջանացել լուսաբանել հասարակական նշանակություն ունեցող խնդիրներ, բայց երբեմն էլ դրել է հավուր պատշաճի պարզունակ ֆելիետոններ։ Այն տարիներին, երբ ստեղծագործում էր Հովհաննիսյանը, երգիծանքի ժանրը հայ լրագրության մեջ մեծ կշիռ ուներ։ Իրենց ֆելիետոններում հասա-

---

[39] Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, 1951, հատ. 8, էջ 150։

բակական կյանքի օրվա հարցերն էին շոշափում Արծրունի-Ասիացին, Սիմեոնյան-Քաղքցին, Հովհաննիսյան-Մախլասը: Հայ լրագրողները, բնականաբար, միշտ չէ, որ ղեկավարվում էին ֆելիետոնի ժանրին առաջադրված գրականագիտական պայմանականություններով: Նրանք երբեմն բանավեճի մեջ մտնելով միմյանց դեմ, հրապարակում էին ըշտապողականությամբ գրված իրենց հերթական ֆելիետոնը և ընկնում էին ծայրահեղությունների մեջ: Այս դեպքում էական նշանակություն էր ստանում փութաջանության հարցը և հասցվող հարվածի դիպուկությունը:

Գրականության պատմաբանին է մնում հանգամանորեն ուսումնասիրել անցյալ դարի վերջին քառորդի արևելահայ լրագրային երգիծանքի ժանրի գործերը և ճշտել դրանց պատմական ու գեղագիտական արժեքը: Ինչ վերաբերում է Ա. Հովհաննիսյանին, ապա նրա ֆելիետոններն անպայման նպաստել են դարասկզբի արևելահայ երգիծական մամուլի հրապարակ գալուն:

Գ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արձագանքի» մշտական բաժիններից էր թարգմանական գրականության բաժինը: Ընթերցողն այստեղ հնարավորություն է ունեցել պարբերաբար ծանոթանալու ոչ միայն ռուս և եվրոպական գրականության ուշագրավ էջերին, այլև բազմաթիվ դասական հեղինակների կյանքի ու գործունեության հետ: Ա. Հովհաննիսյանը, որ քաջ ծանոթ էր ժամանակի ռուս և եվրոպական գրականությանը, հայ ընթերցողներին է ներկայացրել դրանց լավագույն օրինակները: «Արձագանքում» տպագրվել են Տուրգենևի «Հաղթական սիրո երգը» պատկերը, Լերմոնտովի «Երեք արմավենին»՝ Պատկանյանի թարգմանությամբ և «Արևմուտքը բորբոքվում է բոցավառ» ու «Վհեճ» բանաստեղծությունները՝ Գ. Բարխուդարյանի թարգմանությամբ, Պլեշչեևի «Հառա՜ջ» բանաստեղծությունը, Նեմիրովիչ-Դանչենկոյի «Կույր երաժիշտներ», Բայլմոնտի «Սավերներ», Իվան Նիկոլաևսկու «Հաստարակաց բարիքի համար կամ գյուղական վարժուհի» ստեղծագործությունները:

Տարբեր առիթներով հոդվածներ են նվիրվել Գրիբոյեդովին, Սալտիկով-Շչեդրինին, Պլեշչեևին: «Արձագանքի» խմբագրությունը բարձր է գնահատել Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործության քաղաքացիա-

կան միտվածությունը, հասարակության շահերին նրա նվիրվածությունը։ Ռուս անվանի գրողի մահախոսականում հետևյալ կերպ է բնութագրվում նրա դիմագիծը։ «Մոտ 25 տարի ամենայն հաստատակամությամբ նա հետևում էր ռուսաց կյանքի առաջադիմական հոսանքին և վերջին տարիները հասարակական մտքի պարագլուխ դարձավ։

Նրա գեղարվեստական տաղանդը նվիրված էր հասարակական հարցերի. նա ոտով-գլխով հրապարակախոս էր և կարծում էր, որ ինչպես ամեն մի գիտության, նույնպես և արվեստը պիտի ծառայե հասարակական շահերին, հասարակության առաջադիմության, որից դուրս նա անօգուտ և աննպատակ էր համարում արվեստի գոյությունը»[40]։ Շատ հատկանշական է, որ Հովհաննիսյանը և նրա աշխատակիցները բազմիցս դիմում են Շչեդրինի ստեղծագործությանը («Пропала совесть»), օգտագործում են նրա ասույթները և վկայակոչում նրա մերկացնող ուղղության պատմական մեծ նշանակությունը[41]։ «Արձագանքի» աշխատակիցները օգտագործել են Կռիլովի առակները, Դոբրոլյուբովի թևավոր խոսքերը («Մի ճառագայթ՝ խավարի թագավորության մեջ»), Նեկրասովի բանաստեղծություններից առանձին տողեր և այլն։ Իբրև բնաբան օգտագործել են Պլեշչեևի բանաստեղծությունից առնված մի քառատող։

Փիլիպոս Վարդանյանի շնորհիվ «Արձագանքի» բնթերցողները ծանոթանում են Պլեշչեևի գործունեության հետ։ Բանաստեղծի մահվան առիթով խմբագրությունը տպագրում է Վարդանյանի հուշերը և Պլեշչեևի «Հառա՜ջ» բանաստեղծությունը՝ Հ. Հովհաննիսյանի թարգմանությամբ։

Հառա՜ջ աննկուղ, առանց վարանման,
Ընդայրք դեպի գործ դիմենք սխրալի,
Երկնքումն արդեն մեր սուրբ փրկության
Ես այդը տեսա վառված, լուսալի...

Բանաստեղծը կոչ է անում գիտության դրոշին ապավինած՝ ձեռք-

---

[40] «Արձագանք», 1889, № 17։

[41] Ալ. Երիցյանն իր «Դրավաճառ Դասպար» պիեսում ստեղծում է մի ուշագրավ հակադրություն։ Մինչդեռ մի ռուս տիկին գրավաճառից խնդրում է Սալտիկով-Շչեդրինի «Գավառական ակնարկները» (որն, իհարկե, չկար խանութում), երկու հայ կանայք խնդրում են տխրահռչակ Ռնեոմափին։ Այդ «պատվական դիրքը» դրավաճառ Դասպարը խոստանում է իսկույն բերել նրանց համար։

ձևոքի տալ և ընթանալ ճշմարտության ճանապարհով, պայքարել չարիքի ու կեղծիքի դեմ, մաքառել ազնիվ գաղափարների համար[42]:

Փիլիպոս Վարդանյանը Պլեշչեևի հետ ծանոթացել էր 1863-ին: Նրա տանը ծանոթանում է ռուս մի շարք գործիչների և ականավոր դերասաններ Սադովսկու և Ֆեդոտովայի հետ: Այդ օրերին էլ նա Մեծ թատրոնի բեմում դիտում է հռչակավոր Լեբեդևայի խաղը: 1864-ին, Պլեշչեևի կնոջ եղերական մահից հետո Վարդանյանն ավելի է մտերմանում բանաստեղծի հետ և օգնում նրա գրական աշխատանքներին: Հայնեի «Փարիզի նամականին» թարգմանելու ժամանակ Պլեշչեևը թելադրում էր, ասում է Վարդանյանը, «և գրիչս հազիվ էր հասնում նրա ետևից: Շատ բան նա բաց էր թողնում բնագրից, ասելով, թե ավելորդ է թարգմանել, քանի որ գրաքննիչը չպիտի թույլ տա այդ կտորները տպագրել: Եվ դրանք իհարկե գրքի ամենալավ հատվածներն էին, որ նա թարգմանում էր ինձ համար բերանացի»[43]:

Ա. Ն. Պլեշչեևը անցյալ դարի կեսերի ռուսական պայծառ մտածողներից մեկն էր, որն իբրև Պետրաշևցիների խմբակի անդամ Դոստոևսկու և Շևչենկոյի հետ 1849-ին աքսորվել էր Սիբիր և վերադարձել միայն 1859-ին: 1863—64 թվականներին իբրև վկա՝ նա երբեմն հրավիրվում էր Ջերնիշևսկու դատավարությանը և իր հայ բարեկամին պատմում ռուս ականավոր հրապարակախոսի մասին: Փ. Վարդանյանն իր հերթին Պլեշչեևին է ներկայացնում Նալբանդյան-բանաստեղծին և հասարակական գործչին:

«Արձագանքի» խմբագրությունը մեկ անգամ չէ, որ զանազան առիթներով արտահայտել է իր անվերապահ ակնածական վերաբերմունքը ռուս դասական գրականության նկատմամբ և անգամ բանավեճի մտնել ցարական ռեակցիոն թերթերի դեմ, որոնք անհարգալիր արտահայտություններ էին թույլ տալիս ռուս մեծ գրողների հասցեին: «Զանազան» բաժնի տակ խմբագրությունը հրապարակում է մի հաղորդում այն մասին, որ Խարկովում՝ Տուրգենևի մահվան 10-ամյակի առիթով, նրա անվան զարդոց կառուցելու համար հավաքված դրամարներից քաղաքային խորհուրդը վերցրել է 3000 ռուբլի: Այդ դրամարով որոշված էր նոր բնակարան կառուցել ոստիկանապետի համար և հիմքից վերանորոգել ոստիկանատունը: «Արձագանքի» խմբագրությունը հա-

---

[42] «Արձագանք», 1893, № 129:

[43] «Արձագանք», 1893, № 129, 130:

ղորդմանն ավելացնում է միմիայն մեկ նախադասություն, բայց որքա՜ն զգացումներ էր արտահայտում այն. «Այսպիսով մոտավոր ապագայում Խարկովը կզարդարվի փոխանակ Տուրգենևի անվան դպրոցի, իր հիմաց նորոգված ոստիկանատնով»[44]:

Հովհաննիսյանն իր թերթում զգալի տեղ է նվիրել նաև եվրոպական գրականությանը: Սակայն, քանի որ «Արձագանքը» չուներ «Փորձի» հնարավորությունները, այստեղ տպագրվել են միմիայն փոքր ծավալի գործեր: Դասական հեղինակներից «Արձագանքի» էջերում հրապարակվել են Մոպասանի 10-ից ավելի նովելները, Իբսենի «Նորան», Դոդեի, Տվենի, Վաշինգտոն Իրվինգի, Սենկևիչի, Ժյուլ-Վերնի պատմվածքները, հատվածներ Վոլտերի, Մոլիերի, Հայնեի, Ջիովանիոլիի երկերից: Տպագրվել են Շիլլերի «Զանգակի երգը», Հյուգոյի «Արշալույսին», Պետեֆիի «Իմ կինը և իմ սուրը», «Որդուս ծննդին», «Երկաթուղի» «Իմ սիրտը» և «Երջանիկ մարդ» բանաստեղծությունները: Պետք է նկատել, որ արտասահմանյան գրականությունից Հովհաննիսյանի կատարած ընտրությունները միշտ չէ, որ կատարյալ են: Այս բաժնում հանդիպում են երկրորդական հեղինակներ, որոնք մոռացվել են: Տպագրվել են զրույցներ և պատմվածքներ, որոնց թեմատիկան առնված է սենտիմենտալ փոխհարաբերությունների, վիրավորված արժանապատվության, վրեժխնդրության և առհասարակ մարդկային կրքերի այլևայլ ոլորտներից: 16 տարվա կյանք է ունեցել «Արձագանքը», նյութական և բարոյական ճգնաժամերով լի մի կյանք, որի ընթացքում խմբագիրը հաճախ պետք է գնար թույլ դիմադրության ճանապարհով և տպագրեր այն, ինչ թարգմանած ունեին Փ. Վարդանյանը, Հարոն կամ այլ աշխատակիցներ: Բոլոր դեպքերում հիմնականում թարգմանական գրականությունը իր ոգով և ուղղությամբ համապատասխանում էր ամսագրի գաղափարական ուղեգծին և օգնում էր խմբագրության ծրագրային հարցերի արծարծմանը: Այսպես, 1896 թ., երբ ժամանակն էր գեղարվեստական գրականության միջոցով արտահայտելու խմբագրության տրամադրությունը արևմտահայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, Հովհաննիսյանը «Փորձից» արտատպում է Ալֆոնս Դոդեի հայրենասիրական «Վերջին դասը» պատմվածքը: Սլավոնական գրականությունից նա թարգմանել է հայ իրականությանը հարազատ մի շարք երկեր (Սվյատոպլուկ Չեխից՝ «Գյուղի սուրբը», «Կոմսուհի Բոժե-

---

[44] Նույն տեղում, № 112:

նա» և «Միստեր Պլումպուդինգը Պրագայում» պատմվածքները, Էլիզ Օժեշկոյի «Ավանդություն», Բոլեսլավ Պրուսի «Մի հիմար դեպք» և «Եգիպտական առասպել» պատմվածքները և այլն):

Հայ գրականագետները և թարգմանիչները «Արձագանքի» ընթերցողներին ծանոթացրել են արտասահմանյան նշանավոր գրողների կյանքին և գործունեությանը: Տպագրվել են ակնարկներ, նվիրված Էմիլ Զոլային, Վաշինգտոն Իրվինգին, Ժան Մասեին, Շելլիին, Բիչեր Ստոուին, Մոպասանին, Ալֆոնս Դոդեին, Գեորգ Բրանդեսին, Սլավեյկովին և այլն:

«Արձագանքում» տպագրվել են նաև վրացական բանաստեղծ Ա. Ծերեթելու «Օ՜հ, թե թռչնիկ լինեի» բանաստեղծությունը, մի շարք եգիպտական, պարսկական, հնդկական և արաբական զրույցներ:

«Արձագանքի» թարգմանական գրականության բաժնում Հովհաննիսյանը մեծ տեղ է նվիրել և խոհական, փիլիսոփայական գործերին, որոնց մեջ քննարկվում են արվեստի, գիտության, կյանքի հավերժության, սիրո և բարեկամության թեմանները, ցույց է տրվում արվեստի աշխարհի մեծ վարպետների կյանքը, նրանց ապրած տառապանքը:

Այս ստեղծագործությունները հայ հասարակությանը խանդավառել են հայրենասիրության ու ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով: Հայ դասական գրականության հետ մեկտեղ թարգմանական երկերը զարգացրել են ժողովրդի գեղագիտական ճաշակը, նոր թափ հաղորդել երիտասարդ սերնդի ստեղծագործական աշխատանքին:

Դ. «ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Արձագանքի» հրատարակության տարիները (1882—1898) համընկնում են Ալեքսանդր III-ի թագավորության, երկրի մտավոր կյանքի դեմ նրա ձեռնարկած ռեակցիոն միջոցառումների ժամանակներին: Թագավորը իր խորհրդատու, մոլի ռեակցիոներ Պոբեդոնոսցևի օգնությամբ բուռն կրքով ջարդ էր սկսել գրքերի աշխարհի և պարբերական մամուլի ոլորտներում: Այդ հարվածները կրում են և հայ պարբերականները: Այս պայմաններում առանձնապես դժվարանում է «Արձագանքի» հրատարակության գործը: Թերթը հենց սկզբից էլ իր վրա է հրավիրում գրաքննական կոմիտեի ուշադրությունը, մի բան, որ շարունակվում է մինչև «Արձագանքի» հրատարակության վերջը:

1882 թ. սկսելով «Արձագանքի» հրատարակությունը, Աբգար Հովհաննիսյանը գրաքննության կոմիտե է ներկայացնում հունգարական բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Շանդոր Պետեֆիի «Սեր և ազատություն» փոքրիկ բանաստեղծությունը: «Փորձում» արդեն տպագրվել էին նրա ազատասիրական բազմաթիվ երգերը և խմբագիրը ցանկանում էր շարունակել հաստատված ավանդույթը: Այս նոր բանաստեղծությունը Գևորգ Բարխուդարյանի թարգմանությամբ հնչում էր իբրև ազատասիրական պայքարի բուռն կոչ, արթնացնում քաղաքացիական վսեմ զգացումներ:

1882 թ. փետրվարի 25-ին բանաստեղծությունը մերժվում է «տենդենցիոզության պատճառով»: Փետրվարի 14-ին մերժվում է Գ. Բարխուդարյանի «Արձագանք» բանաստեղծությունը, որն անուղղակիորեն արտահայտում էր թերթի հավատամքը: Քնարական հերոսը խոր գիշերով քայլում է և խորհում, թե արդյոք՝ «կլինի՞ վերջ Հայոց ազգի տառապանքին»:

Նա կցանկանար լսել իրեն հուզող հարցի պատասխանը.

Ինչ է ասվում խեղճ հայ ազգին,
Մի՞թե կորուստ, ոչ փրկությո՞ւն.
Արձագանքը որոտագին
Պատասխանում է. «Փրկությո՞ւն»:

Հետաքրքրական է, որ գրաքննիչը վերն ընդգծած բառերը ջնջել և փոխարինել է «տառհկահայի» և «տառհկահային» բառերով, ապա, արդելել է տպագրությունը[45]: Նույն թվականի մարտի 12-ին մերժվում է Գ. Բարխուդարյանի երկրորդ բանաստեղծությունը՝ «Ձմեռը», որը, ի դեպ, ստորագրություն չուներ: Այս բանաստեղծության մեջ նույնպես պատկերված են արևմտահայության անհեռանկար կյանքը, նրա տառապանքները, բռնության շղթաները, որոնք գեղարվեստական մարմնավորումն են գտել կենդանի կյանքը կաշկանդած ձմռան կերպարանքով:

1884 թ. հոկտեմբերին Ա. Հովհաննիսյանը պատրաստվում է հրատարակել Լազարյան ճեմարանի ուսուցիչ Խ. Քուչուկ-Հովհաննիսյանից ստացած Մ. Նալբանդյանի բանաստեղծությունների տետրից երեք բա-

---

[45] «Արձագանք» բանաստեղծությունը ստորագրված է վանեցի, որը Գ. Բարխուդարյանի՝ մինչ այժմ բանասիրությանն անհայտ (թերևս և չօգտագործված) գրական կեղծանուններից է:

նաստեղծություն։ Շարվում են «Մուսայից մուսային», «Ուսանող ու մեծատուն», «Մարգարե» (Լերմոնտովից) բանաստեղծությունները և Հ. Գյոքչյան քահանային ուղղած Նալբանդյանի նամակը, բայց գրաքննությունը մերժում է դրանց տպագրությունը[46]։ Ինչպես հայտնի է, Նալբանդյանի վերոհիշյալ տետրի 15 բանաստեղծությունները մի քանի տարի անց հրապարակվում են Մ. Բարխուդարյանի «Հանդես գրականական և պատմական»-ի երկրորդ և երրորդ գրքերում։

1884 թ. նոյեմբերի սկզբին «Արձագանքը» ութ ամսով դադարեցվում է։ Երբ հաջորդ ամռանը Աբգ. Հովհաննիսյանը գրաքննության կոմիտե է ներկայացնում շաբաթաթերթի առաջիկա համարների նյութերը, ավագ գրաքննիչ Ս. Մելիք-Մեհրաբովը ոչ միայն մերժում է այդ նյութերի մեծ մասը, այլև հատուկ զեկուցագրով գրաքննության կոմիտեի ղեկավարության ուշադրությունն է հրավիրում նորաբաց «Արձագանքի» ուղղության վրա[47]։ Անբարեհուսության պատճառաբանությամբ նա մերժել էր Գամառ-Քաթիպայի «Կարապի երգս» բանաստեղծությունը, Զախեր-Մազոխի «Հեննրիկա Լիստեսկա» պատմվածքը, Գաբրիել-Մաճկալի (Բաբկենց) «Գնդը կանգնի-դներան կկոտրի» ղրույցը, «Վարշավյան օրագիր» թերթից արտատպված քաղաքական մի հոդված, «Հունաստանը 1821 թվականի հեղափոխության նախօրյակին» թարգմանական հոդվածը և մի ընթակցություն Կ. Պոլսից, նվիրված Բուլղարիայի միավորմանը։

Ծանոթանանք մերժված նյութերի հետ։

Ռուս-թուրքական պատերազմը ոչինչ չէր տվել արևմտահայությանը։ Հայկական հարցի արծարծումները դիվանագիտական շրջաններում ոչ մի հետևանքի չեն հասցնում։ Արևմտահայ հատվածի ստրկական լուծը գնալով ծանրանում էր, ուստի Հովհաննիսյանի համար թե՛ ժողովրդի վիճակի պատկերումը, և թե ազատագրական պայքարի թեման շարունակում էին օրակարգի հարցեր մնալ։ Այս էր պատճառը, որ Բուլղարիայի միավորման վերաբերյալ ընթակցություն ստանալով Կ. Պոլսից և դրա մեջ գտնելով ազգային-ազատագրական պայքարի մասին իր համոզմունքների արտահայտությունը, նա փորձում է իր ծանոթագրություններով հրատարակել այդ հոդվածը։ Առաջնորդվելով

---

[46] Այս բանաստեղծությունների գրաքննական պատմությունը հրատարակել է բանասեր Իվանե Բեգլարովը (տե՛ս «Արշավ», 1940, № 3)։

[47] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 673։

քաղաքական նույն մղումներով, Հովհաննիսյանը տպագրության է ներկայացնում «Հունաստանը 1821 թվականի հեղափոխության նախօրյակին» թարգմանական հոդվածը: Սա անուղղակիորեն պետք է հայտներ ընթերցողներին, թե ոչինչ չի փոխվել Արևմտյան Հայաստանում և հույների նախկին ճակատագիրը շարունակում է պահպանվել հայկական նահանգներում: «Վարշավյան օրագրից» թարգմանված հոդվածը շոշափում էր ցարական կառավարության ազգային քաղաքականության հարցը Լհհաստանում:

Գամառ-Քաթիպայի «Կարապի երգս» բանաստեղծությունը արտահայտում էր արևմտահայության ազատագրության հետ կապված պատրանքների խորտակման վիշտը, անհույս ներկայի պատճառած տվայտանքները և մեծ բանաստեղծի մշտաբորբոք հայրենասիրությունը: Այդ բանաստեղծությունը մերժվում է, թեև արդեն 1884 թ. լույս էր տեսել «Մասիս» թերթում:

«Հենրիկա Լիստևսկա» պատմվածքի սյուժեն վերցված է 1846 թ. լհհական ապստամբության դրվագներից: Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրիայի դեմ լհհական ազգային մասնաժողովի որոշմամբ նախապատրաստվում է մեծ ապստամբություն: Պատմվածքում նկարագրված են այդ ապստամբության ժամանակ զոհված լհհ ազգային հերոսներ Դոմբովսկու և Հենրիկա Լիստևսկայայի սխրանքները:

Հայրենիքի ազատության համար անձնազոհ պայքարի մի դրվագի պատմությունն էր պարունակում այդ օրերին մերժված «Սեպի հայրիկը» ֆրանսիական դրույցը:

Սոցիալական բովանդակություն ուներ Գաբրիել-Մաճկալի «Գևղը կանգնի-գերան կկոտրի» պատմվածքը, որի տպագրությունը նույնպես արգելվում է «Արձագանքի» էջերում[48]:

Հովհաննիսյանի համար սկսվում են պայքարի և մաքառումների առավել դժվարին ժամանակներ, բայց հրապարակախոսը չէր մտածում ընկրկել ընտրած ճանապարհից: Նրա թերթը ամեն գնով պետք է արձագանքներ կենդանի կյանքի բարձրացրած հարցերին, այլապես անիմաստ կդառնար դրա գոյությունը:


1885 թ. փակվում են հայկական դպրոցները: Քանի որ դրաքննական կոմիտեն վճռականորեն արգելում է հայ դպրոցներին վերաբերող

---

[48] Գաբրիել-Մաճկալի այդ պատմվածքը հետագայում տպագրվում է «Մուրճ» ամսագրում (1894, № 5):

հոդվածների և անգամ փոքրիկ հաղորդումների տպագրությունը, Ա. Հովհաննիսյանը դիմում է գեղարվեստական գրականության օգնությանը: Նա գրաքննությանն է ներկայացնում բանաստեղծ Արշավիր Մխիթարյանի «Հոտ և հովիվ» բանաստեղծությունը: Այլաբանական մի ողբ էր դա, որը պատկերում էր հայ ժողովրդին հասած աղետը: Հովիվը անհոգ արածացնում է իր հոտը, սրինգ է նվագում, փաղաքշում գառներին: Նա գոհ է աշխարհից, աստծուց... Բայց հանկարծ նա կորցնում է ամեն ինչ և «խելագարի պես, լալով՝ հուսահատ» որոնում է հոտը: Բանաստեղծությունը մերժվում է[49]:

1892 թ. արգելվում է Ս. Քամալյանցի «Նվեր հայ վարժապետին»



Հ. Հովհաննիսյանի՝ գրաքննության կողմից մերժված «Մենք միասին գնում էինք ճանապարհ» բանաստեղծության շարվածքը:

---

[49] ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 862:

բանաստեղծությունը, որը խրախուսանքի ջերմ խոսք է՝ ուղղված նյութապես անապահով, իր վաղվա անհեռանկար օրվա նկատմամբ ոչ մի հրաշխիք չունեցող ազգանվեր գործչին[50]։

Հովհ. Հովհաննիսյանի «Մենք միասին գնում էինք ճանապարհ»[51] բանաստեղծությունը, որը մերժվել է 1897 թ. դեկտեմբերի 18-ին, զարձյալ շոշափում է նույն հեղինակի հանրածանոթ «Սարն ի վեր» բանաստեղծության մոտիվը։ 1886 թ. հայկական տարրական (ծխական) դպրոցները բացվում են և հույսի ինչ-որ շող է փայլում հայ իրականության մեջ։ Այդ խաբուսիկ վիճակ էր և դրությունը չի փոխվում դեպի լավը։ Ցարական կառավարությունը հետևողականորեն պայքարում էր Կովկասում հայկական դպրոցները փակելու իր վերջնական ծրագիրը իրականացնելու համար։ 1895 թ. տագնապների և սպասումների տարի էր. մեկը մյուսի հետևից ներքին գործոց մինիստրության էին սլանում զեկուցագրեր, առաջարկներ, միջոցառումների ծրագրեր։ Պետերբուրգում այդ նյութերը քննարկվում էին, մշակվում էր վճիռը և 1896-ին պայթում է փոթորիկը։ Տեղական վարչական իշխանություններին կարգադրվում է փակել ծխական դպրոցները[52]։ Հայ մտավորականներն սպասում էին դրան։ Նրանք, սակայն, ինչպես երևում է Հ. Հովհաննիսյանի վերոհիշյալ բանաստեղծությունից, մարտական տրամադրությամբ են սպասում ծավալվող իրադարձություններին.

Բայց, հավատա, կտառապինք մենք երկար,
Բայց և կապրինք—մեռնելու չէ սերմն արդար։
Բեղմնավորված ընկածների արյունով,
Դարձյալ երկիրն պտուղ կտա երկունքով,
Օրը կգա, կդադարի փոթորիկ,
Եվ կտանին հաղթությունը մեր որդիք[53]։

---

[50] Նույն տեղում։

[51] Նույն տեղում, գ. 1404։

[52] Տե՛ս Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970։

[53] Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների վերջին հրատարակության երկրորդ հատորի ծանոթագրության համաձայն՝ այս բանաստեղծության պահպանված ինքնագիրը «ուղարկված կամ նախատեսված է եղել «Վտակ» ժողովածուի համար, որտեղ և տպագրվել է առաջին անգամ 1901 թ.»։ Ինչպես տեսնում ենք, բանաստեղծության «կենսագրությունն» ավելի հարուստ է, քան կարծվում էր։

1893 թ. արգելվում է Հ. Հովհաննիսյանի մեկ այլ բանաստեղծությունը՝ «Նամակ արժանապատիվ Հ. Սահակ ք. Սահակյանին (Ավետարան)» խորագրով։ Ոտնձգություն այս բանաստեղծության դեմ, որտեղ հեղինակը ջատագովում է սոսկ հումանիզմի և աստվածաշնչյան գաղափարները, ինքնին խոսում է 90-ական թվականներին երկրում ստեղծված գրաքննական ծայրահեղ անբարենպաստ պայմանների մասին։

Հայ հրապարակախոսներին 90-ական թթ. շարունակում էր զբաղեցնել արևմտահայության վիճակը։ Հայկական հարցի հետ կապված հույսերն ի դերև են ելնում և պարբերական մամուլում սկսում են երևալ մեկը մյուսից ցնցող թղթակցություններ...

1888 թ. Հովհաննիսյանը գրաքննության կոմիտե է ներկայացնում Սիրվանի (Արշավիր Սոլախյան) «Անձրևի կաթիլներ» բանաստեղծությունը։ Անձրևում է։ Ի՞նչ ծագում ունեն անձրևի կաթիլները։ Դրանցից մեկը մի փոքրիկի արցունքի կաթիլն է. դա ընկնում է այն երկրում, ուր ոսոխը մանուկներին սպանում է իրենց մոր գրկում։ Մի այլ կաթիլ պատկանում է դժբախտ մորը, որի գրկից զավակին խլելով՝ խոշտանգել են։ Ահա կույսի արցունքը... Աղջկա փեսային սպանել են, իսկ իրեն նետել հարեմ... Ընկնում են և վաղամեռիկ փեսայի արյան կաթիլները. դրանք ոռոգում են հողը։ Կաթիլների մի մասը պատկանում է քրտնաթոր մշակներին, որոնց քրտինքը խոպանը պտղաբեր է դարձնում։ Բանաստեղծը կոչ է անում անարդար երկրի հողը չմշակել, ոտքի ելնել չարիքի դեմ։ Այդ բանաստեղծությունը նույնպես արգելվում է[54]։ Այս ոգով է գրված և անստորագիր «Արի՛, արի՛, անուշ քույն» բանաստեղծությունը, որը մերժվում է 1888 թվականին։ Քնարական հերոսը երազում է հեռանալ կյանքից, իրականությունից, չտեսնել Ըշվառների ծով արտասուքը, չլսել մարդկանց հառաչը[55]։

1893 թ. արգելվում է «Արձագանքի» մշտական թղթակից Արշակ Թումանյանի «Առյուծի երազը» ղրույցը[56]։ Առյուծը վանդակում է։ Ծիծառն իր երգով նրան հիշեցնում է հայրենի աշխարհը և նրա զավակների դառն վիճակը։ Երկրում իշխում է վագրը։ Նա հալածում է առյուծի կորյուններին։ Առյուծը խնդրում է հայտնել զավակներին, որ նրանք չհուսահատվեն և սպասեն իր դարձին։ Այնուհետև կատարվում

---

[54] ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 871։

[55] Նույն տեղում։

[56] Նույն տեղում, գ. 1188։

է անսպասելին. կորյունները ծիծառի հետ գալիս են, առյուծին ազատում վանդակից և դառնում հայրենիք։ Սկսվում է նոր կյանքի ծնունդը ավերված հայրենիքի փլատակների վրա։ Սիմվոլիկ այս գրույցով. Ա. Հովհաննիսյանը և նրա թղթակիցը համբերության կոչ էին անում արևմտահայ եղբայրներին, փայփայելով այն հույսը, թե նոր կյանք կծագի Արևմտահայաստանի հողի վրա։ Այդ երազներին վիճակված չէր իրականանալ։ Մեկ տարի հետո Թուրքիայում սկսվում է սպանդը։ Ավերվում են հայկական գյուղերն ու շրջանները, ժողովուրդը սրի է քաշվում թուրքական զորքերի կողմից։ Ինչո՞վ պետք է վերջանար այդ ամենը։ Հովհաննիսյանը պատրաստվում է տպագրել Լեոնցի (Ավետիս Նազարբեկյան) «Արյո՜ւն, արյո՜ւն ամենայն կողմ» բանաստեղծությունը, որն արգելվում է գրաքննության կողմից[57]։

1896 թ. «Արարատ» հանդեսի առաջին համարում տպագրվում է Նեկրասովի «Նոր տարի» բանաստեղծությունը։ Ա. Հովհաննիսյանն ըշտապում է այն ներկայացնել գրաքննության։ Սակայն, եթե նախնական գրաքննությունից ազատ «Արարատի» էջերում այդ բանաստեղծությունը հաջողվել էր տպագրել, ապա արտատպել այն գրաքննության ենթակա ԲԵՐԲում՝ չի հաջողվում։ Փետրվարի 14-ին բանաստեղծությունը մերժվում է տենդենցիոզության պատճառաբանությամբ[58]։ Նեկրասովի ստեղծագործությունը հայ իրականությանը հարազատ մի գործ էր, որ Հովհ. Հովհաննիսյանի թարգմանությամբ հնչում է գրեթե բնագրի ուժով։

1888 թ. «Արձագանքում» սկսում են տպագրվել Շիրվանզադեի «Հաղբատ-Սանահին» ուղեգրությունները, որտեղ նա նկարագրում է Լոռվա գավառից ստացած իր տպավորությունները։ Ճանապարհորդական նոթերի երկրորդ գլուխը, ուր հեղինակը խոսում է դսեղցի Ջոփուռի հինգ որդիների խիզախ արարքների մասին, գրաքննությունը արգելում է։ Այդ հատվածի մի մասը Շիրվանզադեն մտցնում է յոթերորդ գլխի մեջ, և երկու պարբերությամբ միայն խոսում երկրորդ՝ արգելված գլխի փաստերի մասին (Լոռվա գյուղացիները հարստահարիչներից և ավազակներից գիտեն պաշտպանվել)։ Երկրորդ գլուխը ամբողջությամբ դուրս է մնում այդ ուղեգրություններից և, հավանաբար, կորսվելով, չի մտնում Շիրվանզադեի երկերի 1929—34 թթ. հրատարակության հա-

---

57 Նույն տեղում, գ. 1273։

58 Նույն տեղում, գ. 179։

մասատասխան հատորի մեջ։ 1951 թ. Շիրվանզադեի երկերի նոր հրատարակության առիթով մենք խմբագիրներին տրամադրեցինք գրաքննության կողմից արգելված այդ հատվածը, որը տպագրվեց ծանոթագրություններում, իսկ 1961 թ. հրատարակության՝ IX հատորի բնագրում։

1891 թ. Շիրվանզադեն «Արձագանքում» տպագրելու համար պատրաստում է իր նոր պատմվածքը՝ «Արհամարհվածը»։ Պատմվածքը գրաքննության կողմից մերժվում է մարտի 30-ին[59]։ 1892 թ. այն տպագրվում է «Տարազի» էջերում՝ «Շրջանից արտաքսվածը» նոր խորագրով։ «Արձագանքի» համար շարված պատմվածքի առաջին գլխի և հետագայում տպագրված բնագրի համեմատությունները երևան են հանում մի շարք տարբերություններ։ Այսպես, պատմվածքի հերոս Պետրոս Մարդանյանը առաջին տարբերակում կրել է Պետրոս Բարդանյան անունը։ Ֆիլոլոգ Գալումյանը՝ առաջին տարբերակում հանդես է եկել իբրև մաթեմատիկոս Գալումյան։ Բնագետ Բարգամյանը եղել է ինժեներ Մարգարյան։ Երկրորդ տարբերակում Շիրվանզադեն կատարել է լեզվաոճական մի շարք փոփոխություններ, որոնք վկայում են գեղարվեստական խոսքի նկատմամբ հեղինակի բծախնդրությունը և պահանջկոտությունը։

«Արձագանքի» գրաքննության պատմությունը ցույց է տալիս, որ ցարական գրաքննությունը («Ռոզնեցը») չափազանց ղգոն էր Պատկանյանի ստեղծագործությունների նկատմամբ։

«Արձագանքում» տպագրելու համար նախատեսված առաջին նյութերից էր Պատկանյանի (Սյուլուկ) «Մեր տեղի ծակլաբունները» քաղաքական պարսավագիրը, որի առաջին մասի շարվածքը մերժվում է 1883 թ. ապրիլի 1-ին[60]։ «Կարապի երգս» բանաստեղծությունը մերժվում է 1885 թ.։ Նույն թվականին գրաքննությունը մերժում է Սյուլուկի «Օձը և աշուխ» առակը[61], 1887 թվականին՝ «Մենամարտություն», «Մշակներ և շուն» բանաստեղծությունները[62]։ 1887 թ. մերժվում է «Սատանայի օջիլ» պամֆլետի շարունակությունը (և վերջը)[63]։ Հաջորդ թվականին՝

---

59 Նույն տեղում, գ. 1052։

60 Նույն տեղում, ֆ. 480, ց. լրացուցիչ 1, գ. 104։

61 Նույն տեղում, ց .1, գ. 862։

62 Նույն տեղում, գ. 803։

63 Նույն տեղում։

«Հայ հրապարակախոսին» բանաստեղծությունը[64] և 1891-ին՝ «Կլատոնին» բանաստեղծությունը[65]։

Ռափայել Պատկանյանի երկերի ակադեմիական հրատարակության ծանոթագրությունները, կազմված լինելով առանց գրաքննական արխիվի նյութերի ամբողջական ուսումնասիրության, վերոհիշյալ բանաստեղծագործությունների տպագրության պատմությունը երբեմն լուսաբանում են միակողմանի։

Այսպես, «Մեր տեղի ծակլաբունները» պամֆլետի ծանոթագրողը նշում է, թե այդ գործը, որ նախատեսված էր «Փորձի» համար, 1882 թ. վերջին հեղինակը ուղարկել է «Փորձի» խմբագրին։ Պատկանյանը 1881 թ. իրոք կարող էր իր պամֆլետը նախատեսել «Փորձի» համար, բայց 1881 թ. վերջին «Փորձը» դադարել էր և 1882-ի սկզբից Ա. Հովհաննիսյանը հրատարակում էր «Արձագանք» շաբաթաթերթը։ Բնականաբար, Պատկանյանն իր աշխատանքն ուղարկում է ոչ թե «Փորձի», այլ «Արձագանքի» խմբագրություն։ Այնուհետև ծանոթագրողը գրում է. «1883—1884 թթ. մի շարք նամակներից պարզվում է, որ երկի տպագրության գործը ձգձգվել է, չնայած թերթում հրատարակվել է. «Շուտով կհրատարակենք մեր աշխատակից Սյուլուկի «Մեր տեղի ծակլաբունները» (трущобы)։ Իրականությունը, սակայն, այն է, որ Պատկանյանն իր աշխատանքն սկսելով «Փորձի» համար, այն ավարտել է 1882-ի վերջին, երբ «Փորձը» արդեն չկար։ 1883-ի մարտի 23-ին պամֆլետը «Արձագանքում» տպագրելու համար ներկայացվում է գրաքննական կոմիտե, բայց դրա առաջին մասի շարվածքը մնրժվում է ապրիլի մեկին։ Այդ բանից հետո հեղինակը, հավանաբար, վճռում է այն տպագրել մի այլ պարբերականում և ընտրում է «Նոր-դարը», որտեղ թեև հայտարարություն է հրապարակվում այդ մասին, բայց գործը չի տպագրվում[66]։ Այն առաջին անգամ տպագրվել է 1909 թ.՝ «Հացի կռտոր Ջեյթունցուն» ժողովածուում (ինչպես նշում է և ծանոթագրողը)։ Պամֆլետի համեմատությունը շարվածքի հետ երևան է հանում մի նշանակալից տարբերություն. այդ առաջին տարբերակի բնաբանն է, որը վերցված է Լերմոնտովի «Журналист, читатель и писатель» բանաստեղծությունից։ Բնաբանը հեղինակի մահից հետո հանվել է, հավա-

---

[64] Նույն տեղում, գ. 871։

[65] Նույն տեղում, գ. 1052։

[66] Տե՛ս «Նոր-դար», 1884, № 24։

նաբար գրաքննական անախորժություններից խուսափելու նկատառումներով։

Այնուհետև Պատկանյանի երկերի ծանոթագրողները հենվելով Պատկանյանի, Սունդուկյանի և Շիրվանզադեի նամակների վրա, պարզել են, որ գրաքննությունն արգելել է Պատկանյանի «Մշակներ և շուն», «Մենամարտություն» բանաստեղծությունները և «Սատանայի օջիլ» պամֆլետի շարունակությունը (և վերջը)։ Գրաքննության արխիվում պահպանվող այդ բանաստեղծությունների շարվածքները հնարավորություն են տալիս պարզել նաև, որ դրանք արգելվել են 1887 թ. նոյեմբերի 4-ին, և որ «Մենամարտությունը» նվիրված է եղել Մ. Թավադյանին («նվիր բարեկամական Մ. Թավադյանին»)։

«Օձ ու աշուխ» բանաստեղծության ծանոթագրության մեջ նշվում է, թե պահպանվել է մեկ ինքնագիր. «Գրության թվականն անհայտ է։ տպագրվում է առաջին անգամ»։ Պահպանվող շարվածքից, սակայն, պարզվում է, որ բանաստեղծությունը գրվել է 1885 թ. և մերժվել նույն թ. հոկտեմբերի 16-ին։ Սկզբում այն վերնագրված է եղել «Օձը և աշուխ», առանց ենթավերնագրով (և ո՛չ հեքիաթ, ինչպես խմբագրվել է հետագայում)։ 1888 թ. հունվարի 7-ին մերժվում է «Հայ հրապարակախոսին» բանաստեղծությունը, որն ուղղված էր Սպանդար Սպանդարյանի դեմ և մինչև օրս մնացել է անտիպ[67]։ Ահա այդ բանաստեղծության բնագիրը.

ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԻՆ

Ճշմարիտ խոսելն ամենի բան չէ՛,
Ստի հետ կռվելն էլ դյուրին բան չէ.
Բայց որ մի անգամ հիշտ բան ասացիր,
Էլ ե՛տ մի կենար, խոսքեդ մի՛ քաշվիր.
Հաղար վերք ստանալ ու չի ընկճվել—
Ա՛յս է ահա մարդ իսկական կոչվել.
Հասատատե՛ որ հայ հանդես դպրության
Բնավ լինելու չէ՛ սպանդ արյան,

---

[67] Գրաքննիչը մերժումը պատճառաբանում է այն բանով, որ «բանաստեղծությունը վիրավերական բառախաղ է պարունակում «նոր-դարի» խմբագիր Սպանդարյանի դեմ» (տե՛ս «սպանդ արյան» արտահայտությունը բնագրում)։

Այս պիղծ սոփեստի դլխին տո՛ւր սոփան—
Այս է խրատում քեզ Դամառ-Քաթիպան[68]:

Թե ինչու Պատկանյանի «Կլատոբոնին» բանաստեղծությունը և Շիրվանզադեի ու Մաճկալ-Գևոյի պատմվածքները կարող էին հրապարակ գալ հայ պարբերական մամուլի այլ օրգաններում, մինչդեռ հետևողականորեն արգելվում էին «Արձագանքի» համար, այդ, անշուշտ, հետաքրքրության արժանի երևույթ է: Անցյալ դարի երկրորդ կեսի ցարական գրաքննության պատմությունից հայտնի են մի շարք փաստեր, երբ մի ստեղծագործություն մերժվելով «Современник», «Отечественные записки» կամ «Дело» պարբերականների համար, տպագրվում էր մի այլ օրգանում: Խմբագիրների տարակուսական հարցերին ի պատասխան, ասվում էր, թե այդ գործերը այլ հանդեսներում որևէ բանով աչքի չեն ընկնում, բայց առանձնահատուկ քաղաքական հնչեղություն են ստանում վերոհիշյալ պարբերականների էջերում:

«Արձագանքի» գրաքննության պատմությունը կասկած չի թողնում, որ Ա. Հովհաննիսյանի թերթը նույնպես համարվում էր հույժ անբարեհույս օրգաններից, ուստի և ենթադրվում էր, թե Դամառ-Քաթիպայի ստեղծագործությունը «Արձագանքի» էջերում քաղաքական առանձնահատուկ երանգով կարող է հնչել: Այդ է ապացուցում և հետևյալ փաստը. 1897 թ. Պետերբուրգում տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Տարաս Շևչենկոյի հիշատակին: Նրա մասին կարդացված զեկուցումը այնպես է գրավում Հովհաննիսյանին, որ նա իսկույն մայրաքաղաքի թերթերից թարգմանում է և՛ հանդիսին նվիրված հաղորդումը, և՛ երեկոյին արտասանված ճառը: Շարադրելով ճառախոսի՝ ազգային լեզուների ինքնուրույն զարգացման անհրաժեշտության մասին դրույթը, Հովհաննիսյանն իր կողմից ավելացնում է. «Մայրենի, մանավանդ ժողովրդական-մայրենի լեզվի իրավանց խնդիրը ազգերի քաղաքակրթության և մտավոր զարգացման ասպարեզում նույնքան կարևոր է», որքան հացն հանապազօրյա: Հետևապես նա, ով մերձենում է ազգության լեզվին, և բարբարոսաբար փորձում խլել այն, նման է մարդու առօրյա սնունդը խլողին: Ոմանք այս ճշմարտությունը չհասկանալով, լեզուն փորձում են ղոհ բերել քաղաքական, «եթե չասենք, բարբարոսական միտումների»: Ուստի և բոլորը առանձին հարգանքով են դնա-

---

[68] *«Հայ հրապարակախոսին» բանաստեղծությունը հրապարակել ենք «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականի 1968 թ. 3-րդ համարում:*

հատում այն անհատներին, որոնք «կարողանում են իբրև ժողովրդական հանճարներ հրապարակ հանել ժողովրդական մայրենի լեզուն իր բոլոր սքանչելիքով, յուր բոլոր վեհափառությամբ, սիրելի դարձնել նրան ոչ միայն այն ժողովրդին, որին հատուկ է այդ լեզուն, այլև բոլոր քաղաքակրթված մարդկությանը[69]»: Այս առումով Ա. Հովհաննիսյանը բարձր է գնահատում Շևչենկոյի վաստակը և գտնում, որ նրա հիշատակին նվիրված տոնը մայրենի-ժողովրդական լեզվի հաղթանակի տոնն է: Շատ հատկանշական է, որ բանաստեղծի հիշատակին նվիրված հաղորդման տպագրությունը՝ Հովհաննիսյանի խորհրդածություններին հետ մեկտեղ արգելվում է:

Այս ոգով էր գրված և Ներսես Աշտարակեցու մահվան տարելիցին նվիրված մի թղթակցություն, որը նույնպես մերժվում է (1888): Հոդվածագիրն ընդգծում էր Աշտարակեցու գործունեության ամենափայլուն կողմը՝ Ներսիսյան դպրոցի հիմնադրության երևույթը: Գրաքննությունն արգելում էր և այն հոդվածները, որտեղ հիշատակվում էր Նալբանդյանի անունը: Այսպես, Վասակ Պապաջանյանի «Պսակ» թերթի 1883 թ. 7-րդ համարում տպագրվում է մի հոդված, որի հեղինակը «Ծղրայր ևմք մեք»-ի բնաբանով հայերին կոչ էր անում հավաքվել հայկական անկախ եկեղեցու հովանու տակ և կազմել ազգային մի սերտ միություն: Այս հոդվածի առիթով «Արձագանքը» պատրաստում է պատասխան հոդված, որտեղ մեջ էր բերվում Միքայել Նալբանդյանի «Մամիկոնյան մեծ վահանի պատասխանը» բանաստեղծությունից մի հատված:

Մ. Նալբանդյանի անունը հիշատակվում է նաև «Հայուհյաց բարեգործական ընկերության» 10-ամյակի տոնակատարության առիթով: Ռիգայի հայ ուսանողները 1892 թ. ընկերությանն ուղղած իրենց ուղերձում իբրև բնաբան ընտրել էին Նալբանդյանի հանրահայտ տողերը.

«Բայց մեր կանայք, ո՞ւր եղիշե,
Ուր մեր տիկնայք փափկասունք...

Միք. Նալբան.-ն 1861 թ.»:

Ուղերձում գրված էր նաև. «Երեսուն տարի սրանից առաջ մեր անմահ բանաստեղծը ողբում և լալիս էր տեսնելով, որ այլևս չկան գործի և դաղափարի կանայք: Նայում էր յուր շուրջը, փնտրում էր հասարա-

69 ՎԿՊՊԱ, ֆ. 480, գ. Ա, գ. 1404:

կության մեջ Եղիշեի նկարագրած կանանց, բայց ավա՜ղ, չէր գտնում... Ջարթի՛ր, հիմա, ով անմահ մեր բանաստեղծ և նայիր, ինչպես հայուհիները խմբված միաբան գործում են ժողովրդի ուսման և կրթության համար»[70]: Հայերի վերածնությունը հավաստող այս կոչը «Պատկին» ուղղված հոդվածի հետ արգելվում են:

Սակայն միայն Միքայել Նալբանդյանի անունը չէր ահաբեկում ցարական գրաքննությանը: 1890 թ. պատկերազարդ «Արձագանքում» տպագրելու համար արգելվում է Մինաս Չերազի լուսանկարը: 1891-ին արգելվում է «Մատթեոս Մամուրյան» ծավալուն հոդվածը[71]: Խմբագրությունը մինչ այդ տպագրել էր նրա լուսանկարը և այժմ ցանկանում էր արևելահայ ընթերցողին ներկայացնել այն մարդու գործը, որն ամբողջ կյանքում աշխատել էր հայ գրականության զարգացման և ծաղկման համար և «Տաճկաստանի մեջ կոչված է հայ գրականության պետ»:

1891-ին արգելվում է Ալ. Երիցյանի ուղեգրությունների մի հատվածը: 1888 թ. մերժվել է Ա. Հովհաննիսյանի Ֆելիետոնի շարունակությունը («Ջուանը կտրածը»):

1893 թ. արգելվում է Բագրատ Այվազյանի «Աշոտ Երկաթ» վեպի տպագրության ծանուցումը: 1890-ին արգելվում է պատկերազարդ «Արձագանքի» նոր պլանակարգը, իր ազգային սյուժեի համար[72]:

«Արձագանք» պարբերականի՝ գրաքննության կողմից մերժված նյութերի մեջ գրական ստեղծագործություններից բացի մեծ թիվ են կազմում բազմաթիվ հոդվածներ, բղխակցություններ ու թարգմանական գործեր, նվիրված անցյալ դարի վերջին քառորդի քաղաքական իրադարձություններին և Կովկասի հայության հասարակական կյանքի այլևայլ կողմերին: Այդ նյութերին մենք կանդրադառնանք հաջորդ բաժիններում:

---

[70] ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1122:

[71] Նույն տեղում, գ. 1052:

[72] Ի դեպ, ազգային սյուժեի նկատմամբ գրաքննության զգոնությունը երբեմն անհավնիք վճիռների էր հասցնում: Այսպես, 1891-ին Ելիզավետպոլի նահանգապետը մի հատուկ գրությամբ գրաքննական կոմիտեի ուշադրությունը հրավիրում է Շուշի քաղաքի թատրոնի նոր վարագույրի վրա, որտեղ պատկերված էին Արարատի, Էջմիածնի, Արաքսի ու մայր Հայաստանի (ավերակների վրա) ուրվագծերը: Նիկիտա Խանդամիրովի թատրոնի գահլիճի համար Մոսկվայից հատուկ պատվերով ստացված այդ վարագույրի շուրջ մեծ խոսակցություն է բացվում Կոմիտետում և ի վերջո որոշվում է վարագույրը հանել՝ «արգելված սյուժեի» պատճառով:

Ե. ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դարի 80—90-ական թվականներին հայ գրականության հարաճուն վերելքի պայմաններում գրական քննադատությունը ձեռք է բերում մի նոր որակ: Պարբերական մամուլի օրգանների մատենախոսության հաստատուն բաժիններում հրատարակվում են բազմապիսի հոդվածներ, որոնք վկայում են գրաքննադատական հայացքների ձևերի հարստությունը, հարցադրումների խորությունն ու նպատակասլացությունը: Բնորոշելով այդ օրերի քննադատության ուղղությունն ու ոգին, Ս. Սարինյանը գրում է. «Այն էին 90-ական թթ. հայ քննադատական մտքի հարցասիրությունների շրջանակները: Համակողմանիորեն քննելով ժամանակի հայ գրական շարժման իրողությունները՝ պատմական ու տեսական լուսաբանությամբ, քննադատությունը իմաստավորում էր նրա զարգացման ընթացքը, ուղեգծում ժողովրդայնության, դաստիարակական ոգու, հասարակական միտվածության այն չափանիշները, որով պիտի ընթանար հայ գրականությունը»[73]:

«Արձագանքը» պատկառելի տեղ է նվիրել այդ հարցին և մեծապես խթանել հայ գրականության զարգացմանը՝ նոր ժամանակների գեղագիտական մտքի ձեռքբերումների չափանիշներով: Այս իմաստով «Արձագանքի» պատմության մեջ առանձնահատուկ էջ է կազմում Շիրվանզադեի գործունեությունը: Նա երկար ժամանակ վարում էր շաբաթաթերթի մատենախոսության բաժինը և իր դրախոսություններով, բանավիճային և տեսական-քննադատական հոդվածներով գնահատում էր ժամանակի գրական նոր երևույթները, վեր հանում քննադատության նշանակությունը գրականության զարգացման գործում: «Գրականական քննադատություն» հոդվածում Շիրվանզադեն իր օրերի գրական կյանքի ամենամեծ պակասությունը համարում էր քննադատական մտքի թուլությունը: Հիշեցնելով 40—60-ական թթ. ռուսական դասական քննադատության ունեցած հսկայական դերը ռուսական հասարակական կյանքում, նա գրում է. «Մենք չենք խոսում այն քննադատության մասին, որը յուր ուժով ղեկավարում է գրականությունը, մտքեր և գաղափարներ է ներշնչում նորան, շատ անգամ նոր ուղղություն է տալիս կամ, կարճ ասած, յուր հետևից է տանում գրականությունը»*[74]:

---

[73] «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 67:

[74] «Արձագանք», 1887, № 32:

Շիրվանզադեն ոչ միայն ստեղծագործում էր հայ իրականության մեջ 60-ական թվականներից սկզբնավորված քննադատական ռեալիզմի մեթոդով, այլև իր հոդվածներում վեր հանելով այդ մեթոդի կենսունակության գաղտնիքները, հետևողականորեն պայքարում էր 80-ական թթ. մոդայիկ դարձած ռեալիզմի ուղղության զանազան աղավաղումների դեմ: Պռոշյանի «Յիսեր» վեպի մասին գրած իր գրախոսությամբ նա ստեղծում է սկզբունքային, «անկաշառ և անկեղծ քննադատության» այն օրինակը, որի անհրաժեշտությունը մեծ կրքով հիմնավորում էր «Արձագանքում»: Իր մի այլ հոդվածում նա խրախուսել է երիտասարդ Ծատուրյանի մուտքը գրականության ասպարեզ, մեկ անգամ ևս ընդգծել Պատկանյանի առնական քնարի թարմությունն ու վարակիչ ուժը, նկատել Հ. Հովհաննիսյանի պոեզիայի ինքնատիպությունն ու գեղարվեստական արժանիքները:

Հաշվի առնելով մասնագիտացված գրական մամուլի դաստիարակչական մեծ դերը, Շիրվանզադեն ողջունում է Գուլամիրյանի «Արաքս» և Բարխուդարյանի «Հանդես գրականական և պատմական» պարբերականների երևան գալու երևույթը:

«Արձագանքի» էջերում տպագրված Շիրվանզադեի գրաքննադատական հոդվածներից կարևոր նշանակություն են ստանում Ժորժ Օննեի «Դարբնապետ» պիեսի մասին գրած թատերախոսությունը և «Իմ կրիտիկոսներին» բանավիճային հոդվածը: Գրական այս ելույթներում էլ, որ Շիրվանզադեն առավել ցայտունությամբ լուսաբանում է քննադատական ռեալիզմի մեթոդի հետ կապված հարցերը: Ֆրանսիական գրականության մեջ ժամանակին մեծ հաջողություն գտած Ժորժ Օննեն իր չափավոր տաղանդով զիջում էր ժամանակի խոշոր ռեալիստ գրողներին, բայց քանի որ նա գունազարդում էր բուրժուական իրականությունը և ստրկահաճորեն մարդկային բարձր առաքինություններով օժտում բուրժուական աշխարհի հզորներին, սրանք վարձահատույց էին լինում գրողին, նրա համար ապահովելով և՛ գրական հաջողություն, և՛ փառք: Իրականության ճշմարտացի արտացոլումը դիտելով իբրև արվեստի գործերի հիմնական արժանիքը, Շիրվանզադեն նշավակում է գործարար այն հեղինակներին, «որոնք գիտեն հարստահարել մեծամասնության և ժամանակի թույլ կողմերը»[75]:

Ելնելով այն իրողությունից, որ Շիրվանզադեն դեռևս «Արձագան-

---

[75] «Արձագանք», 1889, № 19:

քում» աշխատելու տարիներին համաշխարհային գրականության մեջ հստակորեն նշմարում էր երկու հակադիր ուղղությունների առկայությունը, որոնք ունեին սոցիալական տարբեր համակրանքներ և հասարակական-քաղաքական հակադիր գաղափարներ էին դավանում, Հր. Թամրազյանը գրում է. «Համաշխարհային գրականության մեջ դրսևորված այս ուղղությունների գաղափարաբանության ճիշտ ըմբռնումով էլ պայմանավորված էին ռեալիստական մեթոդի հետևողական կիրառումը և արմատական պաշտպանությունը Շիրվանզադեի ստեղծագործության և քննադատական ժառանգության մեջ»[76]:

«Իմ կրիտիկոսներին» հոդվածում Շիրվանզադեն հանգամանորեն վեր է լուծում ռեալիստական գրականության առանձնահատկությունները: Քննադատելով դրամատիկական երկերի համար Արծրունու ընտեղծած մտացածին սխեման, նա արվեստի գործերի համար կրկին առաջնահերթ է համարում իրականության ճշմարտացի, տիպական, բայց ոչ մի դեպքում՝ պարզունակ, լուսանկարչական արտացոլումը: Այնուհետև նա գտնում է, որ իրականության հետ սերտորեն կապված ռեալիստական գրականությունն է միայն, որ տոգորված ժամանակի առաջավոր գաղափարներով, կարող կլինի ցույց տալ կյանքի արատները և ընթերցողին մղել դեպի պայքար՝ հանուն առավել արդար ու երջանիկ կյանքի ստեղծման[77]: «Նա պաշտպան է կանգնում հասարակական մեծ բովանդակություն բերող արվեստին,— գրում է Հր. Թամրազյանը,—որն անտարբեր չէ դեպի կյանքն ու մարդկանց ճակատագիրը, որն ընդհանրացումների ու պատկերների մեջ բերում է կյանքի ախտերը վերացնելու ձգտումը, իր ճշմարտացիությամբ ու խորությամբ հասարակական-քաղաքական ակտիվության է մղում ընթերցողին»[78]:

Քաղաքացի-գրողի այս հավատամքն էլ դրդում է Շիրվանզադեին՝ կշտամբել արևմտահայ լրագրողներին ու գրողներին, որոնք իրենց ժողովրդին վիճակված սոցիալ-քաղաքական ծանր պայմաններում խուսափում էին խոսել ոչ միայն գավառահայության, այլև պոլսահայերի կյանքի մասին: «Պոլսեցի գործիչների ուղղությունը այնպես է,— գրում է նա,— որ նոքա նույնիսկ Հայաստանի սրտումն էլ եթե ապրեն, չեն զգալ այդ սրտի բաբախումը: Այնտեղ ևս նոքա, թողնելով կյանքը,

---

[76] Հր. Թամրազյան, Շիրվանզադե, Կյանքը և գործը, Երևան, 1961, էջ 77:

[77] «Արձագանք», 1890, № 58:

[78] Հր. Թամրազյան, Շիրվանզադե, Կյանքը և գործը, էջ 85—86:

իրականությունը, կշարունակեն «երկնից համաստեղությանը ներբողներ ձոնել»[79]։

Շիրվանզադեն նույնպես, ինչպես նրա նախորդ Պալասանյանը, անողոք էր գրական խոտանի նկատմամբ։ Իր հոդվածներում նա ամենայն խստությամբ քննադատում էր հայ գրականության ասպարեզի տհաս երևույթները («Կողոպտված եկեղեցի»)։ Ավելին, անհրաժեշտության դեպքում, գրական որոշ գործերի նկատմամբ հասարակական կարծիք ստեղծելու նկատառումներով, նա նույնիսկ դիմում է այլ քննադատների օգնությանը։ Այսպես, հատվածաբար մեջ է բերում Աբիսողոմ Հովհաննիսյանի «Ուսահայ բառարանի» մասին Ստ. Մալխասյանի գրախոսության դնահատականը։ Այդ բառարանը Մալխասյանը համարում էր «խիստ պակասավոր, ժամանակի պահանջներին չհամապատասխանող, վատ, ուրեմն և վնասակար մի շարադրություն, որի երևան գալը ամոթ պետք է համարվի ինչպես մեր գրականության, նույնպես և հասարակության համար, որ կարող է այդպիսի գրվածք յուր մեջ հանդուրժել»[80]։

Շիրվանզադեի մասնակցությունը «Արձագանքին» չի սպառվում հոդվածների այն շարքով, որոնք կրում են նրա ստորագրությունը։ Շաբաթաթերթի խմբագրատանն աշխատելու տարիներին նա տպագրել է բազմաթիվ անստորագիր խմբագրական հոդվածներ և մատենախոսություններ։ Մեր կարծիքով դրանցից են՝ «Հայ ուսանողություն», «Պ. Գ. Ջմշկյանի քսանհինգամյակը», «Պ. Գ. Ջմշկյանի քսանհինգամյակի հանդեսը» հոդվածները, հայ թատրոնին նվիրված մի տեսություն, Թիֆլիսում ազգային դրադարան ստեղծելու հարցին նվիրված բանավիճային խմբագրական մի հոդված, մի քանի մատենախոսություն[81], Րաֆֆու մահախոսականը և նրա կենսագրությունը[82]։

Մեր խորին համոզմունքով Շիրվանզադեին է պատկանում և «Հանդես գրականական և պատմական» պարբերականի առաջին գրքին նվիրված մատենախոսական ծավալուն հոդվածը[83]։ Հոդվածի լեզուն և ոճը, գրական հարցերի քննարկման գրականագիտական բարձր մա-

---

79 «Արձագանք», 1889, № 30։

80 Նույն տեղում, № 31։

81 Տե՛ս «Արձագանք», 1886, № 10, 14, 15, 28, 34—36։

82 Տե՛ս «Արձագանք», 1888, № 16։

83 «Արձագանք», 1888, № 44—46։

կարդակը, Պատկանյանին, Հովհաննիսյանին, Ծատուրյանին տրված ինքնատիպ և ճշմարտացի դնահատականները խոսում են այն մասին, որ մատենախոսության հեղինակը գրականագիտության ասպարեզի առաջնակարգ դեմքերից է։ Շիրվանզադեն այս հոդվածը չի ստորագրել, նկնելով հավանաբար գրական էթիկայից, քանի որ գրական գնահատական էր տալիս «Հանդեսի» առաջին գրքում տպագրված Գար. Ենգիբարյանի գրախոսությանը՝ իր «Օրիորդ Լիզա» վիպակի մասին։

«Արձագանքում» տպագրված Շիրվանզադեի գրաքննադատական հոդվածների նշանակությունը դուրս է գալիս մի շաբաթաթերթի սահմաններից։ Իր այդ վաստակով Շիրվանզադեն ժամանակի գրականագիտական միտքը հարստացրեց գեղագիտական կայուն սկզբունքներով։

Շիրվանզադեի ազդեցությամբ «Արձագանքի» տեսաբան Գար. Ենգիբարյանը հայ գրողներից պահանջում է հարազատ մնալ կյանքի ճշմարտությանը և գրական երկերում փորձել բացահայտել «հասարակական ծայրահեղ չարիքների բնական պատճառները»[84]։ Նա նույնպես իբրև դեկավար սկզբունք ընդունում է ռուս գրականության լավագույն ավանդույթները, վկայակոչում այն իրողությունը, որ ռուսական հասարակական կյանքում գրականության անմիջական ներգործությամբ է հասունացել ժողովրդի ազատության գաղափարը։ «Այսօր իսկ,— գրում է նա,— ռուս գրականության ընտիր ներկայացուցիչները, ինչպես Շչեդրին, Տոլստոյ, Ուսպենսկի, և շատ ուրիշները, միշտ նկարագրելով կյանքը, ցույց են տալիս ավելի արդարացի, ավելի մարդավայել, ավելի ճշմարիտ կերպով ապրելու կարելի լինելը։ Սոքա բոլորն էլ իդեալներ են տալիս և ստեղծում ապագայում նոր ժողովուրդ»[85]։

Ենգիբարյանը հանդամանալից վերլուծության է ենթարկում Սունդուկյանի «էլի մեկ զոհ» պիեսը, նշելով հեղինակի ստեղծագործության արժանիքներն ու փոքրիկ վրիպումները։ Իրավացիորեն նկատելով, որ փողը պատմական ժամանակաշրջանի իշխող ուժն է, որը տիրել է «բոլոր դասակարգերի հոգուն ու զգացմունքին», Ենգիբարյանը, սակայն, այդ տխուր իրողությունը համարում է հայ հասարակական կյանքի աղքատության և ժողովրդի մտավոր հարցասիրությունների բացակայության հետևանքը[86]։

---

[84] «Արձագանք», 1888, № 50։

[85] «Արձագանք», 1887, № 45։

[86] «Արձագանք», 1889, № 2։

Հետաքրքրական է Պռոշյանի «Ցեցեր» վեպի մասին գրած նրա գրախոսությունը։ Քննադատը նախ խոսում է սոցիալական այն փոփոխությունների մասին, որոնք կատարվել են գյուղում՝ «Սոս և Վարդիթեր» վեպի ժամանակներից հետո։ Այս շրջանի բնորոշ դիծը Ենգիբարյանը համարում է այն, որ համայնքի օրենքները խախտվում են. ցեցերը «ի չարն են գործ դնում գյուղական համայնքի օգտի համար եղած օրենքները»։ Նրանք կեղեքում են ժողովրդին, խախտում ավանդական սովորությունները, ոչնչացնում բարոյական գաղափարները։ Պռոշյանի վեպի արժանիքները քննադատը պայմանավորում է կյանքի երևույթների ճշմարտացի իմացությամբ։ «Միմիայն գեղարվեստի համար գրող հեղինակը այժմ գոյություն ունենալ չի կարող, եթե նա բանաստեղծ է, այսինքն՝ եթե արդարև տեսնում է կյանքը»։ Տեսնել կյանքի միայն գեղեցիկ կողմերը և նկարագրել անհոգ մարդկանց, անվայել բան է տաղանդավոր գրողի համար, շարունակում է Ենգիբարյանը. «Բանաստեղծի կոչումն է զարթեցնել յուր հասարակության գիտակցությունը, անկեղծորեն նկարագրելով նորա իսկական կյանքը»[87]։ Այս առումով նա գլուխ գործոց է համարում «Հացի խնդիր» վեպը։

Գ. Ենգիբարյանը ժամանակի գյուղական կյանքի լավատեղյակությամբ հանդերձ հետու էր պատմական օրինաչափությունների բուն ընթացքը հասկանալուց։ Մի բան նա ճշմարիտ էր նշմարում, որ սոցիալական տեղաշարժերը ընդհանուր էին հայ և ռուս իրականության համար, և որ Բալասան աղան նոր չինովնիկի և կարիերիստի տիպ է, հարազատ՝ Գոգոլի և Շչեդրինի կերտած չինովնիկների հիմնական տիպերին։ Սակայն, Ենգիբարյանի կարծիքով, գյուղացիների տգիտությունն էր պատճառը, որ գյուղական ցեցերը արձակ-համարձակ իրենց շահատակություններով էին զբաղվում։ Գյուղացին, բուն ժողովուրդը, կրավորական դեր է կատարում, որովհետև «յուր տգիտության պատճառով դեռ գիտակցաբար չէ բողոքում օրենքի անունով կատարվող հարստահարությունների դեմ»[88]։

Խուդոների և գյուղական այլ փաստաբանների գոյության պատճառը ևս՝ «ժողովրդի տգիտությունն է և վարչության անհոգությունը»։ Ավելին, ցեցերն իբրև մասնավոր երևույթ՝ աղարտում են ստեղծված ընդունելի կարգ ու կանոնը, նրանք «ի չարն են գործ դնում գյուղական

---

[87] Նույն տեղում, № 27։

[88] Նույն տեղում, № 29։

համայնքի օգտի համար եղած օրինքները» կամ նսեմացնում են «դատաստանական մեծ բարենորոգումների պատիվը և նշանակությունը»[89]։

Գ. Ենգիբարյանի լիբերալ-նարոդնիկական հայեցակետը չի խանգարում, որ նա նշմարեր Պռոշյանի սոցիալական վեպերի հնչեղության երևույթը՝ ժամանակի հայ իրականության մեջ և դեղագիտական հետաքրքրական դիտողություններով օգներ հեղինակին։ Այսպես, Ենգիբարյանն ընդգծում է կերպարների հոգեկան աշխարհի մակերեսայնությունը, նշում այն փաստը, որ ազգագրական նյութի առատությունը թուլացնում է գեղարվեստական երկի կառուցվածքը և այլն։ Այս ամենով հանդերձ Ենգիբարյանը կրկին շեշտում է Պռոշյանի վարպետությունը՝ ժողովրդական կյանքի ռեալ պատկերների ստեղծման, հայ իրականության բազմազան երևույթների ճշմարտացի ընկալման գործում։ Քննադատը մասնավորապես խոսում է այն հսկայական ծառայության մասին, որ մատուցում է Պռոշյանը հայ գրականության պատմությանը՝ օգնելով «մեր նորածնունդ գրականական լեզվի ապագա մշակմանը»։

1885 թ. հայ իրականության մեջ աղմուկ է բարձրացնում Մակար վարդապետ Բարխուդարյանցի կիսավիպական-կիսապատմական «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը։ Բանն այն է, որ ընթերցողների հետաքրքրությունը շարժելու նպատակով Մ. Բարխուդարյանցը խորհրդավոր մի պատմություն էր հորինել։ Գրքի հեղինակը, մտացածին Ապրես Բեկնազարյանը, իբր թե ողջ կյանքն անց կացնելով արկածների և շրջապատություններ մեջ, 1881-ին Ղարաբաղում հանդիպում է Բարխուդարյանցին, գրքի ձեռագիրը (որը պահում էր կրծքի վրա) հանձնում նրան, իսկ ինքը՝ անհայտանում։ Չորս տարի անց Բարխուդարյանցը գրաբարից թարգմանելով, այն տպագրում է, իսկ ձեռագիրը հայտարարում կորսված։ Արցախի պատմությանը նվիրված իր կիսաֆանտաստիկ (և ոչ մի դեպքում գիտական) աշխատությունը նա հռչակում է իբրև պատմական սկզբնաղբյուր։

Առաջինը Լեոն է արձագանքում այս արտառոց գրական շուխտանության փաստին։ Վրդովված այն բանից, որ «Մեղվի» տեսաբան Հայկունին խանդավառ մի ներբող էր տպագրել, Լեոն գիտական հիմնավոր փաստարկներով մեկ առ մեկ հերքում է հեղինակի «թեզերը» և նրա գիրքը համարում «մի պատմության արհեստական կմախք, զրած

[89] Նույն տեղում։

վիպական աստառի վերա»[90]: Առավել հիմնավոր էր Բաֆֆու նյութը: Մեծանուն գրողը, որ հռչակված էր իբրև Արցախի պատմության մեծ գիտակ, «Արձագանքի» 35—46 համարներում տպագրում է մի հոդվածաշարք, որն աչքի էր ընկնում շատ կուռ կառուցվածքով, փաստերի հարստությամբ և գիտական տրամաբանությամբ[91]:

Մանրամասնորեն քննարկելով «Դաղտնիք Ղարաբաղի» գիրքը, Բաֆֆին բացահայտում է կատարված գրական խարդախությունը, պատմական գրականության մեջ անհանդուրժելի համարելով նման գայթակղության երևույթը: Նա, ցույց տալով գրքի արտառոց սխալները, ապացուցում է, որ աշխատության հեղինակը Մակար Բարխուդարյանցն է: Վերջին հոդվածում Բաֆֆին շարադրել է իր եզրակացությունները. դրանք սուր են, անխնա, խորապես գիտական: Մ. Բարխուդարյանցի կատարած գրական կեղծիքը, որ նա համարում է «գրական ննջգավոր ավազակություն», մերժվում է հայագիտության կողմից:

«Արձագանքի» էջերում նույնատիպ հոդվածներ են տպագրել և Գյուտ քահանա Ազանյանը (Գ. Ջարբհանալյանի «Հայկական մատենագիտությունը» աշխատության մասին)[92] Ստ. Մալխասյանը (Շերմազանյանի «Նյութեր ազգային պատմության համար» աշխատության մասին) և ուրիշներ:

«Արձագանքում» 1895 թ. գրախոսություններ է տպագրել Հ. Ճաղարբեկյանը: Նա գրախոսել է ոչ միայն նոր տպագրվող հայ գրական երկերը, այլև, լավատեղյակ լինելով եվրոպական գրականությանը, մի շարք թարգմանական գործեր (Բյորնսոն, Օժեշկո):

Իր նպատակասլացությամբ աչքի է ընկնում Ճաղարբեկյանի գրախոսությունը նվիրված Ն. Մամիկոնյանի «Հաղարիդ մեկը» վիպակին: Մի քանի խոսքով նշելով Մամիկոնյանի վիպակի խոցելի կողմերը (կերպարների սխեմատիզմը, գրվածքի մելոդրամային հենքը և այլն), Ճաղարբեկյանը գրախոսության միջոցով փորձում է քննարկել հայ գյուղի վիճակը և ուղիներ նշել գրությունը փրկելու համար: Հայ գյուղը կողոպտվում է, գրում է նա. ինչպես տասնամյակներ առաջ Միկիտան Սաքոն, այնպես էլ 90-ական թվականների վերջին գործող վաշխառուները, թագավորում են գյուղում, թալանում աղնիվ մարդկանց, թշվառացնում

---

[90] «Արձագանք», 1885, № 14:

[91] «Արձագանք», 1886, № 35—46:

[92] «Արձագանք», 1885, № 7:

բազմաթիվ ընտանիքներ... Եվ այդ վիճակը չի փոխվում, հույսի ոչ մի նշույլ չկա, թե գյուղի բարոյական ու սոցիալական դրությունը կարող է զբաղեցնել մեկն ու մեկին: Գյուղն ապրում է ինքն իրմով, իսկ «ոչ ոք չի ուզում քաղաքի quasi հանգիստ կյանքը թողնել և մի ճրագ ձեռքին գյուղը մտնել»:

Ո՞վ պետք է ճրագը ձեռքին գյուղ գնար: Ճաղարբեկյանը հետու է գյուղացիության վիճակի սոցիալ-քաղաքական պատճառները հասկանալուց: Նրա համոզմունքով հայ կրթված երիտասարդությունը ցանկության դեպքում շատ բան կարող էր փոխել: Սակայն Ճաղարբեկյանը թերահավատ է այդ ուժի նկատմամբ. «Մեր մեծախոս ու սակավարդյուն նոր սերունդը ամբոխին գիտակցաբար ծառայելու գաղափարով չի ոգևորված: Դա կրիտիկայի է ենթարկում ամենքին, հաշիվ է պահանջում ամենքից, բայց մեկն իրեն չէ քննում, իրենից չի հաշիվ պահանջում»[93]: Այս հարցադրման մեջ դժվար չէ տեսնել նարոդնիկական աշխարհայեցության ազդեցությունը դրախոսի հայացքների վրա: «Արձագանքի» աշխատակիցներն, այսպիսով, փորձել են պատասխանել օրվա առաջադրած սոցիալական սուր հարցերին, որոնել են ինչ-որ տեսություն, ազդու միջոց, և ապավինել նարոդնիկական գաղափարախոսությանը, չտեսնելով այդ գաղափարախոսության հայեցական հիմքերը:

Նույն հայացքներն է զարգացնում և «Արձագանքի» վերջին տարիների գլխավոր աշխատակից Սիմեոն Հախումյանը, որը շարունակում էր հավատալ մտավորականության ուննեալիք ազդեցությանը տնտեսական կյանքի վրա:

Հախումյանն իր հոդվածներում զգալի տեղ է հատկացրել գրականության զարգացման հարցերին: Նա գրել է մի շարք գրախոսություններ, մասնակցել գրական բանավեճերին, փորձել ռուս գրականության զարգացման օրինաչափություններով բացատրել հայ նոր գրականության առաջընթացի ուղղությունը: Հախումյանը զբաղվել է նաև հայ նոր լեզվի զարգացման, այսպես ասած, լեզվի մաքրության հարցերով:

Իր «Պռեզիա չկա» հոդվածում նա մերձենում է այն հարցին, թե հայ գրողները որքանով են մոտ կանգնած գրականության զարգացման խնդիրներին: Կենցաղային հարցերի ոլորտներում սպառվելով, նրանք

---

[93] «Արձագանք», 1895, № 110:

չեն մոտենում կոնկրետ գրականության պահանջներին, չեն տեսնում կյանքի, հոգսերի, վշտի պոեզիան[94]։

«Արձագանքում» 1897 թ. գրաքննադատական հոդվածներ էր հրապարակում Սեդրակ Մանդինյանը։ Գևորգ Բարխուդարյանի բանաստեղծությունների դրքի, Հ. Խան-Մասհյանի Շեքսպիրից կատարած թարգմանությունների, «Գուլիվերի ճանապարհորդությունը» վեպի՝ Ղ. Աղայանի թարգմանության մասին նրա գրած հոդվածները անաչառ քննադատության լավագույն օրինակներից են։

1891—93 թթ. «Արձագանքում» հայ գրականությանը նվիրված մի շարք հոդվածներով և գրախոսություններով հանդես է եկել բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը։ Նրա հոդվածներից հատկապես արժեքավոր է Սրինգի (Արշակ Միհրաբյան) դրքերի մասին գրած գրախոսությունը[95]։ Գրականությանը ներկայացված «Արձագանքի» չափանիշի բարձրակետից Հովհաննիսյանը հեգնություն է համարում բանաստեղծություն անունն իսկ, որ տրված է «մի շարք թխած, աղքատիկ հանգերով մի կերպ իրար հետ կապած, անչափ, անհոտ ու անլի տողերի»։ Նա ափսոսում է, որ ժամանակի քննադատները բանաստեղծի մեջ ամեն բանից առաջ չեն որոնում «այն սրբազան հուրը», գրական տաղանդը, որը միայն կարող է ճշմարիտ բանաստեղծություն ստեղծել։ Ցավ է հայտնում, որ ժամանակի մամուլի օրգանների մի մասը խրախուսում է գրական խոտանը, «առանց ուշ դարձնելու գեղարվեստական մշակման, լեզվի մաքրության ու գեղեցկության, զգացմունքի անկեղծության ու խորության վրա»[96]։

Հովհաննիսյանը անստորագիր մի հոդվածով արևելահայ ընթերցողներին ծանոթացրել է Արշակ Չոպանյանի «Արշալույսի ձայներ» ժողովածուի հետ, հեղինակի համար գուշակելով փայլուն ապագա։ «Ո՛րքան լույս,— գրում է նա,— ո՛րքան ջերմություն, ի՛նչ գարուն է, որ բուրում է այս գիրքը։ ...Ամենայն ինչ այստեղ ինձ համար մարդկային է և իմ սրտին մոտ ու հասկանալի»։ Հետաքրքրական է, որ Չոպանյանը այս առիթով շնորհակալական նամակ է ուղարկում «Արձագանքի» խմբագրին՝ հոդվածագրին հանձնելու համար։ Հարմար չգտնելով խս-

---

94 «Արձագանք», 1894, № 86։

95 Հոդվածն անստորագիր է։ Հեղինակի ինքնությունը վերականգնել են Հովհ. Հովհաննիսյանի «Երկերի ժողովածուի» կազմողները։

96 «Արձագանք», 1891, № 46։

կույն պատասխանել, Հ. Հովհաննիսյանը միայն 1906-ին է հիշեցնում Զոպանյանին, թե ինքն է գրախոսել նրա գիրքը[97]:

Ստեփանոս Մալխասյանի գրախոսությունները նույնպես աչքի են ընկնում արտակարգ խստապահանջությամբ: Նա գտնում էր, որ հայ հասարակությունը նոր է սկսում զարգանալ, ճաշակ կազմել գրականության տեսակների մասին, ուստի նրան հարկավոր է տալ «ընտրելագույն գրվածքներ, որպեսզի նա լավ ուղղությամբ զարգանա և ուղիղ ճաշակ կազմե»: Հանգամանորեն քննելով Զ. Բալուղյանի բանաստեղծությունների ժողովածուն (Մոսկվա, 1891), Մալխասյանն այդտեղ չի գտնում «ոչ միտք, ոչ արվեստ, ոչ երևակայություն, ոչ իդեալ, այլ միայն տգեղ տողեր»[98]: Մալխասյանը մեծ նշանակություն է տվել տաղաչափական արվեստի հարցին, բանաստեղծներից պահանջելով հարգել տաղաչափության կանոնները: Տաղաչափությունը ոչ միայն պետք է կանոնավոր լինի քերականական և ոճաբանական տեսակետից, գրում է Մալխասյանը, «այլև պետք է պարունակե համաչափություն՝ շեշտի, հանգերի և վանկերի մեջ, մի կողմ թողնելով այն ճարտասանական արվեստական բազմաթիվ միջոցները, որոնք խոսքին կենդանություն և գեղեցկություն են տալիս և որոնք ուրեմն պարտավորիչ պետք է լինին տաղաչափին»[99]: Սակայն առանց ուսանելու այս կանոնները, գրում է նա, «մեր անիշխան գրականության մեջ դուրս են ընկնում «բանաստեղծներ», որոնց գրածները բանաստեղծություն չլինելուց զատ՝ տաղաչափություն էլ չեն»: Այս առումով Բալուղյանի գիրքն ամենատխուր օրինակն էր տալիս, քանի որ տաղաչափական կանոնների մարդում այդ փոքրիկ գրքում «հազարավոր սխալներ և մեղանչումներ» կային:

«Արձագանքի» գրաքննադատական բաժնի հոդվածները հիմնականում պատասխանում էին ժամանակի գրականագիտական մտքի պահանջներին և օգնում ընթերցողներին՝ ճիշտ պատկերացում կազմելու գրական նորույթների արժանիքների մասին:

Հայ գրականության մասին խոսելիս «Արձագանքի» աշխատակիցները նկատի ունեին թե՛ արևելահայ, և թե՛ արևմտահայ հատվածների գրականության ներդաշնակ զարգացման ծրագիրը: Ընդ որում, արևմը-

---

[97] Հ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1965, էջ 561:

[98] «Արձագանք», 1891, № 14:

[99] Նույն տեղում, № 13:

տահայ դրականության նկատմամբ ակնածանքի զգացումը դրսևորվում է ամեն պատեհ առիթի։

«Արձագանքի» էջերում տարիներ շարունակ տպագրվել են ոչ միայն արևմտահայ գրողների ստեղծագործությունները, այլև տեսական հոդվածներ, նվիրված պոլսահայ գրականությանը։ Այս առումով ուշագրավ է «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակից Վաղինակի «Թուրքիո հայոց գրականությունը 1885-ին» ուսումնասիրությունը[100]։ Վաղինակը, խոսելով հանդերձ թարգմանական գրականության և ֆրանսիական սնամեջ վեպերի նմանությամբ գրված համաճարակային երկերի մասին, 1885-ի արևմտահայ դրականության անվերապահ նվաճումն է համարում և արևելահայ ընթերցողներին ներկայացնում մի շարք գործեր։ Դրանցից էին՝ Ալիշանի «Սիսուանը» («Պատկ գործոց»), Սրվանձտյանցի «Համովհոտով» աշխատությունը, (որն ինչպես այս հեղինակի նախկին գործերը՝ Վաղինակի բնութագրությամբ «լի է հմտությամբ, տաղանդով, և որ ավելին է՝ հայրենասիրական ավյունով»), Միրախորյանի «Ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս» դիրքը։ Խոսելով Տյուսարի «Սիրանույշ» վեպի մասին, Վաղինակն այն ճշմարտացի կարծիքն է հայտնում, թե այն «ավելի կնմանի քերթողության ու ճառախոսության, քան՝ վեպի»։ Հայ ընթերցողները ծանոթանում են երիտասարդ Լ. Բաշալյանի, հրապարակախոսներ Բ. Քևչյանի և Մ. Չերազի վերջին գործերի հետ։ Այնուհետև Վաղինակը ներկայացնում է Արփիարյանի «Կյանքի պատկերները» վեպիկները, որոնք հեղինակի համար Թուրքիայի հայոց վիպասանության մեջ ապահովում են առաջին տեղը։ Առհասարակ Վաղինակը արևմտահայ դրական աշխարհում առաջնությունը տալիս է լրագրությանն ու հրապարակախոսությանը։ Արձակը խեղդվում է թարգմանությունների ու փոխառությունների հորձանքի մեջ, իսկ բանաստեղծները ոչնչով աչքի չեն ընկնում[101]։ Նա հիշում է և իր կատարած աշխատանքները, երկու հատվածների գրական աշխարհի նորույթները միմյանց ներկայացնելու ուղղությամբ։ Այսպես, Վաղինակը «Մասիս»-ում մի ամբողջ հոդվածաշար է զետեղում՝ նվիրված Թիֆլիսի հայերի մտավոր

---

100 «Արձագանք», 1885, № 8—9։

101 Ի դեպ, այս առիթով նրա այն արտահայտությունը, թե Կ. Պոլսում «Սրինգա-նման ցանցառ բանաստեղծներու թիվն շատ շատ է, որոց մասին անտարակույս արժան չէ խոսել», ցույց է տալիս, որ Վաղինակն այնքան լավատեղյակ էր արևելահայ դրականության վիճակին, որ անգամ կարող էր զավեշտի վերածել Սրինգի անունը։

կյանքին, լրագրությանն ու գրականությանը, «Արևելքում» հրապարակում է Գ. Խալաթյանի «Ընդհանուր հայացք ժողովրդական ղրույցներու վրա» ուսումնասիրությունը, և այլ աշխատություններ։ Մի այլ հոդվածում՝ «Կ. Պոլսոյ իմաստակ գրագետները»[102], վաղինակը կանգ է առնում գրաքննադատական մտքի տկարության հարցի վրա, պահանջկոտության բացակայությամբ բացատրում Եղիա Տեմիրճիպաշյանի «Անժամացույց ծաղիկը» շաղակրատանքի երևան գալու հնարավորությունը և զարմանք հայտնում՝ Ալիշանին տված նրա անփույթ գնահատականի համար[102]։

Շատ հետաքրքրական է, որ «Արձագանքը» երկու տարի անց անսահման ջերմությամբ նշելով Ալիշանի գրական գործունեության 50-ամյա հոբելյանը, ապացուցում է, որ արևելահայ և արևմտահայ գրականությունների միջև ստեղծված սահմանը լոկ պայմանական հասկացողություն է[103]։ Ղևոնդ Ալիշանը «Արձագանքի» խմբագրական հոդվածում ստանում է հետևյալ գնահատականը.

«Հայր Ալիշանը մեր ազգի ամենամեծ գրագետն է այժմ։ Նա հայկական դիտության միակ հեղինակությունն է ԺԹ դարու, նա է մեր նորագույն բանաստեղծության հայրը և վերջապես նորան է միայն պատկանում հայկական երկրորդ Ներսես պատվանունը»։

Եթե Մխիթար Սեբաստացին մի հրաշքով կենդանանար, գրում է հոդվածագիրը,— ապա յուր իդեալի անձնավորումը Ալիշանի մեջ կըգտներ։ «Հայր Ալիշանն է այժմյան հայոց ամենամեծ գրական գործիչը, նա է այն հսկան, որ կանգնած է մեր հին և նոր գրականության մեջ տեղը և երկուսին ևս հավասարապես պատիվ է բերում»[104]։

«Արձագանքի» էջերում տպագրվել են և անաչառ քննադատական հոդվածներ՝ արևմտահայ հեղինակների այս կամ այն աշխատության մասին. սակայն շատ հետաքրքրական է այդ հոդվածներից մեկի ճակատագիրը։ Մկրտիչ Բարխուդարյանը գրախոսում է Միրախորյանի «Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս» աշխատությունը և ամենայն բծախնդրությամբ նշում աշխատության մեջ եղած թերու-

---

102 «Արձագանք», 1888, № 21։

103 Ղևոնդ Ալիշանին նվիրված հոդվածները զետեղված են «Արձագանքի» 1890 թ. 8—13 համարներում։

104 «Արձագանք», 1890, № 8։

թյունները[105]: Շուտով խմբագրությունն ստանում է գրքի հեղինակի բաց նամակը՝ Մ. Բարխուդարյանին, որտեղ նա կշտամբում էր արվարյության մեջ նստողին, որը չգիտեր, թե դժոխքի մեջ ապրողի վիճակն ինչ է: Միրախորյանն իր նամակում պատմում է, թե գրաքննությունն ինչպես է աղճատել իր աշխատությունը: Հանված հատվածները ինքը հարկադրված է եղել փոխարինել կախման կետերով, որոնք Բարխուդարյանն իր հոդվածում հեգնաբար անվանում է «խորհրդավոր կետադրություն»[106]: Միրախորյանն այնուհետև նշում է, որ ինքն էլ գիտեր, թե որքան անհրաժեշտ է հայերի կողքին բնակվող այլազգի տարրի կյանքի պայմանները նույնպես նկարագրել, ապա բաղդատել միմյանց հետ, ներկայացնել երկրի բնական հարստությունները և այլն. «Բայց ի՜նչ կրնայի ընել,— գրում է նա,— երբ տեղվոյս ցենզուրն, որպես վերև դիտել տվի, իմ ծրագիրն յուր հաշվոյն կը հարմարեցներ, հապավելով այնպիսի կարևոր կտորներ, որոնք Ձեր ցույց տված փափագն թերևս մեծագույն մասամբ պիտի կարենային դոհացնել»[107]:

Այսպես ուրեմն, «Արձագանքի» խմբագրության համար կար մեկ ժողովուրդ, որն ուներ իր ամբողջական գրականությունը: Արևմտահայ, թե արևելահայ հատվածների գրականության թերությունները ընդհանուր մտահոգության առարկա էին, այս կամ այն թևի նվաճումները պատկանում էին բոլորին: Արևմտահայությանը բաժին ընկած քաղաքական ծանր պայմանները և դրանցից բխող բաղում հոգսերը, «Արձագանքը» շոշափում էր իբրև ընդհանուր ազգային հոգսեր, ողջ ազգի մտավորականության ուշադրությունը հրավիրելով դրանց վրա:

«Արձագանքի» էջերում հայ գրողների գրական երկերին զուգընթաց գրախոսվել են և բազմաթիվ թարգմանական ստեղծագործություններ: Հայ քննադատներին, սակայն, ամեն բանից առաջ մտահոգում էր գրականության այդ ճյուղի ցածր մակարդակը: Նրանք ցավով էին արձանագրում, որ թարգմանում է ամեն ոք, ով միայն այդ ցանկանում է, առանց տարրական լեզվական դիտելիքների, առանց գաղափար ունենալու ընթերցողների մտավոր զարգացման պահանջների և ճաշակի մասին, ի վերջո, առանց լեզվական անհրաժեշտ կուլտուրայի: Այդ պատճառով էլ Շիրվանզադեն և այլ գրախոսներ թարգմանական

---

105 «Արձագանք», 1886, № 25:

106 Նույն տեղում, № 32:

107 Նույն տեղում:

գործի առաջին արժանիքը համարում են դրա գաղափարական հագեցվածությունը, ընտրված երկի համապատասխանությունը հայ ժողովրդի օրվա պահանջներին: Ալ. Շիրվանզադեն արտահայտում էր թերթի ղեկավար սկզբունքը, երբ գրում էր, թե թարգմանվելիք գործը պետք է ընտրվի մեծ զգուշությամբ: «Կարող ենք պահանջել,— գրում է նա,— որ նա (թարգմանիչը) թարգմանի այն, ինչ որ լավերի մեջ լավագույնը և գեղեցիկների մեջ գեղեցկագույնն է»[108]:

Սակայն թարգմանվելիք երկի ընտրության, դրա գաղափարական բովանդակության հարցը թարգմանական աշխատանքի հաջողության մեկ կողմն է միայն ապահովում: Էական է և այն, թե ինչպիսի լեզվով և ինչ ոճով է թարգմանվում գեղարվեստական գործը: «Ոճը ոչ միայն գրվածքի արտաքին զարդն է,— գրում է Շիրվանզադեն,— այլև, այդպես ասած, նորա իմաստը և գաղափարը ձևակերպող, զորացնող, ուժ և հյութ տվող տարրն է»[109]:

Մեր կարծիքով Շիրվանզադեին է պատկանում «Համլետի» թարգմանության առիթով գրված անաստորագիր մի գրախոսություն: Թարգմանիչը, Ս. Արծրունին, ասես պարծենում էր, հայտարարելով, թե այդ աշխատանքը կատարել է 9 տարի առաջ, 23 օրում և հիվանդ վիճակում: Նա ավելացնում էր նաև, թե այժմ իր այդ ձեռագիրը տպարան է ուղարկել՝ առանց վերանայելու: Գրաքննադատը հենց միայն այդ զայրացուցիչ հայտարարության համար կշտամբելով թարգմանչին, նրա աշխատանքը խայտառակություն է համարում. չէ՞ որ թարգմանիչը գեթ մի պահանջ պետք է բավարարի, գրում է նա, այն է՝ հասկանա այն լեզուն, որից թարգմանում է և մտքերը քերականորեն ճիշտ արտահայտի թարգմանվող լեզվով: Այնինչ այս տարրական պահանջների դեմ անգամ մեղանչել էր Ս. Արծրունին: Հիշատակելով թարգմանության մեջ առկա բազում սխալները, Շիրվանզադեն բուռն ցասումով հարձակում է.

«Այսպիսի պատրաստությամբ և այս ձևով «Համլետ» թարգմանելն մենք համարում ենք քրեական հանցանք և ինչպես մի նոր քննադատ ասում է, «սեփական ազատության ի չարն գործ դնելու հանցանք», որի համար թե ինչքա՞ն պատիժ պիտի որոշել, այդ պ. Ս. Արծրունին ավելի ճիշտ և լավ կիմանա իբրև հին իրավաբան»[110]: Հայ իրականությունը

---

[108] «Արձագանք», 1888, № 45:

[109] Նույն տեղում, № 29:

[110] «Արձագանք», 1889, № 19:

80—90-ական թթ. ուներ իր հռչակված թարգմանիչը, որը տասնամյակներ շարունակ կատարում էր այդ շնորհակալ գործը։ Փիլիպոս Վարդանյանն էր դա, «Արձագանքի» մշտական աշխատակիցը։ Եվրոպական դասական հեղինակների երկերի նրա թարգմանությունները մեծ տպաքանակով առաձված էին հայ իրականության մեջ և սակայն նրա թարգմանությունները ևս «Արձագանքում» քննվում էին անաչառ կերպով։ Շիլլերի «Ավազակների» թարգմանության առիթով գրախոսը (Ն Ն) պահանջում է կատարելագործել թարգմանական արվեստը և հրատարակվող դասական յուրաքանչյուր գործին կցել ծանոթագրություններ և մատենագիտական տեղեկություններ[111]։

Ստ. Մալխասյանը, քննարկելով Պաուլ Հայզեից կատարած նրա թարգմանությունները, Վարդանյանին կրկին զգուշացնում է մեծ պատասխանատվությամբ ընտրել թարգմանվելիք երկերը, քանի՞ որ «լավագույն և օգտակար գրվածքների սով է տիրում մեր մեջ»։ Մալխասյանն այնուհետև հանդամանորեն խոսում է Վարդանյանի թարգմանությունների լեզվի մասին, նրան կշտամբում հնացած բառերի գործածության համար («Բոնի գործածելով հին, արդեն անկիրառելի դարձած, մեռած բառերը՝ մաքառում է իսկապես լեզվի ընդհանուր օրինքի դեմ»). քննադատում է օտարաբանությունների և ռուսական լեզվաձևվերի համար, որոնք խճողում են նրա հայերենը։ Առհասարակ թարգմանչից պահանջում է ուշադրություն դարձնել ոճի կենդանության վրա («Նորա թարգմանությունների մեջ բառերը, ինչպես մաթեմատիկական նշանակներ՝ կատարում են լոկ իրանց պաշտոնական դերը, առանց հուզելու, շարժելու ընթերցողին»)[112]։ Ստ. Մալխասյանը միաժամանակ բացատրում է, թե պահանջկոտությունը Փ. Վարդանյանի նկատմամբ բնական է, «որովհետև նա արդյունավոր թարգմանիչ է, որի գրվածքները տասնյակ հազարներով են կարդացվում»[113]։

Սեդրակ Մանդինյանը շատ բարձր է գնահատում Հովհաննես-թան Մասեհյանի արվեստը։ Մասեհյանը ո՛չ միայն հայացնում է Շեքսպիրին, գրում է Մանդինյանը, այլև «մեր գրականությանը տալիս է ընտիր թարգմանության ամենավայելուչ օրինակ։ Նրա թարգմանությունը և՛ հայերեն է, և՛ հասկանալի, երկու էական հատկություններ, որոնց բա-

---

111 «Արձագանք», 1890, № 7։

112 «Արձագանք», 1891, № 8։

113 Նույն տեղում։

ցակայությամբ հերոսաբար փայլում է մեր այլ թարգմանությունների մեծագույն մասը» (ընդգծումները հեղինակինն են)[114]։

«Արձագանքի» քննադատները, առաջնորդվելով վերոհիշյալ պահանջներով, տարբեր ժամանակներում կյանքի ուղեգիր են տվել էդ. դե Ամիչիսի «Սիրտ» գրքի, Ուլանդի, Լեմոնտովի, Նադսոնի բանաստեղծությունների թարգմանություններին։ Լավ է ընդունվել լեհ գրող Էլիզա Օժեշկոյի «Գյուղական փաստաբան» վիպակի թարգմանությունը։ Սակայն, «Արձագանքի» գրախոսները խստորեն քննադատել են Դոգոլի «Վերաքննիչը» կոմեդիայի, Մոլիերի մի քանի նավելների, Մակիչի «Ներոնի Մարիոն» վիպակի թարգմանությունների խոցելի կողմերը։ Պրոֆեսոր Ինգրամի «Ադինայի նամակները» գրքի գրախոսը (Ա. Բ.— Ավ. Բաբայան) նշում է, թե դա մեկն է այն աշխատություններից, որոնք եթե անգամ չթարգմանվեն, հայ գրականությունը կորուստ չի ունենա[115]։ Թարգմանիչ Հովսեփ քահանա Տեր-Պետրոսյանցի աղավաղված հայերենը գրախոսին հիմք է տալիս խորհրդածելու. «Աւանիք թե հայոց լեզուն մի անտեր լեզու է. ամեն մի տեղից վեր կացողն իրավունք է համարում իրեն՝ յուր ձեռքն ունեցած կացնով ու մուրճով մի restauration անել նրա մեջ։ Բայց այդ բարբարոսական ավերածին մի վերջ պիտի լինի՞, թե ոչ»[116]։ «Արձագանքի» ուղղության համար շատ հատկանշական է, որ գրական լեզվի օրենքների դեմ թույլ տրվող մեղանչումները և կամայականությունները նույնպես բացատրվում են քննադատության թուլությամբ։

«Արձագանքի» գրաքննադատական բաժնի նյութերը հատատում են անցյալ դարի 80—90-ական ԹԹ. հայ քննադատական մտքի առնականացման իրողությունը։

Հավատարիմ մնալով Մ. Նալբանդյանի ջանքերով ստեղծված քննադատական ռեալիզմի տեսությանը, հայ գրականագետները 80—90-ական ԹԹ. զեկավարվում էին այդ սկզբունքներով, գրական նորանոր փաստերով հաստատում դեմոկրատական գրականության հսկայական դերը հայ հասարակական կյանքում։ Հայ քննադատները միաժամանակ զեկավարվում էին 40—60-ական ԹԹ. քննադատական ռեալիզմի

---

[114] «Արձագանք», 1897, № 94—95։

[115] Քրիստոնեական ուսմունքի լավատեղյակությամբ հրեա Ադինան նրուսաղեմից ուղարկած նամակներում պատմում է Քրիստոսի ծննդի, գործունեության, մահվան մասին։

[116] «Արձագանք», 1897, № 43։

ռուսական դպրոցի լավագույն ավանդույթներով և հայ գրականությանը տալով հասարակական մեծ նշանակություն, գրողներից պահանջում էին ակտիվ վերաբերմունք՝ կյանքի երևույթների նկատմամբ։

«Արձագանքի» գրական գործիչներից շատերը գեղարվեստական գրականության փաստերի հիման վրա ընդհուպ մոտենում էին սոցիալական հարցերի քննարկմանը։ Ելնելով ժամանակի նարոդնիկական աշխարհայացքի տեսանկյունից, դրանց լուծման մեջ նրանք հաճախ մեծ տեղ էին հատկացնում մտածող անհատների ակտիվ գործունեությանը և լուսավորության գործոնին։ Այդ մոտեցումով էլ՝ նրանք գրականությունը տոգորում էին դեմոկրատիզմով, պաշտպանում ժողովրդի շահերը՝ փողի իշխանության դեմ ուղղված կապիտալի աշխարհում։

Սակայն, պայքարելով գրականության ժողովրդայնության և գաղափարական բովանդակության համար, «Արձագանքի» տեսաբանները վճռական նշանակություն էին տալիս նաև ձևի հարցերին։ Միայն ձևի և բովանդակության ներդաշնակությամբ է, որ, նրանց համոզմունքով, գրական երկը կարող էր պահպանել իր ներգործուն ուժը։ Այս էր պատճառը, որ նրանք իրենց հոդվածներում մեծ ուշադրություն էին նվիրում կերպարների տիպականացման ու հոգեբանական խոր վերլուծության անհրաժեշտության, տաղաչափական արվեստի կատարելության, գրական երկերի ոճի ու լեզվի, թարգմանական արվեստի հետ կապված հարցերին։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ «ԱՐՁԱԳԱՆՔԸ»

Ա. 1882—1893 ԹՎԱԿԱՆՆԵՐ

1882 թ. երբ սկսում է հրատարակվել «Արձագանքը», քաղաքական մթնոլորտը Արևմտյան Հայաստանում ավելի քան լարված էր։ Հավաստիանալով այն բանում, որ բարենորոգումները չեն իրականացվում, հայ գործիչները ժողովրդին նախապատրաստում են զինված ելույթների։ Այդ շարժումներն առավելապես կազմակերպված բնույթ են ստանում Կարինում, որտեղ 1881-ի գարնանը Խ. Կերեքցյանի գլխավորությամբ հիմնադրվում է «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը։ Այն իր շարքերում ընդգրկում էր Կարինի և շրջակա բնակավայրերի աշխատավորներից մի քանի հազար մարդ։ Նրանց խնդիրն էր ոչ միայն նախապատրաստել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը, այլև ապստամբության ճանապարհով վերականգնել Հայաստանի անկախությունը[1]։

Նոր թափ է հաղորդվում կրթական-լուսավորական ընկերությունների գործունեությանը. ուժեղանում է երկու հատվածների մտավորականների համագործակցությունը։ Կովկասն արտակարգ ուշադրությամբ արձագանքում էր Արևմտյան Հայաստանից լսվող օգնության կանչե-

[1] *Կարինի շարժումների պատմությունը հանգամանորեն ներկայացված է Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆի Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը մենագրության մեջ (Երևան, 1965)։ Տե՛ս նաև Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 182—199։*

րին և նյութական զգալի նպաստներով օժանդակում ժողովրդին թե՛ սովի արհավիրքի, թե՛ համաճարակների, թե՛ հրդեհների առիթներով: Օգնությունը արևմտահայերին արտահայտվում էր և գործնական աշխատանքով: Երևանի խումբը, Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի գործիչները մեծ եռանդով նախապատրաստվում էին օգնելու առաջիկայում սպասվող շարժումներին: Աբդուլ Համիդի քաղաքականությունը, սակայն, ձախողում է նախապատրաստական աշխատանքները: Ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանը հետևողականորեն հետապնդում էր հայ հպատակների ազատասիրական բաղձանքների ամենաչնչին իսկ արտահայտությունները: «Արգելվում են ազգային ներկայացումները. պատմական այն ողբերգությունները, որոնց մեջ երևան էր հանվում հայ ժողովրդի անցյալի փառքը, նրա թագավորների, իշխանների սխրագործությունները: Դպրոցական ծրագրերից և դասագրքերից հանվում են հայոց պատմության վերաբերյալ հատվածները: ...Արգելքը տարածվում է նույնիսկ մարդանքի դասի վրա, պատճառաբանելով, թե դրանով աշակերտության մեջ արթնացվում են ազգական հակումներ:

Հայ թագավորների անունները պարունակող օրացույցները համարվում են հեղափոխական: ...Արգելվում է Թիֆլիսում հրատարակվող հայերեն պարբերականների («Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փորձ») մուտքը Կ. Պոլիս»[2]:

Մայրաքաղաքում խստացվում է գրաքննությունը: Մի շարք հայ խմբագիրներ ձերբակալվում են և աքսորվում: 1883 թվականի մարտին «Մասիս» թերթը երկու ամսով դադարեցվում է՝ «անհիմն տեղեկությունների և անտեղի կարծիքների համար»[3]: Այնուհետև, երբ սկսում է լույս տեսնել, խմբագիրներին պաշտոնապես արգելվում է հրապարակել դավառներից ստացվող նամակները՝ հարստահարության և կեղեքումների փաստերի մասին: Անհնար է դառնում «ամենափոքր մի կետի մեջ քննադատել Դրան ընթացքը»: «Կառավարությունն ամեն կողմից դժվարություններ է հարուցանում հայ մտքի արտադրության

---

2 Գ. Ստեփանյան, Արփիար Արփիարյան, Երևան, 1955, էջ 75—76:

3 «Անհիմն տեղեկություններ ըսվածը,— գրում է «Արձագանքի» թղթակիցը,— «Մասիս» լրագրին՝ Հայաստանեն, մանավանդ Վանեն և Բաղիշեն առնելով հրատարակած թղթակցություններն են, որ Բուրք պաշտոնատարաց գնդումներն ու քրդաց բռնությունները կծանուցանեին: Իսկ «անտեղի կարծիքներ» ըսվածը, կենթադրվի, թե Հայաստանի վիճակի վրա «Մասիսի» խմբագրական տեսություններն են» (տե՛ս «Արձագանք», 1883, № 23):

դեմ»[4], բողոքում է «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակիցը։ Դժվարանում է «Արձագանքի» մուտքը Կ. Պոլիս. 1882-ին Կարինից դիմում են խմբագրությանը, որ «Արձագանքը» չուղարկեն Ռուսաստանի և միջազգային փոստի միջոցով, «զի տեղվույս կառավարության կողմանե կրռնվին և ստացողաց վերա վատ կարծիքներ կունենան»[5]։

Գավառներում սանձազերծվում են քուրդ և չերքեզ ցեղապետները, որոնք ասպատակում են հայկական գյուղերը, թալանում ժողովրդի ունեցվածքը, հալածում հայերին և զավթում նրանց հողերը։ Այս օրերին սուլթանը ձևական կալանքում գտնվող 64 քուրդ բեկերի ազատում է և թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը։ Այստեղ նրանց կատարած խժդժություններն այն աստիճանի են հասնում, որ Դիարբեքիրի կառավարիչ Էդհեմ փաշան և Ներսես պատրիարքը հրաժարական են տալիս։ Ամբողջ մի տարի պատրիարքական աթոռը թափուր էր և աղգային կյանքը՝ տագնապների մեջ։ Հակոբ Պարոնյանը «Արձագանքին» ուղարկած իր երկու թղթակցությունների մեջ խոսելով այդ անբնական վիճակի մասին, մատնացույց է անում ժողովրդի, և մասնավորապես գավառի հայության իշվառությունը։ «Մեղք է այս ժողովրդյան», գրում է Պարոնյանը, Աղգային ժողովի երեսփոխանների ուշադրությունը հրավիրելով ստեղծված վիճակի վրա։ «Մասիսի» թղթակիցը նույնպես բողոքում է պատրիարքի ընթացքից։ Նա պետք է ղգա, որ հրաժարականների դարն անցել է և դրանով անհնար է դարմանել ազգի վերքերը, գրում է թղթակիցը։ Այն բանից հետո, երբ «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը հայտնաբերվում է և խմբակի 70-ից ավելի գործունյա անդամները ձերբակալվում են, Աբդուլ Համիդը պատրիարքին հրավիրում է պալատ և պահանջում անցնել իր պարտականությունների կատարմանը։ Թերթերը հաղորդումներ են տպագրում սուլթանի բարյացակամության և Ներսեսի ստացած ընծաների մասին։ Ողջ գաղտնիքը նրանում էր, սակայն, որ սուլթանը, հավրոպական պետությունների միջամտությունը կանխելու և բարենորոգումներ անցկացնելու՝ նրանց հնարավոր պարտադրումներից խուսափելու համար, աշխատում է քաղաքական լուրջ կերպարանք չտալ Կարինի դեպքերին և այդ գործը մամուլի էջերում ներկայացնում է առա-

[4] «Արձագանք», 1883, № 37։
[5] «Արձագանք», 1882, № 43։

վել անմեղ հանգամանքներում[6]։ Բանակցությունները պատրիարքի հետ՝ հետապնդում էին միևնույն նպատակը։ Հետագայում պարզ է դառնում, որ սուլթանը չի ուզում կատարել տված խոստումներից ոչ մեկը. չէր լուծվում Կիլիկիայի կաթողիկոսությունը Կ. Պոլսի պատրիարքարանին միացնելու հարցը, հայաբնակ գավառների առաջնորդները կանչվում էին Կ. Պոլիս և անուղղակիորեն գավառները մատրնվում էին անտերության։ Հայկական գրքերը շարունակում էին մնալ կասկածի տակ, Կարինի ձերբակալվածների վիճակը չէր թեթևանում։

Այս պարագաներում ահա, Արևմտյան Հայաստանի առօրյան շարունակում է մնալ Կովկասի հայ թերթերի ուշադրության կենտրոնում։ Երբ 1883-ին «Մասիսի» խմբագրությունը կշտամբում է արևելահայ լրագրողներին այն բանի համար, որ նրանք հեռու են կանգնած ազգային հարցերից, Ա. Հովհաննիսյանը հանդես է գալիս մի բացատրությամբ։ Նա գրում է, թե Կովկասի հայ թերթերը երկու հիմնական հարց են շոշափում. ներքին, տեղական հոգսերը և արևմտահայության վիճակը։ «Մենք իբրև հայ և իբրև մարդ՝ անտարբեր չենք կարող մնալ այն կսկծանքին, որ լսվում է Տաճկա-Հայաստանից և այդ պատճառով կցանկանայինք գիտենալ նոցա դրությունը, և թե ինչ ելք պիտի ունենա խոստացած բարենորոգմանց խնդիրը»[7]։ Հիրավի, տարիներ շարունակ Պոլիս, Վան և Կարին քաղաքներում «Արձագանքն» ուներ իր սեփական թղթակիցները, որոնց նամակները հրապարակվում էին գրեթե ամեն համարում։ Ա. Հովհաննիսյանը միաժամանակ Արևմտյան Հայաստանին նվիրված ուշադրության արժանի հոդվածները արտատպում էր Կովկասի և արևմտահայ պարբերականներից։

Դեռևս 1881-ի սեպտեմբերին, ծրագրելով հաջորդ տարվանից հրատարակել «Արձագանքը», Ա. Հովհաննիսյանը նամակներ է հղում արևմտահայ իր բարեկամներին և նրանց հանձնարարում թղթակցել «Արձագանքին»։ Բաղեշի նրա թղթակցի (Ե. Ս.) պատասխան նամակից պարզվում է Հովհաննիսյանի հանձնարարականների բնույթը. նա գրում է. «Այս գրեթե առաջին անգամն է, որ կլսեմք ու բախտ կունենամք ձեր կողմեն գիրը ընդունել և կարևորություն տրվիլ այս կողմի հայոց ներքին և արտաքին կացության, ասոնց դրից ու վիճակին, իրենց երկրի

---

[6] Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 186—187։

[7] «Արձագանք», 1883, № 46։

բարոյական կենաց, տեղագրության, վիճակագրության, տուրբերու, տեղական կառավարության ընթացից, երկրի զարգացման, ուսման, հասաջադիմության և այլ նյութերու վերաբերությամբ բրած նարցերեղ»[8] (ընդգծումը մերն է—Մ. Մ.):

Մուշի Բղթակիցը (Հին-Մշեցի) հիշում է Կ. Պոլսում Հովհաննիսյանի հետ իրենց ունեցած հանդիպումն ու զրույցը և պատրաստակամություն հայտնում Բղթակցել «Արձագանքին»: Նա հույս է հայտնում այդ կերպ ծառայություն մատուցել իր Բշվառ հայրենիքին, «որուն արդի վիճակն եթե տեսնուս,— ավելացնում է Հին-Մշեցին,— անշուշտ պիտի լաս ինձ հետ»[9]: Նա խոսում է գավառապետների կամայականության, ժողովրդին պարտադրվող հարկադիր աշխատանքի, դպրոցական գործի ողորմելի վիճակի, եղվիտների գործունեության հետևանքների մասին և այլն: Պանդխտության հոսանքը Մուշից՝ չի դադարում, գրում է Բղթակիցը, որի հետևանքով Մուշի դաշտավայրի 100-ից մեկ մասը հազիվ է մշակվում: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում և Սղերդից ու Վանից ուղարկված Բղթակցությունները: Վանի Բղթակից «Հրանտը»[10] նկարագրում է 1883-ի հունիսի 24-ին առաջնորդարանում տեղի ունեցած ժողովրդական հուզումները, երբ ժողովրդի անունից սուլթանին հանրագիր ուղարկած երևելիներին ժողովուրդը ծեծում է և դուրս նետում առաջնորդարանից:

Բազմաթիվ այլ նյութերի միջոցով «Արձագանքի» ընթերցողները ամբողջական պատկերացում էին կազմում Արևմտյան Հայաստանի հայ ժողովրդի վիճակի մասին. ավարառություն, սպանություն, հայրենիք դարձող պանդուխտների կողոպուտ, հավատափոխություն, շնչերի ու բևկերի հարստահարություն, բռնի տեղահանություն—ահա ոչ լրիվ թվարկումը այն աղետների, որոնց մեջ ապրում էր պաշտպանությունից զրկված մի Բշվառ ժողովուրդ: «Արձագանքը» գնահատվում է Արևմտյան Հայաստանում: Բղթակիցներից մեկը ցանկություն է հայտնում, որ իրենց հուզող թեման արծարծվի առավել լայն չափով: Նա գրում է. «Ո՞րչափ փափագելի էր, որ «Արձագանք» կարող լիներ յուր պատվական սյունակաց մեջ ավելի տեղ տալ Թուրքիո հայոց գործերուն, ընդարձակելով յուր թերթը կամ շաբաթը մեկ անգամն ավելի

---

[8] «Արձագանք», 1882, № 4:

[9] Նույն տեղում, № 1:

[10] Հրանտ կեղծանունով գրում էր Մ. Փորթուգալյանը:

հրատարակելով[11]։ Խմբագրությունը հավանորեն ընդառաջելով այս և նման ցանկություններին, տպագրում է Ալ. Երիցյանի «Համառոտ տեսություն ներկա տաճկահայոց» հոդվածը[12]։ Այն նախատեսված էր նրանց համար, ովքեր ծանոթ չլինելով Արևմտյան Հայաստանի ժողովրդի նյութական ու բարոյական դրության հետ, կարող էին դժվարություններ հանդիպել՝ Թուրքիային նվիրված հոդվածներն ընթերցելիս[13]։

1882—83 թթ. Ա. Հովհաննիսյանն առանձին հոդվածներ է նվիրել «Միացյալ ընկերության» գործունեությանը։ Հրապարակվել են վիճակագրական տվյալներ՝ այդ ընկերության ղեկավարությամբ գործող դպրոցների վերաբերյալ[14]։

1883 թ. ընթացքում կաթողիկոսական նոր ընտրությունների կապակցությամբ «Արձագանքի» խմբագրությունը լայնորեն լուսաբանում է նախընտրական պայքարը Կ. Պոլսում, որն ընթանում էր բավականաչափ բարդ իրադրության մեջ։

80-ական թվականների սկզբին «Արձագանքը» մի շարք հոդվածներ է նվիրում և արևմտահայության քաղաքական կյանքի վերլուծությանը։ Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո անցած տարիները հայերին ցույց էին տվել 61-րդ հոդվածի իսկական արժեքը։ Հույսերը՝ կապված Գլադստոնի հետ, չարդարացան։ Անգլիացի դիվանագետը 1880-ին անցնելով իշխանության գլուխ, նախ Անգլիայի օգտին կարողացավ ավարտել անգլո-աֆղանական պատերազմը և Աֆղանստանին պարտադրեց անգլիական խնամակալությունը, ապա 1882-ին օկուպացրեց Եգիպտոսը։ Հայկական հարցի ասպարեզում նա կատարեց մի քանի քայլ. Կ. Պոլսից հետ կանչեց Թուրքամոլ Լեյարդին, նրան փոխարինելով Գոշենով. 1881-ին Գոշենի փոխարեն Պոլիս է

---

[11] «Արձագանք», 1883, № 41։

[12] «Արձագանք», 1884, № 8—9։

[13] Հատկանշական է, որ դեռևս 1886 թ. բնութագրելով Կովկասի հայ պարբերականները, Պ. Տոնապետյանը Հովհաննիսյանի շաբաթաթերթի մասին գրում էր. «Արձագանքը» հույժ կհետաքրքրվի Թուրքիո և մասնավորապես Կ. Պոլսո հայոց կյանքով, այս պատճառով «Թուրքիո հայոց լրագիր» սիրտոսն ստացեր է ժողովուրդեն» (տե՛ս «Մասիս», 1886, № 3808, էջ 657)։

[14] Ընկերությունն ուներ 26 արական և 9 իգական դպրոց, որտեղ աշխատում էին 79 մանկավարժներ և 5 տեսուչներ։ Այդ դպրոցներում սովորում էին 2512 աշակերտ և 800 աշակերտուհի։

ուղարկվում նոր դեսպան լորդ Դյուֆերինը, որը հետագայում կատարում է դիվանագիտական նույն քայլերը, ինչ՝ իր նախորդները։

Դլադստոնի հանձնարարությամբ 1880-ին խոշոր պետությունների Կ. Պոլսի 6 դեսպանները նախապատրաստում և սուլթանին են ներկայացնում հավաքական մի հուշագիր, որով պահանջում էին նրանից իրականացնել 61-րդ հոդվածից բխող պարտավորությունները։ Բ. Դուռը նախ ձգձգում է իր պատասխանը և ապա՝ մերժում պահանջը։ Այս հուշագրին հետևում են սուլթանի նոանդագին ջանքերը՝ հայկական հարցը էրբև այդպիսին, գործնական ճանապարհով ջնջելու ուղղությամբ։ Այս շրջանի հետ է կապվում քուրդ ազգաբնակչության մեջ սկսված բացատրական աշխատանքը, որի նպատակն էր նրանց վախեցնել հայկական թագավորության ուրվականով։ Հայտնի է, որ Վանի առաջնորդ Խրիմյանի ահազանգումներն այս ուղղությամբ ոչ մի ներգործություն չեն ունենում անգլիական դիվանագիտության վրա, իսկ թուրքական կառավարությունը հետագայում համոզվելով իր ընտրած քաղաքականության «էֆեկտիվության» մեջ, մեկ տասնամյակ անց արդեն հրապարակավ ստեղծում է քրդական «Համիդիե» կոչվող զինված գնդերը։ Դլադստոնը լռում էր, բայց շատ պատկառազդու էր բուլղարների պաշտպանի՝ նրա հմայքը. և ամեն անգամ, երբ նրա դեսպան Դյուֆերինը այցելում էր Բ. Դռան պաշտոնատար անձանց՝ արևմտահայերի սիրտը թունդ էր առնում մի պահ։ Բայց միայն մի պահ։ Հայ լրագրողները բավականաչափ փորձ ունեին՝ կանխատեսելու համար իրադարձությունների վախճանը։ Եվ լրագրողները զգաստացնում էին ընթերցողներին։ Այսպես, «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակիցը 1883-ի գարնանը լորդ Դյուֆերինի Կ. Պոլիս կատարած այցից հետո գրած մի հոդվածում («Նամակ Պոլսից») ծաղրում է ստեղծված իրավիճակը։ Սուլթանը ընդառաջելով դեսպանի արած հիշեցմանը, թուրք պաշտոնյաներից մի մասնաժողով է կազմում, որը պետք է ուսումնասիրի բարենորոգումների հարցը. հավանաբար այդ ընթացքում հարկ կլինի ստեղծել մի հանձնախումբ ևս, ապա մի հանձնաժողով, որը կպահանջի մասնախումբ կազմել, և այլն, և այլն։ Ու մինչդեռ այս քաշքշուկը կշարունակվի, հարցը կպաղի, բարենորոգումները կմոռացվեն, մինչև որևէ դեսպանի նոր հիշեցում։ Այնժամ «գարձյալ թուրքերը դոհունակության ժպիտով մը՝ «Աղեկ մտքերնիս ձգեցիք, մենք այդ բանը ընդհանուր երկրին համար կուզեինք» կ'ըսեն և շուտ մասնաժողով մը կ'ընտրեն, որ փութա հանձնախմբի մը միջոցով խնդիրը

ուսումնասիրելու համար, և այլն, և այլն։ Եվ այսպես, մինչև ի լրումն ամաց կամ մինչև այն ժամանակ, որ ամեն համբերություն սպառի և հարստահարյալը «իր ձեռքովը տեսնե իր գլխուն ճարը»[15]։

Հոդվածագիրը քննադատում է Ազգային վարչության նվաստացուցիչ քաղաքականությունը, որը հանգում էր կառավարությանը սիրաշահելուն։ Կարինի դեպքերի տպավորության տակ նա զգաստացնում էր հայերին և նրանց հրահրում կենդանի գործունեության, անդիջում բողքի։

Որ հայ հասարակությունն արդեն իրեն չէր հանգստացնում հույսերով, այդ մասին է վկայում ևս մեկ ուշագրավ փաստ։ 1884-ին Վանի անգլիական հյուպատոսը ճաշկերույթ է տալիս Խրիմյան Հայրիկի պատվին և բաժակաճառում, ի դեպ, այն միտքն է հայտնում, թե լորդ Դյուֆերինը, անկասկած կլուծի բարենորոգումների հարցը։ Անդրադառնալով ճառախոսի այն մտքին, թե այդ բանի համար, այնուամենայնիվ, շատ ժամանակ է պետք և հայերը պետք է դիմանան, Խրիմյան Հայրիկն իր պատասխան խոսքում ասում է. «Ժամանակները զարմանալի կերպով փոփոխված են, և ինչպես ամեն տեղ, Տաճկահայաստանում էլ ժողովուրդը զգալի և տեսանելի մեծամեծ փոփոխություններ կրած և հետզհետե էլ կրելու ենթակա է։ Հայ ժողովուրդը ասկե չորս կամ հինգ հարյուր տարվա առաջվանը չէ։ Այն ատենին ընդհանրացած գաղափար մ'էր հայոց մեջ, թե իրենք քրիստոնյա լինելով, պես պես հալածանքներ և չարշարանքներ պարտ էին կրել իրենց այլակրոն դրացի ազգերի կողմեն ի փառս Աստուծո և քրիստոնեական կրոնին։ Այո, նրանք կհավատային ճակատագրի և նախասահմանության և այս կերպով կկարծեին, թե իրենք աշխարհ եկած են միայն հարստահարություն, նեղություն և տանջանք քաշելու, ուստի գերմարդկային համբերությամբ կտանեին և կհանդուրժեին մինչև անգամ ամենադառն լուծը, բայց այդ ամենը անցած է այժմ. ժողովուրդը քիչ շատ դիտակցություն և բարօրություն ստացած է»[16]։

«Արձագանքում» տպագրած իր երկու թղթակցություններում Հ. Պարոնյանը նույնպես ծաղրում է բարենորոգումները ձախողելու Բ. Դռան քաղաքականությունը և հայտնում այն միտքը, թե թուրքա-

---

[15] «Արձագանք», 1883, № 21 (հոդվածն անստորագիր է)։

[16] «Արձագանք», 1884, № 2։

կան կառավարությունը «ավելի սիրով կհոժարի» իր երկրները ուրիշներին տալ, քան «յուր երկրին մեջ բարեկարգություն մուծանել»։

1883 թ. «Արձագանքի» արևմտահայ թղթակիցները իրենց որոշակի կարծիքն ունեին և Անգլիայի դիվանագիտության մասին։ Երբ այդ թվականի աշնանը անգլիական դեսպանը տեսնվում է սուլթանի հետ, Կ. Պոլսի թղթակիցը գրում է «Արձագանքում». «Ես չեմ կրնար շատ լավատես լինել, և կարելի, և հավանական իսկ կնկատեմ, որ Անգլիան վերստին Տաճկահայաստանի խնդիրն յուր ձեռք գործիք ընել յուր մեկ մասնավոր խնդիրն առաջ քշելու համար։ Վերջապես պետք չէ մոռանանք, թե անգլիական շահերն յաչս Անգլիոյ գերազանցություն ունին ուրիշ ամեն շահուց վրա, և թե Տաճկահայաստանի խնդրոյն մեջ ևս արդեն փորձով տեսած ենք, թե Անգլիա յուր մասնավոր շահուց ևեթ առաջացման հետամուտ է, և ո՛չ թե հայոց խեղճ ժողովրդյան ի նպաստ բաց մ'դնելու»[17]։

Մի քանի օր անց, «Արձագանքի» Պոլսի թղթակիցներից Նորայրը մի հարցաղրույցի միջոցով պարզում է, որ Գլադստոնի կաբինետը քանի որ «ծանր խնդիրներ ունի կարգադրելիք», Դյուֆերինին հանձնարարված չէ ռեֆորմների հարցում ճնշում գործադրել սուլթանի վրա։ Նա պետք է միայն քաջալերի և խրախուսի՝ այդ ուղղությամբ Բ. Դռան ձեռնարկելիք քայլերը։ Եթե այդպես է, հետևում է Նորայրը, պետք է հուսալ, որ անգլիական դեսպանը բոլորովին չէ, որ պետք է լքի հայկական հարցը, այլ պիտի քաջալերի Բ. Դռան բարի տրամադրությունները, խորհուրդներ ու խրատներ տա, «բայց չպիտի ստիպե, ճնշում չպիտի բանեցնե, թուրքերը չպիտի նեղե, վշտացնե Տաճկահայաստանի ստիրով...»[18] (ընդգծումը՝ Նորայրինն է)։

Շատ հետաքրքրական է, որ միանգամայն լրջորեն այս միտքը հաստատում է անգլիական դեսպանատան օրգան «Eastearn Express» թերթում զետեղված «Օսմանյան հայք» հոդվածը։ Այնտեղ ասված էր, թե քանի որ Բ. Դռան և հայ հպատակների մեջ փոխըմբռնում է նկատվում, պետությունները պետք է ուրախանան դրա համար։ Ինչ վերաբերում է Անգլիային, ապա հոդվածագիրը նշում է, թե փափագելով հանդերձ, որ հայերը հանգիստ և ապահով ապրեն, Անգլիան կուզենար ազատ լինել պատասխանատվությունից և նախադասելի է համարում, որ «Բ. Դուռը ինքը լինի հայոց պաշտպանը և որ հայերը Բ. Դռան

---

17 «Արձագանք», 1883, № 41։

18 Նույն տեղում, № 43։

պաշտպանության մեջ գտնեն իրանց սրտի բաղձանքը»։ «Արձագանքի» խմբագրությունը արտահայտում է իր վերաբերմունքը քննարկվող հարցի մասին[19]։ «Հետաքրքիր է գիտենալ,— գրում է խմբագրական հոդվածի հեղինակը,— թե մինչև օրս ի՞նչ ազդ աշխարհիս երեսին «Բ. Դռան պաշտպանության մեջ» կարողացել է գտնել յուր բաղձանքների գոնյա ամենափոքրիկ մասի իրագործումը։ Սակայն անգլիական դեսպանատան օրգանը բոլորովին անհույս չէ թողնում Տաճկաստանի հայերին. նա բոլոր մեծ պետությունների կողմից դեսպանագիտաբար խոսելով ասում է հետևյալը.

«Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը բոլոր մեծ տերությանց վերա պարտականություն է դնում ապահովելու այդ հոդվածի գործադրությունը։ Բայց գործադրությունը Թուրքիային է պատկանում և տերությունները այն ժամանակ միայն գործի կխառնվին, երբ Թուրքիան չգործադրե»։

Հոդվածագիրը եզրափակում է. «Արդարև, քանի որ բոլոր պետությունները աչքով տեսնում են, որ Թուրքիան ահա այսքան տարի շարունակ գործադրում է 61-րդ հոդվածը, ինչ կարիք կա գործին խառնվելու»[20] (ընդգծումը հեղինակինն է)։

1882—83 թթ. Աբ. Հովհաննիսյանն զգալի տեղ է նվիրել և Կարինի իրադարձություններին։ Հավանաբար այդ շրջանում սեփական թղթակից չունենալով Կարինում, «Արձագանքի» խմբագիրը վերը հիշված դեպքերը լուսաբանում է «Մշակից», «Մասիսից» և ժամանակի այլ թերթերից կատարած արտատպությունների միջոցով։ «Կարնո շարժումը» մշտական խորագրի տակ հանգամանորեն ներկայացվում է քաղաքական այն իրադրությունը, որը ծնունդ է տվել շարժմանը, խոսվում է շարժման նպատակի մասին, մեջ են բերվում կազմակերպության անդամների երդման բնագիրը, նրանցից ոմանց տված համարձակ պատասխանները հարցաքննության ժամանակ[21]։ «Արձագանքի» խմբագրությունը միաժամանակ մեկնաբանում է այդ իրողությունը, հույս ունենալով, թե եվրոպական պետությունները գոնե այս

---

19 Հոդվածի լեզուն և երգիծական ոճը մեզ իրավունք են տալիս ենթադրել, որ այն պատկանում է Ա. Հովհաննիսյանի գրչին։

20 «Արձագանք», 1883, № 45։

21 «...Այո, մենք կազմել ենք այդ ընկերությունը մեր տառապյալ եղբարց օգնելու համար, որոնք թուրք պաշտոնատարներու և ավազակաց խմբերու հարստահարության տակ կճնշվին» (տե՛ս «Արձագանք», 1882, № 45)։

առիթով կղզաստանան և կհիշեն 61-րդ հոդվածի նկատմամբ իրենց հանձնարարված պարտավորությունը։

«Ի՞նչ է Կարնո բանտի և Ազիզիէ կոչված ամրոցի մեջ բանտարկվածների հանցանքը,— հարցնում է շաբաթաթերթի տեսաբանը,— լսիր և սարսափիր, Եվրո՛պա։ Նոցանից մի քանիսի տների մեջ գտել են մի մի ուռուվներ, մի մի հրացան և horribile dictu բոլորեցունց տանը... դանակներ։ Ի՞նչ, թուրք կառավարությունը ձգտում է վերադառնալ անդառնալի կերպով անցած ժամանակներին, նա զրկում է հային ինքնապաշտպանության իրավունքից և դավադրություն է համարում տանը մեջ զենք ունենալ այն ավազակների դեմ պաշտպանվելու համար, որոնց կառավարությունը ուժ կամ կամք չունի զսպելու[22] (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։

1883 թ. նոր տարու առաջնորդողը («Թուրքիայի խոստումները») նույնպես նվիրված է Կարինի շարժմանը։

1882 թվականի վերջին Ա. Հովհաննիսյանը «Արձագանքի» էջերում զեկուցում է Կարինից ստացված մի նամակ, որտեղ խոսվում էր այդ նահանգի հյուսիսային գավառների հայ գյուղերի կողոպուտների ու անապահովության մասին։ Նամակագիրը ցավով ու ափսոսանքով է հիշում, որ հուսահատության գնից իրենց արթնացրած «Կարնո հայոց ընկերությունը» դժբախտ վախճան է ստացել. «Մեր անպոչ ու անգլուխ ընկերությունը աշնչացավ ու գնաց, թողնելով մի քանի թշվառներու բանտին խոնավության մեջ, բայց թուրքաց 10—12 տարի առաջ կազմված համախմբություն մը, զոր կտրված կհամարեինք պատերազմեն ի վեր, նորից սկսավ ցույց տալ յուր վիշապային գլուխները...»[23]։

1884 թ. Կ. Պոլսից ստացված թղթակցություններն առավելապես կապված էին կաթողիկոսական ընտրությունների հետ։ Տեղական նյութերը նույնպես լուսաբանում էին նախընտրական պայքարի հետ կապված հարցերը։ Ս. Հովհաննիսյանը մեծ եռանդով պայքարում էր Ներսես Վարժապետյանի թեկնածության անց կացնելու օգտին։ Նրա ջանքերը հաջողությամբ են պսակվում և գարնանը տեղի ունեցած ընտրություններում Ներսես պատրիարքը ընտրվում է իբրև կաթողիկոսության առաջին թեկնածու։ Սրան հաջորդում են «Արձագանքի» համար անբարենպաստ ժամանակներ։ 1884-ի նոյեմբերից մինչև 1885-ի հունիսը

---

22 «Արձագանք», 1882, № 45։

23 Նույն տեղում, № 46։

շաբաթաթերթը փակվում է ութ ամսով։ Սակայն հուլիս ամսից իսկ, երբ «Արձագանքը» սկսում է հրատարակվել, Ա. Հովհաննիսյանը կրկին անդրադառնում է արևմտահայության առօրյային, լուսաբանելով այդ հատվածի կյանքը՝ Ներսես Վարժապետյանի մահվանը հաջորդած տագնապալից ժամանակներում։ Նա միջամտում է պատրիարքարանի գործունեությանը, զգաստացնում նորընտիր Հարություն Վեհապետյանին՝ նրա թույլ տված քաղաքական վրիպումների ժամանակ։ Այսպես, մի առիթով, երբ լուր է տարածվում այն մասին, թե պատրիարքը Լոնդոնում հանձնարարել է մեկին զբաղվելու Հայաստանի մեջ բարենորոգումներ մտցնելու գործով, Վեհապետյանը հրապարակավ հերքում է այդ լուրը, հայտարարելով միաժամանակ, որ հայոց ազգը երջանիկ է տաճկաց տիրապետության ներքո։ Ա. Հովհաննիսյանը Հյուսիսային գործակալության հրապարակած այս մտահոգիչ լուրը տպագրում է առանց մեկնաբանումների։ Իր վերաբերմունքը նա արտահայտում է միմիայն հաղորդման վերնագրի մեջ, որն ստացել է «երջանիկ ազգ» երգիծական ձևակերպումը[24]։

Իրականում ի՞նչ վիճակում էր գտնվում այդ «երջանիկ ազգը»։ «Արձագանքի» էջերում 80-ական թվականների կեսերին ավելի հաճախ են երևում գավառի հայության անապահով կյանքն արտացոլող թղթակցություններ։ Առանձին շրջաններում քուրդ ավազակապետերը չբավարարվելով ամենօրյա կողոպուտներով, հայկական գյուղերի նկատմամբ իրենց իշխանավորի իրավունքներն էին օրինականացնում։ Երկու ավազակներ, Կարինի շրջակա հայ գյուղերի վրա իշխելու հարցում վիճում են և մեկը վտարում է մյուսին՝ «իր հայերի» սահմաններից։ «Արձագանքի» թղթակից Վաղինակը (Պետրոս Տոնապետյան) պատմում է Տիգրանակերտի գավառում կատարված բռնաբարության և ոճրագործությունների փաստի մասին, կովկասահայերի ուշադրությունը հրավիրում է Նիկոմեդիայի գավառի Արսլան բեկ գյուղի հրդեհից տուժածներին օգնելու հարցի վրա։ Սովորական պատմություն էր պանդրխտությունից տուն դարձող մշակ հայերի կողոպուտը «հայրենիքի» սահմաններից ներս։ Կ. Պոլսից Վան դառնալու ճանապարհին 80 պանդուխտ հայեր կողոպտվում և նետվում են ձյունների մեջ։ Ալաշկերտի սահմանի վրա կողոպտվում են Թիֆլիսից Բուլանըխ դարձող 120 մշակներ, որոնցից 6-ը սպանվում է։ «Կարնո գավառը ոչ մի ժա-

---

[24] «Արձագանք», 1885, № 5։

մանակ այսպես ազատ թատր դարձած չէր հրոսակախմբերու սանձարձակ ավարառությանց, ինչպես այս տարի», գրում է թղթակիցներից մեկը։ «Մեր վայնասուն ճիչերը լեռները կթնդացնեն, մերայնոց սրտերն արյամբ կլեցվին», բացականչում է երկրորդը։ «Ժողովուրդը կճնշվի հարստահարությանց և տրոց ծանրության տակ,— ազդարարում է Կորյունի թղթակցությունը Վանից[25]։— Պանդխտությունը և գաղթականությունը կամայացուցանեն մեր երկիրը։ Թուրքը կուզե հազարավոր տարիներ ապրող հայ ազգը բնաջինջ անել աշխարհիս վրայեն։ Անձնապաշտպանությունը բացարձակապես կարգելվի»[26]։

Հետագայում «Արմենիա»-ից արտատպված մի հոդվածից հայտնի է դառնում, որ Պողոս եպիսկոպոսի և նրա արբանյակների ջանքերով հալածվում են Կեդրոնական վարժարանի ուսուցիչները և աշակերտներից ոմանք, որոնք դպրոցը փակվելուց հետո կիրակնօրյա դասընթացներ էին ստեղծել։ Նրանցից վեց հոգի ձերբակալվում են։ Նույն հոդվածում ասված էր նաև. «Գյուղացոց վիճակն արդեն անտանելի եղած է ամեն կերպով։ Կհարստահարվին թուրք կառավարութեննեն, վաշխառու հայ հարուստներեն, քուրդերեն և թուրքերեն։ Պանդխտության դիմողներու թիվը սկսած է շատանալ և օրըստօրէ կվերջանա հայ տարրը Հայաստանի մեջ»[27]։

«Տաճկական Հայաստանի ներկա վիճակը» առաջնորդողում հետևյալ ընդհանրացումն է կատարվում. «Վերին աստիճանի սրտամաշ տեսարան է ներկայացնում այժմ Տաճկահայաստանը...»։ Այնուհետև մեկ առ մեկ նշվում են այն պատճառները, որոնք ծայրահեղ թշվառության էին հասցրել ժողովրդին[28]։ Հայ հրապարակախոսները ստեղծված վիճակի համար պատասխանատու էին համարում և Ազգային ժողովին, ենթադրելով, թե Ազգային սահմանադրության հետևողական կիրառմամբ, ինքնավարության սկզբունքի պաշտպանությամբ, պատրիարքարանի նպատակասլաց գործունեությամբ կարելի կլիներ ինչ-որ չափով ամրապնդել հայության քաղաքական կյանքը, ակտիվացնել ազգի ներքին ուժերը։ Եվ, սակայն, Ազգային ժողովը չէր արդարացնում

---

25 Կորյունը Վանի Կեդրոնական վարժարանի մաթեմատիկայի և բնական գիտությունների ուսուցիչ Գալուստ Ասլանյանն էր (տե՛ս Մ. Փորթուգալյանի 7. 8. 84 թվակիր հանձնարարական նամակը. ԳԱԹ, Ա. Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 52)։

26 «Արձագանք», 1884, № 40։

27 «Արձագանք», 1886, № 48։

28 Նույն տեղում, № 9։

իրեն։ Մի շարք թղթակցություններում քննադատվում է պատրիարքարանի գործունեությունը և Ազգային ժողովի անպատասխանատու բնույթը։

1887 թ. հուլիսին Զեյթունում բռնկված մեծ հրդեհի հետևանքով կործանվում է անհամեմատ բարվոք վիճակում գտնվող հայության այդ հատվածի տնտեսությունը։ Այրվում են 1000 տուն, 300 կրպակ, մի շուկա, 7 եկեղեցի, 5 դպրոց։ 6000 հայեր մնում են անօթևան։ Խրիմյան Հայրիկը դիմում է արևելահայ լրագրողներին, խնդրելով տեղի հայերի օգնությունը։ Ողջ հայության գործուն մասնակցությամբ հսկայական միջոցներ են հավաքվում և Զեյթունում կրկին վերանորոգվում են ճանապարհները, կառուցվում են եկեղեցիներ, բնակելի և դպրոցական շենքեր։ Սակայն եթե արևմտյան հայության այդ հատվածի վիճակը սկսում է մի փոքր ամրանալ, ողջ Արևմտյան Հայաստանում տնտեսական և քաղաքական վիճակն ավելի է ծանրանում։ 1888-ին Շատախում ձերբակալվում է Արսեն վարդապետ Թոխմախյանը։ Ձերբակալվում են «Արմենիային» բաժանորդագրված պոլսահայ մի քանի վաճառականներ։ Արգելվում է «Միացյալ ընկերություն» կազմակերպությունը, որի անդամները մանկավարժական աշխատանքով էին զբաղված։ Հայ հրապարակախոսներն այս խճճված պարագաներում մեծ հույսեր էին կապում նորընտիր պատրիարք Խորեն Աշըգյանի հետ, որը, ենթադրում էին, պետք է ջանար սերտ կապեր հաստատել գավառահայության հետ և օգներ նրա օրվա հոգսերին։

Աշըգյանը, սակայն, 1890-ին Գում-Գափուի նշանավոր ցույցից հետո հրաժարական է տալիս։ Մի առ ժամանակից թևև նա սուլթանի պահանջով կրկին անցնում է իր պարտականությունների կատարմանը, բայց կառավարության հարուցած արգելակների շնորհիվ խանգարվում է Ազգային ժողովի աշխատանքը։ 1891-ից արդեն Ազգային ժողովի նիստերը չէին թույլատրվում. կասեցվում է Սահմանադրության գործադրությունը։ Աշըգյան պատրիարքը մեկուսացվում է. այդ օրերին գործում էին միայն կրոնական և քաղաքական ժողովները։ «Արձագանքը» «Կ. Պոլսո պատրիարքությունը» առաջնորդողում բացահայտելով Ազգային ժողովի և պատրիարքարանի վերջին տարիների երկդիմի, հաշտվողական քաղաքականությունը, կոչ է անում այդ օրգաններին՝ հետևել ժամանակի պահանջներին և ընթանալ ազնիվ ճանապարհով։

1889 թ. իր հետ բերում է մի նոր արհավիրք։ Աղատ ու անպատիժ՝ Մուշի հայ գյուղերում սրարշավ թափառում էր ավազակաբարո Մուսա բեկը, իր անցած ճանապարհին թողնելով դիակներ, մոխիր, արյուն ու արտասուք։ Հայ թևրթերը լցվում են անդուստ ավազակի ոճրագործությունների պատմություններով։ «Արձագանքի» գլխավոր աշխատակից Շիրվանզադեն կշտամբում է հայերին՝ աղետալի այդ օրերին նեբքին պայքարով զբաղվելու համար. «Պետք է մի ժողովուրդ շատ թշվառ լինի բարոյապես և շատ տկար մտավորապես,— գրում է նա «Տաճկահայերը» առաջնորդողում,— որ այն տագնապալից րոպեին, երբ յուր գոյությանը անխնա հարվածում են զանազան մուսա բեկեր, ավազակապետներ, բարբարոս թշնամիներ, հենց այդ րոպեին սկսի զբաղվել ներքին խռովություններով»[29]։ Նա հիշում է վանի Պողոսյան և Ապողոսյան կուսակցություններին, որոնք միմյանց հարվածելու համար դիմում էին կառավարության միջամտությանը և անուղղակիորեն նպաստում արտաքին բռնությունների զորանալուն։

«Տաճկահայաստանի դևպքերի առիթով» առաջնորդողում Շիրվանզադեն արևմտահայության ուշադրությունը հրավիրում է ինքնապաշտպանության կազմակերպման հարցի վրա։ Մուսա բեկի դատավարության առիթով մի շարք հայ վկաներ մեկնում են Պոլիս։ Մի ճանապարհորդ իմանալով նրանց առաքելության նպատակը, զարմանք է հայտնում, որ իրենց հողի վրա ավազակին պատժելու հեշտ գործը թողած, այդ հայերը հսկայական ճանապարհ են կտրում՝ հուսալով ստանալ տաճկական դատարանի ողորմածությունը։

Շիրվանզադեն ցավով նշում է, որ հայերին անհասկանալի է մնում այդ հանդիմանության իմաստը։ «Նոքա չեն հասկանում ճանապարհորդի պարզ բացատրությունը, ավելի՛, նոքա խելագար են համարում այդ տեսակ միտք հայտնողին,— գրում է Շիրվանզադեն։— Ահա տաճկահայերի հենց այս վրդովեցուցիչ անգիտակցությունն է, որ նախ և առաջ մենք կցանկանայինք ոչնչացված տեսնել։ Այնուհետև վերոհիշյալ հարցի պատասխանը ինքնըստինքյան կպարզվի, և ժողովուրդը բնականաբար կհասկանա, թե ինչ է պարտավոր անելու յուր գրությունը որոշ չափով ապահովելու համար։ Նա կզգա, որ յուր ճակատագրի վճռակը իրանից է կախված և բնավ յուր փրկությունը չպիտի ապասի առաջավոր, թեկուզ հայ, աղաներից...»[30]։

[29] «Արձագանք», 1889, № 29։

[30] Նույն տեղում, № 31։

1889 թ. Աբգար Հովհաննիսյանի դրամական գործերը սաստիկ վատանում են։ Այդ վիճակից դուրս գալու համար, հավանաբար, նա վճռում է շաբաթաթերթը դարձնել պատկերազարդ։ 1890 թ. և 1891-ի առաջին կեսին «Արձագանքը» հրատարակվում է իբրև պատկերազարդ շաբաթաթերթ՝ մի փոքր փոփոխված ծրագրով։ Թվում է՝ դարձյալ դրամական ճգնաժամով պետք է բացատրել այն, որ խմբագիրն այդ տարիներին թղթակից չուներ Արևմտյան Հայաստանում և այդ հատվածի հայության առօրյան ներկայացնում էր ոչ պարբերաբար և այն էլ՝ պոլսահայ թերթերից կատարված արտատպությունների միջոցով։ Այս ամենի հետևանքով 1890—91 թթ. Ա. Հովհաննիսյանն օբյեկտիվորեն հնարավորություն չուներ ակտիվ միջամտություն ցույց տալու պոլսահայ գործերին։

1891 թ. երկրորդ կեսից «Արձագանքը» հրատարակվում է իբրև երկօրյա լրագիր և այդ թերթի հիմնական բաժիններից մեկն է դառնում «Տաճկական Հայաստանը»։ Ա. Հովհաննիսյանը կրկին կապեր է հաստատում Կ. Պոլսի բարեկամների հետ և հանգամանալից հոդվածներում քննարկում Արևմտյան Հայաստանի առօրյան։ Քանի որ Կ. Պոլսի թղթակից Վաղինակը ձերբակալվել էր թուրքական կառավարության կողմից, 90-ական թթ. «Արձագանքին» թղթակցում է Արմենը։

1892 թ. սկսվում էր նոր ակնկալություններով։ 1886-ին պաշտոնաթող եղած Գլադստոնը կրկին անցնում է կառավարության ղեկը։ Ա. Հովհաննիսյանը բազմաթիվ աղբյուրներից քաղված մի մեծածավալ հոդված է տպագրում, նվիրված Գլադստոնին[31]։ Հոդվածում ներկայացվում էր Գլադստոնի կյանքը և գործը, մասնավորապես հիշատակվում էր նրա գործունեությունը բուլղարական շարժումների օրերին։ Եթե կոմս Բիկոնսֆիլդի քաղաքականությունը հետապնդում էր «Ռուսաստան կամ Տաճկաստան» նպատակը, ապա Գլադստոնն առաջնորդվում է «ճնշված ազգությունները կամ Տաճկաստանը» նշանաբանով, ուրախությամբ էր «Արձագանքը»[32]։

---

[31] «Արձագանք», 1892, № 94—119։

[32] Հետաքրքրական է, որ 1891-ին Ռ. Պատկանյանը նույնպես հուսահատության մեջ հայացքը հառում է դեպի Գլադստոնը։ Նրան ուղղած իր անձնական նամակում նա թախանձում է փրկել հայերին, որոնք հավատացած են, թե Գլադստոնի հոնքի մի շարժումը կերջանկացնի իրենց, ինչպես բուլղարներին։ «Կապասենք, կսպասենք, կսպասենք», պարտավորեցնում է հայ բանաստեղծը և ապա բանաստեղծի իրավունքով կշտամբում. «... և մի՞թե քու այս վերջին պարտքդ չի տված պիտի հանդիսանաս ահավոր դատավորի աթոռի» (տե՛ս ԳԱԹ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, վավ. 303)։

Սակայն, որքան էլ «Արձագանքի» խմբագրությունը որոշ ակընկալություններ ունենար կապված Գլադստոնի հետ, նրա առաջնահերթ խնդիրն էր լուսաբանել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները։ 1892—93 թթ. լրագրում տպագրվում են մեկը մյուսից ցնցող թղթակցություններ, որոնք ներկայացնում էին գավառների բազմապիսի հոգսերն ու վշտերը. սով, հիվանդություններ, ավարառություն և սպանություններ և ի լրումն այդ ամենի՝ մասսայական գաղթ («անմարդանում է Մուշը, ամայանում է Տարոնը...»)[33]։ Որոշ վայրերում ժողովուրդը փորձում էր կազմակերպել դիմադրական շարժումներ, բայց այդ փորձերը ձախողվում էին. «Արձագանքը» «Ծաղիկ» պարբերաթերթից արտատպում է «էնկյուրիի դատապարտյալք» հաղորդումը, որտեղ նկարագրված էր թուրքական լծի դեմ ըմբոստացած 53 հայերի դատական պրոցեսը[34]։

Բազմաթիվ թղթակցություններում խոսվում է այն մասին, որ սուլթանն արգելել էր Ազգային ժողովի հրավիրումը, անուղղակիորեն հայերից խլելով 1860 թ. նրանց տրված իրավունքները[35]։ Խմբագրությունը բարձրաբարբառ խոսում է այդ ապօրինության մասին. «Տաճկաստանը Եվրոպայի առաջ, բայց մանավանդ Ռուսաց մեծազոր պետության առաջ խոստումն է ավել ապահովել քրիստոնյաների կյանքն ու գույքը. նրանց ու մուսուլմաններին հավասար համարել օրենքի առաջ։ Ո՞ւր է այդ հավասարությունը։

Դեռ ավելի ևս. ռուսաց ղենքից ընկճված՝ տաճիկները խոստացել են բոլոր մեծ պետություններին, որ հայաբնակ գավառներում պիտի բարենորոգումն մտնեն։

Ո՞ւր են այդ բարենորոգումները։

Մի՞թե հին և սրբագործված օրենքներն ու արտոնությունները á la turque վերացնելը կարող է բարենորոգումն համարել»[36]։

Այս օրերին «Եվրոպական մեծ պետությունները և Թուրքիայի քրիստոնյաները» ծրագրային հոդվածով Հովհաննիսյանն անուղղակիորեն դիմում է ռուսաց կառավարության օգնությանը։ Խոսելով Արևմտյան Հայաստանում սկսված կեղեքումների, հալածանքների ու հափշտակության նոր ալիքի մասին, որը դուռ էր բացել արտագաղթի

---

[33] «Արձագանք», 1893, № 130, 131, 142։

[34] Նույն տեղում, № 94։

[35] «Արձագանք», 1892, № 17, 26, 1893, № 94, 133։

[36] «Արձագանք», 1893, № 133։

համար, խմբագրությունն այդ բացատրում է նրանով, որ հայերն անպաշտպան են Թուրքիայում: Օրթոդոքս քրիստոնյաներին այդ երկրում պաշտպանում է Ռուսաստանը, կաթոլիկները դտնվում են Ֆրանսիայի հովանավորության տակ, իսկ բողոքականները՝ Անգլիայի: Մինչդեռ՝ «տաճիկ ամբոխի և կառավարող պաշտոնյաների աչքում հայ քրիստոնյաները պաշտպան չունին»[37]:

Խորամուխ լինելով հայերի իրավունքների պաշտպանության հարցի պատմության մեջ, խմբագրությունն ափսոսանք է հայտնում, որ երբ Ռուսաստանը 1878-ին «իր ավանդության հավատարիմ մնալով, այն է, օգնելու տաճկահպատակ քրիստոնյաներին, կամեցավ գործել հօգուտ հայերի» և ձեռք բերեց 16-րդ հոդվածը, նրան խանգարեցին: «Եվրոպան, նմանապես հավատարիմ յուր քաղաքականության, չկամեցավ ռուսներին տալ առանձին իրավունքներ հայերի վերաբերությամբ» և 16-րդ հոդվածը վերափոխեց 61-ով: «Հայտնի է, թե ինչ արդյունք ունեցավ հայ քրիստոնյաների համար 61-րդ հոդվածը»[38], ավարտում է խոսքը հոդվածագիրը:

Այս օրերին, երբ Երուսաղեմից էջմիածնի իր նստավայրն էր գալիս Խրիմյանը, թերթում միաժամանակ տպագրվում է Երիցյանի մեծածավալ հոդվածը («Նորընտիր կաթողիկոսների ուղևորությունը դեպի ս. էջմիածին և ռուս տերության մատուցած հարգանքները» պատմական տեսություն ներկա դարուս վերաբերությամբ)[39]: Դժվար չէ նկատել, որ «Արձագանքի» խմբագրությունը մատնանշելով ռուսական կառավարության բարեհաճ վերաբերմունքը հայ կաթողիկոսների նկատմամբ, հայցում էր կառավարության հովանավորությունը՝ նաև դրսի աշխարհում ցրված հայության համար:

1893 թ. խմբագրությունը եղույթ է ունենում Թիֆլիսի թուրքական հյուպատոսի մի հայատարարության դեմ[40], ինչպես և բանավեճի մեջ մտնում այդ հայատարարության ոգին պաշտպանող հունդարական ներ-

---

[37] Տե՛ս «Արձագանք», 1893, № 94, 98:

[38] Նույն տեղում, № 98:

[39] Նույն տեղում, № 98 և հետո:

[40] Հանդես գալով «Նոր-դարի» էջերում, հյուպատոսը բողոքում էր «Արձագանքի» խմբագրության դեմ, որը մի քանի հոդված էր նվիրել Արևմտյան Հայաստանից սկսված դաղթին՝ դեպի Ռուսաստան: Հյուպատոսը նշում էր, թե «Արձագանքի» խմբագիրը մի «առանձին նպատակով՝ «հասարակության մտքերը պղտորելու համար» մեծացնում է նշած «չնչին գաղթականության» երևույթը (տե՛ս «Արձագանք», 1893, № 109):

կու թերթերի հետ։ Այսպես, նա զավեշտի է վերածում Սազվարի եղբայրների շաբաթաթերթի մի առաջնորդողը, որի հիմնական իմաստն այն էր, թե քանի որ հայերը երջանիկ են ապրում Թուրքիայում, պետք է հավատարիմ լինեն տերությանը և «ազդեն իրանց դրսի եղբայրների վրա, որ նրանք հանգիստ կենան»[41]։

Հաջորդ բանավիճային հոդվածի հեղինակ Ստ. Կանայանը հիմնավորապես ջարդում է արևելագետ վամբերիի մի հոդվածի թեզերը, որը նա գրել էր ի պաշտպանություն թուրքական հյուպատոսի՝ վերը հիշված բողոքի։ «Տաճկահայոց նոր դաղթը» ծավալուն իր հոդվածում Կանայանը տրամաբանության մեծ ուժով և փաստերի միջոցով հերքում է մամուլի էջերում հերյուրված այն կեղծիքը, թե իբր հայերի դաղթը «ոչ մի կերպով կարելի չէ վերագրել... կառավարչության վատ վարմունքին և կամ քրդերի տված նեղություններին»։ Նա հաստատում է, որ սկսված նոր դաղթը պետք է անպայմանորեն վերագրել «և՛ կառավարչության վատ վարմունքին և՛ քրդերի տված նեղություններին», ընդ որում, նշում է նա, «վերջինը բխում է առաջինից»[42]։

Կանայանը դատապարտում է օսմանյան կառավարության հայակործան քաղաքականությունը՝ Բեռլինի վեհաժողովից հետո։ Բ. Դուռը անում է ամեն ինչ՝ հայ բնակչության թիվը կրճատելու համար. և՛ չերքեզների բնակեցումը հայաբնակ գավառներում, և՛ Համիդիե հեծելազոնդերի ստեղծումը, և՛ բարենորոգումների ծրագրի վիժեցումը մի նպատակ են հետապնդում միայն. թշվառության աստիճանին հասցնել հայերին և բարոյապես նվաստացնելով, զրկե՛լ բողոքի իրավունքից կամ ստեղծել գաղթի պայմաններ և այդ կերպ կրճատել նրանց թիվը երկրում։ «Արձագանքի» առաջնորդողը, խոսելով վիճակագրական տվյալները կեղծելու մասին, այդ տրամաբանությամբ հայկական հարցը ձախողելու փորձը համարում է վրիպված։ Ի՞նչ նշանակություն ունի այն, թե հայ ժողովրդի թիվը 3 միլիոնից իջեցված է 900.000-ի. կա պետությունների քաղաքականության գնահատման բանական մ՛յլ չափանիշ. «կարծես թե, եթե հայերն այդման էլ չլինեին, իբրև մարդ և հպատակներ, իրավունք չպետք է ունենային պատվի, կյանքի և գույքի ապահովություն պահանջել»[43] (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։

---

41 «Արձագանք», 1893, № 91։

42 Տե՛ս «Արձագանք», 1893, № 138—140։

43 Նույն տեղում, № 140։

Եվ այսպես, արևմտահայ ժողովուրդը ոտք էր դնում 1894 թ. շփմին՝ նյութապես և բարոյապես խոշտանգված և ապագայի նկատմամբ առանց որևէ հեռանկարի։

Բ. «ԱՐՁԱԳԱՆՔԸ» 1894—1897 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1893 թ. արգելվում է Ազգային Սահմանադրության օրվա՝ մայիսի 24-ի տոնախմբությունը, չի թույլատրվում անց կացնել Ազգային ժողովի ընտրություններ։ Աշըդյանը անընդմեջ բողոքներից հետո որևէ արդյունքի չհասնելով, ընդունել է տալիս իր հրաժարականը և, արևմըտահայության համար շատ ծանր ժամանակներում, 1894-ի դեկտեմբերին, պատրիարք է ընտրվում Մատթեոս Իզմիրլյանը։ Օգտվելով այն իրավիճակից, որ եվրոպական տերություններն ղբաղված էին իրենց հաշիվներով և հազիվ թե անհանգստացնելին իրեն, սուլթան Աբդուլ Համիդը 1894-ի ամռանը կազմակերպում է Սասունի կոտորածները։

Սասունի կոտորածի փաստն անհնարին էր հերքել, ուստի միջազգային կարծիքն ստիպում է օսմանյան կառավարությանը համաձայնվել Մուշի գավառը քննիչ հանձնաժողով ուղարկելու մտքի հետ[44]։ Կարճ ժամանակից հանձնաժողովը մեկնում է Մուշ և սկսում ուսումնասիրել կատարված ոճրագործության մանրամասները[45]։ Հանձնաժողովին տրամադրվում են բազմաթիվ նյութեր, որոնք հաստատում էին թուրքական բանակի կողմից 36 գյուղերի ավերման և 30.000 հայերի սպանության փաստերը։ Թեև այդ օրերին ջղաձակիցների մուտքն արգելվում է Սասուն, բայց քննության ընթացքը, վկաների ցուցմունքները, ոճրագործության վայրերի զննության արդյունքները պարբերաբար հրապարակվում էին եվրոպական բոլոր թերթերում։ Սասունի իրադարձությունները և քննիչ հանձնաժողովի աշխատանքի հետ կապված մի շարք հարցեր լուսաբանվում են նաև «Արձագանքում»։ Այստեղ տպագրվում են

---

[44] Որ 1894—96 թվականների հայկական ջարդերը Բ. Դռան կողմից կանխատես նախապատրաստված պետական ծրագրի իրականացումն էին, այդ հաստատում է Արդուլ-Լահ փաշան՝ «Դեյլի նյուսի» Հռոմի թղթակցի հետ իր ունեցած զրույցում։ Նա ցինիկորեն հայտարարում է. «Ոստիկանների նախարարն ինձ հայտնել է, թե նա այնպիսի հրամաններ է ստացել սուլթանից, որ պատմությունը պիտի հիշատակի, թե «ժամանակավ կար մի հայ ազգ, սակայն մի քանի ժամվա մեջ աշխարհի երեսից ջնջվեցավ մի մարդու ձեռքով, որ կոչվում էր Աբդուլ Համիդ» (տե՛ս «Արձագանք», 1896, № 152)։

[45] Հանձնաժողովի կազմում էին երեք Եուրոպատոս. Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Շիպլեյը, Ռուսաստանից՝ Պրժեվալսկին և Ֆրանսիայի Վիլերսը։

և՛ սեփական թղթակիցների նամակները, և՛ արտասահմանյան ու ռուսական թերթերում հրապարակված նյութերը։ Առանձնապես ուժեղ էին և ազդեցիկ Արմենի ուղարկած հոդվածները Պոլսից[46]։ Նա ներկայացնում էր ոչ միայն փաստերը, այլև դրանցից կատարում հետաքրքրական հետևություններ։ Խոսելով Բ. Դռան այն հայտարարության մասին, թե հայ ավազակներ կան, որոնց հետապնդում են, Արմենը գրում է, թե դրանք երբեմն հարստահարություններից և վայրագ բռնություններից խույս տված ղինված հայերն են, որոնք այլևս անկարող են հաշտվել ստեղծված վիճակի հետ։ Քրդերը հրացաններ են ստանում և անվանվում համիդյաններ, թուրքերը շքանշանների են արժանանում վայրագության համար, իսկ հայերը հալածվում են։ Սակայն սրանք ի վերջո համոզվելով, որ ժողովուրդը «չգիտե ուր պահե յուր գլուխը, հասել են ինքնաճանաչության աստիճանի և փորձում են պաշտպանել իրենց իրավունքները»։

Սասունի ողբամատյանի դրվագներն էր պատմում «Արձագանքի» Կարինի թղթակից Ռեհվի Քուին, որը հետագայում զոհվում է Կարինի կոտորածների ժամանակ[47]։

1894 թ. վերջին սկսվում է Անգլո-հայկական ընկերության գործունեության ակտիվ շրջանը։ Դեկտեմբերին Լոնդոնում տեղի են ունենում միտինգներ, որոնց մասնակիցներն անգլիական կառավարությունից պահանջում էին ճնշում գործադրել Բ. Դռան վրա։ Ընդունված որոշումներն անգլիական կառավարությանը պարտադրում էին զբաղվել 61-րդ հոդվածի իրականացման գործով՝ հայերի «կյանքը, պատիվն ու ստացվածքը ապահովելու համար»։ Արևմտյան մամուլը տպագրում էր տարբեր երկրներում տեղի ունեցած ժողովների որոշումները, աշխարհասփյուռ հայության աղերսագիրը՝ «Անգլո-հայկական միության» նախագահ Ստիվենսոնին, հաղորդումներ՝ քննիչ հանձնաժողովի աշխատանքների մասին և այլն։ «Դեյլի տելեգրաֆի» էջերում հրապարակվում է «Սասուն և սասունցիք» հոդվածաշարը։ Այդ թերթի հատուկ թղթակից Էմիլ Դիլլոնը շարունակաբար տպագրում է իր նամակները, որոնք մերկացնում էին հայերին բնաջինջ անելու թուրքական քաղաքականությունը[48]։

---

[46] Այդ օրերին Կ. Պոլսում Արմեն անունով մի քանի հայեր են ձերբակալվում, որոնց կասկածում էին «Արձագանքի» թղթակիցը լինելու «հանցանքի» մեջ։

[47] Մեզ չի հաջողվել պարզել Կարինի թղթակցի ինքնությունը։

[48] Էմիլ Դիլլոնը 1895-ին 41 տարեկան էր, փիլիսոփայական գիտությունների դոկ-

Թեև Մուշի հանձնաժողովը դեռևս չէր ավարտել աշխատանքները, Սասունի կոտորածների փաստերն արդեն հաստատված էին: Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի լիազոր դեսպանները մայիսի 11-ին Հայաստանում անհրաժեշտ բարենորոգումներ անցկացնելու ծրագիր են ներկայացնում. Բ. Դուռը: Այդ ծրագիրը հանձնվում է և հայոց պատրիարքին՝ այն քննարկելու խառը ժողովում: Ամենուր տարածվում է «Մայիսյան ռեֆորմների» լուրը: Կովկասի գործիչները հարցի լուծումը գրեթե ավարտված էին համարում: Հեռագրերը Կ. Պոլսից հաջարդում էին միմյանց՝ խանդավառության մթնոլորտ ստեղծելով Կովկասում: Հանդիսավոր պահը չփախցնելու համար Ա. Հովհաննիսյանը՝ Ս. Հախումյանին իբրև թևրթի հատուկ թղթակից շտապ գործուղում է Պոլիս: «Ուրա՜խ լուրեր, ուրա՜խ լուրեր գրեցեք, բարի ճանապա՜րհ», Թիֆլիսի կայարանից մինչև Կ. Պոլիս Հախումյանին ուղեկցում էր Սունդուկյանի մտահոգ ձայնը...:

Սուլթանը չէր պատասխանում դեսպաններին. Բ. Դուռը տևողապես պատրաստություններ էր տեսնում խուսանավելու ստեղծված վիճակից: Մայիսի 27-ին ավելի լիբերալ Ջևդաթ փաշայի փոխարեն մեծ նպարչուս է ընտրվում փորձառու դիվանագետ, հայատյաց Սայիդ փաշան, որը մայիսի 31-ին այցելում է անգլիական դեսպան Ֆ. Կերրիին և խնդրում երկարաձգել պատասխանի ժամկետը: Պետերբուրգում մայիսի 27-ին Թուրքական դեսպանը դիվանագիտական շրջանակներում ճաշկերույթ է տալիս ռուսաց արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու պատվին: Այդ օրերին սուլթանը՝ արտաքին գործերի մինիստր Թուրխան փաշայի նախագահությամբ ընտրում է մի հանձնաժողով, որը պետք է ռեֆորմների ծրագիր մշակեր՝ Թուրքիայի բոլոր վիլայեթների համար: Դիվանագիտական այդ տրյուկը ապշեցուցիչ էր՝ նենգության իր մասշտաբներով: Վերջապես, հունիսի 8-ին, Բ. Դուռը պաշտոնապես հայտնում է դեսպաններին, թե սկզբունքորեն ընդունում է բարենորոգումների ծրագիրը, «բայց կամենում է, որ առաջարկված

տոր, արևելյան լեզուների մագիստրոս (Պետերբուրգ), համեմատական լեզվաբանության մագիստրոս (Խարկով): Հայոց լեզվի մեջ հմտացել էր Միխիթարյանների մոտ: Հեղինակ էր երկու գրքի՝ «Հայերենի հարաբերությունը իրանական լեզվախմբի նկատմամբ» և «Եղիշեի «Հայոց պատերազմը»: Հայկական ջարդերի տարիներին անձամբ մեկնում է դեպքի վայրերը և հուզիչ նամակներ հրապարակում մամուլում: Նա աչքի է ընկել իբրև հայոց դատի ջերմ պաշտպան:

ռեֆորմներից մի քանիսը կրկին քննության ենթարկվեն և որ սուլթանի իրավունքներն ու հեղինակությունը անխախտ մնան»[49]։

Հունիսի 24-ին սուլթանին ուլտիմատում է ներկայացվում, 10 օրվա ընթացքում բարենորոգումների ծրագիրը վավերացնելու համար։ Հուլիսի 9-ին Բ. Դուռը մերժում է դեսպանների պահանջը, հայտարարելով, թե անհրաժեշտ աշխատանքներ են տարվում բարեՓոխոգումներ անցկացնելու տեղերում։ «Մենք բարով, ռեֆորմների ծրագի՞րը», մնում էր արձանագրել Ս. Հախումյանին։ Այնուհետև ամեն ինչ սկսվում է սկզբից։ Կ. Պոլսում մոլեգնում է ռեակցիան։ Հայության վիճակը դառնում է սպառնալից։ Պատրիարքը մի կողմից բանակցում է սուլթանի հետ, մյուս կողմից միջոցներ հայթայթում դավադիր սովալլուկ հայության համար։ Հայկական, ռուսական և անգլիական թերթերի մուտքը՝ Կ. Պոլիս, արգելվում է։

Անգլիայում կառավարության ղեկը հուլիսին Ռոզբերիից անցնում է պահպանողական կուսակցության պարագլուխ Սոլսբերիի ձեռքը։ Վերջինս, ինչպես և Ռոզբերին, Լոնդոնում տեղի ունեցող միտինգներում ճառեր է արտասանում հայկական դատի պաշտպանության օգտին։ Եվ այնքան հուսադրող էին կառավարության պարագլուխների ճառերը, որ հայ հրապարակախոսները շարունակում էին ապրել մոլորության մեջ։ «Արձագանքի» աշխատակից Փիլիպոս Վարդանյանը, որ այդ օրերին Անգլիայում էր, Ա. Հովհաննիսյանին ուղղված մի նամակում պատմում է հետևյալը։ Ալբերտ Հոլլի միտինգում, երբ Ռոզբերին հայտնում է այն միտքը, որ անկախ այն բանից, թե կառավարությունն ում ձեռքը կանցնի, Անգլիան պետք է ղբաղվի ռեֆորմների հարցով («եթե չէ կամենում, որ Անգլիան պարտազանց լինի և Անգլիայի անունը իրավամբ անարգվի ամբողջ աշխարհում»), «մոտ 10.000 ունկնդիրների հավանության ձայներից հսկայական թատրոնի որմերը թնդացին։ Ես դողալով լսում էի բազմության որոտագին աղաղակները, ծափահարությանց ձայները, տեսնում էի հաղարավոր գլխարկների ու թաշկինակների ճոճվելը և անասելի հուզմունքից լրիվ լաց էի լինում՝ շատ պոս աչքերիս առջև բռնած... Արդ մի՞թե անկեղծ չէ անգլիական ազգի համակրանքը դեպի մեզ, մտածում էի ես։ Եթե ամբողջ ազգն էլ այդպիսի զգացմունք չնվիրի մեզ, չէ՞ որ այդ ազգի մի մեծ մասը մեզ բարիք կամեցող է։ Եթե այդ իրավ է, հետևաբար մի՞թե Սոլսբերին

[49] «Նոր-դար», 1895, № 103։

կուզենա արհամարհել յուր աղդի արտահայտած այդ տրամադրությունը և ուրանալ խեղճ հայերին օդնելու պարտքը»[50]: Վարդանյանի լավատեսությունը սնվում էր և՛ այն բանից, որ էմիլ Դիլլոնը Սոլսբերիին ներկայացրել էր իբրև ավելի անկեղծ բարեկամ հայերի համար, քան Ռոզբերին էր: Փ. Վարդանյանի պաշտոնակից Ս. Հախումյանը, սակայն, որ մեկ տարի անց Լոնդոնում դարձյալ հուզվում է հայության օգտին կազմակերպված միտինգում, չէր հավատում այդ ցույցերին: Ավելին, 1895-ի աշնանը գրած իր ֆելիետոններից մեկում նա դառնորեն ծաղրում էր և՛ միտինգները, և՛ ինքնապաշտպանության գործից հետու կանգնած հայերին[51]:

Օգոստոսի 13-ին, Սասունի կոտորածների տարեդարձին, համոզվելով արդեն, որ բարենորոգումների ծրագիրը չի իրականանում, հայերը որոշում են խաղաղ ցույց կազմակերպել Կ. Պոլսում: Սուլթանը կանխում է ելույթը, խոստանալով իր դահակալության տարեդարձին՝ օգոստոսի 19-ին, առանձնաշնորհումներ տալ հայ ժողովրդին: Խոստումը չի կատարվում և սեպտեմբերին հայերը, այնուամենայնիվ, փողոց են դուրս գալիս: Չլսելով պատրիարք Իզմիրլյանին, որը խնդրում էր չանել այդ քայլը, բազմությունը հնչակյան գործիչների առաջնորդությամբ Գում-Գափուի եկեղեցուց ճանապարհվում է դեպի սուլթանի պալատը. նրան հանձնելու իր պահանջները՝ ռեֆորմների ծրագիրը վավերացնելու մասին: Կառավարությունը, որ մինչ այդ Կ. Պոլսից արդեն արտաքսել էր բոլոր օտարահպատակներին, դինված զորք է դուրս բերում խաղաղ ցուցարարների դեմ: Սպանվում են 92 հոգի, 400 հայ քաղաքացիներ տուն չեն վերադառնում: Հայկական հիվանդանոցը լցվում է խոշտանգված դիակներով ու վիրավորներով:

Այս դեպքերից անմիջապես հետո սուլթան Աբդուլ Համիդը հայ-

---

50 ԳԱԹ, Ա. Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 50:

51 Նապաստակների որսը թույլատրվում է ողջ տարին,— գրում է Ահրիման-Հախումյանը,— ուստի աշխարհի շահագրգռված կողմերը վճռում են համաշխարհային միտինգ կազմակերպել՝ նապաստակների օգտին: «Հայերի համար կազմված միտինգներից հետո այդ միտինգն ամենանշանավորը կլինի և ամեն ազգերի բոլոր կուսակցություններն էլ կմասնակցեն այդ միտինգին և այդ միտինգի սկզբում՝ Գլադստոնի նամակից առաջ կկարդացվի ռուս նշանավոր հեղինակ Շչեդրինի «Անձնազոհ նապաստակ» գրվածքը: Այդ միտինգին ներկա կլինին աշխարհիս երևելի գռնված բոլոր նապաստակային համայնքների ներկայացուցիչները: Կարող են լսել բոլոր ոգևորված ճառերը, լալ, կծնել, արտասուք թափել, որքան կուզեն, և ետո կրկին վերադառնալ իրանց տեղերը և սպասել որսորդներին» (տե՛ս «Արձագանք», 1895, № 147):

տարարում է, թե վավերացնում է ստացած բարենորոգումների ծրագիրը և այն իրագործելու նպատակով Շաքիր փաշային ուղարկում է հայկական նահանգները: Մի անձնական նամակով դիմելով Սոլսբերիին, նա գրում է. «Ես ցանկանում եմ իրագործել ռեֆորմները: Ես ռեֆորմների գրավոր ծրագիրը կղնեմ իմ առաջ և ինքս կհետևեմ, որ յուրաքանչյուր հոդվածն իրագործվի: Դա իմ անդրդվելի վճիռս է և աղնիվ խոսք եմ տալիս, որ նա պիտի կատարվի»[52]: Սուլթանն այնուհետև խնդրում է Սոլսբերիին, որ վերջինս, ելնելով նոր իրադրությունից, բարեհաճի մի այլ ճառ արտասանել, որը հարմար լիներ նրա բարեկամական հարաբերություններին դեպի ինքը և իր երկիրը: Սոլսբերին իսկույն ընդառաջում է սուլթան Համիդի ցանկությանը և հանդես գալիս բարեկամական ճառով: Այն պսակվում է անգլիական հասարակության բուռն ծափահարություններով և խորհրդանշում անգլիական նոր կառավարության ու Թուրքիայի միջև հաստատվող անխափան դաշինքը[53]:

Մեծ մարդասպանի ձեռքերն ազատ են արձակվում:

Կ. Պոլսի դեպքերը սկիզբն էին մեծ ողբերգության: Այնուհետև կոտորածներ են կազմակերպվում Ալաշկերտում, Բիթլիսում, Բայբուրդում, ավերվում են Կարինի և Տրապիզոնի նահանգների բոլոր գյուղերը, աղետին ղոհ են գնում Վանի նահանգի բազմաթիվ գյուղերի բնակիչները[54]:

Բ. Դուռը խառնվում էր և՛ պատրիարքարանի գործերին: Նախկինի նման արգելվում էր Ազգային ժողով գումարել. թեև խառն ժողովի անդամները ըստ Սահմանադրության պետք է վերընտրվեին յուրաքանչյուր տարի, բայց 1894—95 թթ. ընտրություններ չէին անցկաց-

---

52 «Արձագանք», 1895, № 133:

53 Նույն տեղում:

54 Ի դեպ, 1896 թ. հունիսի 4-ից 14-ը Վանում տեղի ունեցած կոտորածների ժամանակ տեղի հայերին հսկայական օգնություն է ցույց տալիս պարսից հյուպատոս Միրզա Հյուսեին խանը: Նա այդ օրերին փրկում է 2000 վանեցիների, ոչ միայն նրանց ապաստան տալով իր հյուպատոսարանում, այլև առանձին բնակելի տների վրա բարձրացնելով իր երկրի դրոշակները: Այնինչ, հենց նույն օրերին անգլիական հյուպատոսը և միսիոներները, քշելով ապաստան խնդրող հայ երիտասարդներին, նրանց կոբստյան են մատնում: Երբ 1897-ին Միրզա Հյուսեին խանը գալիս է Թիֆլիս, հայ գրական գործիչները նրան ընդունում են անկեղծ մեծարանքի ցույցերով: Այդպիսի ջերմ ընդունելություն նա գտնում է և Բաքվում (տե՛ս «Արձագանք», 1897, № 121, 122, 127):

վել։ Թե՛ կրոնական, թե՛ քաղաքական ժողովի անդամները վաղուց հրաժարական էին տվել, իսկ նախարարությունը չէր բարեհաճում ընթացք տալ հարցին։ Դրա փոխարեն Բ. Դուռը ինքնակամորեն չեղյալ է հայտարարում Սսի նորընտիր կաթողիկոս Ալեքսիճյանի ընտրությունը և կաթողիկոս հաստատում պատրիարքի կողմից պաշտոնանկ հայտարարված Հովհաննես Գազանջյանին։ Վերջինս երկու այլ դավադիր առաջնորդների հետ հավատարմության երդում էր տվել տաճկական կառավարությանը և կաշառվելով նրանից, պետք է մեկներ Կիլիկիա՝ կատարելու Բ. Դռան հանձնարարությունները[55]։ «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակիցը հայտնում է, որ Կ. Պոլսում վիճակը ծանրանում է, լրտեսները վխտում են ամենուր, անգամ եկեղեցիներում. բացի այդ, եկեղեցիների դռների մոտ ոստիկաններ էին կանգնում՝ «կարգը պահպանելու համար»։

Բ. Դուռը գիտակցաբար անելանելի պայմաններ էր ստեղծում պատրիարքի համար. այսպես, 1896 թ. կեսերին ոստիկանության նախարարը Ազգային ժողովի անդամներին հայտնում է, թե առաջիկայում որևէ խռովություն լինելու դեպքում պատասխանատվությունը պետք է ընկնի նրանց վրա։ Աբդուլ Համիդն իր կողմից ճնշում էր գործ դնում Իզմիրլյանի վրա, նրանից գոհունակության կոնդակ ստանալու համար։ Պատրիարքը հետևողականորեն պայքարում էր այս բռնությունների դեմ և հապաղում կատարել սուլթանի պահանջը՝ հրաժարական տալու վերաբերյալ։ Թուրքական կառավարությունը, ազատվելու համար անցանկալի գործչից և միաժամանակ մոլորության մեջ գցելու համար դիվանագիտությանը, դիմում է կեղծիքի։ Ֆիլիպպոպոլում հրատարակվող «Դևյրաի» թերթում տպագրվում է մի նամակ, ուղղված պատրիարքին, իբր գրված Պեշտի «Հայկական ակումբի» անդամների կողմից։ Նամակի հեղինակները պահանջում էին պատրիարքից՝ հրաժարական տալ և հեռանալ քաղաքական գործունեության ասպարեզից։ «Եվրոպան չպիտի միջամտի մեր աղգության գործերին, —ասված էր նամակում,— մեր հույսը միայն տաճիկ բարձրագույն կառավարության գթության վրա է»[56]։ Կեղծիքն ակնհայտ էր. պատրիարքը դիմում է երեք պետությունների դեսպանների օգնությանը, բայց նրանք հրա-

---

[55] Իզմիրլյան պատրիարքի կարոտ բողոքներից հետո Բ. Դուռը հետագայում ստիպված էր հետ վերցնել Գազանջյանի կաթողիկոսության մասին տված հրամանը։

[56] «Արձագանք», 1896, № 63։

ժարվում են խորհուրդ տալ. 1896-ի հուլիսի 23-ին նա հարկադրված հրաժարական է տալիս։

Ռուսական հնագրական գործակալությունը հաղորդելով այս լուրը, Իզմիրլյանի այդ քայլը բացատրում է նրանով, որ «Բ. Դուռը բավական չափով չէ պաշտպանում նրա հովվական գործունեությունը»։ «Արձագանքի» հոդվածագիրն այս առիթով գրում է, թե վերը բերված միտքը սխալ է, որովհետև Բ. Դուռը ոչ միայն բնավ չի պաշտպանել, այլ «ուղղակի արգելք է եղել նրա գործունեության, չէ ճարգել նրա պահանջները և խնդիրները[57] (ընդգծումը հեղինակինն է)։ Պատրիարքին չեն օժանդակել և եվրոպական պետությունների դեսպանները, որոնց նա դիմում էր հաճախակի։ Այդ օրերին «Արձագանքի» խմբագրությունը մի առաջնորդող է նվիրում Իզմիրլյանին։ Հոդվածի հեղինակ Հախումյանը խոսում է նրա ժողովրդանվեր գործերի և աշխատանքի օրինակելի ոճի մասին[58]։

Իրադարձությունները Արևմտյան Հայաստանում շիկանում էին, և, սակայն, միջազգային դիվանագիտությունը հեռու էր վճռական քայլ կատարելուց։ Որքան էլ Սասունի դեպքերը ցնցող էին և ոճրագործության փաստերն ապացուցված, երեք պետությունների դեսպանները ռեֆորմների ծրագիրը ներկայացնելով սուլթանին, այլևս չեն մտահոգվում, որ այն կիրառվի կյանքում։ Աբդուլ Համիդը շատ լավ կռահելով պետությունների անձնական շահախնդրությունները և նրանց միջև առկա հակասությունները, կարողանում է հնշտությամբ շրջանցել իր համար անցանկալի հարցը։ Նա պատասխանատվությունից ազատվում է բարենորոգումների ծրագիրը վավերացնելու վերաբերյալ միմիայն բանավոր հայտարարությամբ և անձնական նամակի միջոցով Սալսբերիին տված ազնիվ խոսքով։ Այնուհետև հայության դահիճ Շաքիր փաշան մեկնում է հայկական վիլայեթները՝ իրեն հատուկ «արվեստով» բնաջնջելու հայությանը, իսկ Աբդուլ Համիդը 1895-ի աշնանը Կ. Պոլսի ցույցի պատրվակով սանձազերծում է հայկական կոտորածների երկրորդ մղձավանջային շրջանը։ Դեսպանները լուռ էին։ Կառավարություններն զբաղված էին սեփական հաշիվներով։ Ֆրանսիան ապագայի որոշակի ծրագրերով բարեկամություն էր խաղում սուլթանական կառավարության հետ։ Արդեն հաստատված բարեկամական հարաբերու-

---

57 Նույն տեղում, № 86։

58 Նույն տեղում, № 87։

թյունները Տաճկաստանի հետ չփչացնելու համար ցարիզմը հետապնդում էր արևմտահայ ազատագրական շարժումներին համակիր գործիչներին[59]:

«Արձագանքի» խմբագրությունը դարձյալ փորձում է գրավել կառավարության ուշադրությունը: Նիկոլայ II-ի թագադրության առիթով Հովհաննիսյանը ծավալուն մի հոդված է դնում թերթում, որում հավաստելով հայերի ռուսական կողմնորոշումը, հիշատակում է բազմաթիվ դրվագներ հայ ժողովրդի պատմությունից, երբ հայերն իրենց արյունը չեն խնայել ռուսական զենքի հաղթանակի համար և՛ 1812 թ. հայրենական պատերազմում, և՛ Արևելքում:

Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ալեքսանդր II-ը խոստանում է «տաճկահայոց համար ծագեցնել նոր կենաց այն արշալույսը, որ Մեծն Պետրոսից սկսած երկու դար շարունակ խոստացվում էր ռուսական գահակալներից՝ մահմեդական լծի տակ տոչորվող քրիստոնյաներին»:

Մեկ միլիոն հայեր՝ «բուն ռուս ազգից ոչ պակաս նախանձախընդրությամբ» ցանկանում են կայսրության բարօրությունը: Թագադրության տոնական այդ օրերին նրանց է միանում և հեռու Հայաստանի խորքում ապրող «հարատահարյալ տաճկահայը, խաչի համար նահատակվող ժողովուրդը», որը նույնպես մտնում է իր կիսախարխուլ եկեղեցին աղոթելու[60]:

«Արձագանքի» խմբագրությունը շարունակում էր հուսալ և սպասել:

1896 թ. մայիսին թուրքական բռնապետության դեմ ապստամբության դրոշ է բարձրացնում Կրետեն: Ապստամբությունը գլխավորում էր Հունաստանը, որից 1829-ին պոկված Թեսալիան, Կրետեն և այլ հունաբնակ տերիտորիաններ տառապում էին թուրքական լծի տակ: XIX դարի II կեսին Կրետեում բազմիցս ազատագրական շարժումներ էին բռնկվել, բայց հույն ժողովրդի սարկական վիճակը մնում էր անփոփոխ: Ինչպես նախորդ, այնպես էլ 1896 թ. շարժման նպատակն էր՝ միավորվել Հունաստանի հետ: Թուրքիան պատերազմ է հայտարարում Հունաստանին, որը պարտվում է: Ամբողջ երկու տարի եվրոպական դիվանագիտության և մամուլի ուշադրությունը սևեռված էր այս իրա-

---

[59] Նոր, *Անցյալից*, էջ 113:

[60] «Արձագանք», 1896, № 54:

դարձուβյունների վրա. Կրետեն ասպարեզից վանում է հայկական հարցը։ Հիրավի, այնպիսի օրերի, երբ եվրոպական տերուβյունների համար նոր հնարավորուβյուններ էին բացվում միջամտելու Թուրքիայի գործերին՝ նոր երկրամասերի տիրապետելու ակնկալուβյամբ, արժե՞ր արդյոք սուլթանին հուզել 61-րդ հոդվածի հետ կապված անախորժ հիշողուβյուններով։ Չարժե՛ր։ Եվ չէի՛ն հիշեցնում։

1896 թ. օգոստոսի 14-ին Եվրոպայի ուշադրուβյունը հայկական հարցի վրա հրավիրելու նպատակով դաշնակցական մի խումբ գործիչների կողմից կազմակերպվում է օտոմանյան բանկի միջադեպը։ Սուլթանը, որ շատ լավ տեսնում էր եվրոպական պետուβյունների ուժերի՝ իր համար նպաստավոր տեղաբաշխումը, վերոհիշյալ միջադեպի առիթով Կ. Պոլսում ոչնչացնում է 6000 հայ բնակիչ։ Դիվանագիտուβյունը չի խառնվում սուլթանի «ներքին գործերին», իսկ Վիլհելմ կայսրը ջարդերից անմիջապես հետո Աբդուլ Համիդին իբրև եղբայրական ընծա, ուղարկում է իր պատկերը՝ զարդարված թանկարժեք քարերով[61]։ Սուլթանը խրախուսված էր։ Գերմանիան ստանում է Բաղդադի երկաթուղու կառուցման կոնցեսիան, իսկ Անգլիան 1897 թ. կարողանում է ձեռք դցել Կրետեն։ Իրականում այն օկուպացվում է անգլիացիների կողմից, բայց ձևականորեն հռչակվում է իբրև ավտոնոմ պետուβյուն՝ սուլթանի գերիշխանուβյամբ։ Կրետեն այժմ ընկած էր կրկնակի լծի տակ։ Հայկական հարցը մոցվում է փակուղի։

Հայ մամուլը տագնապով էր հետևում իրադարձուβյունների ընթացքին։ Ճիշտ է, ցարական դրաքննուβյունը սահմանափակում էր Կովկասի հայ խմբագիրների իրավունքները հայկական հարցի լուսաբանման մարզում, բայց «Արձագանքի» խմբագրուβյունը ռուսական և արտասահմանյան թերթերից կատարած արտատպուβյունների միջոցով դարձյալ ամբողջական պատկերացում էր տալիս արևմտահայուβյան վիճակի մասին։ Ավելին, Ա. Հովհաննիսյանը երբեմն նույնիսկ փորձում էր ուղղուβյուն տալ տեղի մտավորականուβյանը, օգնել պատրիարքարանի երբեմնի տրադիցիաների պաշտպանուβյանը։ Այս առումով հետաքրքրական է հիշել «Արձագանքի» եղերβներից մեկը։ Մ. Իզմիրլյանի հրաժարականից անմիջապես հետո Բ. Դուռը կամայականորեն խառն ժողով է կազմում (այն լուծված էր) և կարգադրում պատրիար-

---

[61] Տե՛ս Վեռ, Անցյալից, էջ 121։

քական տեղապահի պաշտոնում ընտրել Բրուսայի առաջնորդ, թուրքամոլ Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Զամիչյանին։

Ռուսական և արևմտահայ թերթերից քաղված լուրերի հիման վրա «Արձագանքի» խմբագրությունը հրապարակում է մի քանի հոդված, որոնց մեջ ընդգծվում էր այդ ընտրության ապօրինության երևույթը[62]։ Այս փաստը էլ ավելի ծանրակշիռ նշանակություն էր ստանում այն բանից հետո, երբ պարզվում է, որ սուլթանին հաճոյանալու համար Բարդուղիմեոսը իրեն վարկաբեկում է հայ պատրիարքին անվայել քայլերով։ Հայ մտավորականությանը մասնավորապես զայրացնում է նրա հարցազրույցը «Биржевые ведомости» լրագրի թղթակցի հետ և սուլթանի հետ ունեցած հանդիպման ժամանակ արտասանած ճառը։ Հարցազրույցի ժամանակ հայկական ջարդերի պատասխանատվությունը հայ պատրիարքական տեղապահը գցում էր հայերի վրա, նշելով միաժամանակ, թե ջարդերի մասին տարածված լուրերը մամուլն է չափազանցնում[63]։ Ինչ վերաբերում է սուլթանի պալատում նրա արտասանած ճառին, ապա Ա. Հովհաննիսյանը ռուսական թերթերից ամբողջությամբ արտատպում է այդ «սարկաշունչ ճառը», սուլթանի խոսքը և Բարդուղիմեոսի վերջին պատասխանը։

Ի լուր աշխարհի հրապարակելով այդ ճառը, և այն՝ «Սուլթանը և յուր սարուկը» խորագրի տակ, «Արձագանքի» խմբագիրը հասարակական կարծիք է ստեղծում մի անարժան գործչի մասին, որը 1896-ի ճակատագրական օրերին իրեն թույլ էր տալիս ստորանալ մեծ բռնակալի առաջ։ Պետք է ևս նշենք, որ այս նկատումները քիչ դեր չեն կատարում պատրիարքական ընտրությունների ժամանակ, երբ Բարդուղիմեոսի ակնկալությունները ի դերև են ելնում և պատրիարք է հաստատվում Մաղաքիա Օրմանյանը։

Առանին հարցերից բացի «Արձագանքի» խմբագրությունն ինչ-որ ձևով կարողանում էր շոշափել հայերի քաղաքական ազատության հարցը, 61-րդ հոդվածի հետ կապված արևմտահայության սպասումների և ակնկալությունների տրամադրությունները։ 1894—97 թթ. լրագրի էջերում առանձնակի կրքով է հնչում հրապարակախոս Սիմեոն Հախումյանի ձայնը։ Կարելի է առանց չափազանցության հայտարա-

---

62 «Բարդուղիմեոս եպիսկոպոսի պատրիարքական տեղապահ ընտրվիլը (՞)», «Ազգային (թե՞ հակազգային) լուր», «Ընտրություն (՞!) տեղապահի»։

63 Տե՛ս «Արձագանք», 1896, № 100։

րել, որ նա ներկայացնում էր «Արձագանքի» ուղղությունը հայկական հարցում։ 1895 թ. գարնանը, երբ ամենքը սպասում էին ռեֆորմների իրականացմանը, Հախումյանը բնավ հույսեր չէր կապում թուրքական կառավարության հետ։ Այն բանից հետո, երբ սուլթանը հայտարարում է, թե բարենորոգումների հարցի իրականացումը հանձնաբարում է Շաքիր փաշային, մի մարդու, որը «համիդիե» հեծելազնդի կազմակերպիչն էր, Հախումյանը գրում է. «Եթե այդպես է, նախագծի մյուս բոլոր հոդվածները չեն արժիլ անգամ այն թղթին, որի վրա գրված է։ ...Եթե ննջադրված բարենորոգումների գործադրությունը հանձնվի իրեն, տաճիկ կառավարության կամ տաճիկ պաշտոնյաներին,— շարունակում է Հախումյանը,— այդ կնշանակե մեռած տատ թողնել հայտագիրը և կորստի մատնել Փոքր Ասիայի հայերին։ Ռեֆորմների գործադրությունը և նրանց իրականացումն անպայման հնարավոր է միայն եվրոպացիների և քրիստոնյա պաշտոնյաների ձեռքով»[64]։

«Հարկավոր է անհապաղ ուսումնասիրել» հոդվածում Հախումյանը գրում է, թե տաճկական կառավարությանը պետք է հարկադրել, որպեսզի կատարի իր պարտավորությունները։ Լուրջ արդյունքի հասնելու համար հոդվածագիրն առաջարկում է, որ եվրոպական պետությունների համապատասխան ներկայացուցիչները հայ գործիչների և պատրիարքարանի օգնությամբ հանգամանորեն ուսումնասիրեն երկիրը, նրա աշխարհագրական դիրքը, ժողովրդի տնտեսական ու բարոյական վիճակը և այլն։ Միայն այդ ուսումնասիրությունը հնարավոր կդարձնի պարզել, թե ինչ ձևով պետք է մտցնել ռեֆորմները, «որ կարողանան նրանք աճել, զարգանալ և միջոց տալ երկրի քրիստոնյա ազգաբնակությանն ապրել ինքնուրույն և երջանիկ կյանքով»[65]։

Հախումյանը միաժամանակ պահանջում է ուշադրություն դարձնել ուսումնասիրության կարոտ այն հարցի վրա, թե որքանո՞վ են թուրք և քուրդ տարրերը ևս ձգտում ազատագրվել տաճկական պաշտոնյաների կեղեքումներից։

1895 թ. հունիսին իբրև «Արձագանքի» հատուկ թղթակից՝ Սիմեոն Հախումյանը մեկնում է Պոլիս, անձամբ շփվելու այն մթնոլորտին, որը, թվում էր՝ հղի է բարենորոգումների ծրագրի իրականացման մոտալուտ իրագործությամբ։ Կ. Պոլսում թագավորում էր ռեակցիան։ Այն-

---

[64] «Արձագանք», 1895, № 55։

[65] «Արձագանք», 1895, № 56։

տեղ կասկածով էին նայում և՛ դրսից եկող պարբերականներին (որոնց մուտքը, ի դեպ, արգելված էր Կ. Պոլիս), և՛ լրագրողներին: Հենց մաքսատանը բռնագրավվում են Հախումյանի դրքերը և ոստիկանությունը ոտքի է կանգնում, հավատացած, թե բռնել է «մի շատ վտանգավոր հեղափոխական-սոցիալիստ, որ գալով Լոնդոնից, մտադիր է Կ. Պոլսում վնասակար կոմիտեներ և ընկերություններ հիմնելու»[66]: Միջադեպը հարթվում է և Հախումյանն անցնում է իր պարտականությունների կատարմանը: Թղթակցությունները նա ուղարկում էր դեսպանատան փոստով, իսկ քաղաքական լուրերը հեռագրով ուղարկելու հնարավորություն չուներ, որովհետև համոզվում է, որ սուլթանի պաշտոնյաները դրանք հեռագրատնից վերադարձնում են ... պալատ: Ս. Հախումյանի ճանապարհորդական տպավորությունները («Երկու ամիս Կ. Պոլսում») սկսում են տպագրվել «Արձագանքում» և լրագրի ընթերցողները ծանոթանում են Կ. Պոլսի հայության և գավառների ժողովրդի կյանքի հշմարտացի նկարագրությանը:

Երկու ամիս անց, վերադարձի ճանապարհին կանգ առնելով Պուտերբուրգում, նա մայրաքաղաքի թերթերից մեկում նկարագրում է Կ. Պոլսում իր տեսած մղձավանջային պատկերները[67]: Կ. Պոլսում անկողնին գամված մահվան էր սպասում Մուշի հայոց դպրոցների նախկին տեսուչ Դամադյանը: 24-ամյա երիտասարդին զարհուրելի բանտախցում տանջելուց հետո թուրք ոստիկանները քարերով ջարդել էին նրա ոտքի ոսկորները, որպեսզի իբր թե չփախչի: Նրա մայրը և քույրը խնամքով են շրջապատում, իսկ փոքր քույրը անձնասպան է լինում: Մուշի թեմական առաջնորդ Ղարախանյանի աստմնները հանված էին, մարմինը ծածկված էր սպիներով, իսկ ձեռքերի և պարանոցի վրա մնում էին շղթաների հետքերը: Ս. Փրկիչ հիվանդանոցում Հախումյանը տեսնում է Մամբրե քահանային, որի ողնաշարը կոտրված էր 4 տեղից, տեսնում է ցնորված դեղչկուհի Հերոնին, որը կորցրել էր հորը և 6 զավակներին...

Հախումյանը ուշադրություն էր հրավիրում և այն հարցի վրա, որ Աբդուլ Համիդը խաբել էր հասարակական կարծիքը և դիվանագետներին: Նա խոստացել էր ներսեն շնորհել հայ կալանավորներին և պատրաստ էր արձակել միմիայն նրանց, ում առանց պատճառի կալանավորել

---

[66] Նույն տեղում, № 72:

[67] «Новое время»-ի օգոստոսի 28-ի համարում լույս տեսած այդ հոդվածը նույնպես հրապարակվում է «Արձագանքում»:

էին սուլթանի ներումից մի քանի շաբաթ առաջ։ Արաբիայի Աքիա աքսորավայրի հայ մտավորականները դեռևս մնում էին իրենց կապանքներում։ Հախումյանը Կ. Պոլսից առավել հավաստիությամբ հայտարարում է, թե «եվրոպական դիպլոմատիան կեղծում է և խաբում հասարակական կարծիքը»։ Երբ նա գործեր ավելիվ, դրում է «Արձագանքի» տեսաբանը, հարցերը հեշտությամբ կլուծվեին. այնինչ դիվանագիտությունը թուլացնում է այն ուժերը, որոնք ի վիճակի էին ներգործել տաճկական կառավարության վրա։ Շարադրելով եվրոպական դիվանագետներից մեկի հետ իր ունեցած զրույցի բովանդակությունը, Հախումյանը փորձում է նշել ստեղծված դրությունից դուրս գալու ելքը։ Նրա զրուցակիցը ասում է, թե Անգլիան հայերի համար արել է ամեն հնարավորը, բայց սպասվող ռեֆորմները հաղիվ թե փրկություն լինեն։ Բանն այն է, ասում է նա, որ բուլղարացիները պայքարելով և արյունով էին պահանջում իրենց իրավունքները, ուստի և ոգևորեցին ռուսներին։ Այնինչ Եվրոպան դյուցազնություն չի տեսնում հայերի մեջ։ «Ինքնուրույնությունը չի տրվում, այլ ձեռք է բերվում համառ, խելացի աշխատությունով», ավելացնում է նա։ Հախումյանը հանգում է այն եզրակացության, որ եթե ռեֆորմները չհասան նպատակին, դրանում մեղավոր չեն ոչ Անգլիան, ոչ Տաճկաստանը. «այլ այն ազգը, որ միայն հաշիվ է պահանջում և ինքը ոչինչ չէ ուզում անել»[68]։

Թուրքական կառավարությունն սկսում է անհանգստության նշաններ ցույց տալ։ Ոստիկանական նախարարը բողոքում է ռուսական դեսպանին, թե իբր «Արձագանքի» թղթակիցը շատ է լինում տեղի հայ ընթերների խմբագրատներում[69], տերությանը հակառակ մտքեր է տարածում և այլն։ Այնուհետև, առանց հերքել կարողանալու Հախումյանի հրապարակած փաստերից մեկն ու մեկը, նախարարն, այնուամենայնիվ, դեսպանից պահանջում է Հախումյանին իսկույն հեռացնել իրենց երկրից։ Ռուսաց դեսպանը Ս. Հախումյանին առաջարկում է ռուսական առաջին իսկ շոգենավով դուրս գալ Կ. Պոլսից («Տաճիկ կառավարությունը պահանջում է Ձեզ դուրս ղրկել Կ. Պոլսից և նա պարտավոր եմ պաշտպանել Ձեզ։ Ձեր կյանքն այստեղ ապահով չէ»)[70]։

---

[68] Նույն տեղում, № 81։

[69] Այս առիթով Հախումյանն «Արձագանքում» գրում է, թե ինքը չէր մտնում հայկական խմբագրություններ, որովհետև այն համոզմունքն ունի, թե պարերի մասին առաջնորդողներ գրող հայ խմբագիրներն ավելի տաճիկ են, քան իրենք՝ տաճիկները։

[70] «Արձագանք», 1895, № 103։

«Արձագանքի» թղթակիցը օգոստոսի կեսերին հողնում է սուլթանի մայրաքաղաքը։

Հախումյանը Թիֆլիսում շարունակում է քննարկել հայկական հարցի հետ կապված խնդիրները։ «Անհրաժեշտ է» հոդվածում նա Կովկասի հայերին հորդորում է նյութական օգնություն հասցնել արևմտահայերին, որոնց մեծ մասը տառապում էր քաղցից և կամ փախչում իր երկրից։ Բարենորոգումների վիճակով հետաքրքրվող հայերին նա ուսուցանում է. «Հայկական խնդիր չկա և չի կարող լինել առանց հայ ժողովրդի, իսկ այդ ժողովրդին սովամահից և գաղթից ազատելու համար պետք է անհապաղ օգնության հասնել։ Դա է այժմ ամեն մի հայի սրբազան պարտականությունը»[71]։

Այն բանից հետո, երբ 1896 թ. գարնանը սկսվում են Կրետեի շարժումները, մամուլի օրգանները խոսում են հիմնականում այդ հարցի շուրջը։ «Արձագանքի» խմբագրությունը նույնպես լուսաբանում է հույն ժողովրդի ազատագրական պայքարի հետ կապված խնդիրները։ Այդ օրերին, 1896-ի ամռանը, Ս. Հախումյանը դարձյալ իբրև «Արձագանքի» հատուկ թղթակից՝ մեկնում է այս անգամ Անգլիա։ Հավանաբար թերթի խմբագրությունը հույս ուներ իր թղթակցի միջոցով անձնական կապեր հաստատել Անգլիայի պետական գործիչների հետ՝ պարզելու համար 61-րդ հոդվածով նրանց պետությանը բաժին ընկած պարտավորության կատարման երաշխիքները[72]։

«Արձագանքի» խմբագրությունը դեռևս ինչ-որ սպասելիքներ ուներ։ Սպասելիքներ ուներ և Հախումյանը։ Նրան մասնավորապես հաշառում է հասարակ անգլիացիների ուշադրությունը հայկական հարցի նկատմամբ։ «Արձագանքի» հատուկ թղթակիցը նկատում է գոնվում հայության հետ անգլիական աշխատավորության համերաշխության ցույցին և հուզվում ի սրտե։ Սակայն Հախումյանը միաժամանակ խոր հիասթափություն է ապրում։ Կրետեի դեպքերը կլանել էին անգլիական գործիչների ուշադրությունը և վերջնականապես մոռացնել տվել հայկական հարցը։ Այժմ հրապարակի վրա մեկ այլ հարց էր քննարկվում. ո՞ւմ կանցնի Կրետեն։ Անգլիան անում է ամեն հնարավորը՝

---

71 Նույն տեղում։

72 Հայտնի է, որ 1895-ի մայիսի վերջին Երիմյան Հայրիկի առաքելությունը Ձմեռային պալատ՝ կատարյալ անհաջողությամբ էր ավարտվել։ Լորանով-Ռոստովսկին արել էր ամեն ինչ՝ արևմտահայությանն ազատագրելու վերաբերյալ կաթողիկոսի ակնկալությունները փշրելու համար (տե՛ս Լեո, Անցյալից, էջ 107)։

խանգարելու համար Կրետեի միացմանը Հունաստանին: Թուրքիան պատերազմ է սկսում Հունաստանի դեմ, իսկ Եվրոպան բացահայտորեն օգնում է Թուրքիային՝ ջարդելու համար Կրետեի ժողովրդին: «Արձագանքի» աշխատակիցները ցնցված էին. «Անհավասար ուժով կռվողների մեջ քրիստոնյա Եվրոպան անցավ ուժեղ բարբարոսի կողմը՝ հանուն ընդհանուր խաղաղության և խոստումներ շռայլելով Թուրքիայի հպատակ քրիստոնյաներին»[73],— գրում է Հախումյանը: Ազատ ամեն մի պարտավորությունից՝ Թուրքիան մի տեղ բնաջնջում է հայկական տարրը, շարունակում է Հախումյանը, մյուս տեղ՝ տեռորի և բթացնող սարսափի ենթարկում ժողովրդին: Նա անարդել բորբոքում է մահմեդականների ֆանատիկոսությունը և ինքնավստահության գիտակցությունը: «Արձագանքի» գլխավոր աշխատակիցը ամփոփում է մտքերը. սխալվում էին մարդիկ, երբ ենթադրում էին, թե Դուռը բարենորոգումների ծրագիրը չի իրականացնում՝ վախենալով իր զինվորականներից և հոգևորականության մոլեռանդությունից: «Վերջին և նախկին անցքերը տեսնելով, մեզ թվում է, որ ճիշտ կլիներ ասել, թե տալիքանը ոչ մի միջոցառումներ չէ անում, ոչ մի ռեֆորմներ չէ ընդունում՝ քաջալերվելով Եվրոպայից»[74]: Որ Եվրոպան նյութական ուժ և զինվորական հզորություն ուներ, այդ վեր էր կասկածից: Հախումյանը, սակայն, գիտեր, որ նա մինչև կոկորդը խրված է յուր «շահերի» կեղտի մեջ և «դրանց համար պատրաստ է ղոհել» ամբողջ աշխարհը[75]:

«Ահա և վերջը» հոդվածը ոչ միայն Հախումյանի, այլև «Արձագանքի» խմբագրության վերջին խոսքն էր՝ արևելյան հարցում: «Ո՛վ է ղեկավարում Եվրոպայի քաղաքականությունը, ո՞վ է կարգադրում Արևելքի գործերը: Թող Բևերեիկները դեռ հուսան, թե այդ կարգադրողը Եվրոպան է, բայց փաստերի օզակը ցույց է տալիս և աղաղակում, որ հրապարակի տերը Թուրքիան է, որից եվրոպական ամեն մի պետություն սպասում է յուր բաժինը...

Հայոց երկիրն ավերվեց, հարյուր հազարավոր աշխատասեր, քրիստոնյա, քաղաքակրթության ընդունակ ժողովուրդ ցիր և ցան եղավ աշխարհի բոլոր կողմերը, ենթարկվելով վատասերվելու սոսկալի վտանգին: Կրետեն ավերվեց, Հունաստանն ստորացավ, Թնսալիան

---

[73] «Արձագանք», 1897, № 87:

[74] Նույն տեղում, № 77:

[75] Նույն տեղում, № 84:

ավերակների և մոխրի կույտ դարձավ և այդ բոլորը Եվրոպայի, քրիստոնյա Եվրոպայի բարեհաճ համաձայնությամբ. «քաղաքակրթված» Եվրոպայի, որ ահա տարիներ շարունակ ծրագրեր է կազմում Թուրքիայի բարենորոգմանց համար, խոսում է Թուրքիան բնաջինջ անելու մասին, ծրագրեր է կազմում Թուրքիայի բաժանման մասին և այլն, և այլն։ Եվ այդ ծրագրերից ո՞րն իրականացավ։ Եվ ոչ մեկը»[76]։

Արևելյան հարցի շարքը Հախումյանն ավարտում է մի թարգմանական ծավալուն աշխատանքով, որն ինչ-որ չափով պատասխանում էր նրա հարցասիրությանը։ Նա ռուսերենից թարգմանում է կանոնիկոս Մալքոլմ Մակքոլի «Սուլթանը և պետությունները» աշխատությունը, որը 1897-ին ռուսերեն լեզվով տպագրվել էր Պետերբուրգում՝ հայ մեկենաս Առաքել Ծատուրյանի ծախքով։ Գրքի 20 գլուխների հաջորդականությամբ Հախումյանը տալիս է դրանց ամփոփ շարադրանքը։

1897 թ. երբ խաղաքարտերը լիովին բացված էին, «Արձագանքի» խմբագրությունն այլևս պատրանքներ չուներ։ Պատրանքներ չուներ ոչ բարենորոգումների ծրագրի, ոչ եվրոպական դիվանագիտության և ոչ էլ ցարական կառավարության նկատմամբ։ Հայ մտավորականությունը երես առ երես կանգնած էր դաժան փաստի հանդիման։ Ազգը սպանվում էր։ Ազգի մնացորդները քայլում էին գաղթի ճանապարհներով և պղտոր առվակներով հոսում դեպի Թիֆլիս, Բաքու, Դանձակ, Ռոստով... Հովհաննիսյանը փոխում է հրապարակախոսության ուղղությունը։ «Արձագանքի» հոդվածներում այլևս չեն խոսում եվրոպական դիվանագիտության մասին։ Գլադստոնի և Ստիվենսոնի անունները իջնում են բեմից։ «Արձագանքը» վերջնականապես երես դարձնելով ժամանակի քաղաքակիրթ դիշատիչների դիվանագիտությունից, իր ընթերցողների հետ սկսում է հիմնականում ղրուցել հայրենասիրության և ազգային անկախության գաղափարների դեղեցկության շուրջը։ Ամեն ինչ դեռ կորած չէր։ Խմբագրությունը լիահույս էր, որ սեփական արժանապատվությամբ լի հայ ժողովուրդը վերջնականապես ճանաչելով իր երբեմնի «հովանավորներին», անձամբ պետք է լուծեր կյանքի ու մահվան, հայերի լինել-չլինելու հարցը։

90-ական թթ. կեսերին Ա. Հովհաննիսյանին լրջորեն զբաղեցնում է եվրոպական փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի փորձը։ Իր թերթի էջերում բազմաթիվ նյութեր նվիրելով այդ

[76] Նույն տեղում, № 87։

հարցին, նա անուղղակիորեն մատնանշում էր հարցի լուծման ազգային-ազատագրական պայքարի ուղին. այդ գաղափարն առավել հըստակությամբ էր ձևակերպվում նրա աշխատակից Հախումյանի հոդվածներում։

Մեր կարծիքով ազատագրական պայքարի պրոպագանդից բացի, Հովհաննիսյանը 90-ական թթ. կապված էր արևմտահայ շարժման որոշ գործիչների հետ, որոնք անմիջականորեն գտնվում էին պայքարի ոլորտներում։ Այս ենթադրության օգտին են խոսում երկու առերևույթ աննշան թվացող փաստեր, որոնք, սակայն, մեր կարծիքով, շատ խորհրդանշական են։

Ա. Հովհաննիսյանը երկար տարիներ բարեկամական կապերով կապված էր Կ. Պոլսի իր թղթակցի՝ Վաղինակի հետ (որի գործունեությանը կանդրադառնանք սույն աշխատության վերջին գլխում)։ Վաղինակը 1892-ին ձերբակալվում է սուլթանական կառավարության կողմից և իբրև խիստ վտանգավոր հանցագործ՝ աքսորվում Աքիա։ Նա մեղադրվում էր սուլթանի վրա ռումբ նետելու դավադրության մեջ։ Ի դեպ, ինչպես երևում է որոշ նյութերից, Վաղինակը 1888—1891 թթ. Կ. Պոլսից մի քանի անգամ եկել է Պետերբուրգ, Մոսկվա և Թիֆլիս։ Արդյոք Կ. Պոլսում ծավալած իր քաղաքական գործունեությունը նա չէ՞ր համաձայնեցնում մայրաքաղաքի որոշ գործիչների, իսկ Թիֆլիսում՝ Հովհաննիսյանի հետ. կամ գուցե հրահանգներ էր ստանում հնչակյան կուսակցությունից, որին, ինչպես պարզվում է՝ անդամագրված էր նա[77]։

Ինչ էլ որ լիներ, Աբ. Հովհաննիսյանը չէր կարող սոսկ անտարբեր դիտողի դերում լինել, երբ Վաղինակը լայն մասշտաբի գործունեություն էր ծավալում թուրքական կառավարության սահմաններում։

Հաջորդ փաստը կապված է Ս. Հախումյանի հետ։ Մեր կարծիքով խմբագրությունը 1895 թ. նրան գործուղելով Կ. Պոլիս, թերևս հետապնդում էր նաև տեղի որոշ գործիչների հետ կոնկրետ կապեր ստեղծելու նպատակը։ Ահա թե ինչ է երևում եղյանին ուղղված մի նամակից, որը, դժբախտաբար, առայժմ հնարավոր չէ ավելի հիմնավոր ձևով վերծանել։ Գևորգ Եվանգուլյանը 1897 թ. գրում է. «Քանի մի ժամանակ առաջ «Արձագանքի» խմբագրության մեջ պարապում էր մի ոմն Նշնիկ մականունով երիտասարդ, որին վաղուց ոստիկանությունը

---

[77] Տե՛ս Պետրոս Տանապետյան, Զայն տառապելոց, Փարիզ, 1922, էջ 414։

փնտրում է տաճկական կառավարության խնդրանոք, մեղադրելով նրան զանազան հանցանքների մեջ, որ նա կատարել է տաճկական կառավարության դեմ։ Նա մշեցի է։ Եղնիկին չեն կարողացել գտնել, ասում են նա արտասահման է փախել։ Մի շաբաթ ձերբակալված էր «Արձագանքի» աշխատակից Ս. Հախումյանը, որից հարցնում էին, թե ո՞ւր է Եղնիկը։ Հետո Հախումյանին բաց թողեցին։ Երեկ նորից կանչել է ժանդարմայի մեծավորը և ասել, թե 3 օր ժամանակ է տալիս, որ ասե, թե որտեղ է Եղնիկը, որի նամակները ցույց են տվել՝ Թիֆլիսում գրած, և ասել են, եթե չասեք որտեղ է, նորից կձերբակալենք և ապա կդիմենք ձեր խմբագրին... Հախումյանը նորից ասել է, թե չգիտե ուր է Եղնիկը»[78]։

1896 թ. Ա. Հովհաննիսյանը «Փորձից» արտատպում է խոշոր գործիչների ասույթները հայրենիքի մասին («Իմաստներ» խորագրով)[79]։ Նույն շրջանում «Արձագանքի» էջերում երբեմնապես զետեղվում են և ճանապարհորդական նկարագրություններ, բանասիրական ու ազգագրական նյութեր, որոնք ինչ-որ չափով կարող էին վերականգնել հայկական կործանվող նահանգների կյանքը, առօրյան, պատմությունը («Վանից մինչև Թիֆլիս», «Հիշողություն անցյալից», «Վան»)։

1895—97 թթ. «Արձագանքում» տպագրված գեղարվեստական գործերը հիմնականում առնչվում էին հայկական իրատորածների հետ։ Այսպես, 1896-ին տպագրվում է Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը (№ 35—150), 1897—98 թթ. արևմտահայության կյանքին և հայ մտավորականության անելիքներին նվիրված՝ Փափազյանի «Էմմա» վեպի I-մասը, նույն հեղինակի պատմվածքները, պատկերները և պարսիկ լեռնականների ազատագրական պայքարը գրվատող «Ասի» վիպակը[80]։ «Արձագանքում» տպագրվել են հայկական ջարդերի անմիջական տպավորության տակ գրված Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունները։ Այս ստեղծագործություններից բացի, որոնց մեջ կատարված են պատմական ժամանակաշրջանի ոգին մեկնաբանող լուրջ ընդհանրացումներ, «Արձագանքում» հրապարակվել են և ժամանակի մի շարք գրողների ու հրապարակախոսների պատմվածքները, գրույցները, ակնարկները։

---

78 ՀՊԿՊԱ, եզյանի ֆոնդ, Գ. Սվանգուլյանի 15. 1. 96 թվակիր նամակից։

79 «Արձագանք», 1896, № 116։

80 Տե՛ս «Արձագանք», 1886, № 108—124։

«Արձագանքին» երկար տարիներ աշխատակցում էր արձակագիր Բագրատ Այվազյանը։ 1893-ին նա այդ թերթի էջերում հրապարակում է «Աշոտ երկաթ» պատմական վեպը։ Հայկական ջարդի տարիներին Այվազյանը կրկին անդրադառնում է հայ ժողովրդի ճակատագրին և իր պատմվածքներում արտացոլում արևմտահայության պայքարի ու ողբերգության պատումները, քուրդ բարեկամների անձնազոհությունը՝ հայերին փրկելու համար («Երկու մահ», «Երջանիկ բոպե» և այլն)[81]։ Ժամանակի աչքի ընկնող կին լրագրող Մարգարիտի պատմվածքների թեմաները նույնպես նվիրված էին հայերի օրհասական ճակատագրին ու դաշնակցականների տունդարձին։

1894—97 թթ. «Արձագանքի» գեղարվեստական գրականության բաժնում սկսում է հաճախակի երևալ բանաստեր և բանահավաք Ս. Քամալյանի անունը։ «Աստված չճանաչող» իր զրույցում վկայակոչելով մշեցի Աբրահամի և նրա որդու սխրագործությունը, հեղինակն անուղղակիորեն ակտիվ գործունեության էր կոչում իր ժամանակակիցներին («Հիմի ո՜ւր են այնպիսի ուժեղ, ազգի պաշտպան մարդիկ...»)[82]։ «Սև օրերից միները» և «Սասնո իշխան Թոռնիկը» պատմվածքներում Քամալյանը նկարագրում է Սասունի հերոսական ժողովրդի և Պարսկաստանի հայ գյուղերից մեկի վարած ազատագրական պայքարի առանձին դրվագները։ Ս. Քամալյանը գրել է և մի քանի այլաբանական զրույցներ, որոնց միջոցով ծաղրել է եվրոպական դիվանագիտության ունայն շաղակրատանքները և ցույց տվել այդ երկրների հովանավորությանը հանձնված երկրի եղերական կորուստը։

Եվրոպական դիվանագիտության անիսաունակ գործունեությունը Քամալյանը ծաղրել է «Պառավի այծը» այլաբանական զրույցում, որով բացվում էր «Արձագանքի» 1897 թ. առաջին համարը։ Մի ծեր կին, պատմում է հեղինակը, իր միակ այծը արոտի ուղարկելուց առաջ նրա ապահովությունը շարունակ հանձնարարում էր սրբերից մեկնումեկին, որոնք բարեխոսորեն կատարում էին իրենց պարտքը։ Լինում է այնպես, որ մի անգամ ծեր կինը այծի պաշտպանությունը միաժամանակ հանձնարարում է բոլոր սրբերին։ Այդ օրն էլ հենց գայլը հոշոտում է այծին։ Վշտահար պառավի տարակուսանքը փարատում է հրեշտակը։ «Այն օրը, որ դու այծդ բոլոր սրբերի հսկողության հանձ-

---

81 Տե՛ս «Արձագանք», 1895, № 55 և № 74։

82 Նույն տեղում, № 26։

Նեցիր,— ասում է նա,— նրանք իսկույն ժողով արին, խորհուրդ կազմեցին, որ վճռեն, թե այդ օրը ո՞վ պիտի պահապան լինի։ Սրբերից ամեն մինն ուզում էր այդ ծառայությունն անի։ Վեճ բացվեց այդ մասին, որ երկար ու երկար շարունակվեց։ Իրիկնադեմ դեռ հարցն անորոշ էր, այդ ժամին գայլը դաշտով անցնելիս այծիդ անապահով դրությունով տարավ և կերավ»[83]։

1897 թ. և 1898-ի սկզբին «Արձագանքում» երևում է պատկերների և պատմվածքների մի շարք, որը նվիրված էր մի նոր հարցի, հայ գաղթականների վիճակին՝ Կովկասում (Փափազյանի «Կաղանդի երգը», Մուրացանի «Երեկ և այսօր» պատկերները, Արշարունու «Փշրված պատկեր», Շ-ի «Ծոմա Արկադևիչ» պատմվածքները և այլն)։ Գեղարվեստական գործերից բացի այդ օրերին Կովկասի հայ մամուլի էջերը լցվում են նույն հարցին նվիրված բազմաթիվ թղթակցություններով։ Հարց է բարձրացվում չբավարարվել մասնավոր նպաստներով ու հանգանակություններով և կազմակերպված բնույթ տալ գաղթականների օգնությանը։ «Շատ շուտ մոռացան» առաջնորդողում քննադատվում է Գաղթականության օգնության կոմիտեի անգործունեությունը։ Խմբագրությունը պահանջում է կազմել նոր հանձնաժողով։ «Թշվառները փողոցում» առաջնորդողում նկարագրված է գաղթականների մի նոր, ստվար խմբի մուտքը Թիֆլիս։ Խմբագրությունը առաջարկում է Բարեգործական ընկերությանը՝ արտակարգ նիստ գումարել և միջոցառումներ մշակել թշվառների վիճակը թեթևացնելու համար։ «Արձագանքի» խմբագրությանը կից կազմակերպվում է ձրի ճաշարան, որտեղից օգտվում էին բազմաթիվ կարոտյալներ։ Խմբագրությունը կազմում է և մի հանձնաժողով (Վ. Փափազյանի, Ն. Աղբալյանի և Ս. Զուրաբյանի անդամակցությամբ), որի խնդիրն էր ի մոտո ծանոթանալ Թիֆլիսի ղանաղան թաղամասերում ապաստանած գաղթականների կյանքին և պաշտոնական զեկուցագրեր հրապարակել լրագրի էջերում։

Հանձնաժողովը բարեխղճորեն կատարում է իր պարտականությունը և ընթերցողներին պարբերաբար ծանոթացնում ստուգման արդյունքներին։ Այդ արդյունքները հուսահատական էին։ Մարդիկ տառապում էին կեղտի ու նկուղային հարկերի խոնավության մեջ, մեռնում էին քաղցից ու հիվանդություններից, շատերն ապարդյուն աշխատանք էին որոնում։ «Արձագանքի» նյութերի հետքերով քաղաքային վարչու-

---

[83] «Արձագանք», 1897, № 1։

թյունը մասնագետ բժիշկներ է ուղարկում գաղթականների տները։ Նրանց եղրակացությունները նույնպես հրապարակվում են մամուլում։ Ջնկուցագրերը հաջորդում են իրար, վիճակագրական տվյալներ են հրապարակվում գաղթականների մասին, «Արձագանքը» տպագրում է «С.-Петербургские ведомости» թերթի առաջարկը՝ իշխանություններից պահանջելու և ըստ նպատակին գործադրելու հայ թշվառների օգտին հանգանակված գումարները։ Թղթակցություններ են հրապարակվում Բաքվի աղքատանոցներում պատսպարված հայերի վիճակի մասին, խոսվում է Արևմտյան Հայաստանում հիմնադրված որբանոցների և առհասարակ պատրիարք Օրմանյանի ձեռք առած միջոցառումների շուրջը։ «Արձագանքում» հաճախակի հրապարակվում են ամփոփագրեր՝ Ռուսաստանի բազմաթիվ երկրամասերում և քաղաքներում կազմակերպված նվիրատվությունների արդյունքների մասին (Դաղստան, Բևսարաբիա, Եկատերինոսլավ, Արխանգելսկ, Սամարա, Ռյազան, Տամբով, Օրենբուրգ, Պենզա, Ակմոլինսկ և այլն)։

Ջգայուն վերաբերմունք ցուցաբերելով դեպի տարաբախտ հայերը, Ա. Հովհաննիսյանը, սակայն, չէր մոռանում նրանց առմիշտ կապել Կովկասի հողի հետ։ Նրանք ունեին իրենց սեփական երկիրը, որը ոչ մի դեպքում չէր կարելի դատարկ թողնել. իր հոդվածներում Հովհաննիսյանը հետևողականորեն զարգացնում էր ամայացած Հայաստանը վերաշինելու անհրաժեշտության գաղափարը։

«Գաղթականների մասին մեր ասածը վերջացրած կլինենք,— գրում են Վ. Փափազյանը, Ն. Աղբալյանը և Ս. Ջուրաբյանը՝ «Թուրքահայ գաղթականները Թիֆլիսում» հոդվածում,— եթե ասենք, որ վերջնական նպատակը՝ նրանց հայրենիք ուղարկելը պիտի լինի։ Պահպանել գաղթականների կյանքը և աշխատել հարմար դեպքում նրանց հայրենիք ուղարկել... Այս է մեր ասելիքի ծուծը»[84] (ընդգծումը հեղինակներինն է)։

Ա. Հովհաննիսյանը մինչև վերջ հավատարիմ էր ազգային-պահպանողական հոսանքի գաղափարներին և «Արձագանքի» հրատարակության նախավերջին տարում գրեթե կրկնում էր «Փորձի» առաջին տարվա իր հավատամքը։ Այն ժամանակ, խորհրդածելով արևմտահայության վիճակի բարվոքման հարցի շուրջը, հանդեսի տեսաբանը գրում էր, թե հայերի բարօրության մասին պետք է հոգալ միմիայն

[84] «Արձագանք», 1897, № 127։

Հայաստանում։ Ընդ որում՝ «Հայաստան ասելով մենք չենք հասկանում հայերի բնակած այն տեղերը, ubi bene[85] նոցա համար, այլ հասկանում ենք աշխարհագրական Հայաստանը։ Այդ երկրի վրա պիտի դառնա բոլոր հայերի ուշադրությունը,— շարունակում է ազգային տնտեսության հեղինակը,— նորա բնակիչների համար պիտի մտածեն խոհական հայերը, նոցա դրությունը պիտի աշխատեն բարվոքել։ ... Այն ազգը, որ յուր երկիրը չունի (մանավանդ Թուրքիայում), նա ազգ չի համարվում»[86]։

«Արձագանքի» հրատարակության շրջանում նույնպես Հովհաննիսյանը խորհում էր միմիայն հայրենիքը պահպանելու հարցի մասին։ Այդ էր պատճառը, որ հայերին հասած մեծագույն աղետից հետո անդամ նա պահանջում էր անել ամեն ինչ՝ հայերին հայրենիք վերադարձնելու համար։

Ս. Հովհաննիսյանը դարավերջին գաղթականներին վերադարձնելու հաստատակամ պահանջով արտահայտում էր իր ժողովրդի պայքարելու և տոկալու կամքը, նրա հարատևման նկատմամբ ունեցած իր անսասան հավատը։

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԱՐԽԻՎՈՒՄ

«Արձագանքի» էջերում 1894—97 թթ. տպագրված նյութերը մի մասն են միայն այն հոդվածների և թղթակցությունների, որոնք խմբագրությունը պատրաստել էր տպագրության համար։ Ելնելով ժամանակի քաղաքական իրադրությունից և դիվանագիտական նկատառումներից, Կովկասի կառավարչապետությունը և գրաքննական կոմիտեն տեղական թերթերի համար սահմանել էին առանձնահատուկ կարգ, որը խմբագիրներին արգելում էր խոսել հայկական շարժումների, Փոքր Ասիայում տեղի ունեցող կոտորածի փաստերի մասին։

Չնայած դրան, Ս. Հովհաննիսյանը համառորեն կապ էր պահպանում Արևմտյան Հայաստանի հետ և պայքարի ղեկով տպագրում էր

---

[85] «Ubi bene, ibi patria» (որտեղ լավ է, հայրենիքն այնտեղ է) լատինական առածի սկիզբը։

[86] «Փորձ», 1876/77, № 2, էջ 406։

բղթակիցներից ստացած հոդվածների և արտասահմանյան թերթերից կատարած թարգմանությունների մի մասը։ Տպագրության համար գրաքննությանը ներկայացված նյութերի մի պատկառելի բաժինը մերժվում էր և նետվում գրաքննական կոմիտեի արխիվը։

«Արձագանքի» գրաքննական արխիվում պահվող նյութերն իրենց բնույթով կարելի է դասակարգել մի քանի խմբի։ Ամեն բանից առաջ մերժվել են արևմտահայության կյանքի անապահովությունը հավաստող, իսկ վերջում՝ կոտորածներին նվիրված բղթակցությունները։ Տպագրության ներկայացված նյութերից մերժվել են և այն փաստաթղթերը, որոնք մերկացնում էին սուլթանի և եվրոպական դիվանագիտության քաղաքականությունը հայկական հարցում։ Գրաքննությունը արգելել է հրապարակել եվրոպական հասարակության բողոքի միտինգների նկարագրությունը, ռուսական և եվրոպական մամուլի և հասարակական գործիչների բողոքի խոսքերը՝ կատարվող եղեռնագործության դեմ։ Բնականաբար արգելվել են նույն հարցին նվիրված «Արձագանքի» խմբագրական և բանավիճային հոդվածները։ Վերջին հարցը շողնելով հաջորդ բաժնին, փորձենք տալ հայկական հարցին նվիրված նյութերի համառոտ տեսությունը։

1894 թ. արգելված բղթակցությունների հեղինակները պատմում են. Կարինի, Երզնկայի, Բալուի և Մուշի գավառների 60 հայաբնակ գյուղերում անարգել իշխում են ավազակները։ Սեբաստիայում տաճիկ իշխանավորները կեղծիքի ու մատնության ճանապարհով բանտերը լցնում են հայ բնակիչներով։ Բուլանըխում սով է։ 6000 հայեր գաղթում են Ռուսաստան։ Խնուսում՝ բանտարկություններ և տագնապ։ Ապահունիքում՝ բռնություններ, սարսափ։ Կարինում սով է, լավում են առաջին լուրերը ձերբակալությունների, սպանությունների և գորքերի տեղաշարժի մասին։ Բաբերդում խուճապ է, փողոցները լի են խուժանով, խանութներն ու գպրոցները փակ են։ Աքիսարի գյուղում մահոմեդական կոտորած է տեղի ունեցել... Սասունում հայերը դիմադրում են քրդերի հարձակմանը։ Նրանք թևե թողել են իրենց Տալվորիկ ավանը՝ «Սասնա դուռը», բայց ապավինած «Ծոփք քարի» բարձունքներին, իրենց «սեփական ազգատիկ միջոցներով պահպանում են ցանկալի անկախությունը»։ Թուրքերը Սասունի Սեմալ գյուղում ձերբակալում են Մուշի հայկական գպրոցների տեսուչ Միհրան Դամադյանին և հայ-

ից պահանջում մի հանրագրով ամբաստանել նրան: Հայերը մերժում են: Կաղզվանում սով է ... և այլն, և այլն[87]:

1895 թվականին բոլոր արտասահմանյան թերթերը և «Արձագանք» թղթակիցները լուսաբանում են Սասունի հայկական գյուղերի ողբերգությունը: Կարսից ուղարկված նամակում նկարագրված է Սասունի Գելիեգուզան գյուղի կործանումը: Թարգմանված է «Դեյլի Նյուս» թերթի «Սոսկալի կոտորած» հոդվածը, որի հեղինակը Սասունի դեպքերը նկարագրում է Թուրք պինվորների պատմածով: Նույն թերթից թարգմանված է ավելի ծավալուն մի հոդված, որտեղ դարձյալ դեպքերի մասնակիցների միջոցով թղթակիցը պատմում է Սասունի կոտորածների բոլոր մանրամասները, շեշտելով այն իրողությունը, որ այդ նախճիրը խնամքով ծրագրված է եղել Բ. Դռան կողմից[88]:

1895—1896 թթ. թղթակցությունները դուժում են կոտորածների բոթը ողջ Արևմտյան Հայաստանում: Այսպես, Կաղզվանից գրում են Ծերունի Հովհաննեսի պատմածները Բասենի, Բուլանըխի և Ալաշկերտի մասին. «Կըսեն էլ հայ չմնաց, կոտորից անօրնը ամենքին», իսկ Կարինի մասին՝ «Աստված սիրես, մի հարցնի, Արզրումու կոտորած պատմելու բան չէ... ա՜խ, վայ, ա՜խ, վայ, հա՛յ չմնաց, չմնաց, կորավ մեր երկիր, կորավ»[89]: Կարինի կոտորածները նկարագրվում են մի շարք փաստաթղթերում. դրանք նախօրինակը չունեցող ոճիրների փաստեր են[90]:

Գրաքննության կողմից արգելված հոդվածների մի մասը նվիրված է սուլթանի քաղաքականության մերկացմանը. «Տաճիկ կառավարության անվերջ խոստումները» հոդվածի հեղինակը, հակադրվելով անգլիական գործակալության այն հաղորդագրությանը, թե իբր սուլթանի կազմած հանձնաժողովը պետք է քննի կատարված բարբարոսությունների հարցը, նշում է, թե վերջին մեկ դարում հայերի վիճակը շարունակաբար ծանրացել է, այնինչ կառավարությունը բնավ չի միջամտել նրանց գործերին: Սուլթանի նոր խոստումները ծխի արժեր ունեն, քանի որ այնտեղ, ուր կոտորածները կազմակերպվում են կանոնավոր զորքի միջոցով, հասարակությանն անհնար է խաբել քըր-

---

87 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցիրք Ա, գործ №1236:

88 Տե՛ս նույն տեղում, գործ № 1273:

89 Նույն տեղում:

90 ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք լրացուցիչ Ա, գործ № 179:

դերի ստվերով[91]։ Մի այլ հոդվածագիր օրինաչափություն է տեսնում կոտորածների և սուլթանի քաղաքականության մեջ։ Եթե մի տիրակալ հրապարակորեն իր հպատակ ժողովրդին անվանում է հակատեռուանական ժողովուրդ («որ դժբախտաբար նորա հպատակների մեջ ամենահավատարիմը և մինչև անգամ ամենատիրասերն է եղել և է»), ապա հետևանքները բնական են[92]։

Եվրոպական լրագրողները մեծ հույսեր էին կապում քննիչ հանձնաժողովի աշխատանքների հետ, սակայն հայ գործիչներից մեկը մի հարցազրույցում պսակազերծ է անում Աբդուլ Համիդի սարքած այդ խաբկանքը։ Նա ասում է. քանի դեռ Զաքի փաշան և Բիթլիսի նահանգապետ Թահսին փաշան գրավում են իրենց հին պաշտոնները, անկարելի է, որ նրանց նահանգների բնակիչները վկայություն տան նահանգապետների դեմ։ Ավելին, նրանց դեմ չեն համարձակվի արտահայտվել և հանձնաժողովի բուրք անդամները, որոնք ցածր են նրանցից՝ իրենց աստիճաններով։ Այդ հանձնաժողովը ևս կձախողվի, ինչպես 1860-ին կազմված Սիրիայի և 1876-ին՝ Բուլղարիայի հանձնաժողովները[93]։ Մի շարք հոդվածներում այն միտքն է հայտնվում, թե այս անգամ ևս օգտվելով եվրոպական երկրների հակասություններից, սուլթանը հեշտությամբ կխուսանավի և կազատվի պատասխանատվությունից։ Այնինչ միասնական լինելու դեպքում՝ եվրոպական երկրները կկարողանային զսպել նրան. չէ՞ որ 1894-ի հոկտեմբերի 5-ից մինչև 1895-ի հոկտեմբերի 5-ը, երբ եվրոպական պետությունները ինչ-որ չափով զբաղվում էին հայերի ճակատագրով, ավելի քիչ կոտորած եղավ, քան հոկտեմբերի 5-ին հաջորդած 15-օրում[94]։

Խոսելով այդ միևնույն հարցի մասին, «Сын отечества» թերթի տեսաբանը զուգահեռ է անցկացնում Թուրքիայի, Չինաստանի և Լյուդովիկոս XI-ի քաղաքականության միջև. «ստիպողական դեպքում խոստանալ ամեն բան, ինչ որ պահանջեն, և առաջին հարմար դեպքում հետ կանգնել բոլոր պարտականություններից։ Այսպես են վարվում Բոսֆորում»։ Այնուհետև դիմելով եվրոպական երկրներին, հոդվածագիրը զգուշացնում է. «Հաշվի առնելով անցյալի դասերը, զիջանել Թուր-

---

91 ՎԿՊՊԱ ֆ. 480, ցիրք Ա, գործ № 1236։

92 Նույն տեղում, գործ № 871։

93 Նույն տեղում, գործ № 1273։

94 Նույն տեղում։

քիային, նշանակում է ամենավատ կրքերին ասպարեզ տալ և ամբողջ աշխարհի խաղաղության ու հանդստության համար վտանգավոր նոր պայթյուն առաջացնել»[95]։

Ռուսական «Новости» լրագիրը, որ դեռևս 1888-ին ռուսական դիվանագիտությանն առաջարկում էր զսպել Թուրքիային, որպեսզի նա վերջ տա հայերին հալածելու քաղաքականությանն ու կամայականություններին՝ Հայաստանում[96], 1895 թ. կրկին անդրադառնում է այդ հարցին։ Նա համոզմունք է հայտնում, թե հանուն քաղաքակրթության մեծ իդեալի և քրիստոնեական կրոնի, Եվրոպան կթողնի իր շահադիտական հաշիվները և կօգնի հայերին[97]։

Ցարական դրաքննությունը ընթերցող հասարակությունից խնամքով թաքցնելով թուրքական հրոսակախմբերի կատարած ոճրագործությունների փաստերը և Բ. Դռան վարկաբեկիչ քաղաքականությունը մերկացնող հոդվածները, հետևողականորեն մերժել է և այն հաղորդումները, որոնք եթե մի կողմից վեր էին հանում եվրոպական ազնիվ քաղաքացիների մարդասիրական ելույթների բովանդակությունը, մյուս կողմից խարազանում էին դիվանագիտության խայտառակ վարքագիծը։ Այսպես, արգելվում է այն հաղորդումը, թե 1887 թ. ֆրանսիացիներից, իտալացիներից, իսպանացիներից և պորտուգալացիներից կազմված «Աղատ կյանք և արդար վաստակ» միությունը իր հերթական նիստերից մեկը նվիրում է հայոց դատին[98]։

1894 թ. Վառնայում կազմակերպված 3000-անոց միտինգը որոշում է ընդունում սուլթանից պահանջել կատարելու 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները։ «Դևյլի նյուսը» Ռուշչուկից հաղորդում է հայ-մակեդոնական քաղաքացիների 6000-անոց միտինգի մասին, որը բողոքում էր Սասունի կոտորածների և Մակեդոնիայում տիրող ավազակության փաստերի դեմ[99]։ Արգելվում է և այն հաղորդումը, որ Ուելսի մեթոդիստների նահանգական ժողովը որոշում է ընդունել հայոց դատի պաշտպանության հարցով դիմել անգլիական թագուհուն։

1897-ի մայիսին Լոնդոնում համաժողով է հրավիրվում, նվիրված

---

[95] Նույն տեղում, գործ № 1404։

[96] Նույն տեղում, գործ № 871։

[97] Նույն տեղում, գործ № 1273։

[98] Նույն տեղում, գործ № 803։

[99] Նույն տեղում, գործ № 1236։

հայկական հարցին։ Մասնակցում էին Ֆրանսիայի ներկայացուցիչ Շարմտանը (որի ջանքերով 2 հատորով հրատարակվել էր 1895-ի հոկտեմբերից 1896-ի դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում հայկական կոտորածների փաստերը պարունակող «Դեղին գիրքը»), հայերին օժանդակող գերմանական կենտրոնական հանձնաժողովի ներկայացուցիչ Լեփսիուսը, հայերից՝ Մինաս Չերազը, Բումայանը և այլք։ «Անգլո-հայկական ընկերության» հիմնադիր Ջեմս Բրայսը խոսում է ընկերության խնդիրների մասին, այնուհետև ելույթներից հետո ներկաներին հաշիվ են ներկայացնում նպաստների հավաքման ընթացքի վերաբերյալ[100]։ Մայիսի 10-ին կազմակերպված մեծ միտինգում ելույթ են ունենում Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Բելգիայի ներկայացուցիչները։ Լոնդոնում ունեցած իր ելույթներում Լեփսիուսը շեշտում էր այն միտքը, որ չնայած անգլիական ժողովուրդը անկեղծորեն մտահոգված է հայության ճակատագրով և զարշանքի զգացումով է տոգորված «մեծ մարդասպանի» նկատմամբ, անգլիական կառավարությունը չի ուզում ռիսկի դիմել։ Լեփսիուսը ընդգծում է, որ եվրոպական երկրներում հայկական հարցով անկեղծորեն զբաղվում են ոչ թե պետական, այլ քրիստոնեական շրջանները, որոնք, սակայն, փոքրամանուքյուն են կազմում[101]։

1897 թ. Ֆրանսիացի պատմաբան, ակադեմիկոս Վանդալը Սորբոնում արտասանած իր ճառում ասում է, թե Եվրոպան կամ չհմացավ կամ չուզեց իմանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում. «Լռության և սառության մի սոսկալի դավակցություն է կազմակերպվել,— ասում է նա։ ... Եվրոպան և ամենից ավելի Ֆրանսիան, յուր անտարբերությամբ գործակից եղավ Թուրքիային։ Նույնանման արհավիրքներ պիտի կրկնվին, եթե ուժեղ ձեռնարկություն չլինի։ «Հիվանդ մարդը» վաղուց է մեռել և պետք չէ երկար սպասել, մինչև նորա դիակը օդը թունավորե»[102]։

Եվրոպական դիվանագիտության քննադատությունն է տրված Նորայր Բյուզանդացու՝ Ստոկհոլմի բաղմամարդ միտինգում արտասանած ճառում։ Հայերի անլուր կոտորածները կատարվում են քաղա-

---

100 Եվրոպայում և Ամերիկայում երկու տարվա ընթացքում հավաքվել էր 6 միլիոն մարկ։

101 ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 1404։

102 Նույն տեղում։

քակրթության մի դարում,— ասում է Բյուզանդացին,— երբ նույնիսկ անասունների պաշտպանության ընկերություններ գոյություն ունեն։ Մինչև վեց պետությունների համաձայության գալը, իսկ հայտնի չէ դեռևս համաձայնության պիտի գա՞ն արդյոք, «ամենքն ականատես եղան տաճկին ծրագրին՝ որուն միակ նպատակն է բնաջինջ ընել հայերը տաճկական բոլոր երկրներուն մեջ»։ Ելքը միության մեջ է, ասում է հեղինակը. «Միացե՛ք, տիկնայք և տյարք, մյուս երկրներու քրիստոնյաներուն, վճռաբար ըսելու համար եվրոպական դիվանագիտության, թե իր քաղաքակրթիչ դերը պարտք կդնե իր վրա նվաճել վագրը, փոխանակ թողնելու, որ շարունակե ան իր նախճիրներն ամենայն ազատությամբ։ Ապա թե ոչ, արտասվաց ու արյան այսքան հեղեղներու պատասխանատվությունը եվրոպիո վրա պիտի ծանրանա»[103]։

1897 թ. «Դեյլի քրոնիկլի» էջերում տպագրված իր հոդվածները ամփոփելով մի գրքում[104], անգլիական հոգևորական, կանոնիկոս Մալքոլմ Մակքոլը մտածում էր օգնել հայկական հարցին։ Նա դատապարտում է անգլիական ազատամիտ կուսակցության վարքագիծը և հայտնում այն միտքը, թե միայն Ռուսաստանը կարող է փրկել հայերին, առանց մի որևէ դժվարության իր համար։ «Մի՞թե Ռուսաստանը թույլ կտա հայերի անէացումն, քանի որ բավական է նորա հզոր ձայնը՝ մարդասպանի ձեռքը բռնելու համար»։ Հայկական աղետը ըստ նրա չէր լինի, եթե Անգլիան անշահախնդիր կերպով արգելեր Թուրքիային, մինչդեռ ամենքն իրենց շահն ի նկատի ունեն։ «Այդ շահը,— գրում է նա,— որ ամենքն էլ ուզում են ստանալ Տաճկաստանի քայքայվելուց հետո, պատճառ է դարձել, որ այսօր բոլոր քրիստոնյա հպատակները հեծում են տաճկի բռնակալության տակ»։

1897 թվականին Վիլյամ Հարկորտը ստիպված էր զավեշտի եղանակով ներկայացնել իրերի դրությունը։ Սոլսբերին հրավիրում է եվրոպական պետությունների ներկայացուցիչներին և ասում. «Ափսոսում եմ, որ հայերի համար ոչինչ չենք անում, չե՞ք կարծում, որ մենք պարտավոր ենք մի բան անել հայերի համար»։ Պետություններն ասում են. «Սիրելիս, ավելի լավ կլինի չհիշես այդ բանը, քանի որ եթե մի

---

103 Նույն տեղում։

104 Խոսքը վերաբերում է «Սուլթանը և պետությունները» աշխատությանը, որի հայատառ տպագրությունը Ս. Հախումյանի թարգմանությամբ 1897-ին տպագրվում է «Արձագանքում»։

բան անենք, անշուշտ պիտի մե՛նք կռվենք»։ Սոլսբերին ասում է, լավ, նրան չենք ուզում, չխոսենք այդ մասին, բայց թերևս մեր դեսպանները Կ. Պոլսում «մի քիչ խոսակցե՞ն այս խնդրի վրա»։ Կոնֆերանսն ասում է. ոչինչ, դրանից վնաս չկա, մանավանդ ոչինչ չի ստացվելու[105]։

Երբ ռուս լրագրող Նովիկովան իր հոդվածներում բացահայտում է անգլիական դիվանագիտության անփառունակ դերը հայկական հարցում, «Դեյլի Նյուսի» էջերում պատասխան խոսքով հանդես է գալիս պաշտոնից հեռացած Գլադստոնը։ Նա խոստովանում է. «Ողորմելի սուլթանը, որ աստված մարդկության համար իբր պատուհաս է ստեղծել, իր հաղթական դրոշը ծածանեցնում է և իր հակառակորդները՝ Ռուսիան, Ֆրանսիան և Անգլիան իր ոտքի ներքև են։

Այդ նախատինքը նրանց մեջ բաժանելիս ես իմ մասին երկյուղ չունեմ։ Հույս ունեմ, սակայն, որ մեր երկիրը նույն իսկ իր սեփական շահի սիրուց բավական խղճահար պիտի լինի և ցույց պիտի տա աշխարհին իրեն ընկած բաժինը (նախատինքից), ինչ էլ որ լինի այն։

Աստված ողորմելով մի շուտափույթ վախճան տա թուրք վարչության և նորա արարքներին»[106]։

Թուրքերի անգթություններն մերկացման, ինքնախարազանման և հայերին մխիթարելու ճեր Գլադստոնը շատ ուներ։ Սակայն, նույնիսկ նրա ոչինչ չասող այս նամակը զայրացնում է Սոլսբերիին, որն իր ճառերից մեկում, ի դեպ, ասում է. «Իզուր է Գլադստոնը գրգիռ պատճառում այն խնդրում, որ պիտի վճռվի համբերությամբ»։ Այս նշանակում էր, հարկավ, որ Գլադստոնի անխոհեմությունը կարող էր զայրացնել բարեկամ Թուրքիային։

Հայկական հարցի պատմությունը դարավերջին ակնառու դարձրեց երկու Եվրոպայի գոյության փաստը։ Կար ժողովրդի, աղնիվ հրապարակախոսների, հումանիստ հոգևորական գործիչների Եվրոպան, որը ձայնը բարձրացնում էր բռնության դեմ, հանգանակություններ կազմակերպում, մեկնում աղետի վայրերը, մամուլի էջերում հրապարակում կատարված փաստերը։ Բայց և կար պետական գործիչների Եվրոպան, որը մեծ հաշվենկատությամբ չափում ու ձևում էր աշխարհի քարտեզը և այդ հաշվարկներից ելնելով միայն կատարում իր հերթական քայլերը։

---

105 ՎԿՊՊԱ, ֆ. 480, գործ № 1404։

106 Նույն տեղում։

«Արձագանքի» աշխատակիցները, խորապես ըմբռնելով ստեղծված վիճակը, եթե արժանին էին հատուցում հայկական դատի պաշտպաններին, միաժամանակ և կարողանում էին ոտել գնահատական տալ եվրոպական դիվանագիտության ծեքծեքումներին։ Այսպես, «Մայիսյան ռեֆորմների» շուրջ սկսված խոսակցությունների շրջանում Բերթի աշխատակից Պ. Սիմեոնյանը, ոչ մի հույս չկապելով դրանց իրականացման հետ, գրում է. հավանաբար ավելի ճիշտ են նրանք, ովքեր հայտնում են, թե նա (սուլթանը) ասել է. ինքը բարենորոգումներ կմտցնի, բայց Հայաստանում էլ հայ չի մնա։ Նա, հարկավ, կատարում է այս երկրորդ կետը։ «Տաճիկ կենտրոնական կառավարությունը շարունակում է յուր 18-ամյա քաղաքականությունը յուր հայ հպատակների վերաբերությամբ, այն է՝ ջնջելով հայ բնակչությունը, լուծել Տաճկա-Հայաստանի բարենորոգության խնդիրը»[107]։

1896-ի սեպտեմբերի ցույցը Կ. Պոլսում և հայերի ջարդը լցնում են համբերության բաժակը։ «Արձագանքի» խմբագրությունը, չվհատվելով միմյանց հաջորդող մերժումներից, հերթական հոդվածն է ներկայացնում գրաքննության, որտեղ խոսվում էր սուլթանի կառավարության մի նոր քայլի մասին։ 1897 թ. Բուրքական հյուպատոսը Թիֆլիսի հայ դաշնականներից հարկ է ժողովում՝ Հունաստանում սպանված Բուրք պինվորների ընտանիքների օգտին։ Սա բթամտությո՞ւն է, թե ծաղր՝ հայոց ժողովրդի նկատմամբ. գուցե ծաղր է Եվրո՞պայի նկատմամբ, բացականչում է հոդվածի հեղինակը։ Եվ սակայն, այս իրողությունը որքան էլ արտառոց, հոդվածագրի կարծիքով անկասկած պետք է սրբագործվեր եվրոպական մամուլի կողմից։

Այս հարցում նա գտնում է, որ առաջին տեղը կբռնի գերմանական կառավարությունը և նրա մամուլը։ «Չէ՞ որ այնպիսի ասպետական ջննադատեն և ազնիվ ազգն, որպիսին է օսմանցին,— գրում է հեղինա-

---

107 ՎԿՊՊԱ, գործ № 1273։

108 Նույն տեղում, գործ № 1404։

կը,— որ ամբողջ Թեսալիան լուսավորեց այրված գյուղերի ու քաղաքների բոցերով և արտերի լուսավորությամբ, արժանի է լուսավոր Գերմանիայի համակրության։ Գերմանիան անշուշտ կհոգա հանգանակությամբ՝ սպանված տաճիկ զինվորների դերդաստաններն և բարի սուլթանն էլ անշուշտ կվարձատրի առատապես նրան նորանոր արտոնություններով, հայ արյան գնով» (ընդգծումը մերն է—Մ. Մ)։

Գրաքննությունը մերժել է և մի շարք հոդվածներ, որոնք մերկացնում էին դիվանագիտության վարքագիծը Կրետեի հարցում։ Երբ Թուրքիան կռվում էր Հունաստանի դեմ, ասված է այդ հոդվածներից մեկում, եվրոպական պետությունները միանանաբար Թուրքիայի կողմն էին։ Բայց ահա հարկավոր է քննել հաշտության հարցը. պետությունները տարաձայնությունների մեջ ընկնելով, այդ խնդրի լուծումը թողնում են իրեն՝ Թուրքիային։ «Դարձյալ Կրետե» հոդվածում, որը մեր կարծիքով պատկանում է Ս. Հախումյանի գրչին, ասված է. Թուրքերը պահանջում են Կրետեի բարենորոգումների իրավունքն իրենց տալ, Թուրք նահանգապետներ ընտրել այնտեղ և ավելացնել զինված ուժերի թիվը։ Այնինչ, հալածված ու կողոպտված Կրետեի քաղաքացին, զայրույթով համակված՝ «Պատրաստ է իր ատամներով պատառոտել այն կեղտոտ, անպիտան փալասը, որ անվանվում է եվրոպական դիպլոմատիա, ու որի սովերի տակ այնքան զազրելի չարագործություններ տեղի ունեցան»[109] (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։

Հախումյանի ստորագրությունը կրող հոդվածներից է «Դահճի դեմ լեզու, զոհի դեմ սուր և կրակ» հրապարակախոսական ուշագրավ հոլյթը («Լույս և սովերներ» շարքից), որը մերժվել է 1897-ի փետրվարին։ Դա բողոքի ու ցասման խոսք է՝ ուղղված եվրոպական երկրների գործնելակերպի դեմ։ Ժանտախտի և դանդաղ համաճարակների դեմ ոտքի է կանգնում ողջ մարդկությունը, միջոցառումներ են մշակվում աղետը կանխելու, այն կանգնեցնելու, ոչնչացնելու համար։ Սակայն ահա անդնն մարդկանց հետապնդում է, թալանում, կոտորում բիրտ ու գազանային ուժը։ Այն չի կարելի դասել, որովհետև այդ ուժը քաղաքականության հետ է կապվում, հովանավորվում է նրանից։ Հայկական կոտորածներին հաջորդեցին հունական դեպքերը. հույները ոտքի ելան՝ «վերջ դնելու գազանի քայլերին», —գրում է Հախումյանը, իսկ քրիստոնյա Եվրոպան երկու տարի թշվառներին քաղաքականությամբ կե-

109 Նույն տեղում։

բակրելուց հետո համաձայնվեց կրակ բացել, բայց՝ «զոհերի դեմ, ի պաշտպանություն դահճին»։ Դա XIX դարի ամենամեծ բարբարոսությունն էր, մի հակաբանական երևույթ, գրում է Հախումյանը, երբ «Եվրոպան սկսեց ռմբակոծել այն պաշտպանյալներին, որոնց պաշտպանության անունով շարել էր յուր նավերը սուլթանի ջրերում»[110]։

Հախումյանը նույնպիսի կրքով դատապարտում է տաճկական կառավարությանը, որն իր կազմած հուշագրում իրերի դրությունն այնպես էր ներկայացնում, որ կարծես Կ. Պոլսի 1896-ի դեպքերի համար մեղավոր էին հայերը, որոնք իբր թե հարձակվել էին տաճիկների վրա։ «Տաճկական մեմորանդումը գլուխգործոց է տաճկական խարդախության», գրում է Հախումյանը. և մենք չենք կարող երևակայել, որ մարդկային միտքը և խիղճը դրանից ավելի մեծ անբարեխղճության հասնեն։ Սակայն դա օրինաչափ է այդ կառավարության համար. «Այդքան հետևողականություն խարդախության մեջ, պատմությունը յուր սկզբից մինչև այսօր չէ հիշում»[111]։ Հախումյանը հիշատակում է և այն փաստերը, որ Բ. Դուռը ճարպկությամբ կարողանում է իր տիրապետության տակ գտնվող տարբեր ազգերի ներկայացուցիչներին լարել միմյանց դեմ և նույնիսկ հայտարարել, թե «հայերը հարձակվում են տաճիկների վրա»։ Մի բան է մնում միայն, ասում է Հախումյանը, որ «տաճիկ կառավարությունը համոզե Եվրոպային, բոլոր հայերին ժողովել 'ի միասին և միանգամայն կոտորել նրանց իբրև Եվրոպայի խաղաղությունը վրդովողների և երևի այդ էլ կհաջողվի անել, որովհետև անմեղ նահատակների դատավորները անիրավ են և ավելի անիրավ, քան տանիկը...»[112] (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։

Ռուս-թուրքական պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում թուրքական կառավարությունը, որքան էլ քուրդ ազդաբնակչությանը տրամադրում է հայերի դեմ և նրանց դարձնում պայքարի կույր գործիք՝ իր նենգադավ ծրագրերի իրականացման համար, սակայն հարևան ժողովուրդների մեջ եղած բարեկամական կապերը բոլորովին չէ, որ նրան հաջողվում էր խաթարել։ Համընդհանուր մղձավանջի այդ տարիներին պահպանված բարեկամության առանձին արտահայտությունների վերաբերյալ մի քանի փաստեր ձեռք բերելով, Ա. Հովհաննիսյանն շտա-

---

110 Նույն տեղում։

111 Նույն տեղում։

112 Նույն տեղում։

ալում է դրանք հրապարակել մամուլում։ Օսմանյան կառավարության հետ բարեկամություն խաղացող ցարիզմը զարմանալի հետևողականությամբ պաշտպանելով Բ. Դռան շահերը, մամուլի օրգաններից վտարում է քուրդ և հայ ժողովուրդների վաղեմի բարեկամությունը հավաստող այդ փաստերը։ Գրաքննության կողմից արգելված «Քըրդերը» հոդվածը տպագրության է պատրաստվել 1885-ի հոկտեմբերին, այն բանից հետո, երբ Արևելյան Ռումելիայի հեղափոխության օրերին թուրքական կառավարության դեմ ապստամբում են Ղուզիչանի և Բալանըխի դավառների քրդական ցեղերը։ «Արձագանքի» թղթակիցը մեծ հույսեր էր կապում այդ շարժման հետ։ Նրա կարծիքով բուլղարական ապստամբների դեմ կռվի ելած թուրքական բանակը հաղիվ թե կարողանար հաղթահարել թիկունքում բորբոքված քրդական շարժումները, որոնք ծավալվելով կարող էին «մեծ հրդեհ հարուցանել Հայաստանի մեջ»[113]։

Հոդվածագիրը ներկայացնում է շարժման պարագլուխ «հռչակավոր և հանդուգն ցեղապետ» Հյուսեին բեյին, որին ենթարկվում էին Կարինի, Երիզայի, Խարբերդի և Բալուի շրջանների 360 գյուղեր։ Նրանցում ապրում էին բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնք, հոդվածագրի վկայությամբ, «թե՛ լեզվով, թե՛ քաջությամբ և թե՛ բնավորությամբ բնավ տարբերություն չունին քուրդերեն և նոցա հետ կապրին եղբոր պես»։ Հյուսեին բեյը ատում էր թուրքերին և չէր ընդունում նրանց գերիշխանությունը։ Թուրքերն իրենց հերթին խուսափում էին նրա սահմաններից։

Անդրադառնալով ռուս-թուրքական պատերազմի օրերին, հոդվածագիրը պատմում է, որ Հյուսեին բեյը հայերին առաջարկել է թուրքական բռնապետության դեմ պայքարի համար միավորել իրենց ուժերը։ «Դուք կաշխատիք Ձեր ազատության գործի համար, սակայն չդիտեք գործելու եղանակը,— դիմել է նա հայերին։— Ազատությունը կմուրաք, բայց մուրալով ազատություն ձեռք բերել կարելի՞ է։ Հավատացած եղեք, որ ոչինչ պիտի կրնաք շահիլ այդպիսով։ Ձեր Պոլսո պատրիարքի մարդիկ փոխանակ Բեռլին երթալու և անդ աղաչելու այս կամ այն տերության ներկայացուցչին, որ բարվոքում մտցվի Հայաստանի մեջ, թող դային իմ մոտ և միասին խորհրդակցելով շատ բան կրնանք ընել։ Եվրոպա ականջ չդիտի դնել Ձեր խնդրանաց, որովհետև

113 ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք Ա, գործ № 693։

թևև խելք ունիք, բայց ուժ չունիք։ Եթե մենք ևս խնդրենք, մեզ ալ ուշք չպիտի դարձնեն, վայրենի և բարբարոս համարելով ղմեզ։ Եվրոպա կօգնի անոր, որ ունի և ուժ և խելք»[114]։ Հյուսեին բեյն այդ օրերին իր տրամադրության տակ ուներ 30.000-անոց դինված քրդական մարտիկներ և ենթադրում էր անհրաժեշտության դեպքում զենքի կոչել ևս 50.000 հոգի։ Հայերը, հարկավ, ոգևորված պատերազմական իրադարձությունների բարեհաջող ընթացքով, չեն օգտվում քուրդ ցեղապետի առաջարկից, իսկ նա, ժամանակները աննպաստ դտնելով իր ծրագրերի իրականացման համար, հետաձգում է դրանց կատարումը։ Քանի որ Արևելյան Ռումելիայում ծագած ապստամբությունը հաղթանակով չի պսակվում բուլղարների համար, թուրքական կառավարությունը զբաղում է և քրդական շարժումը։

«Արձագանքում» տպագրվելու համար գրաքննական կոմիտեին է ներկայացվում Պոլսից ստացված մի նամակ, հավաստի փաստաթուղթ հայերի և քրդերի սրտառուչ բարեկամության մասին։ Հոդվածը մերժվում է։ Սասունի Ճեպրանցի և Հասանանցի քրդական ցեղերը մեծ բարեկամությամբ կապված էին տեղի հայերի հետ։ 1894 թ. Սասունի կոտորածների նախօրյակին նրանք գրություն են ստանում, թե ձիավորների բազմությամբ պարտավոր են դնալ Սասունի հայերի վրա և կոտորել նրանց։ Որովհետև, պատմում է քրդերից Տրպոյի տղա Աղան, նրանց ասում են՝ «թադավորն հրաման եկեր է և եթե չդաք, համիդեւթիննեն պիտի իյնաք, ձեր տները պիտի թալնվի, դուք բանտերու մեջ պիտի մաշիք։ Բայց մենք երբեք կարևորություն չտվինք և չդնացինք»։ Սպառնալիքն իրականացվում է. երկու ցեղերի քրդերը խումբ-խումբ ձերբակալվում և բանտերն են նետվում։ Վերոհիշյալ նամակի հեղինակն այնուհետև պատմում է, թե ինչպիսի եղբայրական պճածություն էին նրանք վերաբերվում տարաբախտ հայ բանտարկյալներին և ինչպես էին պաշտպանում նրանց մահն չտվուշի, ոստիկանների և Մուսա բեյի քրդերի հալածանքներից։ Այդ ընդհարումներից մեկի ժամանակ հայերի պաշտպանները ծեծում են խութեցի քրդերին։ 40 ըմբոստ քրդերի շղթայակապ լցնում են երկու բանտասենյակ, ծեծում, ծաղրում և փակ դռների հետևից շարունակ չարախնդում. «Հայե՞րը կպաշտպանեք»[115]։

---

114 Նույն տեղում։

115 ՎԿՊՊԱ., ֆ. 480, ցիրք Ա, գործ № 1273։

Այս և նախորդ փաստերը չեն հրապարակվում հայ մամուլում։ Կովկասի գրաքննական կոմիտեն դարավերջին համառորեն ստիպում էր հայ խմբագիրներին՝ շրջանցել հայկական հարցը։ Սակայն շրջանցել Արևմտյան Հայաստանի ողբերգությունը և Կովկասի ժողովուրդների նկատմամբ կիրառվող քաղաքականությունը, հրապարակախոսները չէին կարող։ Նրանք դիմում են նորանոր միջոցների՝ գրաքննական արգելքների պայմաններում խոսելու ամենակարևորի, ազգի ֆիզիկական գոյությունը պահպանելու և նրա բարոյական կենսունակությունն ապահովելու հարցերի մասին։

Դ. ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԴԱՍԵՐԸ

Դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին, երբ Կարապետ Եզյանը իր պանսիոնի աշակերտների հետ քննարկում էր հայ ժողովրդի ապագայի հետ կապված հարցերը, նա առանձնահատուկ նշանակություն էր տալիս զանազան փոքր ազգությունների պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրությանը։ Եզյանը և նրա համախոհները, ձեռնարկելով «Լումա» հանդեսի հրատարակության գործը, ենթադրում էին դրա միջոցով վեր հանել և հայ ժողովրդի պատմությունը, ժողովրդին սիրելի դարձնել այն, ինչը անհայտ էր շատերի համար։ «Կարծում եմ, որ միայն մեր պատմության ուսանելումն է մեր ազգության պահպանելու միակ միջոցը», գրում էր այդ օրերին Եվանգուլյանը։ Հայտնի է, որ «Լումայի» հրատարակության ծրագիրը ձախողվում է։ Ազգային-պահպանողականները վերը հիշված պահանջներն առաջադրում են Ա. Հովհաննիսյանի «Փորձին»։ Երբ վրա է հասնում ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանը, Ա. Հովհաննիսյանը առաջին հերթին ուշադրություն է դարձնում Բալկանյան ժողովուրդների մոտակա անցյալի պատմությանը, որը թուրքական բռնապետական լծի դեմ պայքարի ուսանելի դասեր էր պարունակում հայերի համար։ Հետագայում նույնպես, 90-ական թվականներին, «Արձագանքի» էջերում Հովհաննիսյանը հրապարակում է սլավոնական ժողովուրդների և այլ փոքր ազգությունների ազատագրական շարժումների պատմության արժանահիշատակ դրվագները։ Այս ամենը հայերին քաղաքական ինքնաճանաչության հասցնելու միջոց էր, բռնակալության դեմ պայքարելու և անկախություն ձեռք բերելու կամքի մշակ-

ման հիանալի մի դպրոց։ Միաժամանակ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի թեմատիկան այլաբանական լեզվի յուրատեսակ բանալի էր՝ ցարական դրաքննության խոչընդոտներից անցկացնելու արևմտահայության ազատագրության հետ կապված հրապարակախոսների խորհրդածությունները, ծրագրերը, հետևությունները։

«Արձագանքում» տպագրված մի շարք հոդվածներում լուսաբանվել է բուլղարական ժողովրդի պայքարը թուրքական լծի դեմ, ինչպես և մեծ տեղ է հատկացվել Արևելյան Ռումելիայի ապստամբությանը։ 1887-ին Ա. Հովհաննիսյանը ծավալուն մի հոդված է հրապարակել, նվիրված բուլղարական հասարակական գործիչ և բանաստեղծ Սլավկիկովին։ Առանձին մի հոդվածով քննարկվել է այն հարցը, թե տաճկական ստրկական լծի տակ հույներն ինչպես են պահպանել իրենց լեզուն և կրոնը և չեն մոռացել իրենց պատմությունն ու վաղեմի փառքի հիշատակները։ «Արձագանքի» էջերում արձակագիր Կրպեն (Կարապետ Հովհաննջանյան) տպագրում է իր պատմվածքները՝ նվիրված բուլղարների և հույների հայրենանվեր գործերին («Վերջինը բուլղարներից», «Յուր փոխարեն»)[116]։ Խոսելով հույների անձնվիրության մասին, Կրպեն զեղումների մեջ է ընկնում. «Երանի՜ այդ ազգին, որի մեջ ապրում է ինքնաճանաչության, պատվասիրության զգացումը և գիտակցության ու մեծության ոգին»։

1894-ին Փ. Վարդանյանի թարգմանությամբ հրապարակվում է մի հոդված, նվիրված Իռլանդիայի ազատության կարապետներ Թոմաս Մուրին և Ռոբերտ Էմմեթին (նյութը քաղված էր Գ. Բրանդեսի «19-րդ դարի գրականության գլխավոր հոսանքները» գրքից)։ Այստեղ ներկայացված էր իռլանդական ժողովրդի դիմադրական շարժման պատմությունը՝ անգլիական տիրապետության դեմ[117]։

1897 թ. «Արձագանքի» աշխատակիցները ֆրանսիական «Revue des Revues» հանդեսից թարգմանում և հրապարակում են «Կրետացվոց հերոսներն ու ժողովրդական երգերը» հոդվածը։ Քննարկվող երգերում արտացոլված էր Կրետեի հերոս ղավակների վարած կռիվների պատկերը՝ XVIII դարի կեսերից մինչև XIX դարի վերջը։ Այդ երգերը «Արձագանքի» խմբագրության ուշադրությանն էին արժանանում այն պարզ պատճառով, որ դրանց մեջ արտահայտություն էր գտել կրետա-

---

[116] «Արձագանք», 1895, № 93, 1897, № 60։

[117] «Արձագանք», 1894, № 121—124։

ցիների «բուռն սերը դեպի ազատությունը, նոցա բոցավառ առևտրությունը օտարի բռնության դեմ, նոցա մոլեգին սերը առ զննքերը»[118]։

Ա. Հովհաննիսյանը մի քանի պատմվածքների և հոդվածների միջոցով «Արձագանքի» ընթերցողներին ծանոթացրել է խորվաթական ու սերբական ժողովուրդների հետ, վեր հանել սերբ ժողովրդի ազգային վերածննդության գործիչ Վուկ Ղարաճիչի գործունեությունը։

«Արձագանքի» խմբագրությունը մեծ ջերմությամբ է խոսել նաև իտալական ժողովրդի ազատագրության պայքարի հերոս Գարիբալդիի ու նրա զինակից Հայր Գավացցիի մասին։ Թերթը պատմում է, թե ինչպես է նշվել Գարիբալդիի մահվան 14-րդ տարեդարձը՝ նրա արձանի մոտ։ Ամբողջությամբ մեջ է բերվում «հերետասարդության պաշտելի պրոֆեսոր» Ջովաննի Բովիոյի ճառը, որի բնութագրումներն անկասկած ներդաշնակում էին թերթի համակրանքներին։ Համադրելով Նապոլեոնին և Գարիբալդիին, հեռուոն ասում է. մեկը ներկայացնում էր պատերազմ, մյուսը՝ մրցումն, մեկը — աշխարհակալություն, մյուսը՝ ազատություն։ Նրան չպետք է փնտրել մեծ զորավարների և ծովակալների շարքում։ «Նա մնում է միակ առաջնորդ ժողովրդի։ Միակ նա է ժողովել յուր մեջ այս դարու ոգին։ Մաձինիից — ազգի միության գաղափարը, Կատտանեոյից — ազգերի ֆեդերացիան, Ֆերրարիից — տեղական ինքնավարություն, Կարլ Մարքսից — աշխատանքի ազատություն, պռուտոններից — նախագուշակություն, ժողովրդից — ոգևորություն, հավատ, անձնուրացություն»։ Հոդվածում մեծարական խոսքերով է գնահատվում և Մաձինին[119]։

«Արձագանքի» խմբագրությունը բաղմիցս դիմել է և հունգար ժողովրդի ազատագրական պայքարի դրվագներին։ Նախընթաց գլխում մենք հիշատակեցինք այն փաստը, որ ժամանակին Կովկասյան գրաքննական կոմիտեն մերժում է Պետեֆիի «Ազատությունն ու սերը» բանաստեղծությունը և ֆրանսերենից թարգմանված «1848—1849 թվականների պատերազմի ժամանակաշրջանի հունգարական ժողովրդական պոեզիան» հոդվածը։ Տարիներ անց, 1892 թ. երբ հայկական հարցը դարձյալ իր լուծմանն էր սպասում, Ա. Հովհաննիսյանը կարողանում է «Արձագանքում» հրապարակել «Փորձի» համար մերժված հոդվածի ոգուն համապատասխան մի այլ հոդված՝ «Հունգարական ազ-

---

118 «Արձագանք», 1897, № 47։

119 «Արձագանք», 1896, № 68։

գային բանաստեղծությունը 1848—1849-ի պատերազմի ժամանակ» խորագրով։ Խմբագրության կողմից արված նշումից երևում է, որ այս հոդվածը պատկանում էր Ստ. Պալասանյանի գրչին։ Առաջին հոդվածից դրաքննիչի բերած մի շարք մեջբերումներից և Պալասանյանի հոդվածի համեմատությունից երևում է, որ դրանք նույնը չեն։ Պետք է ենթադրել, որ օտար լեզուների դիտակ Պալասանյանը իր հոդվածի ստեղծագործական մղումն ստանալով նախորդից, հետագայում անձամբ ծանոթացել է հունգարական բանաստեղծությունների ֆրանսիական և գերմանական թարգմանություններին և ստեղծել մի նոր ուսումնասիրություն։

Պատմա-քննական հայացքով մոտենալով խնդրին, Ստ. Պալասանյանը հունգարական ժողովրդական երգերը դնահատում է իբրև այդ ժողովրդի կյանքի նշանակալից էտապների «կենդանի վկաները», որոնք ավելի շատ բան են ասում ապագա սերունդներին, քան պալատոնական արձանագրությունները և անգամ պարբերական մամուլը։ Հիրավի, ասում է հոդվածագիրը, «ի՞նչ կարող է ավելի ստույգ, ավելի հավատարիմ լինել, քան երբ մի ժողովուրդ ինքը երգում է յուր կյանքի փառավոր կամ դժբախտ րոպեները»։ «Փառավոր կամ դժբախտ րոպեներն» էլ ընտրում է հոդվածագիրը՝ հունգար ժողովրդի պատմությունից։ Այս դեպքում երգերը հանդես են գալիս իբրև ժամանակի հեղափոխական մթնոլորտի գաղտնիքների մեկնության բանալի։ Հայ ընթերցողին Պալասանյանը ոչ միայն, կամ ոչ այնքան ներկայացնում է այդ երգերի բնագրերը, որքան պատմական ժամանակաշրջանի հերոսական պաթոսը, որի կենդանի ծնունդը կամ, Պալասանյանի արտահայտությամբ, կենդանի վկաներն էին այդ երգերը։

1848—49 թթ. հերոսական ժամանակների ամենաբնորոշ առանձնահատկությունները Պալասանյանը համարում է «հոգևկան հափշտակությունը, անընկճելի արիությունը, հաստատուն կամքը և անպայման հայրենասիրությունը»։ Պալասանյանը հունգար ժողովրդի հերոսական պայքարի ծնունդը պայմանավորում է հունգարացի դիտնականների և բանաստեղծների կևտարյա ջանքերով՝ հայրենիքի անցյալ փառքը վերահաստատելու ուղղությամբ։ Այդ ջանքերն էին «մի անպայման վստահություն թելադրում հայրենասերներին՝ ապագայի վերաբերմամբ և մի անսահման հպարտությամբ ոգևորում նոցա»,— գրում է նա։ Պալասանյանը վկայակոչում է Կոշուտի «հոանդալատ պերճախոսությունը», ազգային կյանքում առաջացած վերելքը, որը երկրի քա-

ազգական կյանքը փոխում էր հեղափոխականի և իրավունք տալիս հայրենասերներին՝ «փոխանակ համբերությամբ և դրավոր իրավունքների անունով հին ազատությունների գործադրությունը պահանջելու, բնական իրավունքների հիման վրա բացարձակ ազատություն պահանջել» (արևմտահայության ճակատագիրը հայ հրապարակախոսներին ապացուցել էր, թե ինչ է նշանակում խոսել դրավոր իրավունքների անունից)։

Եվ այսպես, երկիրը մտնում է հեղափոխական շարժումների ոլորտները։ Պալասանյանը հիշատակում է հունգարական բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Շանդոր Պետֆիի, հեղափոխության օրերի սիրված բանաստեղծներ Ա՛րանի, Գարայիի և այլ երգիչների անունները, որոնք իրենց ազգասիրական երգերով ոգեշնչում էին ժողովրդին։ Նրանք ազատությունը աստվածացնում էին ինչպես հայրենիքը, գրում է Պալասանյանը։ Չանդրադառնալով Պետֆիի ստեղծագործությանը, քանի որ «Փորձի» էջերից հայ ընթերցողն արդեն ծանոթ էր այդ մեծ բանաստեղծին, Պալասանյանը ներկայացնում է հունգարական մյուս բանաստեղծների ստեղծագործությունները և այն երգերը, որոնք ծրնվել էին մարտի բոցերում՝ պինվորների կողմից։ Պալասանյանի համոզմունքով այդ երգերը ներկայացնում էին «մի կենդանի պատկեր այն ձգտումների, որ այնպիսի զորավոր կերպով արտահայտվեցան 1848—49-ի շարժողության ժամանակ, բայց դժբախտաբար անհաջող ելք ունեցան»[120]։

Այնուհետև Պալասանյանը 1848—49 թթ. հունգարական հեղափոխության պատմական իրադարձությունների ֆոնի վրա ներկայացնում է օրերի ոգին արտահայտող, մարտի դաշտում ծնված բանաստեղծությունները։

Վատանգի պահին Կոշուտի ելույթները զորացնում էին մարտիկների հավատը։ Պալասանյանի համոզմունքով «քաղաքակա՛ն, և ո՛չ կրոնական» այս հավատն էլ «մեծ կշիռ ունեցավ հունգարացոց անպայման վստահության վրա այս անհավասար կռվի սկզբնավորության ժամանակ»։ Պալասանյանը մեջ է բերում բանաստեղծ Զո՛ւլորի մի երգը, որը տոգորված էր այդ մեծ հավատով դեպի իրենց գործը («Մենք ազատ ազգ էինք, դարձյալ ազատ կլինինք»)։ Ժողովրդական բանաստեղծու-

120 Նախընթաց բաժիններից մեկում մենք առիթ ունեցանք հիշելու, որ այս արտահայտությունը «Փորձի» խմբագրության (Պալասանյանի) կողմից ավելացված էր նաև «Փորձի» համար ներկայացված ու մերժված հոդվածում։

Թյուններից Պալասանյանը հիշատակում է մարտական մի երգ. «Վե՛ր կաց, մաջառ,— ասված էր այդ երգում,— տես ինչպե՜ս է փայլում պատերազմի կրակը. մեր հոդին ևս է գալիս բոցավառ կրակի միջում: Ի՞նչ ավելի գեղեցիկ երազ կա մեզ համար, քան մահը դրկիլ»:

Եթե հարցնենք նոր դինվոր գրվողին, թե ո՞րն է այն գերագույն բարիքը, որի համար նա պատրաստ է յուր և ուրիշների արյունը թափել, նա կպատասխանե ձեզ — ազատությունը, և նա մի տարօրինակ և շարագուշակ բացատրություն կտա այդ ազատության մասին. «դա մի արյունագույն վարդ է, որ ծաղկում է պատերազմական դաշտերի վրա»: Ավելի գեղեցիկ է բանաստեղծի մի այլ մեկնաբանությունը, գրում է Պալասանյանը. «Ազատությունը մի երկնային ծաղիկ է, որ պատկանում է աղգերին. ի՜նչ գործ ունին նորա հետ թագավորներն ու կայսրերը»:

Նոյեմբերի 24-ը: Կոշուտի գլխավորած կառավարությունը բարձրացրել է հեղափոխության դրոշը: Ազգային բանաստեղծությունները արտացոլում են դինվորների տրամադրությունը, աղջիկների թախիծն ու կամքի մեծ ուժը: Նրանք չեն վհատեցնում իրենց քաջերին: «Այդ հակառակ կլիներ մի երկրի ավանդությանը,— գրում է Պալասանյանը,— ուր կանայք քաջասրտությամբ միշտ հավասար են եղել այր մարդկանց, թե՛ ամուր բերդերը պաշտպանելով, ինչպես էրլավի կանայքը կամ Եղիսաբեթ Ռակոշին, թե շարունա՛կ և խաղաղ ճանապարհով ազգային լեզվի ու սովորությունների սրբազան ավանդը պահպանելով»:

Վրա են հասնում ծանր ժամանակներ: 1849-ի ձմռանը հունգարացիները նահանջում են խորվաթների և ցարական բանակի առաջ. հունգարական տերիտորիան նվաճվում է և Եվրոպան կարծում, թե «Հունգարիայի հեղափոխությունը բոլորովին ճնշվեցավ, ինչպես որ միևնույն ժամանակները ճնշվել էր իտալական ապստամբությունը»: Այս կարծիքն անժամանակ էր, ասում է Պալասանյանը. «Հունգարացիք այդպես շուտ անձնատուր չէին լինելու»: Այդ դժբախտ օրերի մասին քիչ երգեր են հյուսվել, գրում է նա, որովհետև ողջ ժողովուրդը, աղքատ ու հարուստ, ծերեր և երեխաներ՝ դինվորագրված էին: Հասնելով մինչև Հունգարիայի բուն կենտրոնը, շարունակում է հոդվածագիրը. «... այն Ալֆելդը, որ այնքան անգամ երգել է Պետեֆին, ազգային գործի պաշտպանները նոր ուժեր էին ստանում այնտեղ: Կարծես թե այս արգավանդ երկիրը՝ դինվորված մարդիկ, հերոսներ ծնելու ձիրքն ունե-

նար, որի շնորհիվ պիտի կատարվեր հպարտ Պոմպեոսի երբեմն հայտնած հրաշքը, այսինքն, թե բավական է երկրին ոտով խփել, որ լեգեոններ ծնվեն»[121]։

1894 թ. մարտի 21-ին վախճանվում է հունգարական հեղափոխության առաջնորդ Լյուդվիգ Կոշուտը։ Ա. Հովհաննիսյանը ապրիլի 6-ին հրապարակում է հունգարացի գործիչ, Կոշուտի ժամանակակից Մորիս Յոկայի գրած մահախոսականը։ Այն անվերապահ դրվատանքի խոսք էր «ազատության հավատքի մարգարեի» հասցեին։ Կոշուտի տիտանական կերպարն այս հոդվածում իր արժանի գնահատականն է ստանում իբրև հունգար ժողովրդի ղեկավարի, իբրև մի առաջնորդի, որի քարոզած «մեծ ու վսեմ գաղափարներին» նվիրվել է ժամանակի ողջ սերունդը։ Ա. Հովհաննիսյանը «Արձագանքի» հաջորդ երկու համարներում տպագրում է իր թերթի թղթակից Բաբայանի՝ նույն հարցին նվիրված ծավալուն հոդվածը (Լայպցիգից)։

Բաբայանը Կոշուտին համարում է մի մարդ, որի անունն անմահացել է տիեզերական պատմության մեջ։ Նա իր ողջ կյանքում պայքարել է «Հունգարիայի սուրբ գործի, ազատության համար»։ Այնուհետև հոդվածագիրն ընդգծում է մեծ գործչի հետևողականությունը, հավատարմությունը՝ ընտրած գաղափարներին, խոր ատելությունը՝ Հաբսբուրգյան տան նկատմամբ։ Հունգարիայի դեմոկրատական կուսակցությունը,— գրում է Բաբայանը, «ի դեմս Կոշուտի միշտ տեսել է երկրպագության արժանի այն մարտիրոսին և քաղաքագետ մեծ մարդուն, որի միակ նպատակը իր հայրենիքի ազատությունը և դրա ապագայում ունեցող բարելավ դրությունն է եղել»։ Այս նախաբանին հաջորդում է Կոշուտի կյանքի և հեղափոխական գործունեության մանրակրկիտ պատմությունը։ «Կոշուտի մահով հունգարացիները կորցնում են իրենց ամենամեծ և ամենասիրելի հայրենասեր և քաղաքագետ մի անձնավորություն, որ Հունգարիայի երջանկությունը միայն նրա ազատության մեջ էր տեսնում»[122]։

1896 թ. մայիսին, երբ Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարենորոգումների հարցը լիովին ձախողված էր և հայ ժողովուրդը բնաջնջվում էր թուրքական կառավարության ձեռքով, Ա. Հովհաննիսյանը կրկին դիմում է հունգարական հեղափոխության օրինակին։ Օգ-

---

121 «Արձագանք», 1892, № 17—19։

122 «Արձագանք», 1894, № 38։

տրվելով այն առիթից, որ այդ օրերին լրանում էր Հունգարիայի հաղարամյակը, «Արձագանքի» խմբագրությունը պատրաստում է մի ծավալուն հոդված և ներկայացնում գրաքննության։ Հոդվածը կրում էր «Հունգարիայի ազատությունը» խորագիրը։ Գրաքննիչը ամեն բանից առաջ փոխում է հոդվածի վերնագիրը, այն դարձնելով՝ «Հունգարիայի հազարամյակի առիթով», ապա որոշ փոփոխություններ մտցնելուց հետո, այնուամենայնիվ, մերժում է՝ «տենդենցիոզության» պատճառաբանությամբ[123]։

Պետք է նշենք, որ Ա. Հովհաննիսյանը շատ մեծ նշանակություն է տվել այս հոդվածին և չհաշտվելով գրաքննական կոմիտեի վճռի հետ, պայքարել է այն փոխելու համար։ «Արձագանքի» խմբագրի ջանքերը պսակվում են հաջողությամբ և մայիսի 29-ին արդեն հոդվածը հրապարակվում է սեպտեմբերի 11-ի համարում։ Երկրորդ տարբերակը կրում է Թերթի աշխատակից Հ. Ճաղարբեկյանի ստորագրությունը, այն դեպքում, երբ առաջին տարբերակի տակ դրված էր «Սյունի» գրական կեղծանունը։

Հարցադրման առումով շատ հետաքրքրական է, որ ինչ հոդվածը նվիրված էր Հունգարիայի 1000-ամյակին, Ճաղարբեկյանն այն կառույցում է, հենվելով միմիայն հունգար ժողովրդի ազատագրական շարժումների և, գերազանցապես 1848—49 թթ. հեղափոխության փաստերի վրա։ Հոդվածագիրը հանգում է այն մտքին, թե «Մարդկային կյանքի մեջ չկա դրություն, որ հավիտենական լինի»։ Հունգարիան հիասն տարի առաջ տառապում էր, իսկ այժմ հասել է խաղաղ հանգրվանի... Նա վերհիշում է 1848 թ. իրադարձությունները։ Հայ ընթերցողին անհրաժեշտ էր հազորդակից դարձնել Հունգարիայի մոտավոր անցյալի այն փոթորկահույզ մթնոլորտին, երբ ողջ ժողովրդին առաջնորդում էր ազգային մեծ երդիչ Վերեշմարտիի հրաշալի «Կոչը»։ Այն մեջ է բերվում ամբողջությամբ։

«Անդավաճան սե՛ր և հավատարմություն պահպանիր դեպի հայրենիքդ, մայրո՛ւ, նա՛ է քո օրրանը. նա է քո գերեզմանը։ Նա ծնում, փայփայում է քեզ, և երբ մեռնում ես, յուր գիրկն է առնում։

... Այս այն երկիրն է, ուր այնքան հաճախ թափվել է քո նախնյաց արյունը. այս այն երկիրն է, որի վրա հանդչում են հայրարավոր տարիների հիշատակները։

---

123 ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք լրաց. Ա, գ. № 179։

... Ազատությո՞ւն, քո դրոշակն այստեղ շատ է ծածանել և քեզ համար մղված կռվի մեջ այստեղ ընկել են մեր հայրենիքի լա՛վ լա՛վ որդիքը։

Եվ չնայելով խիստ ճակատագրի այդ հարվածներին, թեպետ խոնարհած, բայց չես խորտակված, այլ կենդանի ես, մեր ա՛զդ բանկապին»[124]...

Ժամանակի ոգին դրդում, հուզում էր հունգարացիների ազգային ղգացմունքները, գրում է Ճաղարբեկյանը։ Ֆրանսիական հեղափոխությունը, հավասարության և ազատության կրակոտ քարոզները չէին կարող ազդեցություն չունենալ նրանց վրա։ Հուզվում էր և Իտալիան ու իր որդիներին վրեժի կոչում... Կոշուտը և Պետեֆին նախապատրաստում էին հունգարական ապստամբությունը։ Ապա «Արձագանքի» աշխատակիցը ներկայացնում է այդ երկու գործիչներին, նրանց, որոնք աննկուղ գլխավորեցին հեղափոխական շարժումը։ «Կոշուտը յուր հայրենիքի մեծ մարդն է. նա մարմնացած հայրենասիրություն էր. նա նույնը քաղաքագետ էր և խիզախ գործիչ. պատահարների և փորձությանց դեմ աննկուն՝ որպես քարաժայռ, մրրիկների ժամին՝ անվրդով, անայլայլ, նպատակին դիմելիս՝ արագ ու անվրեպ, որպես լարից արձակված նետը և ճակատագրի ու չարության դեմ՝ ամպրոպ։ Նա իշխում էր Հունգարիայի մտքի վրա. նա էր ուղղություն տալիս ամենի քայլերին։

Ուրիշ էր Պետեֆին։ Դա ևս մարմնացած հայրենասիրություն էր. բայց յուր ռազմական ու մարգարեական երգերով ազդում էր յուր հայրենակիցների զգացմունքների վրա, թև ու թռիչք էր տալիս նրանց հայրենասիրությանը։ Քաղաքներում ու գյուղերում, երիտասարդ ու ծեր, այր ու կին, դշխո ու աղախին նրա երգերն էին երգում։ Եվ 1848—49 թվականների հունգարացին ավստրիական զորաց թնդանոթների առջևը կանգնած՝ նրա երգերովն էր ոգևորվում»[125]։

Հոդվածագիրը հանգամանորեն պատմում է հունգարական հեղափոխության ընթացքը, վերելքն ու պարտության հանգամանքները։ Ճաղարբեկյանը հոդվածն ավարտում է իր ընթերցողներին ուղղված խորհրդատու մի հետևությամբ. պարտությունից հետո՝ Հունգարիան ընկճված էր, բայց ո՛չ խորտակված։ «Նա կենդանի էր. նա դեռ երգում էր

---

124 «Արձագանք», 1896, № 100։

125 Նույն տեղում։

պատերազմի դաշտում գնդակի համբույրով մահացած Պետեֆիի երգերը»։ Տարիներ անց այդ դեպքերից, իրերի պատմական ընթացքն ստեղծում է Ավստրո-Հունգարական միացյալ պետությունը։ Հունգարիան անկախություն է ստանում, գրում է Ճաղարբեկյանը, և նա այսօր աշխարհին «ուզում է ցույց տալ, թե ո՛րպիսի բարերար ազդեցություն է ունեցել այն վիճակը, որ Հունգարիան ձեռք է բերել յուր ընտիր որդոցը զոհելով» (ընդգծումը մերն է— Մ. Մ.)։ Սա, հարկավ, ծրագիր էր հայության համար. Արևմտյան Հայաստանը կործանվում էր՝ ինչպես ժամանակին Հունգարիան։ Հունգարիան աղատագրվեց՝ «յուր ընտիր որդոցը զոհելով»։ Ի՞նչ ճանապարհ պետք է ընտրեն հայերը. մի բան պարզ էր. «Արձագանքի» հրապարակախոսները այդ ճանապարհն արդեն անջատում էին դիվանագիտական դավադիր խաչուղիներից։

Դարավերջին վիճակը ծանրացել էր և Արևելյան Հայաստանում։ 1896-ին, երբ Ա. Հովհաննիսյանը պայքարի գնով «Արձագանքում» դետեղում է «Հունգարիայի հաղարամյակը» հոդվածը, ցարիզմը վերջնականապես փակել էր հայկական դպրոցները և հետապնդում էր ազգային-կրթական հիմնարկների գործունեությունը։ Մեսերնիխի անվան հիշատակությունը, թե նա «ձգտում էր ոստիկանական միջոցներով ճնշել ազգերի հոգին, մեռցնել ամեն մի աղատական ձգտումն», հասցեագրված էր ցարիզմի քաղաքականությանը[126]։ «Արձագանքի» ուղղության համար դարավերջին հատկանշական է պայքարի երկու ճակատի առկայությունը։ Հունգարիայի ազգային-ազատագրական պայքարի օրինակներով իր արևմտահայ ընթերցողներին դաստիարակելուն զուգընթաց՝ Հովհաննիսյանը միաժամանակ հնարներ է որոնում արծարծելու արևելահայությանը հուզող օրվա խնդիրները։ Հայկական դպրոցների փակումը (նախ 1885-ին, ապա 1896-ին), կուլտուր-կրթական հաստատությունների գործունեության արգելումը դարավերջին, մայրենի լեզվի սահմանափակման վտանգը՝ հարցեր էին, որոնք իսկական հրապարակախոսը չէր կարող շրջանցել։ Բայց քանի որ դրանց քննարկումը մամուլի էջերում բացառվում էր, Ա. Հովհաննիսյանը կըր-

---

126 Դեռևս 60-ական թվականներին Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը ցարիզմի բաղաքականությունը քննադատելու համար դիմում էին ավստրիական իրականության փաստերին, քանի որ ժամանակի եվրոպական երկրների մեջ ամենից շատ ավստրիական բռնապետությունն էր համապատասխանում ցարական Ռուսաստանում հաստատված ռեակցիային։

կին դիմում է եվրոպական ժողովուրդների պատմության օգնությանը։ Ազգային լեզվի պահպանման և ժողովրդին ազգային ինքնաճանաչության հասցնելու ծրագիրը նա լուսաբանում է գլխավորապես չեխ ժողովրդի պայքարի համանման դրվագների վկայակոչումով։ Փոքր ժողովուրդների ազգապահպանման հարցին Հովհաննիսյանը անդրադարձել է դեռևս «Փորձի» էջերում, երբ նրան խորապես մտահոգում էր սուլթանական լծի տակ հեծող արևմտահայության ճակատագիրը։ Այսպես, նա անգլերենից թարգմանել է տալիս և հրապարակում «Հունգարիայի ազգությունները» հոդվածը, որտեղ քննության էր առնվում երկրում ազգային լեզվի վիճակն ու ազգությունների ձուլման պրոցեսը[127]։

«Փորձ» հանդեսում է տպագրվել «Վյաչեսլավ Հանկա» ծավալուն հոդվածը, նվիրված չեխ ազգային շարժման ականավոր գործիչ, գրող և լեզվաբան Վյաչեսլավ Հանկայի կյանքին և գործունեությանը[128]։ Խմբագիրը չի թաքցնում հոդվածը տպագրելու իր նկատառումները. «Հանկայի ջերմ ազգասիրությունը և նորա կատարած ծառայությունը յուր ազգի նոր գրականության մեջ կարող է մի ամենագեղեցիկ օրինակ լինել»։ Բնորոշ է այն, որ հոդվածն սկսվում է մի պատմական ակնարկով, 1620 թ. Բելոգորյան ճակատամարտի նկարագրությամբ, երբ Չեխիան վերջնականապես զրկվում է անկախությունից և երկրում սկսում է մոլեգնել հաբսբուրգյան անսանձ ռեակցիան։

Հանկան իր գործունեության առաջին իսկ քայլերից նվիրվում է ժողովրդի վերածնության գործին։ Նրա համար կողմնորոշող նշանակություն են ստանում ժամանակի նշանավոր գիտնական և հասարակական գործիչ Յունգմանի խրախուսական խոսքերը. «աշխատեցեք, միայն առաջվա պես լուռ և առանց աղմուկ բարձրացնելու, ուր և ինչպես միայն հարկավոր է, որպեսզի մեր ազգությունը չկորչի. գալոց սերունդները շնորհակալ կլինեն ու կօրհնեն ձեզ ձեր աշխատության համար»։ Ոչ առանց որոշակի նպատակի է, որ Ա. Հովհաննիսյանն, այնուհետև, մեջ է բերում հետևյալ ծրագրային միտքը. «այն ժամանակ հասկացավ նա յուր գործի քաղաքական նշանակությունը. լեզվի պաշտպանությունը դարձավ միանգամայն և ազգության պաշտպանություն»։ Սրան հետևում է Հանկայի գործունեության, չեխ ժողովրդի

---

127 «Փորձ», 1877/78, № 4, էջ 206։

128 «Փորձ», 1876/77, № 4, էջ 252—285։

մշակութային կյանքի, նրա հոգևոր վերածնության հանդամանալից պատմությունը: Վեր են հանվում Հանկայի և ժամանակի չեխ մտածողներ Շաֆարիկի, Կոլլարի, Յունգմանի, Չելակովսկու հայրենանվեր գործունեության հետ կապված բազմապիսի փաստեր:

«Արձագանքի» հրատարակության տարիներին Աբգար Հովհաննիսյանը բազմիցս դիմում է չեխական նյութերին: Նա հրապարակում է չեխերի մշակութային կյանքի առանձին երևույթներն արտացոլող մի շարք հոդվածներ, որոնք անուղղակիորեն օգնում էին խմբագրին՝ վերլուծելու հայ իրականության համանման երևույթները[129]: Այսպես, հայ ընթերցողների համար ինքնին ուսանելի կարող էր լինել այն հաղորդումը, որ ժողովրդից հանգանակված միջոցներով Պրագայում ազգային թատրոնի շենք էր կառուցվել[130]: Հաղորդման վերջին հատվածը շեշտում էր դրա տպագրության նպատակը: «Չեխական թատրոնի բացումը Պրագայում, ազգային նվիրատվության շնորհիվ, մեծ նշանակություն ունի չեխերի համար. սա մի արձան է չեխերի վերակենդանության: Չեխ ազգասերները, թոթափելով արխիվներում մոռացված իրանց ազգային դպեստների փոշին, հիշել տվին ազգին իրան անցյալը, գրվանի տակից հանեցին նրա հին գրականությունը: Չեխերի առաջին գիտնականները անցյալ դարի վերջերում և ներկա դարի սկզբներում իրանք էլ չէին հավատում, որ կարելի է կենդանացնել չեխական լեզուն գրականության համար և աղատել իրանց ազգը կատարելապես գերմանացի դարձնելուց: Բայց չի անցել $^3/_4$ դար և այժմ չեխերն ունին իրանց համալսարանը, իրանց ժողովրդական թատրոնը, իրանց բավական հարուստ գրականությունը, համեմատաբար հարուստ գիտությունները, և մինչև անգամ խոշոր հեղինակություն վայելող գիտնականներ, որպիսին է, օրինակ, Շաֆարիկան»[131]:

Սակայն չեխ մշակութային կյանքի առավել նշանակալից երևույթը

---

129 Չեխերեն նյութերը դլխավորապես թարգմանություններ էին ռուսական պարբերականներից: Որոշ նյութերի աղբյուրները չեն նշվում: Բնականաբար, այս դեպքում ոչ այնքան կարևոր են աղբյուրները, որքան նյութերի ընտրության նպատակասլացության երևույթը:

130 Ի դեպ թատրոնի 1868 թ. կառուցված շենքը 1881-ին հրդեհի ճարակ է դառնում, բայց ժողովուրդը երկրորդ անգամ հանդանակություն կազմելով՝ կառուցում է նոր շենք, որը շահագործման է հանձնվում 1883-ին:

131 «Արձագանք», 1883, № 50:

նրանց ազգային «Չեխական դպրոցական Մատիցա» ընկերության գործունեությունն էր, որին մի քանի հոդված է նվիրել «Արձագանքը»։

«Մատիցան» համասլավոնական մշակութային ընկերություն էր, որն իր մասնաճյուղերն ուներ առանձին երկրներում և որի ստեղծումը կապված էր այդ ժողովուրդների ազգային վերածնության գաղափարի հետ։ «Արձագանքը» հանգամանորեն ծանոթացնում է սերբո-լուժիցյան ազգային վերածնության գործիչ, պատմաբան, ազգագրագետ, հրապարակախոս Յան Էրնստ Սմոլերի և մյուս հայրենասերների նախաձեռնությամբ 1847 թ. հիմնադրված «Մատիցա» ընկերության գործունեության կեսդարյա պատմությանը[132] և լուժերի ազգապահպանման ուղղությամբ ընկերության ձեռք առած միջոցառումներին[133]։ Այնուհետև Ա. Հովհաննիսյանը ծավալում մի հոդվածով հայ ընթերցողներին է ներկայացնում 1880 թ. հիմնադրված «Չեխական դպրոցական Մատիցա»-ի գործունեությունը։ Ավստրիական նվաճողներին դիմադրելու համար, չեխ հայրենասերները վճռում են օգտագործել նրանց իսկ դենքերը՝ մամուլը, դպրոցը, գրականությունը։ «Դպրոցական Մատիցան» կարճ ժամանակում հսկայական միջոցներ կուտակելով՝ Չեխոսլովակիայում հիմնադրում է մեկ դիմնադիա, 33 դպրոց, 33 մանկական ապաստարան։ Այս հոդվածն, անկասկած, ազդասիրական-լուսավորական գործունեության մի անուղղակի կոչ էր հայ ժողովրդին[134]։ «Արձագանքն» անդրադառնում է և այն բանավեճին, որը 1897-ին ծավալվում էր Ավստրո-Հունգարիայում՝ տեղական սլավոնական լեզուների վերաբերյալ հրատարակված օրենսդրության առիթով[135]։ Մլադոչեխների պարագլուխ Գրեգորը իր ճառում անդրադառնալով չեխերի ազգային լեզվի պաշտպանության հարցին և Բոհեմիայում իշխող հարկային դաժան քաղաքականությանը, առաջացրել էր ավստրո-գերմանական, հունգարական ու գերմանական մամուլի որոշ օրգանների զայրույթը։

---

132 «Արձագանք», 1897, № 53։

133 Լուժերը սլավոնական ծագում ունեն. նրանց լեզուն շատ մոտ է չեխերենին և լեհերենին։ Սկսած X դարից, լուժերը գտնվել են գերմանական նվաճողների լծի տակ և ամենաբռնի միջոցներով ենթարկվել գերմանացման։ Ներկայումս ապրում են ԳԴՀ տարածքում։ 1945 թ. ԳԴՀ Սահմանադրությամբ նրանք ստացել են ազգային լեզվի և մշակույթի զարգացման լիակատար հնարավորություններ։

134 «Մատիցայի աշխարհում» (տե՛ս «Արձագանք», 1896, № 18)։

135 «Ավստրո-Հունգարիա» (տեղական մայրենի լեզուների իրավունքը և նրա թշնամիները), «Կրկին չեխերի պայքարը գերմանացիների դեմ լեզվի վերաբերմամբ» (տե՛ս «Արձագանք», 1897, № 52, 57)։

«Ներկայումս ավստրիական պետական դաղափարը ոչ այլ ինչ է, բայց եթե՝ մի ձգտումն գերմանացնելու, ճնշելու, ավերելու սլավոն ազգությունները», հայտարարել էր Գրեգորը։ Կրկնելով Լասսալին, նա ասում է, թե «Պետության պարտականությունը և կոչումն է նպաստել ժողովրդի քաղաքակրթության զարգացմանը։ Այս է պետության պարտքը, սորա համար միայն նա գոյություն ունի»։ Այնինչ, պետությունն իր պարտքը չի կատարում չեխերի նկատմամբ։ Վերջիններս դժբախտ են և իրենց ղգում են գերության մեջ։ Ավստրիական պետությունը չեխերի աչքում վաղուց է կորցրել իր գոյության իրավունքը։ «Ուստի մի զարմանաք,— ասում է Հռետորը,— եթե այդ գերությունից ազատվելու ցանկությունը շատ խորն է թափանցել արդեն ժողովրդի մեջ»[136]։

Նոր օրենսդրության հիման վրա չեխերն իրավունք էին ստանում վարչական հիմնարկներում և դատարաններում օգտագործելու մայրենի լեզուն։ Ավստրիական պաշտոնական գործիչների մի ստվար խումբ ռայխստագի նիստերում, Վիեննայի պառլամենտում և քաղաքային խորհրդում այդ որոշումը դիտում է իբրև «գերմանական ողջ ազգը ստորացնող» փաստաթուղթ։ Կայսեր ուղղած իրենց դիմումով նրանք ահազանգում էին, թե իբր «չեխերեն լեզվին արտոնություններ տալը սպառնում է գերմանական լեզվի տիրապետությանը»։ Նրանք պահանջում էին չեղյալ հայտարարել Չեխիայում և Մորավիայում մտցված կարգադրությունը չեխերեն լեզվի մասին։ Հունգարական մամուլը, խոսելով «ավստրիական գերմանացիների այդ խաչակրաց արշավանքի» մասին, բարձրացնում է «ստրկացած, կողոպտված, ճնշված մաջառական ազգերի» իրավունքների պաշտպանության հարցը։ Հատկանշական է այն բազմիմաստ վերջաբանը, որ կցում է հոդվածին «Արձագանքի» հրատարակողը։ Նկատի ունենալով ավստրիական գերմանացիների պահանջը՝ օրենսդրական ճանապարհով չեղյալ հայտարարելու չեխերեն լեզվին տրված արտոնությունները և այն անվաններով «անարգ ագիտացիա», նա գրում է. «Հասկանալի է, իհարկե, թե ի՛նչ հետևանքներ կարելի է սպասել, եթե ավստրիական կառավարությունը այդպիսի մի սխալ քայլ անեը, որովհետև Հունգարիան Տաճկաստան չէ, որ կարելի լինի անպատիժ ազգերի լեզուները կարել»[137] (ընդգծումը մերն է — Մ. Մ.)։

---

[136] «Արձագանք», 1897, № 52։

[137] «Արձագանք», 1897, № 56։

Չեխական հոդվածների շարքն «Արձագանքում» ամփոփվում է «Չեխերի պետական իրավունքը» հոդվածով, որը թեև գրվել է ավելի վաղ, 1890 թ., բայց արդելվելով գրաքննության կողմից, մնացել է Կովկասյան գրաքննական կոմիտեի արխիվում[138]:

Հեղինակն իր հոդվածում անդրադառնալով ավստրիական բռնապետության քաղաքականությանը, ընդգծում է այն փաստը, որ 1848 թ. հեղափոխությունից հետո ավստրիական կայսրությունը հարկադրված եղավ փոխել վերաբերմունքը իր տիրապետության տակ գտնվող ազգությունների նկատմամբ: Տարբեր ազգերի ներկայացուցիչներին գժտեցնելու, նրանց միմյանց հակադրելու նախկին քաղաքականությունը փոխարինվում է «փոխադարձ սեր» և «համերաշխություն» քարոզներով: 1867 թ. սահմանադրությամբ Խորվաթիան, Սլովակիան, Գալիցիան տեղական ինքնավարություն են ստանում: Հունգարիան ինքնուրույն է դառնում, իսկ այդ ժողովուրդների լեզուները պետական—պաշտոնական լեզվի իրավունք են ձեռք բերում:

«Սակայն, հինգ միլիոն չեխական ազգաբնակություն ունեցող Բոհեմիան չի բավականանում դրանով: Չեխերը հետզհետե ցանկություն են հայտնում, որ 1620 թ. Բելոգորյան ճակատամարտում իրանց կորցրած, իրանց ներքին պետական անկախությունը վերականգնի և կապված լինելով ընդհանուր պետության հետ հավիտենական միությունով (union reelle), այժմյան Հունգարիայի նման ունենա յուր առանձին պետական հիմնարկությունը, և իբրև դորա հետևանք հաբսբուրգյան կայսրերը պսակեցնէ բոհեմական թագով: Այդպես չեխերը երկու և կես դար իրանց անկախությունը կորցնելուց հետո նորից նույն են տանում իրանց ընդհատված պետական իրավունքը վերականգնելու: Եվ նոցա այդ նույնը ապարդյուն չէ»[139] (ընդգծումը մերն է — Մ. Մ.):

Ակներև է, որ հատկապես հոդվածի վերջին պարբերությունը, որն ազդարարում է ազատագրված չեխ ժողովրդի անկախությունը վերստանալու հեռանկարի հնարավորությունը, ուղիղ գծով կապվում էր հայ իրականությանը հուզող հարցերին և, հետևապես, զգաստացնում

---

[138] Հոդվածը կրում է Կ. Յ. ստորագրությունը և, մեր կարծիքով, պատկանում է Կարապետ Յաղուբյանի գրչին, որը 1888 թ. վարում էր «Արձագանքի» արտաքին տեսության բաժինը:

[139] ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցիրք Ա, գործ № 994:

ցարական գրաքննության աստիճանավորներին։ Թեև ընթերցողների լայն շրջանների համար նախատեսված այս հոդվածը չի հասնում նպատակին, բայց, այդուհանդերձ, ուշագրավ է իբրև երևույթ։

Իրենց պատմությամբ և ազատասիրական ավանդներով հայ ժողովրդին մոտ կանգնած սլավոնական ժողովուրդների և հանրապետությունների պայքարի ու ազատագրական շարժումների օրինակով «Արձագանքի» հրապարակախոսները դաստիարակել են հայ ժողովրդին՝ նրա համար ճակատագրական 1880—90-ական թվականներին։

***

1898 թ. սկզբին ավարտվում է «Արձագանքի» կյանքը, ավարտվում է և Ա. Հովհաննիսյանի հրապարակախոսական գործունեությունը։ Գրեթե քառորդ դար Հովհաննիսյանը ծառայում է հայ հասարակության առաջընթացին և ծանր վայրիվերումներով ուղիներ որոնում հայ ժողովրդի ազատագրման համար։ «Արձագանքի» էջերում դրսևորված մերթ տագնապալից, մերթ հուսավառ այդ որոնումները, սակայն, չեն հանգում ազգային-ազատագրական պայքարի մի ռեալ ծրագրի։ Ճըշմարիտ էր միայն այն գնահատականը, որ «Արձագանքի» խմբագիրը տալիս է հայկական հարցի տապալմանը. Եվրոպան խաբեց հայերի հույսերը։ Ցարիզմը՝ նույնպես։ Ի՞նչ էր մնում անել հայերին, ի՞նչ էր սպասում նրանց։ Ա. Հովհաննիսյանի վերջին եզրահանգումները դառն էին, բայց և՝ մարգարեական։ Հայերը՝ «ճարյուր հազարավոր գոհեր տալուց հետո իսկ, մնում են իբրև պահեստի զոհեր տանկական արյունռըշտության և գազանության»[140] *(ընդգծումը մերն է— Մ. Մ.)*։ Ազգային-պահպանողական հոսանքի աշխարհայացքի դասակարգային սահմանափակությունը նրան խանգարում էր տեսնել ազգային-ազատագրական պայքարի հաջորդ էտապի հեռանկարները նույնիսկ այն պարագայում, երբ վաղուց արդեն շրջանառության մեջ էր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։ Հարկավ՝ քաղաքական տարբեր հոսանքներին պատկանելու իրողությունն էր պատճառը, որ գրական-մշակութային հարցերում անվերապահորեն պաշտամունք դարձնելով Նալբանդյանին, Ա. Հովհաննիսյանը որևէ կերպ չի անդրադառնում «Երկրագործության» մեջ արտահայտված, բայց իր

---

140 «Արձագանք», 1897, № 14։

կողմից չընկալվող գաղափարներին։ Այնինչ, հայ մեծ հեղափոխական-դեմոկրատը 60-ական թվականների հեղափոխական մտքի բարձրակետից թելադրում էր հայ գործիչների անելիքները ազգային-ազատագրական պայքարում։ «Առաջին անգամ 60-ական թվականների հայ դեմոկրատիայի ուղղյուցիոն ղեկավար Մ. Նալբանդյանն է, որ հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական ազատագրման գլխավոր նրաշխիքը նշմարեց ցարիզմի տապալման հեռանկարի մեջ,— գրում է Ս. Հովհաննիսյանը։— Ճորտերի ազատագրման, կապիտալիզմի զարգացման, բանվորական շարժման արծարծման, բանվորական ուղղյուցիոն պարտիայի կազմավորմանը զուգընթաց պայմաններ ստեղծվեցին Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդների ուղղյուցիոն համագործակցության համար։ Անդրկովկասի տնտեսական զարգացումը ոչ միայն նոր թափ հաղորդեց հայերի ազգային կոնսոլիդացման պրոցեսին, այլև առաջ քաշեց սոցիալական նոր այն ուժը — հայ բանվոր դասակարգը — որը ռուս պրոլետարիատի գլխավորած ուղղյուցիոն շարժման հետ լծորդեց նաև հայ ժողովրդի ազգային ազատագրման հեռանկարը»[141]։

Այս առումով ժամանակի գործիչների համար չափազանց ուսանելի եղան Ֆրիդրիխ Էնգելսի խոսքերը հայ ժողովրդի, մի ճնշված ժողովրդի մասին, որը դժբախտություն ունի ստիպված ապրելու Թուրքական բռնակալության Սցիլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի արանքում։ Հովսեփ Աբաբեկյանին ուղղած 23.11.—1894-ի թվակիր նամակում Էնգելսը Հայաստանի ազատագրումը հնարավոր էր համարում այն ժամանակ միայն, երբ կտապալվեր ռուսական ցարիզմը[142]։

Դարասկզբին հայ սոցիալ-դեմոկրատներն իրենց ողջույնի խոսքն ուղղելով արևմտահայերին, խրախուսում են նրանց պայքարը սուլթանական լծի դեմ և «Պրոլետարիատի կռիվը» թերթի էջերում հրապարակում Էնգելսի վերոհիշյալ նամակը։ Ինչ վերաբերում է ցարիզմի դեմ արևելահայերի մղած պայքարին, ապա նրանք այդ հարցի վերաբերյալ հետևյալ պարզաբանումն են տալիս. «Ցարիզմի դեմ մյուս ազգությունների պրոլետարիատի հետ մեկտեղ հայ պրոլետարիատի մղած

---

141 Ս. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 640։

142 Տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, գիրք 1, էջ 209—210։

համերաշխ պայքարը, որի դեմ ծառանում են դաշնակները[143], ոչ միայն չի վնասում արևմտահայերի ազատագրման գործին, այլև իրոք հնարավոր է դարձնում ամբողջ հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրությունը»[144]:

Շատ հետաքրքրական է, որ Կովկասում 1902-ին ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» «Պրոլետարիատ» թերթի նյութերին ծանոթանալով, Վ. Ի. Լենինը ողջունում է Միության մանիֆեստը, «մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը»[145]: Վ. Ի. Լենինը հետագայում մի անգամ չէ, որ նշում է, թե ազգային հարցի լուծումը պայմանավորված է պրոլետարական հեղափոխության հաղթանակով: Պրոլետարիատի մեծ առաջնորդը հրապարակում է մարքսիզմի ծրագիրը՝ ազգային հարցում. «Ազգերի լիակատար իրավահավասարություն, ազգերի ինքնորոշման իրավունք, բոլոր ազգերի բանվորների միաձուլում» («Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին»)[146]: Մի այլ հոդվածում նա գրում է. «Մարքսիստ չէ նա, անդամ դեմոկրատ չէ նա, ով չի ընդունում և չի պաշտպանում ազգերի ու լեզուների իրավահավասարությունը, ով չի պայքարում ամեն մի ազգային ճնշման կամ անիրավահավասարության դեմ»[147]:

Հայ մարքսիստներն իրենց հոդվածներում հավատարիմ էին ազգային հարցի լուծման լենինյան դրույթներին և հայ ժողովրդի փրկությունը կապում էին ռուսական հեղափոխության հաղթանակի հետ: Թե՛ Ստ. Շահումյանը, թե՛ Ամիրյանը, և թե Տերյանը քննադատելով ազգայնական կուսակցությունների վարած քաղաքականությունը՝ հայկական շարժումը մեկուսացնելու և իմպերիալիստական դիվանագիտության նկատմամբ նրանց ունեցած կողմնորոշման համար, հայերին

---

143 Դաշնակցականները սոցիալ-դեմոկրատներին մեղադրում էին այն բանում, որ նրանք բանվորներին քաղաքական պայքարի կոչելով, իբր թե վնասում էին արևմտահայերի ազատագրական պայքարին, կռիվ հայտարարում «Թուրքահայ դատին» (տե՛ս «Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 49):

144 Նույն տեղում:

145 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 6, էջ 411:

146 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 20, էջ 569:

147 Նույն տեղում, էջ 15:

համերաշխության կոչ էին անում հարևան ժողովուրդների հետ[148]։ Վահան Տերյանն այս առիթով գրում էր. «Մենք, հայ սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս), հաստատ գիտենք, որ միայն բանվորա-գյուղացիական հեղափոխությունը և բանվորների ու աղքատ գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել սահմանի այն կողմը գտնվող մեր տաճկահայ եղբայրներին և բուժել նրանց վերքերը»[149]։

Այդ բանի ցայտուն ապացույցն եղավ Սովետական Միության ժողկոմխորհրդի ընդունած դեկրետը՝ «Հայաստանի մասին», որը ողջունեց խորհուրդների համառուսական 3-րդ համագումարը[150]։ Սակայն, նրա իրերի պատմական ընթացքի բերումով արևմտահայ հատվածի ազգային-ազատագրական շարժումները ձախողվեցին, ապա Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում հաջողությամբ պսակեց արևելահայ ազգային-ազատագրական շարժումը, և երկրում վերջնականապես լուծեց ազգային հարցը։ Խոսելով երկու հատվածների հայ ազատագրական շարժումների ընթացքի և ճակատագրի մասին, Աշ. Հովհաննիսյանը հետևյալ ընդհանրացումն է կատարում[151]։ «Հայ ազգային-ազատագրական շարժման երկփեղկումը պատահական երևույթ չէր, այլ հետևանք այն իրողության, որ շարժումը ծավալվում էր պատմական տարբեր միջավայրերում և իր վրա կրում քաղաքական ու դաղափարական տարբեր կողմնորոշումների և ուղղությունների կնիքը։

Մինչդեռ Ռուսաստանի կալվածատիրության ու բուրժուազիայի դեմ պայքարող ազգությունները դրական վերաբերմունք ու աջակցություն էին գտնում երկրի բազմազգ դեմոկրատիայի և նրա բանվորական առաջապահի կողմից, արևմտահայ ազատագրական շարժումը դեմ էր ա-

---

148 Տե՛ս Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը, Երևան, 1967, էջ 335—343։

149 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. IV, Երևան, 1925, էջ 400։

150 Նույն տեղում, էջ 406—407։

151 Աշ. Հովհաննիսյանը պարզաբանում է մտցնում և «հայ ազգային-ազատագրական շարժում» հասկացողության մեջ։ Նա նշում է, թե սովորաբար այդ տերմինի տակ հասկացվում է միայն արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը, այնինչ, մինչև Արևելյան Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, հայ ազգային-ազատագրական շարժումները ծավալվել են երկու ճակատում՝ Արևմտյան Հայաստանում և Արևելյան Հայաստանում։

նում թուրք բռնատիրության բիրտ ուժին և համադեմոկրատական պայքարի համար չհասունացած հարևան ժողովուրդների կասկածամտությանն ու թշնամանքին։ Ի վիճակի չլինելով ազատություն նվաճել սեփական ուժերին ու բախտակից ժողովուրդների գործակցությանը հենցած՝ արևմտահայ շարժումը դատապարտվում է մեկուսացման և ջախջախման»[152]։

---

[152] Աշ. Հովհաննիսյան, Երկու շարժում, երկու տարբեր ընթացք ու ելք (տե՛ս «Սովետական Հայաստան», 1967, № 259)։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

«ԱՐՁԱԳԱՆՔԸ» ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայ մեծ հրապարակախոս Նալբանդյանը, խոսելով բանավիճային պայքարի անհրաժեշտության մասին, ցանկություն է հայտնում միայն, որ խոսքի սահմանում կատարվող հասարակական պատերազմը «ամենայն տեղ ընդունի վայելուչ ձև»։ «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ,— գրում է նա,— կան ուղղություններ, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ։ Օտարոտի մի բան էր հերքել այս։ Նույնպես օտարոտի էր ցանկանալ մի տեսակ միավորություն հակառակորդ բաժինների։ Այդ վնասակար էր մեր ազգին։ Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը— կյանք է»[1]։ Դարավերջի հայ իրականությունը բարձրացնում էր բազում խնդիրներ, որոնց լուծման համար պայքարում էին հասարակական հոսանքները՝ իրենց հրատարակություններին միջոցով։ Հայ հրապարակախոսները ուղղություն ունեին, ունեին որոշակի ծրագրեր և իջնելով գործունեության ասպարեզ, պետք է ընդունեին հայ դեմոկրատական հրապարակախոսության ավանդական նշանաբանը. «օրհնյա՛լ է պատերազմը. թո՛ղ լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»։

«Արձագանքի» հրատարակության 16 տարիների ընթացքում Հովհաննիսյանը հրատարակչական գործից բացի մեծ ուշադրություն է նվիրել ժամանակի մամուլի օրգանների գործունեությանը և բանավիճել ինչպես հայ հրապարակախոսների, այնպես էլ ռուսական ռեակցիոն օրգանների խմբագիրների հետ։ Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Արձագանքի» բանավեճի բաժինը, որի ուսումնասիրու-

[1] Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 2, Երևան, 1948, էջ 253։

թյունը ուրվագծում է ժամանակի հասարակական կյանքի կենդանի պատկերը։

Հովհաննիսյանն իր բանավիճային հոդվածներով հիմնականում նպատակ ուներ պաշտպանել հայ մամուլի բարոյական սկզբունքները, ընթերցողների, այլև գրողների գիտակցությանը հասցնել այն մեծ և պատասխանատու դերը, որ կոչված էր կատարել մամուլը։ Նա ամեն բանից առաջ ընդգծում է քննադատության նշանակությունը մամուլի էջերում. «Օրագրության անձեռնմխելի իրավունքն է քննել և քննադատել ամեն բան, որ վերաբերում է հասարակության և հասարակական գործիչներին, հայտնել դրանց մասին ամեն տեսակ թեր ու դեմ, մինչև անգամ ծայրահեղ կարծիքներ, միայն թե անկեղծ և խորին համոզմունքից բխած լինին այդ կարծիքները»[2]։ Ոչ մի գործիչ կամ գործ չեն կարող խուսափել քննադատությունից և բացառություն կազմել, ահա սրա մեջ է մամուլի ուժը, եզրափակում է խոսքը Հովհաննիսյանը։ Ինչ վերաբերում է բանավեճին, ապա նա այդ համարում է ամենալավ միջոցը՝ «խնդիրներ պարզելու և հասարակությանն առաջնորդելու համար»։ Սակայն հայ լրագրության մեջ միշտ չէ, որ բանավեճը տարվում էր պատշաճ կերպով։ Ա. Հովհաննիսյանը այն միտքն է հայտնում, թե տպարեղից դուրս մղելով կռվարար համարտակողներին և տգետ «դիտուններին», բանակռվին կարելի էր տալ աղնիվ և բնական ուղղություն և այդ դարձնել «օրագրական քննադատության մի սուր գործիք»։ Կանոնավորել բանակռիվը, գրում է նա,— կնշանակեր «մի քայլ ևս առաջ տանել օրագրական գործը»[3]։ Սկզբունքայնություն բանավեճում, օբյեկտիվություն և հարցերի գիտական մեկնաբանություն, ահա թե ինչ էր պահանջում Ա. Հովհաննիսյանը՝ լրագրողներից։

«Արձագանքի» հրատարակության տարիներին Աբ. Հովհաննիսյանը բանավիճել է ինչպես լիբերալ ուղղության պատկանող «Մշակի», այնպես էլ ազգային-պահպանողական «Մեղու Հայաստանի» և «Նորդար» թերթերի խմբագրությունների հետ։ Եթե հակամարտությունը «Մշակի» հետ ինչ-որ չափով հասկանալի է, ապա առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ նույն հոսանքին պատկանող թերթերի միջև տարված բանակռվի իրողությունը։ Համառոտ դծերով ծանոթանանք մամուլի հայ օրգաններին, որոնք օգնում են ավելի հըս-

---

[2] «Արձագանք», 1893, № 134։

[3] Նույն տեղում։

տակ պատկերացում կազմելու հայ հասարակական մտքի պատմության այդ ժամանակահատվածի անցուդարձերի մասին։

Անցյալ դարի 70-ական թթ. վերջին Պետրոս Սիմեոնյանը մի փոքր շեղվելով իր հոսանքի ղեկավարների սկզբունքներից, հայտնում է այն միտքը, թե մամուլն իրավասու է զբաղվելու հոգևորականության վարքագծի հարցով և որ այդ խավը չպետք է դուրս մնա քննադատության ոլորտներից։ Սույն աշխատության համապատասխան գլխում արդեն խոսք եղավ այն մասին, որ իր թերթում հրապարակելով «Սոդոմ-Գոմոր» այլաբանական ղրույցը, որտեղ քննադատվում էին էջմիածնի բարքերը, Սիմեոնյանն առաջացնում է աղգային-պահպանողականների անբավականությունը։ Հետագայում նույնպես երբեմնապես խախտելով էթիկական այդ կարգը, Սիմեոնյանը բանավեճի առիթներ էր ստեղծում իր հոսանքի ղեկավարների հետ։

«Արձագանքի» հրատարակության երկրորդ տարին համընկնում է կաթողիկոսական ընտրությունների հետ կապված անցուդարձին։ Այժմ արդեն Պ. Սիմեոնյանը և Ա. Հովհաննիսյանը սկսում են բանավիճել ընտրությունների և դրան առընչվող մի շարք հարցերի առիթով (կաթողիկոսի պարտականությունները, Արևմտյան Հայաստանում և Եվրոպայի հայ գաղութներում նրա ունենալիք դերն ու իրավունքները և այլն)։ Վիճելի հարցերի թվում էր և Ազգային ժողովի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը։ «Արձագանքի» խմբագիրը մեծ նշանակություն էր տալիս Ազգային ժողովի ակտիվացմանն ընտրությունների շրջանում և նրա որոշումներն ընդունում էր իբրև օրենք, մինչդեռ Սիմեոնյանն անընդունելի էր համարում կաթողիկոսական բնկնածուների ընտրության ձևը Արևմտյան Հայաստանում։ Եթե կաթողիկոսին անցյալներում ընտրում էին պարսից շահերն ու Երևանի խաները, գրում է նա, «այժմ ընտրում է նորան Կ. Պոլսի Ազգային ժողովի կամայականությունը», որին հարկադրված են գլուխ խոնարհել արևելահայերը[4]։ Այս օրերին երկու թերթերի կարծիքները բաժանվում էին նաև կաթողիկոսության բնկնածուի հարցում. «Արձագանքը» հասարակական կարծիք է ստեղծում Մ. Խրիմյանի և Ն. Վարժապետյանի անունների շուրջը, իսկ Պ. Սիմեոնյանի համակրանքները արևելահայ նախիջևանի Մակարի կողմն էին։

---

[4] Տե՛ս «Արձագանք», 1883, № 50։

Այս պայքարը նրանց հեռացնում է իրարից այնպես, որ կարճ ժամանակից Ա. Հովհաննիսյանը և Պ. Սիմեոնյանը առանց խնայելու իրար, մամուլի էջերում ծաղրում են միմյանց և անվանարկում: Կռիվները բորբոքվում են հատկապես այն բանից հետո, երբ «Արձագանքում» քննադատական հոդված է երևում Ներսիսյան դպրոցի 1882 թ. ամառային քննությունների վերաբերյալ: Սիմեոնյանը, որ այդ ժամանակ Ներսիսյան դպրոցի տեսուչն էր, հիվանդագին է ընդունում քննադատությունը և 1883-ի ձմռանը հրաժարական է տալիս: Երբ տեսչի պաշտոնում ժամանակավորապես ընտրվում է դպրոցի հոգաբարձու Աբ. Հովհաննիսյանը, Սիմեոնյանն ազատություն է տալիս իր ղայրույթին: Նա, որ ընթերցողներին ձանձրացրել էր իր միօրինակ, անդեմ և գորշ ֆելիետոններով, հանկարծ աշխուժանում է: Սիմեոնյան-Քաղքցու ֆելիետոնների մեջ երևում է մի թարմ երակ—«Արձագանքի» քննադատությունը: Անպատեհ սրամտություններով և կոպիտ ածականներով Քաղքցին վիրավորում է «Արձագանքի» խմբագրին և նրա աշխատակիցներին: «Արձագանքը» «Մեղվին» չի ուզում զիջել՝ անտակտություն, կոպտություններ և վիրավորական արտահայտություններ շռայլելու մեջ: Շուտով ստեղծվում է մի վիճակ, երբ այլևս ձևական են դառնում և՛ Աբ. Հովհաննիսյանի, և՛ «Մեղվի» աշխատակից Սպանդար Սպանդարյանի գիտականորեն հիմնավորված պահանջները՝ բանավեճի կորեկտության և մամուլի վարկը բարձր պահելու մասին: Բանն այնտեղ է հասնում նույնիսկ, որ երբ 1887 թ. նյութական դժվարությունների պատճառով Սիմեոնյանը դադարեցնում է իր 29-ամյա թերթի հրատարակությունը, «Արձագանքի» ֆելիետոնիստը նոր տարվա համբավներում իրեն թույլ է տալիս մի երգիծական մահախոսական հրատարակել:

Սակայն, այս ամենով հանդերձ, երկու խմբագիրներին անդառնալիորեն միացնում էր ազգային-հասարակական կյանքի վերաբերմամբ նրանց ունեցած ազգային-պահպանողական աշխարհայացքը: Այս պարագաներում նրանց հետագա մերձեցման գործում վճռական դեր է կատարում ժամանակը:

Անցնում են տարիներ: Մակար կաթողիկոսի հրավերով Պ. Սիմեոնյանը մեկնում է Էջմիածին, որտեղ աշխատում է 1888-ից 1891 թվականները: Կաթողիկոսի հանձնարարությամբ նա թարգմանական աշխատանք էր կատարում ռուսական և եվրոպական թերթերից ու գրականությունից և միաժամանակ խմբագրում «Արարատ» հանդեսը:

Ա. Հովհաննիսյանի և Պ. Սիմեոնյանի միջև եղած անձնական դժտության շարժառիթները վերացված էին արդեն և նրանք դարձյալ ներկայացնում էին ազգային-պահպանողական հոսանքի միևնույն ճակատը: Այդ էր պատճառը, որ երբ Արծրունին «Մշակում» ծաղրում է «Արարատում» տպագրված Սիմեոնյանի մի հոդվածը, Ա. Հովհաննիսյանը սիրահոժար տեղ է տալիս Սիմեոնյանի պատասխան ելույթին: Հաշտությունը կայացված էր: Հետագայում Սիմեոնյանը երբեմնապես թղթակցում է «Արձագանքին», իսկ 1896—97 թթ. դառնում լրագրի հիմնական աշխատակիցներից մեկը և Հովհաննիսյանի բացակայության ընթացքում 1897-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին խմբագրում է թերթը:

1884 թ. հունվարից սկսում է հրատարակվել Սպանդար Սպանդարյանի «Նոր-դար» քաղաքական-գրականական ամենօրյա թերթը: «Նոր-դարի» հրատարակության ծանուցումը, որ տարածվում է դեռևս օգոստոսին, բարյացակամորեն է ընդունվում «Արձագանքի» խմբագրության կողմից: Ա. Հովհաննիսյանն «առանց կանխակալ կարծիքների» «Նոր-դարին» բարեմաղթում է օգտակար գործունեություն, բայց կարճ ժամանակից «կանխակալ կարծիքները» երկուստեք զգալ են տալիս:

Ի՞նչն էր բաժանում երկու խմբագիրներին, որոնք ներկայացնում էին միևնույն հոսանքը: Հիմնականում՝ կաթողիկոսության թեկնածուների հարցում ունեցած տարբեր համոզմունքները, Ազգային ժողովի նշանակության տրվող գնահատականի հարցը, սուլթանական կառավարության նկատմամբ ունենալիք տակտիկան՝ օրվա հրապարակախոսական ելույթներում:

Այսպես «Նոր-դարի» առաջին համարում Սպանդարյանը հայտարարելով հանդերձ, թե ասպարեզ է իջնում գործելու հայերի մեջ և նրանց համար, հայ իրականությունը ներկայացնում է իբրև խավարի, ավերածությունների և բարոյական անդամալուծության մի ասպարեզ: Այլաբանական պատկերների օգնությամբ նա հայերին համարում է կիսավայրենի մի ժողովուրդ, որն իջնելով լեռներից, վրա է պրծել քաղաքակրթության պարտեզներին, ջարդել դռները, խուժել ներս և ուտում է, ինչ ձեռքն է ընկնում. «էլ ով է ջոկում պտուղը կճեպից, տերևը խոտից, ծաղիկը փուշից, ամեն բան կուլ է գնում»[5]:

---

[5] «Նոր-դար», 1883, № 1:

Հասկանալի է, իհարկե, որ Սպանդարյանը հայերին լուսավորության կոչելու ճանապարհին, նրան զգաստացնելու համար դիմում էր հրապարակախոսական ուրույն միջոցների և նույն այդ հասարակության օգնելու անկեղծ շահախնդրությամբ խոցացնում էր գույները։ Սակայն «Արձագանքի» շրջանակի գործիչները ավելի զուսպ էին և ժողովրդի մասին արտահայտվում էին ազգային արժանապատվությամբ։ Այդ էր պատճառը, որ նրանք չեն ընդունում ո՛չ Սպանդարյանի հրապարակախոսական ձևերը և ո՛չ էլ ներում են հայ իրականության հասցեին նրա ասած՝ արդեն միանգամայն լուրջ դատապարտության խոսքը։ Հետևենք այդ պայքարին։

Թերթի առաջին համարում քննության առնելով կաթողիկոսական ընտրությունների հարցը, Սպանդարյանը կրկին իր վրա է հրավիրում «Արձագանքի» ուշադրությունը։ Նա մերժում է առաջիկա ընտրությունների վերաբերյալ Ազգային ժողովի ընդունած կարգը և անարդար ու հակաժողովրդական համարելով այն, նշում է, թե Ազգային ժողովը բռնաբարում է ազգի կամքը։ Նա այնուհետև մեղադրական է կարդում, այս անգամ «վերջին կաթողիկոսների» հասցեին։ Սպանդարյանը գրում է. «Մեր վերջին կաթողիկոսները աշխատել են իրենց նախորդների հիշատակը ջնջելու և մեր ժողովրդի լուսավորության գործը հարյուր տարով հետ են ձգել։ Ի՞նչ դրության մեջն են մեր եկեղեցին, մեր հոգևորականությունը և եկեղեցապատական կալվածները։ Ի՞նչ դրության մեջ են մեր դպրոցները...» և վերջապես, գրում է նա, ի՞նչ պետք է լինի խեղճ հայ ժողովրդի վիճակը, եթե կաթողիկոսական գահ բարձրանա «մի անձն, որը ոչ թե կաթողիկոսությանն է ուզում ծառայել, այլ կաթողիկոսությունը յուր անձին և յուր փառամոլությանն է ուզում ծառայեցնել»։ Ա. Հովհաննիսյանը հանդես է գալիս պատասխան հոդվածով։ Նա, վկայակոչելով փաստերը, ցույց է տալիս, որ XIX դարի վերջին երեք կաթողիկոսները զգալի գործ են կատարել դպրոցաշինության ասպարեզում։ Այսպես, եթե 1830-ին հայկական դպրոցների թիվը Ռուսաստանում 14 էր, Ներսեսի օրով դառնում է 32, Մատթեոսի օրով՝ 98, իսկ Գևորգ կաթողիկոսի գահակալության շրջանում, 1870-ին՝ 138։ 1881-ին հայերն ունեին 330 դպրոց՝ 17000 աշակերտներով. այդ դպրոցների բյուջեն կազմում էր կես միլիոն ռուբլի։

Վիճելի երկրորդ հարցը՝ ապագա կաթողիկոսի անձնավորության հարցն էր. գաղտնիք չէր, որ թե՛ Ազգային ժողովի անդամների մեծամասնությունը և թե՛ Կովկասի գործիչները պայքարում էին Ներսես

վարժապետյանի թեկնածության օգտին։ Սպանդարյանն իր անփուչի արտահայտություններով ոչ միայն վիրավորում էր հայ դործիչներին, այլև ստվեր էր նետում բոլորի համակրանքը շահած պատրիարքի վրա։ Հովհաննիսյանի հոդվածը դրությունը չի փոխում և «Նոր-դարի» յուրաքանչյուր համար իր հետ բերում է նոր մտահոգություններ։ Իր առաջնորդողներում և հոդվածներում Սպանդարյանը դատափետում էր Ներսես Վարժապետյանին և պրոպագանդում Մելքիսեդեկ Մուրադյանի բարեմասնությունները, նախկին կրքով դատապարտում էր Ազգային ժողովի բռնած դիրքը և ընդունած վճիռները։ Երբ նրա համար պարզ է դառնում, որ բոլոր հոսանքների ներկայացուցիչները իրենց քվեները պետք է տան Ներսես պատրիարքին, «Հավաքական կեղծավորություն» հոդվածում նա գրում է. «Մեր բոլոր հաստատությունների և մեր բոլոր դործերի մեջ տիրապետողը՝ կեղծավոր ոգին է։ ... Այժմս մեր մեջ գործում են և հանդես են դուրս գալիս հավաքական հիմարությամբ, հավաքական ստրկությամբ, հավաքական կեղծավորությամբ»[6] և այլն։ Ներսես պատրիարքի մահից հետո Սպանդարյանը թեև մի մեծարական հոդվածով հարդում է հանդուցյալ դործչի հիշատակը, բայց ընդվզում է այն մտադրության դեմ, որի համաձայն Կովկասում պետք է հանգանակություն բացվեր՝ Պոլսում Ներսիսյան վարժարան հիմնադրելու նպատակով։ «Արձագանքի» աշխատակից Նիկ. Տեր-Ղևոնդյանը, անդրադառնալով այս փաստին, նշում է, թե այդ դիրքորոշումը տապալում է ազգային գործերը. արևելահայ և արևմտահայ հատվածների մշակութային ձեռնարկումների մեջ «իմը» և «քոնը» քանդում է ազգի առանց այն էլ խարխուլ տունը. «սա մի՞թե պատվաբեր մի գործունեություն է»[7]։

Սպանդարյանը «Արձագանքի» դեմ հախուռն հարձակումներ է ձեռնարկում 1887-ին, երբ Աբդար Հովհաննիսյանը հրապարակում է Շիրվանզադեի և իր գրած հոդվածաշարը հայ վաճառականների մասին։ «Նոր-դարի» խմբագիրը իր և մի շարք բղիակիցների բանավիճային հոդվածներով դատապարտում է Հովհաննիսյանի եղակիտը, հայտարարելով, թե վաճառականների դասին վատաբանելով ազգի ախտերը չեն բուժվի։ Ավելին, Սպանդարյանը հարցն ավելի է լրջացնում, նշելով, թե արևելահայերի հասցեին ուղղված այդ քննադատությունը եվրոպացի-

---

[6] «Նոր-դար», 1884, № 56։

[7] «Արձագանք», 1886, № 2։

նները կարող են վերադրել նաև արևմտահայերին և հիասթափվել նրանցից[8]։

Մակար կաթողիկոսի մահից հետո տաք բանավեճ է բացվում «Մշակի» և «Արձագանքի» միջև՝ Սինոդի նախանդամի իրավունքների սահմանների շուրջը։ Բանավեճը գրավում է նաև Սպանդարյանի ուշադրությունը և նա «Մշակի» դեմ հանդես է գալիս Հովհաննիսյանի հետ դաշնակցած։ Այնուհետև այդ կապը սրբագործվում է թեմական պատգամավորի ընտրության ժամանակ, երբ երկուսեք իրենց թերթերի էջերում պրոպագանդում էին միմյանց թեկնածությունը, ապօրինի համարելով Արծրունու՝ թեմական պատգամավոր դառնալու հավակնությունը։ Ընտրության օրը, ապրիլի 22-ին, Սպանդարյանը նույնիսկ հրաժարվում է քվեարկվելուց, որպեսզի իր համախոհները նույնպես քվեարկեն Հովհաննիսյանի օգտին։ Երիմյանի ընտրությանը մասնակցելու համար «Նոր-դար»ի և «Արձագանքի» խմբագիրները միասին են մեկնում էջմիածին։

Սակայն, տարիներ անց նրանց փոխհարաբերությունները կրկին վատանում են՝ կապված խմբագրական առօրյա հոգսերի հետ։ Ծագում են՝ աշխատակիցներ «խլելու», բաժանորդագրության օրերին հարևան թերթի վարկը գցելու, «Նոր-դար»ի արտասահմանյան թղթակիցների ուղարկած լուրերն օգտագործելու մասին մանրիկ մեղադրանքներ, որոնք փչացնում էին խմբագիրների նյարդերը և նրանց մղում ոչ այնքան «մանրիկ» անտակտությունների։

Անհամեմատ հետաքրքրական էին և իրենց բնույթով բազմազան՝ «Արձագանք» և «Մշակ» թերթերի միջև ծավալված բանավեճերը, որոնց ընթացքում քննության էին առնվում ամենատարօրինակ, առտնին հարցերից մինչև գիտական լուրջ պրոբլեմներն ու հասարակական-մշակութային խնդիրները։

Պայքարը երկու հոսանքի միջև չէր սահմանափակվում ոչ միայն այն պատճառով, որ մի շարք հարցերում դրանց պարագլուխների կարծիքները չէին ներդաշնակում, այլ նաև այն բանի համար, որ Արծրունին սիրում էր իր ուղղությունը հակադրել ազգային-պահպանողականների դաշտիարախոսությանը։ Տարիներ շարունակ նա իր հակառակորդներին համարում էր խավարամիտ, իրեն վերապահելով ազատամիտ կոչվելու իրավունքը։ Որ ազգային-պահպանողականներին Արծրունին անվա-

---

[8] Տե՛ս «Նոր-դար», 1887, № 186, 189 և հետ։

նում էր «ավանդապահ» կամ «կղերական», սա դեռևս չարիքի փոքրագույնն էր, բայց նա իր հետևություններում շատ ավելի հեռուն էր գնում, առաջացնելով հակառակ հոսանքի արդարացի զայրույթը։ Այսպես, հայտնելով, թե եկեղեցու վերանորոգության իր պահանջներով ինքն արդեն ապացուցել է, որ «այդ հաստատության անկեղծ բարեկամն» է, նշում է, թե «խավարամիտները» տարիների ընթացքում «ջանք են թափում պահպանել եկեղեցու բարոյական, մտավոր և նյութական շենքը մշտապես քայքայված դրության մեջ, որպեսզի իրանք շահվեն, իրանք ավելի հեշտ կերպով օգտվեն հաստատության մշտական խառնաշփոթ դրությունից և այդ միշտ շարունակվող ընդհանուր ավարառության ժամանակ իրանք էլ իրանց բաժինն ունենան, իրանք էլ կողոպտվածի մի մասն անուշ անեն»[9]։

«Խավարամիտների» և «ազատամիտների» շուրջն ստեղծված այս կարծիքները և անվանումները դուրս գալով հայկական շրջանակներից, երևում են նույնիսկ տեղական ռուսական մամուլի էջերում, առավել սրելով այդ հոսանքների գործիչների փոխհարաբերությունները և բորբոքելով բանավեճի կրակը՝ մամուլի նրանց օրգանների էջերում։

Նախքան բանավեճի նյութերին ծանոթանալը՝ ծանոթանանք Արծրունու լուսավորական, կրոնական և քաղաքական հավատամքին։ Մահվան նախօրյակին նա հանրաձայնարի է բերում կատարածի արդյունքները և նշում հետագա ծրագրերը։ Նա գրում է, թե առաջիկայում նույնպես պետք է շարունակի մաքառել «տգիտության, խավարի, նախապաշարմունքի, հնապաշտության, անաղնվության, այլ և այլ զեղծումների դեմ, միշտ և միշտ, մինչև կյանքի վերջին շունչը առաջ մղելով առաջադիմության, լուսավորության և ընդհանուր մարդկային քաղաքակրթության դաղափարը։ ... Հայերեն հրատարակվող աղնիվ, իր պարտքը ճանաչող մամուլի նպատակը պիտի լինի՝ դուրս բերել հայերին իրանց կյանքի հնավանդ նեղ շավղից դեպի համամարդկային քաղաքակրթության լայն ճանապարհը»։

Ի՞նչ հայացքներ էր դավանում Արծրունին եկեղեցու հարցում։ Հրաժարվո՞ւմ էր դրանից։ 1892-ի սկզբին, երբ Թիֆլիսում կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար նախապատրաստվում էին թեմական պատգամավորի ընտրությանը, Արծրունին հրապարակավ առաջադրում է իր թեկնածությունը։ «Մշակի» էջերում խոսելով

---

[9] «Մշակ», 1892, № 5։

ապագա առաքելության մասին, նա գրում է, թե իբրև եկեղեցու բարեկամ, իր խնդիրը պետք է լինի՝ քվե տալ այնպիսի կաթողիկոսի, որը կարողանա եկեղեցին բարեփոխել ժամանակի պահանջներին համեմատ, վերացնի եկեղեցականների կաշառակերությունը, բարձրացնի հոգևորականության բարոյական կշիռը և մտավոր մակարդակը, բարելավի նրանց նյութական վիճակը։ Եկեղեցու բարեփոխության հարցի առիթով Արծրունին որոշակիորեն հայտարարում է. «Բարեփոխության կամ վերանորոգության պահանջը չէ վերաբերում ամենևին եկեղեցու հավատական, դավանաբանական մասին, որ անփոխարինելի և անձեռնմխելի է։ ... Ավանդապահ պետք է անպատճառ լինել եկեղեցու դավանաբանական, վարդապետական, հավատին վերաբերյալ խնդիրների մեջ, իսկ այն խնդիրների մեջ, որոնք առնչություն ունեն հոտի սոցիալական պայմանների հետ, այստեղ ավանդապահ չպետք է մնալ, այլ ընթանալ ժամանակի ոգու և պահանջների համաձայն»[10]։ Զարմանալի չէ, ուրեմն, որ լսելով նրա այս բացատրությունը, կաթողիկոսական ընտրությունների առիթով էջմիածնում գտնվող պոլսահայ պատվիրակները Արծրունուն ասում են. «Եթե այդ է Ձեր պահանջը, որին կատարելապես ձայնակից ենք և մենք՝ Թուրքիայի հայերս, մեզ մնում է միայն հանուն ազգի մաղթել, որ այդ տեսակի բարեփոխությունները որքան կարելի է շուտով իրագործվեն»[11]։

Ինչ վերաբերում է Արծրունու քաղաքական հայացքներին, ապա նա բաղմիցս ցարական միապետական սիստեմի հետ համերաշխության ապացույցներ է տվել։ 1861-ի ապրիլի 30-րդ տարեդարձի առիթով նա գրում է, թե Ալեքսանդր II-ը դրել է ազգի բարօրության հիմքը։ Նրա անունը՝ «ոչ թե միայն ռուսաց պատմության, այլև ընդհանուր մարդկային պատմության էջերի վրա կարձանագրվի ոսկյա տառերով, որպես համամարդկային ամենամեծ վերանորոգիչներից մինի անունը»[12]։ Առհասարակ չշեղվելով լիբերալիզմի դիրքերից, Արծրունին չէր հակադրվում ցարիզմի գործունեությանը և ըստ արժանվույն գնահատվում էր նրա կողմից։

Կարծում ենք՝ այդ հոսանքները ներկայացնելով բուրժուական լիբերալիզմի միևնույն գաղափարական դիծը, իրարից տարբերվում էին

---

10 «Մշակ», 1892, № 54։

11 Նույն տեղում։

12 «Մշակ», 1891, № 23։

հարցերի լուծման տակտիկական ուղիներում։ Ընդ որում, եթե եկեղեցուն տված նշանակության և դրա գնահատականի հարցում «Մշակի» գործիչները ձախ թևում էին, իսկ «Արձագանքը»՝ աջ, ապա ազգային լեզվի պաշտպանության և դպրոցների ու մշակութային հաստատությունների պահպանման մարզում «Արձագանքի» հակացարական դիրքորոշումը անվերապահ առաջադիմական-դեմոկրատական միավածություն ուներ, այն դեպքում, երբ «Մշակի» հաշտվողականությունը կրում էր աջ լիբերալության կնիքը։ Այսուհանդերձ, հարցադրման առումով ճիշտ չէր լինի անցյալ դարի վերջին քառորդի լուսավորական շարժման մեջ պատնեշներ դետեղել երկու հոսանքների գործունեության ասպարեզում։ Ժողովրդին լուսավորելու, ազգը ինքնաճանաչության հասցնելու, նրա մտավոր և բարոյական մակարդակը ժամանակի քաղաքակիրթ ազգերին հասցնելու իրենց ջանքերում թե՛ լիբերալ, թե՛ ազգային-պահպանողական հոսանքների և թե՛ դեմոկրատական խավերի գործիչներն աշխատել են մեծ ինքնանվիրումով։

«Արձագանքի» և «Մշակի» գործիչները հաշտ էին ցարական միապետական սիստեմի հետ և բնավ չեն տեսել արմատական հեղաշրջումների ճանապարհով ժողովրդի սոցիալական ազատությունը ձեռք բերելու հեռանկարը։ Նրանք հավասարապես զբաղվել են արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրության խնդրով, բայց երկու թերթերից ոչ մեկի առաջադրած ծրագիրը չի տվել ապասված արդյունքները։

«Մշակի» և «Արձագանքի» բանավեճերը հասել են ծայրահեղ լարվածության՝ եկեղեցու հարցում. ու թեև ամբողջ մի դար նրանց տարաբարձությունները այս հարցում ուռճացվել և հասցվել են երևակայական չափերի, մեզ թվում է այդ ասպարեզում ևս նրանց շփման կետերն ավելին են, քան անջատող հանգամանքները։ Գրիգոր Արծրունին չի մերժել եկեղեցին և իրեն հայտարարել է «այդ հաստատության բարեկամը»։ Եթե նա մերժում էր եկեղեցուն տրված ազգապահպան դերը, մյուս կողմից գտնում էր, որ պետք է ավանդապահ լինել եկեղեցու դավանաբանական, հավատին վերաբերող հարցում։ Սակայն, թևկուզ և բարեկամի դիրքերից՝ եկեղեցին բարեփոխելու նպատակով նրա առաջ քաշած պահանջները անկասկած շատ ավելի արմատական էին և առաջադիմական, քան «Արձագանքի» գործիչների համեստ նկատառումները՝ եկեղեցու տնտեսական կառավարությունը կանոնավորելու, հոգևորականության կրթությունը և դաստիարակությունը կատա-

ընդգծելու, «եկեղեցական ձեռնադրությունների պայմանների մեջ» անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ[13]։

Մեզ թվում է, թե այդ երկու հոսանքների ազգակցական կապերի առկայությունն է անուղղակիորեն հաստատում Սպ. Սպանդարյանը, որն իր թերթի ուղղությունը բնութագրում էր հետևյալ կերպ։ «Նոր-դարը» պահպանողական (կոնսերվատիվ) է, երբ պետք է պահպանել մայրենի լեզուն, կրոնը, ազգային հիշատակները, ավանդությունները։ ...«Նոր-դարը» արմատական (ռադիկալ) է, երբ պետք է արմատախիլ անել, հարվածել, ոչնչացնել այն ամենը, որ դեմ է ազգի, հասարակական շահերին, որ խոչընդոտում է ժողովրդի մտավոր և բարոյական զարգացումը։ ...«Նոր-դարը» ազատամիտ (լիբերալ) է, ուստի նա կարող չէ պահպանել անպիտանը, որովհետև մերն է, և կարող չէ ընդունել պիտանին, որովհետև օտարինն է»[14]։

80-ական թվականների վերջին «Մշակ» և «Արձագանք» թերթերի միջև ծայր է առնում մի բանավեճ՝ կապված լեզվաշինության հարցի հետ։ Այս օրերին գրական հայերենը հիմնականում կազմավորված լինելով հանդերձ, դեռևս մշակվում էր, հղկվում, օրեցօր հարստանում։ Մամուլի էջերում շարունակվում էին քննարկվել լեզվի զարգացման օրինաչափություններն և նոր էտապում լեզվի հարստացման հետ կապված հարցերը։ 1888 թ. «Մշակում» տպագրված «Հայոց աշխարհաբար լեզվի մշակությունը» հոդվածում Արծրունին զարդացնում է այն տեսակետը, թե հայոց լեզուն ինչպես հնում զարգացել է հունարենի և լատիներենի ազդեցության տակ, նոր շրջանում ևս պետք է զարգանա նույն սկզբունքով և համակերպվի «իր ազգակից հնդեվրոպական լեզուների ձևերին»[15]։ Ի պատասխան այս հոդվածի, «Արձագանքում» տպագրվում են «Հայոց աշխարհաբար լեզուն» խմբագրական հոդվածը

---

[13] Մեր կարծիքով արժանի է ուշադրության այդ բանավեճերի ժամանակակից և հայ հոսանքների պայքարի պատմության շարադրող Ն. Մելիք-Թանգյանի տված գնահատականը՝ եկեղեցու բարենորոգումների մարզում Արծրունու տեսակետին։ «Արծրունու ասածը սուրբ հարց հակառակ, կամ հայոց եկեղեցու դավանության հակառակ, կամ հայոց եկեղեցին ինքնուրույն ազգայնությունից հեռացնող, կամ հայոց եկեղեցին քանդո՞ղ է, թե ոչ. իհարկե, ո՛չ, որովհետև մեր սուրբ հայրերի արածների շարունակությունն է» (Ն. Մելիք-Թանգյան, «Մշակ» և «Նոր-դար», կուսակցություններ և մի քանի խնդիրներ, Մոսկվա, 1894, էջ 80)։

[14] Տե՛ս «Նոր-դարի» հրատարակության «Ծանուցումը» (17/8. 83 թ.)։

[15] Տե՛ս «Մշակ», 1888, № 66։

և Քարամյանի «Լեզվի զարգացումը» առաջնորդողը[16]։ Արծրունին մի հոդվածաշարում քննարկում է Քարամյանի առարկությունները։

Ամեն բանից առաջ Արծրունին մերժում էր հայոց լեզվի զարգացման ճանապարհին դրաբարին դիմելու անհրաժեշտության թեզը։ Հանիրավի աբսուրդի վերածելով Քարամյանի տեսակետը, Արծրունին հանդիսավորապես հայտարարում է, թե անհնար է «դրաբարից վերցնել հին լեզվական կոնստրուկցիան և այդ մեռած լեզվի օրենքները պարտադրել ապրող լեզվին», անհնար է մտածել հինգերորդ դարի եղանակով։ Նոր գրական լեզուն մշակելու համար նա պարզապես առաջարկում է կանոնավորել «ժողովրդական անկանոն, անկարգ, անմշակ, հում, բայց կենդանի բարբառները», հարմարվելով այդ բարբառների ոգուն և առանձնահատկություններին «և օգտվելով այդ մշակության գործում արդեն մշակված, հիշյալ լեզվի հետ ազգակից, ուրիշ լեզուների ձևերից»[17]։

Երկրորդ առարկությունը վերաբերվում էր լեզվի մշակման հարցում մամուլի ունեցած դերին։ Հաշվի առնելով այն, որ հայ գրողների երկերը հիմնականում տպագրվում են մամուլի էջերում, նա այն համոզմունքն էր հայտնում, թե «նոր հայերեն աշխարհաբարը մեր պարբերական մամուլն է մշակում, և ավելի ոչ ոք»։

Արծրունու երրորդ հոդվածը նվիրված էր լեզվի զարգացման պրոցեսում փոխառությունների աղբյուրի ճշտմանը։ Կրկին անդամ վկայակոչելով դրաբարի օրինակը, որը ժամանակին դիմում էր հունարենի և լատիներենի լեզվաձևերին և բառապաշարին, Արծրունին առաջ է քաշում եվրոպական լեզուներից և ռուսերենից արվելիք փոխառությունների նպատակահարմարությունը։ Նա ասում է. եթե հունարենից կարելի էր վերցնել հյուպատոս և տոկոս բառերը, ապա ինչո՞ւ չի կարելի վերցնել նաև կոնսուլ ու պրոցենտ բառերը։ Այն պարզ պատճառով, պատասխանում է Քարամյանը, որ եթե մեկ անգամ արդեն այդ բառերը վերցվել են այլ լեզվից և օրինականացվել, այլևս չկա՛ետք է դիմել նոր փոխառության։ Արծրունին սակայն այս դիմադրության մեջ նեղմտություն է նշմարում և է՛լ ավելի ծավալվելով՝ մեկ անգամ ևս հաստատում է հայկական լիբերալիզմի հայացքների հիմնական տար-

---

[16] Մեր կարծքով խմբագրական հոդվածը նույնպես պատկանում է Քարամյանի գրչին։

[17] «Մշակ», 1888, № 71։

բերիչ գիծը ազգային-պահպանողականներից։ Արծրունին ազգային կյանքի, տվյալ դեպքում՝ լեզվի զարգացումը կապում է եվրոպական քաղաքակրթության, եվրոպական լեզուներից առնելիք փոխառությունների հետ, այն դեպքում, երբ «Արձագանքի» լեզվի տեսաբանները լեզվաշինության հիմնական նյութերը որոնում էին գրաբարի և բարբառների գանձարանում։ Նրանք այս հարցում ևս մնում էին կապված ազգային ավանդական տարերքի, ավանդական սեփականության հետ։ Այս առումով շատ պերճախոս է Արծրունու հանդիմանական խոսքը, որը միաժամանակ արդարացումն էր նրա տեսակետի։ «Եթե ուզում եք ոչ թե նեղ, սահմանափակ, այլ ընդհանուր մարդկային մտավոր, քաղաքակրթական կյանքով ապրել, պետք է հաշտվեք այն մտքի հետ, որ և ձեր կենդանի աշխարհաբար ազգային լեզուն էլ մշակվի եվրոպական քաղաքակիրթ, առաջադեմ լեզուների զարգացման համեմատ»[18]։

«Արձագանքի» տեսաբանը մասնագիտական, լեզվաբանական կրթություն էր ստացել գերմանական համալսարանում և Ներսիսյան դպրոցում մայրենի լեզու և գրականություն էր դասավանդում։ Արծրունու հախուռն, «քաղաքակրթական» կոչին նա հակադրում է լեզուների զարգացման օրինաչափությունները և իր հետևությունները կառուցում է այդ հիմքի վրա։ Քարամյանը համակողմանիորեն քննարկելով այս հարցերը, պնդում է գրաբարի խոշոր դերը՝ աշխարհաբարի մշակման և հարստացման գործում։ Այնուհետև նա գրաբարի իմացությունը պարտադիր է համարում՝ իբրև անցյալի մշակութային մեծ ժառանգության յուրացման բանալի («կարևլի՛ է առանց դորան ինքնաճանաչություն, գիտակցություն, պարտաճանաչություն»)։ Սակայն, չնայած Արծրունու մեղադրանքներին, Քարամյանը գրաբարի ուսումնասիրությունը չէր համարում հայոց լեզվի հետագա զարգացման միակ նախապայմանը։ Լեզվի զարգացման գործում նա միաժամանակ վճռական նշանակություն էր տալիս ժողովրդական բարբառներին։ Գրական լեզվի ձևավորումը նա համարում է դիտակցական աշխատանք, երբ մշակողը հավաքելով ժողովրդի ստեղծածը և «դիտակցորեն մշակման ենթարկելով, պարզում է նորա ընդհանուր օրենքները, որոնք ամենքի համար պարտավոր են»[19]։

---

[18] Նույն տեղում, № 73։

[19] «Արձագանք», 1888, № 28։

Ն. Քարամյանը հերքում է Արծրունու և այն տեսակետը, թե հիմնականում պարբերական մամուլն է մշակում լեզուն: Լրագրական լեզուն ենթակա է կրճատումների և համառոտագրության պայմանականություններին, ուստի չի կարող կատարել այն դերը, ինչ կատարում է դրականությունը: Քարամյանը նույնպես ընդունում է փոխառությունների դերը լեզվի զարգացման հարցում:

Այսպիսով, իր օրերի գրական լեզվի հարստացման աղբյուրները Քարամյանը համարում է գրաբարը («անցյալից ժառանգած մեր հարստությունը»), շրջապատող հանգամանքները (ժողովրդական բարբառները) և մասամբ էլ՝ փոխառությունները օտար լեզուներից:

Շիրվանզադեն, խառնվելով բանավեճին, մեծ հմտությամբ օգտագործում է Ստ. Նազարյանի «Հայոց ժողովուրդը, նորա այժմյան լեզվի և մատենագրության վիճակը Ռուսաստանում» հոդվածը: Հենվելով այդ հոդվածի վրա, նա մերժում է Արծրունու այն թեզը, թե գրաբարը չի կարող ազդեցություն ունենալ աշխարհաբարի զարգացման վրա: Ինչ վերաբերում էր այն բանին, որ Արծրունին իր մտքերը հաստատելու համար վկայակոչում էր Նազարյանին (որի աշակերտն էր համարում իրեն), ապա Շիրվանզադեն այդ երևույթը հանդգնություն է համարում: Նազարյանի հոդվածից նա քաղվածաբար մեջ է բերում երկու հատված և վերջնականապես զինաթափ անում Արծրունուն[20]: Մի քանի տարի անց այդ բանավեճից, «Արձագանքի» տեսաբանները ողջունում են Նալբանդյանի «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» հոդվածի տպագրության երևույթը և անվերապահորեն ուսանելի համարում մեծ հրապարակախոսի տեսակետները աշխարհաբար լեզվի մասին[21]:

Գրական հայերենի զարգացման հարցին նվիրված բանավեճը առավել թեժ մարտերից մեկն էր, որ վարել են «Մշակի» և «Արձագան-

---

[20] Այդ հոդվածում, որը գրված էր 1876-ին, Նազարյանը մամուլի գործիչներից շատերին կշտամբում է այն բանի համար, որ նրանք մտածում են ռուսերեն, ապա միայն իրենց մտքերը զգեստավորում անկանոն հայերենով: «Հայաստանի Մեղվի», որպես և «Մշակի» պատվելի հրատարակողքը երկուքը ևս չգիտեն հայերեն,— ասված է այդ հոդվածում,— այլ յուրյանց համար շինած են մի հասարակաց նորահնար լեզու, ամեներին օտար թե ընդհանուր ժողովրդական բարբառից, և թե ուղիղ հայախոսության կանոններից» (տե՛ս «Արձագանք», 1888, № 46):

[21] «Եթե ինձ հարցնեն, թե ինչո՞վ կարելի է բուժել մեր դպրոցների հայկաբանության ախարությունը,— գրում էր «Արձագանքի» գրախոսը,— ես կպատասխանեմ. լա՛վ ուսումնասիրեցեք Նալբանդյանի «Ճառը» (տե՛ս «Արձագանք», 1892, № 143):

քի» խմբագիրները։ Այս ծանր բանավեճում երկու հոսանքի հրապարակախոսներն էլ ընկել են ծայրահեղությունների մեջ, չխնայելով միմյանց։ Մասնավորապես Արծրունին և նրա աշխատակից Մալումյանը, մոռանալով գրական էթիկայի նորմերը, իրենց հոդվածները համեմում էին «անշարժականներ», «ռուտինականներ», «բթամիտ», «իդիոտ» և այլ արտահայտություններով։

Առաջին հայացքից թվում է, թե բանավիճողները գտնվում էին հարցադրման հակառակ բևեռներում և պատրաստ էին ժխտել միմյանց վաստակը առհասարակ։ Բայց երբ հարցերը դիտում ենք ուշ տասնամյակի հեռավորությունից, պատկերը փոխվում է։ Երկու թևի հրապարակախոսները հավասարաչափ համոզված են, որ գրաբարն ավարտել է իր դերը և անհրաժեշտ է ամեն կերպ արագացնել նոր ժամանակների պահանջներին համապատասխանող գրական լեզվի ձևավորումը՝ գիտական հիմունքներով։ Ուրեմն, այդ հարցի լուծման որ ճանապարհն էր առավել նպատակահարմար... և մտքերը բախվում էին։ «Արձագանքի» ելակետը որքան էլ հիմնավորված էր գիտականորեն, չէր կարող միանգամից ղեկավար սկզբունք դառնալ բոլոր մասնագետների համար։ Հնարավոր չէր ամբողջապես ընդունել և «Մշակի» ուղղագիծ առաջարկները։ Հարցի լուծումը կարոտ էր ժամանակի և, իհարկե, պայմանավորված էր նաև հայ նոր գրականության հարաճուն զարգացման հետագա աստիճանով։ Այս առումով չի կարելի արժանին չհատուցել «Արձագանքի» աշխատակից Գյուտ Աղանյանին, որն անկարելի էր համարում գրական կատարյալ լեզու ստեղծելու գործը ավարտի հասցնել՝ անհատների ջանքերով։ Այդ պատասխանատու և շատ ծանրակշիռ հարցը նրա կարծիքով ձեռնհաս կարող էր լինել լուծելու միմիայն գիտական մի կոլեկտիվ կամ գիտությունների ակադեմիա, որի ստեղծումը մոտ ապագայում Աղանյանը դեռևս չէր տեսնում[22]։ Ինչ վերաբերում է «Մշակի» և «Արձագանքի» հարցադրումների գնահատականին, ապա այդ թերթերը օբյեկտիվորեն կատարել են հնարավորը՝ գրական հայերենի հետագա հարստացման և հղկման առումով։

Բանավեճի երկրորդ խնդիրը եկեղեցին էր։ Օգտագործելով այն հանգամանքը, որ Ս. Հովհաննիսյանը մամուլի էջերում չէր հակադրվում կաթողիկոսին, Արծրունին սիրում էր նրան հանդիմանել՝ «Արձագանքը» Մակարի «կաստայական, միապետական ձգտումների» օրգանը դարձնե-

---

22 Տե՛ս «Արձագանք», 1898, № 1։

լու համար։ Իր կյանքի վերջին շրջանում, սակայն, նույն ինքը Արծրունին «Մշակը» ծառայեցնում էր էջմիածնի բարձրաստիճան որոշ հոգևորականների նպատակներին։

1891-ի ապրիլի 16-ին մեռնում է Մակար կաթողիկոսը։ Վարչական իշխանությունն անցնում է Սինոդին, որի ավագ անդամ Երեմիա եպիսկոպոս Գալստյանը, որ առանում է տեղապահի պաշտոն և սինոդի ազդեցիկ անդամ Արիստ. Սեդրակյանը մշակականներ էին։ Կարճ ժամանակից էջմիածնում ծավալած նրանց գործունեությունը առաջացնում է ազգային-պահպանողականների դժգոհությունը։ Աշխատանքից ազատվում է պ. Սիմեոնյանը, տեղապահը պատրաստվում է փոփոխություններ մտցնել ճեմարանի ուսուցչական կազմում և ընտրել Սինոդի նոր անդամներ։ «Մշակը» խրախուսում էր այդ միջոցառումները։ Գրիգոր Արծրունին իր թերթի էջերում այն միտքն էր հայտնում, թե տեղակալը ժամանակավոր կաթողիկոս է և կարող է օգտվել վարչական նույն իրավունքներից, ինչ կաթողիկոսը։ Տեղակալը կարող է նշանակել և արձակել ճեմարանի ուսուցիչներին, կառավարությանը ներկայացնել Սինոդի անդամության նոր թեկնածուներին և այլն։ Նա միայն չի կարող օգտվել կաթողիկոսի կրոնական իրավունքներից[23], «Արձագանքի» շրջանակի գործիչները վճռում են հակահարված տալ կատարվող գործողություններին։ Գ. Եվանգուլյանը և Կ. Բեհբուդյանը «Մշակի» դեմ տպագրում են բանավիճային 4 հոդված, որոնց մեջ վճռականապես մերժում են տեղակալին տրված ժամանակավոր կաթողիկոս և Արծրունու առեղծած ադմինիստրատիվ կաթողիկոս տերմինները։ Նրանք պնդում են, որ Սինոդի անդամների ընտրությունը և ճեմարանի ուսուցչական կազմում արվելիք փոփոխությունները միայն կաթողիկոսի պարտականություն են։ Պոլոժեններից բերված քաղվածքներով նրանք միաժամանակ փորձում են ապացուցել, որ Արծրունին սխալ էր մեկնաբանում ռուսաց օրենսդրության համապատասխան հոդվածը[24]։ Այս բանավեճում նույնպես լրագրողները կորցնում են չափի զգացումը։ Նախահարձակ է լինում «Մշակը»։ Իր թերթի մի քանի համարներում Արծրունին զետեղում է զանազան զավեշտական հայտարարություններ, երգիծական պատկերներ ու կալամբուրներ, որոնց միջոցով ծաղրում էր Հովհաննիսյանին, Եվանգուլյանին, Հարոյին և Բեհբուդյանին։

---

[23] «Մշակ», 1891, № 54, 70։

[24] «Արձագանք», 1891, № 14—17։

Անկախ այս բանավեճից, դեպքերը ընթանում են բնականոն հունով։ Սինոդի նոր ղեկավարությունը գործում է «ջանասիրաբար»։ Եւ արդեն 1891-ի մայիսին աշխատանքից արձակվում են ճեմարանի դրեթե բոլոր ուսուցիչները՝ Հովհ. Հովհաննիսյանը, Նիկ. Քարամյանը, Ա. Նահապետյանը, Վ. Սուրենյանը և ուրիշներ։ Այս օրերին Հովհ. Հովհաննիսյանը նույնպես դժգոհում էր «էջմիածնա օրգան դարձած» «Մշակից», որը զանազան հոդվածներում դրվատում էր ուսուցչական նոր խմբի աշխատանքը և պարսավում հներին[25]։

Այսպիսով պարզ է միանգամայն, որ հակառակորդներին «կղերական» պիտակով վիրավորելով հանդերձ, Արծրունին առավել ակտիվությամբ է մխրճվում եկեղեցական բարենորոգումների տեսական և էջմիածնի աթոռի գործնական խնդիրների մեջ։

«Արձագանքի» և «Մշակի» էջերում եկեղեցուն և առօրյա մշակութային հարցերին նվիրված բանավեճից բացի, թերթերի խմբագրությունները սաստիկ գժտվել են և Արծրունու հոբելյանի կապակցությամբ։

1890 թ. մայիսին Թիֆլիսի հայ հասարակությունը մեծ շուքով կատարում է Գրիգոր Արծրունու լրագրական գործունեության 25-ամյա հոբելյանը։ Աղնիվ երևույթ էր, իհարկե, որ այն բոլոր գործիչները, որոնք ինչ-որ չափով գժտված էին Արծրունու հետ, իրենց պարտքն են համարում հոբելյանի օրը շնորհավորել նրան և մասնակցել հանդիսավոր երեկոյին։

Աբ. Հովհաննիսյանը և Սպ. Սպանդարյանը բացառություն են կազմում։ Հիշելով մոտ անցյալի համանման մի տարեթիվ, երբ Արծրունին իր թերթում հայտնում էր, թե ինքը չի մասնակցի Պետրոս Սիմեոնյանի հոբելյանին, Սպանդարյանը և Հովհաննիսյանը նույնպես մամուլի էջերում հայտնում են, որ չեն կարող մասնակցել Արծրունու հոբելյանին։

---

25 Այսպես, «Մշակի» թղթակիցներից մեկը իր հոդվածում պատմում էր, թե ճեմարանում նախկին դեղնածերես աշակերտների և թրվածերես ուսուցիչների փոխարեն այժմ աշխատում են խաղաղադեմ ուսուցիչներ և սովորում են զվարթերես ուսանողներ։ Նրանք միայն մի պարտականություն ունեն՝ սովորեցնել և սովորել։ Հ. Հովհաննիսյանը Կ. Կոստանյանին ուղղված մի նամակում խոսելով այս մասին, դառնորեն ավելացնում է. «Հետաքրքրական է իմանալ, թե առաջ ինչո՞վ էր զբաղված լինում ուսուցչական խումբը, եթե ոչ սովորեցնելով (տե՛ս Հ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1968, էջ 95)։

Դրանով ամեն ինչ չի ավարտվում։ Աբ. Հովհաննիսյանն այդ օրերին և դրանից հետո կատարում է մի շարք անհավասարակշիռ քայլեր, որոնք անպայման սուբյեկտիվ հիմքեր ունեին։ Այսպես, այն պատճառով, որ Պռոշյանը հոդված չէր գրել Արծրունու դեմ, նա փոխհարաբերությունները վատացնում է Պռոշյանի հետ։ Որովհետև Շիրվանզադեն հաշտվել էր Արծրունու հետ, նա Շիրվանզադեի նկատմամբ ևս փոխում է վերաբերմունքը, որն ի վերջո հասնում է խզման։ Հովհաննիսյանը թույլ է տալիս նաև լրագրական էթիկայի կոպիտ խախտումներ. երբ Շիրվանզադեն նրա դեմ հոդվածներ է հրատարակում «Մշակում», Հովհաննիսյանն իր գրական արխիվից դուրս է բերում և հրապարակում անցյալներում Շիրվանզադեի գրած հոդվածների ձևագրերը՝ Արծրունու դեմ։ Ավելի ուշ «Արձագանքի» խմբագիրը կատարում է և մի աններելի քայլ. Պատկանյանի մահից անմիջապես հետո, 1892-ին, դարձյալ իր արխիվից հանում և տպագրում է Արծրունու դեմ ուղղված Պատկանյանի «Աստառ» պասկվիլը, առաջացնելով և՛ Պատկանյանի ընտանիքի, և՛ ժամանակի մտավորականության անբավականությունը։

Դր. Արծրունին, որ չէր պիջում նրան, «Մշակում» տպագրվող ֆելիետոններից բացի «Արձագանքի» խմբագրին պատժում է յուրովի։

1891 թ. կաթողիկոսական ընտրությունների նախապատրաստական օրերն էին։ Ընտրական նոր կարգի համաձայն յուրաքանչյուր թեմի պատգամավոր պետք է անձամբ մասնակցեր էջմիածնում կայանալիք ընտրություններին, ուստի առաջին անգամ պետք է Արևմտյան Հայաստանն ուղարկեր իր բոլոր թեմերի պատգամավորներին։ Թիֆլիսի գործիչներն սկսում են անհանգստանալ. արդյոք սուլթան Աբդուլ Համիդը արգելքներ չի՞ հարուցի նրանց համար։ Աբ. Հովհաննիսյանն անհրաժեշտ նախապրյալներ ստեղծելու համար սկսում է բանակցել Թիֆլիսի թուրքական հյուպատոս Հասիբ-բեյի հետ և հասնում է նրան, որ հյուպատոսը խոստանում է Կ. Պոլիս գնալուն պես համոզել սուլթանին, որ նա դժվարություններ չհարուցի արևմտահայ պատգամավորների համար։ 1891-ի օգոստոսին, նրա՝ Կ. Պոլիս մեկնելու նախօրյակին, հայ մտավորականների մի խումբ, Ա. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ մի ընթրիքով պատվում են հյուպատոսին։ Վերջինս այդ երեկո կրկին խոստանում է հանուն երկու երկրների բարեկամության, գործը կարգավորել նպատակահարմար ձևով։ Այդ հուսադրող լուրը

(այսինքն՝ այն արդյունքը, որին դիվանագիտորեն հասել էր Հովհաննիսյանը), հրապարակվում է «Արձագանք» թերթում[26]։

«Մշակ» թերթի խմբագրությունը այդ լուրը հաղորդում է յուրահատուկ մեկնաբանությամբ և Հովհաննիսյանին վարկաբեկելու նպատակով ընդգծում, թե «հայերը ամենևին կարիք չունեն հյուպատոսներին ճաշկերույթներ տալ»[27]։

Հոկտեմբերին թուրքական մի լրագրում հաղորդում է տպագրվում այն մասին, որ սուլթանի կառավարությունը Հովհաննիսյանին պարգևատրել է «Մեջիդիե» շքանշանով։ Դժվար չէ կռահել, որ Կովկասի գործիչների սիրալիրությունից շոյված Հասիբ-բեյը սուլթանի հետ ունեցած զրույցում չափազանցված գույներով էր ներկայացրել Թիֆլիսի մթնոլորտը։ Պետք է ենթադրել նաև, որ հաշվի առնելով Հովհաննիսյանի մեծ հեղինակությունը և՛ Կովկասում, և՛ Կ. Պոլսում, հյուպատոսն էլ հենց խորհուրդ էր տվել սուլթանին՝ պարգևատրել հայ հրապարակախոսին՝ նրան կաշառելու ուղղակի դիտավորությամբ։

Գր. Արծրունին անգնահատելի առիթ ուներ վարկաբեկելու իր ախոյանին և առանց հապաղման «Մշակ» թերթում հրապարակում է վերը նշված հաղորդումը[28]։ Հովհաննիսյանը նույնպես հրապարակում է այդ լուրը, բայց մի կարևոր ծանոթությամբ։ Քանի որ դեպի թուրքական կառավարությունն ունեցած իր բացահայտ անբարյացակամության պատճառով իր թերթերն անցյալներում արգելված են եղել Թուրքիայի սահմաններում, ապա ինքն այս հաղորդումն ընդունում է իբրև «մի անպատեհ կատակ», որի նմաններից խնդրում է՝ «ապագայում աղատ կացուցանել» իրեն[29]։

Աբ. Հովհաննիսյանը հրաժարվում է դնալ հյուպատոսարան՝ շքանշանն ստանալու, իսկ երբ հյուպատոսն այն ուղարկում է նրա տուն, հրապարակախոսը շքանշանը վերադարձնում է մի երկտողով, որով հայտնում էր, թե անպատվաբեր է համարում շքանշան ստանալ մի պետությունից, որն իր ժողովրդի թշնամին է[30]։ Հովհաննիսյանի որդու՝ Ռ. Հովհաննիսյանի վկայությամբ, թուրքական դեսպանի բողոքներից

---

[26] Տե՛ս «Արձագանք», 1891, № 20։

[27] Տե՛ս «Մշակ», 1891, № 90։

[28] Տե՛ս «Մշակ», 1891, № 117։

[29] Տե՛ս «Արձագանք», 1891, № 34։

[30] Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Արզար Հովհաննիսյանի կենսագրությունը, ձեռագիր (ԴԱՔ, Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 3)։

հետո այդ հարցը քննարկվում է դիվանագիտական ոլորտներում և Ա. Հովհաննիսյանը հաղիվ է ազատվում անախորժ հետևանքներից[31]:

Սակայն հարցը սրանով չի սպառվում: Արծրունու մահից հետո ևս, թեև «Մշակի» աշխատակիցները շատ լավ գիտեին վերը հիշված պատմությունը և այն փաստը, որ այդ դեպքից հետո «Արձագանքի» մուտքը Թուրքիա վերջնականապես արգելվում է[32], իսկ կարճ ժամանակ անց Հասիբ-բեյը պաշտոնանկ է արվում[33], շարունակում են գործել: Նրանք իրենց մի ֆելիետոնում դարձյալ ակնարկում են, թե «Արձագանքի» խմբագիրը սուլթանից շքանշան է ստացել: Հովհաննիսյանը երբեմն պատասխանում էր այդ պրովոկացիաներին[34], բայց, բոլոր դեպքերում, ժամանակի որոշ գործիչների այդ չարամիտ գրչախաղերը օգուտ չէին բերում հայ հասարակությանը և առաջացնում էին հայ մտավորականության անբավականությունը:

Չնայած այս ամենին, Ա. Հովհաննիսյանը դնահատում էր Արծրունու արժանիքները: Երբ Արծրունին խոսում է «Մշակը» օրաթերթ դարձնելու իր ծրագրի մասին, Հովհաննիսյանն այդ համարում է խրախուսելի քայլ, որովհետև, գրում է նա, «մի ամենօրյա օգտավետ ուղղություն ունեցող և բարոյական սկզբունքներ ճանաչող թերթի կարևորությունը վաղուց է զգացվում մեղանում»[35]: Առհասարակ խոսելով Արծրունու և իր փոխհարաբերությունների մասին, նա շեշտում է, թե «այդ հարաբերությունները երբեք բարեկամական-մտերմական չեն եղել և այժմ էլ թշնամականից շատ հեռու են: Մենք միշտ հարգել ենք նորա մեջ մամուլի միջնորդությամբ հասարակությանը տոկունությամբ ծա-

---

31 Նույն տեղում:

32 Այս հարցի վերաբերյալ խմբագրի բազմաթիվ ազդարարություններից հիշենք միայն մեկը. «Հարկ ենք համարում նորից հայտնել, որ օսմանյան տերությունը միանգամայն արգելած լինելով «Արձագանքի» մուտքը Թուրքիայի սահմանները, մենք անկարող ենք այդ երկրից մեր լրագրի համար բաժանորդագրություն ընդունել» («Արձագանք», 1893, № 64):

33 1893-ին «Արձագանքի» խմբագիրը մի առիթով, ասեք վրեժ լուծելով Հասիբ-բեյից նրա՝ իրեն պատճառած դառնություններ համար, երգիծական երանգով հաղորդում է ընթերցողներին, թե նա «մի տարուց ավելի է, թողել է յուր պաշտոնը և անպաշտոն դրոսնում է Բոսփորի ափերում»:

34 Տե՛ս «Մշակ», 1895, № 107 և «Արձագանք», 1895, № 109:

35 «Արձագանք», 1887, № 35:

ռայելու նպատակը և երբեմ չեմ համակրել նոցա գործ դրած միջոց-ներին և ձևերին» (ընդգծումը մերն է— Մ. Մ.)[36]։

Գրիգոր Արծրունու հրապարակախոսական գործունեության օբյեկտիվ գնահատականը Ա. Հովհաննիսյանը տվել է նրա մահվանից անմիջապես հետո՝ «Մշակի» հանգուցյալ խմբագրի մատուցած դրական ծառայությունները» հոդվածում[37]։ «Հարուստ չենք հասարակական գործիչներով,— գրում է Հովհաննիսյանը,— եղածների մատուցած ծառայությունները անտեսել կամ բոլորովին հերքել, ասել է՝ արհեստական կերպով ավելացնել մեր աղքատության չափը»։ Այնուհետև նա նշում է «Մշակի» ծառայությունները հայ հասարակությանը. դրանցից առաջինը նա համարում է հայ հասարակության ակտիվացման, նրան հասարակական խնդիրների հետ կապելու Արծրունու ջանքերը. երկրորդը՝ հայ հասարակական կյանքի բազմաթիվ կողմերի ուսումնասիրումը և լրագրության հետաքրքրասիրությունների լայնացումը։ Հովհաննիսյանն ընդգծում է Արծրունի-հրապարակախոսի ոճի արժանիքները, բարդ հարցերի մասին դյուրամատչելի ձևով գրելու նրա ունակությունը։ «Արձագանքի» խմբագիրը շատ բարձր է գնահատում և Արծրունու կազմակերպչական կարողությունները, հասարակական աղետների ժամանակ տաճկահայերին ցույց տված նրա օգնությունը։ Ժողովուրդը հավատով էր վերաբերվում նրա խոսքին և հետևում էր նրա հրավերին, գրում է Հովհաննիսյանը, ընդգծելով Արծրունու խոսքի ներգործուն մեծ ուժը։ «Պետք է խոստովանել, որ մեզանում այդպիսի լրագրական ազդեցություն ամենից շատ ձեռք է բերել Գր. Արծրունու «Մշակը»[38]։

Ա. Հովհաննիսյանը այս հոդվածով փաստորեն հաշտության ձեռք էր մեկնում «Մշակի» խմբագրությանը, բայց մշակականները տրամադիր չէին հաշտվելու[39]։

Արծրունու մահից հետո թերթի գլխավոր աշխատակից Խ. Մալումյանը շարունակում է թշնամական հոդվածներ ղետեղել «Արձա-

---

[36] «Արձագանք», 1888, № 45։

[37] «Արձագանք», 1893, № 4։

[38] Նույն տեղում։

[39] Ցավալի փաստ է, որ երբ Արծրունու թաղումից մեկ օր առաջ Ա. Հովհաննիսյանը իր կողմից պսակ է ուղարկում «Մշակի» խմբագրատուն, նույն օրվա երեկոյան մշակականները պսակը ետ են ուղարկում (տե՛ս «Արձագանք», 1892, № 148)։

պանքի» դեմ և այնպես է կորցնում չափի զգացումը, որ Սիմեոն Հախումյանը թատրոնի ճեմասրահում ապտակում է նրան[40]։

Հայ լրագրերի միջև շարունակվող բանավեճը ունեցել է և այլ ծանր հետևանքներ։ Գրական գործիչների անվստահությունը միմյանց նկատմամբ, առանին մանրիկ գժտությունները, մշտապես բորբոքվող ատելության կիրքը՝ ոմանց ստիպում են դիմել պարսավագրության միջոցին։ Այսպես, «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանը, որ վիրավորված էր Ա. Հովհաննիսյանից, իր շաբաթաթերթի էջերում զետեղում է 19 մեղադրանք՝ ուղղված Ա. Հովհաննիսյանին[41]։ Այդ մեղադրանքները անձնական բնույթ ունեին և ավելի շուտ խոսում էին Հովհաննիսյան-խմբագրի աշխատանքի ծանր պայմանների մասին, քան ստվեր նետում նրա վրա։

«Մեղադրականում» խոսվում էր Ա. Հովհաննիսյանի ֆինանսական անհույս վիճակի, նրա գործերի ու գործարքների մասին, ասվում էր, թե թերթը լույս է տեսնում ուշացումով, խմբագիրը միշտ պարտք է մնում տպարանին, թղթավաճառին։ Իբրև վարկաբեկող փաստ նշվում էր, թե Հովհաննիսյանը դանադան քաղաքներում թափառել է և «դռնեդուռ մուրացկանի պես» բաժանորդներ հավաքել «Արձագանքի» համար։ Ասվում էր նաև, թե նա «հորից մնացած հարյուր հազարները» վատնել է, ընկերական հավաքույթներում անպատշաճ սրախոսություններ է անում և այլն, և այլն... Փաստը վրդովեցուցիչ էր, սակայն առավել մտահոգիչ էր այն երևույթը, որ երկու հայ խմբագիրներ այդ հոդվածի հետքերով դատական պրոցես են սկսում։ Հովհաննիսյանը հերքում է իր հասցեին հրապարակված այդ մեղադրանքները, և Տիգրան Նազարյանը դատապարտվում է 3 ամսվա կալանքի[42]։

Այսպես, տեսանք, որ հայ թերթերի միջև առօրյա հարցերի շուրջ ծագվող բանավեճը հաճախ մանրանում էր, նեղացնում լրագրային առողջ բանավեճի սահմանները և խաթարում դրա բնույթը։ Սակայն ըստ երևույթին այլ կերպ չէր էլ կարող լինել։ Պետական հովանավորությունից չօգտվող մասնավոր թերթերի խմբագիրները, որ իրենց պարբերականները հրատարակում էին մեծագույն զոհաբերությունների գնով, շատ զգայուն էին իրենց հասցեին արված յուրաքանչյուր ակնար-

---

40 Խ. Մալումյանը և Ս. Հախումյանը դատապարտվում են 3 և 5 օրվա կալանքի։

41 Շերվանզադեի վկայությամբ այդ հոդվածը գրել էր «Տարազի» աշխատակից Ղազարոս Աղայանը։

42 Տե՛ս «Արձագանք», 1893, № 32—34։

կի նկատմամբ։ Այդ յուրատեսակ գոյության կռվում, սեփական իրավունքները պաշտպանելու ճանապարհին, նրանք երբեմն մոռանում էին, որ կորցնում են չափի զգացումը։ Ինչ էլ որ լինի, սակայն, հայ մամուլի առանձին օրգանների պատմությունը վերականգնելու համար խիստ կարևոր է հայտնաբերել համապատասխան խմբագրությունների միջև տեղի ունեցած բախումների ակունքները։ Հիմնականում այդ ակունքները կապվում են ժամանակի հասարակական հոսանքների քաղաքականության հետ և արտացոլում են ոչ միայն այս կամ այն հոսանքի գործելակերպը, այլև երբեմն՝ միևնույն հոսանքի ներսում եղած տարակարծությունների հետաքրքրական երևույթը։

Սկսած 1895 թ. Ա. Հովհաննիսյանը դադարում է բանավիճել հայկական թերթերի խմբագիրների հետ։ Արևմտյան Հայաստանում սկըսված հայկական ջարդերը նոր առիթ էին տվել եվրոպական մամուլի օրգաններին արծարծելու հայկական հարցը։ Ռուսական մի շարք պարբերականներ եթե բարյացակամությամբ էին լուսաբանում տեղի ունեցող իրադարձությունները, ապա ռեակցիոն մամուլը հայության նկատմամբ բռնում է բացահայտ թշնամական դիրք։ Այդ թերթերի էջերում զարգացվում է այն տեսակետը, թե իբր Կովկասի հայերը խոսելով հայկական հարցի մասին, ձգտում են անպարատ կապերի մեջ մտնել արևմտահայության հետ և ստեղծել անկախ Հայաստան։ Ռեակցիոն թերթերի դիրքորոշումը ոչ միայն վիրավորական էր անվերապահ ռուսական օրիենտացիա ունեցող հայ հրապարակախոսների համար, այլև վտանգավոր։ Շինծու մեղադրանքներ պարունակող հոդվածների միջոցով դրանք ահաբեկում էին դրաքննական կոմիտեի ղեկավարությանը, որն իր հերթին համապատասխան ղեկուցագրերով զգաստացնում էր Ներքին գործոց մինիստրությանը։ Այս պայքարի առաջին գծում էին՝ «Кавказ», «Новое время» և «Московские ведомости» ռեակցիոն թերթերը, որոնց դեմ հետևողական պայքար է սկսում «Արձագանքի» խմբագրությունը։ Եթե հայ գրողների և հրապարակախոսների հետ ունեցած բանավեճում Ա. Հովհաննիսյանը երբեմն սուբյեկտիվ մղումներով թույլ էր տալիս վրիպումներ, ապա այդ նույնը չի կարելի ասել ցարական ռեակցիոն մամուլի դեմ վարած նրա բանավեճի մասին։ Այս բանավեճը կրում էր քաղաքական բնույթ և դուրս էր գալիս մամուլի առանձին օրգանների կամ նույնիսկ առանձին հոսանքների միջև ծագած տարակարծությունների ոլորտներից։

Այսպես, «Արձագանքի» խմբագրությունը փորձում է բանավիճային հոդվածների միջոցով չեզոքացնել «Кавказ» լրագրի հարձակումները, որոնք ծավալվում էին՝ Անդրկովկասի բազմազգ ժողովուրդներին միմյանց դեմ լարելու նկատառումներով։ Փորր աղգությունների մեջ դավեր նյութող գործիչը, ինչպիսին է «Кавказ»-ի խմբագիր Վելիչկոն, գրում էր Հովհաննիսյանը, չի կարող արժանի լինել ռուս մեծ ժողովրդի զավակը լինելու պատվին և ապա ավելացնում է, թե տվյալ պարագայում այդ ազգությունները շատ ավելի են հարգում ռուս ազդը, քան Վելիչկոն։

Օգտագործելով այն փաստը, որ Վելիչկոն իր գործունեության սկզբում հարել էր նարոդնիկությանը, ապա հեռացել նրանից, «Արձագանքի» գլխավոր աշխատակից N N -ը մերկացնում է նրա վարքագիծը և ընդգծում, որ նա ներկայացնում է ժամանակի խավարապաշտ բանակը, «որի դեմ ռուս նարոդնիկները միշտ մաքառել են»[43]։ «Արձագանքի» խմբագիրն իր թերթի հոդվածներն ավելի դիպուկ էր դարձնում՝ վկայակոչելով և «Сын отечества» թերթի գնահատականը («Кавказ» լրագիրն այն օրից, որ անցել է պարոն Վելիչկոյի ձեռքը, ավելի ընտիր գործի արժանի եռանդով ճգնում է ցեղական թշնամություն զրգռել կովկասյան ազգերի միջև»)։

Բանավիճային այս պայքարում դրսևորվում էր կովկասյան ժողովուրդների համերաշխությունն ու համախմբվածությունը և ունեցած մեծ հավատը՝ ռուս ժողովրդի նկատմամբ։

Առավել տեսական էր և վտանգավոր «Արձագանքի» բանավեճը ժամանակի ամենաառնակցիոն թերթերից մեկի, Սուվորինի «Новое время»-ի հետ։ Եթե հաշվի առնելու լիներնք այն արտոնյալ վիճակը, որի մեջ գտնվում էր «Новое время»-ի խմբագիրը կառավարական ոլորտներում, ապա պարզ կդառնա, որ այս մենամարտը պետք է դիտել իբրև հայ հրապարակախոսության պատմության արժանահիշատակ էջերից մեկը։

Սուվորինի վարքագիծն իրենով նշանավորում էր ռուսական լիբերալիզմի ապրած էվոլյուցիան՝ դեպի ռեակցիան։ Բնութագրելով նրա գործունեությունը, Վ. Ի. Լենինը Սուվորինին համարում է ռեակցիոն Կատկովի տարատեսակը։ Ինչպես Կատկովը 60-ական թվականների դեմոկրատական վերելքի շրջանում անցավ ռեակցիայի բանակը, այն-

---

[43] Տե՛ս «Արձագանք», 1897, № 144։

պես էլ Սուվորինը՝ «երկրորդ դեմոկրատական վերելքի ժամանակ Ռուսաստանում (XIX դարի 70-ական թվականների վերջին) շուռ նկալ դեպի նացիոնալիզմ, շովինիզմ, անզուսպ լակեյություն՝ իշխանություն ունեցողների առաջ»։ Նրա թերթը Վ. Ի. Լենինը համարում է ծախու թերթի նմուշ, որը դարձել էր համանշանակ արտահայտություն՝ «դավաճանություն, ռեներգատություն, սուորաքարշություն, հասկացողություններին»[44]։

Սկսած 1883 թվականից «Новое время»-ի խմբագրությունը զանազան հոդվածներով կշտամբում էր հայությանն այն բանի համար, որ նա շարունակում էր «հուսալ և երազել ներկայից ավելի լավ ժամանակների» և մտածում էր՝ «յուր քաղաքական վերածնության վերա»[45]։ Մասնավորապես այն շրջանում, երբ հայկական ջարդերի առիթով դիվանագիտական ոլորտներում արծարծվում էր հայկական հարցը, Սուվորինը ջանում էր ապացուցել հայերի քաղաքական անբարեհուսության վերաբերյալ ռեակցիոն շրջաններում ստեղծված առասպելը և խորհուրդ էր տալիս տերությանը՝ հայկական հարցի պատճառով չփչացնել հարաբերությունները Անգլիայի և Թուրքիայի հետ[46]։ Նա միաժամանակ մի շարք հոդվածների միջոցով դժտություն էր սերմանում Անդրկովկասի ժողովուրդների միջև։

«Արձագանքի» խմբագրությունը փաստերի և վիճակագրական տվյալների օգնությամբ հերքում էր մեղադրանքները, բացահայտում ճշմարտությունը, հաստատում Անդրկովկասի ժողովուրդների բարոյական բարձր նկարագիրը։ Հայերի, ադրբեջանցիների, վրացիների և ռուսների միջև ոչ մի թշնամություն չի եղել և չկա, գրում էր թերթի խմբագիրը, «բայց թե «Новое время»-ն և նրա հետևողները կստեղծեն այդ թշնամությունը և թող իրանք էլ պատասխանատու լինին հետևանքների համար»[47]։

Սուվորինի թերթի հետ մեկտեղ «հայկական սեպարատիզմի» վրա հետևողականորեն ուշադրություն էր հրավիրում «Московские ведомости» թերթը։ Ժամանակին այն խմբագրում էր փոքր ժողովուրդների ազատագրական պայքարի երդվյալ թշնամի, ռեակցիոներ Կատկովը։

---

[44] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 343։

[45] «Արձագանք», 1893, № 109։

[46] «Արձագանք», 1895, № 11։

[47] «Արձագանք», 1897, № 64։

Նրա մահից հետո, 1887 թ., թեև խմբագրությունն անցնում է նրա հաջորդների ձեռքը, բայց «Московские ведомости»-ն հավատարիմ է մնում նախկին ուղղությանը։ Այս թերթի էջերում հաճախ էին տպագրվում դրա թղթակիցների անբարեխիղճ, հայերի նկատմամբ թշնամական տոգով տոգորված հոդվածներն ու թղթակցությունները։

1865 թ. Կատկովը իր թերթի էջերում խոսելով «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մասին, դրա կարծեցյալ գործունեությունը կապում էր լեհ հեղափոխականների հետ։ Այդ պատմությունը դրեթե նույնությամբ կրկնվում է 1897-ին. «Կովկասի հայերի մի նշանավոր մասը,— գրում էր խմբագրությունը մի հոդվածում,— ոգևորվելով լեհացիների անմիտ օրինակով (?)[48] իսկապես սկսում է մտածել ինչ-որ ինքնավար Հայաստանի մասին և ամեն կերպ քարոզում է այդ նորությունը յուր եկեղեցիներում (!!), յուր դպրոցներում (!!) և լրագիրներում (!!)։ Այդ քարոզն սկսում է մուտք գործել նաև մայրաքաղաքի կենտրոնը (?)»[49]։ Այս հոդվածին «С.-Петербургские ведомости» թերթում պատասխանում է մայրաքաղաքի հայերից մեկը՝ N ստորագրությամբ[50]։

«Եթե Ռուսաստանի հայերի մեջ կա որևէ քաղաքական ձգտումն,— գրում էր N-ը,— այդ միայն նրանց ցավակցությունն է Թուրքիայի հայերի թշվառ վիճակին։ Բայց հայոց ո՞ր լրագիրներում, նրանց ո՞ր երեսում, ո՞ր էջումն է պրոպագանդա արվում հանուն ինքնավար Հայաստանի և լեհական պրոպագանդայի ձևով»։ Խոսելով այն մասին, որ հայ մամուլը չի հեռացել օրինականության սահմաններից, հոդվածագիրը նշում է, թե այն «ցավակցելով Թուրքիայի հայերի անասելի ծանր վիճակին, խիստ լեզվով միշտ հարձակվել է թուրքական բաշիբոզուկների բարբարոսական քաղաքականության վրա, համարելով ռուսական միջամտությունը միակ միջոց՝ թուրքահայերի վերջնական կորըստից փրկվելուն»։ Հոդվածագիրն արդարացի մի հարց է տալիս.

---

48 Փակագծերի նշումներն արված են «Արձագանքի» խմբագրության կողմից։

49 «Արձագանք», 1897, № 7։

50 Մենք հակված ենք ենթադրել, թե այս դեպքում ևս պատմությունը կրկնվում էր... 1865-ին «С.-Пет. ведомости»-ի էջերում Կատկովի մեղադրանքները հերքում էր Կ. Եզյանը։ Թվում է, թե 1897-ին նույնպես N կեղծանունով Եզյանն էր խառնվում գործին, փորձելով հայերից հեռացնել նրանց վրա բարդված այն ծանր քաղաքական մեղադրանքը, որը ոչ մի հիմք չուներ։ Նա ակնհայտորեն ջանում էր մեղադրանքից ազատել և հայ մամուլը, որի անարգել գործունեության մեջ շահագրգռված էր։

ինչո՞ւ ամենքը կարող են հետաքրքրվել տաճկահայերի վիճակով, արևվելահայերից բացի։ Նա ափսոսում է, որ անբարեխիղճ լրագրողները՝ անկոչ դատավորների ձևով ծանր մեղադրանքներ են բարդում մի ամբողջ ազգի վրա՝ առանց որևէ փաստի։ Մինչդեռ՝ ամեն մի մեղադրություն պետք է հիմնված լինի հաստատ անդրդվելի փաստերի վրա։

Հարվածը, անկասկած, շատ դիպուկ էր և հնարավոր է, որ ինչ-որ չափով օգնել է հայ լրագրողներին։ Սակայն Ա. Հովհաննիսյանին և նրա բարեկամներին միշտ չէ, որ հաջողվում էր պատասխանել ռեակցիոն լրագրողների ստահոդ ելույթներին։ Կովկասյան գրաքննական կոմիտեի արխիվում այլ նյութերի հետ մեկտեղ պահվում է և «Արձագանքի» բանավիճային մերժված հոդվածների մի շարք, որը ակնառու է դարձնում Աբ. Հովհաննիսյանի խմբագրական աշխատանքի համար ստեղծված դժվարին պայմանները։ Հիշենք այդ հոդվածներից միայն մեկը։ Գրաքննության կողմից 1897 թ. արգելված «Խավարամիտ ռուս օրագրության մեղադրանքները» հոդվածում «Արձագանքի» խմբագրությունը հանգամանորեն մեկնում է արևելահայերի ելակետը՝ նրանց դեմ ուղղված «ազգային սեպարատիզմի» մեղադրանքի հարցում[51]։ Ի՞նչ է նշանակում սեպարատիզմ, հարցնում է հոդվածագիրը, (N N),— Ռուսաստանից անջատվելու և անկախություն ձեռք բերելու ձգտում, որը իբր պաշտպանում և զարգացնում են հայ հոգևորականները, մտավորականությունը և գրական գործիչները։ Եթե ռեակցիոն լրագրողները տիրապետեին հայոց լեզվին, ապա կհամոզվեին, որ և՛ կրոնական հանդուրժողականության, և՛ տեղական ինքնավարությունների ստեղծման ու զարգացման հարցում հայ գործիչների պահանջները որևէ ձևով չեն հակադրվում պետական քաղաքականության նկատառումներին։ Ինչ վերաբերում է մայրենի լեզվի պաշտպանությանը, ապա հայտնի փաստ է, որ առանց մայրենի լեզվի կատարյալ իմացության՝ անհնար է տիրապետել ռուսաց լեզվին։ Ուրեմն ինչո՞ւմ են մեղանչում հայերը...

«Ո՛չ, պարոն համառուսական խավարամիտներ,— ամփոփում է խոսքը «Արձագանքի» տեսաբան N N-ը,— իզուր է ձեր ջանքը՝ հայերի մեջ դնել սեպարատիզմի նշույլ, իսկ ձեր անվանած սեպարատիզմը մենք խոստովանում ենք. բայ ասենք և ոչ ամաչենք։ Մենք ուրախությամբ կրկնում ենք մի լհհական լրագրի հետևյալ խոսքերը, թե պետ

---

51 ՎԿՊՊԱ., ֆ. 480, գիրք Ա., գործ № 1404։

և գիտենք, որ դրանք նույնքան անտանելի են ձեզ համար, որքան եկեղեցու զանգակի ձայնը Մեֆիստոֆելի ականջին։

«Մենք ցանկանում ենք ամրապնդել մեր կապերը ընդհանուր Ռուսիայի պետության հետ. մենք անկեղծորեն և ջերմեռանդությամբ դավանում ենք մեր ընդհանուր միապետի կուլտը, որ Ռուսիայի միապետ լինելով հանդերձ նաև Լեհաստանի (Կովկասի) և այլն թագավորն է։ Միևնույն ժամանակ այնպիսի անսահման [սիրով] սիրում ենք մեր մայրենի կրոնը, մայրենի լեզուն և մայրենի գրականությունը, որ ավելի լավ կհամարենք կատարելապես ոչնչանալ, քան կորցնել նրանց, զրկվել աստվածային այդ ամենաթարթր ձիրքերից, կորցնել մեր ևսը, դիմազուրկ լինել և ռուս դառնալ»[52]։

Դարավերջին ռուսական մամուլի էջերում վերը հիշված թշնամական ելույթներից բացի, տպագրվել են և ռուս առաջադեմ լրագրողների հոդվածները՝ ի պաշտպանություն հայկական դատի։ Հովհաննիսյանը հրապարակել է «С.-Петербургские ведомости», «Биржевые ведомости», «Мир божий» և այլ թերթերում տպագրված այդօրինակ հոդվածների տեսությունները[53]։ Այդ հոդվածների հեղինակները դատապարտում էին ռեակցիոն թերթերի թշնամական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ և հայտնում այն միտքը, թե ռեակցիոն լրագրողների կատարած ամոթն ընկնում է իրենց անտարբերության վրա՝ դեպի մի անպաշտպան ու փոքր ժողովրդի թշվառությունը[54]։ Մի այլ լրագրող կշտամբելով Սուվորինի դիրքը, բազմաթիվ փաստերով հավաստում է հայերի հավատարմությունը ռուսներին և նշում, թե նա «իզուր տեղը թշնամություն է գրգռում կովկասյան ազգերի մեջ»։ Մի շարք ռուսական թերթերում հոդվածներ են տպագրվում ի նպաստ դժբախտ գաղթականների, կոչ է արվում հանգանակություններ կազմակերպել և այլն։

Ա. Հովհաննիսյանը ռուսական թերթերից երբեմն էլ կատարում էր արտատպություններ, որոնք թեև ուղիղ գծով չէին առնչվում հայկական հարցերին, բայց ամրապնդում էին «Արձագանքի» դիրքերը բա-

---

52 Մեջբերումը լեհական թերթից՝ վերցված էր «С.-Пет. ведомости»-ից։

53 Ռուսական թերթերից թարգմանված հոդվածների մի մասը նույնպես մերժվել է գրաքննության կողմից։

54 Տե՛ս «Արձագանք», 1897, № 135։

նավեճում: Այսպես, երբ «Московские ведомости», թերթը հարց է բարձրացնում Պուշկինի արձանի դիմաց բարձրացնել Կատկովի արձանը, ժամանակի առաջադիմական «Вестник Европы» հանդեսը ըմբոստանում է այդ առաջարկի դեմ: Ո՞վ է Կատկովը այլազգիների համար, գրում է հանդեսի հոդվածագիրը, և ի՞նչ կլինի նա, երբ այլազգիները կիմանան, թե ինչպես էր նա վերաբերվում դեպի այն ամենը, ինչ ռուսական չէր: «Արձագանքի» խմբագիրը հաճույքով մեջ է բերում և նրա այն խոսքերը, թե Կատկովի արձանի դրացիությունը Պուշկինի արձանին՝ կլինի «իբրև ծաղր և կատակ մեծ բանաստեղծի հիշատակին»[55]:

Մենք տեսանք, որ «Արձագանքի» խմբագրությունն ուներ իր անվերապահ կարծիքը Սուվորինի մասին: «Արձագանքում» 1897-ին հրապարակվում է հնագետ Շովրյանի հարցազրույցը Հ. Այվազովսկու հետ, որը նույնպես ամբողջացնում էր թերթի վերջնական հայացքն այդ հարցում[56]: Վերջնական հայացքը Սուվորինի գնահատականի հարցում՝ Աբգար Հովհաննիսյանը ձևակերպում է ռուս մեծ գրող և հրապարակախոս, հեղափոխական-դեմոկրատ Սալտիկով-Շչեդրինի օգնությամբ: Սուվորինի «Новое время»-ն Շչեդրինն անվանել է помои, գրում է Հովհաննիսյանը. «Եթե մի այնպիսի դժբախտություն պատահեր, որ այդ հրատարակությունը մի օր վեր կենար և մեզ դուվեր, դա մենք ամենամեծ անպատվություն կհամարեինք մեզ համար»[57]:

Հայ թերթերի հետ «Արձագանքի» վարած բանավեճերի պատմությունը ցույց է տալիս հավասար ուժի տեր լրագրողների հակամարտությունը՝ ազգային մշակութային հարցերի ոլորտներում: Տարբեր հոսանքների պատկանող հայ գործիչների բախումների շարժառիթները թեև ինչ-որ չափով դժդունել են ժամանակի ծալքերի տակ, բայց տպագիր խոսքի միջոցով դարձյալ տեսնում ենք նրանց ապրած հախուռն կյանքը, ներքին պայքարի կիրքը կամ միմյանց պատճառած դառնությունների անհրապույր նստվածքը: Հիմնականում, սակայն, այդ բանավեճերի հիմքում ընկած էր հայ հասարակական կյանքի նկատմամբ

---

55 «Արձագանք», 1897, № 81:

56 Տե՛ս «Արձագանք», 1897, № 36:

57 «Արձագանք», 1890, № 19:

լրագրողների ցուցաբերած հետաքրքրությունը և այդ կյանքին օգտակար լինելու շահախնդրությունը։

Ինչ վերաբերում է ռեակցիոն թերթերի դեմ «Արձագանքի» վարած բանավեճին, ապա դրա նյութերը վերակենդանացնում են անհավասար ուժերի միջև տեղի ունեցած մի օրհասական մենամարտի պատմությունը։ Այդ մենամարտը պատիվ է բերում «Արձագանքի» խմբագրությանը, որի հարվածի ուժը չի թուլացել՝ իր վիճակի անելանելիության գիտակցությունից։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԲԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՅԱՐԱԿԱՆ ԳՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

XIX դարի 50-ական թվականների վերջերին, Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման շրջանում, որոշակի քայլեր են կատարվում և գրաքննական ողջ սիստեմը վերակառուցելու ուղղությամբ: Այլևս անհնար էր հանդուրժել 1848—1855 թթ. «ցենզուրային տեռորի» դաժան տարիներին ստեղծված գրաքննական ոչ բանական օրենքները: Ժամանակները փոխվել էին. Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանը ոտք էր դրել տնտեսական կյանքի վերափոխումների ուղին և այդ երևույթը իր արտահայտությունն էր գտնում նաև գրքերի ու մամուլի աշխարհում: 60-ական թվականների սկզբին ստեղծված հեղափոխական ճգնաժամի օրերին ինքնաբերաբար վերանում են գրաքննական մի շարք սահմանափակումներ ու խստություններ: Անհամեմատ լայն հնարավորություններ են ստեղծվում ինչպես ռուսական, այնպես էլ կովկասյան ժողովուրդների մամուլի զարգացման համար:

Սակայն Ռուսաստանում հասունացած գյուղացիական հեղափոխությունը չհասավ հաղթական ավարտի. ցարական կառավարությունն անցավ հակահարձակման և երկրում ծավալվող շարժումները ճնշելուց հետո ձեռնամուխ եղավ գրաքննական սիստեմի խստացմանը: Ամեն բանից առաջ գրաքննության գլխավոր վարչությունը դուրս բերվեց ժողովրդական լուսավորության մինիստերության ենթակայությունից (որի ղեկավարության տակ գտնվում էր՝ սկսած 1804 թվականից),

Ալեքսանդր II-ն այն հանձնում է Ներքին գործոց մինիստրության տնօրինությանը:

Այնուհետև վերջնականապես խմբագրվում և 1865 թ. կիրառության մեջ է դրվում վաղուց ի վեր մշակվող գրաքննական նոր կանոնադրությունը, որը մայրաքաղաքների պարբերական հրատարակությունների մեծ մասը ազատում էր նախնական պարտադիր գրաքննությունից:

Հայ պարբերական մամուլի գրաքննության գործը, որը 1849 թ. դրված էր Կովկասի գրաքննության կոմիտեի վրա, մինչև 1863 թ. ղեկավարում էր Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունը: 1863 թ., համապատասխանաբար, Կովկասի գրաքննական կոմիտեն ենթարկվում է Կովկասի փոխարքայությանը: Թևև վարչականորեն Կովկասի գրաքննական կոմիտեն ենթարկվում էր Մամուլի գործերի գլխավոր վարչությանը (Պետերբուրգ), բայց իրականում այն գործում էր փոխարքայության ղեկավարությամբ: 1882 թ. Կովկասի փոխարքայությունը վերակազմվում է կառավարչապետության: Առաջին կառավարչապետ իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովի նախագահությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը մշակում է Կովկասի կառավարման նոր կանոնադրությունը: 1882 թ. մարտի 21-ին նոր կառավարչապետը հրավիրելով Կովկասի մամուլի օրգանների խմբագիրներին, նրանց ծանոթացնում է գրաքննական կոմիտեի դերատեսչական առաջիկա փոփոխության ծրագրին և խորհուրդ տալիս հանդես գալ համապատասխան առաջարկներով:

Ի՞նչ փոփոխության մասին էր խոսքը: Ստացվել էր Ներքին գործոց մինիստրության գրությունն այն մասին, որ առաջիկայում Կովկասի պարբերական մամուլը և ողջ տպագրական գործը (տեղական լուրերով գրված պիեսներից բացի), պետք է անմիջականորեն ղեկավարվեին Մամուլի գործերի գլխավոր վարչության կողմից: Օգտվելով այն առիթից, որ Դոնդուկով-Կորսակովը առաջարկում էր արտահայտվել այդ հարցի մասին, գրաքննական կոմիտեի նախագահ Լ. Ն. Մոձալևսկին կազմում է մի ղեկուցագիր, որտեղ հանգամանորեն շարադրում է Կոմիտեի հայացքը՝ առաջիկա վերակառուցումների մասին[1]:

---

[1] «Записка о положении и правах цензуры на Кавказе» (տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք լրացուցիչ Ա, գործ № 74):

Մոձալևսկու ղեկուցագրի հիմնական նպատակն էր ամեն գնով պահպանել Կովկասի գրաքննական կոմիտեի անկախությունը։ Իր տեսակետը հիմնավորելու համար Կոմիտեի նախագահը ոչ միայն քննարկում էր քաղաքական ու ազգային որոշ նկատառումներ, այլև վկայակոչում էր խմբագրական-հրատարակչական մի շարք գործնական խընդիրներ, որոնք կարող էին տուժել Պետերբուրգի ննթակայության հետևանքով։ Ամփոփելով խոսքը, ղեկուցագրի կազմողը այն միտքն էր հայտնում, թե նոր միջոցառումը կվնասցնի տեղական պարբերականների ունեցած որոշ ինքնուրույնությունն ու աղատությունը և առհասարակ կքայքայի Կովկասում գործող «գրաքննական միանգամայն նպատակահարմար սիստեմը»[2]։

Տեղական թերթերին տրված մասնակի ազատությունները, որոնց անունից խոսում էր Մոձալևսկին, հասկանալի էին 70-ական թվականների վերջին։ Այդ ժամանակ նեն կովկասյան իշխանությունները համեմատական ազատություններ էին տալիս լրագրողներին, նրանց համար տեսանելի դարձնելու ռուսական տիրապետության առավելությունները, ապա նույն այդ տարիներին մայրաքաղաքի գրաքննիչները համեմատական ազատություն էին տալիս դեմոկրատական մամուլի գործիչներին՝ նրանց գործունեությունը լեգալ շրջանակներում պահելու համար։ Թե՛ մեկ, թե՛ մյուս գրաքննական սիստեմները ապրում են իրենց օրհասը՝ նարոդովոլցիների դեմ 1881 թ. սկսված դաժան պայքարի պայմաններում։ Ուստի և, չնայած Կովկասյան գրաքննական կոմիտեի նախագահի կազմած պերճախոս ղեկուցագրին, Կովկասի ղեկավարման նոր կանոնադրության հետ, որը կիրառվում է 1883 թ., Կովկասյան գրաքննական կոմիտեն 1883-ի հուլիսից մտնում է Մամուլի գործերի գլխավոր վարչության անմիջական հսկողության տակ։ Այս նոր ընթացքը միանգամայն նոր ժամանակաշրջան է սկըզբնավորում Կովկասի լրագրության աշխարհում։

Կոմիտեի նոր նախագահ Կ. Վ. Յակիմովն իր գործունեության առաջին իսկ քայլերից հրաժարվում է Մոձալևսկու լավատեսական, ինչ-որ չափով բարեհոգի քաղաքականությունից։ Ամեն բանից երևում է, որ նա հատուկ հրահանգավորում ուներ անդիջում հետապնդե-

---

[2] Այս հարցի մասին առավել հանգամանորեն տե՛ս Մ. Մխիթարյան, Էջեր արևելահայ պարբերական մամուլի գրաքննության պատմությունից («Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971)։

լու ոչ միայն հեղափոխական շարժումների, սոցիալիզմի գաղափարախոսության, այլև ազգային-ազատագրական շարժումների հետ առընչվող բոլոր դրսևորումները։ Մայրաքաղաքից ստացված հրահանգները Կովկասի կառավարչապետության և սրա միջոցով՝ գրաքննական կոմիտեի աստիճանավորների հիշողության մեջ թաղմացնում են «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության անունը, որն ուղղակի իր խմաստով ահաղանգում էր սեպարատիզմի վտանգը։

Աշոտ Հովհաննիսյանն իր «Անտիպ երկերում» խոսելով Նալբանդյանի անվան հետ ինչ-որ չափով առնչվող «Երիտասարդ Հայաստան» տերմինի մասին, բացատրում է դրա ստեղծման հանգամանքները։ Ի սկզբանն այն ծագել էր Կովկասի ուսումնական մասի տեսուչ Նևերովի գեկուցագրից, որի համաձայն Թիֆլիսում հայտնաբերվել էր մի քանի դիմնազիստներից կազմված «Երիտասարդ Հայաստան և Երիտասարդ Վրաստան» կազմակերպությունը։ Այդ բավական էր, որպեսզի երրորդ բաժանմունքի լրտեսները Նալբանդյանին, Շահազիզին, Պատկանյանին և հայ մտավորականներից ոմանց մեղադրեին հիշյալ կազմակերպության պատկանելության մեջ[3]։

Տասնհինգամյա դադարից հետո, 80-ական թվականների սկզբին, «Երիտասարդ Հայաստանի» հիշատակությունը որոշակիորեն կապված էր արևմտահայության ազգային-ազատագրական շարժումների աշխուժացման և Կովկասի հայ գործիչների՝ այդ հարցին ունեցած ակտիվ մասնակցության հետ։ Սույն աշխատության համապատասխան բաժնում մենք առիթ ունեցանք խոսելու Արևմտյան Հայաստանում սկսվող ազատագրական շարժումներին օգնելու նպատակով ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքների ստեղծած կազմակերպությունների մասին՝ Թիֆլիսում և Երևանում։ Սակայն այն բանից հետո, երբ կառավարության դիրքորոշումը փոխվում է դեպի Թուրքիան, որոշակիորեն փոխվում է և նրա վերաբերմունքը ինչպես հայկական շարժումների, այնպես էլ հայ մամուլի նկատմամբ։ Դրան զուգադիպում է կառավարության ռեակցիոն քաղաքականության նոր կուրսը։ Ներքին գործոց մինիստրությունը Կովկասում ուշադրությունը կենտրոնացնում է Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայկական շրջանակներում ծավալվող աշխույժ հետաքրքրության վրա։

---

3 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, *Անտիպ երկեր*, էջ 706։

Ցարական կառավարության քաղաքականության նոր ուղղությունը դրդստացնում է Գր. Արծրունուն և նա 1883-ից հետո աստիճանաբար հեռանում է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի հետ կապված հարցերից[1]: Ինչ վերաբերում էր «Արձագանքի» խմբագրին, ապա նա շարունակում է խոսել արևմտահայության ճակատագրի մասին և երբեմն նույնիսկ ըմբոստանում է ցարիզմի ազգային քաղաքականության մի շարք դրսևորումների դեմ:

Ներքին գործոց մինիստրությունն օգտագործում է այս առիթը և Կովկասում սկսված շարժումները հիմնովին ոչնչացնելու նպատակով կրկին կյանքի է կոչում «Երիտասարդ Հայաստան» մտացածին կազմակերպության մասին իր իսկ հորինած առասպելը: Աշ. Հովհաննիսյանի այն ենթադրությունը, թե ազգային-պահպանողական հոսանքը Կովկասում ամենից ավելի էր համապատասխանում «Երիտասարդ Հայաստանի» պիտակին, ամբողջովին հաստատվում է Կովկասի գրաքննական արխիվի նյութերով:

Եվ այսպես, հայ լրագրությունը դարավերջին դրվում է լուրջ հարվածի տակ. հետապնդվում է հայ հրապարակախոսների յուրաքանչյուր քայլը: Կովկասի կառավարչապետը կարգադրում է գրաքննական կոմիտեի նախագահ Յակիմովին՝ ուշի-ուշով հետևել հայերի ազգային սեպարատիստական շարժումներին: Այնուհետև իշխան Դոնդուկով-Կորսակովը Ալեքսանդր Երրորդից թույլտվություն է խնդրում ուժեղացնելու գրաքննությունը «հայերի մեջ սկսվող քաղաքական շարժումների դեմ»: Շուտով նա ստանում է թագավորի կամքը հաստատող Ներքին գործոց մինիստրի հրահանգը՝ «ուժեղացնել գրաքննական խստությունները տեղական և արտասահմանյան հայ մամուլի նկատմամբ»: Այդ օրերին կառավարչապետի հրահանգչական գրությանն ի պատասխան, Յակիմովը նույնպես հաստատում է, թե, հիրավի, հայ լրագրերն առերես խոսելով Թուրքիայի Հայությանը խոստացված բարենորոգումների իրականացման մասին, փաստորեն ձգտում են Հայաստանի վերածնությանը՝ իբրև քաղաքական մի ամբողջական մարմին: Այդ շարժման դեմ արմատապես պայքարելու համար նա թույլտվություն է խնդրում արգելելու հայկական հարցին և էջմիածնին նվիրված բոլոր

---

[1] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու դաշտարական ներհակության ակունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1:

հոդվածների տպագրությունը։ Այդ առաջարկն ընդունվում է[5]։ Ցարական բյուրոկրատիայի համոզմունքով էջմիածնի աթոռն էր խթանում «երիտասարդ Հայաստանի» գործիչներին, որոնք իբր ձգտում էին վերածնել Հայաստանը, անջատելով այն և՛ Թուրքիայից, և՛ Ռուսաստանից։ Էջմիածին տերմինը, այնտեղ կրթություն ստացած լինելու հանգամանքը, էջմիածնի հոգևորականությունը համարվում էին կառավարության դեմ գործող օպոզիցիայի արտահայտիչներ։ Այս պայմաններում ցարական կառավարության համար կենսականորեն անհրաժեշտ է դառնում կաթողիկոսական գահի վրա տեսնել կառավարությանը նվիրված արևելահայ եկեղեցականներից մեկին։ Այնինչ Գևորգ IV-ի մահից հետո (1882), նախընտրական ժողովներում և պարբերական մամուլի էջերում հոլովվում էին միմիայն արևմտահայ հոգևորական գործիչներ Ն. Վարժապետյանի, Մ. Խրիմյանի և Մ. Մուրադյանի անունները[6]։ Կանխելու համար հարցի անցանկալի լուծումը, կառավարությունն առաջարկում է ընտրությունները, ի տարբերություն նախորդ երկուսի, անցկացնել Պոլոժենիեի պահանջներին համապատասխան։

Նախընտրական աշխույժ պայքարից հետո 1884-ի մայիսին կաթողիկոս է ընտրվում Ներսես Վարժապետյանը, բայց Ալեքսանդր III-ը բեկանում է այդ ընտրության արդյունքները։ Մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ժեոկոխստովը այդ առիթով հատուկ հրահանգչական գրությամբ դիմում է Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահ Յակիմովին։ Կ. Պոլսի՝ մեզ բշնամական բանակի հայ գործիչները, գրում է նա, ամեն ջանք գործ են դնում ապագա կաթողիկոսի ընտրությունների իրենց ձևերը վերջնելու համար։ Նրանց նպատակն է կաթողիկոս ընտրել իրենց նվիրված մեկին, որպեսզի հետագայում նրա միջոցով կարողանան իրենց ավտոնոմիական մտադրությունները տարածել և մեր հատվածի հայության մեջ։ Ժեոկոխստովը նշում էր այնուհետև, որ այդ բշնամական տրամադրությունները ոչ միայն արտահայտվել են պոլսահայ մամուլում, այլև մուտք են գործել Կովկաս և պրոպագանդվում են «Արձագանքի» էջերում։ Այդ թերթի ջանքերով է նա բացատրում մայիսին կատարված ընտրությունների արդյունքները և Թույլ տրված շեղումները։ Քանի որ Ժեոկոխստովի համոզմունքով

---

[5] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գ. Ա, գ. 574։

[6] Մ. Մուրադյանը ինչ արևելահայ, 1865 թ. հետո գործում էր նախ Երուսաղեմում, ապա Արևմտյան Հայաստանում և հայտնի էր իր հակացարական տրամադրություններով։

Կ. Պոլսի մամուլի և «Արձագանքի» ուղղությունը հակադրվում էր կառավարության նկատառումներին և գործելակերպին, ապա նա առաջարկում է գրաքննիչների զգոն ուշադրությունը հրավիրել և՛ «Արձագանքի», և՛ Կ. Պոլսից ստացվող թերթերի ուղղության վրա[7]:

Հայ լրագրողների համար սկսվում է գործունեության մի նոր, առավել խճճված ժամանակաշրջան: Ֆեոկտիստովի գրության հետքերով կովկասյան գրաքննիչները նոր հանձնարարություններ են ստանում, կազմվում է մի հատուկ ղեկուցագիր՝ տեղի լրագրության վիճակի մասին և ուղարկվում Մամուլի գործերի գլխավոր վարչություն: Յակիմովը անձամբ ղրույց է ունենում «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանի հետ և սպառնում փակել նրա թերթը, եթե Հովհաննիսյանը չփոխի իր ընթացքը: «Ամեն մի կառավարություն,— ասում է նա,— իրավունք ունի իր երկրում հրատարակվող մասնավոր թերթերից օժանդակություն սպասելու՝ իր պետական քաղաքականությունը անցկացնելու գործում»: Հովհաննիսյանը խոստանում է լռություն պահպանել կաթողիկոսական ընտրությունների հարցի մասին[8]: Սակայն այս ղրույցից մի քանի օր անց, իրավիճակը փոխվում է: Հոկտեմբերի 26-ին վախճանվում է Ներսես պատրիարքը: Հովհաննիսյանը մոռանալով խոստումը, վճռում է պատրիարքի հոգեհանգստի առիթով թերթը հրատարակել սև շրջանակի մեջ, իսկ երբ գրաքննիչը առարկում է, խմբագիրն իրավունք է վերապահում իրեն՝ առանց թույլտվության տպագրելու թերթը: Նրան հաջողվում է լույս ընծայել միայն 200 օրինակ (700-ից). տպարանատիրոջ միջամտությունից հետո շրջանակը հանվում է: Ու թեև գրաքննիչից չէր հաջողվել ստանալ լույս ընծայման տոմսակը, Հովհաննիսյանը տպագրված համարները բռնությամբ հանում է տպարանից և տարածում[9]: Տպարանների տեսուչ Ենգալիչևն շտապում է արձանագրություն կազմել տեղի ունեցածի մասին և զեկուցել գրաքննական կոմիտեի նախագահին: Յակիմովը խնդրում է կառավարչապետից իսկույն կապվել Ներքին գործոց մինիստրի հետ և վարչական տույժ տալ խմբագրին: Նա միաժամանակ պահանջում է դատական պատասխանատվության կանչել տպարանատիրոջը և գրաշարներին: Յակիմովը, նպատակահարմար չի գտնում

[7] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք Ա, գործ № 607:

[8] Նույն տեղում:

[9] Տե՛ս С. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, стр. 455—458.

խմբագրին դատական պատասխանատվության կանչել և երբ հետագայում օկրուգային դատարանի դատախազը անհրաժեշտ է համարում վերը հիշված մեղավորների հետ դատական գործ հարուցել և խմբագրի դեմ, նա ստիպված է լինում խնդրել, որ մյուսներին էլ հանգիստ թողնեն: Ինչո՞ւմն էր գաղտնիքը: Յակիմովն այն բացատրում է Ֆեոկտիստովին ուղղած իր մի գրության մեջ: Նա վախենում էր, թե Ա. Հովհաննիսյանը դատական պրոցեսը քաղաքական ցույցի կվերածեր: Նա կարող էր իր ճառում խմբագրին և նրա թերթը համարել գրաքննական արգելքների դեմ և գրանով խորհրդածություններ առաջ նյութ տալ մյուս թերթերի խմբագիրներին: Այնուհետև հասկանալով, որ տոսկ ևս շրջանակի խնդիրը օրենքով նախատեսվող ծանր հանցանքներից չէ, Յակիմովը նույնիսկ ենթադրում էր, թե դատարանը կարող էր արդարացնել Հովհաննիսյանին: Իսկ «Ըմբռնել այն առանձնահատուկ քաղաքական ու հանցավոր իմաստը, որ տվյալ դեպքում ուներ սև շրջանակը, դատարանը, հարկավ, չէր կարողանա»[10]: Այո, Յակիմովը երկյուղ էր կրում, թե դատարանը անձեռնհաս կլինի քաղաքական երանգավորում տալու Հովհաննիսյանի վարքագծին և ամբողջ հույսը դնում է Ներքին գործոց մինիստրի վրա: Յակիմովը չէր սխալվում: «Արձագանքը» ութ ամսով դուրս է բերվում շարքից և այս կերպ միայն հնարավոր է դառնում արևելահայ լրագրության էջերում դադարեցնել բանավեճը և կաթողիկոսական ընտրություններին հետ կապված խորհրդածությունները[11]:

Բաֆֆին իր նամակներում խոսելով այդ օրերի իրավիճակի մասին, նշում էր, թե շատ բաներ է գրել, բայց բնավ հույս չունի, թե դրանք կտպագրվեն: «Այժմ լրագրության և առհասարակ մամուլի դրությունը խիստ դժվարին պայմանների մեջ է գտնվում: Յենգուրայի խաստությունը չափ չունի»: Մի այլ նամակում, խոսելով այդ խստու-

---

[10] ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցիրք Ա, գործ № 607:

[11] Անդրադառնալով 80-ական ԹԹ. իրադարձություններին, «Մասիս» Կովկասի Թիֆլիսից Մարզպանը (Բերիս Հարոն), «Արձագանքի» դադարումը» հոդվածում շեշտում է այն միտքը, որ ցարական գրաքննությունն անտանելի է դարձել ոչ միայն Անդրկովկասում, այլև ողջ «տիեզերածավալ» Ռուսաստանում: Այստեղ, գրում է նա, «լռել են ազնվամիտ հրատարակիչները, դադարել են համարձակ և ազատամիտ լրագիրները: Սանձարձակ ազատություն է վայելում այժմ մի ծայրահեղ հետադիմական, Կատկովի «Московские ведомости» լրագիրը, որ դառնությամբ է լցնում բոլոր հայրենասեր սրտերը» («Մասիս, 24/11—1884, № 3745):

Իյունների շարժառիթների մասին, Բաֆֆին հետևյալ բացատրությունն է տալիս հայ գործիչներին ներկայացված «հայկական սեպարատիզմի» մեղադրանքին. «Կառավարությանը մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնատարներ, որոնք իրանց իշխանությանը ծառայություն ցույց տալու համար սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, իբր թե Անդրկովկասում գոյություն ունի մի «Մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի ընկերությունների հետ, որոնք բոլորը միասին ձգտում են ընդհանուր ապստամբություն հարուցանել Հայաստանում և այլն»[12]:

Շիրվանզադեն իբրև «Արձագանքի» գլխավոր աշխատակից, քանի որ ավելի հաճախ էր հանդիպում գրաքննիչներին, Ռ. Պատկանյանին տեղյակ է պահում, որ նրա «Ուխտավորի նամակների» հետ գրաքննիչը շատ անխիղճ է վարվում: Նա գրում է, թե ինքը որքան էլ փորձել է պաշտպանել Պատկանյանին, բայց անօգուտ, որովհետև «ոչ մի համոզիչ վիճաբանություն նշանակություն չունի, երբ մտքի դահիճները հակառակ են մի բանի»[13]: Մի այլ նամակում Շիրվանզադեն գրաքննիչ Ղարախանյանի մասին գրում է, թե «ջնջում է աչքերը խփած»:

«Մեղու Հայաստանի» թերթի գրաքննության վաղ շրջանի պատմության մասին հետաքրքրական հուշեր է պատմում Եղիշե ք. Գեղամյանցը: Գրաքննիչը ոչ միայն տողեր էր ջնջում և իր կողմից ավելացրած նախադասություններով ավերում մտքերը, այլև հաճախ պահանջում էր հանել «Հայաստանը» և թողնել միայն «Մեղուն»: Խմբագիրը ստիպված էր թերթի անվան համար նոր տառեր ձուլել տալ, բայց այնպես, որ՝ «Մեղուն» բռնում էր ամբողջ տարածությունը, իսկ «Հայաստանի» բառը նվազ տառերով մտնում էր նրա մեջ: Երբ քաղաքական իրադրությունը լավանում էր, գրում է Գեղամյանցը, խմբագիրը միմյանցից հեռացնում էր «Մեղու» բառի տառերը և ցույց էր տալիս «Հայաստանի» բառը. և՝ ընդհակառակը: Խմբագրի վիճակն ավելի է ծանրանում, երբ գրաքննության կոմիտեից պահանջում են նրա բղթակիցների անունները. «Իհարկե այդ պահանջը չէր կատարվում, բայց կարևոր բղթակցություններ այլևս չէին տպագրվում: «Պոլսի մի բղթակցի անունն ու հասցեն իմանալու համար Խանը (Մեհրաբյան գրաքննիչը) շատ մեծ եռանդ ու հետաքրքրություն էր ցույց տալիս: Չորս

---

[12] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1959, էջ 594:

[13] Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 649—650:

անգամ նրան, անպաշտոն կերպով, հայտնվեցավ Թղթակցի անունն ու հասցեն։ Բայց չորս անգամ էլ՝ սուտ, հնարովի։ Ամբողջ Պոլսի թաղերը ման էին եկել և չէին գտել Թղթակցին։

Բայց յուր Թղթակցին հալածանքից ազատելու համար, Պ. Սիմեոնյանցի գործադրած այս միջոցը, վերջիվերջո նրա վրա սուղ նստեց»[14]։

1885 թ. արգելվում են բոլոր հոդվածները, նամակները և հեռագրերը՝ կապված հայկական դպրոցների փակման հետ, իսկ 1886-ին, երբ վերաբացվում են ծխական դպրոցները, խմբագիրներին արգելվում է խոսել և այդ իրողության շուրջը։

1894—96 թթ., երբ Արևմտյան Հայաստանում սկսվում են հայկական ջարդերը և մամուլի օրգանները փորձում են իրենց խոսքն ասել ճակատագրական այդ իրադարձությունների մասին, Ներքին գործոց մինիստերությունը կրկին ոտքի է հանում Կովկասյան գրաքննությանը։ Հայ լրագրողները պետք է բավականանային արտասահմանյան և ռուսական թերթերից կատարած արտատպություններով և Ռուսական հեռագրական գործակալության մատուցած նյութերով։ Հայ հրապարակախոսները փորձում են ինչ-որ ձևով արձագանքել այս դեպքերին, բայց ճեղքել գրաքննական պատնեշը, նրանց չի հաջողվում։ 1894 թ. «Արձագանքի» ներկայացրած նյութերից մերժվում է 83 հոդված, 1895-ին՝ 141, 1896-ին՝ 145 և 1897-ին՝ 89 հոդված[15]։ Այդ հարցին վերաբերող նյութերի տպագրությունն արգելվում է և «Մշակ» ու «Նոր-դար» թերթերում։

Ինչպիսի՛ օրենքներով և ցուցումներով էին ղեկավարվում գրաքննական կոմիտեի աստիճանավորները։ 1894 թ. Կովկասյան գրաքննական կոմիտեն դիմում է կառավարչապետին, խնդրելով սահմանել Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձությունների լուսաբանման կարգը։ Ի պատասխան այդ հարցման, Շերեմետևի գրասենյակից կարգադրում են գրաքննական կոմիտեի նախագահ Մ. Պ. Գակկելին՝ ուժի մեջ պահել նախկինում հայ պարբերականների վրա դրված արգելքը, խոսելու ազգային շարժման և Փոքր Ասիայի անցուդարձի մասին[16]։ 1895 թ. ևս ողջ եվրոպական և ռուսական մամուլը իբրև օրվա առաջնահերթ հարց քննարկում էր բնաջնջվող հայության ճա-

---

[14] «Մեղու Հայաստանի», 1911, բացառիկ համար։

[15] Տե՛ս Ս. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 243—244։ Տե՛ս նաև ՎԿՊՊԱ, ֆ. 480, գ. Ա, գործ № 1236, 1273, 1404 և գիրք լրացուցիչ Ա, գործ № 179։

[16] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գ. 574։

կատագրի հարցը, այնինչ Գակկելի հարցմանն ի պատասխան (տեղական թերթերին խոսելու իրավունք շնորհելու մասին), Շերեմետևը կարգադրում է չղաղվել միջազգային հարցերով, ինչպիսի նշանակություն արդեն ձեռք էր բերել հայկական հարցը: Նա հայ թերթերին առաջարկում էր զբաղվել տեղական հարցերով միայն[17]:

1895 թ. դեկտեմբերին, հավանաբար առաջնորդվելով սեփական լրտեսների զեկուցագրերի տվյալներով, Ներքին գործոց մինիստրը անձամբ զբաղվում է Կովկասի հայ մամուլի հարցով: Մինիստրության գործերի կառավարիչը հայտնում է Կովկասի կառավարչապետին, թե մինիստրը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել «հայ մամուլի վնասակար ուղղության վրա»: Նա հայտնում է մինիստրի կամքը՝ նախկինում ևս բնավ երբեք իր բարեհոգությամբ աչքի չընկած հայ մամուլի էջերում սանձահարելու հայկական [հարցի] պրոպագանդան[18]:

1896-ին վերջնականապես փակվում են հայկական դպրոցները: Օրավուր սահմանափակվում են հայ եկեղեցու իրավունքները: Ինչպես պարզվում է վերջերս հրապարակված մի փաստաթղթից, 1897-ի մայիսին կառավարչապետ Գոլիցինը հույժ գաղտնի մի գրությամբ խընդրում է Ներքին գործոց մինիստրի կարգադրությունը՝ ետ վերցնելու 1868-ին կաթողիկոսին շնորհված իրավունքը, որի ուժով «Արարատ» հանդեսը հրատարակվում էր առանց նախնական դրաքննության[19]: Այդ գրության մեջ Գոլիցինը նշում էր, ի դեպ, որ եթե նախկինում այդ արտոնությունը շնորհվել էր՝ տեղի մտավորականությանը զերծ պահելու համար արևմտահայերի ազդեցությունից (որոնք իբր ռուսների նկատմամբ տոգորված էին «թշնամական քաղաքական ձգտումներով»), ապա դարավերջին այդ վիճակը հիմնովին փոխվել է: Արևելահայերը, գրում է Գոլիցինը, ներկայումս «իրենց անջատական ձգտումներով չեն զիջում իրենց արտասահմանյան եղբայրներին, որով աննպատակ է պաշտպանել նրանց վերջիններիս վնասակար ազդեցությունից: Ընդ որում այս հարցում որևէ ներգործություն երբեք չի կարելի սպասել էջմիածնից, որը, պատրիարքի ղեկավորությամբ, սովորաբար հայերի համար հանդիսանում է ոչ այնքան կրոնական, որքան քաղաքական միասնության կենտրոն և հետ զենք նրանց անջատողական ձգտում-

---

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 Տե՛ս «Էջմիածին», 1968, № 11—12, «Անցյալի վավերագրեր» հրապարակումը:

նների համար»[20]։ Նույն թվականի օգոստոսին Ներքին գործոց մինիստրը հայտնում է Գոլիցինին, որ թագավորը կարգադրել է «Արարատը» նույնպես ենթարկել նախնական դրաքննության[21]։ Գոլիցինի հերթական խարդավանքի հետևանքով «Արարատի» համար ոչ միայն պարտադիր է դառնում նախնական դրաքննությունը, այլև սահմանափակվում է այդ պարբերականի ծրագիրը։ Հանդեսը զրկվում է դրական, բանասիրական, մանկավարժական բաժիններից։

Դարավերջի դրաքննական խստությունները Կովկասում սխալ կլիներ բացատրել միմիայն «հայկական սեպարատիզմի», այսպես կոչված, վտանգի առկայությամբ։ Պարզապես ցարիզմը 90-ական թվականներին արդեն լայն պայքար էր ծավալում երկու ճակատում։ Մի կողմից, իրագործելու համար փոքր ազգությունների ռուսականացման իր ծրագիրը, նա հաշվեհարդար էր տեսնում դիմադրության բոլոր արտահայտությունների դեմ, մյուս կողմից՝ մեծ ուշադրություն էր նվիրում երկրամասում հասունացող հեղափոխական շարժումներին։ Իսկապես, այս օրերին որոշակիորեն երևում են ազգային-դեմոկրատական շարժումների առկայության փաստերը Կովկասում։ Նախընթաց գլուխներից մեկում ասացինք արդեն, որ Անդրկովկասում դեռևս 1875 թ. գործում էին առաջին նարոդնիկական խմբակները և Ռուսաստանի բարձրագույն կրթական հաստատություններից վտարված հեղափոխական երիտասարդներն իրենց աշխատանքները շարունակում էին Անդրկովկասի ազգային-նարոդնիկական խմբակներում։ Պետք է ենթադրել, որ այդ երիտասարդության ներկայացուցիչներն էին հենց, որ 1891 թ. Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» թերթում տպագրում են «Русская мысль» ռուսական առաջադիմական հանդեսի խմբագրությանը հղած իրենց ցավակցական հեռագիրը՝ հանդեսի աշխատակից, ռուս հեղափոխական-դեմոկրատ Ն. Վ. Շելգունովի մահվան առիթով[22]։ Այս նշանակալից երևույթը աննկատ չի մնում և Ֆեոկտիստովը հատուկ հրամանով ի ցույց է դնում Կովկասի դրաքննական կոմիտեի նախագահին[23]։

---

[20] Նույն տեղում։

[21] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 1413։

[22] Շատ հատկանշական է, որ 80-ական թթ. ռևակցիայի օրերին Պետերբուրգի հայ ուսանողների մի խումբ ողջույնի նամակ էր ուղարկել Շելգունովին՝ նրա հոբելյանի կապակցությամբ (տե՛ս Ա. Կարինյան, Գրական-քննադատական հոդվածներ, Ե., 1962, էջ 276)։

[23] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 1060։

Արդեն 90-ական թվականներին սկզբնավորվում է մարքսիզմի գաղափարների պրոպագանդը երկրամասում։ 1894 թ. Գրաքննական կոմիտեն արգելք է դնում արտասահմանում հրատարակված մի շարք գրքերի վրա, որոնց թվում հայկական հարցի հետ առնչվող աշխատություններից բացի, տեսնում ենք Մարքսի, Պլեխանովի, Լաֆարգի գրքերի անունները։ Կոմիտեի եզրակացության մեջ ասված էր, թե տենդենցիոզ այդ գրքերը սոցիալ-հեղափոխական բնույթի վտանգավոր տեսություններ են պարունակում[24]։

Գրաքննական խստությունները Կովկասում XX դարի սկզբին առավել ևս ուժեղանում են։ Միայն 1905 թ. հեղափոխությունից հետո է, որ Ռուսաստանում առաջին հեղափոխության հզոր ալիքներից հետո ընկրկած Նիկոլայ II-ը հոկտեմբերի 17-ի մանիֆեստով հարկադրված եղավ ի թիվս այլ զիջումների, մեղմացնել և գրաքննական օրենքները։

Բ. ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐՁԱԳԱՆՔԸ»

Ռուս-թուրքական պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում Ա. Հովհաննիսյանի գործունեությունը՝ հօգուտ արևմտահայության, չէր վրիպել կառավարության աչքից։ Փոխարքա Ալ. Նիկոլաևիչը ժամանակին ներքին գործոց մինիստրին տեղյակ էր պահում հայկական շարժման զարգացմանն ու ընթացքին և նրա հրահանգով հետապնդում էր կովկասահայ գործիչների յուրաքանչյուր քայլը։ Կառավարչապետության հաստատման օրվանից իսկ՝ նոր վարչական կազմը իր տրամադրության տակ ոչ միայն ճշգրիտ տվյալներ ուներ ազգային-պահպանողականների՝ արևմտահայերի ազգային-աղատագրական շարժումների նախապատրաստության ունեցած մասնակցության մասին, այլև որոշակի սկզբունք՝ այդ շարժման մասնակիցներին հետապնդելու վերաբերյալ։ 1883—85 թթ. կառավարչապետության գրագրություններում «Արձագանքի» մասին խոսվում էր իբրև վտանգավոր մի օրգանի։

«Հայ մամուլը և ցարական գրաքննությունը» աշխատության մեջ Ս. Արեշյանը հանգել է այն եզրակացության, որ «Արձագանքը» ժամանակի բոլոր թերթերից ավելի էր ենթարկվում գրաքննական հետապնդումների։ Գրաքննական կոմիտեի 1883 թ. հաշվետվության

---

[24] Նույն տեղում, գործ № 1248։

մեջ նշված էր, թե Կովկասի հայ մամուլը հետևում է միմյանց հակառակ երկու ուղղության։ Դրանցից մեկը ոգևորված է Ռուսաստանին անբարյացակամ արտասահմանյան հայ մամուլով, իսկ մյուսը՝ հայկական շահերի կենտրոնը գտնում է Ռուսաստանի սահմաններում և իր գործունեությամբ ձգտում բարեկամացնել հայերին՝ Ռուսաստանի հետ և նրանց հաղորդակից դարձնել ռուսական մշակույթին։ Առաջին ուղղության թերթեր համարվում էին «Արձագանքը» («Հայկական մտավորականության ազգային ակնկալությունների օրգանը») և «կղերական» «Նոր-դարը»։ Հաշվետվության մեջ ընդգծված էր, թե երկրորդ ուղղությունը գլխավորում է «Մշակը»՝ «Մուրճի» օգնությամբ[25]։

Հաջորդ, 1884-ի հաշվետվության մեջ Գրաքննական կոմիտեի ղեկավարությունը Մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ֆեոկտիստովին զեկուցում էր, թե վերջին մեկ տարվա ընթացքում հայերի կյանքում նկատված շարժումներն իրենց արտացոլումն են գտել և պարբերական մամուլի էջերում։ «Կովկասի հայերի հայտնի կուսակցության մամուլի օրգանները ոգևորված ամբողջ հայ ժողովրդի քաղաքական միավորման մասին անիրագործելի երազներով, «Արձագանքի» գլխավորությամբ ամեն կերպ ձգտում են իրենց էջերը լայն բացել ազգային տենդենցների համար, մեկ՝ արևմտահայերի ճնշված վիճակին կարեկցելու, մեկ՝ նկուղեցական հարցերի քննարկման պատրվակով, կապված կաթողիկոսական աթոռի հետ, որին նրանք կցանկանային տալ նրան չպատկանող քաղաքական կենտրոնի նշանակություն։ Սակայն, գրաքննական դժվարությունների պատճառով զրկված լինելով այդ տենդենցներն անցկացնելու հնարավորությունից, հայ մամուլի վերը հիշված օրգանների խմբագրությունները իրենց հանցավոր նպատակներին հասնելու համար դիմում են այլ միջոցների»[26]։ Զեկուցագրի հեղինակներն այդ միջոցներից առաջինը համարում են Կ. Պոլսի պարբերականներին ուղարկած արևելահայ գործիչների թղթակցությունները, որոնց միջոցով նրանք արևմտահայերի մեջ իբր թե առելություն էին արթնացնում «Ռուսաստանի և այն ամենի դեմ, ինչ ռուսական է»։ Վերջին միտքը հաստատելու համար հիշվում է Ներսես Վարժապետյանի ընտրության հետ կապված բանավեճը ընտրական կարգի մասին և Ա. Հովհաննիսյանի թույլ տված քայլը՝ Ներսեսի

---

[25] Տե՛ս Ս. Աբեշյան, նշվ. աշխ., էջ 243։

[26] Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 607։

մահից հետո։ Այդ հանգամանքը, ասված է ղեկուցագրում, լիովին բնութագրում է այն կուսակցության ոգին և ուղղությունը, որի գլխավոր պարագլուխներից մեկն է համարվում «Արձագանք» թերթի խմբագիրը»[27]։ Սկսած 1883 թ. կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի և Դրաքննական կոմիտեի նախագահ Յակիմովի միջև եղած գրագրությունները նույնպես պատվում էին այդ հարցերի շուրջը։ Մի խումբ հայ մտավորականներ ձգտում են Փոքր Ասիայի հայերին ոտքի հանել թուրքական լծի դեմ, զգուշացնում էր Յակիմովին կառավարչապետը։ Նրանք փայփայում են ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանի քաղաքական անկախության և միասնության վերականգնման ծրագրերը... Այս միտքն էր հաստատում նաև Յակիմովը՝ Դոնդուկով-Կորսակովին ուղղված գրությամբ (թեև այդ ծրագրերը հոդվածներում բացահայտորեն չեն քարոզվում, բայց «դժվար չէ տեսնել լրագրության ձգտումը՝ պրոպագանդելու Հայաստանի վերականգնման անհրաժեշտությունը՝ իբրև մի անկախ, քաղաքական մարմին»)[28]։

Կովկասի հայ մամուլի և «Արձագանքի» ուղղության մասին ավելի մեծ իրազեկություն է ցուցաբերում Մամուլի գործերի գլխավոր վարչության պետը։ 1884-ի հոկտեմբերին Կովկասի իր ատորադրյալներին ուղղած գաղտնի մի գրության մեջ նա «Արձագանքը» բնութագրում է իբրև երիտասարդ հայերի կուսակցության գաղափարների արտահայտիչ, «որի ձգտումներն ինչպես հայտնի է կայանում են նրանում, որ օժանդակելով ազգի վերածնմանը, խանգարեն հայերի օրգանական ձուլմանը՝ համապետական էլեմենտի հետ»[29]։ Մասնավորապես կաթողիկոսական ընտրությունների հարցում «Արձագանքը» հակադրվում է ցարական կառավարության գործելակերպին, պնդում է Ֆեոկտիստովը և պահանջում զգուշացնել գրաքննիչներին, որպեսզի նրանք «առանձ-

---

[27] Մեր բանասիրությունը դեռևս չի ուսումնասիրել արևմտահայ թերթերի կովկասյան թղթակիցների ինքնության հարցը։ Բայց, ինչ էլ որ լինի, նրանց ուղարկած թղթակցություններում քննարկվում էին սոսկ կաթողիկոսական ընտրությունների կարգի հետ կապված հարցերը և, ամենաշատը, Աթոռի համար առաջադրվող թեկնածուի պետական հպատակության նպատակահարմարության խնդիրը։ Սա ոչ մի կերպ չի նշանակում, իհարկե, թե խոսելով Թուրքիայի հպատակ եպիսկոպոսի ընտրության օգտին, թղթակիցները «առելություն էին արթնացնում Ռուսաստանի դեմ»։ Դրաքննական կոմիտեի զգուշավորությունը չափազանցնելով հարցի քաղաքական նշանակությունը, պարզապես մեծացնում էր իր «ծառայության» դերը։

[28] ՎԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 574։

[29] Նույն տեղում։

նահատուկ շրջահայեցություն և զգուշություն ցուցաբերեն «Արձագանքի» և տեղական հայ մամուլի օրգանների նկատմամբ[30]։

Այս ամենի հետևանքով տարիներ շարունակ «Արձագանքի» խմբագրի աշխատանքները գտնվում էին Գրաքննական կոմիտեի ամենօրյա ուշադրության կենտրոնում։ Ծանոթանանք այդ «ուշադրության» արտահայտություններից մի քանիսին։ «Փորձի» 1879-ի առաջին համարում մի ամբողջ էջի վրա գրված է միմիայն մեկ նախադասություն. «Այս համարի քաղաքական տեսությունը չկարողացավ տպվել խմբագրությունից անկախ պատճառներով»։ Նույն թվականի երկրորդ համարի «Ազգային տեսության» տակ աղղարարված է. «Յավով սրտի հայտնում ենք, որ «Հայկական խնդիրը եվրոպական շահերի տեսակետից» վերնագրով հոդվածը լույս չտեսավ խմբագրությունից միանգամայն անկախ պատճառներով»։

«Արձագանքի» 1883 թ. հայտարարության մեջ նշված էր, թե առաջնորդողները նվիրված կլինեն ազգային և հասարակական կյանքի նշանավոր հարցերի քննությանը։ 1884-ի հայտարարության մեջ այդ կետի նոր խմբագրության հետևանքով (հավանաբար գրաքննիչի միջամտությամբ) ազգային բառը փոխարինված է ժողովրդական բառով։ 1888 թ. 8-րդ համարում «Արձագանքի» պատասխանները» բաժնում խմբագիրը Կ. Պոլսի թղթակից Վաղինակին է հասցեագրում հետևյալը. «Ձեր վերջին հետաքրքրելի թղթակցությունը, հակառակ մեր ցանկության, կմնա անտիպ»։ 1889-ի № 30-ում կրկին Վաղինակին հանձնարարելով գրել «վերջին դեպքերի մասին», խմբագրությունն ասես նեղողություն էր խնդրում. «Ձեր վերջին հետաքրքրական թղթակցությունը չկարողացանք տպել»։ 1888-ի 39-րդ համարում Շիրվանզադեի «Հաղբատ-Սանահին» ուղեգրությունների հերթական գլխի արգելման առիթով խմբագրությունը հայտնում է. «Մի քանի պատճառներով մեր աշխատակից պ. Շիրվանզադեի ճանապարհորդական նկատողությունների շարունակությունը չկարողացանք տպել»։ 1893-ին Ա. Հովհաննիսյանը Եղյանին գրած մի նամակում հայտնում է. «Ձեր առաջին հոդվածը ճարպկությամբ ազատեցի ցենզորից»։

Կասկածից վեր է, որ գրաքննական այս դժվարությունները նկատի ուներ Հովհաննիսյանը, երբ բանավիճելով «Մասիսի» խմբագրի հետ, գրում էր, թե անհնար է կատարյալ թերթ հրատարակել, որովհետև «մի

[30] Նույն տեղում։

շարք պայմաններ կան, որ «Մասիսի» նման մեզ քիչ ճանաչողներին հասկացնելը այստեղ դժվար է»[31]: Չնայած ստեղծված այս վիճակին, Ա. Հովհաննիսյանը չէր մտածում տեղի տալ: Ընդհակառակը, ինչպես երևում է «Արձագանքի» 1898-ի հայտարարությունից (որը վերջինը եղավ), նա ընտրել էր համառ պայքարի և դիմադրության ճանապարհը: Թեև Կ. Պոլսից ստացված բողոքագրությունների 100-ից 99-ը մերժվում է գրաքննության կողմից («մնում է անտիպ»), գրում է նա, «բայց խմբագրությունը ոչ մի ծախք չպիտի խնայի այդ բողոքագրությունները շարունակ ստանալու և հնար եղածին չափ տպագրելու»:

1894-ից հետո, երբ հայկական հարցը մտնում է նոր փուլ, գրաքննական խստությունները դառնում են հայ լրագրության ամենօրյա ուղեկիցները: Մենք տեսանք, որ Մամուլի գործերի գլխավոր վարչության և կառավարչապետության համատեղ ջանքերով օրն-օրին նորանոր միջոցառումներ էին մշակվում, որոնց պատճառով հայ խմբագիրները զրկվում էին ամենահրատապ հարցերը քննարկելու իրավունքից: Հովհաննիսյանը ծաղրում է Ռուսական հեռագրական գործակալության հանձնարարված հայ մամուլի խնամակալության ոչ բանական այդ սիստեմը, որը ոտնահարում էր մամուլի օրգանների աշխատանքի ամենատարրական սկզբունքները: «Այն ժամանակ, երբ մեզ ուրախ լուր է հաղորդում, թե Յորքի դքսուհին տղա է բերել»,— գրում է նա Ռուսական հեռագրական գործակալության մասին,— մայրաքաղաքի թերթերին հաղորդում է. «Գավառներից եկած լուրերին նայելով, հայոց գյուղերն բոլ առաջնոյն հրդեհվում և ավերածության են ենթարկվում: Գյուղացիք, մանավանդ Վանի վիլայեթում, սոսկալի կարոտություն են քաշում: Գյուղականների մեծամասնությունը քուրդերից ազատվելու համար լեռներումն են թաքնվում, մյուսները՝ տնից ու սննդից զրկված, թափառական կյանք են վարում»[32]: Այս շրջանում Հովհաննիսյանի բախումները Սուվորինի և Վևլիչկոյի հետ ավելի են բարդացնում նրա վիճակը: Հովհաննիսյանը պատեհ առիթներին չէր թաքցնում և իր ատելությունը Գուլիցինի նկատմամբ, որը 1897-ին արդեն լրջորեն խորհում էր «Արձագանքը» դադարեցնելու հարցի մասին:

1897 թ. նոյեմբերին մերժելով Հովհաննիսյանի դիմումը (գրաքննության կողմից արգելված մի հոդվածի վերաբերյալ), Գուլիցինը

---

[31] «Արձագանք», 1883, № 46:

[32] «Արձագանք», 1895, № 141:

միաժամանակ Գրաքննական կոմիտեի նախագահին հանձնարարում է ներկայացնել, «հանգամանալից զեկուցում. «Արձագանքի» ուղղության մասին առհասարակ»: Հարցն իր կուլմինացիային է հասնում դեկտեմբերին, երբ «Արձագանքի» խմբագիրը «Զանազան» բաժնում զետեղում է մի հաղորդում, իբր թարգմանված «Приазовский край» (Ռոստով) թերթից: Այդտեղ խոսվում էր Ռոստովի մասնավոր գիմնազիաներից մեկում հայերի արժանապատվությունը վիրավորելու փաստի մասին: Գրաքննությանը հայտնի է դառնում, որ դեպքը տեղի է ունեցել Թիֆլիսում. այդ հաղորդումը դիտվում է իբրև հանդգնություն և Գրաքննական օրենգրքի 154-րդ հոդվածի ծանոթության խախտում, որի ուժով կառավարչապետը «Արձագանքը» դադարեցնում է ութ ամսով: Գրաքննական կոմիտեին ուղղված 1898 թ. հունվարի 15-ի պաշտոնական գրության մեջ ասված էր. «Թիֆլիսում՝ ազնվական Աբգար Հովհաննիսյանի խմբագրությամբ հայերեն լեզվով հրատարակվող «Արձագանք» թերթի վնասակար ուղղության հետևանքով, որն արտահայտվել է այդ թերթում զետեղված և Գրաքննական կոմիտեի նախագահի ներկայացրած հոդվածներում[33], ու մասնավորապես անցած տարվա 140 համարում լույս տեսած «Մանկավարժ կուլտուրտրեգեր» հոդվածում[34], որտեղ Թիֆլիսի գիմնազիաներից մեկի ռուս ուսուցչի դեմ՝ սովորող երիտասարդության և հասարակության մեջ ազգային հողի վրա թշնամանք հարուցելու նպատակով, խիստ աղավաղված ձևով նկարագրված է այդ գիմնազիայում տեղի ունեցած մի դեպք, որը իրականում ոչ մի լուրջ նշանակություն չի ունեցել, ես, ինձ մոտ հրավիրված խորհրդի որոշման համաձայն և 1890 թ. Գրաքննության և տպագիր հրատարակությունների Կանոնադրության 154-րդ հոդվածի ծանոթության հիման վրա ութ ամսով դադարեցրի վերոհիշյալ թերթի հրատարակությունը, որի մասին տեղյակ եմ գարձնում Գրաքննական կոմիտեին՝ համապատասխան կարգադրությունների համար:

Սննատոր, գեներալ-ադյուտանտ, իշխան Գոլիցին»[35]:

Կարգադրությունները իսկույն արվում են: Հունվարի 16-ին կատարվածի մասին հատուկ գրություն է ուղարկվում Մամուլի գործերի

---

33 Պետք է ենթադրել, որ ի պատասխան Գոլիցինի նոյեմբերի 26-ի գրության՝ Գակկելն շտապել էր ներկայացնել ոչ միայն պահանջված «հանգամանալից զեկուցումը» «Արձագանքի» ուղղության մասին, այլև այդ թերթից քաղված հոդվածների մի ցանկ:

34 Հոդվածի իսկական վերնագիրն է՝ «Մի օրինակելի մանկավարժ-Kulturträgre»:

35 ՀԿՊՊԱ, ֆ. 480, գիրք Ա, գործ № 457:


գլխավոր կոմիտեն։ Նույն օրը Գրաքննական կոմիտեն է հրավիրվում Ա. Հովհաննիսյանը, որից պահանջում են «Արձագանքի» հատուկ համարի միջոցով հրապարակել կառավարչապետի հրամանը։ Հունվարի 18-ին լույս է տեսնում «Արձագանքի» վերջին, 6-րդ, մեկ էջանոց համարը, որտեղ հրապարակված էր թերթի դադարեցման վճիռը։ Հունվարի 22-ին Կոմիտեի նախագահը համապատասխան գրության հետ մեկտեղ կառավարչապետին է հղում «Արձագանքի» այդ համարը։

Ինչպես երևում է Վ. Փափազյանի ինքնակենսագրությունից, Հովհաննիսյանը հունվարից հետո, մինչև հունիս շարունակում է աշխատավարձ վճարել իր աշխատակիցներին, սպասելով պատժի ժամկետի լրանալուն։ Սակայն, մինչ այդ, մայիսի 29-ին կառավարչապետի գրասենյակից Գրաքննական կոմիտեի նախագահին հայտնում են, որ Մամուլի գործերի գլխավոր վարչության պետից ստացվել է հետագիր՝ «Արձագանքը» ընդմիշտ դադարեցնելու մասին։ Ս. Արեշյանն իր մենագրության մեջ հրապարակել է այդ որոշման բնագիրը, որտեղից պարզվում է, որ «Արձագանքը» ընդմիշտ դադարեցնելու լրացուցիչ այդ վճիռը կայացվել էր Գոլիցինի անձնական պնդումով[36]։ Սակայն ծանոթանանք «Արձագանքի» կենսագրության հետ կապված այդ ամենավերջին փաստաթղթին. «Ներքին գործոց և արդարադատության մինիստրները, ժողովուրդ լուսավորության մինիստրության կառավարիչը և սրբ. սինոդի ավագ դատախազը ս. Թ. ապրիլի 25-ի խորհրդակցությունում քննարկելով Թիֆլիսում հայերեն լեզվով հրատարակվող «Արձագանք» լրագրի վնասակար ուղղության հարցը, 1890-ին հրատարակված օրենսգրքի 14-րդ հատորի Գրաքննության և մամուլի կանոնագրության 148-րդ հոդվածի ծանոթության հիման վրա որոշեցին. Կովկասի քաղաքացիական կառավարչապետի ներկայացրած դեկույցի համաձայն՝ ընդմիշտ դադարեցնել «Արձագանք» լրագրի հրատարակությունը, դրա խմբագիր և հրատարակիչ ազնվական Աբգար Հովհաննիսյանին արգելելով հետագայում լինել որևէ պարբերական հրատարակության խմբագիր կամ հրատարակիչ»։ Սույն որոշումը Ներքին գործոց մինիստր Գորեմիկինը ներկայացնում է թագավորի հաստատմանը։ Որոշման բնագրի վրա արված Գորեմիկինի մակագրությունից երևում է, որ այն թագավորին է ներկայացվել Յարսկոյե Սելոյում, մայիսի 21-ին[37]։

---

[36] Ս. Արեշյան, նշվ., աշխ. էջ 458։

[37] Նույն տեղում։



Աբգար Հովհաննիսյանի դիմումը «Արձագանք»-ի հրատարակության իրավունքն ստանալու համար

Կովկասի Գրաքննական կոմիտեի նախագահին էր մնում փակել Աբգար Հովհաննիսյանի լրագրական 22-ամյա գործունեության պատմության վերջին էջը։ Հունիսի 1-ին լակոնիկ մի գրություամբ նրան հայտնվում է Պետերբուրգից ստացված վճիռը։ Համապատասխան մի գրություն է ուղարկվում և Թիֆլիսի տպարանների և գրքերի վաճառքի տեսչին, որպեսզի նա անհրաժեշտ կարգադրություն աներ տպարանատեր Մարտիրոսյանին[38]։ Հունիսի 4-ին Կոմիտեի նախագահը կատարվածի մասին զեկուցում է կառավարչապետին[39]։ Գոլիցինը հավանաբար բավարարված էր նախաձեռնած օպերացիայի ավարտով։ Իրականում, սակայն, տեւորի հավատարազոր այդ «օպերացիան» ճակատագրական դեր կատարեց Հովհաննիսյանի կյանքում։ Այդ օրերի նրա ապրումներին ականատես Ռուբեն Հովհաննիսյանը (հրապարակախոսի որդին), իր հուշերում գրում է, թե «Արձագանքի» փակվելու վիշտը իր հայրը համեմատում էր երկու որդիների կորստի պատճառած հարվածի հետ (որոնք վախճանվել էին մեկ շաբաթվա ընթացքում, 1889 թ.)։

Բարոյական այդ մեծամարտում կրած պարտությունից հետո Ա. Հովհաննիսյանն այլևս չի ապաքինվում։

***

XIX դարի վերջի Կովկասի գրաքննության մասին հնարավոր չէ խոսել, առանց հիշատակելու գրաքննիչ Ս. Մելիք-Մեհրաբովի անունը, որը շուրջ քսան տարի (և դրանից հետո) բաղում անախորժություններ է պատճառել հայ լրագրողներին։ Նրա մասին վրդովմունքով են արտահայտվել ժամանակի գրողները և լրագրողները։ Շիրվանզադեն Մելիք-Մեհրաբովին անվանում է «մտքի դահիճ», «անգութ ոոչնից», որը «չի կամենում, որ մեր լրագրության մեջ կենդանություն մնա»։ Աբ. Հովհաննիսյանն իր գործունեության տարիներին տևական ու հոգնատար պայքարի մեջ է եղել ցարական այդ աստիճանավորի հետ, որը կարծեք տառապում էր հայ գրական աշխարհում թշնամիների որոնելու մոլուցքով։ Գրողները, հրապարակախոսներն ու անգամ հայ հոգևորականները Մելիք-Մեհրաբովի զեկուցագրերում ներկայացվել են իբրև «հակապետական էլեմենտներ»։ Տարիներ շարունակ նա վերադաս պաշտոնա-

---

38 ՏԼ՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 480, ցիրք Ա, գործ № 457։

39 Նույն տեղում։

տար անձանց ձեկուցագրեր էր ներկայացնում այս կամ այն թերթի, այս կամ այն գործչի, գրական զանազան երևույթների մասին, միշտ և շարունակ պահանջելով դադարեցնել թերթը, պատժել խմբագրին, հրատարակչին, գրողին։ Գրաքննական կոմիտեն մի անգամ չէ, որ նրա ահազանգերի հետքերով քննարկել է հայ մշակութային կյանքի հետ կապված այլևայլ հարցեր։ Մելիք-Մեհրաբովը անվերապահ հեղինակություն էր, ուստի բոլոր վիճելի հարցերում կոմիտեն և կառավարչապետությունը հենվում էին նրա կազմած լրացուցիչ զեկուցագրերի վրա և իրենց հետևություններն ու դատավճիռները կազմում էին նրա ստահոդ պնդումների համաձայն։ Մամուլի գործերի դլխավոր վարչությանը ներկայացվող բացատրագրերը և զեկուցագրերը նույնպես կազմվում էին Մելիք-Մեհրաբովի մշակած սխեմաներով։

Սոլոմոն խան Մելիք-Մեհրաբովը[40] ժամանակին ավարտել էր Լազարյան ճեմարանը և Թիֆլիսում մտել պետական ծառայության մեջ։ 1872 թ. ավագ գրաքննիչ Կայմմազովի մահից հետո նա զբաղեցնում է տեղական և արևելյան լեզուների ավագ գրաքննիչի հաստիքը և այդ պաշտոնը վարում մինչև 1890-ի դեկտեմբերը։

Մի կողմ թողնելով արևելահայ և արևմտահայ թերթերի առիթով նրա կատարած քսությունների պատմությունը, որոնց հետևանքով տարբեր ժամանակներում Ռուսաստանում արգելվել կամ խիստ հսկողության տակ են վերցվել «Մասիս», «Արևելյան մամուլ», «Հայրենիք», «Իրավունք», «Արմենիա» պարբերականները և զանազան առիթներով պատասխանատվության են կանչվել Ս. Հախումյանը, Ս. Սպանդարյանը, Գ. Արծրունին, Պ. Սիմեոնյանը, համառոտակի հիշենք «շփման» այն կետերը, որոնք տխրահամբավ այդ գործչի անունը կապում են «Արձագանքի» հետ[41]։

Սկսած 1877 թ. ավագ գրաքննիչն ստուգում էր «Փորձի» և «Արձագանքի» համար ներկայացված նյութերը։ Նա առանձնահատուկ դաժանությամբ ջնջում էր հոդվածների ամենաէական հատվածները, մերժում առանձին նյութեր և զեկուցագրեր ուղղելով Գրաքննական կոմի-

---

[40] Իր ստորագրության մեջ նա սիրում էր բնդգծել խան տիտղոսը, որն ստացել էր նրա հայրը, Պարսկաստանում ծառայելու առթիվ։ Հայ գրողները նույնպես նրա մասին խոսելու ժամանակ առանց անունը տալու և ոչ առանց հեգնանքի՝ պարզապես նրան կոչում էին «խան»։

[41] Մ.—Մեհրաբովի մասին տե՛ս Մ. Մխիթարյան, Կովկասի Գրաքննական կոմիտեի նյութերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3։

տեի ղեկավարությանը, պահանջում էր դադարեցնել «Արձագանքը» իբրև քաղաքականապես անբարեհույս օրգան։

1884-ին, իբրև պետության ներկայացուցիչ, Մելիք-Մեհրաբովը մասնակցում է կաթողիկոսական ընտրություններին։ Նա ընտրություններից հետո շտապում է Պետերբուրգ և Ներքին գործերի մինիստր Տոլստոյի հետ ունեցած զրույցում իր գժգոհությունը հայտնելով արդյունքների համար, Աբ. Հովհաննիսյանին ներկայացնում է իբրև հակապետական օպոզիցիայի պարագլուխ։ Բայց լսենք իրեն, Մելիք-Մեհրաբովին. տարիներ անց դիմումներից մեկում նա իր գործունեության համար խիստ «նշանակալից» այդ զրվագը հետևյալ կերպ է ներկայացնում. «Արձագանք» թերթի խմբագիրը բացահայտ պաշտպանություն գտնելով Գրաքննական կոմիտեի նախագահի կողմից, Անդրկովկասում և դրա սահմաններից դուրս բացառիկ ճանաչում գտավ այն կատաղի ագիտացիայի շնորհիվ, որը տեղի ունեցավ նրա ղեկավարությամբ 1884 թ. կաթողիկոսական ընտրությունների օրերին։ Նրա հանդգնությունն այդ ընտրությունների ժամանակ սահման չէր ճանաչում»[42]։

Ներքին գործոց մինիստրը, լսելով Մելիք-Մեհրաբովի զեկուցումը, այլև ստանալով գրավոր զեկուցագիր, որում «ներկայացված էր ընտրական ագիտացիայի հանգամանալից պատկերը», ընդառաջում է նրան և «ի խրատ հայկական շարժումների պարագլուխների՝ թագավորից խնդրում է բեկանել կաթողիկոսական ընտրությունները», նրա ներկայացրած գրավոր զեկուցագրի տվյալների հիման վրա, «որոնք մատնանշում էին ընտրությունների ժամանակ Ռուսաստանի շահերի և օրենքների դեմ թույլ տրված խախտումները»[43]։ Եվ այսպես, թագավորը բեկանում է Ներսես Վարժապետյանի ընտրությունը, իսկ Ա. Հովհաննիսյանի դեմ գրված լրտեսագիրը շրջանառության մեջ է մտնում քաղաքական «բարձրագույն» ոլորտներում։

Չափից դուրս ինքնավստահ և անսանձ գրաքննիչը, շփացած «բարձրագույն ուշադրությունից», 1889—1890 թթ. քսություններ է սկսում Գրաքննական կոմիտեի նախագահ Յակիմովի դեմ, որը, նրա կարծիքով, հանդուրժում էր հայ հրապարակախոսների «հակապետական արարքները» կամ նրա իսկ բառերով ասած՝ «Գրաքննական կոմիտեի

---

[42] ՎԿՊՊԱ, ֆ. 12, ցիրք 8, գործ 2204։

[43] Նույն տեղում։

Նախագահը բացահայտորեն հովանավորում էր հայերի սեպարատիստական շարժումները»[44]: Նրանք ավելի հաճախակի են բախվում և դժվում են Աբ. Հովհաննիսյանի առիթով:

1890-ի սկզբին Ա. Հովհաննիսյանը կոմիտեի հաստատմանն է ներկայացնում պատկերազարդ «Արձագանքի» մի նոր գլխանկարը, որը Մելիք-Մեհրաբովն իսկույն մերժում է դրա «հակապետական բովանդակության համար»: Յակիմովը միջամտում է գործին և կարգադրում մի փոքրիկ շտկումից հետո գլխանկարը թույլ տալ տպագրության: Հայ գրաքննիչը կոմիտեի նիստում պնդում է իր առարկությունը և հայտնում, թե նկարը խորհրդանշում է Հայաստանի քաղաքական վերածննդությունը ռուս-թուրքական տերիտորիայի վրա[45]:

Ի դեպ, մի այլ նամակում այս մասին նա գրում է, թե թույլատրել այդ գլխանկարը, կնշանակեր օգնել Աբ. Հովհաննիսյանին՝ իրականացնել իր մտադրությունը, այն է, ամեն կիրակի շաբաթաթերթի ընթերցողներին հիշեցնել հայերի քաղաքական վերածննդի մասին, այն էլ ռուսական տերիտորիայի հաշվին, որտեղից հայերին պետք է կոչ արվեր ոտքի ելնել ընդհանուր գործի համար: Այդ վատ օրինակ կծառայեր երկրի մյուս ազգությունների համար և կվնասեր Ռուսաստանի խաղաղությանն ու պետական շահերին, գրում է Մելիք-Մեհրաբովը[46]: Յակիմովն զգուշանալով այս ձևակերպումներից, Ա. Հովհաննիսյանին խնդրում է հրաժարվել գլխանկարը տպագրելու մտքից:

1890-ի դեկտեմբերին Յակիմովին հաջողվում է ավազ գրաքննիչին ազատել տալ գրաված պաշտոնից և հեռացնել Կովկասի սահմաններից: Մելիք-Մեհրաբովն աշխատանքի է անցնում Պետերբուրգի «Свет» թերթի խմբագրությունում, բայց չի դադարեցնում իր տենդագին գործունեությունը: Պետերբուրգից նա շարունակում է հետևել Կովկասի հայ և վրացական մամուլի աշխատանքներին և պարբերաբար լրտեսագրեր է գրում Կովկասի լրագրողների մասին: Այդ տարիներին

---

[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում:

[46] Այստեղ պատկերված էր մի հայուհի, որը հայկական բնանկարի ֆոնի վրա նստած է, աջ ձեռքում բռնած մի գրություն, իսկ ձախը՝ մոտեցրած ականջին: Նա սպասողական վիճակում է: Մելիք-Մեհրաբովի մեկնաբանությամբ կինը ձեռքին բռնել է 61-րդ հոդվածի բնագիրը և ականջը ձայնի՝ հուսով լուրեր է սպասում Կոստանդնուպոլսից: Ռուսական հողը, որտեղ նստած է կինը, միացված է ապագա անկախ Հայաստանին, դատում է գրաքննիչը (տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 12, ցիրք 8, գործ 470):

նա երբեմնապես թղթակցում է նաև «Новое время» և «Гражданин» ռեակցիոն թերթերին, որոնց էջերում քննարկում է հայկական հարցի հետ կապված խնդիրները՝ իր հայեցակետից[47]։

1898 թ., երբ Գոլիցինը ութ ամսով փակում է «Արձագանքը», Մելիք-Մեհրաբովը Պետերբուրգում շտապում է ողջունել նրա այդ «արտակարգ միջոցառումը»։ Նա այնուհետև, օգտվելով հարմար առիթից, խոսում է այդ թերթի «վնասակար ուղղության» մասին և զեկուցում նոր կառավարչապետին. «Արձագանքը» «շատ տարիների ընթացքում անպատիժ կերպով Կովկասում գլխավորում էր սեպարատիստական շարժումները, չնայած այդ հարցի մասին իմ արած բազմաթիվ պաշտոնական հայտարարություններին, որոնք մնում էին ձայն բարբառոյ հանապատի»[48]։

Թիֆլիսում ծանոթանալով Մելիք-Մեհրաբովի անձնական գործին, Գոլիցինը, ճիշտ է, գերագասում է իրեն հետու պահել ստոր չինովնիկի վտանգավոր հարևանությունից և մերժում է նրա բազմաթիվ դիմումները՝ Կովկասում պաշտոն ստանալու վերաբերյալ, բայց նրա մատնություններից, պետք է ենթադրել, չի խորշում օգտվել։ Նախկին հայ դրաքննիչի ընձեռած փաստերով զինված, Գոլիցինն ավելի վստահորեն է դիմում Ներքին գործոց մինիստրին՝ «Արձագանքը» վերջնականապես փակել տալու պահանջով։

Հայ պարբերականների դրաքննության հետ կապված արխիվային փաստաթղթերն անգնահատելի ծառայություն են մատուցում մեր լրագրության պատմության ստեղծման գործին։ Այդ ծառայությունը մեծ կշիռ է ձեռք բերում մանավանդ այն պատճառով, որ մեր պարբերականների արխիվները չեն պահպանվել։ Կովկասի դրաքննական կոմիտեի արխիվի նյութերը հնարավորություն են տալիս ոչ միայն ինչ-որ չափով վերականգնելու հայ մամուլի առանձին օրգանների պատմությունը, այլև տեսանելի են դարձնում քաղաքական այն մթնոլորտը, որում գործել ու պայքարել են անցյալի հայ լրագրողները։

---

[47] ՎԿՊՊԱ, ֆոնդ 480, ցիրք Ա, գործ 1273 և ֆոնդ 12, ցիրք 8, գործ 470։

[48] Նույն տեղում, ֆոնդ 12, ցիրք 8, գործ 2294։

ԴԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ԽՄԲԱԳԻՐ

Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Աբ. Հովհաննիսյանն ապրեց հրապարակախոսի և հասարակական գործչի բուռն կյանքով։ Ամբողջ քառորդ դար նա մասնակից էր հայ հասարակական և մշակութային կյանքի գրեթե բոլոր հարցերի քննարկումներին։ Իր պարբերականներով նա հարստացրեց ժողովրդի հոգևոր կյանքը, նրա մեջ զորացրեց ազգային ինքնաճանաչության ոգին։ Ժամանակակիցները բարձր էին գնահատում հայ խմբագրի վաստակը, գիտակցում նրա անուրանալի արժանիքները։

«Ո՞վ էր Հովհաննիսյանը» հարցին նրա ժամանակակիցներից Գյուտ Ազանյանը պատասխանում է. Հովհաննիսյանը «տաղանդավոր խմբագիր էր, փայլուն հռետոր և բազմակողմանի հասարակական գործիչ»[1]։ Ռ. Պատկանյանը «Փորձի» հիմնադրին համեմատում է 40-ական թթ. ռուս «արևմտյան» գործիչ Ստանկևիչի հետ, որը մեծապես օժանդակում էր երիտասարդ տաղանդներին (Բելինսկի, Գրանովսկի և ուրիշներ)։ Հովհաննիսյանի մասին, սակայն, առ այսօր չի գրվել որևէ ուսումնասիրություն։ Նրա մահվան առիթով «Լումա» հանդեսում հրապարակված հոդվածը, որքան էլ փաստառատ, խմբագրության խոստովանությամբ՝ միայն «հում նյութ էր» ապագա քննադատի «անկողմնապահ ուսումնասիրության համար»։ Թեև այդ ուսումնասիրությունը չի գրվել, բայց Հովհաննիսյան-խմբագրի և հասարակական գործչի մասին

---

[1] Տե՛ս «Լումա», 1904, № 2, էջ 5։

մի շարք հեղինակներ արտահայտվել են իրենց հուշագրություններում և նամակներում։

Հովհաննիսյան — գործչի և քաղաքացու մասին հետաքրքրական հուշեր են թողել հայ գրողներ Պռոշյանը, Շիրվանզադեն, Փափազյանը և ուրիշներ։ Սակայն չենք կարող անտեսել այն, որ Պռոշյանը, Շիրվանզադեն, մասամբ և Աղայանը բարձր գնահատելով հանդերձ Հովհաննիսյանին, միաժամանակ իրենց հուշագրություններում թողել են և արտահայտություններ, որոնք Հովհաննիսյանին վերագրելով նեղ անձնականության գծեր, բավական նսեմացնում են նրա դերը, իբրև գործչի։ Լեոն՝ Արծրունուն նվիրված իր մենագրության մեջ ընդգծված անփութությամբ է խոսում նրա հրապարակախոսական վաստակի մասին, դրանով իսկ ապակողմնորոշելով ապագա բանասերներին։

Որտե՞ղ պետք էր փնտրել ճշմարտությունը։

Մեր ձեռքի տակ են ամենախոսուն փաստաթղթերը՝ «Փորձի» և «Արձագանքի» հավաքածուները, որոնք ծանոթացնում են Հովհաննիսյան-խմբագրի և հրապարակախոսի տարիների տքնաջան աշխատանքին։ Գրաքննական արխիվներում պահված փաստաթղթերը վեր են հանում հայ լրագրողի ամենօրյա պայքարի պատմությունը՝ ներքին գործոց մինիստրության տնօրինության տակ դտնված այդ հիմնարկի չինովնիկության հետ։ Հայ բանասիրությանը մատչելի են դարձել գրական գործիչների արխիվներում պահվող և մինչ այժմ չհրապարակված բազմաթիվ նամակներ, որոնց հանդամանալից ուսումնասիրությունը բարձրացնում է ժամանակի վարագույրը և տեսանելի դարձնում անցյալ դարի վերջին քառորդի պատմական իրադարձությունները, որոնց մասնակիցն էր Աբ. Հովհաննիսյանը։

Ի վերջո լրագրային բանավեճերի մանրազնին ուսումնասիրությունը մեզ ծանոթացնում է հայ գործիչների դժվարին կյանքի բազմաթիվ պահերի հետ։ Այդ պահերը, որ անձնական և հասարակական բազմապիսի հարցերի հետ էին առնչվում, նրանց հանել են հավասարակշռությունից, ի հայտ բերել նրանց մարդկային թուլությունները, տարբեր խառնվածքներին հատուկ անձնական, երբեմն ոչ դրվատելի, գծերը, լրագրողի գոյության պայքարում նրանց հուսահատական ճիգերը՝ պահպանելու թերթը և իրենց արժանապատվությունը։

Բոլոր հայ հրապարակախոսները, այդ թվում և Աբ. Հովհաննիսյանը, այս պայքարում ունեցել են վրիպումներ, դատապարտելի սայթաքումներ, դրսևորել են նեղմտության, երբեմն նույնիսկ անզոր

շարության արտահայտություններ, որոնք երևան են եկել գերազանցապես նրանց բանավիճային ելույթներում։

Սակայն մի՞թե այդ է եղել բնորոշը հայ հրապարակախոսների տասնամյակների գործունեության մեջ, որը նրանք անվերապահորեն նվիրել են իրենց ժողովրդի առաջընթացին։ Մենք հետու ենք հայ հրապարակախոսի կյանքը և գործը դունազարդելու գայթակղությունից, բայց քանի որ ուսումնասիրում ենք «Փորձ» և «Արձագանք» պարբերականների պատմությունը, պարտավոր ենք օբյեկտիվորեն քննել դրանց խմբագրի մասին գրված կարծիքների դրդապատճառները և նրան գնահատել մեկ չափանիշով — հայ հասարակությանը մատուցած նրա ծառայությունների չափով։

Ղազարոս Աղայանի հիշողությունները կապված են «Փորձի» հրատարակության սկզբնական շրջանի հետ։ Նա 1876-ին հրավիրվում է աշխատելու «Փորձի» խմբագրատանը, իբրև քարտուղար և սրբագրիչ։ Թեև խմբագիրը Աղայանի համար պայմաններ է ստեղծում նաև գրական աշխատանքով զբաղվելու, նա գրեթե ոչինչ չի գրում և մեկ ու կես տարի անց հեռանում է։ Նրա հուշագրություններից պետք է ենթադրել, որ Աղայանը չի կարողացել ընդհանուր լեզու գտնել «Փորձի» աշխատակիցներ Պալասանյանի, Բարխուդարյանի և Եվանգուլյանի հետ (որին, ի դեպ, անվանում է «Փորձաքննիչ-մենատր») և ընդհարվել է նրանց հետ. «Որքան սիրելի էր ինձ համար Աբգարը,— գրում է նա,— որ ամենայն հոգվով աշխատում էր ինձ սիրաշահած պահել, ոչինչ չէր խնայում, ոչ փող և ոչ պատիվ, բայց այդ շրջանն ինձ համար ատելի և անտանելի էր, մանավանդ աշխատակիցներից մի քանիսը, որոնք տղրուկի պես ծծում էին Աբգարին և միևնույն ժամանակ շարունակ իմ տակը փորում»[2]։

Խոստովանելով հանդերձ «Փորձի» խմբագրի բարյացակամությունն իր նկատմամբ, Աղայանն իր հուշերում թերագնահատում է նրա գրական կարողությունները և խմբագրական աշխատանքի ոճը։ Հետագայում գժավելով Բաֆֆու հետ, նա միաժամանակ թշնամանում է և Հովհաննիսյանին։ Բանն այն էր, որ Աղայանի դեմ գրած իր բանաստեղծությունները Բաֆֆին հրապարակում էր «Արձագանքի» էջերում, անուղղակիորեն ընդդծելով և խմբագրի դիրքն այդ պայքարում։ Այնուհետև տեղի է ունենում Աղայանի և Արծրունու հաշտությունը, որը

---

[2] Ղ. Աղայան, Երկեր, հատ. Գ, 1940, էջ 159—164։

ծաղրում է Ա. Հովհաննիսյանը։ Սրան հաջորդում է «Արձագանքի» խմբագրի դեմ Տիգրան Նազարյանի կազմած մեղադրական հոդվածի տպագրությունը, որը գրվել էր Աղայանի դրդումով և որն էլ առիթ է դառնում երկու գործիչների փոխհարաբերությունների վերջնական խզման։ Որ Աղայանն օբյեկտիվ չէր բանավեճում, հետևապես և իր գնահատականներում, այդ հաստատում է Շիրվանզադեն։ Նա գրում է. «Ղազարոս Աղայանը «Տարազ» շաբաթաթերթի մեջ գրել էր մի անստորագիր հոդված, որով նա Աբգար Հովհաննիսյանի վրա բարդում էր տասնևինը զանազան մեղադրանքներ։ Դա ժամանակի ոգին էր՝ գաղափարական վեճը միշտ վեր ածել անձնականի և աշխատել հակառակորդին ամեն կերպ անվանարկել, մեղադրելով նրան չկատարած հանցանքների մեջ։ Այդ տեսակետից Ղազարոս Աղայանը մանավանդ չափ ու սահման չէր ճանաչում»[3]։

Աբ. Հովհաննիսյանի մասին առավել հանդամանալից են Պերճ Պռոշյանի թողած հուշերը։ «Փորձը» հիմնադրելուց անմիջապես հետո Հովհաննիսյանը Աղայանի միջոցով նամակ է հղում Պռոշյանին, որն այդ օրերին աշխատում էր Աստրախանում։ Գրական աշխատանքը նա վաղուց էր թողել և Ա. Հովհաննիսյանի նամակը, Պռոշյանի խոստովանությամբ, կատարում է այն յուղի դերը, որը բոցավառում է նրա՝ «շիջանելուն մոտ լապտերը»։ Հովհաննիսյանը գրական ասպարեզից հեռացած «Սոս և վարդիթերի» հեղինակից պահանջում է կենդանանալ և արդարացնել իրեն՝ հասարակության դատարանի առաջ։ «Մոտ երկու տասնյակ տարի հայ գրականության ասպարեզից փախուստ տալ, նրբելի չէ խաչատուր Աբովյանի հարազատ աշակերտին,— գրում էր նա։— «Փորձ»-ի էջերը լայն բաց է առաջիդ, բարձր վարձատրությունը՝ թերթին քսան ռուբլին կանխորեն որոշած է քեզ համար»։ Պռոշյանը նույն գիշերն իսկ սկսում է «Կռվածադիկ» վեպը, որի առաջին 7 գլուխներն ուղարկում է Հովհաննիսյանին։ Այս անգամ արդեն սեփական ձեռքով, «Փորձի» խմբագիրը գրում է. «Եթե սխալվես (հասկացիր՝ հիմարանաս) և դադար առնես ու չշարունակես, ես այսքանը կտպագրեմ «Փորձի» մեջ՝ հայ գրագետների անողոք մեղադրականը վրադ թափելու և քեզ ծուլությանդ համար դատապարտելու անզուսպ վրեժխնդրությամբ»[4]։ Հով-

---

3 Շիրվանզադե, երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1951, էջ 148։

4 «Տարազ», 1904, № 16։

Հանինիսյանը Պռոշյանին Թիֆլիս է հրավիրում. ուսումնական տարին փակելուց հետո Պռոշյանը թողնում է Ասատրխանը. «Առաջին երկոքին Թիֆլիս և երկրորդ առավոտ «Փորձի» խմբագրատան պաշտոնյա», հիշում է Պռոշյանը։ Այնուհետև արդեն «Փորձի» էջերում տպագրվում են նրա երեք վեպերը։ «Մեռածը կենդանացավ»՝ սեփական վերածնությունը խորհրդանշող այս խոսքերով է Պռոշյանն ավարտում իր հուշերը, որ նա գրել է Ա. Հովհաննիսյանի մահվան առիթով[5]։

Ավելի վաղ Հովհաննիսյանի մասին Պռոշյանը կրկին ջերմ տողեր էր գրել իր «Հուշերում»։ Աբգար Հովհաննիսյանը փակ լսդուս բացեց, խոստովանում է նա և նշում այն փաստը, որ անդամ իր՝ Երևանում աշխատանքի անցած տարիներին, Հովհաննիսյանը նրան համարում էր «Փորձի» մշտական աշխատակիցը և տարեկան մեկ վեպ էր պահանջում ամսագրի համար։ «Փորձի» դադարի առիթով Պռոշյանն արձանագրում է. «Ամոթ մեր անընթերցասիրությանը, «Փորձի» նման հանդիսին չօժանդակեցինք, Աբգար Հովհաննիսյանի նման անձնվեր հրատարակչի ի խորս սրտե մեր գրականությունը ծաղկեցնելու և ընթերցասիրությունը տարածելու ունեցած մեծ փորձը չգնահատեցինք. և նա ստիպվեցավ «Փորձի» դեֆիցիտները մի-մի գերանների նման ցցելու մեր տհասության առաջին։ Բայց պատի՛վ քեզ, Աբգար, հայոց անտարբերությունը չկարողացավ խլացու քեզ վհատեցնել, «Արձագանքդ» յուր բովանդակությամբ այսօր մեզ ամաչցնելով հանդերձ՝ մի խոշոր դիրք է բռնել հայ պարբերական թերթերի շարքում։

Ա՛խ, ինչ կլիներ քեզ նման շատերն ունենայինք»[6]։

Պ. Պռոշյանը, սակայն, իր հուշերում անդրադառնում է և իրենց գժտությանը, կապված Արծրունու հոբելյանի հետ։ Երբ Ջմշկյանը մամուլի էջերում հիշելով «Մշակի» հիմնադրման ժամանակները, վիճարկում է Արծրունու այն հայտարարությունը, թե իրր ժամանակին նա մենակ է սկսել գործը, Հովհաննիսյանը առաջարկում է Պռոշյանին՝ հանդես գալ Ջմշկյանի թեզը հաստատող մի հոդվածով։ Պռոշյանը նախ տատանվում է, որովհետև Ջմշկյանի հոդվածում նույնպես անճշտություններ կային, ապա վճռում է այդպիսի հոդված չգրել (քանի որ վախենում էր Արծրունու վրեժխնդրությունից)։ Հովհաննիսյանը պնդում է իր պահանջը և երբ համոզվում է, որ Պռոշյանը չի կատարում այն,

---

5 Նույն տեղում։

6 Պ. Պռոշյան, Հուշեր, 1940, էջ 118—119։

մի նամակ ուղղելով իր աշխատակցին՝ նրան հասկացնում է, թե մերժումը կարող է վատ ազդել նրա մանկավարժական և գրական դիրքի վրա (Հովհաննիսյանը Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներից էր)։ Թեև Ա. Հովհաննիսյանը չի էլ մտածում այդ սպառնալիքն իրականացնել, բայց Պռոշյանը ստեղծված վիճակով սաստիկ մտահոգ՝ այդ օրերին իր օրագրում հայհոյում է և՛ Հովհաննիսյանին և՛ Արծրունուն, որոնց ղոհն էր համարում իրեն։ Փաստերը ցույց են տալիս, որ Պռոշյանի հուշերում առկա անբարյացակամության տողերը գրված են Արծրունու հոբելյանի հետ կապված միջադեպի անմիջական տպավորության տակ։ Ինչ վերաբերում է Հովհաննիսյան-գործչի գնահատականին, ապա Պռոշյանն այն տվել է բավականաչափ օբյեկտիվորեն, թե՛ իր հուշերում, թե՛ Հովհաննիսյանի մահվան առիթով գրած հոդվածում։

Աբ. Հովհաննիսյանի մասին թերևս միակ ամբողջական հուշերը գրել է Ալ. Շիրվանզադեն։ 1884-ի սեպտեմբերին, «Մշակի» ժամանակավոր դադարից հետո Շիրվանզադեն մնում է անգործ։ Ա. Հովհաննիսյանը նրան գրական աշխատանք է հանձնարարում՝ տողին 3 կոպեկ վարձատրությամբ։ 1885-ին Շիրվանզադեն շարունակում է աշխատակցել «Արձագանքին», նյութական օգնություն է ստանում Հովհաննիսյանից, իր նամակներում բարձր գնահատում նրա գրական, հասարակական գործունեությունը (Աբգար Հովհաննիսյանը «միակ մարդն է այսօր, որ կարող է համարձակ նայել օտարների երեսին»)[7]։ 1886 թ. Շիրվանզադեն դառնում է «Արձագանքի» գլխավոր աշխատակիցը և բարեուղարը։

Երբ 1886-ին Արծրունին վերսկսում է «Մշակի» հրատարակությունը և հրավիրում Շիրվանզադեին, վերջինս հրաժարվում է, որովհետև, ինչպես ինքն է գրում, նախ հիասթափված էր Արծրունուց մինչև նրա արտասահման մեկնելը, և ապա այն համոզմունքն ուներ, թե «ի՜նչ տարբերություն Արծրունու և Աբգար Հովհաննիսյանի միջև»։ Այդ առիթով Բաֆֆին նրան ասում է. «Շատ լավ եք անում, որ չեք ընդունում Արծրունու առաջարկը. ես տասներկու տարի աշխատակցեցի այդ մարդուն, ի՞նչ շահեցի, բացի նեղվերս քայքայելուց»։ Շիրվանզադեն նույնպես մնում է «Արձագանքում»։ Ա. Հովհաննիսյանը Բաֆֆուն և Շիրվանզադեին վճարում էր բարձր հոնորար, այն դեպքում, երբ Շիրվանզադեն

---

[7] Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 602, 608, 609։

«Մշակին» չորս տարի աշխատակցելով ոչ մի կոպեկ վարձ չէր ստացել, երբ, ինչպես գրում է նա, Արծրունին Րաֆֆուն բանավիճային հոդվածների համար չէր վճարում ասելով, թե դրանք հոդվածներ չեն, այլ ինքնապաշտպանական նյութեր»[8]։

Հետադարձ հայացք գցելով այդ օրերի իր կյանքի վրա, Շիրվանզադեն բողոքում է Հովհաննիսյանից՝ գրական աշխատակիցներին շահագործելու համար։ Տասնամյակների հեռավորությունից նա Րաֆֆուն է վերագրում հետևյալ միտքը. «Գրիգոր Արծրունի և Աբգար Հովհաննիսյան միևնույն խմորից են թխված։ Երկուսն էլ հղփացած բուրժուաներ են՝ հարստահարիչների մթնոլորտում սնված ու մեծացած։ Նրանց համար մենք՝ մտքի մշակներս ուրիշ ոչինչ ենք, եթե ոչ շահագործման նյութ։ Համբերեցեք, ես հույս ունեմ, վերջապես թույլտվություն ստանալ մի ղուտ գրական ամսագիր հրատարակելու, այն ժամանակ մենք կունենանք մեր օրգանը»[9]։

Անտարակույս այնպիսի գրողների համար, ինչպիսիք էին Շիրվանզադեն և Րաֆֆին, խմբագրական աշխատանքի հետ կապված պայմանականությունները (լինեն դրանք «Մշակի» թե «Արձագանքի» խմբագրատանը), կաշկանդիչ գործոններ էին։ Րաֆֆին իր երիտասարդական տարիների ավյունն սպառել էր «Մշակի», իսկ Շիրվանզադեն՝ «Մշակի» և «Արձագանքի» խմբագրական աշխատանքի մեջ. իրողություն, որ նրանք միայն ցավով կարող էին հիշել։ Այս պարագաներում, անշուշտ, հասկանալի է Րաֆֆու ցանկությունը՝ սեփական, ղուտ գրական հանդես ունենալու մասին[10]։

Այդուհանդերձ, «հղփացած բուրժուաների» մասին վերը հիշված հայտարարության հավաստիությանը մենք մոտենում ենք վերապահությամբ, քանի որ ձեռքի տակ ունենք նույն Շիրվանզադեի նաև այլ վկայությունները։ Այսպես, իր հուշագրությունների այդ հատվածը գրելուց քառասուն տարի առաջ, 1889-ին, երբ Րաֆֆու մահից հետո Արծրունին տպագրում է նրա «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածը, Շիրվանզադեն մամուլի էջերում վրդովմունք է հայտնում այն

---

8 Նույն տեղում, հատ. 8, Երևան, 1951, էջ 114, 126, 182։

9 Նույն տեղում, էջ 144։

10 Որ Րաֆֆին երազել է ունենալ իր հանդեսը, այդ հաստատում է և Փ. Վարդանյանը։ Վերջինս իր հուշերում պատմում է, որ կյանքի վերջին շրջանում Րաֆֆին նրան «անդադար առաջարկում էր» միասին մի ամսագիր հրատարակել (տե՛ս «Արձագանք», 1892, № 34)։

առիթով, որ Արծրունին հոդվածից ջնջել էր Բաֆֆու այն միտքը, ըստ որի նա խոստանում էր «մի առանձին հոդվածով խոսել, թե «Փորձը» և «Արձագանքը» որքան են նպաստել ռուսահայ վիպագրությանը»[11]:

Մեր տպավորությամբ Շիրվանզադեն «Կյանքի բովից» հուշագրություններում պարզապես անփութորեն շրջանառության մեջ է դրել հայ գրողի՝ դառնության պահին ասած մի արտահայտությունը, որը, սակայն, բնորոշ չէ այն ընդհանուր գնահատականներին, որոնք տվել է Շիրվանզադեն Հովհաննիսյանի գործունեությանը թե՛ իր մեմուարներում և թե այլ առիթներով: Իր հուշագրություններում նա առանձնապես ընդգծում է Հովհաննիսյանի վաստակը հայ գրականությանն օժանդակելու գործում: «Հյուսիսափայլից» հետո նա «լավագույն հայ գրական գիտական ամսագրի՝ «Փորձի» հիմքը դրեց, թեև չունեցավ ոչ մի մասնակցություն նրա մեջ,— գրում է Շիրվանզադեն:— Վերջապես, նա էր, որ ասպարեզ տվեց Պերճ Պռոշյանի, Գաբրիել Սունդուկյանցի և Գամառ Քաթիպայի գրիչներին և, ընդհատելով Բաֆֆիի լռությունը, խրախուսեց նրան գրելու իր լավագույն երկը՝ «Սամվելը»: Մի՞թե այդ քիչ բան է»[12]:

Շիրվանզադեի հաջորդ կարծիքին մենք ծանոթանում ենք նրա մի ձեռագրի պատառիկներից, որոնք պահվում են Գյուտ քահանա Աղանյանի արխիվում և ունեն 19—20 և 23 էջային համարակալումները[13]:

Այդ պատառիկները, սակայն, կապված են մի առեղծվածային պատմության հետ: Շիրվանզադեի ձեռագրի հիշյալ հատվածները գրեթե ամբողջությամբ օգտագործված են «Լումա» հանդեսում տպագրված «Աբգար Հովհաննիսյան» հոդվածում (1904 թ., № 2): Օրինական հարց է ծագում. ո՞վ է այդ անստորագիր հոդվածի հեղինակը. Շիրվանզադե՞ն, թե խմբագիր Գյուտ Աղանյանը: Մեր կարծիքով Աբգար Հովհաննիսյանի մահից հետո Գյուտ Աղանյանը Շիրվանզադեին հանձնարարել է խմբագրական հոդված պատրաստել Հովհաննիսյանի մասին[14]: Շիրվանզադեն հավանաբար գրել է ամբողջ հոդվածը (այդ է վկայում միատիպ թղթերի վրա գրված 19—20 և 23 էջերի առկայությունը), որը Աղանյանը խմբագրել և իր հավելումներով, առանց ստորագրության,

---

11 «Արձագանք», 1889, № 4:

12 Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, էջ 151:

13 ԳԱՔ, Գյուտ Աղանյանի ֆոնդ, վավ. 165:

14 Շիրվանզադեն «Լումայի» գրական աշխատակիցն էր 1903—1905 թթ.:

տպագրել է «Լումայում»[15]։ Տվյալ դեպքում մեզ համար էական նշանակություն է ստանում այն փաստը, որ «Լումայում» տպագրված հոդվածի սկզբնօրինակը անվերապահորեն պատկանել է Շիրվանզադեի գրչին։ Այդ հաստատվում է և այն իրողությամբ, որ ձեռագրի հատվածներում արտահայտված մի շարք մտքեր Շիրվանզադեն հետագայում օգտագործել է իր մեմուարների՝ Աբգար Հովհաննիսյանին նվիրված գլխում[16]։

Ամբողջությամբ մեջ ենք բերում վերոհիշյալ ձեռագիրը, որտեղ, մեր կարծիքով, Շիրվանզադեն շատ ավելի օբյեկտիվ է և անմիջական։

էջ 19—20. «Նույն իսկ խմբագրի այդ ժամանակամիջոցի գրականական գործունեությունը քննադատել։ Անկողմնապահ դատավոր լինելու համար պետք է գործից հեռու լինել։ Իսկ մենք «Արձագանքի» հրատարակության առաջին օրից եղել ենք թերթի և նրա խմբագրի մերձավոր բարեկամը։ Քննադատի պաշտոնն այս դեպքում հանձնելով մեզանից ավելի ձեռնհասներին, որոնց առաջ բաց են «Լումայի» էջերը, այսքանը կասենք, որ «Արձագանքի» կատարած դերը ռուսահայերի մտավոր կյանքում պիտի բռնի մեր պատմության լավագույն էջերից մեկը։ Բավական է հիշել այն ազդեցությունը, որ ունի «Արձագանք» շաբաթաթերթը հայ հասարակության վրա։ Այդ միջոցներին առանց «Արձագանքի» և առանց նրա խմբագրի անմիջական մասնակցության ոչ մի քիչ թե շատ կարևոր խնդիր մեր հասարակական կյանքին վերաբերյալ չէր քննվում և չէր վճռվում։ Կաթողիկոսական ընտրություններ, եկեղեցական վեճեր, Թիֆլիսի հայ հիմնարկություններին վերաբերյալ հարցեր, այս բոլորը շունչ և կենդանություն էին ստանում «Արձագանքի» խմբագրից։ Նա էր բոլոր ընտրությունների, վեճերի, վիճաբանությունների կենտրոնն ու պարագլուխը։

Եվ նա էլ մեծ մասամբ հաջողացրեց Ներսես Վարժապետյանի

---

15 Նման հավելումներից պետք է համարել հոդվածի մուտքը, Աբգար Հովհաննիսյանի հետ ունեցած անձնական բարեկամության մի շարք փաստերի շարադրանքը, հրապարակախոսի գործունեության մանրամասների լավատեղյակությունը հավաստող հատվածները։

16 Հետաքրքրական է նշել, որ Շիրվանզադեի երկերի հրատարակիչ Հր. Թամրազյանը՝ «Աբգար Հովհաննիսյան» հոդվածը անվերապահորեն համարելով Շիրվանզադեի գրչի արգասիքը, այն դնելով է նրա երկերի ժողովածուում (տե՛ս Շիրվանզադե, երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1961, էջ 469—486)։

ընտրությունը կաթողիկոսական գահի համար։ Մի ընտրություն, որ ազգի մեծամասնության փափագն էր։

«Փորձում»[17] Աբգար Հովհաննիսյանը կատարում էր գրեթե բացառապես խմբագրողի դեր։ Քննում էր, քննադատում էր և ուղղում ամսագրի մեջ տպվող երկերը։ Իբրև գրականական ընտիր ճաշակի տեր, նա ցուցմունքներ էր անում հեղինակներին և շեշտում նրանց երկերի գեղարվեստական թերությունները։ Նա էսթետիկ էր և գիտեր ըմբռնել իրան ներկայացրած վեպերի, բանաստեղծությունների մեջ գեղեցիկը և խորշալ գռեհիկից և կոպիտից։ Այս դեպքում նա իր ժամանակակից հայ խմբագիրների մեջ մրցակից չուներ։

Իբրև հրապարակախոս Աբգար Հովհաննիսյանը ասպարեզ է գալիս իսկապես «Արձագանքի» սկզբնադրությունից սկսած։ «Արձագանքի» այն ժամանակվա աշխատակիցները, որ «Փորձի» աշխատակիցներն էին, շաբաթաթերթում գրելու նախապատրաստություն չունեին։ Սովորած լինելով երկար մտածողության, նրանց համար դժվար էր շուտափույթ արծարծել օրվա անցողիկ խնդիրները և հասարակական հրատապ դեպքերը քննադատել։

Միայն Ալեքսանդր Երիցյանն էր, որ արագ գրելու և մի շաբաթ...»։

էջ 23. «Սկսվեց կատաղի ընդդիմադրություն[18]։ Այն բոլոր անձինք, որոնք իրանց խիղճը մաքուր չէին ղդում, որոնք իրավ իրանց ազգի վերաբերմամբ բարոյական ապականիչներ էին, ոտքի կանգնեցին միահամուռ։ Կամեցան տապալել Աբգար Հովհաննիսյանին։ Ապականիչներից մեկը շարադրեց մի վերին աստիճանի անգրագետ բրոշյուր, ուր չքամահրեց ուրիշների գրպանից նոր դուրս բերած ձեռով դիպչել հանճարեակ խմբագրի անձնական, նույնիսկ ընտանեկան պատվին։

Բայց Աբգար Հովհաննիսյանին հուսահատեցնելը հեշտ չէր։ Տեսնելով ազգային ցեցերի ամոթահար լինելը, նա թողնց հրապարակախոսական ձևը և սկսեց ֆելիետոններով ծաղակոծել նրանց։ Կատաղությունն ավելի սաստկացավ։ Վերջապես անզոր հակառակորդները տեսնելով, որ գրչով նրա դեմ ոչինչ չեն կարող անել, վճռեցին այլ կերպ

---

[17] «Աբգար Հովհաննիսյան» հոդվածում բառացիորեն մեջ է բերված այս պարբերությունից սկսվող հատվածը՝ մինչև վերջ (տե՛ս «Լումա», 1904, № 2, էջ 16—17, 19)։

[18] Շիրվանզադեն այստեղ խոսում է «Հայ ազգի կատաղի թշնամին» խորագրով հոդվածաշարի տպագրությանը հաջորդած իրադարձությունների մասին (հոդվածաշարի հեղինակներն էին Շիրվանզադեն և Ա. Հովհաննիսյանը)։

իրանց ոխը հանել։ Դրա համար ընտրեցին այն միակ միջոցը, որին ընդունակ էին՝ տալ նրան նյութական հարված։ Շուտով պիտի տեղի ունենային Աբգարի ընտրությունները իբրև դիրեկտորի[19]։ Հակառակորդները խոսք մի արին նրան սևացնելու։ Բայց այս էլ չհաջողվեց։ Աբգար Հովհաննիսյանի վարկը շատ մեծ էր Թիֆլիսում։ Նրան տապալելը հեշտ չէր։ Վերջապես հակառակորդ...»[20]։

Ա. Հովհաննիսյանի՝ իբրև եվրոպական տիպի կրթված խմբագրի մասին է խոսում Վրթանես Փափազյանը։ Երբ 1896-ին նա Թեհրանից վերադառնում է Թիֆլիս և «Մշակում» վերջին տարում տպագրված իր թղթակցությունների համար վարձատրություն խնդրում, նրան չեն պատասխանում։ «Մասնավոր պաշտոնի մեջ մտա,— գրում է նա իր «Ինքնակենսագրության» մեջ,— բայց Աբգար Հովհաննիսյանը գտավ ինձ, առաջարկեց, նախ, տողին 2 կոպեկ, հետո ամսական 50 ռ. և ընդունեց իմ պայմանը, որ ես ամեն րոպե ազատ էի հայտարարել, թե հակառակ եմ «Արձագանք»-ի ուղղությանը, այլև որ ոչ մի տող և բառ իսկ չպիտի ջնջվի գրվածքներից։ Հովհաննիսյանը դիտեր հարգել գեղարվեստի ծառայողներին, հարգանքով վերաբերվել նրանց գրչի արդյունքներին, այլև չթողնել, որ նոքա նյութական որևէ նեղություն կրեն։ 1898-ին, երբ «Արձագանք»-ը դադարեց, վեց ամբողջ ամիսներ ստանում էի ես ռոճիկներս, առանց մի տող իսկ գրելու։ Եվ Հովհաննիսյանը միակն է եղել կյանքիս մեջ, որ միշտ օգնել է ինձ, քաջալերել, պատվել ու առաջ տարել, առանց որևէ քայլ անելու, շեղելու ինձ իմ ուղղությունից և կամ ազդելու գրչիս վրա։ Եվ դուք շատ և շատ գրվածքներս կտեսնեք տպված «Արձագանք»-ում, որոնք հիմնովին դեմ են եղել թերթի բռնած ուղղությանը։ Գեղարվեստի արտադրությունների մասին Հովհաննիսյանը լայն, եվրոպացու հայացքներ ուներ և երբեք չէր կամենում ծառայեցնել նրանց այլ և այլ դիտումների։ Նա նույնն էր ոչ միայն իմ, այլ նույնիսկ մյուս գրողների վերաբերությամբ։ Եվ, եթե «Արձագանքը» ապրեր, անշուշտ մյուս տարին իսկ կդառնար բոլոր հայ գրողների օրգանը և կենտրոնավայրը»[21]։

Ժամանակակիցներից ոմանց հուշերից կարելի է առանձնալ և այն

---

19 Ա. Հովհաննիսյանը փոխադարձ վարկի ընկերության բանկի դիրեկտորն էր և այդ ընտրություններին կրկին վերընտրվում է իր պաշտոնում։

20 Ձեռագիրն այստեղ ընդհատվում է։

21 Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1959, էջ 688—689։

տպավորությունը, թե Աբգար Հովհաննիսյանը նյութապես նեղում էր իր աշխատակիցներին, հոնորարները ժամանակին չէր վճարում և այլն։ Այսպես, Շիրվանզադեն խոսելով Բերլինում իր սաստիկ զբաղվածության մասին, գրում է. «այս բոլորը ամսական հիսուն ռուբլի վարձատրությամբ»։

Իր նամակներում Ա. Հովհաննիսյանի մասին աննպաստ տողեր է թողել և նրա բարեկամ Ռ. Պատկանյանը։ Նա 1884-ի հոկտեմբերից մինչև 1885-ի մայիսը Փ. Վարդանյանին ուղղված նամակներում դանդաղում է այն բանից, որ Հովհաննիսյանը չի ուղարկում իրեն հասանելիք հոնորարից մնացած 50 ռուբլին։ Պատկանյանը միաժամանակ անհանգստանում էր իր «Ռուս-հայերեն բառարանի» ճակատագրի հարցով, որն ուղարկել էր Հայերեն գրքերի հրատարակության ընկերությանը, և որի հոնորարը հաշվում էր 500 ռուբլի։ Վերը հիշված նամակներում Պատկանյանը ծաղրում է իր բարեկամի կարծեցյալ ժլատությունը, ցավ հայտնում, որ տարեկան 10—15000 ռուբլի նկամուտ ստանալով, նա ուրանում է իր փողը, ղրկում իրեն՝ «մի չքավոր, ահագին ընտանիքով ծանրաբեռնված մարդու...»։

Որ Հովհաննիսյանը առատաձեռն է եղել իր աշխատակիցների նկատմամբ, փաստ է նաև Պռոշյանը։ 1880 թ. «Շահենի» տպագրության հարցով դիմելով «Փորձի» խմբագրին, Պռոշյանը խնդրում է նրանից՝ իր հոնորարի հաշվին կանխավճար մարել Թղթավաճառի պարտքը (140 ռ.)։ Այնուհետև այդ առիթով նա, ի դեպ, խնդրում է իրեն չհաշվել՝ «մեր «Փորձի» խմբագրության մի քանի աշխատակիցների կարգիցը, որոնք համարյա ձանձրացրել են Ձեզ, դեռ հոդվածը չտված՝ տարիներով յառաջ փողերն ուտելով»[22]։ Այս ամենից հետո ինչպե՞ս հասկանալ Պատկանյանի կշտամբալից խոսքերը՝ կապված Հովհաննիսյանից ստանալիք 50 ռուբլի պարտքի հետ[23]։

Ա. Հովհաննիսյանի, նրա կնոջ՝ Դարյա Հովհաննիսյանի և Գևորգ Եվանգուլյանի նամակները նոր լույս են սփռում Հովհաննիսյանի կյանքի այդ շրջանի վրա, որով և պայմանավորված էր նրա վարքագիծը։ Պարզվում է, որ այն մարդը, որ ժամանակի բոլոր խմբագիրների հա-

---

[22] ԳԱԹ, Աբգար Հովհաննիսյանի ֆոնդ, վավ. 49։

[23] Իր բառարանի ձեռագիրը, որի տպագրության համար Պատկանյանը հույս ուներ ստանալ 500 ռուբլի, Հրատարակչական ընկերության կողմից այդ օրերին նա հետ է ստանում։

մեծաւտուիյամբ բարձր հոնորարով ապահովում էր իր գրական աշխատակիցներին՝ 80-ական թվականների սկզբին դրամական սուր ճգնաժամի մեջ էր։ Ասացինք արդեն, որ նա «Փորձը» դադարեցնում է 14.000 ռուբլի դեֆիցիտով, բայց չկարողանալով դիմադրել նոր պարբերական ունենալու ցանկությանը, կրկին դիմում է ռիսկի և հիմնադրում «Արձագանքը»։ Մեկ տարի էր միայն հրատարակվել «Արձագանքը», երբ իրեւ գաղտնիք՝ Եվանգուլյանը հայտնում է Եղյանին, թե Հովհաննիսյանի գործերն այնքան վատ են, որ ինքը խորհուրդ է տվել նրան՝ դադարեցնել խմբագրական աշխատանքը։ Նա գրում է. «Արձագանքը» Աբգարին տարեկան նորա խոսքով 1000 ռ. դեֆիցիտ է տալիս. այդ նորա խոսքով. իսկ ես կարծում եմ, որ դեֆիցիտը ևս ավելի է։ Եթե դուք գիտենայիք, Աբգարի նյութական գործերը որքան խարաբ են, եթե դուք գիտենայիք, թե նա որքան պարտք ունե և որքա՜ն տոկոսիք է տալիս-դուք կղարմանայիք և ինձ հետ ի միասին նույն խորհուրդը կտայիք։ Եվ ցավալին ի՞նչ է. պարտքերը տարեցտարի ավելանում են... իսկ եկամուտները՝ ո՛չ։ Հիմա մտածում ենք, թե ի՞նչ կերպով գործին օգնենք և իմ առաջարկած միջոցներից մեկն էլ «Արձագանքը» դադարեցնելն է»[24]։

Բարեբախտաբար Ա. Հովհաննիսյանը չի հետևում այդ խորհրդին և շարունակում է շաբաթաթերթի հրատարակությունը։ Ապահովելու համար «Արձագանքի» ծախսերը, նա գրավ է դնում հայրական ժառանգությունը (մի մեծ այգի) և կնոջ օժիտով ստացած կալվածքները։ Դարյա Միխայլովնան հուլիսի 27-ի անթվակիր մի նամակով [1883 թ.] Եղյանից օգնություն և խորհուրդ խնդրելով, հայտնում է, թե իրենք կորցրել են ողջ ունեցվածքը։ 1883-ի դեկտեմբերին Հովհաննիսյանն արդեն սնանկության շեմին էր։ Եվանգուլյանն այդ օրերին գրում է. «Աբգարը հաշվում է յուր բոլոր պարտքը 56000 ռ., առանց կալվածական բանկի պարտքի (21.000 ռ.), որին չհավատալու պատճառ չունեմ։ ... խեղճը շատ փոխված է»[25]։ Մի այլ նամակում՝ Եվանգուլյանը նրա պարտքերի գումարը հաշվում է 85000 ռուբլի, որի դիմաց Հովհաննիսյանը տարեկան 8000 ռուբլի վճարում էր իրեւ տոկոս (նրա տարեկան եկամուտը կազմում էր 10.000 ռուբլի)։ Ա. Հովհաննիսյանին օգնության ձեռք են մեկնում Սանասարյանը և Եղյանը.

---

[24] ՀԿՊՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 28. 10. 1882 թվակիր նամակից։

[25] ՀԿՊՊԱ, Եղյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի 17. 12. 1883 թվակիր նամակից։

«Աբգարին ոչ թե աղքատությունից, այլև մեծ խայտառակությունից հանում եք, որպես և դուք ինքներդ բոլորովին արդարացի գրում եք». ասում է Գ. Եվանգուլյանը։

1884-ի նոյեմբերին, հենց այն օրերին, երբ Պատկանյանը համառորեն Փ. Վարդանյանին ամբաստում էր «Տիկին և նաժիշտ» վիպակի հոնորարի հաշվից իր ստանալիք 50 ռուբլու պահանջներով, Ներքին գործոց մինիստրության կարգադրությամբ «Աբձագանքը» փակվել էր 8 ամսով։ Պատկանյանը, որի գեղարվեստական գործերի տպագրության համար ժամանակին Հովհաննիսյանը բարձր հոնորար էր վճարել, զարմանալի անտարբերությամբ պահանջում էր պարտքը, հայհոյում իր բարեկամին, հաշվի չառնելով գեթ այն փաստը, որ շաբաթաթերթը դադարեցված է և խմբագիրը չէր կարող կամ գուցե չէր ուզում անդրադառնալ իր հին ու մանր պարտքերին։

Հովհաննիսյանի դրամական գործերը սաստիկ ծանր կերպարանք են ստանում նաև 1890-ի սկզբներին։ 1889-ի դեկտեմբերին Եվանգուլյանի միջոցով նա օժանդակություն է խնդրում Սանասարյանից, միաժամանակ հուշելով մի ծրագիր. եթե Պետրոս Սիմեոնյանը իր լրագրական աշխատանքի համար Սանասարյանի կողմից ապահովվում է կենսաթոշակով, մի՞թե չի կարելի իր ծառայությունները գնահատելով՝ Սանասարյանի կազմելիք կտակում իր համար մի փոքրիկ դումար նախատեսել[26]։ Եվանգուլյանը հետևյալ կերպ է ներկայացնում «Աբձագանքի» խմբագրի այդ օրերի տագնապները։

9. 12—89 թ. «Ահագին տոկոսներ տալով, եկամուտներից զրկվելով, հորական և կնոջ կալվածքներից զրկվելով, գրավաճառանոցը պարտքի մեջ խեղդված, որտեղի՞ց կարող է նա գլուխ դուրս բերել։ Եթե դուք տեսնեք նորան այստեղ, նորա կնոջ դրությունը, այն փոքրիկ բնակարանը, որտեղ կուչ են եկել,— հավատացնում եմ, որ արտասուք կգար Ձեր աչքերին»։ Նամակները շարունակվում են.

5.1—90 թ. «... Երանի թե Ձեզ հաջողվեր նորա դրությունը մի փոքր բևեռացնել»։

6. 3—90 թ. «...Հաջողվո՞ւմ է Ձեզ Աբգարի գործքը, թե ոչ։ Եթե դիտենաք, թե որքան պիտի խայտառակվենք ամենքս՝ Աբգարի խայտառակությամբ»։

23. 3. Նույնը։

---

[26] Նրա առաջարկը չի ընդունվում։

8. 5— «Նորա դրությունը շատ ծանր է. ծառայության չէ ման գալիս[27]. և նոր է միայն սկսել փողոց դուրս գալ»:

19. 5.— Նույնը: Ընտանիքը և նա անձամբ՝ «սարսափելի դրության մեջ են»:

Հունիսի 7-ին լրանում էր Զոլոտարյովին վճարելիք պարտքի ժամկետը. հունիսի 1-ին Ա. Հովհաննիսյանը հուսահատության մեջ մի նամակով դիմում է Եվանգուլյանին և խնդրում խոսել պարտատիրոջ հետ, որպեսզի նա համբերի: Հովհաննիսյանը հույս ուներ, թե Եզյանը պահանջվող գրամը կուղարկի. «Իսկ եթե, ասենք, ոչ անե, տեղի ունենա այն, ինչ որ խելքս հրաժարվում է ըմբռնել, այն ժամանակ Զոլոտարյովին բավականություն տալու համար կծախեմ Դարիկոյի բանկադին ակնները, իմ գրքերս, ամեն բան, ինչ որ աշխարհում ծախվում է և չէ ծախվում...»[28]: Եզյանը հունիսի 2-ին փոխանցում է պահանջվող գրամը. «Եթե Ձեր հեռագիրը չստանայինք,— գրում է նրան Եվանգուլյանը,— վճռած ունեինք, որ Դարյա Միխայլովնայի վերջին ակնեղենները (որ շատ չէ մնացել) և Աբգարի գրքատունը գրավ դնել և փողը տալ Զոլոտարյովին. այսօր վերջին օրն էր»[29]: Հովհաննիսյանն ազատվում է հրատապ պարտքերից. հոկտեմբերին Եզյանը գալիս է Թիֆլիս և տեղի գրամատերերի հետ խոսելով՝ կարգադրում մնացած պարտքերի ժամկետները երկարաձգելու գործը: Հովհաննիսյանը փրկվում է սնանկանալուց և նորից կյանք առնում, ինչպես գրում է Եվանգուլյանը: Սա հայտնում է միաժամանակ, որ հակառակորդները դարձյալ վախենում են Աբգարից: Զայների բացարձակ մեծամասնությամբ վերջինս նույն տարվա դեկտեմբերին կրկին ընտրվում է քաղաքային դումայի իրավասու:

Հաջորդ տարիներին նույնպես Ա. Հովհաննիսյանը նեղվում էր նյութական դժվարություններից. 1891-ի ապրիլին նա վաճառում է հայրական այգին: 1893-ին գրում է, թե «Արձագանքի» բաժանորդների թիվը չնայած ավելանում է, «բայց դարձյալ նորա նյութական մասը ճնշում, մաշում է ինձ»: Ընտանիքի ապրուստի միջոցները նախկինի նման նա հոգում էր կենտրոնական գրավաճառանոցի եկամուտներով և քաղաքային վարկի ընկերության բանկից ստացած ռոճիկով (տարե-

---

[27] Բարբառային ոճ, նշանակում է՝ չի գնում աշխատանքի:

[28] ԳԱՔ, Գ. Եվանգուլյանի ֆոնդ, վավ. 37:

[29] ՀՊԿՊԱ, Եզյանի ֆոնդ, Գ. Եվանգուլյանի անթվակիր նամակից [7.6.90 թ.]:

կան 1000 ռուբլի, վերջում՝ 600 ռուբլի)։ Հետաքրքրական է, որ բազմիցս խորհրդածելով այս հարցերի շուրջ, Ա. Հովհաննիսյանն իրեն երբեք չէր անջատում իր պաշտոնակիցներից և շեշտում էր առհասարակ հայ խմբագիրներին վիճակված անխուսափելի տառապանքների օրինաչափ լինելը։ Վկայակոչելով հայ պարբերական մամուլի պատմության փաստերը, նա արևելահայ թերթերի դադարեցման միակ լուրջ պատճառը համարում էր խմբագիրների նյութական անձուկ վիճակը և ընդգծում միաժամանակ, որ այդ լրագրությունն ուժեղ է հենց նրանով, որ խմբագիրներն անշահախնդիր կերպով նվիրված են իրենց գործին։

Ա. Հովհաննիսյանը նույնպես, ինչպես և իր նախորդներն ու ժամանակակիցները (Նազարյան, Մանդինյան, Սիմեոնյան, Արծրունի և ուրիշներ), լրագրական գործունեության ասպարեզում անանկացավ և ոչ թե հարստացավ... Սակայն նա չէր էլ որոնում այլ հանգուցալուծում։ Հովհաննիսյանը ֆանատիկորեն նվիրված էր իր կոչմանը և կամովին ամեն ինչ զոհաբերում էր ընտրած նպատակին։ Նա շրջապատված էր նույնքան ֆանատիկ աշխատակիցներով, որոնց ընտրում էր զարմանալի հմտությամբ և, խմբագրության կազմում ընդունելուց հետո, ստեղծագործական աշխատանքի կատարյալ ազատություն էր ապահովում նրանց համար։

«Փորձ» և «Արձագանք» պարբերականներն իրենց մեծ հաջողությամբ խմբագրի ջանքերից բացի պարտական էին նաև նրա աշխատակիցների ամենօրյա տքնանքին և գրական տաղանդին։

Բ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

«Փորձ» և «Արձագանք» պարբերականներին աշխատակցել են ժամանակի գրական լավագույն ուժերը և այդ պատահական չէր։ Աբգար Հովհաննիսյանը լրագրի կենսունակությունն ու հաջողությունը ամեն բանից առաջ պայմանավորում էր աշխատակիցների գրական տաղանդով, ուստի և ջանում էր գտնել գրական աշխարհում իրենց արդեն դրսևորած և հրապարակախոսության մեջ հմուտ մասնագետներին։ Աշխատակիցների գրական վարպետության և գիտական կարողությունների հետ մեկտեղ առաջնակարգ նշանակություն ուներ և նրանց գաղափարական ուղղության հարցը։ Հարկավ, Հովհաննիսյանի գործակից-

ների համոզմունքները հիմնականում ներդաշնակում էին նրա հրատարակությունների ոգուն։

Տարիների ընթացքում Հովհաննիսյանի պարբերականներին աշխատակցել են հայ գրողներից՝ Ռ. Պատկանյանը, Րաֆֆին, Պ. Պռոշյանը, Գ. Սունդուկյանը, Հ. Պարոնյանը, Շիրվանզադեն, Հ. Հովհաննիսյանը, Վ. Փափազյանը, Մուրացանը, Ա. Քիշմիշյանցը, Ա. Թումանյանը, Բ. Այվազյանը, թարգմանիչներ Գ. Բարխուդարյանը և Փիլ. Վարդանյանը։ Բանասիրական բաժնին աշխատակցել են Ստ. Պալասանդյանը, Ալ. Երիցյանը, Գյուտ Ադանյանը, Ս. Քամալյանը, Քաջբերունին և ուրիշներ։ Գիտնականներից «Փորձի» և «Արձագանքի» հետ կապված են եղել Գր. Խալաթյանը, Մ. Էմինը, Ս. Եղիազարյանը, Մ. Շովրյանը (Խ. Հովհաննիսյան)։ Հրապարակախոսական բաժնում մշտապես երևացել են և ներքի հիմնական բաժինը բարձր մակարդակի վրա պահել՝ Ն. Տեր-Գևոնդյանը, Հարոն (Ն. Տեր-Հարությունյան), Ն. Քարամյանը, Լորդը (Իս. Հարությունյան), Վաղինակը (Պ. Տոնապետյան), Ս. Հախումյանը, Հ. Տիգրանյանը, Կ. Յաղուբյանը, Գ. Եվանգուլյանը, երբեմնապես՝ Կ. Եղյանը, Կ. Բեհբուդյանը, Ստ. Զելինսկին։ Հովհաննիսյանը, որքան էլ զբաղված, նամակագրական լայն կապեր էր պահպանում ժամանակի մտավորականների հետ և ապահովում նրանց մասնակցությունը ներքի համապատասխան բաժիններին (Գր. Խալաթյան, Ս. Եղիազարյան, Հովհ. ք. Մկրյան և ուրիշներ)։ Նա գնահատում էր իր գործակիցներին և արժանին հատուցում նրանց աշխատասիրության ու տաղանդին։ Մի առիթով Հովհաննիսյանը հետևյալ նշանակալից խոստովանությունն է արել. թեև «Փորձը» չենք կարող համեմատել եվրոպական ընտիր ամսագրերի հետ, «բայց ամենայն խղճմտանքով կարող ենք ասել, որ ձեռքից եկածի չափ աշխատել ենք օգուտ քաղել մեր գրականական ասպարեզում գործող ուժերից և այս իսկ հանգամանքին, և ոչ թե մեր անձնական հատկություններին պետք է վերաբերել «Փորձի» հաջողությունը»[30]։ Նախընթաց բաժիններում մենք առիթ ունեցանք ծանոթանալու «Փորձի» և «Արձագանքի» աշխատակիցներ Նիկ. Տեր-Գևոնդյանի, Գ. Բարխուդարյանի, Ն. Քարամյանի, Ստ. Պալասանդյանի և Ալ. Երիցյանի հետ։

«Փորձի» գլխավոր աշխատակիցներ Պալասանդյանը և Երիցյանը ամբողջ հինգ տարի գլխավորել են այդ հանդեսի ազգային և քաղաքա-

---

[30] «Արձագանք», 1882, № 1։

կան տեսությունների, գրականության և գրաքննադատության բաժինները։ Նրանք ջանացել են «Փորձը» բարձրացնել ժամանակի եվրոպական և ռուսական համանման հրատարակությունների մակարդակին, մի բան, որ ինչ-որ չափով հաջողվել է նրանց։

Ալ. Երիցյանը հետագայում ակտիվ մասնակցություն է ցույց տվել նաև «Արձագանքի» հրատարակության գործին, մնալով թերթի պատմաբանասիրական բաժինների ամենահիմնական հեղինակը և խմբագրության հաստատուն հենարաններից մեկը։

Գյուտ Խաչանա Աղանյանը (Հարություն Տեր-Առաքելյան) «Արձագանքին» աշխատակցել է 14 տարի։ Նա սկզբում աշխատում էր իբրև շաբաթաթերթի քարտուղար, իսկ Ա. Հովհաննիսյանի նյութական ճգնաժամի տարիներին վարում էր թերթի նաև դրամական հաշիվները։ Գյուտ Աղանյանի բարեխիղճ և ակնիվ աշխատանքը նկատի ուներ Հովհաննիսյանը, երբ իր բարեկամների ներկայությամբ հայտարարում էր, թե նրա՝ «Արձագանքին» արած ծառայությունը անգնահատելի է»[31]։ Բացի խմբագրական տեխնիկական աշխատանքից, Գյուտ Աղանյանը «Արձագանքում» հանդես էր գալիս նաև բանասիրական հոդվածներով և թարգմանություններով։ Նրա գրչին է պատկանում Սվյատոպլուկ Չեխի «Գյուղի սուրբը» պատմվածքի թարգմանությունը։ Գ. Աղանյանն է թարգմանել նաև Ն. Յանչուկի «Յան Էրնստ Սմոլեար» մեծածավալ ակնարկը։ Այն նվիրված է ականավոր հրապարակախոս, պատմաբան և ազգագրագետ Յան Էրնստ Սմոլեարի կյանքին և գործունեությանը։ 1885-ին, երբ ցարական կառավարությունը փակում է հայկական դպրոցները, «Արձագանքի» խմբագրության կողմից խիստ մի քայլ էր՝ Սմոլեարի կյանքի և պայքարի պատմության հրապարակումը։ Այդ քայլը, սակայն կատարվում է ծրագրված ձևով և անշուշտ հաշնում իր նպատակին։ Հայ ընթերցողի համար հասկանալի էր դառնում լատինական սերբերի մղած պայքարը գերմանացվելու վտանգի դեմ, իսկ հայ մտավորականության գործունեության համար ուղեցույց էին դառնում Սմոլեարի պայքարի մեթոդները[32]։

«Արձագանքի» էջերում տպագրվել են Գյուտ Աղանյանի բանասիրական մի շարք հոդվածները, ինչպես և դրախոսվել են նրա «Դիվան

---

31 ԳԱԹ, Գյուտ Աղանյանի ֆոնդ, վավ. 455։

32 «Արձագանք», 1885, № 11։

հայոց պատմության» աշխատության և «Լումա» հանդեսի հերթական համարները։

«Փորձի» և «Արձագանքի» հրատարակության գրեթե բոլոր տարիներին իր թարգմանություններով այդ պարբերականներին աշխատակցում էր Փիլիպոս Վարդանյանը։ Բազմազան էին Փիլիպոս Վարդանյանի հետաքրքրասիրությունները։ Տարբեր ժամանակներում «Արձագանքում» տպագրվել են եվրոպական և ռուս հեղինակներից Վարդանյանի կատարած թարգմանությունները, նվիրված հայագիտության, տոմարագիտության, քաղաքակրթության պատմության հետ կապված զանազան հարցերի, կանանց իրավունքների խնդրին, լրագրության վիճակի լուսաբանությանը Եվրոպայում և այլն։ 1895—97 թթ. հայկական ջարդերի և դրանց հաջորդած ժամանակաշրջանում, երբ եվրոպական մամուլը մեծապես արծարծում էր այդ իրադարձությունները, Փիլիպոս Վարդանյանը գերազանցապես զբաղվում է արտասահմանյան թերթերի արտաքին լուրերի թարգմանությամբ («Դեյլի Նյուս», «Դեյլի տելեգրաֆ» «Թայմս» և այլն)։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Վարդանյանն իր թարգմանական-լրագրական աշխատանքով նպաստում էր հայ միջին ընթերցողի ընդհանուր զարգացմանը։ Պատկանյանը բարձր է գնահատել Փ. Վարդանյանի վաստակը՝ մասնավորապես հայ մանուկ սերընդին դասական հեղինակների միջոցով նոր հայախոսություն սովորեցնելու գործում։ Հաշվի առնելով նրա ծայրահեղ աշխատասիրությունը, Պատկանյանը հայ գրականության և մանկավարժության ասպարեզում նրան համարում է աստղ, անձնավորված գործունեություն։

1886—1891 թթ. «Արձագանքի» գլխավոր աշխատակիցն էր Շիրվանզադեն։ Ալեքսանդր Շիրվանզադեի մասնակցությունն «Արձագանքի» խմբագրության գործերին, անկասկած, մի ամբողջ գլխով շարաթաթերթը բարձրացրել է նախկին մակարդակից։ Հիրավի, իր գրական տաղանդի ծաղկման տարիներին, Շիրվանզադեն «Արձագանքի» էջերում տպագրած գեղարվեստական գործերով, գրաքննադատական հոդվածներով, հրապարակախոսական և բանավիճային ելույթներով միանգամայն նոր որակ է հաղորդել թերթին։ Այդ տարիներին «Արձագանքը» փաստորեն խմբագրում էր Շիրվանզադեն. «Ես էի նրա իսկական խմբագիրը,— գրում է նա,— առաջնորդողներ գրողը, մամուլի տեսություն կազմողը, քննադատը, թատրոնական ռեցենզենտը, թարգմանիչը, սրբ-

բագրիչը, էքսպեդիտորը»[33]: Չհաշված գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք նույնպես նա պարտավոր էր հասցնել ժամանակին, Շիրվանզադեն աշխատում էր արտակարգ լարվածությամբ. «Բաֆֆու մահվանը նվիրված «Արձագանքի» համարը պատրաստել եմ երեսուն ժամվա ընթացքում», գրում է նա իր նամակներից մեկում, մեր ներկին ծանոթացնելով անցյալի լրագրողի աշխատանքային օրվա ռեժիմի հետ:

Շիրվանզադեի խմբագրած շաբաթաթերթին ստացել է կենսական նոր ուժեր և մղումներ, դարձել ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի բարձրացրած հարցերի ղեկավար արձագանքը մեր իրականության մեջ:

Դեռևս Շիրվանզադեի աշխատակցության օրերին, 1888-ի սկզբին, «Արձագանքին» սկսում է աշխատակցել Նիկողայոս Քարամյանը: Ինչպես երևում է նրա հոդվածների քանակից (որոնք տպագրվում էին նաև NN ստորագրությամբ), Քարամյանը խմբագրության կազմում հենց սկզբից ձեռք է բերում առաջնակարգ դիրք: Պետք է ենթադրել, որ նրա ոճը եղել է վերամբարձ, կենդվածքը՝ հպարտ և վանող: Շիրվանզադեն հետևյալ կերպ է նկարագրում նրա մուտքը խմբագրատուն: 1887-ի նոյեմբերին Ա. Հովհաննիսյանի տանը նշանակվում է խմբագրական ժողով. «Այնտեղ էր, իմիջիայլոց, և Քարամյանը, մեր հայրենակիցը, և մի քանի նորավարտներ: ...Բավական անախորժ տպավորություն գործեց մեր հայրենակիցը ինձ վերա, նույնպես և Բաֆֆիի վերա: Այնինչ՝ Աբգարը շատ է հավանում, բայց քեզ պիտի հայտնի լինի, որ նա մի փոքր կողմնապահ է դեպի գերմանական ուսանողները: Բանից երևում է, որ միայն Արասխանյանցին չէ հատուկ ամենաչընչին մտքերը ամենաբարձրագույն տոնով արտահայտելն, այլ բոլոր գերմանավարտները նույնպես են»[34]:

Չնայած Շիրվանզադեի վրա թողած այս աննպաստ տպավորությանը, Քարամյանը շնորհալի լրագրող էր. նա «Արձագանքին» աշխատակցում է 1888-ից մինչև այդ թերթի դադարումը:

Գրեթե նույն տարիներին, 80-ական թվականների վերջին, «Արձագանքին» աշխատակցում էր Նիկ. Քարամյանի բարեկամներից մեկը, հայ մանկավարժ և գրականագետ Իսահակ Հարությունյանը (Լորդ): Նա

---

[33] Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, 1951, էջ 142:

[34] Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 627:

նույնպես բարձրագույն կրթություն ստացել էր Գերմանիայում և մանկավարժական աշխատանք էր կատարում Ներսիսյան դպրոցում։ Իս. Հարությունյանը մի շարք գրքերի հեղինակ էր, աշխատակցում էր ժամանակի հայ պարբերական մամուլին։ Նրա մասնակցությունը «Արձագանքին» ավելի չափավոր էր, սակայն նա Ա. Հովհաննիսյանի մերձավոր գործակիցներից էր և նրա աշխատանքը խրախուսողներից մեկը։

Շիրվանզադեի հեռանալուց հետո Ա. Հովհաննիսյանը «Արձագանքին» աշխատակցելու է հրավիրում հայ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին, որը 1891—93 թվականներին աշխատում էր Ներսիսյան դպրոցում։ Հ. Հովհաննիսյանը «Արձագանքում» տպագրել է իր բանաստեղծությունները, թարգմանական հոդվածներ, շուրջ 35 գրաքննադատական հոդվածներ։ Այդ տարիներին նա առանձնակի սիրով և մասնագիտական պատշաճ խորությամբ էր կազմում Թիֆլիսի հայկական թատերական ներկայացումների ամենօրյա տեսությունները։

Ի դեպ, «Արձագանքի» աշխատանքներին մասնակցություն էր ցույց տալիս և տիկին Զարուհի Հովհաննիսյանը (բանաստեղծի կինը), որը տիկին Զ. ստորագրությամբ «Արձագանքում» տպագրում էր թարգմանություններ ռուսերենից և ֆրանսերենից։

Հարո (Նիկողայոս Տեր-Հարությունյան)։ «Արձագանքի» հրատարակության ամբողջ ժամանակամիջոցում այդ թերթին փոքրիկ ընդմիջումներով աշխատակցել է Հարոն։ Նա, երբ անգամ հնարավորություն չէր ունենում թղթակցել «Արձագանքին», այնուամենայնիվ միշտ մոտ էր կանգնած խմբագրությանը և մի կարճ միջոց, 1891-ի առաջին կիսամյակում, նույնիսկ մասնակից է դառնում հրատարակչական գործերին։

Հարոն ավարտել է Փարիզի արևելյան լեզուների դպրոցը (հայագետ էդ. Դյուլորիեի ուսուցչապետության շրջանում)։ Դեռևս Փարիզում սովորելու տարիներին, 1873—76 թթ. թղթակցում էր «Մշակին» և հրապարակային շնորհակալություն առանում Արծրունուց։ Կովկաս վերադառնալուց հետո նա շարունակում է աշխատանքը Արծրունու թերթում (առանց հոնորարի), բայց որոշ տարաձայնությունների պատճառով 1878-ին հեռանում է «Մշակից»։ Հրապարակախոս Նիկո Նիկոլաձեի հրավերով սկսում է աշխատակցել նրա «Обзор» թերթին, միաժամանակ 1880—82 թթ. թղթակցում էր Մամուրյանի «Արևելյան մամուլին»։ 1882-ից Հարոն մշտապես կապվում է «Արձագանքի» խմբագրության

հետ։ Նա ղբաղվում էր և մանկավարժական աշխատանքով. 1884-ի ամռանը խնդրում է Եղյանի միջնորդությունը՝ Սանասարյանից թոշակ ստանալու համար, որպեսզի մեկնի Եվրոպա՝ կատարելագործվելու հայագիտության մեջ։ Այդ ծրագիրը հավանաբար չի իրականանում, որովհետև Հարոն հետագայում նույնպես ապրում և աշխատում է Կովկասում։ Նա՝ հինգ տարի, 1885—89 թթ., ծառայում է Թիֆլիսի թուրքական հյուպատոսարանում, իբրև թարգմանիչ[35]։ Հարոյին է պատկանում արևելահայ մամուլի պատմությունն սկզբնավորելու պատիվը[36]։

Հարոն «Արձագանքում» տպագրել է հրապարակախոսական հոդվածներ, նամակներ, թարգմանություններ։ Հավանաբար բանավիճային նկատառումներով թարգմանել է Վոլտերի «Մեծն Գասպար» երգիծական պատկերը (ինքնահավան տգետի մասին), Ալֆոնս Դոդեի «Երկաթ ագռավ» պատկերը և այլն։ Ընթացիկ իր գործունեությամբ Հարոն պաշտպանում էր ազգային-պահպանողականների քաղաքական դավանանքը։ Նա հայկական եկեղեցին հակադրելով կաթոլիկական և այլ եկեղեցիներին, առաջինը համարում է բացառիկ, քանի որ ըստ նրա՝ այն ազգային էր, ինքնուրույն և անկախ. այսինքն՝ հայերի դարավոր պատմության ընթացքով անբաժան կապված էր եղել ժողովրդի կյանքի հետ, եղել նրա գոյության երաշխիքը[37]։ Հարոն, սակայն, ազգապահպանության հարցում եկեղեցուն զուգընթաց «բնականաբար ավելի կենդանատակ տարրեր» է համարում մայրենի լեզուն և «հայրենական հողը»։

Իբրև «Արձագանքի» թղթակից Հարոն 1882 թ. մեկնում է Կ. Պոլիս, իսկ հաջորդ տարին՝ Փարիզ և Վիեննա։ «Արձագանքում» 1882-ին տպագրվել է նրա «Նամակներ Պոլսից» նամակաշարը, որտեղ Հարոն նկարագրում է արևմտահայության առօրյան, մշակութային և ազգային կյանքի նորույթները, հայ մշակների ճակատագիրը։ Հարոյի փարիզյան թղթակցությունները նույնպես նվիրված են հայ հասարակությանը, բանասիրությանը, քաղաքական կյանքի հուզող հարցերին։

Պարոնյանի ելույթից հետո Հարոյի թղթակցությունները արևմտահայության կյանքի անաչառ և բազմակողմանի լուսաբանության երկ-

---

35 Հարոն՝ «բնական» թարգման էր բազմաթիվ խեղճ ու աղքատ թրքահպատակ հայերի, նշում է «Արձագանքի» թղթակիցը, ափսոսանքով հայտնելով աշխատանքից նրա հեռանալու լուրը։

36 Տե՛ս Հարո, Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ, Թիֆլիս, 1878։

37 Տե՛ս «Արձագանք», 1883, № 14։

որդ էտապն էին խորհրդանշում Ա. Հովհաննիսյանի պարբերականների էջերում։ Դրան հաջորդում է երրորդ փայլուն էտապը՝ հանձինս վաղինակի թղթակցությունների։

Սիմեոն Հախումյան։ «Արձագանքի» գլխավոր աշխատակիցն էր Սիմեոն Հախումյանը։ Բազմակողմանի հետաքրքրություններ տեր այս հրապարակախոսը «Արձագանք» լրագրին հաղորդում է նոր շունչ։ Նրա առաջնորդողները, գրականագիտական և բանավիճային հոդվածները գրված էին բուռն կրքով և անկախ այն բանից, թե որքանով էին անխոցելի իրենց սկզբունքների առումով, վարակում էին ընթերցողին։ Գևորգ Զմշկյանը խոսելով Հախումյանի գործունեության մասին, հետագայում հիշում է. «Հախումյանն այդ ժամանակ «Արձագանք» թերթի ամենամոտիկ աշխատակիցներից մեկն էր և համարյա թե մենակ վարում էր խմբագրական բոլոր գործերը։ Աբգար Հովհաննիսյանը, որ հասկանում էր և գիտեր գործի ծանրությունը, մեծ հավատ էր ընծայում Հախումյանին, այնպես որ լրագիրը վատահորեն շարունակում էր իր գործը, շնորհիվ Հախումյանի ժիր տակունության և բազմակողմանի աշխատասիրության։

Հախումյանը ծնված էր լրագրական գործունեության համար և ափսոս, որ չհաջողվեց նրան շարունակել իր սիրած գործը»[38]։

Սիմեոն Հախումյանը ծնվել է Շուշի քաղաքում։ 1859 թ. ավարտել է տեղի թեմական դպրոցը, այնուհետև ընդունվել էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Հախումյանը 1878 թ. հեռացվում է ճեմարանից[39] և անցնում մանկավարժական աշխատանքի։ 1879—80 ուսումնական տարում աշխատում է Կարսի երկսեռ դպրոցներում իբրև ուսուցիչ և տեսուչ։ 1880—82 թ. մանկավարժական աշխատանք է կատարում Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցներում։ Շուշիում 1882-ին հիմնադրում է «Գործ» հանդեսը, որտեղ զբաղվում են Հախումյանի երիտասարդական տարիների լիբերալ-նարոդնիկական հայացքները։ 1883-ին հրատարակության իրավունքը պահպանելու նպատակով Հախումյանը լույս է ընծայում «Գործի» երկրորդ, փոքր համարը և շարունակում մանկավարժական աշխատանքը՝ Թավրիզում։ 1884-ի վերջին վերադառնում է Թիֆլիս, հրատարակում «Գործի» III, լիարժեք համարը, որը

---

38 «Տարազ», 1905, № 10։

39 Գևորգյան ճեմարանից հեռանալու առիթով Հախումյանի գրած ընդարձակ բացատրագիրը պահվում է Զաբելյանի անվան գրականության և արվեստի թանգարանում։

դարձյալ աչքի էր ընկնում խմբագրի նարոդնիկական հայացքների թարմությամբ և աշխուժությամբ։ Նյութական դժվարությունների պատճառով Ս. Հախումյանը ուշացնում է IV համարը, որի նյութերը թեև պատրաստվում և ներկայացվում են դրաքննության, սակայն Կովկասի դրաքննական կոմիտեն հանդեսը համարում է մենամիկորեն դադարեցված[40]։

Ս. Հախումյանը 1885-ից նվիրվում է հրապարակախոսական աշխատանքին և մինչև դարավերջը գործուն մասնակցություն ունենում Կովկասի հայ և ռուս լրագրությանը։ 1885—90 թթ. նա աշխատակցում էր «Մշակին», 1890—92-ին՝ «Աղբյուր» և «Տարազ» պարբերականներին. 1894—97 թթ. Հախումյանը վարում էր «Արձագանքի» գլխավոր աշխատակցի պաշտոնը։ 1899-ին, «Արձագանքի» դադարից հետո, Բրդբակցում է «Նոր-դարին»։ 1900 թ. Հախումյանը փոխադրվում է Փարիզ։ Այստեղ, 1901-ին նա սկսում է հրատարակել «Ժամանակ» ամսագիրը, որը, սակայն, դադարում է 2-րդ համարից հետո։ (Խմբագրին անհրաժեշտ էր գեթ 400 բաժանորդ, մինչդեռ «Ժամանակի» բաժանորդների թիվը հազիվ էր հասնում 100-ի)[41]։

Հախումյանը աշխատակցել է և ռուսական պարբերական մամուլին («Новое обозрение», «Кавказ», «Тифлисский листок», «Русский курьер», «Каспий», «С.-Петербургские ведомости»)։ Հայ մամուլում գրել է Ահրիման, Մար-Ամաղ, Ծերուկ գրական կեղծանուններով։ Նա զբաղվել է և գեղարվեստական գրականությամբ. գրել է բանաստեղծություններ, «Այծեմնիկ» վիպակը, «Մանիկ» նովելը, թարգմանել է Գոգոլի առակները, Հյուգոյի, Լիֆլերի բանաստեղծություններից, Իբսենի «Դոկտոր Շտոկման» պիեսը, Զուդերմաննի, Պոտեխինի պիեսներից։

Ս. Հախումյանը մասնակցել է Թիֆլիսի և Բաքվի թատերական կյանքին թե՛ իբրև դերասան, և թե՛ իբրև ռեժիսոր։

Հախումյանը 1900-ին ընդունվում է Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը և միաժամանակ հաճախում Քոլլեժ դը Ֆրանսի

---

40 Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Մ. Մխիթարյան, Հախումյանի «Գործ» հանդեսը («Հայ պարբերական մամուլի պատմություն», գիրք I, Երևան, 1963)։

41 «Ժամանակի» նպատակն էր օգնել հայ հասարակությանը, որպեսզի նա «իրապես դիտակցուին մասնակից լինի եվրոպական մտավոր շարժման, որ նա սիրե իր մայրենի լեզուն իբրև միակ բնական, հշմարիտ և ուժեղ գործիք գիտության և քաղաքակրթության յուրացնելու» (տե՛ս «Ժամանակ», 1901, № 1)։

բարձրագույն սոցիալական դասընթացները. նրան չի հաջողվում Կովկասի հարուստներից մի բարերար գտնել և կարճ ժամանակից թողնում է դասախոսությունները։ Փարիզում նա հիվանդանում է թոքախտով, իսկ 1901-ի վերջին երևում են հոգեկան խանգարման առաջին նշանները։ 1903—1904 թթ. Հախումյանն արդեն անհույս հիվանդ էր։ 1905-ի փետրվարին վախճանվում է Փարիզի հիվանդանոցներից մեկում՝ ծայրահեղ թշվառության մեջ։

Ս. Հախումյանի 80-ական թվականների լիբերալ-նարոդնիկական հայացքները դարավերջին որոշ էվոլյուցիա էին ապրել դեպի ազգային պահպանողականություն և սակայն, այս շրջանում ևս նրա ելույթները որքան էլ մարտական, դուրս չէին գալիս լիբերալիզմին հատուկ չափավոր պահանջների շրջանակներից։ Այսպես, նա ոգևորությամբ է դիմավորում կառավարության կողմից մտցվող բարենորոգումների յուրաքանչյուր ծրագիր, ողջունում դատարանների բարեփոխումների ուղղությամբ արված քայլերը, վիճակագրական հանձնաժողովների ստեղծման ծրագիրը։ Հախումյանը մեծ հույսեր էր կապում Կովկասում ստեղծվելիք քաղաքային ինքնավարության սիստեմի հետ, այդ գնահատելով իբրև երկրին պատվաստվող «ամենանշանավոր ռեֆորմատորական սկզբունքը»։ Ալեքսանդր II-ը Հախումյանի համար իդեալական միապետի սիմվոլ էր. նա «նվիրված էր իր երկրի ներքին բարեկարգությանը, իր հպատակների երջանկությանը»։ Գյուղացիական ռեֆորմի 35-ամյակին նվիրված առաջնորդողում Հախումյանը մի կողմից նկարագրում է այն պայմանները, որոնց մեջ ապրում էին ճորտերը (այդտեղ մարդը մարդու ստրուկն էր, իսկ աշխարհը՝ կենդանի մարդկանց դիրեկտանոց), մյուս կողմից հայտարարում է, թե մեռելային այդ աշխարհը լույս և ջերմություն կարող էր առանալ միմիայն «արտաքուստ» («վերևից»)։ Հախումյանի համոզմունքով թագավորն այդ լույսը տալու հետ մեկտեղ ազատված ժողովրդի ձևերը նաև ռեֆորմ է տալիս, որպեսզի կարողանա դրանով պաշտպանել իրեն այն ոտնձգություններից, որ անխուսափելի կերպով պիտի գործ դներին «ստրուկներից» գրկված «տերերը»[42]։ Հախումյանին հավանաբար հայտնի չէր այն փաստը, որ գեռևս ռեֆորմի նախագծի նախապատրաստման շրջանում Ալեքսանդր II-ը ազնվականների ներկայացուցիչների առջև ունեցած

---

[42] Տե՛ս «Արձագանք», 1896, № 21։

մի ելույթում հայտարարել էր, թե այն ամենը, ինչ կախված է իրենից, կատարել է, հարցը մաքսիմալ ձևով նրանց օգտին լուծելու համար[43]։

Ինչ վերաբերում է գյուղացիական հարցին, ապա, ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, նարոդնիկական հայացքների երբեմնի պրոպագանդիստը 90-ական թվականներին նույնպես չէր ուզում հաշտվել գյուղական տնտեսությունների քայքայման փաստի հետ և միջոցներ էր որոնում կանխելու գյուղացիների պրոլետարականացման պրոցեսը։

Հախումյանի գրիչը շիկանում է 1895—96 թթ. Արևմտյան Հայաստանում ծավալվող ողբերգական իրադարձությունների օրերին։ Ուշադրավ է սակայն այն երևույթը, որ նրա առհասարակ հրապարակախոսի իր բուռն կրքով նա պաշտպանում է ազնիտյալ հայերի իրավունքները, ապա երբեմն էլ, երբ այդ անհրաժեշտ էր, չէր խնայում իրենց՝ հայերին։ 1895-ին ջարդերից փրկված 10 սասունցիներ ապաստան էին գտել Թիֆլիսում։ Նրանցից 8-ը կրկին վերադառնում է երկիր։ Սասունցի Խամոն և նրա կին Ալբունը զոհ գնալով ոմն ձեռներեց Պոյաճյանի մեքենայություններին, և լսելով «Արձագանքի» աշխատակիցների խորհուրդները, մնկնում են Լոնդոն։ Պոյաճյանը մի քանի ամիս շարունակ զանազան հավաքներում երիտասարդ ամուսիններին ներկայացնում է Լոնդոնի հասարակությանը, էկզոտիկ փայլ հաղորդելով խորապես դրամատիկ այդ արարողությանը... Բավականաչափ գումար վաստակելուց հետո Պոյաճյանը, սասունցի ամուսիններին հասցնելով Թիֆլիս, չքանում է աստարեղից։ Նրանք այժմ հանդերձավորված էին ոչ միայն եվրոպական տարազով, այլև կրում էին նոր անուններ (Պետրոս և Անուշ)։ «Արձագանքի» խմբագրատանը զրուցելով նրանց հետ՝ Հախումյանը զարմանքով համոզվում է, որ նրանք այլևս չեն ուզում վերադառնալ Սասուն։ Այս միջադեպը հիմք է ծառայում Հախումյանի լավագույն ֆելիետոններից մեկի համար («Միսաքը Պետրոս»)[44]։

Հախումյան-հրապարակախոսի համար բնորոշ է այն, ինչը անհրաժեշտ է լրագրողին՝ ժամանակի զգացողությունը։ Նրա հրապարակախոսության մյուս առանձնահատկությունն այն է, որ ժամանակի հուզող հարցերի մասին գրում է բուռն պաթոսով, գրում է կրքով, համոզմունքով կամ ցասումով։ Հախումյան-լրագրողը հախուռն խառնը-

---

[43] Տե՛ս И. Ямпольский, Сатирическая журналистика 1860-х годов, М., 1964, стр. 6.

[44] Տե՛ս «Արձագանք», 1895, № 131։

վածքի գործիչ էր, դյուրաբորբոք, մի փոքր անհավասարակշիռ։ Անձնական փոքրիկ գժտությունների հետքերով կամ պարզապես չափազանց ինքնավստահությունից՝ նա երբեմն փորձում էր ոչնչացնել ճանաչված հեղինակությունները և քիչ չէր մեղանչում գրական էթիկայի նորմերի դեմ։ Ջայրույթի պահին նա դառնում էր կոպիտ և վիրավորում գրական հակառակորդներին՝ ամենաստոր արտահայտություններով։ Նա իրեն արդարացնում էր նրանով, որ ժամանակին բանավեճում նույնքան անխնա են եղել նաև Հայնեն ու Բյորնսոնը։ Հախումյանը, հարկավ, մոռանում էր Հայնեից և Բյորնսոնից իրեն բաժանող տարածության չափը...

1897 թ. Վրթանես Փափազյանը հրավիրվում է աշխատելու «Արձագանքի» խմբագրատանը իբրև քարտուղար։ Լրագրի էջերում նա հրապարակում է իր բազմաթիվ ստեղծագործությունները և հոդվածները, հսկայական եռանդ է ներդնում խմբագրական աշխատանքների կազմակերպման մեջ։ Սակայն, Փափազյանի հույսերը, թե «Արձագանքը» կարելի կլիներ դարձնել ժամանակի հայ գրողներին կենտրոնացնելու գրական մի օջախ, չեն իրականանում։ Հաջորդ տարվա սկզբին լրագիրը դադարում է հրատարակվել։

Մենք համառոտակի թվարկեցինք «Փորձի» և «Արձագանքի» գլխավոր աշխատակիցների անունները։ Դրանց հետ մեկտեղ Հովհաննիսյանի հրատարակությունների հաջողությանը քիչ չէին նպաստում և բղխակիցները։ Հովհաննիսյանը սեփական բղխակիցներ ուներ Արևմտյան Հայաստանում, երբեմնապես՝ Փարիզում և Լոնդոնում, վերջին շրջանում՝ նաև Բեռլինում և Մադրիդում։ Թիֆլիսից և գավառներից «Արձագանքին» բղխակցում էին շատերը, որոնցից ոմանք տարիների իրենց հետևողական աշխատանքով մեծ նպաստ էին բերում թերթի խմբագրական աշխատանքներին։ Այդ բղխակիցներից էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, պետական աշխատանքի անբասիր կարողություններով օժտված Հակոբ Տիգրանյանը[45]։

Տիգրանյանը «Արձագանքին» բղխակցել է 1884—90 թվականներին։ Նա գերազանցապես գրում էր քաղաքական հոդվածներ՝ առաջնոր-

---

[45] Հակոբ Տիգրանյանը յոթ տարի շարունակ աշխատել է Թիֆլիսի քաղաքային վարչությունում իբրև քարտուղար։ Նա զործուն մասնակցություն ուներ հայ հասարակական կյանքին։ Մի քանի տարի եղել է Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի նախագահ։ Վախճանվել է 1890-ին, Թոքաթից։

դողների և տեսությունների ձևով։ Նրա արծարծած հարցերն իրենց թարմությամբ մեծ հետաքրքրություն էին առաջացնում ընթերցողների շրջանում։

Անկախ այն բանից, թե որքանով էին ինքնուրույն նրա հոդվածները, և թե հեղինակը որքան ճիշտ կողմնորոշում ուներ ժամանակի եվրոպական երկրների քաղաքական կարգերի հետադիմականների հարցում, անկասկած գնահատելի էր նրա այն համոզմունքը, ըստ որի հետամնաց երկրների պետական կարգերի կայունության երաշխիքը պայմանավորված էր ժողովրդական լայն խավերի նյութական ապահովածության և իրավական ազատությունների ներդաշնակությամբ։

1888 թ. «Արձագանքին» սկսում է ընթակցել հայ իրավաբան Կարապետ Յաղուբյանը։ Դաշտոնի բերումով դառնվելով Թիֆլիսից հետու, նա մի քանի տարի շարունակ ընթակցում է «Արձագանքին», հետակա ձևով դեկավարելով արտաքին տեսության բաժինը։ «Արձագանքի» տեսաբանը բաժնի նյութերը կազմում էր այն հաշվով, որպեսզի դրանք մատչելի լինեին միջին ընթերցողներին։ Նրա համոզմունքով հայ հասարակության կրթված դասը ազատ կարող էր օգտվել ռուսական մամուլից։ Որ բաժինը մեծ ընդունելություն է գտնում, այդ երևում է այն խրախուսական նամակներից, որ ստանում էր խմբագրությունը ընթերցողներից։

Կարապետ Յաղուբյանը զարգացած և բարձր կուլտուրայի տեր լրագրող էր, որը հայ ընթերցողներին լայն տեղեկություններ էր տալիս ժամանակի եվրոպական երկրների քաղաքական իրադարձությունների մասին։ Այդ երկրների պետական կառուցվածքի հարցում Յաղուբյանի համակրանքները Անգլիական պետական սիստեմի կողմն էին։ Հարկ է նշել, սակայն, որ հայկական հարցում նա անվարան և առանց վերապահության նշանակում է ողջ եվրոպայի խաղացած անփառունակ դերը[46]։

«Արձագանքում» «Մարդարիտ» ստորագրությամբ թարգմանություններ է տպագրել Տիրումի Կոստանյանը (Կարապետ Կոստանյանի

---

[46] «Արդյոք որևէ հույս կա՞, որ եվրոպան կատարե այդ մարդասիրական գործը,— խորհրդածում է Յաղուբյանը,— որևէ գործնական [նշանակություն] կունենա՝ եվրոպական մամուլի հայտնած կարծիքը, թե եվրոպան պետք է օգնության ձևոք կարկառե Տաճկաստանում ավազակների ձևոքին տանջվող հայերին։ Մենք կարծում ենք ոչինչ» (տե՛ս ՎԿՊՊԱ., ֆ. 480, գործ 1052)։

կինը)։ Օրիորդ Մարգարիտ Մատինյանը լրագրի էջերում պարբերաբար հրապարակում էր Թիֆլիսի երաժշտական կյանքի օրագիրը։

1894—96 թվականներին «Արձագանքի» գեղարվեստական գրականության բաժնում, դարձյալ «Մարգարիտ» ստորագրությամբ երևում են Մարգարիտ Պայազատյան-Նավասարդյանի պատմվածքները[47]։ Նա ավարտել էր ժննևի համալսարանը, ապա կատարելագործվել ժննևի և Փարիզի համալսարանների մի քանի ֆակուլտետներում։ Հայրենիք վերադառնալուց հետո զբաղվում էր գրական աշխատանքով։ Ամուսնացել է 1896-ին, 38 տարեկան հասակում։

«Արձագանքի» հրատարակության վերջին շրջանում լրագրին թղթակցում էր Գրիգոր Տեր-Միքայելյանը, որը մինչ այդ մանկավարժական աշխատանք էր կատարում Շուշիի քաղաքային ուսումնարանում։ Նա իր հոդվածները հրապարակում էր «Ազատ ժամեր», իսկ երբեմն էլ «Պարապ ժամեր» խորագրի տակ՝ «Սերմացան» գրական կեղծանունով։ Սերմացանի հոդվածները հիմնականում շոշափում էին առօրյա հարցերը։

Սերմացանը անդրադարձել է ժամանակին եվրոպական երկրներում ծավալվող կանանց շարժմանը, հայ ընթերցողներին ծանոթացրել Բաղելի և Բեռլինի կանանց կոնգրեսների հետ։ Նա հիշատակում է Ֆրանսիայի կանանց շարժումը՝ հօգուտ Արևելքի կանանց իրավունքների պաշտպանության, ինչպես և Անգլիայի կանանց պայքարի պատմությունը՝ ընտրական իրավունքներ ստանալու ուղղությամբ։ Այս ֆոնի վրա նա ջարդացնում է հայ կանանց իրավունքների պաշտպանության հարցը և կոչ անում այրերին՝ նպաստել կանանց բարոյական, մտավոր և նյութական առաջադիմության։

«Արձագանքի» վերջին տարիների գործունյա թղթակիցներից էր Հակոբ Ճաղարբեկյանը։ Շուշիի թեմական դպրոցն ավարտելուց հետո նա 1881—1896 թթ. մանկավարժական աշխատանք է կատարել տեղի դպրոցներում, միաժամանակ զբաղվել է գրական, թարգմանական աշ-

---

[47] «Արձագանքի 1894—96 թթ. համարներում տպագրվել են Մարգարիտի հետևյալ ստեղծագործությունները. «Սիրո աչքեր», «Ապարանջան», «Վիլպասան Խուդավերդյանի խոստովանանքը», «Մորուկի սիրուհին», «Դավաճանի հայրը», «Շողիկի վերադարձը»։ Վերջին երեք պատմվածքների սյուժեն վերցված է 1894—96 թթ. հայկական ջարդերի հետ կապված դեպքերից։

խատանքներով[48]։ 1885-ից սկսել է թղթակցել «Աղբյուր» հանդեսին, ապա «Նոր-դար» լրագրին, ավելի ուշ՝ «Լումային»։ 1895-ից անընդմեջ թղթակցում է «Արձագանքին»։ 1896 թ. հետո, երբ փակվում են հայկական դպրոցները, Հ. Ճաղարբեկյանը ամբողջովին նվիրվում է գրական-հրապարակախոսական աշխատանքին։ «Արձագանքում» տպագրվել են նրա մի շարք գրաքննադատական և հրապարակախոսական հոդվածները։ Վախճանվել է 1900-ին, 36 տարեկան հասակում։

«Փորձի» և «Արձագանքի» թղթակիցների թիվը չի սահմանափակվում հիշատակված անուններով։ Մասնավորապես «Արձագանքին» թղթակցել են նաև բազմաթիվ մանկավարժներ, թարգմանիչներ, գրողներ ու հասարակական գործիչներ։ Մենք կսահմանափակվենք ներկայացնելով ևս մեկ թղթակցի, որն իր վաստակով նշանակալից դեր է կատարել «Արձագանքի» պատմության մեջ։

Վաղինակ (Պետրոս Տոնապետյան)։ «Արձագանքի» Պոլսի սեփական թղթակիցն էր խորհրդավոր մի անձնավորություն՝ Վաղինակը։ Ժամանակակիցների համար երկար ժամանակ առեղծված էր «Արձագանքի» տաղանդավոր թղթակցի ինքնությունը. այդ գործիչն անհայտ էր և թուրքական կառավարությանը, որը քիչ չանքեր չէր գործադրում հայտնաբերելու համարձակ լրագրողին։ 1892 թ. տպագրվում են Վաղինակի վերջին հոդվածները և նա լռում է. այնուհետև Վաղինակ անունը երևում է 1896-ին, երբ «Արձագանքի» հոկտեմբերի 18-ի համարում հրապարակվում է Չերազի «Արմեննիա»-ից (ֆրանս.) արտատպված հաղորդումն այն մասին, որ Աքիայի բանտից փախել է հայ ազիտատոր Պետրոս Տոնապետյանը (Վաղինակը)։

Եվ այսպես, ո՞վ էր այդ խիզախ «հայ ագիտատորը», որին հաջողվել էր անհավատալին՝ փախուստը թուրքական ամենադժնի աքսորավայրից։ Տոնապետյանի ծնողները Տիգրանակերտի նահանգի Բշերիկ բնակավայրից էին, որ 70-ական թթ. կեսերին գաղթել էին Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Վաղարշապատում[49],

---

48 Հ. Ճաղարբեկյանը գրել է «Տնտեսություն բանահյուսության», «Սասունցի Դավիթ», «Վահան Մամիկոնյան ըստ Ղազար Փարպեցու» ուսումնասիրությունները, «Հայոց պատմություն» և «Մայրենի լեզու» ձեռնարկները, մի շարք թարգմանական գործեր և այլն։

49 Պ. Տոնապետյանի հուշագրությունների առաջին գիրքը առատ նյութ է տալիս հեղինակի կյանքի վաղ շրջանի վերաբերյալ. տե՛ս Պետրոս Տոնապետյան (Վաղինակ)։ Հայաստանը և հայ ժողովուրդը դարերի միջով, հատ. Ա, «Մանկություն և պատանեկություն», Փարիզ, 1947, (444 էջ)։

Տոնապետյանը ծնվել է Վաղարշապատում 1867 թ. մանկական տարիներն անց է կացրել այստեղ և ծնողների հետ վերադարձել Բշերիկ։ Սկզբնական կրթությունն ստացել է Տիգրանակերտում, ապա ուղարկվել է Էջմիածին՝ ուսումը շարունակելու Գևորգյան ճեմարանում։ Մի քանի տարի այստեղ սովորելուց հետո, մի միջադեպի կապակցությամբ, երբ իր վրա է առնում երկու ընկերների կատարած հանցանքը, 1882-ի նոյեմբերի վերջին վտարվում է ճեմարանից։ Այս օրերին թեև նրա ծնողները Բշերիկից կրկին դարձել էին Վաղարշապատ, Տոնապետյանը հեռանում է այնտեղից։ Նախ նա մտածում է մեկնել Պետերբուրգ, ուսումը շարունակելու, ապա վճռում է գնալ Թիֆլիս։ Երևանի ծանոթների հանձնարարականով Թիֆլիսում նա ներկայանում է Երևանցի Գալուստ Ալոյանին, որը ընդհատելով իր կրթությունը, վճռել էր ինքնագործություն սովորել և կյանքը նվիրել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը։ Տոնապետյանը, Ալեքսանդր Ծատուրյանը և Միքայել Հովհաննիսյանը (ապագա Նար-Դոսը) Ալոյանի գաղափարների ազդեցության տակ ընդունվում են Թիֆլիսի արհեստագիտական դպրոցը՝ երկաթագիտության (իսկ հետո և ինքնագործության) մեջ վարժվելու համար։

1883 թ. սկզբից մինչև 1884-ի գարունը նրանք սովորում են այդ դպրոցում, ապա իրենց մեջ մետաղագործի կոչում չդգալով, թողնում են այն[50]։ Տոնապետյանը արևմտահայ իրականության հետ ավելի մոտիկից շփվելու նպատակով մեկնում է Կ. Պոլիս և աշխատանքի անցնում «Արևելք» թերթի խմբագրատանը, իբրև խմբագրության անդամ՝ ռուսական լուրերի գծով։ Պետք է ենթադրել, որ նրա ծանոթությունը Ա. Հովհաննիսյանի հետ տեղի է ունեցել Կ. Պոլիս մեկնելու նախօրյակին, որովհետև 1884-ից արդեն՝ նա սկսում է թղթակցություններ ուղարկել «Արձագանքին»՝ վաղինակ ստորագրությամբ[51]։

Ինչպես պարզվում է նրա ուշ շրջանի գործերից, Տոնապետյանը հետագայում կապվում է հնչակյան կուսակցության հետ։ Արդեն ասացինք, որ թերևս իր քաղաքական գործունեությունը Ռուսաստանի որոշ շրջանակների հետ համաձայնեցնելու դիտավորությամբ, 1888—91 թթ. նա մի քանի անգամ գալիս է Մոսկվա, անցնում Պետերբուրգ և Թիֆ-

---

[50] Խանդավառ խմբակի անդամներից միայն Ալոյանն է հետագայում կրթությունը լրացրել գործում Տուլայի զինագործարաններից մեկում։

[51] Տոնապետյանի հուշագրություններն ավարտվում են Թիֆլիսի շրջանով և, բնականաբար, «Արձագանքին» ունեցած նրա գործակցության հանգամանքները չեն լուսաբանվում այդ հատորում։

լիս։ 1892-ի սկզբին Տոնապետյանը սուլթանի դեմ մահափորձ նախապատրաստելու մեղադրանքով ձերբակալվում է և աքսորվում Աքիա[52]։ 1895-ի հուլիսին 80 հայ քաղաքական բանտարկյալների՝ ընդհանուր ներման հոդվածով ազատում են բանտից. «Երեք հոգի միայն,— գրում է Տոնապետյանը,— որ դատարանով դատապարտված չէին, այլ աքսորված էին կայսերական բացառիկ հրամանով, զրկված համարվեցան այդ ընդհանուր ներումեն, նկատվելով իբրև «մեծ եղեռնագործներ»։ Այդ երեք անձերեն մեկն էր այս տողերի գրողը»[53]։ 1895 թ. Աքիայի բերդն են բերվում «Երիտասարդ Թուրքերի» կազմակերպության երկու անդամներ։ Դրանցից մեկին, Շևֆիկ բեյին՝ «Երիտասարդ Թուրքերի» Կ. Պոլսի կոմիտեն փախցնում է բանտից։ Շևֆիկ բեյի խնդրանքով նրա բարեկամները փախցնում են և Պետրոս Տոնապետյանին։ Վերջինս իսկույն անցնում է Ալեքսանդրիա, այստեղ նա ընտրվում է հնչակյան կուսակցության կենտրոնի անդամ և մեկնում Լոնդոն՝ օգնելու կենտրոնին[54]։

Պ. Տոնապետյանը դեռևս 1893-ին ինչ-որ ճանապարհով մի թղթակցություն է ուղարկում «Արձագանքին» («Աքիա», պատմական ակնարկ), իբր՝ Կահիրեից, «Վաղինակ» ստորագրությամբ[55]։ Լոնդոն հասնելուց հետո նա կրկին վերականգնում է կապերը «Արձագանքի» հետ և 1897-ին աշխատակցում այդ լրագրին, իբրև սեփական թղթակից։ Հետագա իր ամբողջ կյանքը Պ. Տոնապետյանն անց է կացնում Անգլիայում։ Նա ապրում է մինչև խորին ծերություն (1948-ին դեռ ողջ էր)։

Հեռանալով կուսակցական խնդիրներից և պայքարից, Տոնապետյանն զբաղվում է գրական աշխատանքով։ Տարիներ շարունակ վայելելով անգլիացի ճանապարհորդ և դիտնական Հևների լինչի բարեկամությունը, պատրաստում և հրատարակում է նրա հռչակավոր «Արմենիա» աշխատության փոխադրությունը հայերեն[56]։ Հետագայում, մեծ

---

52 Վերջին թղթակցությունը «Արձագանքում» տպագրվել է 1892 թ. մարտի 25-ին։

53 Պ. Տոնապետյան, Զայն տառապելոց, Փարիզ, 1922, էջ 414։

54 Նույն տեղում։

55 Վաղինակը նկարագրում է Աքիան, որը «օձի պես թռամնելի և կարիճի պես թունավոր» երևույթ ուներ։ Աքիան մի վայր է, գրում է նա, «ուր արդարության և իրավունքի կատարյալ բացակայություն է տիրում և ուր, իբրև դժոխքի մեջ, չարաչար տառապում են ճշմարտության և իրավունքի համեստ դիվորներ...» (տե՛ս «Արձագանք», 1893, № 91)։

56 «Արմենիա» լինչի (հեղինակի պատկերով և ինքնակենսագրությամբ), գրեց Պ. Տոնապետյան, Լոնդոն, 1902։

Եղեռնից հետո, նա հավաքում է ջարդերին ականատես եղած և մահից հրաշքով խուսափած հայերի անձնական նամակները, որոնք ուղղված էին գերազանցապես ամերիկյան մայր ցամաքում գտնվող նրանց հարազատներին: Թվով 353 այդ նամակները նա հրատարակում է, կցելով հեղինակային իր խոսքը՝ «Անդունդն անդունդ» խորագրով (պատմական ակնարկ՝ հայկական հարցի մասին)[57]: Այդ աշխատության մեջ Տոնապետյանը հիշատակում է և ապագայում հրատարակելիք իր գործերի վերնագրերը. դրանք էին՝ «Ազգային նրազներս և բանտերս» և «Հ. Ֆ. Բ. Լինչ՝ հեղինակ «Արմենիա»-ի հնգետասնամյա բարեկամության հիշողություններ»: 1946-ին նա իրականացնում է իր ծրագրի մեկ մասը, այն է՝ տպագրում է իր հուշագրությունների առաջին գիրքը, խոստանալով հետագայում դրել և երկրորդ հատորը՝ «Հեղափոխություն, բանտ և ազատություն»[58]:

Պ. Տոնապետյանը այն բացառիկ գործիչներից է, որոնց բախտ է վիճակվել ապրել հայկական հարցի պատմության բոլոր էտապներում: 80-ական թվականներին նա իր՝ հրապարակախոսի գրչով մասնակցել է հարցի քննարկումներին, 90-ական թվականներին ընկել է Կ. Պոլսի ստորգետնյա զնդանները և ապրել Աբիայի տաժանակրության, ականատեսների միջոցով ամբողջական պատկերացում է կազմել մեծ եղեռնի նախճիրի մասին և հավաքել ու աշխարհին հանձնել տառապյալների մորմոքի ձայնը: Մեր խնդրի շրջանակներից դուրս է կանգ առնել 1910—20-ական թթ. նրա մտորումների վրա, որոնք բացահայտորեն կրում են անգլոֆիլ գործիչների մտածողության կնիքը: Սակայն արժե նշել, որ 30—40-ական թթ. Տոնապետյանի գաղափարները որոշակի առաջընթաց են ապրում: Տասնամյակներ շարունակ նա կշռադատում է հայության ճակատագրի աջն ու ահյակը, փորձում է տեսնել նրա փրկության հնարները, նրա ապագայի կայուն երաշխիքը: Պ. Տոնապետյանը այն համոզմունքն է հայտնում, որ Եվրոպական տերությունները թույլ տային Ռուսաստանին՝ տիրապետելու հայկական նահանգներին, այդ «ամենամեծ բախտավորությունը պիտի լիներ Թուրքիո հայ ժողովրդյան համար»: «Բայց,— գրում է նա,— Եվրոպան չէր

---

[57] Պ. Տոնապետյան, Ձայն տառապելոց, Փարիզ, 1922:

[58] Մեզ հայտնի չէ, կատարե՞լ է արդյոք իր ծրագրած գործը ուխտունամյա հեղինակը, թե ոչ: Երիտասարդական տարիներին նա հրատարակել է ևս մի բրոշյուր՝ նվիրված հայ հանճարեղ դերասան Պետրոս Ադամյանին («Քսան և հինգամյա բեմական գործունեություն Պ. Ադամյանի»):

կարող հանդուրժել և թույլատրել ցարական Ռուսիո թևերի տարածումը դեպի Միջագետք և Միջերկրական և Թուրքահայությունը զոհվեց և ղրկվեց երջանկության բախտից ապրելու ազատության կյանքով վանում խորհրդային միության երջանկաբեր հովանիի տակ յուր ազատ ազգակիցների հետ»[59]:

Պ. Տոնապետյանը 30-ական թվականների սկզբին հետաքրքրվում է Սովետական Հայաստանի մշակութային կյանքով, ծրագրում օգնել նորաբաց գրական թանգարանի հարստացմանը և այդ կերպ նպաստել հայ մտավորականության և, մասնավորապես, գրողների զարգացմանը: 1932-ին նա այցելում է Սովետական Հայաստան, գրական թանգարանի տնօրեն Խորեն Սարգսյանի ընկերակցությամբ ծանոթանում թանգարանի և գրադարանի հետ և վերադարձից հետո, սկսած 1933-ից՝ Երևան է ուղարկում Լինչի արխիվը և իր գրքերի թանկարժեք հավաքածուները (թվով 1500 հատոր ընտիր գրականություն)[60]:

Սակայն անդրադառնանք «Արձագանքին» նրա ունեցած մասնակցությանը:

«Արձագանքին» թղթակցելու առաջին տարիներին Տոնապետյան-Վաղինակը տպագրվում էր գրեթե ամեն համարում. նրա հոդվածները նվիրված էին Թուրքիայի քաղաքական և տնտեսական կյանքին, Ազգային ժողովի նիստերին, Պատրիարքարանի և պատրիարքի գործունեությանը, Երուսաղեմի պարտքին, գավառների վիճակին, արևմտահայության կուլտուր-կրթական կյանքին, գրականությանն ու մամուլին: Չկար հասարակական կյանքի որևէ բնագավառ, որ վրիպեր երիտասարդ լրագրողի տեսադաշտից:

1885—87 թվականներին «Արձագանքի» Կ. Պոլսի թղթակիցը մի շարք հոդվածներում քննադատում է Պատրիարքարանի գործունեու-

---

59 Պ. Տոնապետյան. Հայաստան և հայ ժողովուրդը դարերի միջով, Փարիզ, 1947, էջ 173:

60 Տոնապետյանը Երևանի գրական թանգարանին է ուղարկել իր բարևկամ Լինչի «Արմենիա»-ի ձեռագիրը և արխիվը (որոնք նրան էին պատկանում Լինչի կտակով), իր «Ձայն տառապելոց» գրքից 400 օրինակ, եվրոպական և անտիկ հեղինակների երկերի բացառիկ արժեքավոր և հնատիպ հրատարակություններ, աշխարհի բազմաթիվ ժողովուրդների արվեստների պատմության նվիրված մենագրություններ, գեղարվեստական գործերի վերարտադրությունների մեծարժեք ալբոմներ, Շեքսպիրի երկերի հազվագյուտ, բազմապիսի հրատարակություններ, գիտության ամենատարբեր ճյուղերին նվիրված ուսումնասիրություններ և այլն (տե՛ս «Հայաստան և հայ ժողովուրդը դարերի միջով», «Ալ գրագետս Հայաստանի» հավելվածը):

թյունը և Ազգային ժողովի անպատասխանատու ընթացքը։ «Սահմանադրություն և անկարգություն» առաջնորդողում քննադատվում են այն ապօրինությունները, որոնք թույլ են տրվում Ազգային ժողովի կողմից։ Թեև 25 տարի առաջ հայ ազգասեր գործիչները մեծագույն ջանքերի գնով Սահմանադրություն են ստեղծել, ասված է այդ հոդվածում, բայց այն չի ծառայում նպատակին։ «Ազգի մեջ մտած օրից ցայսօր անկարգության հետ դաշնակցել, ձեռք-ձեռքի բռնած քայլում են. այնպե՞ս սերտ միացած են, որ երկյուղ կա, որ եթե մի օր ազգը կամենա յուր միջից մինը դուրս հանել, ակամա մյուսն էլ մեկ տեղ հալածե»[61]։ Սահմանադրության 27-ամյա տարեդարձի առիթով կրկին անդրադառնալով այս հարցին, Վաղինակը հայտարարում է. «Վերջին մի քանի տարվան մեջ փաստերը ցույց տվին, թե Սահմանադրությունը լոկ գործիք մը եղած է հզորների ձեռաց մեջ, ոչ թե օրենք, այլ քմահաճույք դարձած է մի խումբ մարդոց համար»[62]։ Թղթակիցն այնուհետև քննադատում է և՛ պատրիարքի գործունեությունը, և՛ Ազգային ժողովի նախագահ Նուրյանին և ատենապետ Մերիեմ-Գուլիին։

Մի քանի թղթակցություններում նա ներկայացրել է առանձին դավառների վիճակը և առօրյան (Բրուսա, Նիկոմեդիա)[63]։ Բազմիցս անդրադարձել է Վանի հասարակական-քաղաքական կյանքին։ 1886-ին Վանի ժողովուրդը հուզված էր առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոպոսի հակաժողովրդական գործունեությամբ և նույնիսկ մի հանրագիր էր ուղարկել պատրիարքարան՝ խնդրելով պատասխանատվության կանչել նրան։ Ազգային ժողովը լսելով նրա բացատրությունները, բավարարվում է դրանով։ Վաղինակը վրդովված էր. Պողոս եպիսկոպոսի մեղքով Վանում ձախողվում էր կրթական գործը, դպրոցները փակվում էին, ուսուցիչները հետապնդվում, թաղական խորհուրդները՝ արձակվում։ Խոսվում էր այն մասին, թե առաջնորդի մեղքով 65 հոգի տառապում էին բանտում։ «Ազգային ժողովը, որ ամեն պատագայի մեջ անձնվեր և ազգասեր կանվանեն ինքզինքն,— գրում է Վա-

---

61 «Արձագանք», 1885, № 21։

62 «Արձագանք», 1887, № 21։

63 Այս դավառների անհամեմատ բարեբախտ վիճակը Վաղինակը վերագրում է տեղի առաջնորդների գործունեությանը, ուստի պատահական չպետք է համարել այն, որ 1890-ին «Արաքս» հանդեսում տպագրվել է նրա մի ծավալուն հոդվածը՝ «Մեհեփանոս եպիսկոպոս առաջնորդ Նիկոմիդիո»։

ղինակը,— զարմանալի է, թե մինչև այժմ ինչո՞ւ ինկատ չառնուր այսպիսի բազմաթիվ խնդիրներ, որ կենսական են հայ ժողովրդի համար. այլ միշտ ու հանապազ թատերգական ներկայացումներ կկատարեն Դալաթիո եկեղեցվո բեմին վրա»[64]: Հետագայում, երբ, այնուամենայնիվ, նոր քննություն է կատարվում և Օրմանյանի զեկուցագրի հիման վրա Պողոսը հրաժարեցվում է պաշտոնից, Վաղինակը բարձրացնում է 65 բանտարկյալների հարցը, որոնք Պողոսի զոհերն էին և՝ «հանգամանքներեն դատելով,— գրում է նա,— պատրիարքն և Նուբյան հոգ չպիտի տանեն բանտարկելոց ազատության համար»[65]:

Վաղինակը ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր Թուրքիայի հայկական գավառներում մեծ տարածումն գտած գավանափոխության և դրա ծանր հետևանքների վրա: Տիգրանակերտը, որի ժողովուրդը մնացել էր առանց առաջնորդի, դատարկվում էր. ժողովուրդը գավանափոխ էր լինում և հոսում դեպի Ամերիկա: Ընտանիքներով Ամերիկա էր գաղթում և Խարբերդի հայությունը: «Անուրանալի ճշմարտություն մ'է,— գրում է Վաղինակը,— թե Թուրքիո մեջ, ուր ավելի զորավոր արմատներ ձգած է բողոքականությունը և ամերիկյան դաղափարները, անդ հայ հասարակությունն ջլատված է թե՛ նյութապես և թե՛ բարոյապես, ժողովուրդն անդ յուր ժամանակը կ'անցնի կրոնական պատերազմով և երիտասարդությունն յուր հուսո աստղն Ամերիկայի երկնակամարի տակ եղմարելով, գունդգունդ կերթա Ամերիկա, ուր կթաղվի ողջ-ողջ»[66]:

Վաղինակը լուսաբանել է և Կ. Պոլսի մշակութային կյանքը, վեր հանել դպրոցաշինության, գրականության զարգացման խնդիրները: Նա մասնակցում էր Կ. Պոլսի գրական կյանքին, կարդում արևելահայ և ռուս գրականությանը նվիրված զեկուցումներ, «Արևելքի» ընթերցողներին ծանոթացնում Ռուսաստանի հայերի կյանքին և մշակույթին:

Վաղինակը ջերմ բարեկամական կապերով կապված էր Պետրոս Ադամյանի հետ և նրա հիվանդության ծանր ամիսների մխիթարությունն էր ու նրան խնամողը: «Արձագանքի» ընթերցողները Վաղինակի

---

[64] «Արձագանք», 1886, № 24:

[65] Նույն տեղում, № 30:

[66] Նույն տեղում, № 42:

թղթակցությունների միջոցով ծանոթանում են Ադամյանի և Պարոնյանի կյանքի վերջին օրերի եղերական պատմությանը։

Անշահախնդիր էր «Արձագանքի» թղթակիցը, համարձակ ու հայրենասեր։ Հայ լրագրության պատմության մեջ Պետրոս Տոնապետյանը անտարակույս կգտնի իր արժանի տեղը։

Գ. ՄԱՄՈՒԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աբգար Հովհաննիսյանը այն լրագրողներից էր, որոնք համակողմանիորեն պատկերացնում էին պարբերական մամուլի ունեցած կշիռը հասարակական-քաղաքական կյանքում։ Իր 22-ամյա խմբագրական գործունեության ընթացքում նա առաջնորդվել է մամուլի նկատմամբ ունեցած կայուն սկզբունքներով, խորապես գիտակցել է իր կոչման նշանակությունը և հավատարմորեն ծառայել այդ կոչմանը։ Նրա պարբերականները ամեն բանից առաջ ունեին հստակ ուղղություն. «Արձագանքը» պիտի աշխատի լինել ճշմարիտ արձագանք հասարակական կյանքի և մտքի մի կողմից և եվրոպական քաղաքակրթության՝ մյուս կողմից»,— գրում է նա։ Առաջնորդվելով այս սկզբունքներով, «Արձագանքի» խմբագիրը մեծապես լուսաբանում էր հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերը, ջանում կրթել ժողովրդի մեծամասնությանը և զարկ տալ գրականության ու մշակույթի զարգացմանը։ Նա միաժամանակ ընթերցողներին հետևողականորեն ծանոթացնում էր ազգի անցյալի, նրա պատմության վառվռուն դրվագների հետ, ցանկանալով հայերին սիրելի դարձնել իրենց պատմությունը։ Հովհաննիսյանի համոզմունքով հանուր մարդկության ընտանիքում արժանավոր տեղ ստանալու համար յուրաքանչյուր ազգություն պետք է ճանաչի իրեն, ունենա իր անհատական շեշտված նկարագիրը։ Ուստի նա հայ մամուլի խնդիրն էր համարում օգնել ընթերցողներին՝ ուսումնասիրելու իրենց ազգի անհատական առանձնահատկությունները և ապա միայն սեփական մշակույթի վրա պատվաստել եվրոպական քաղաքակրթությունից և գիտության նվաճումներից որդեգրված նո՛րը, առաջադիմականը։ Իր հրատարակություններում Հովհաննիսյանը բազմիցս ընդգծել է մամուլի խոշոր նշանակությունը. մամուլը պետականություն չունեցող քաղաքակիրթ ժողովրդի մշակութային կյանքի կազմակերպման հիմնական գործոններից մեկն է. ավելին, «նա հասարակական

կյանքի պատկերացնող և միևնույն ժամանակ առաջնորդողը պիտի լինի»: Մամուլի և տպագրական խոսքի մեծագույն պարտականությունը Հովհաննիսյանը համարում է դրանց հասարակական բովանդակությունը, այն, որ դրանք կարողանան «ոչ միայն հսկել ներկա երևույթներին, այլև գովել ու կշտամբել, քաջալերել և պախարակել, նկարագրել և ազդել, ճարակ տալ և աղնվացնել, հետազոտել և մեկնել»[67]: Ա. Հովհաննիսյանը բազմիցս այն միտքն է հայտնել, թե լրագրությունն «ամենասուրբ պաշտոն է», ուստի այդ ասպարեզի գործիչները պետք է կոչումն ունենան այդ պաշտոնին աղնվորեն ծառայելու: «Մամուլի նշանաբանը պիտի լինի ճշմարտություն և միայն ճշմարտություն»[68]: Ելնելով այս ամենից, նա մամուլի էջերում անհանդուրժելի էր համարում կոպտությյան, քծնանքի, շողոքորթության և ինքնագովության արտահայտությունները, հասարակական գործիչներին հանիրավի պարսավելու երևույթները:

Հովհաննիսյանն առավելապես մեծ պահանջներ է առաջադրում թերթերին՝ քաղաքական կյանքի ճգնաժամային պահերին: Այս առումով էլ նա անբավականություն է հայտնում արևմտահայ լրագրողներից, որոնք 90-ական թթ. տեղի տալով դրաքննական ճնշումներին, գնում էին թույլ դիմադրության ճանապարհով: Արևմտահայ թերթերի բովանդակությունն այդ շրջանում կորցրել էր նպատակասլացությունը. գավառի կյանքը և հասարակական քաղաքական խնդիրներն իրենց տեղը զիջել էին առանին գորշ և անամեջ նյութերի, պալատական կյանքի ու սելամլքի արարողության անվերջանալի նկարագրություններին: Երբ 1892 թ. Արփիարյանը սուլթանի ծննդյան տարելիցի առիթով մեծարական մի ներբող է գետեղում «Հայրենիք» թերթում, Հովհաննիսյանը պատժում է Արփիարին՝ «Մեծ տարեդարձ» կոչվող այդ հոդվածն ամբողջությամբ հրամցնելով հայ ընթերցողին՝ «կոմնատարներն ավելորդ են» դատավճռով[69]: Նա հասկանում էր անշուշտ, որ պոլսաբնակ խմբագիրը չէր կարող շրջանցել այդ տարելիցը, բայց և հիշեցնում է, որ «ամեն բանի մեջ, նույնիսկ առ տերությունն երախտագիտական զգացմունքներ հայտնելու գործում, պատշաճության սահմաններից չպետք է անցնել»[70]:

---

67 «Արձագանք», 1889, № 49:

68 «Արձագանք», 1894, № 76:

69 Տե՛ս «Արձագանք», 1892, № 33:

70 Նույն տեղում, № 86:

«Արձագանքի» մամուլի տեսության բաժնում ծաղրելով «Արևելքի» և «Հայրենիքի» վեճը՝ «աշխարհասասան» այնպիսի մի հարցի մասին, ինչպիսին էր կղմինդրի և աղյուսի զանազանությունը, թերթի տեսաբանը նախազգուշացնում է. «Եթե այս ձևով վեճը շարունակվի, նազրմ բևյը հասած կլինի յուր նպատակին»[71]:

«Կ. Պոլսի հայ մամուլը» առաջնորդողում նշվում է, որ եթե 60—70-ական թթ. Կ. Պոլսի թերթերը «պատկեր էին մեր արևմտյան եղբարց նյութական և բարոյական կյանքի», ապա 90-ական թթ. դրանք կորցրել են իրենց նշանակությունը («պետք է այժմ այդ մամուլն անհետացած համարել»): Թերթերը համր են՝ հայ կյանքի հրատապ հարցերի նկատմամբ, խոսում են եվրոպական երկրների առօրյայի մասին, մինչդեռ դրանք կոչված էին բավարարելու ասիակա՛ն ընթերցողի հարցասիրությունը: «Արձագանքի» խմբագրությունը փորձում է զգաստացնել հայ լրագրողներին. «Իտալիայի ազատության արշալույսի օրերին վեց գրաքննական աւյան կար, յուրաքանչյուր տպված խոսք վեց տեսակ գրաքննիչների ձեռքից պիտի անցներ, այնուամենայնիվ այն ժամանակվան մամուլը Իտալիայի մասին էր խոսում և ոչ Ամերիկայի»[72]:

1896 թ. նույնպես «Արձագանքի» խմբագրությունը քննադատում է արևմտահայ խմբագիրներին՝ կյանքի հիմնական հարցերից նրանց կտրվածության, կառավարության նկատմամբ ունեցած ամոթխած հնազանդության և անձեռնհասության համար: Ստացվում են Կ. Պոլսի թերթերը, ասված է «Արձագանքի» առաջնորդողում. դրանց էջերում ամեն ինչ կա, գրախոսություն, թերթոն, բարգմանական վեպ, հարսանիքների նկարագրություն... «Կարդում եք մի թերթ, երկրորդը, բոլոր յոթը և դուք գտնվում եք մի երանական Արկադիայում, ուր ոչ ցավ կա, ոչ տառապանք, ուր արեգակը երբեք չի խավարում»[73]:

Այս իմաստով հատկանշական է, որ Հովհաննիսյանը 1894 թ. հետո վերակառուցում է «Արձագանքի» ծրագիրը: Նա գերազանցապես ներկայացնում է այն «թաքուն աշխարհը», Արևմտյան Հայաստանը, որտեղ ապրում են միլիոնավոր հայ եղբայրներ՝ «հառաչանքով ու ար-

---

[71] Խոսքը վերաբերում է թուրքական ոստիկանության մինիստրին:

[72] «Արձագանք», 1893, № 131:

[73] «Արձագանք», 1896, № 100:

տասուքով մեջքները ծռած, ծանր բեռի, բարբարոսի խարազանի և սրի տակ»[74]:

Սկսած 1894-ի երկրորդ կեսից, տեղական նյութերը, հարցերն ու հոդվածները իրենց տեղը պիջում են արևմտահայ կյանքում տեղի ունեցող անցուդարձին: Այս օրերին գրաքննության խստությունների հետևանքով «Արձագանքի» խմբագիրը ստիպված էր դիմել մի շարք միջոցների՝ արտահայտելու համար ցանկացածը: Նա հեռանալով հրապարակախոսությունից, դիմում է գեղարվեստական գրականության և բանասիրության օգնությանը: Հովհաննիսյանը 1895—96 թթ. «Արձագանքում» զետեղում է բազմաթիվ ուղեգրական տպավորություններ, առակներ, ասացվածքներ, պրուլյներ, հեքիաթներ, ակնարկներ և մեծ գործիչների ասույթները՝ աղգասիրության, հայրենասիրության ու աղատասիրության մասին: 1895 թ. առաջնորդողներից մեկը նվիրելով Հ. Կ. Ճանիկյանի «Հնություններ Ակնա» գրքի տպագրությանը, «Արձագանքի» խմբագրությունն այդ կիսահրապարակախոսական գրախոսությունը դարձնում է հայերի պանդխտությանը, ապրած վշտերին, նրանց ճակատագրին նվիրված լուրջ խորհրդածություն: 1895-ի վերջին՝ ոևկվիևմի պես էր հնչում գրքից քաղված մեջբերումը.

«Պյուլպուլը կը կանչե, գարուն է, գարուն,
Շատ մանուկ մեռեր է այս տարվա տարուն,
Մի՛ բանար, յարանիս խորունկ է, խորունկ»[75]:

Նույն թվականին հնարավորություն չունենալով արևմտահայության մասին հանդես գալու հրապարակախոսական հոդվածով, Հովհաննիսյանն արտատպում է Ներենցի «Կիլիկիա» աշխատության համապատասխան հատվածները և Պարոնյանի «Հոսհոսի ձեռատետրի» մի բաժինը: 1895-ի աղետի օրերին նա հայտարարում է, թե քանի որ Պարոնյանի աշխատության տպագրության օրվանից ի վեր որևէ փոփոխություն չի կատարվել արևմտահայության ճակատագրում, ապա նորից է տպագրում այդ գործը[76]:

Հրապարակախոսական հնարանքի լավագույն միջոցներից էր սլավոնական ժողովուրդների և հունգարացիների աղատագրական պայքարի թեմայի շոշափման պրակտիկան:

---

[74] «Արձագանք», 1894, № 152:

[75] «Արձագանք», 1895, № 150:

[76] Նույն տեղում, № 122:

«Արձագանքի» խմբագիրն անդրադառնում էր և մամուլի «խաղաղ օրերի» խնդիրներին և միջամտում հայ հասարակական կյանքի առավել կարևոր հարցերին։ Երբ 1892-ի գարնանը պարզվում է, որ թատրոնական գործը ձախողվում է, և ոչ մի քայլ չի կատարվում այն բարվոքելու, առաջիկա սեզոնի համար դերասաններ հրավիրելու ուղղությամբ, Հովհաննիսյանն իր թերթի էջերում հրապարակում է Մ. Նալբանդյանի 1860 թ. դեկտեմբերի 20-ին Կ. Պոլսում արտասանած «Ազգային թատրոն Պոլսի մեջ» ճառը հետևյալ ծանոթագրությամբ. «Այսպիսի ժամանակ մենք նպատակահարմար ենք դատում հիշեցնել մեր անմահ հրապարակախոսի կարծիքը թատրոնի նշանակության մասին... Մի խոսք, որ գուցե սթափեցնե մեր թատրոնական գործիչներին»[77]։

Հովհաննիսյանը որքան էլ հակամարտություններ մեջ էր ժամանակի որոշ թերթերի խմբագիրների հետ և երբեմն քննադատում էր նրանց գործելակերպը, գիտեր նաև գնահատել նրանց վաստակը և պաշտպանել լրագրողի հեղինակությունն անարդար հարձակումներից։ Մենք ասացինք, որ նա կշտամբում էր Կ. Պոլսի հայ թերթերին՝ կենդանի կյանքից նրանց կտրվածության համար. սակայն նա չի վարանում ողջունել «Արևելքի» և «Հայրենիքի» խմբագիրներին, երբ սրանք սկսում են հաղորդումներ տպագրել գավառի կյանքից։ Նա ըստ պատշաճին արձագանքում է «Միության Հայաստանի» թերթի 25-ամյա հոբելյանի առնակատարությանը, Պետրոս Սիմեոնյանի մեծարումը դիտելով իբրև հայերի ազգային ինքնաճանաչության արտահայտություններից մեկը։

1886 թ. մեկ և կես տարվա դադարից հետո սկսում է վերահրատարակվել «Մշակը»։ Հովհաննիսյանը ողջունում է Արծրունու վերադարձը և հաջողություն ցանկանում նրան՝ «ազգին աղնիվ և արդյունավետ շավղի վերա ծառայելու գործում»[78]։ Հետագայում կրկին ընդհարվելով Արծրունու հետ, նա այնուամենայնիվ իր թերթի էջերում ընթերցողների ուշադրությունը հրավիրում է նրա նյութական ծանր վիճակի վրա, որը համարում է «հետևանք ընդհանուր պատճառների»։ Արծրունու մահից հետո Հովհաննիսյանը գրում է մի շարք հոդվածներ, որոնցում մոռանալով իր վիրավորված ինքնասիրությունը, փորձում է անաչառ գնահատական տալ Արծրունու գործունեությանը։

Երբ Հայկակ-Արփիարյանը «Մշակի» էջերում տպագրված մի

---

77 «Արձագանք», 1892, № 49։

78 «Արձագանք», 1886, № 1։

հոդվածում անհարդալից արտահայտություններով է խոսում «Մշակի» խմբագրատան մթնոլորտի մասին, մշակականների հետ ընդհարված Հովհաննիսյանը հայ հրապարակախոսի արժանապատվությամբ գրիչ առնելով ձեռքը՝ կշտամբում է Հայկակին։ «Համաձայնեցնեք, որ ճըշմարտությունն էլ յուր որոշ սահմաններն ունի և ապերախտության աստիճանի չպետք է հասնի... դեպի հյուրասիրողները»[79]։ Ա. Հովհաննիսյանը նույնպիսի կրքով էլ պաշտպանում է Սպանդար Սպանդարյանին՝ Մալումյանի հարձակումներից։ Այդ առիթով նա հրապարակում է «Հրապարակախոսական պատիվ» հոդվածը, որտեղ քննարկվում էր մամուլի խոսքի ճշմարտացիության հարցը[80]։

1896-ին մահափորձ է կատարվում Արփիար Արփիարյանի դեմ. Հովհաննիսյանն շտապում է ցավակցություն հայտնել հրապարակախոսին, իսկ «Արձագանքի» էջերում նշավակում է այդ վայրենի փաստը։ «Ներկա դեպքում,— գրում է նա,— մեզ, գրչին ծառայողներիս, դրական մշակներիս հասած է ամենածանր վիրավորանքը, ամենածանր վիշտը։ Հրապարակախոսին մարմնական վիրավորանք հասցնել, սպանել նրան, կամ սպանության փորձ անել նրա դեմ, այդ նշանակում է միտքը սպանել. դա ամենածանր բռնություն է մտքի, դաղափարի դեմ»[81]։

Ա. Հովհաննիսյանին զբաղեցրել է և մասնագետ լրագրողների պատրաստման հարցը։ «Համալսարանականներ» առաջնորդողում նա խորհրդածում է երիտասարդ մասնագետներին մամուլի և գիտական աշխատանքի հետ կապելու անհրաժեշտության շուրջը։

Ա. Հովհաննիսյանը անհամեմատ բարձր հիմքերի վրա դնելով արտասահմանյան ինֆորմացիայի գործը, դժվարանում էր կարգավորել տեղական թղթակցությունների ապահովումը։ Բանն այն էր, որ խմբագրությունը գավառներում չուներ իր վճարովի մշտական թղթակիցները և ապավինում էր պատահական նամակներին, որոնք, իբրև օրենք, գրվում էին սուբյեկտիվ դիրքերից։ Խմբագրությունն իր թղթակիցներին ուղղված մի շարք նամակներով ջանում էր դաստիարակել դավառական թղթակցական ակտիվին, նրա ուշադրությունը հրավիրե-

---

[79] «Արձագանք», 1890, № 27։

[80] Իր հուշերում Շավրյանը նշում է, որ «իբրև շիտակ և անաչառ եվրոպացու», Հովհաննիսյանը հարգանքով էր արտահայտում հայ խմբագիրների մասին (տե՛ս «Լումա», 1904, № 3, էջ 104)։

[81] «Արձագանք», 1896, № 3։

լով երկրի դրության, ժողովրդի առօրյա հոգսերի ու մտահոգությունների վրա։ Իսկական թղթակիցը, գրում է «Արձագանքի» տեսաբանը, «պետք է մի քիչ բարեխղճաբար վերաբերվի իր խնդրին և փոխանակ աստղերի և օդի մեջ պտտվելու, նայի, դիտե և նկարագրե այն կյանքը, որ երևում է իր չորս կողմը։ ... Իջեք օդից երկրի վրա», կոչ է անում հոդվածագիրը դավառի թղթակիցներին[82]։

Էրագրողների նոր սերնդին Ա. Հովհաննիսյանը դաստիարակում էր և իր հրապարակախոսական հոդվածներով։ Նա ժուռնալիստական ամբիոնը ծառայեցրել է եղբայրական ժողովուրդների համերաշխության, հասարակ ժողովրդի լուսավորության և մարդկայնության գաղափարների պրոպագանդման համար։ Նրան հավասարապես հուզել են բժշկական օգնությունից զուրկ և համաճարակների հարվածներին ենթակա գավառների բնակիչները, դպրոցների և հայ թատրոնի անբարեկարգ վիճակը, ուսուցիչների աշխատանքի անհեռանկար պայմանները, կանանց իրավազրկության հարցը, դավանափոխության փաստերը և այլն։

1898 թ. երբ խոսք է բացվում Ներքին Ռուսաստանի օրինակով Կովկասում նույնպես նահանգական համաժողովներ կամ զեմստվոներ ստեղծելու մասին, Ա. Հովհաննիսյանը, ուրախություն հայտնելով հանդերձ այն բանի համար, որ ժողովուրդն ինքնավարության հնարավորություն է ստանում, ըմբռնում է դասային խտրականության արատավոր քաղաքականության դեմ, որի մասին խոսվում էր։ «Հանրաժողովների հիմքը,— գրում է նա,— ընտրական սկզբունքն է և ունի կատարյալ ժողովրդական կերպարանք, իսկ ազնվականությանն արտոնություններ տալ այդ խնդրում, նշանակում է խախտել ընտրական սկզբունքը և գավառական ու նահանգական հանրաժողովների փոխարեն ստեղծել մի այլ հանրաժողով-ազնվականաց, որ արդեն գոյություն ունի և ծառայում է միայն ազնվականների շահերին»[83]։

Հովհաննիսյանը կենդանի հետաքրքրություն էր պահպանում հասարակական կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների նկատմամբ. նրան մասնավորապես զբաղեցնում էին քաղաքային վարչության իրավասուների ընտրությունները։ 1893-ի ընտրությունների նախօրյակին տպագրած իր առաջնորդողներում նա կոչ էր անում

---

[82] «Արձագանք», 1894, № 77։

[83] «Արձագանք», 1898, № 2։

ընտրողներին՝ լինել օբյեկտիվ և անաչառ։ Չէ՞ որ ընտրված իրավասուներին պետք է վստահվեր քաղաքի բարեկեցության և մաքրության, դպրոցական գործի կարգավորման, դրամական հաստատությունների վարկի բարձրացման գործը։ «Ընտրական սկզբունք» և «Քաղաքային ընտրությունների առիթով» առաջնորդողներում այդ խնդիրների մասին խոսելով, Ա. Հովհաննիսյանը ընտրողների ուշադրությունը հրավիրում է նաև աղդային փոքրամասնությունների և արհեստավորների իրավունքների պաշտպանման հարցերի վրա։ Անդրադառնալով այն փաստին, որ վրացիները ընտրական ցուցակում ներկայացված էին միմիայն 7 անունով, Ա. Հովհաննիսյանը գրում է. «Կարծում ենք, որ այս թիվը կարող է կրկնապատկվել և եռապատկվել և ինքնավարությունը դորանից միմիայն ևեթ կշահվեր։ Վստահանում ենք կարծել, որ այնպիսի հասարակական գործիչ, որպիսին է իշխ. Եղիա Ճավճավաձեն, կարող էր միայն պատիվ բերել Թիֆլիսի քաղաքային վարչության։ Այնպիսի հրապարակախոս և իրավաբան, որպես է Նիկ. Նիկոլաձեն, կարող էր մեծապես նպաստել քաղաքային գործերի բաղմակողմանի քննության»[84].

Ա. Հովհաննիսյանը հիշեցնում է նաև, որ անարդարացիորեն անտեսվել են և մահմեդականների իրավունքները, այնինչ նրանք զգալի տարր են կազմում Թիֆլիսում։ Ներկայացված ցուցակում մոռացության էր տրված մի ամբողջ դասակարգի՝ արհեստավորների իրավունքը։ Այս առիթով նա գրում է. «Մի՞թե Թիֆլիսի բազմաթիվ արհեստավորները ոչ մի ներկայացուցիչ չպետք է ունենան քաղաքային վարչության մեջ. ի՞նչ եք կարծում, մի՞թե ներկա քաղաքագլխի բռնած դիրքը համքարների հարցի վերաբերությամբ առանց բողոքի կանցներ, եթե գոնյա մի արհեստավոր նստած լիներ իրավասուների աթոռների վրա»[85]։ Ա. Հովհաննիսյանի գործուն մասնակցությամբ Կովկասի մուսլիմ ներկայացուցիչները մշակում են քաղաքային ընտրությունների սկզբունքները և կազմում բնակնածուների նոր ցուցակ։ Այդ փաստաթղթերը հրապարակվում են «Արձագանքում»[86]։ Նոր ցուցակի համաձայն ենթադրվում էր, ըստ ազդությունների տեղերը բաշխել հետևյալ կերպ. հայեր—41. վրացիներ—13, ռուսներ—14, ադրբեջանցիներ—2, այլազգիներ—10։ Չնայած այս նախապատրաստական աշխատանքնե-

---

[84] «Արձագանք», 1893, № 47։

[85] Նույն տեղում։

[86] Նույն տեղում, № 49։

րին, մայիսի 16-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները վրդովեցուցիչ էին։ Ընտրվել էին 54 հայ, 9 ռուս, 6 վրացի և 3 այլազգի։ Ա. Հովհաննիսյանն այս առիթով իր զայրույթի խոսքն արտահայտում է «Մայիսի 16-ի ընտրությունները» հոդվածում, որը իլյա Ճավճավաձեն ամբողջությամբ արտատպում է «Իվերիայում»։ «Այնպիսի խառն ազգաբնակություն ունեցող քաղաքում, որպիսին է Թիֆլիսը,— գրում է Հովհաննիսյանը,— որ բազմազան պահանջներ և պետքեր ունի, հայկական բարձրագույն շահերը պահանջում են, որ քաղաքային խորհրդի գործունեության պատասխանատվությունը և պատիվը չպատկանեն բացառապես հայերին, այլ բաժանվի նաև մեր համաքաղաքացոց՝ վրացիների և ռուսների մեջ»[87]։ Մայիսի 16-ի ընտրությունների արդյունքները բնականվում են նահանգական իշխանության կողմից և նշանակվում են նոր ընտրություններ[88]։ Ա. Հովհաննիսյանը մի այլ առաջնորդողում զոհունակություն է հայտնում այդ վճռի առթիվ. «Քաղաքիս իրավասուներ ընտրելու գործում փոքրամասնությունը կազմում են վրացիք,— գրում է նա։— Հեռացնել սոցա քաղաքային խորհրդից, նշանակում է մի անօգուտ և վնասակար անարդարություն գործել»[89]։

1894 թ. խոսվում էր օրենսդրական սկզբունքներով Թիֆլիսում կրթական գործը բարելավելու մասին։ Ա. Հովհաննիսյանը, վկայակոչելով հավասարության և քաղաքակրթության սկզբունքները, «Արձագանքի» էջերում հարց է բարձրացնում առաջին դպրոցը բանալ մահմեդական ազգաբնակչության համար։ Նրա ելակետն այն էր, թե 10000-ի հասնող «մահմեդական բնակիչները ևս կատարելապես նույն խնամքը պետք է վայելեն, որ վայելում են հայերը, վրացիք և ռուսները։ Քաղաքակրթվելու մեծագույն պահանջն ունին մահմեդականները, ուստի եթե խնդիր է լինում քաղաքային տարրական դպրոցների մասին, առաջին տեղը պետք է բռնեն բնակիչների այդ մասի համար հիմնվելիք դպրոցների խնդիրը»[90]։

«Արձագանքի» տեսաբան Շիրվանզադեն «Անդրկովկասի թուրքերը» առաջնորդողում և այլ հոդվածներում խոսում է ադրբեջանցի մտավո-

---

87 Նույն տեղում, № 57։

88 Մայիսի 30-ին նշանակված նոր ընտրություններից հրաժարվում են բոլոր վրացիները (բացի Սերեթելուց և Կոլոբանակիից)։ Ընտրվում են 10 այլազգիներ, 2 վրացի, իսկ մնացածները՝ հայեր։

89 «Արձագանք», 1893, № 60։

90 «Արձագանք», 1894, № 75։

բականության լուսավորական ձեռնարկումների մասին։ Նա ողջունում է խմբագիր Ջալալ Ունսի զադեի խիզախությունը՝ «Քեշկյուլ» թերթը ադրբեջանական ժողովրդական լեզվով հրատարակելու համար։ Նրա եղբայրը Բաքվում մի քանի առաջավոր գործիչների հետ զբաղվում էր ադրբեջանական դասական հեղինակների երկերի հրատարակությամբ։ Նրանք թևև հալածվում էին, շարունակում էին ձեռնարկած գործը և Շիրվանզադեն հույս էր հայտնում, որ նրանք կհաղթեն լույսի ու խավարի գոտեմարտում։

Ա. Հովհաննիսյանը նույն տրամաբանությամբ ողջունում է բաքվեցի երիտասարդ ուսուցիչ Նարիմանովի հիմնադրած գրադարան-ընթերցարանի բացումը և ընդգծելով Նարիմանովի անձնվեր աշխատանքն ու նրա մուծած նյութական զոհաբերությունը, կոչ է անում հայ և ադրբեջանցի երիտասարդությանն ու հարուստներին՝ օգնել Նարիմանովին։ Երբ 1894 թ. Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի ադրբեջանցի աղգաբնակչությունը սովից նեղվելով օգնություն է խնդրում նպաստներ բաժանող ընկերության հայկական մասնաճյուղից, «Արձագանքի» խմբագիրը գրում է. «Մեր մարդասիրական և քրիստոնեական պարտքն է՝ օգնել մեր հարևաններին, թուրքերին, և եթե կարող ենք, հաց տալ նրանց։ ... Այսպիսի մի վեհ և մարդասիրական խնդրում մենք միայն մի առաջնորդող սկզբունքի պիտի հետևվենք, այն է՝ մարդասիրության»[91]։

Այս ամենից հետո պատահական չէ արդեն, որ երբ քաղաքային ընտրությունների ժամանակ բշնամական կայծ է ընկնում Գանձակի հայ և ադրբեջանցի աղգաբնակչության մեջ, «Արձագանքն» իսկույն խառնվում է գործին, միջադեպը կանխելու աղնիվ միտումով։ «Փոխադարձ ատելությունը երկու կողմերի համար ևս հավասարապես վնասակար է,— ասված է «Պետք է համերաշխ լինել» հոդվածում։— Փոխադարձ թշնամության հորձանքի մեջ ընդհանուր շահերը միայն խեղդվել, ոչնչանալ կարող են։ Քաղաքի բարեկարգության, քաղաքային գործերի առաջադիմության համար անհրաժեշտ է, որ այդ համայնքները ձեռք-ձեռքի տված միասին գործեն։ Համերաշխությունը, փոխադարձ հարգանքը երկու կողմերին ևս օգուտ են, քաղաքային գործերին ավելի ուժեղ ընթացք կտան։ Միևնույն երկրի վրա, միևնույն օրենքներին ենթակա, միևնույն վիճակի մեջ գտնվող տարակրոն և

---

[91] Նույն տեղում, № 48։

տարալեզու համայնքները՝ որպես հայ, վրացի, թուրք և այլն, համեմատաբար խոշոր ոչինչ շահ չունին»[92]:

Զեռնամուխ լինելով ժուռնալիստական գործունեության, Ա. Հովհաննիսյանը դրսևորում է կազմակերպչական մեծ ունակություններ և ժամանակի ընթացքում կատարելագործում իր հրատարակություններ: Ամեն բանից առաջ Հովհաննիսյանը խմբագրական աշխատանքին մոտենում էր ծայրահեղ պատասխանատվությամբ և մեծ ուշադրություն էր նվիրում իր պարբերականների գաղափարական ուղղության պահպանմանը: Ղեկավարվելով այս սկզբունքով, նա առհասարակ ազատ թողնելով իր աշխատակիցներին, խմբագրում էր նրանց հոդվածները, նրա դրանք այս կամ այն չափով շեղվում էին թերթի ղեկավար գծից: Հովհաննիսյանի բարեկամներից Մանդինյանը հիշում է, որ նա թեև նստած էր բանկում, բայց «յուր ձեռքից չէր թողնում սանձը»: Երբ Րաֆֆին պայման է դնում խմբագրի առաջ, թե իր գրվածքներից ոչ մի բառ չպետք է ջնջվի, Հովհաննիսյանն ընդունելով հանդերձ այդ պայմանը, առաջարկում է և իր սկզբունքը. ուրեմն՝ «Ոչ ամենայն գրվածք կտպագրվի»: Այս առումով ուշագրավ է մի փաստ: Պատկանյան-Սյուլուկը «Փորձի» համար ներկայացնելով իր «Ճանապարհորդության տպավորությունները», պահանջում է այն տպագրել առանց փոփոխության: Խմբագրի տողատակի նշումներից երևում է, սակայն, որ նա, այնուամենայնիվ, որոշ փոփոխությունների է ենթարկել բնագիրը: Հովհաննիսյանը նախ ջնջում է իր ընտանիքի հասցեին Պատկանյանի ուղեգրություններում տեղ գտած գրվատական խոսքերը, ապա կրճատում մի հատված, որտեղ Պատկանյանը անփույթ արտահայտություններով էր բնութագրում վրացիներին: «Ի լույս չհանեցինք մեր եղբայրակից վրաց ազգի մասին հայտնած մի քանի դատողություններ,— գրում է Հովհաննիսյանը.— մեր խորին համոզմունքով հայ և վրաց ազգությունները միշտ սերտ բարեկամ պիտի մնան և՝ ընդհանուրը աչքի առաջ ունենալով, չշեղվին և ժամանակ չկորցնին ապարդյուն և միայն ուրիշին օգուտ բերող վիճաբանություններ վրա»[93]: «Արձագանքի» խմբագիրը չի տպագրում Պապասինյանի դեմ Պատկանյանի գրած բանավիճային հոդվածը, որը Պատկանյանը չէր ուզում ստորագրել: Ուրիշ անգամ Պատկանյանին հանձնարարելով գրախոսել Փիլ. Վարդանյանի «Իլիա-

---

[92] «Արձագանք», 1895, № 17:

[93] «Փորձ», 1879, № 10, էջ 91:

կանի» և «Ողիսականի» արձակ թարգմանությունները, Հովհաննիսյանն այդ հոդվածից կրճատում է Վարդանյանի հասցեին գրված խիստ դրվատական հատվածները։

«Արձագանքի» թղթակից Շովրյանը նրբ անձնական զրույցում այն միտքն է հայտնում, թե Ս. Հախումյանը թեև համարձակ գրիչ ունի, բայց փորձը քիչ է, Ա. Հովհաննիսյանը պատասխանում է, թե նրա դրաքննիչը ինքն է և նրա ոչ մի տողը առանց կարդալու չի թույլատրել տպագրել «Արձագանքում»։ «Նույնը նա կրկնեց պ. Հախումյանի ներկայությամբ, բարեկամների շրջանում»,— շարունակում է Շովրյանը[94]։

Հովհաննիսյան-խմբագիրը դիպուկ դիտողություններ էր անում և տպագրվելիք գեղարվեստական գործերի վերաբերյալ։ 1888-ին, նրբ Լայստի հետ գերմաներենի էր թարգմանում Պատկանյանի «Շատերին մեկը» պատմվածքը, Փ. Վարդանյանին հանձնարարում է գրել Պատկանյանին, որ նա մի փոքր վերամշակի պատմվածքը։ Վառուշի մահը պատճառաբանված չէ, ասում է նա և խորհուրդ տալիս, այդ մահը գեղարվեստորեն հիմնավորելու համար նկարագրել նրա հոգեկան տանջանքները[95]։ Շիրվանզադեն Ներսես և Ալ. Աբելյաններին գրած նամակում պատմում է, որ նրբ Սանդրիկի (Ալ. Աբելյան) «Բամբասանքի արգասիք» վիպակը կարդում է Ա. Հովհաննիսյանի համար, նա այդ գործը թույլ է համարում։ «Արդարև, մի տեսակ ֆանտաստիկական անհասկանալի բանի տպավորություն է անում», ավելացնում է Շիրվանզադեն[96]։

Ա. Հովհաննիսյանը թեև շատ էր զբաղված բանկի մշտական աշխատանքով և կողմնակի պարտականություններով, բայց իր պարբերականների նյութերը նայում էր անձամբ։ Նրա աշխատասիրությունը մեծ չափերի էր հասնում. «Աբգար Հովհաննիսյան արտահայտությունը նշանակում է մարմնացյալ եռանդ և անխոնջ աշխատանք՝ բազմատեսակ ասպարեզներում», վկայում է «Արձագանքի» երկար տարիների աշխատակից Լորդը (Իս. Հարությունյան)[97]։

1880 թ. ամռանը Կ. Պոլիս գնալուց առաջ Հովհաննիսյանը կանխապես պատրաստում է «Փորձի» հերթական համարները (№ 6—7,

---

94 Տե՛ս «Լումա», 1904, № 3, էջ 104։

95 ԳԱՔ, Պատկանյանի ֆոնդ, վավ. 1143։

96 Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 636։

97 «Տարազ», 1904, № 15։

8—9) և ապա միայն մեկնում («Վերջին ժամանակը բացառապես այդ բանով էի պարապած», գրում է նա)։ 1892-ի հունիսին գրում է, թե ստիպված է օրը 16 ժամ աշխատել. բանկի աշխատանքը, զանազան նիստեր, խոկրայի դեմ պայքարող հանձնաժողովի գործնական աշխատանքները նա համատեղում էր «Արձագանքի» խմբագրական գործերի հետ, ընդ որում աշխատակիցների մեծ մասը արձակուրդում էին («Համարյա թե միայնակ պետք է լցնեմ ամբողջ թերթը»)։

1889 թ. վերջին Ա. Հովհաննիսյանը ծանուցում է իր ընթերցողներին, որ հաջորդ տարվանից «Արձագանքը» պետք է լույս տեսնի իբրև պատկերազարդ հանդես։ Խմբագրի նպատակը չէր «Արձագանքը» դարձնել զուտ մասնագիտական, արվեստի հարցերին նվիրված օրգան («Մեր մեջ դեռ անհնարին է աշխատանքի այդ աստիճան բաժանումը», հայտնում է նա). պարզապես գեղարվեստական նկարների օգնությամբ, քանի որ «նկարը ավելի ուժ է տալիս հրապարակախոսության» խմբագիրը պետք է դյուրացներ ժողովրդին ինքնաճանաչության բերելու իր հիմնական խնդիրը։ «Արձագանքի» ծրագիրը մնում էր նույնը. ծառայել հայ հասարակության մտավոր զարգացմանը, դաստիարակել նրա գեղարվեստական ճաշակը, օգնել բարոյական վերածննդությանը և կյանքի արտաքին երևույթների դեմ պայքարել քաղաքակրթության նվաճումների տրոպագանդի միջոցով։ Ինչպես միշտ՝ «Արձագանքի» հիմնական խնդիրներից մեկն էր մնում հայ գրականության զարգացման խթանումը։

1890-ի փետրվարի 15-ին, մի փոքր ուշացումով, լույս է տեսնում պատկերազարդ «Արձագանքի» առաջին համարը, նախկինից՝ (32,5×24) մեծ չափսերով (35,5×27), լավորակ թղթի վրա և երկուսի տեղ՝ երեք սյունակով։ Բաժանորդագինը 5 ռուբլուց դարձել էր 10 ռուբլի։ Շաբաթաթերթերի նյութերի բաշխման մեջ նույնպես կատարվում է զգալի փոփոխություն։ Թուլանում է Արևմտյան Հայաստանին նվիրված բաժինը։ Ուժեղանում է ներքին տեսության բաժինը, որտեղ զետեղվում են առավելապես մանր հաղորդումներ։ Պատկերազարդ «Արձագանքում» հրապարակվել են ժամանակի պետական, գիտական և գրական խոշոր գործիչների լուսանկարները, արվեստի գործերի վերարտադրություններ, տեղագրական և հնագիտական լուսանկարներ, պատմական հուշարձանների պատկերներ և այլն։ «Մեր պատկերները» փոքրիկ բաժնում թերթի տեսաբաններ Հովհ. Լալայանը և Ալ. Երիցյանը անհրաժեշտ

բացատրություններ էին տալիս համապատում հրապարակված նկարների վերաբերյալ։

Ա. Հովհաննիսյանի հույսերը չեն արդարանում։ Բարձրորակ պատկերազարդ հանդեսի հրատարակության ծախսերը հոգալու համար անհրաժեշտ էր ունենալ ամենաքիչը 1500 բաժանորդ, այնինչ «Արձագանքի» բաժանորդների թիվը այդ օրերին մի փոքր էր ավելի 1000-ից։ Խմբագրին չի հաջողվում կլիշեներ պատվիրել Պետերբուրգում և արտասահմանում, ինչպես ծրագրել էր նա։ Դրա փոխարեն նա մատչելի գներով կլիշեներ է ձեռք բերում Զարմայր Մսերյանից (Մոսկվա), որն ուղարկում էր իր «Փարոս Հայաստանի» (1879—1881) արդեն դադարած պատկերազարդ հանդեսի կլիշեները։ Համեմատությունը ցույց է տալիս, որ «Արձագանքում» արտատպվել են «Փարոս Հայաստանի» հանդեսում արդեն հրապարակված ազգային և եվրոպական գործիչների լուսանկարները, պատմական հուշարձանների, հայկական տեղավայրերի պատկերները, ինչպես և ազգագրական բնույթի զանազան լուսանկարներ։ Զ. Մսերյանը ժամանակին այդ նկարները ձեռք էր բերել Կ. Պոլսի, Վանի, Կարինի հայ գործիչներից, որոնց հետ նամակագրական կապեր ուներ և որոնց՝ ժամանակ առ ժամանակ շնորհակալական խոսքեր կամ հանձնարարություններ էր հղում «Փարոս Հայաստանի»-ի միջոցով։ Հետաքրքրական է իմանալ, որ նրան պարբերաբար լուսանկարներ էին ուղարկում Կ. Կամսարականը՝ Վանից և Կարինի առաջնորդ Մ. Օրմանյանը։

1891 թ. կեսերին Հովհաննիսյանը հայտնում է իր բաժանորդներին, որ Թիֆլիսի տպարանների տեխնիկական հետամնացությունը և նյութական դժվարությունները հարկադրում են իրեն՝ կիսատ թողնել ժողովրդի գեղագիտական ճաշակը կրթելու գործը։ 1891-ի հուլիսի 21-ին լույս է տեսնում պատկերազարդ «Արձագանքի». վերջին, 18-րդ համարը, որից հետո Ա. Հովհաննիսյանը իր շաբաթաթերթը հրատարակում է լրագրի ֆորմատով և ծրագրով (№ 19—52), նոր պարբերականությամբ (երկօրյա)։ Նույն թվականի վերջին նա դիմում է և դեկտեմբերի 1-ին թույլտվություն ստանում՝ 1892-ից «Արձագանքը» հրատարակելու իբրև երկօրյա լրագիր։ Լրագրի նպատակը չէր փոխվում։ «Արձագանքը» մնում էր գրական-քաղաքական հրատարակություն՝ հիմնականում նվիրված հրապարակախոսական հարցերի։ Ծրագրվում էր քննարկել հայ հասարակության առօրյան, գավառի կյանքը, դպրոցական և եկեղեցական հարցեր։ Գրական բաժնի նպատակն էր «հայկական նո-

յագույն գրականության և արվեստի պաշտպանությունն ու մշակումը», «Եվրոպական գրականության գեղեցիկ գոհարներին» թարգմանությունը։ Լրագրում նույնպես պետք է հրապարակվեին հայագիտության բնագավառի նորույթները։

1892-ից «Արձագանքը» հրատարակվում է իբրև լիարժեք երկօրյա լրագիր։ Խմբագրությունն աշխատում է բաժիններն ապահովել նյութերի բազմազանությամբ, սկսում է տպագրել նաև Հյուսիսային գործակալության հեռագրերը։

Ժամանակի ընթացքում Ա. Հովհաննիսյանն աշխատում է բարելավել և թերթի տպագրության որակը։ Նրա պատվերով տպարանատեր Մն. Մարտիրոսյանը 1895-ին «Արձագանքի» համար նոր տառեր է ձուլել տալիս։ Այս ջանքերի շնորհիվ թերթի տպաքանակը աստիճանաբար ավելանում է. այսպես, եթե «Փորձը» 1876-ին ուներ 240 բաժանորդ, 1879-ին՝ 600, ապա 1881-ին այդ թիվը հասնում է 700-ի։ «Արձագանքը» հրատարակության առաջին տարիներին ուներ 700 բաժանորդ, 1892-ին 900, 1893-ին 900 (հատավաճառով տարածվում էր ևս 100 օրինակ), 1894-ին՝ 1000։ Ավելի ուշ, 1897-ին «Արձագանքի» տպաքանակը հասնում է 1500-ի, իսկ 1898-ին՝ 1700-ի։ Առերևույթ բարելավ թվացող այս վիճակը, սակայն, չէր հավասարակշռում ելքի և մուտքի հարաբերությունը։ Թերթի տպագրության ծախքերը հասնում էին 11000 ռուբլու և միայն 1200 բաժանորդ ունենալու դեպքում խմբագիրը կարող կլիներ հրատարակել իր թերթն առանց դեֆիցիտի։

Տարիներ շարունակ Հովհաննիսյանի հին պարտքերի վրա պարտքեր էին գումարվում։ Այդ նեղ վիճակից դուրս գալու համար նա վրճռում է 1893-ին սեփական տպարան հիմնադրել. վճիռն իրագործելու համար նրան 6000 ռուբլի էր հարկավոր, որ սակայն, չի հաջողվում ճարել։ Այս էր ահա պատճառը, որ Ա. Հովհաննիսյանը հրատարակչական գործին ղուդընթաց ձեռնարկել է և այլ գործերի։ Այսպես, բանկի հիմնական ծառայությունից բացի նա Արծրունու դալերեայում հիմնադրում է մի գրավաճառանոց («Դրատուն և ընթերցարան Ա. Հովհաննիսյանի»), որը ժամանակին մեծ համարում է ձեռք բերում։ 1889-ին Հովհաննիսյանը Կ. Բեհբուդյանի հետ ստեղծում է սեփական լրագրական գործակալություն, որը կազմակերպում է հայերեն և այլալեզու պարբերականների վաճառքի գործը (հատավաճառով)։ 1891-ին իր վաղեմի աշխատակից Հարոյի հետ նա կազմում է «Բաժանորդագրական ընկերություն», հուսալով իր թերթի հրատարակությունը դնել կազմակերպա-

կան և նյութական ամուր հիմքերի վրա։ «Առաջին անգամ հայ մամուլի մեջ,— ասված էր ծանուցման մեջ,— մի թերթ կհրատարակվի բաժանորդագրական ընկերության ծախսով և խնամքով»։ 1891-ի առաջին կիսամյակում «Արձագանքը» ստորագրում էին Ա. Հովհաննիսյանը (խմբագիր) և Հարոն (հրատարակիչ)։ Հավանաբար այդ ձեռնարկությունն իրեն չի արդարացնում, որովհետև 7 ամիս անց պատկերազարդ «Արձագանքը» դադարեցվում է և երկօրյա լրագրի տակ կրկին ստորագրում է Ա. Հովհաննիսյանը (խմբագիր-հրատարակիչ)։ Այժմ արդեն թերթի մուտքի և ելքի տնօրինությունը հանձնարարվում է թերթի քարտուղար Դյուտ Աղանյանին։

Պետք է ենթադրել, որ Ա. Հովհաննիսյանի հակառակորդները (Արծրունի, Աղայան, Նաղարյան) այնքան էլ հեռու չէին ճշմարտությունից, երբ իրենց հոդվածներում և ֆելիետոններում ծաղրում էին Ա. Հովհաննիսյանին, նրա թերթի փոխակերպումները կապելով անհաջողությունից խուսս տալու նրա ջանքերի հետ։ Մեզ նույնպես թվում է, թե «Արձագանքը» պատկերազարդ դարձնելու Հովհաննիսյանի վճիռը թելադրված էր դրամական ծանր տագնապների այդ շրջանում բաժանորդագինն ավելացնելու ցանկությամբ։ Բանն այն է, որ 1884 թ. ընդառաջելով իր բաժանորդներին, Հովհաննիսյանը թերթի բաժանորդագինը 7 ռուբլուց իջեցրել էր 5 ռուբլու։ Այդ հանգամանքը շարունակաբար հարվածում էր նրա բյուջեին և, ինչպես տեսանք, նա կանդնում է սնանկանալու վտանգի առաջ։ Մինչդեռ պատկերազարդ հրատարակությունը կրկնապատկում է բաժանորդագինը և 1500 բաժանորդ ունենալու դեպքում կարող էր փրկել խմբագրին։

Մեր տպավորությամբ, Արծրունին ճիշտ կռահելով հանդերձ իր պաշտոնակցի ընդունած վճռի շարժառիթը՝ այդ պահին, անարդար էր, երբ ծաղրում էր «Փորձը» շաբաթաթերթ, իսկ այն՝ լրագիր դարձնելու Հովհաննիսյանի ձեռնարկումները։ Նա ծաղրի պատճառ չուներ։ Ա. Հովհաննիսյանը մեծ միջոցներ է ծախսում «Փորձի» հրատարակությունը բարձր հիմքերի վրա դնելու համար. տպաքանակն աստիճանաբար ավելանում է, բայց քանի որ ամսագրի մուտքը արգելվում է Թուրքիա՝ սպասված արդյունքները չեն երևում։

Աբգար Հովհաննիսյանը, որ արդեն կորցրել էր իր ունեցվածքի զգալի մասը, հարկադրված դադարեցնում է «Փորձի» հրատարակությունը, որը նա իրավամբ շքեղություն էր համարում։ Նա հանդում է միանգամայն հիմնավոր այն եզրակացության, թե նման հրատարա-

Կուբյան «նյութական մասը հոգալը մի անհատի ուժից բարձր է և միայն հասարակությունը կարող է հնարավոր անել այս գործի հրատարակությունը»։ Շաբաթաթերթի հրատարակությունը ավելի դյուրին էր, ուստի Հովհաննիսյանը ձեռնամուխ է լինում այդ գործին, բայց հուսալով միաժամանակ, թե մի օր հասարակության գիտակից մասի գործակցությամբ կհաջողվի իրեն շարունակել «Փորձի» հրատարակումը։ Այդ մի օրը չի հասնում և հայկական «հաստ ամսագրի» առաջին լավագույն օրինակը լռում է։ Դրա արժանավոր հաջորդը, «Մուրճ» ամսագիրը հայ լրագրության ասպարեզում երևում է «Փորձի» դադարից 8 տարի հետո միայն, 1889-ին։

Ա. Հովհաննիսյանը շատ էր կապված լրագրական աշխատանքի հետ և իր կյանքը չէր պատկերացնում առանց հրապարակախոսական գործունեության։ Այդ գործին նա նվիրված էր այնպես, որ նույնիսկ հաջորդ էր նախապատրաստում իր համար։ Երբ 1896-ին նրա որդի Ռուբենը Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական բաժնից փոխադրվում է իրավաբանական ֆակուլտետ, Ա. Հովհաննիսյանն այդ առիթով գրում է. «Ես համաձայնեցա, որ Ռուբենն այսուհետև իրավաբանություն ուսանի և «Արձագանքը» ապագայում պատմաբան խմբագրի փոխարեն իրավագետ-խմբագիր ունենա»[98]։

Հովհաննիսյան-խմբագիրը, գիտակցելով հանդերձ իր կատարածի անհրաժեշտությունը և կարևորությունը, ձեռք բերածով չէր հանգստանում։ Նրա այն խոստովանությունը, թե «ավելին գործելու առհավատչյան նո՛ւյն իսկ մեր բեռության գիտակցությունն է, իսկ խրախույսը՝ մեր մտքերի այն արձագանքը, որ լսում ենք մենք կյանքից»[99], հայ լրագրության անցյալից մեր օրերի լրագրողներին հասած ուսանելի ավանդներից պետք է համարել։

1897 թ. «Արձագանքը» հասնում է մեծ հաջողությունների։ Գրական աշխատակիցների ընտրանին, թերթի ունեցած բարոյական կշիռը, հասարակական կյանքում դրա անվերապահ վճռական ձայնը «Արձագանքը» դարձնում են ժամանակի աչքի ընկած օրգաններից մեկը։

1898-ին հրատարակված վեց համարներն իսկ խոսում են թերթի ձեռք բերած նոր որակի մասին։ Թերթի կազմակերպչական հիմքերը կատարյալ էին. բաժանորդների թիվը հասել էր 1700-ի։ Աբգար Հով-

---

[98] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ա. Հովհաննիսյանի անթվական նամակից [1896]։

[99] «Արձագանք», 1892, № 152։

Հանձիսյանը կայուն աշխատավարձով սեփական թղթակիցներ էր նշանակել արտասահմանյան մի շարք երկրներում։ Այսպես, Լոնդոնի թղթակիցն էր «Արձագանքի» հին բարեկամ Վաղինակը, Փարիզինը՝ դրամատագետ Արշակ Չոպանյանը, Իսպանիայից «Արձագանքին» աշխատակցում էր Վ. Սուրենյանցը, Բեռլինից՝, Վանցյանը։ Տեղի հրապարակախոսներից թերթին շարունակում էին աշխատակցել Ս. Հախումյանը, Ալ. Երիցյանը, Հարոն, Ս. Կանայանը։ Հայ գրականությունը ներկայացնում էին Մուրացանը, Վ. Փափազյանը, Հովհ. Հովհաննիսյանը։ «Արձագանքի» քարտուղարն էր Վ. Փափազյանը։

«Արձագանքը», սակայն, 1898-ին վերջնականապես դադարեցվում է։ Ս. Հովհաննիսյանը պետք է հաշտվեր իր նոր վիճակի հետ, պետք է ապրեր առանց լրագրության։ Նա ձեռնամուխ է լինում բանասիրական աշխատանքի։ 1901—1902 թթ. օգնում է Կովկասում գործուղման մեկ գտնվող Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Ֆրանս Ֆինկի հայագիտական աշխատանքներին և Հակոբ Մանանդյանի ու Եղնիկ վրդ. Գյանջեցյանի հետ գործուն մասնակցություն ունենում նրա ութ ժողովածուների հրատարակությանը («Հանդես հայագիտության»)[100]։ 1902 թ. Աբգար Հովհաննիսյանի թարգմանությամբ Փարիզում հրատարակվում են Բաֆֆու «Խազ փուշ» և «Բիբի շարաբանի» վիպակները։ Նույն թվականին Ֆրանսիայի Հանրապետության նախագահը Հովհաննիսյանին շնորհում է ֆրանսիական ակադեմիայի թղթակից անդամի կոչում (Les palmes académiques), «Հանաք մասխարություն չկարծեք,— վշտի միջից ժպտում է վաղեմի Մախլասը,— շքանշանը և մանավանդ ժապավենը շատ սիրուն են»[101]։

Ա. Հովհաննիսյանն այդ տարիներին սովորում էր անգլերեն և իտալերեն, պատրաստում հայկական առածների ֆրանսերեն թարգմանությունները, բայց չի հասցնում դրանք հրատարակել։ Գրական-բանասիրական ղբաղումները, որոնց մեջ ցանկանում էր ապաուվել հրապարակախոսը, չէին կարող նրան մոռացնել տալ իսկական կյանքի ու պայքարի հաճույքը։ Նա հավատիանում է, որ մամուլի աշխարհից դուրս իր կյանքն այլևս ավարտված է։ Ավարտված է՝ բառի բո՛ւն և ո՛չ

---

[100] Ի դեպ Ֆինկը 1903-ին Լայպցիգում հրատարակում է Աբգար Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի հավաքածուի գիտական նկարագրությունը։ (Հետագայում Հովհաննիսյանի կոտակի համաձայն նրա հավաքածուի 21 ձեռագրերն անցնում են Էջմիածնի Մատենադարանին)։

[101] ՀՊԿՊԱ, Եղյանի ֆոնդ, Ա. Հովհաննիսյանի 24. 8. 1902 թվակիր նամակից։

հարաբերական իմաստով։ 1902 թ. Հովհաննիսյանը սրտի լայնացում է ստանում։ Վիշիի առողջարանից նա գրում է հետևյալ ուշագրավ տողերը. «Այստեղ ամենայն եռանդով բժշկվում եմ. առողջությունս քիչ մը քայքայված է. միշտ հառաջադիմելով ևս այս տարի ձեռք եմ բերել կարծեմ սրտի հիվանդություն։ Պետք է խնամեմ ինձ, որպեսզի մահը հաշվեկշիռս կանոնավորելուց առաջ չ'վրա հասնի։

Դուցե այս բոլորը ջղային բնավորություն ունի, որի համար մի տխուր կյանք բազմաթիվ առիթներ է տալիս...[102]։

1904 թ. ապրիլի 14-ին, արտասահմանյան առողջարանները մեկնելու ճանապարհին, Ա. Հովհաննիսյանը վախճանվում է Բաթումում։ Թաղումը մեծ շուքով տեղի է ունենում ապրիլի 20-ին, Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու բակում։ Հայ հասարակությունը արժանին է հատուցում սիրված հրապարակախոսին։ Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերից ցավակցական հեռագրեր են ստացվում։ Պսակներ են դրվում Կովկասի և Ռուսաստանի բազմաթիվ քաղաքների ընկերություններից, դպրոցներից, հայ համայնքների, խմբագրությունների կողմից։ Տիգրան Նագարյանը «Տարազի» 16-րդ համարը նվիրում է «Հրապարակախոս և հասարակական գործիչ Աբգար Հովհաննիսյանի հիշատակին»։ Այստեղ զետեղված են Իս. Հարությունյանի «Աբգար Հովհաննիսյան» հոդվածը (կյանքը և գործը), Գ. Զմշկյանի հրաժեշտի խոսքը, Պ. Պռոշյանի հուշերը, բժ. Լ. Տիգրանյանի հուշերը՝ Հովհաննիսյանի կյանքի վերջին օրերի մասին, Գ. Բարխուդարյանի՝ Հովհաննիսյանին նվիրված բանաստեղծությունը և Ա. Հովհաննիսյանի թաղման նկարագրությունը։ Նրա մահվան դույժը հատուկ մի նամակով եղյանին է հաղորդում Գյուտ Աղանյանը. այդ նամակը՝ իբրև հավաստի փաստաթուղթ և Ա. Հովհաննիսյանի ժամանակակցի զգացումների անկեղծ արտահայտություն՝ մեջ ենք բերում ամբողջովին[103]։

«Գերազանց և պատվական բարեկամ պ. Կարապետ, անշուշտ դիտեք հայոց ազգի և գրականության ա՛յն ծանր և անփոխարինելի կորուստը, որ ունեցավ նա Ձեր ու իմ ամենասիրելի բարեկամ Աբգար Հովհաննիսյանի վաղաժամ մահով։ Դեռ չէինք մոռացել մեր մյուս ծաններ հարվածը, Գևորգ Եվանգուլյանի անակնկալի մահը և նորա բացը զգալի կերպով անդրադարձել էր մեր ազգային և եկեղեցական բոլոր

---

102 Նույն տեղում, Ա. Հովհաննիսյանի անթվական նամակից [8—1902]։

103 Նույն տեղում, Գյուտ Աղանյանի 26. 4. 1904 թվակիր նամակը։

հաստատությունների վերա, երբ այս նոր, անդառնալի հարվածը խորը ակոս բացեց մեր մտավոր և բարոյական անդաստանի մեջ և այլևս չկան այն երկու շնորհալի և արտակարգ խելացի ջահերը, որոնց նույնիսկ ներկայությունը հույս էր ներշնչում հայության։ Ես, որ անմխիթար եմ ներկայումս և արցունքս չեն ցամաքել տակավին աչքերումս, չեմ փորձում Ձեզ մխիթարել այդ խոշոր կորուստների համար, այլ աղոթում եմ, որ Տերը երկարե Ձեր կյանքը, որպեսզի գեթ Ձեզանով մխիթարվին Աբգարին ջերմ սիրող հայ գրագետները և նոցա հետ ես՝ նվաստս, որ 25 տարի շարունակ ցավակից և ուրախակից եմ եղել նորան և նորա սիրելի «Արձագանքի» հոգսերը տարել եմ ուսերիս վերա 14 տարի շարունակ։ Հավիտենական հանգիստ նորա բաղմաշխատ անձի երկրավոր մնացորդներին։

Թաղումը եղավ չլսված հանդիսով և շքեղությամբ, շնորհիվ հասարակությունից ընտրված մասնաժողովի, որի մի անդամն էի ես։ Դրժբախտաբար չպիտի կարողանանք մանրամասն նկարագրել այն հսկայական ցույցերը, որ Կովկասի ամբողջ հայ հասարակությունները արին իրանց անկուզական հանճարավոր գործչին։ Բայց կանենք ինչքան որ կարելին է «Լումայում»[104]։

Հայ հասարակությունը հուշարձան է կանգնեցնում Հովհաննիսյանի գերեզմանին՝ հետևյալ մակագրությամբ. «Փորձի», «Արձագանքի» և «Հայկական գրադարանի» տաղանդավոր խմբագրին՝ երախտապարտ հայ ժողովրդից»[105]։

Մի առիթով Աբգար Հովհաննիսյանը գրել է. «Եթե մեզ մեղադրելու որևէ պատճառ գտնել կամեցողներ լինին, նոքա այդ պատճառը պիտի համարեն անշուշտ այն առանցը, որի բուռն մղման չենք կարողացել դիմանալ...»։ Խոստովանություն է այս, որը կարելի է շփոթել մեր անանուն գրիչների հիշատակարանների բաղում նման արտահայտությունների հետ։ Իրենց կատարածից միշտ անբավական, բայց անձնուրաց կյանքով ապրած հայ գործիչների տասնյակ սերունդներից մեզ հասած ինքնանվիրումի այս խոսքերը բացահայտում են մեր ժո-

---

104 Գյուտ Աղանյանը կատարում է խոստացածը. «Լումայի» 1904-ի 2-րդ համարում նա զետեղում է մի ծավալուն հոդված՝ նվիրված Հովհաննիսյանի կյանքին և գործունեությանը, որի մասին խոսք եղավ սույն գլխի առաջին բաժնում։

105 Թրիլիսիի Վանքի մայր եկեղեցին և բակի պանթեոնը չեն պահպանվել՝ քաղաքի այդ շրջանի վերակառուցումների պատճառով։

ղովրդի հնադարյան մշակույթի կենսունակության գաղտնիքը։ Այդ գաղտնիքը՝ հայ մշակութային գործիչների առաջադեմ հատվածի հավատարմությունն էր անցյալի մեծարժեք ավանդներին և միաժամանակ նրա մտահոգությունը՝ եկող սերունդների ապագայի համար։

Մենք ծանոթացանք անցյալ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի երկու օրգաններին անցած ճանապարհին։ «Փորձը» և «Արձագանքը» պատմական ժամանակաշրջանի օրինաչափ ծնունդն էին և արտահայտում էին 70—90-ական թվականների հայ իրականության մեջ տեղի ունեցած բարդ տեղաշարժերի բովանդակությունը։ Այդ պարբերաթերթերն իրենց արծարծած հարցերի բազմազանությամբ, խմբագրական աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակով, հեղինակային կոլեկտիվի ժուռնալիստական աշխատանքի հրմտությամբ՝ ամենայն իրավամբ XIX դարի երկրորդ կեսի մեր մամուլի պատմության լավագույն էջերից են կազմում։

Սակայն ճշմարտության հարկը պահանջում է ավելացնել, որ քննության առարկա դարձած երկու օրգանները սոսկ երկու օղակն են այն ոսկե շղթայի, որն իրենից ներկայացնում է XIX դարի երկրորդ կեսի հայ մամուլի պատմությունը։ Այդ պատմությունը դեռևս ուսումնասիրված չէ։ Մի բան, սակայն, անհերքելի է, որ «Փորձը» իր հաջողությամբ պարտական էր «Հյուսիսափայլի» թողած լուսավոր ավանդներին, ինչպես և հայկական «հասա ամսագրին» նախորդած «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի ուսանելի փորձին։ «Արձագանքի» կենսունակությունն անպայման սնունդ էր առնում «Մշակից», որը տարիներ շարունակ իշխում էր մտքերի վրա և, ուղում էր այդ «Արձագանքը»՝ թե ոչ, «Մշակն» օբյեկտիվորեն օրինակ էր ծառայում նրան իր մարտական նկարագրով։

80-ական թվականներին հայկական հորիզոնի վրա երևաց ինքնատիպ մի լրագիր՝ «Նոր-դարը», որը դարավերջի ծանրակշիռ քաղաքական օրաթերթերից էր։ «Հյուսիսափայլի» և «Փորձի» ավանդներով հղոթացած «Մուրճը» նոր որակ բերեց հայ լրագրության աշխարհը և շուրջ երկու տասնամյակ արդասավորեց հայկական գրական անդաստանը։

Անցյալ դարի 70—80-ական թվականների հետ է կապվում ճյուղային պարբերականների ծնունդն ու զարգացումը։ Կարելի է թվարկել մի շարք մանկավարժական, մանկա-պատանեկան, պատմա-բանասիրական, թատերական, գրական-հասարակական հանդեսներ և

տարեգրքեր, որոնք համակողմանիորեն ներկայացնում են ժամանակի հայ հասարակական կյանքի պատկերը և միաժամանակ վկայում հայ ժողովրդի հոգևոր հարստության մասին։

Բազմակողմանի է և հետաքրքրական 1870—900-ական թվականների արևմտահայ պարբերական մամուլը։ Այնպիսի օրգաններ, ինչպիսիք են «Մեղուն», «Թատրոնը», «Արևելյան մամուլը», «Մասիսը», «Արևելքը», «Հայրենիքը»՝ հայ հասարակական մտքի պատմության մեջ ունեցած իրենց բարոյական կշռով և արծարծած հարցերի նշանակալիությամբ արժանի են դիտական ուսումնասիրության։

Մեր ժողովրդի երկու հատվածների XIX դարի երկրորդ կեսի պարբերական մամուլի պատմությունն սպասում է իր ուսումնասիրողներին, և մենք հասած կլինենք մեր նպատակին, եթե ընթերցողների դատին ներկայացվող այս աշխատությամբ հետաքրքրություն արթնացնենք դեպի չափազանց կարևոր և անհետաձգելի այդ գործը։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգարյան Սեթ 164
Աբելյան Ն. 10, 11, 248, 249, 309, 540
Աբեղյան Մ. 10
Աբովյան Գ. 227
Աբովյան Խ. 196, 200, 296, 496
Ադամյան Պ. 54, 283, 285—287, 525, 528, 529
Աթաբեկյան Հ. 433
Ալեաթճյան Գ. 388
Ալեքսանդր I 100, 163
Ալեքսանդր II 7, 8, 29, 97, 110, 163, 390, 446, 469, 517
Ալեքսանդր III 8, 9, 39, 56, 86, 87, 110, 116, 278, 279, 331, 472, 473
Ալիշան Ղ. 42, 44, 46, 297—299, 306, 356, 357
Ալոյան Գ. 523
Ախվերդյան Գ. 26, 27
Ամելիո դ'Մասսիմո 219
Ամպերկյան Մ. 40, 69—71
Ամպյան Էդ. 230
Ամպյան Ղ. 9, 54, 208, 210, 306, 354, 459, 494—496, 544
Ամպոյան Գյուտ 55, 275, 292, 303, 352, 452, 493, 500, 509, 510, 544, 547, 548
Ամպուիրյան Գ. 103, 107
Ամֆիթրեկյան Վ. 6
Ամֆիթյան Ա. 434
Այվազյան Բ. 312, 344, 401, 509
Այվազովսկի Գ. 52, 215
Այվազովսկի Հ. 466
Անանով Ալ. 52, 53
Անանյան Մ. 143, 150
Աշըգյան Խ. 376, 382
Աշտարակեցի Ն. 200, 215, 292, 296, 343, 442
Առաքելյան Հ. 310
Աստատուր Հր. 315
Ասլանյան Գ. 375
Աստղիկ 287
Ավգերյան Մ. 301
Ավետիսյան Ս. 125
Ավետիսյան Վ. 10, 11
Արասխանյան Ա. 512
Արեշյան Սալոմե 480, 486
Արիստակես եպսկ. 453
Արծրունի Գրիգոր 7, 18, 22, 23, 26, 34, 51, 68, 89, 94, 106, 108, 137, 179—182, 184, 190, 318, 321, 322, 327, 347, 359, 441, 444—458, 472, 489, 494, 495, 497, 498, 500, 508, 513, 533, 544
Արծրունի Ս. 359
Արմեն 378, 383
Արշարունի Արշ. 6
Արշարունի 257, 259, 402
Արփիարյան Ա. 6, 10, 356, 530, 533, 534

Բաբայան Ա. 40, 43, 44, 58—60, 62, 67, 90, 93, 102—104, 106, 109, 122, 149, 182, 361
Բաբայան Լ. 423
Բաբլոյան Մ. 6
Բագրատունի Ա. 226

Բալասանյան Հ. 125
Բալուղյան Ջ. 355
Բաշալյան Լ. 356
Բաստամյան Մ. 199
Բաստուրմաճյան Հ. 99
Բարխուդարյան Գ. 132, 208, 213—216, 221, 312, 327, 332, 354, 509, 547
Բարխուդարյան Մ. 351, 352
Բարխուդարյան Մկ. 333, 346, 357, 358
Բարսեղյան Խ. 6, 31, 124, 125, 433
Բաբրաճե 203
Բեզլարով Ի. 333
Բելինսկի Վ. 222, 324, 493
Բհհբուդյան Կ. 40, 58, 108, 122, 453, 509, 543
Բիկոնսֆիլդ Բ. 189, 378
Բյորնե Կ. 168
Բյորնսոն Ռ. 352, 519
Բյուզանդացի Ն. 42, 71, 271, 409, 410
Բրաժնիկով 111
Բրայս Ջեմս 209, 409
Բրանդես Գ. 331, 418

Գաբրիել Մաճկալ 312, 333, 334
Գալեմքարյան Գ. 5, 6
Գակկել Մ. 477, 478, 485
Գամառ Քաթիպա—տե՛ս Պատկանյան Ռ.
Գարագաշյան Ա. 71
Գարիբալդի Ջ. 80, 222, 419
Գավացցի Ա. 419
Գատտիլրաս 150
Գեղամյան Ն. 108, 476
Գեղամյանց Հ. 132, 151, 199, 312,
Գևորգ IV 35, 36, 85, 90, 91, 442, 473
Գիրս Ֆ. 107
Գլադստոն Ու. 65, 189, 212, 368, 369, 371, 378, 379, 386, 398, 411
Գյոթե Վ. 66, 215
Գոգոլ Ն. 319, 350, 361
Գոլիցին Գ. 52, 53, 66, 69, 119, 478, 479, 484—486, 488, 492
Գոշեն 368
Գորեմիկին Ի. 119, 468
Գրեգոր 429, 430

Դրիբոյեդով Ա. 283, 319, 327
Դվերացցի Ֆ. 66, 215, 218
Դուլամիրյան Ս. 346

Դալլաքյան Կ. 6
Դամադյան Մ. 394, 405
Դանիելյան Կ. 10
Դարդել 41, 292
Դիլլոն Է. 59, 65, 383, 386
Դիկկենս Ջ. 218
Դյուլորիե Է. 133, 513
Դյուֆերին 369, 370, 371
Դոբրոլյուբով Ն. 182, 213, 328, 426
Դոդե Ա. 217, 228, 330, 331, 514
Դոնդուկով-Կորսակով Ա. 112—114, 245, 469, 472, 482
Դուբյան Պ. 226, 306, 316

Եղյան Կարապետ 31, 32, 38—44, 46—53, 55—60, 62, 64, 65, 67, 68, 70—74, 76, 90, 91, 93, 96—100, 102, 103, 105, 107, 110, 112—115, 117, 119—123, 186, 188, 210, 292, 399, 417, 463, 483, 505, 507, 509, 514, 547
Ելիսեև 291
Եկատերինա II 38, 191
Եղիազարյան Ս. 292, 509
Եղիշե 273, 344
Ենգիբարյան Գ. 248, 249, 251, 284, 349—351
Եվանգուլյան Գ. 39, 49—53, 55, 57, 58, 62, 67, 68, 74, 76, 90—92, 95—103, 106—109, 112—123, 194, 240, 399, 417, 453, 495, 504—507, 509, 547
Երեմիա եպսկ. 453
Երիցյան Ալ. 7, 36, 40, 43, 81, 83, 88, 122, 132, 146, 163, 195, 199—201, 230, 231, 240, 247, 249, 252—254, 279, 292, 294—298, 301, 328, 344, 368, 380, 502, 509, 510, 541, 546
Երիցյան Սրբուհի 132, 192

Զախեր-Մազոխ 333
Զանդ Ժորժ 221, 228
Զարբհանալյան Գ. 226, 352
Զելինսկի Ս. 249, 509
Զինովև 116, 123
Զոլա Է. 331
Զոհրապ Գ. 313
Զուդերմանն Գ. 288, 516
Զուրաբյան Ա. 125
Զուրաբյան Սարգիս 22, 29
Զուրաբյան Ս. 402, 403

Էմին Մ. 199, 298, 509
Էնգելս Ֆրիդրիխ 125, 264, 433
Էնֆիաճյան Ա. 69
Էրիսթով Դ. 283

Թաղիադյան Մ. 316
Թամրազյան Հ. 24—26, 261, 347, 501
Թևոփիլոս Դևյրոլ 150
Թոխմախյան Ա. 108, 376
Թումայան 409
Թումանյան Արշ. 317, 337, 509
Թումանյան Հ. 9

Ժան Մուրիե 291

Իբսեն Հ. 288, 330, 516
Իգնատև Ն. 102
Իզմիրլյան Մ. 97, 197, 382, 386, 388, 389, 391
Իզմիրլյան Հ. 47
Իրվինգ Վ. 330, 331
Իփեքճյան Հ. 40, 72, 73, 153, 273

Լարուլև Է. 195
Լանգլուա Վ. 149
Լալայան Հ. 541
Լայտա Ա. 55, 66
Լասսալ Ֆ. 430
Լաֆարգ Պ. 480
Լենին Վ. Ի. 22, 23, 74, 122, 125, 243, 251, 434, 461, 462
Լեո 6, 18, 301, 351, 390, 391, 396, 494
Լևոնյան Գ. 5
Լեոնց 338
Լևսինգ Գ. 215
Լերմոնտով Մ. 215, 319, 327, 333, 340, 361
Լեփսիուս 409
Լինչ Հ. 524—526
Լոբանով-Ռոստովսկի Ա. 384, 396
Լոռիս-Մելիքով Մ. 100, 102, 110, 113, 200, 321, 326
Լորդ—տե՛ս Հարությունյան Իսահակ
Լորիս-Մելիքով Ի. 320—322

Խալաթյան Գ. 42, 216, 292, 357, 509
Խանդամիրով Ն. 344
Խոսրովյան Գ. 125
Խրիմյան Մկրտիչ 47, 48, 62—64, 67, 68, 71, 72, 91—93, 100, 101, 106, 107, 109, 110, 116, 117, 139, 176, 224, 278, 369, 370, 376, 380, 396, 439, 473

Ծատուրյան Ալ. 346, 349, 523
Ծերեթելի Ա. 331, 537
Ծերենց 10, 98, 99, 109, 145, 176—179, 196, 208, 209, 224, 273, 532

Կամսարական Կ. 48, 62—65, 99, 100, 105, 109, 110, 297, 542
Կանայան Ստ. 381, 546
Կավուր Կ. Բ. 80
Կատկով Մ. 461, 463, 466, 475
Կարրիեր 290
Կարինյան Ա. 6, 479
Կերեքցյան Խ. 363
Կնունյանց Բ. 23, 125
Կոնիբեր 301, 302
Կոշուտ Լ. 420—423, 425
Կոստանյան Կ. 42, 121, 227, 454
Կոստանյան Տ. (Մարգարիտ) 520
Կորայիս Ա. 55, 165, 166, 216
Կրաևսկի Ա. 51, 62

Կրիլով Ի. 319, 328, 516
Կրպե (Կ. Հովհաննջանյան) 418
Կրիտյան Ա. 125
Կուկունյան Ս. 50, 94, 118
Կուսիկյան Կ. 292

Հախումյան Ս. 10, 11, 248, 250, 251, 323, 353, 384—386, 389, 392—400, 410, 413, 414, 459, 489, 509, 515—519, 540, 546
Հայդն Պաուլ 66, 215, 360
Հայկունի Ս. 299
Հայնե Հ. 215, 329, 330, 519
Հանկա Վ. 427, 428
Հասան-Ջալալյան Ռ. 40, 60—62, 91, 104, 113
Հասիբ բեյ 455—457
Հարկորտ Վիլյամ 410
Հարո—տե՛ս Տեր-Հարությունյան Նիկ.
Հարությունյան Իս. 300, 303, 509, 512, 513, 540, 547
Հյուբշման Հ. 290
Հյուգո Վ. 330, 516
Հյուրմուզյան Է. 229
Հովհաննիսյան Աշ. 6, 13, 19, 20, 24, 27, 34, 35, 41, 42, 433, 435, 436, 471, 472
Հովհաննիսյան Գայանե (Մատակյան) 63, 113, 132
Հովհաննիսյան Դ. 504, 505, 507
Հովհաննիսյան Զ. 513
Հովհաննիսյան Ս. 292, 466, 509, 534, 540
Հովհաննիսյան Հ. 284, 287, 288, 312, 336, 337, 349, 354, 355, 454, 509, 513, 546
Հովհաննիսյան Ռաֆիկ 363
Հովհաննիսյան Ռուբեն 274, 456, 488, 545

Ղամբարյան Պ. 132
Ղարաճիչ Վուկ 419
Ղորղանյան Հ. 301
Ղուկասյան Հ. 132

Ճաղարբեկյան Հ. 40, 88, 251, 284, 289, 300, 352, 353, 424—426, 521, 522
Ճանիկյան Հ. 300, 532
Ճավճավաձե Իլյա 536, 537

Մադաթյան Նշան 99
Մալխասյան Ստ. 291, 292, 348, 352, 355, 360
Մալկոլմ Մակքոլ 398, 410
Մալումյան Ս. 452, 458, 534
Մակար կաթողիկոս 67, 87, 91, 439, 440, 444, 452
Մանձինի Ջ. 221, 419
Մամուրյան Մ. 35, 36, 133, 513
Մայեր Էդ. 290
Մանանդյան Հ. 546
Մանդինյան Սեդրակ 47, 99, 100, 194, 196, 354, 360, 539
Մանդինյան Ստ. 10, 508
Մանկունի Վ. 90, 91
Մանդրո 144, 145
Մառ Ն. 291
Մասեհյան Հ. 354, 360
Մատակյան Հ. 113
Մատինյան Մ. 401, 521
Մարտիրոսյան Մ. 484, 543
Մարքս Կարլ 22, 125, 264, 419, 480
Մելիք-Թանգյան Ն. 448
Մելիք-Հովսեփյան Հ. 125
Մելիք-Մեհրաբով Ս. 232, 234, 333, 476, 488, 489, 490—492
Մելիքյան Արշավիր 7, 24, 190
Մեյլե Ա. 301
Մեսերնիխ Կ. Վ. Լ. 426
Միրաթորյան Մ. 356—358
Միրզա Հյուսեին խան 387
Միրզոյան Գ. 11, 54, 309, 196
Մխիթարյան Ա. 335
Մխիթարյաններ 44, 46, 214, 229, 274, 275, 303, 304
Մկրյան Հ. 40, 48, 71—73, 116, 117, 119, 316, 509
Մհերյան Թ. 111, 113
Մյասնիկյան Ալ. 23

Մյուլլեր Մ. 229
Մյուլլեր Ս. 290
Մյուլլեր Վ. 215, 216
Մնացականյան Ա. 6
Մոձալիսկի Լ. 469, 470
Մոպասան Գի դե 330, 331, 361
Մսերյան Գ. 228
Մսերյան Զ. 313, 314, 542
Մուրադյան Մ. 70, 86, 443, 473
Մուրացան 9, 210, 286, 307, 311, 400, 402, 509, 546

Յակիմով Կ. 470, 472—475, 482, 490, 491
Յապուրյան Կ. 262, 265, 288, 431, 509, 520
Յանովսկի Կ. 113, 282
Յոկա Մորիս 423
Յունգման 427, 428

Նազարյան Ստ. 7, 215, 231, 296, 316, 451, 508
Նազարյան Տ. 459, 496, 544, 547
Նալբանդյան Մ. (Կոմս էմմանուել) 10—12, 38, 75, 80, 81, 87, 126, 153, 201, 207, 209, 213—215, 222, 224, 226, 261, 317, 329, 332, 333, 343, 344, 361, 432, 433, 437, 451, 471, 533
Նահապետյան Ա. 91, 132, 134, 197, 454
Նարբեյ Խ. 97
Նար-Դոս 9, 523
Նարիմանով 538
Նեկրասով Ն. 213, 319, 338
Ներսիսյան Մ. 104, 107, 363, 366
Նևերով Յա. 471
Նիկոլայ I 191
Նիկոլայ II 9, 43, 390, 480
Նիկոլաձե Ն. 319, 513, 536
Նշկյան Կ. 99
Նորայր 371
Նորատունկյան Գ. 58, 71, 103, 104, 106
Նովիկով Ե. 104
Նովիկովա Օ. 411
Նուրյան 527, 528
NN 275, 276, 278—280, 284, 286, 287, 360, 461, 464

Շահազիզ Ս. 201, 207, 231, 471
Շահամիրյան Հ. 192
Շահումյան Ստեփան 23, 125, 126, 434
Շարմտան 409
Շաֆարիկ Պ. 428
Շելգունով Վ. 8, 479
Շելլի Պ. Բ. 331
Շելկովնիկյան Բ. 62, 297
Շեչենկո Տ. 329, 342, 343
Շերեմետև Ս. 477, 478
Շերսպիր Վ. 215, 354, 360, 526
Շիլլեր Յ. 54, 66, 215, 288, 330, 360
Շիրմազանյան Գ. 27
Շիրվանզադե 9, 10, 252, 254—256, 260, 261, 274, 275, 284—286, 306—308, 317, 324, 326, 338, 339, 341, 342, 345—349, 358, 359, 377, 443, 451, 455, 459, 476, 483, 488, 494, 496, 498—502, 504, 509, 511—513, 537, 538, 540
Շվեյգեր-Լերխենֆելդ 150
Շովրյան—տե՛ս Հովհաննիսյան Խ.

Ջամիլյան Բ. 392
Ջևխ Սվյատոպոլուկ 330, 510
Ջերազ Մինաս 181, 185, 229, 230, 344, 356, 409, 522
Ջերնիշևսկի Ն. 329, 426
Ջիլինկիրյան Գ. 228
Ջմշկյան Գ. 132, 286, 497, 515, 547
Ջոպանյան Ա. 312, 313, 354, 355, 546
Ջուխաճյան Մ. 69

Պալասանյան Ստ. 30, 54, 77, 78, 80, 132, 139, 140, 142, 143, 149, 165, 193, 195, 197, 199, 200, 201, 222—230, 232, 234, 348, 420—422, 495, 509
Պայազատյան-Նավասարդյան Մ. 401,

521
Պատկանյան Ռ. 9, 34, 37, 66, 78, 90, 132, 133, 196, 197, 207, 208, 210—212, 217, 306, 309, 310, 316, 317, 320, 323, 326, 327, 333, 334, 339—342, 346, 349, 378, 455, 471, 476, 493, 500, 504, 506, 509, 511, 539, 540
Պատկանյան Ք. 199, 291, 292
Պարոնյան Հ. 6, 10, 153—156, 192, 209, 313—315, 317, 320, 365, 370, 509, 514, 529, 532
Պարսամյան Վ. 29
Պարտիզակցի Վ. 140, 224
Պեշիկթաշլյան Մ. 226, 306
Պետերման Յ. Հ. 150, 199, 303
Պետեֆի Շ. 215, 216, 330, 332, 419, 421, 422, 425, 426
Պետրոս I 42, 191, 390
Պլեխանով Դ. 8, 125, 480
Պլեշչեև Ա. 327—329
Պոբեդոնոսցև Կ. 110, 331
Պուտտո 43, 44
Պուտեխով Ա. 23
Պռոշյան Պ. 9, 208, 209, 306, 310, 311 326, 346, 350, 351, 455, 494, 496—498, 500, 504, 509, 547
Պրորին 166, 167
Պուշկին Ա. 319, 466

Ջալալյան Ս. 203, 205, 215
Ջենկինս Է. 220, 221

Ռենվի Քուլ 383
Ռիշտունի Վ. 6, 20, 21, 25, 29
Ռոզբերի 385, 386
Ռուբինյան 148, 198
Ռուբինշտեյն Ա. 318

Սադաթյան Մ. 201
Սալտիկով-Շչեդրին Մ. 8, 327, 328, 349, 350, 386, 466
Սայաթ-Նովա 296, 316
Սանասարյան Մ. 42, 46, 63—65, 67, 71, 90, 97, 99, 107, 114, 210, 505, 506, 514
Սարգսյան Խ. 526
Սարինյան Ս. 25—28, 208, 222, 345
Սիմեոնյան Պ. 40, 67, 68, 89, 90, 108, 182, 184, 185, 190, 191, 273, 327, 412, 439—441, 453, 454, 477, 489, 506, 508, 533
Սիմոնյան Մ. 201
Սիրանույշ 287, 288
Սիրվան (Արշավիր Սոլախյան) 337
Սլավեյկով Պ. 331, 418
Սմոլևար Յան 429, 510
Սոլսբերի Ռ. 385—387, 398, 410, 411
Սպանդարյան Սպ. 19, 30, 33, 40, 68, 69, 89, 111, 184, 296, 341, 440—444, 448, 454, 489, 534
Սպանդարյան Սուրեն 23, 30, 126
Սվաճյան Հ. 36
Ստասով Վ. 291
Ստեփանն Խ. 207
Ստեփանյան Դ. 6, 364
Ստ. Օրբելյան 203, 204
Ստիվենսոն 383, 398
Սրինգ (Արշակ Մկրտչյան) 354, 36.
Սրվանձտյանց Դ. 42, 61, 139, 196, 356
Սունդուկյան Դ. 9, 67, 207, 208, 210, 240, 243, 288, 289, 306—308, 310, 341, 349, 384, 500, 509
Սուրենյան 454, 546
Սուվորին Ա. 274, 324, 461, 462, 465, 466, 484

Վաղինակ—տե՛ս Տոնապետյան Պ.
Վամբերի 381
Վանդալ Ա. 409
Վանցյան 546
Վարդանյան Փ. 7, 34, 37, 40, 47, 65—67, 90, 122, 210, 215, 292, 328—330, 360, 385, 386, 418, 499, 504, 506, 509, 511, 539, 540
Վարժապետյան Ն. 57, 58, 62, 70, 86, 93, 97, 103, 104, 106, 139, 167, 175, 176, 179, 182, 198, 313, 314,

365, 373, 374, 439, 442, 443, 473, 474, 481, 490, 501
Վելեստինլիս Ռ. 216, 217
Վէլիչկո Վ. 324, 461, 484
Վեհապետյան Հ. 374
Վեսելովսկի Յուրի 289, 291
Վերեշմարտի Մ. 424
Վոլպեր 279, 280
Վոլտեր Ֆ. Մ. 330, 514

Տեր-Ալեքսանդրյան Գ. 207, 294
Տեր-Գրիգորյան Ս. 113
Տեր-Հարությունյան Նիկ. 5, 6, 73, 240, 330, 453, 475, 509, 513, 514, 543, 544, 546
Տեր-Հովհաննիսյան Գ. 79, 201—208, 288, 509
Տեր-Ղևոնդյան Նիկ. 40, 86, 196, 240, 267, 268, 272—274, 443, 509
Տեր-Մելքիսեդեկյան Գր. 10, 11
Տեր-Միքայելյան Գր. (Սերմացան) 521
Տերյան Վ. 434, 435
Տիգրանյան Լ. 47, 105, 113, 547
Տիգրանյան Հ. 262—265, 509, 519
Տյուսար Ս. 356
Տոլստոյ Դ. 490
Տոլստոյ Լև 349
Տոնապետյան Պ. 356, 357, 368, 374, 378, 399, 483, 509, 515, 522—529, 546
Տուրգենև Ի. 49, 327, 329

Քաֆֆի 9, 10, 54, 89, 132, 140—142, 181, 182, 190, 196, 208, 209, 306, 307, 309, 316, 348, 352, 476, 495, 499, 500, 509, 512, 532, 546

Ուլանդ Լ. 215, 361
Ունսի զադե Ջալալ 538
Ուշինսկի Կ. 280, 281
Ուսպենսկի Գ. 318, 349
Ուվարով Ա. 291

Փափազյան Վրթ. 9, 311, 313, 400, 402, 403, 486, 494, 503, 509, 519, 546
Փիթոյան Ե. 284
Փորթուգալյան Մ. 58, 367, 375

Քալանթար Ալ. 322
Քամալյան Ս. 312, 335, 401, 509
Քաջբերունի—տե՛ս Տեր-Հովհաննիսյան Գ.
Քարամյան Նիկ. 274—279, 292, 299—303, 449—451, 454, 509, 512
Քեչյան Բ. 356
Քիշմիշյանց Ա. 132, 197, 234, 235, 312, 509
Քյուրքչյան Հ. 151
Քուչուբեկյան Հ. 207

Օժեշկո էլիզա 331, 352, 361
Օնն Ժորժ 286, 346
Օրմանյան Մ. 114, 392, 403, 528, 542

Ֆելեքյան Հ. 6
Ֆեոկտիստով Ե. 473—475, 479, 481, 482
Ֆիլիպով 104
Ֆինկ Ֆրանս 546
Ֆրանկլին Բ. 291

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Առաջին մաս

«ՓՈՐՁ» ՀԱՆԴԵՍԸ (1876—1881)

Գլուխ առաջին.— Ազգային-պահպանողական հոսանքը XIX դարի վերջին քառորդում

Ա. Ազգային-պահպանողական հոսանքի գնահատության հարցը . . 17
Բ. Տեսաբանները և գործիչները 40
Գ. Ազգության խնդիրը և նկեղեցին ազգային-պահպանողականների հրապարակախոսության մեջ 74
Դ. Ազգային-պահպանողականների դիրքորոշումը ազգային-ազատագրական շարժման հարցում 93

Գլուխ երկրորդ.— Հայ սոցիալ-քաղաքական կյանքը և «Փորձ» հանդեսը

Ա. «Փորձի» հիմնադրումը 128
Բ. Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքը . . 137

Գլուխ երրորդ.— Հայկական հարցի արծարծումը «Փորձի» էջերում

Ա. «Փորձը» 1877—1878 թվականներին 157
Բ. Բեռլինի կոնգրեսի նախաշեմին 166
Գ. Կոնգրեսից հետո 174

Գլուխ չորրորդ.— «Փորձը» և ժամանակի լուսավորական շարժումը

Ա. Կրթական, մշակութային հարցեր 193
Բ. Բանասիրություն 199

Գլուխ հինգերորդ.— Գեղարվեստական գրականությունը և գրական քննադատությունը «Փորձի» էջերում

Ա. Հայ նոր գրականության վերելքը XIX դարի 70-ական թվականներին և «Փորձը» 207
Բ. «Փորձ» հանդեսի բարդմանական գրականության բնույթը . . . 215
Գ. Ստ. Պալասանյանը և «Փորձի» գրաքննադատությունը 222
Դ. Գրաքննությունը և «Փորձը» 231

Երկրորդ մաս

«ԱՐՁԱԳԱՆՔ» (1882—1898)

Գլուխ առաջին.— «Արձագանք» պարբերաթերթը և արևելահայ հասարակական կյանքը

Ա. Հիմնադրման պատմությունը 239

Բ. Սոցիալ-տնտեսական հարցեր 243
Գ. Դպրոցական կրթության հարցը 266
Դ. Թատրոն 282
ե. Բանասիրություն 290

Գլուխ երկրորդ.— Գեղարվեստական գրականություն. գրական ճնճաղատություն

Ա. Հայ գրականությունը «Արձագանքի» էջերում 305
Բ. Մախլասի ֆելիետոնները 317
Գ. Թարգմանական գրականություն 327
Դ. «Արձագանքի» գրական նյութերի գրաքննական պատմությունը . . 331
ե. Գրական քննադատություն 345

Գլուխ երրորդ.— Հայկական ճարցը 90-ական թթ. և «Արձագանքը»

Ա. 1882—1893 թվականներ 363
Բ. «Արձագանքը» 1894—1897 թթ. 382
Գ. Հայկական հարցը «Արձագանքի» գրաքննական արխիվում . . . 404
Դ. Ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի դասերը . 417

Գլուխ չորրորդ.—«Արձագանք» բանավիճային պայմաններում . . . 437

Գլուխ հինգերորդ.—Գրամենությունը և Արզար Հովհաննիսյանի պարբերաթերթերը

Ա. Ցարական գրաքննությունը Կովկասում XIX դարի վերջին քառորդում 468
Բ. Գրաքննությունը և «Արձագանքը» 480

Գլուխ վեցերորդ.— Արզար Հովհաննիսյանը՝ խմբագիր

Ա. Ժամանակակիցները Հովհաննիսյանի մասին 493
Բ. Աշխատակիցները և բղխակիցները 508
Գ. Մամուլի խնդիրները և խմբագրական աշխատանքի կազմակերպումը . 529
Անձնանունների ցանկ 551



ՄԱՐԳՈ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

МАРГО АМБАРЦУМОВНА МХИТАРЯН

XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝ Մ. Ա. Բարյոյան, Վ. Ս. Երկանյան
Հրատարակչական խմբագիր՝ Ա. Հ. Շաղգամյան
Գեղարվեստական խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ս. Կալիկանյան
Սրբագրիչ՝ Ռ. Ս. Մաճուկյան

ՎՖ 06303։ Պատվեր 1159։ Հրատ. 4444։ Տպարանակ 1500։

Հանձնված է շարվածքի 30/VI 1976 թ.։ Ստորագրված է տպագրության 31/XII 1976 թ.։ Տպագր. 35,0 մամուլ, հրատ. 30,1 մամուլ։ Թուղթ № 1 60×84։ Գինը՝ 2 ռ. 35 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24գ։

Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян 24-г.

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մնացականյանի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.

30187


A II 58154
A II 58851

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220058851